Անկախությունից հետո առաջին ազգային մարդահամարը Հայաստանի Հանրապետությունում անցկացվել է 2001 թ. հոկտեմբերի 10-19-ը ներառյալ: 2001 թ. հոկտեմբերի 10-ի դրությամբ Հայաստանում առկա բնակչությունը կազմել էր 3,002,594, իսկ մշտականը՝ 3,213,011 մարդ (ԱՎԾ, 2013):

ՀԺԱՀ 2015-16-ին նախորդող վերջին մարդահամարն անցկացվել է 2011 թ. հոկտեմբերի 12-21-ը ներառյալ: Ըստ 2011 թ. մարդահամարի արդյունքների Հայաստանում առկա բնակչության թվաքանակը կազմել է 2,871,771 մարդ, իսկ մշտական բնակչությանը՝ 3,018,854 (ԱՎԾ, 2013):

Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2016 թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմել է 2,994,400 մարդ, որից 1,904,700 բնակվել են քաղաքային բնակավայրերում, իսկ մնացած 1,089,700-ը՝ գյուղական (ԱՎԾ, 2016b): Ընդ որում, քաղաքային բնակչության կեսից ավելին (1,073,400 մարդ) բնակվել է մայրաքաղաք Երևանում: 2016 թ. տարեսկզբին ՀՀ մշտական բնակչության կազմում 47.7 տոկոսը եղել են տղամարդիկ, իսկ 52.3-ը՝ կանայք: Բնակչության միջին

տարիքը 2016 թ. տարեկզբի դրությամբ կազմել է 36.1 տարի, մասնավորապես՝ տղամարդկանց համար՝ 34.2, իսկ կանանց համար՝ 37.8 տարի (ԱՎԾ, 2016a): 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության կառուցվածքում 0-15 տարեկան երեխաների տեսակարար կշիռը կազմել է 20.8 տոկոս, 16-62 տարեկան անձանցը՝ 66.3, իսկ 63 և բարձրը՝ 12.9:

Ժողովրդագրական իրավիճակի առկա հիմնախնդիրներից է բնակչության ժողովրդագրական ծերացումը, որի ընթացքը հանրապետությունում հետխորհրդային տարիներին մեծապես արագացել է: Բնակչության ծերացումը կամ ժողովրդագրական ծերացումը երկարատև ժողովրդագրական փոփոխությունների, բնակչության վերարտադրության, ծնելիության, մահացության և դրանց հարաբերակցություններում տեղ գտած տեղաշարժերի, ինչպես նաև մասամբ միգրացիայի հետևանք է: Ըստ ՄԱԿ-ի կողմից սահմանված ժողովրդագրական ծերացման սանդղակի, եթե երկրի բնակչության կառուցվածքում 65 և բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը կազմում է 7 տոկոսից ավելի, ապա տվյալ բնակչությունը համարվում է ծերացող: Այդ ցուցանիշը 2016 թ. տարեկզբի դրությամբ ՀՀ-ում կազմել է 11.0 տոկոս:

## **1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ**

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) պատասխանատու է յուրաքանչյուր տասը տարին մեկ մարդահամարների անցկացման, ինչպես նաև դրա հիմքով՝ քաղաքացիական կացության համակարգի տվյալների և միգրացիայի վերագնահատված ցուցանիշների միջոցով, բնակչության ընթացիկ հաշվառման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար: 2001 թ. իրականացված առաջին ազգային մարդահամարի տվյալները հրապարակվել են 2002-2004 թթ., իսկ 2011 թ. իրականացրած մարդահամարի տվյալները՝ 2012-2014 թթ. ընթացքում: Ծնունդների, մահերի, ամուսնությունների և ամուսնալուծությունների մասին տեղեկությունները ստացվում են ծննդյան վերաբերյալ քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հիման վրա, որոնք տրամադրվում են ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) գործակալության տարածքային ստորաբաժանումների կողմից: Բնակչության ներքին և արտաքին միգրացիայի վարչական տվյալները տրամադրվում են ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից՝ բնակչության պետական ռեգիստրում ըստ բնակչության վայրի հաշվառման և դուրս գրման վարչական գրանցումներով ձևավորված էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանների տվյալների հիման վրա: ՀՀ ԱՎԾ կողմից ստացված վարչական տվյալները ենթարկվում են վիճակագրական մշակման ու վերլուծության, և ստացված նախնական ամփոփ տվյալները հրապարակում են «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցում, իսկ մանրամասնեցված բնութագրիչներով վերջնական տվյալները՝ ՀՀ ԱՎԾ մի շարք տարեկան զեկույցներում, ինչպիսիք են՝ «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու», «Հայաստանի կանայք և տղամարդիկ», «Վիճակագրական տարեգիրքը» և այլ զեկույցներում, ինչպես նաև հասանելի են ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք էջում:

Առողջության վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվում է ՀՀ առողջապահության նախարարության (ՀՀ ԱՆ) կողմից վարչական վիճակագրական հաշվետվական ձևերի միջոցով, որոնք լրացնում և տրամադրում են բուժիաստատությունները: Այնուհետև այդ տեղեկատվությունը փոխանցվում է ՀՀ ԱՎԾ: ՀՀ ԱՎԾ-ն իր հերթին մշակում և վերլուծում է ստացված տեղեկատվությունը՝ ամբողջացնելով այն ողջ երկրի կտրվածքով, ապա թողարկում է ամսական, եռամսյակային և տարեկան զեկույցներ ու տարաբնույթ հրապարակումներ: Հիմնվելով ամբողջացված առողջապահական տվյալների վրա՝ ՀՀ ԱՆ-ն հրապարակում է տարեկան և կիսամյակային թեմատիկ զեկույցներ, ինչպիսիք են՝ «Բնակչության առողջության ցուցանիշները և առողջապահական ռեսուրսների օգտակարությունը Հայաստանում»: Ազգային կտրվածքով տվյալները հասանելի են ԱՀԿ-ի կայքում՝ «Առողջապահության համաշխարհային աստղադիտարանի» միջոցով, որը ԱՀԿ-ի առողջության վերաբերյալ տվյալների բազան է անդամ-պետությունների համար:

### 1.3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### *Առողջապահական քաղաքականության սկզբունքներ*

Հայաստանում անկախության հռչակումից անմիջապես հետո իրականացվեցին առողջապահական համակարգի բարեփոխումներ: Բնորոշելով առողջությունը և առողջապահական համակարգից օգտվելը որպես մարդու հիմնական իրավունքներից մեկը՝ վերջին երկու տասնամյակների ընթացքում Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգում իրականացվեցին մի շարք առանցքային վերափոխումներ՝ առողջապահական համակարգի կառավարման և կազմակերպական կառուցվածքի ապակենտրոնացում, մի շարք բուժհաստատությունների սեփականաշնորհում, պետական ֆինանսավորման գործառույթների կենտրոնացում, առողջության առաջնային պահպանման (այսուհետ՝ ԱԱՊ) օղակի հզորացմանն ուղղված գործընթացներ, հանրային առողջապահության համակարգի բարեփոխումներ և այլն:

Առողջապահական համակարգի շարունակական վերափոխումների անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին առողջապահության բնագավառում ի հայտ եկած նոր մարտահրավերներով: Մասնավորապես՝ խախտվել է վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների (այսուհետ՝ ՈՎՀ) հավասարակշռությունը՝ ի հաշիվ վերջինիս: ՈՎՀ-ը շարունակում են առաջնային տեղ զբաղեցնել ընդհանուր մահացության կառուցվածքում:

ՀՀ առողջապահության ոլորտի վերջին տարիների զարգացման հիմնական ուղղությունները բխում են ՀՀ կառավարության գործունեությունների ծրագրի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ընդունված «Առողջություն 2020» համապարփակ քաղաքականության (WHO-EURO 2013) դրույթներից և ուղղված են՝

- համընդհանուր առողջապահական ծածկույթի, այլ կերպ ասած՝ բնակչության բոլոր խմբերի համար բժշկական օգնության և սպասարկման մատչելիության առավելագույն ապահովմանը,
- հանրային առողջության պահպանմանը և բարելավմանը,
- առողջապահական համակարգում կառավարման արդյունավետության բարձրացմանը,
- սոցիալական արդարության և հավասարության սկզբունքի պահպանմանը և կայուն ու «մարդակենտրոն» առողջապահական համակարգերի ձևավորմանը:

Մատուցվող բժշկական ծառայությունների որակի բարելավումը առողջապահական համակարգի ներկա գերակայությունների շարքում առանցքային խնդիր է: Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ. հոկտեմբերի 14-ի «Բուժօժանդությունների որակի գնահատման հայեցակարգը և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N40 արձանագրային որոշման պահանջների համաձայն՝ առաջնային օղակում իրականացվող բուժօգնության և մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով հանրապետության բոլոր մարզերի և Երևան քաղաքի 139 խոշոր բուժհաստատություններում ներդրվել է առողջության առաջնային պահպանման ոլորտում որակի ապահովման գործնական միջոցների (մեթոդների, ընթացակարգերի և հաշվառման-հաշվետվական ձևաթղթերի) համալիր փաթեթը:

Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգը բժշկական օգնության և սպասարկման ծառայություններն իրականացնում է արտահիվանդանոցային (ամբուլատոր) և հիվանդանոցային (մասնագիտացված) օղակների կողմից: Հիվանդանոցային բժշկական օգնությունը տրամադրվում է բազմապրոֆիլ, մոնոպրոֆիլ կամ մասնագիտացված հիվանդանոցների միջոցով (այդ թվում՝ առանձնացված ծննդատներ և մանկական հիվանդանոցներ): Արտահիվանդանոցային բժշկական օգնությունը տրամադրվում է քաղաքային պոլիկլինիկաների, գյուղական բժշկական ամբուլատորիաների, բժշկական կենտրոնների և բուժակ-մանկաբարձական կետերի միջոցով: Ներկայում Հայաստանում գործում են 85 քաղաքային պոլիկլինիկաներ, 255 գյուղական բժշկական

ամբուլատորիաներ ու գյուղական առողջության կենտրոններ և 617 բուժակ-մանկաբարձական կետեր:

### *Մոր և մանկան առողջություն*

Որպես ՄԱԿ-ի անդամ՝ Հայաստանի Հանրապետությունն ազգային մակարդակով ամրագրել է մայրերի և երեխաների կեցության և առողջության պահպանման խնդրի գերակայությունը: Մոր և մանկան առողջության հիմնախնդիրները կարևորվել և շարունակաբար արտացոլվել են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության և մասնավորապես Առողջապահության նախարարության ռազմավարական փաստաթղթերում: Այն է՝

- Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր (ՀՀ կառավարություն, 2014a),
- Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ռազմավարություն և իրականացման 2016-2020 թթ. գործողությունների ծրագիր (ՀՀ կառավարություն, 2016a),
- Երեխաների և դեռահասների առողջության բարելավման ազգային ռազմավարություն և ներդրման 2015-2020 թթ. գործողությունների ծրագիր (ՀՀ կառավարություն, 2016b),
- Երեխաների սնուցման բարելավման հայեցակարգ և հայեցակարգի իրականացման 2015-2020 թթ. գործողությունների ծրագիր (ՀՀ կառավարություն, 2014b),
- Կրճճով կերակրման խրախուսման ազգային ծրագիր և 2016-2020 թթ. գործողությունների ծրագիր,
- Իմունոկանխարգելման 2016-2020 թթ. ազգային ծրագիր:

Վերջիններս արտացոլում են վերարտադրողական, մոր և մանկան առողջության պահպանման հիմնախնդիրների հետ կապված երկրում առկա իրավիճակը, սահմանում ռազմավարություններ ու նպատակներ՝ ուղղված կանանց և երեխաների առողջության և սնուցման բարելավմանը, մանկական և մայրական մահացության նվազեցմանը:

Նշված ռազմավարություններին և ծրագրերին շրջանակներում մոր և մանկան առողջության պահպանմանն ուղղված միջոցառումները և գործողությունները շարունակաբար համարվել են առողջապահության նախարարության գերակա խնդիրները:

2008թ. հուլիսի 1-ից ներդրվել և շարունակաբար իրականացվել է Ծննդօգնության պետական հավաստագրի ծրագիրը, իսկ 2011 թ. հունվարից՝ Երեխաների առողջության պետական հավաստագրի ծրագիրը: Այս ծրագրերի շրջանակներում լրացուցիչ ֆինանսական ներդրումները հնարավորություն տվեցին 3-4 անգամ բարձրացնել բուժաշխատողների աշխատավարձերը, ինչը զգալիորեն նպաստեց բնակչությանն իրապես անվճար և մատչելի ծառայությունների մատուցմանը:

### *Առողջապահական համակարգի ֆինանսավորում*

Պատմականորեն առողջապահական համակարգի ֆինանսավորման առաջնային աղբյուր է հանդիսացել պետական բյուջեն: Ներկայում համակարգը ֆինանսավորվում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային աղբյուրներից: Տեղական ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են պետական բյուջեն և բնակչության կողմից կատարվող վճարումները: Ֆինանսավորման միջազգային աղբյուրները հիմնականում հանդես են գալիս մարդասիրական օգնությունների և միջազգային ծրագրերի իրականացմանն ուղղված հատուկ դրամաշնորհների տեսքով: Արտերկրի և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցները հիմնականում ուղղվում են ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի փոխանցման կանխարգելման, իմունոկանխարգելման, ինչպես նաև վերարտադրողական, մոր և մանկան առողջության բարելավմանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների իրականացմանը:

Պետական բյուջեն շարունակում է մնալ որպես ֆինանսավորման գլխավոր աղբյուր: Առողջապահության պետական բյուջեն կազմավորվում է ընդհանուր պետական բյուջետային գործընթացի շրջանակներում: Առողջապահության բյուջետային հատկացումների բաշխումն ըստ

բժշկական կազմակերպությունների իրականացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից պայմանագրային հիմունքներով՝ սահմանափակված բյուջեի սկզբունքով: ԱԱՊ օդակում վերոնշյալ ֆինանսավորումն իրականացվում է ըստ մարդաշնչի ֆինանսավորման մեթոդով, իսկ հիվանդանոցային օդակում՝ ըստ փաստացի փոխհատուցման ներկայացված հիվանդանոցային դեպքի արժեքի: Դեղորայքի, բժշկական սարքավորումների և առողջապահական այլ ծրագրերի մասով ֆինանսավորումը նույնպես իրակացվում է պայմանագրային սկզբունքով: Առողջապահական համակարգին ուղղված պետական ծախսերը բավարար չեն առողջապահական համակարգի, հետևաբար բնակչության առողջապահական կարիքները լիարժեք հոգալու համար: Այս պարագայում անգամ տրամադրված ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բարձր չէ:

Հաշվի առնելով առողջապահության ոլորտի պետական հատկացումների ցածր մակարդակը՝ ՀՀ կառավարությունը տարեցտարի ավելացնում է ոլորտի ֆինանսավորման ծավալները: Լուրջ աշխատանքներ են տարվել նաև համակարգի ֆինանսավորման կառուցվածքային բարեփոխումների ուղղությամբ, որոնք ուղղվել են սովերային շրջանառության կրճատմանը և ծառայությունների դիմաց փոխհատուցման օբյեկտիվ չափանիշների ներդրմանը:

Առաջիկայում նախատեսվող կարևոր և արժեքավոր ծրագրերից է առողջության (բժշկական) պարտադիր ապահովագրության ներդրումը, ինչը դիտարկվում է ոչ միայն որպես առողջապահության ոլորտ լրացուցիչ ֆինանսական աղբյուրներ ներգրավելու, այլ նաև բնակչության համար բժշկական օգնությունն առավել մատչելի դարձնելու, սոցիալական արդարության սկզբունքներ սերմանելու և ռեսուրսների նպատակային օգտագործումն ու բժշկական ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու միջոց:

#### *Ընտանիքի պլանավորման քաղաքականություն*

Բարենպաստ վերարտադրողական առողջությունը յուրաքանչյուր ընտանիքի, ամբողջ հասարակության, երկրի բարեկեցության և բարգավաճման հիմքն է: Վերարտադրողական առողջության կարգավիճակը հանդիսանում է տնտեսական և սոցիալական կայուն զարգացման գրավական, իսկ ներդրումներն այդ ոլորտում դիտարկվում են որպես ապագային ուղղված ներդրումներ: Ընտանիքի պլանավորումը վերարտադրողական առողջության հիմնական բաղադրիչն է: Պետությունն ու հասարակությունը պարտավոր են պատշաճ պայմաններ ստեղծել, համապատասխան միջոցառումներ իրականացնել, որոնք կպայմանավորեն առողջ երեխաների ծնունդը, նախադրյալներ կստեղծեն աճող սերնդի լիարժեք դաստիարակության և բնակչության վերարտադրողականության ապահովման համար:

Ընտանիքի պլանավորումը ընդգրկուն ազդեցություն ունի սեռական և վերարտադրողական առողջության համար, քանի որ կանանց հնարավորություն է տալիս օգտվել ընտրություն կատարելու իրավունքից և վերահսկել սեփական պտղաբերությունը, նվազեցնում է մոր և պտղի հիվանդացությունն ու մահացությունը, նվազեցնում է սեռական ճանապարհով փոխանցվող վարակների վտանգը, ներառյալ ՄԻԱՎ-ի փոխանցումը, մեծացնում է սեռային հավասարությունը և կրթություն, աշխատանք ստանալու, նաև հասարակությանը լիարժեքորեն ներգրավվելու կանանց հնարավորությունները:

Ներկայում, ՀՀ օրենսդրությամբ հղիության արհեստական ընդհատումը թույլատրելի է հղիության առաջին եռամսյակում՝ ներառյալ 12 շաբաթական ժամկետը (ՀՀ կառավարություն, 2004): Բժշկական կամ սոցիալական ցուցումների դեպքում այն կարող է կատարվել մինչև 22 շաբաթական ժամկետում:

Թեև «Վերարտադրողական առողջության բարելավման ծրագրի» շրջանակներում հակաբեղմնավորիչները տրամադրվել են անվճար, «սակայն դրանց նշանակման հետ կապված անհրաժեշտ հետազոտությունները մինչև 2006 թ. կատարվել են վճարովի: 2006 թ. պետության կողմից երաշխավորված առողջության առաջնային պահպանման անվճար սկզբունքով տրամադրվող ծառայությունների ցանկում գինեկոլոգիական ծառայությունները ևս ներառվել են:

Առաջին սերնդի հակաբեղմնավորիչ հորմոնային հաբերի էստրոգենների բարձր պարունակությամբ պայմանավորված լուրջ բարդությունների բարձր հաճախականության հետ կապված, 1974 թ. նախկին Խորհրդային Միության առողջապահության նախարարության «Օրալ հակաբեղմնավորիչների կողմնակի ազդեցությունը և դրանց բարդությունների մասին» հրամանով արգելվեց հաբային հակաբեղմնավորիչների կիրառումը և տարածումը:

Ներկայում, նոր սերնդի հորմոնային հաբերում էստրոգենների պարունակությունը կրճատվել է մի քանի անգամ, ինչն ապահովել է դրանց անվտանգությունը, բարձր բեղմնականիման և բուժական արդյունավետությունը: Հաշվի առնելով նաև այդ հանգամանքը՝ օրենսդրությամբ, մասնավորապես «Վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքով (ՀՀ ԱԺ, 2002) ժամանակակից հակաբեղմնավորման մեթոդների, այդ թվում նաև հաբերի օգտագործումը թույլատրվում է: 2015թ. պետական բյուջեում առաջին անգամ միջոցներ են հատկացվել ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցների գնման և սոցիալապես անապահով ընտանիքների գույզերին տրամադրելու համար (ՀՀ ԱԺ, 2014):

#### 1.4 ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն 2015-16-ը (ՀԺԱՀ 2015-16) ազգային մակարդակով ներկայացուցչական, ընտրանքային և թվով չորրորդ հետազոտությունն է, որը տրամադրում է տեղեկություններ բնակչության և առողջության վերաբերյալ: Հայաստանում այն իրականացվում է Ժողովրդագրության և առողջության հետազոտությունների միջազգային ծրագրի շրջանակում: Մասնավորապես՝ ՀԺԱՀ 2015-16-ի նպատակն է ապահովել թարմացված և վստահելի տվյալներ ծնելիության և հղիության արհեստական ընդհատումների մակարդակների, ամուսնության, սեռական ակտիվության, ծնելիության հետ կապված նախապատվությունների, հակաբեղմնավորման մեթոդների մասին գիտելիքների, դրանց կիրառման, կրճքով կերակրման, վաղ տարիքի երեխաների սնուցման կարգավիճակի, մանկական մահացության, մոր և մանկան առողջության, կանանց նկատմամբ ընտանեկան բռնության, երեխայի դաստիարակության, ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող այլ վարակների (ՍՃՓՎ) մասին գիտելիքների ու վարքագծի, և առողջությանն առնչվող այլ հարցերի (օր.՝ տուբերկուլոզ, սակավարյունություն, ծխախոտի օգտագործում) վերաբերյալ: Այս թեմաների շուրջ մանրամասն տվյալներ են հավաքագրվել վերարտադրողական տարիքի կանանցից, իսկ որոշ թեմաների շուրջ՝ նաև տղամարդկանցից:

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հավաքագրված տեղեկություններն անհրաժեշտ են առկա սոցիալական ծրագրերի գնահատման և Հայաստանում բնակչության առողջության բարելավմանն ուղղված ռազմավարությունների մշակման համար: Տվյալները ներկայացված են մարզային կտրվածքով՝ ելնելով ընտրանքի չափից: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հավաքագրված տեղեկությունները կապահովեն 2000, 2005 և 2010 թթ. հետազոտությունների արդյունքում ստացված ժողովրդագրական և առողջապահական հիմնական ցուցանիշների թարմացված գնահատականներ:

Հետազոտության հեռահար նպատակները նաև ներառում են կառավարչական գերատեսչությունների, այդ թվում՝ ԱՎԾ-ի տեխնիկական կարողությունների ամրապնդում: ՀԺԱՀ 2015-16-ը նաև տրամադրում է համեմատելի տվյալներ երկարատև միտումների վերլուծության համար, քանի որ 2000, 2005, 2010 և 2015-16 թթ. հետազոտություններն անցկացվել են միևնույն կազմակերպության կողմից և օգտագործվել են տվյալների հավաքագրման միևնույն գործընթացները: Այն նաև լրացնում է ժողովրդագրության և առողջության տեղեկատվության միջազգային տվյալների բազան:



## 1.5 ԸՆՏՐԱՆՔԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Ընտրանքը մշակվել էր այնպես, որ հնարավոր լիներ ստանալ հիմնական ցուցանիշներ, որոնք ներկայացուցչական կլինեն ազգային մակարդակով, Երևան քաղաքի համար, քաղաքային և գյուղական բնակավայրերի համար: Շատ ցուցանիշներ կարող են հաշվարկվել նաև մարզային մակարդակով:

ՀԺԱՀ 2015-16-ի համար օգտագործված ընտրանքային շրջանակը Հայաստանի Հանրապետության 2011 թ. մարդահամարն է: Այն երկրի բոլոր հաշվային տեղամասերի (ՀՏ) ցուցակն է (ընդամենը 11,571 ՀՏ), որը տրամադրել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը՝ ՀԺԱՀ 2015-16-ն իրականացնող գործակալությունը: Այս ՀՏ շրջանակը ստեղծվել է մարդահամարի բազայից՝ տնային տնտեսությունները ՀՏ մակարդակով ամփոփելու միջոցով: ՀԺԱՀ 2015-16-ի համար ընտրվել էր 8,749 ՏՏ-ներից բաղկացած ներկայացուցչական ընտրանք: ՀԺԱՀ 2015-16-ի համար կիրառվել է երկփուլ ընտրանքի մեթոդը: Առաջին փուլում ՀՏ-ների ցանկից ընտրվել է 313 քլաստեր, այդ թվում՝ 192-ը քաղաքային բնակավայրերից, 121-ը՝ գյուղական: Երկրորդ փուլում յուրաքանչյուր ընտրված քլաստերում իրականացվել է ՏՏ-ների ամբողջական ցուցակագրում: Այնուհետև համակարգված ընտրության միջոցով ընտրվել են հետազոտության մասնակից ՏՏ-ները: Հավելված Ա-ում առավել մանրամասն ներկայացված է ՀԺԱՀ 2015-16-ի ընտրանքի մշակումը: Քանի որ յուրաքանչյուր մարզում ընտրանքի չափը գրեթե նույնն է եղել, ընտրանքն ազգային մակարդակում ինքնակշռված չէ, և կշռի գործոնները հաշվարկվել են, ավելացվել են սովյալների ֆայլին և կիրառվել են այնպես, որ ազգային մակարդակում արդյունքները լինեն ներկայացուցչական:

15-49 տարեկան բոլոր կանայք, ովքեր եղել են ընտրված տնային տնտեսության մշտական բնակիչ կամ գիշերել են ընտրված տնային տնտեսությունում հարցմանը նախորդող գիշերը, համարվել են հարցմանը համապատասխանող հարցվողներ: Արդյունքում 6,116 կնոջ հետ անցկացվել է ամբողջական հարցազրույց: Ընտրված ՏՏ-ների կեսում 15-49 տարեկան բոլոր տղամարդիկ, ովքեր եղել են ընտրված տնային տնտեսության մշտական բնակիչ կամ գիշերել են ընտրված տնային տնտեսությունում հարցմանը նախորդող գիշերը, համարվել են հարցմանը համապատասխանող հարցվողներ: Արդյունքում 2,755 տղամարդու հետ անցկացվել է ամբողջական հարցազրույց:

Յուրաքանչյուր ՏՏ-ում հարցմանը համապատասխանող 15-49 տարեկան կանանց շրջանում անցկացվել է սակավարյունության (անեմիայի) թեստ՝ նրանց համաձայնությունը ստանալու պարագայում: Ստանալով ծնողի կամ խնամակալի համաձայնությունը՝ սակավարյունության թեստ է անցկացվել նաև 6-59 ամսական երեխաների շրջանում: Բոլոր ՏՏ-ներում կատարվել է համապատասխանող կանանց և 0-59 ամսական երեխաների հասակի և քաշի չափում: Ի լրումն՝ յուրաքանչյուր ՏՏ-ի համապատասխանող կանանցից միայն մեկին, ով ընտրվել էր պատահականության սկզբունքով, տրվել են հարցեր ընտանեկան բռնության վերաբերյալ:

## 1.6 ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐ

ՀԺԱՀ 2015-16-ի համար օգտագործվել են հինգ հարցաթերթեր՝ տնային տնտեսության հարցաթերթ, կանանց անհատական հարցաթերթ, տղամարդկանց անհատական հարցաթերթ, կենսաբանական չափումների հարցաթերթ և դաշտային աշխատողի հարցաթերթ: Այս հարցաթերթերի հիմքը ԺԱՀ ծրագրի Ժողովրդագրության և առողջության հարցերով հետազոտության ստանդարտ հարցաթերթերն են, որոնք համապատասխանեցվել են՝ Հայաստանում բնակչության և առողջապահության հիմնահարցերն արտացոլելու նպատակով: Տարբեր շահագրգիռ կողմեր, այդ թվում՝ նախարարություններ, պետական մարմիններ, հասարակական կազմակերպություններ և միջազգային դոնորներ, դիմել են հարցաթերթերում ավելացումներ կատարելու համար: Այս ամենից հետո հարցաթերթերը վերջնական տեսքի են բերվել անգլերեն

տարբերակում, այնուհետև դրանք թարգմանվել են հայերեն: Դրանք ներկայացվել են 2015 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Տնային տնտեսության հարցաթերթն օգտագործվել է ընտրված տնային տնտեսությունների մշտական անդամներին և այցելուներին ցուցակագրելու և SS-ի սոցիալ-տնտեսական կարգավիճակի մասին տեղեկություններ հավաքագրելու համար: Հարցաթերթի առաջին հատվածում տեղեկություններ են հավաքագրվել յուրաքանչյուր անդամի կամ այցելուի մասին, ներառյալ՝ տարիքը, սեռը, կրթական մակարդակը և ազգակցական կապը տնային տնտեսության գլխավորի հետ: Այս տեղեկություններն ապահովում են ժողովրդագրական հիմնական տվյալներ Հայաստանի SS-ների վերաբերյալ: Հարցաթերթը նաև օգտագործվել է անհատական հարցազրույցի համար համապատասխանող կանանց և տղամարդկանց որոշելու համար (15-49 տարեկան կանայք և տղամարդիկ): Տնային տնտեսության հարցաթերթի երկրորդ հատվածում հարցերը տնային տնտեսության կացարանային բնութագրիչների մասին են, այդ թվում՝ կացարանի հատակի նյութի, ջրի աղբյուրի, զուգարանի տեսակի, ինչպես նաև տարբեր երկարաժամկետ ապրանքների սեփականության և SS-ի սոցիալ-տնտեսական կարգավիճակի այլ կողմերի: Ի լրումն՝ տեղեկություններ են հավաքագրվել նաև երեխաների ծննդի գրանցման և դաստիարակության մասին (այս բաժնի հարցերը տրվել են յուրաքանչյուր տնային տնտեսությունում պատահականորեն ընտրված 1-14 տարեկան միայն մեկ երեխայի վերաբերյալ): Հարցաթերթի միջոցով նաև նույնականացվել են 15-49 տարեկան կանայք և մինչև 5 տարեկան երեխաները, ովքեր համապատասխանել են հասակի ու քաշի և հեմոգլոբինի մակարդակի չափումների համար:

Կանանց անհատական հարցաթերթն օգտագործվել է 15-49 տարեկան բոլոր կանանցից տեղեկատվություն հավաքագրելու նպատակով հետևյալ թեմաների շուրջ՝

- հիմնական բնութագրիչներ,
- հղիության պատմություն, աբորտներ կատարելու պատճառները, մանկական մահացություն,
- հակաբեղմնավորման մեթոդների մասին գիտելիքներ, վերաբերմունք, մեթոդների կիրառում,
- նախածննդյան հսկողություն և խնամք, ծննդօգնություն և հետծննդյան խնամք,
- մինչև 3 տարեկան երեխաների պատվաստումներ,
- մինչև 5 տարեկան երեխաների շրջանում փորլուծություն և շնչառական հիվանդություններ,
- կրծքով կերակրում և կերակրման դադարեցում,
- ամուսնություն և վերջին ժամանակաշրջանում սեռական ակտիվություն,
- ծնելիության հետ կապված նախապատվություններ,
- ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող այլ վարակների (ՍՃՓՎ) վերաբերյալ գիտելիքներ և վերաբերմունք
- կնոջ աշխատանք և ամուսնու բնութագրիչներ,
- ընտանեկան բռնություն,
- առողջությանն առնչվող այլ հարցերի (օր.՝ տուբերկուլոզ, սակավարյունություն, ծխախոտի օգտագործում) վերաբերյալ գիտելիքներ, վերաբերմունք և վարքագիծ:

Տղամարդկանց անհատական հարցաթերթն օգտագործվել է տնային տնտեսությունների ենթաընտրանքում ներառված (յուրաքանչյուր երկրորդ տնային տնտեսությունը, որ ընտրված էր տղամարդկանց հետազոտության համար) 15-49 տարեկան տղամարդկանցից տեղեկատվություն հավաքագրելու նպատակով: Տղամարդկանց հարցաթերթի միջոցով հավաքագրվել է նմանատիպ տեղեկատվություն, ինչ և կանանց հարցաթերթի միջոցով, բայց ավելի քիչ թեմաների վերաբերյալ, քանի որ դրանցում ներառված չեն եղել մանրամասն հարցեր վերարտադրողական պատմության մասին, չեն եղել հարցեր երեխաների առողջության կամ ընտանեկան բռնության մասին:



Կենսաբանական չափումների հարցաթերթն օգտագործվել է՝ գրանցելու համար համաձայնության ստացման արդյունքները, ինչպես նաև անտրոպոմետրիկ չափումների և սակավարյունության թեստի արդյունքները (ովքեր համաձայնվել էին անցնել այն):

ՀԺԱՀ-ի շրջանակներում առաջին անգամ օգտագործվել է դաշտային աշխատողի հարցաթերթը: Հարցաթերթը մշակվել էր՝ ծառայելու որպես տվյալների որակի վերլուծության գործիք: Հարցազրուցավարների վերջնական ընտրությունից հետո և աշխատողների դաշտ դուրս գալուց առաջ ԱՎԾ աշխատակազմը բաժանել, այնուհետև հավաքել էր հարցաթերթերը: Դաշտային աշխատողները լրացրել են 2 էջից բաղկացած այդ հարցաթերթը՝ իրենց հիմնական բնութագրիչների վերաբերյալ:

## 1.7 ԱՆՏՐՈՊՄԵՏՐԻԿ ԶՍՓՈՒՄՆԵՐ ԵՎ ՍԱԿԱՎԱՐՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԹԵՍՏ

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակներում կատարվել են երկու կենսաբանական չափումներ՝ անտրոպոմետրիկ չափումներ և սակավարյունության թեստ: Անտրոպոմետրիկ չափումների և սակավարյունության թեստի արդյունքներն անմիջապես գրանցվել են կենսաբանական չափումների հարցաթերթում: Սակավարյունության թեստի վերաբերյալ արձանագրությունը վերանայվել և հաստատվել է ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային կենտրոնի և Այ-Սի-Էֆ-ի էթիկայի կոմիտեի կողմից:

### *Անտրոպոմետրիկ չափումներ*

Բոլոր տնային տնտեսություններում իրականացվել են 0-59 ամսական երեխաների և 15-49 տարեկան կանանց հասակի և քաշի չափումներ: Քաշը չափվել է Seca կշեռքների միջոցով, որոնք ունեն թվային էկրան և «մայր/երեխա» գործառույթը: Հասակը չափվել է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից տրամադրված հասակաչափերով<sup>1</sup>: Մինչև 24 ամսական երեխաների հասակը չափվել է պատկած դիրքում, իսկ ավելի մեծ երեխաներինը՝ կանգնած:

### *Սակավարյունության թեստ*

6-59 ամսական երեխաներից և 15-49 տարեկան կանանցից վերցվել է արյան նմուշ սակավարյունության թեստի համար՝ նրանց համաձայնությունը ստանալու պարագայում: Արյան նմուշի համար վերցվել է մեկ կաթիլ արյուն մատից (կամ փոքր երեխաների դեպքում՝ կրունկից, քանի որ նրանց մատները փոքր են) միկրոբյուրվեթի միջոցով: Հեմոգլոբինի թեստն անցկացվել է հենց տեղում՝ մարտկոցներով աշխատող HemoCue® վերլուծիչի միջոցով, որը ցույց է տալիս արդյունքը 1 րոպեից էլ քիչ ժամանակում: Արդյունքները տրվել են և՛ բանավոր, և՛ գրավոր ձևով: Օնողներին, ում երեխաների մոտ հեմոգլոբինի մակարդակը եղել է 7 գ/դլ-ից ցածր, խորհուրդ է տրվել հետագա ստուգումների համար երեխաներին բուժհաստատություն տանել: Նույն ուղղորդումն է տրվել նաև ոչ հղի կանանց և հղի կանանց, ում մոտ հեմոգլոբինի մակարդակը եղել է համապատասխանաբար 7 գ/դլ-ից և 9 գ/դլ-ից ցածր: Բոլոր տնային տնտեսություններին, որտեղ անցկացվել են անտրոպոմետրիկ չափումներ և/կամ սակավարյունության թեստ, տրվել է բրոշյուր, որտեղ ներկայացված են սակավարյունության առաջացման պատճառները և կանխարգելման ուղիները:

<sup>1</sup> Շարժական մանկան/երեխայի/չափահասի հասակաչափ, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի նյութերի կատալոգ, համար S0114540:

## 1.8 ՆԱԽԱԹԵՍԱՎՈՐՈՒՄ

2015 թ. սեպտեմբերի 16-ից մինչև հոկտեմբերի 7-ը տասնմեկ կին և չորս տղամարդ մասնակցել են ՀԺԱՀ հետազոտության երեքշաբաթյա նախաթեստավորմանը: Այս ընթացքում 12 օր անցկացվել է լսարանային ուսուցում: Ուսուցումն անցկացվել է հայերեն ՀԺԱՀ հիմնական թիմի անդամների կողմից, իսկ ԺԱՀ ծրագրի աշխատակազմն աջակցել է նրանց: ՀՀ առողջապահության նախարարության մասնագետներ հրավիրվել են ներկայացնելու հարցաթերթերում ներգրավված թեմաների վերաբերյալ դասախոսություններ:

Ի լրումն՝ նախաթեստավորման համար ներգրավվել էին նաև յոթ կին բուժաշխատողներ: Այս կանանց համար լսարանային ուսուցումն անցկացվել է ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտում (ԱԱԻ) 2015 թ. սեպտեմբերի 22-30-ը: Կենսաբանական չափումների ուսուցումն անցկացվել է ԺԱՀ ծրագրի աշխատակազմի և Առողջապահության ազգային ինստիտուտի աշխատակազմի կողմից: Նախքան դաշտային աշխատանքները սկսելը և համոզվելու համար, որ բուժաշխատողներն ունեն բավարար փորձառություն կանանց և երեխաներին չափելու համար, անցկացվել են ստանդարտացման վարժություններ:

Նախաթեստավորման դաշտային աշխատանքներն անցկացվել են 2015 թ. հոկտեմբերի 1-7-ը: Ընդհանուր առմամբ, անցկացվել էր 87 հարցազրույց տնային տնտեսությունների հետ, 81 հարցազրույց՝ կանանց, և 24 հարցազրույց՝ տղամարդկանց հետ: Բոլոր հարցազրույցներն անցկացվել են հայերեն: Մոտ 77 կին և 55 երեխա մասնակցել են անտրոպոմետրիկ չափումներին և սակավարյունության թեստին (իրենց համաձայնությունը տալուց հետո): Նախաթեստավորման դաշտային աշխատանքներից հետո անցկացվել է քննարկում նախաթեստավորման մասնակիցների հետ, և հետագայում, հիմնվելով այս փորձի վրա, հարցաթերթերում որոշ փոփոխություններ են կատարվել:

## 1.9 ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Հետազոտության հիմնական երեքշաբաթյա ուսուցումն անցկացվել է 2015 թ. նոյեմբերին ՀՀ ԱՎԾ, ՀՀ ԱՆ ԱԱԻ և ԺԱՀ ծրագրի անձնակազմների կողմից: Ընդհանուր առմամբ, 104 անձ (85 կին և 19 տղամարդ)՝ բոլոր խմբավարները, խմբագիրները, հարցազրուցավարները և որակի վերահսկողները, մասնակցել են ուսուցմանը: Ուսուցումը ներառել է դասախոսություններ, ցուցադրական հարցազրույցներ, վարժություններ, խմբային աշխատանքներ և քննություններ: Ամբողջ դաշտային անձնակազմը անցել է անտրոպոմետրիկ չափումների վերաբերյալ ուսուցում և մասնակցել է երկօրյա դաշտային աշխատանքներին:

Բուժաշխատողներն ուսուցանվել են առանձին: 15 բուժաշխատողներ (13 կին և 2 տղամարդ) մասնակցել են ուսուցմանը, բոլոր մասնակիցները եղել են որակավորված բուժաշխատողներ: Լսարանային ուսուցումն անցկացվել է ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտում (ԱԱԻ): Այն անցկացվել է ՀՀ ԱՆ/ՀՀ ԱՆ ԱԱԻ և ԺԱՀ ծրագրի անձնակազմների կողմից և ներառել է հրահանգներ անտրոպոմետրիկ չափումներ և սակավարյունության թեստ կատարելու և դրանց արդյունքները կենսաբանական չափումների հարցաթերթում գրանցելու վերաբերյալ: Համաձայն կենսաբանական չափումների ուսուցման ԺԱՀ պլանի՝ ուսուցումը բաժանված է եղել երեք հատվածի՝ անտրոպոմետրիկ չափումների և սակավարյունության վերաբերյալ լսարանային ուսուցում, ստանդարտացման վարժություններ լսարանում և գործնական աշխատանքներ, և դաշտային աշխատանք հարցազրուցավարների հետ:

## 1.10 ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՈՒՏՔԱԳՐՈՒՄ

Հետազոտության տվյալները հավաքագրվել են դաշտային 13 խմբերի կողմից, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր չորս կին և մեկ տղամարդ հարցազրուցավարներից, մեկ դաշտային խմբագրից, մեկ բուժաշխատողից և մեկ խմբավարից: Դաշտային աշխատանքները սկսվել են 2015 թ. դեկտեմբերի 8-ից մարզերի մեծ մասում, որից հետո 2015 թ. դեկտեմբերի 31-ից մինչ 2016 թ. հունվարի 7 եղել է դադար՝ կապված Նոր տարվա և Սուրբ ծննդյան արձակուրդների հետ: Դաշտային աշխատանքները վերսկսվել են 2016 թ. հունվարի 8-ից և ավարտվել՝ ապրիլի 5-ին:

Դաշտային աշխատանքների մշտադիտարկումը ՀԺԱՀ-ի անբաժանելի մասն է եղել: ՀԺԱՀ տեխնիկական անձնակազմը ԱՎԾ-ից և ԱԱԻ-ից պարբերաբար այցելել են խմբերին՝ նրանց կատարած աշխատանքը և տվյալների որակը վերահսկելու նպատակով: ԺԱՀ ծրագրի և ԱՄՆ ՄԶԳ ներկայացուցիչները ևս այցելել են խմբերին՝ տվյալների հավաքագրումը վերահսկելու և կանանց ու մինչև 5 տարեկան երեխաների սակավարյունության թեստի և հասակի ու քաշի չափումների ընթացքին հետևելու համար:

ՀԺԱՀ 2015-16-ի տվյալների մուտքագրումը սկսվել է դաշտային աշխատանքները սկսելուց հետո՝ կարճ ժամանակ անց: Բոլոր լրացված հարցաթերթերն անմիջապես դաշտում խմբագրվել են դաշտային խմբագիրների կողմից և ստուգվել են խմբավարների կողմից՝ նախքան Երևանում գտնվող ԱՎԾ-ի տվյալների մուտքագրման գրասենյակ ուղարկվելը: Այս լրացված հարցաթերթերը մեկ անգամ ևս խմբագրվել են, իսկ այնուհետև մուտքագրվել՝ հատուկ վերապատրաստված 15 մուտքագրողների կողմից: Բոլոր հարցաթերթերը մուտքագրվել են կրկնակի անգամ՝ 100 տոկոսանոց համընկնում ապահովելու նպատակով: Տվյալների մուտքագրումն իրականացվել է CPro համակարգչային փաթեթի միջոցով: Դաշտային աշխատանքների և տվյալների մուտքագրման գույքահեռ ընթացքն առավելություն էր, քանի որ ՀԺԱՀ տեխնիկական անձնակազմը հնարավորություն էր ստանում խմբերին խորհուրդներ տալ այն խնդիրների վերաբերյալ, որ ի հայտ էին գալիս տվյալների մուտքագրման ժամանակ: Մասնավորապես՝ կազմվել էին աղյուսակներ տվյալների որակի տարբեր պարամետրերը ստուգելու համար: Տվյալների կրկնակի մուտքագրումը հեշտ համեմատության և սխալների ու անհամապատասխանությունների նույնականացման հնարավորություն էր տվել: Տվյալների մուտքագրումը և երկրորդային խմբագրման փուլն ավարտվել են 2016 թ. հունիսին:

## 1.11 ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌ

Աղյուսակ 1.1-ում ներկայացված է ՀՏԱՀ 2015-16-ի պատասխանների տեսակարար կշիռը: Ընդհանուր առմամբ, 8,749 տնային տնտեսությունն ընտրվել էր ընտրանքում ներգրավվելու համար, որից 8,205-ն է եղել բնակեցված դաշտային աշխատանքների ընթացքում: Այս տարբերության հիմնական պատճառն այն է, որ որոշ կացարաններ, որ SS-ների ցուցակագրման ընթացքում բնակեցված են եղել, հարցազրույցի պահին եղել են դատարկ կամ SS-ն երկարատև ժամանակով բացակայել է: Բնակեցված տնային տնտեսություններից 7,893-ում հաջողությամբ անցկացվել է հարցազրույց, այդպիսով պատասխանների տեսակարար կշիռը կազմել է 96 տոկոս: Քաղաքային (96 տոկոս) և գյուղական (97 տոկոս) բնակավայրերում պատասխանների տեսակարար կշիռը գրեթե նույնն է:

Այդ տնային տնտեսություններում 6,251 կին ճանաչվել է հարցմանը համապատասխանող հարցվող, նրանցից 6,116-ի հետ անցկացվել է անհատական հարցազրույց, և պատասխանների տեսակարար կշիռն այս դեպքում կազմել է 98 տոկոս: SS-ների մեկ երկրորդում 2,856 տղամարդ ճանաչվել է հարցմանը համապատասխանող հարցվող, նրանցից 2,755-ի հետ անցկացվել է անհատական հարցազրույց, և պատասխանների տեսակարար կշիռը կազմել է 97 տոկոս: Տղամարդկանց շրջանում պատասխանների տեսակարար կշիռը մի փոքր ավելի ցածր է քաղաքային բնակավայրերում (96 տոկոս), քան գյուղական (97 տոկոս), իսկ կանանց շրջանում տեսակարար կշիռը նույնն է (98 տոկոս):

ՀՏԱՀ 2015-16-ի արդյունքներով՝ պատասխանների տեսակարար կշիռը մի փոքր ավելի բարձր է, քան ՀՏԱՀ 2010-ի դեպքում (ԱՎԾ, 2012): Աճը միայն նկատելի է քաղաքային բնակավայրերի տնային տնտեսությունների համար (2015-16-ին՝ 96 տոկոս, 2010-ին՝ 94): Մյուս բոլոր կատեգորիաների համար պատասխանների տեսակարար կշիռը շատ մոտ է 2010 թ. տվյալներին:

**Աղյուսակ 1.1 Տնային տնտեսությունների և անհատական հարցազրույցների արդյունքներ**

Տնային տնտեսությունների (SS) թվաքանակը, հարցազրույցների թվաքանակը և պատասխանների տեսակարար կշիռը, ըստ բնակավայրի (չկշռված), Հայաստան, 2015-16 թթ.

Արդյունք	Բնակավայր		
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
<b>SS հարցազրույցներ</b>			
Ընտրված SS-ներ	5,369	3,380	8,749
Բնակեցված SS-ներ	5,017	3,188	8,205
Հարցազրույցի մասնակցած SS-ներ	4,806	3,087	7,893
SS պատասխանների տեսակարար կշիռ <sup>1</sup>	95.8	96.8	96.2
<b>15-49 տարեկան կանանց հետ հարցազրույցներ</b>			
Համապատասխանող կանանց թվաքանակ	3,631	2,620	6,251
Հարցազրույցի մասնակցած համապատասխանող կանանց թվաքանակ	3,545	2,571	6,116
Համապատասխանող կանանց պատասխանների տեսակարար կշիռ <sup>2</sup>	97.6	98.1	97.8
<b>15-49 տարեկան տղամարդկանց հետ հարցազրույցներ</b>			
Համապատասխանող տղամարդկանց թվաքանակ	1,587	1,269	2,856
Հարցազրույցի մասնակցած համապատասխանող տղամարդկանց թվաքանակ	1,522	1,233	2,755
Համապատասխանող տղամարդկանց պատասխանների տեսակարար կշիռ <sup>2</sup>	95.9	97.2	96.5

<sup>1</sup> Հարցազրույցի մասնակցած SS-ներ/ բնակեցված SS-ներ

<sup>2</sup> Հարցազրույցի մասնակցած հարցվողներ/ համապատասխանող հարցվողներ

**Հիմնական արդյունքներ**

- Միջին տնային տնտեսությունը բաղկացած է 3.5 անդամից:
- Բոլոր SS-ներն ունեն էլեկտրականություն:
- SS-ների մեծամասնությունը (77 տոկոս) օգտագործում է բարելավված, ոչ ընդհանուր զուգարան:
- Գրեթե բոլոր SS-ների (98 տոկոս) համար հասանելի է խմելու ջրի բարելավված, ապահով աղբյուր:
- Գրեթե բոլոր SS-ներում (97 տոկոս) այն վայրում, որտեղ SS անդամները լվանում են ձեռքերը, առկա է օձառ և ջուր:
- SS-ների մեծ մասում հատակն ունի որևէ տեսակի ծածկույթ, ընդ որում՝ ամենատարածվածը մանրահատակն է, հղկված փայտը կամ փայտե տախտակները:
- Տասը SS-ներից ինը կերակուր պատրաստելու նպատակով օգտագործում են բնական գազ և կացարանի ներսում ունեն կերակուր պատրաստելու համար նախատեսված առանձին հատված: Բնական գազը կերակուր պատրաստելու նպատակով օգտագործվող ամենատարածված վառելիքն է թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակավայրերի SS-ներում (համապատասխանաբար 92 և 70 տոկոս):
- Գյուղական բնակավայրերի SS-ների 8 տոկոսը կերակուր պատրաստելու նպատակով օգտագործում է պինդ վառելանյութ՝ համեմատած քաղաքային բնակավայրերի SS-ների 1 տոկոսի հետ:
- Հայաստանում, ըստ էության, բոլոր SS-ներն ունեն հեռուստացույց, SS-ների 97 տոկոսն ունի սառնարան, 93 տոկոսը՝ լվացքի մեքենա: SS-ների մեծամասնությունը (96 տոկոս) ունի բջջային հեռախոս:
- ՀԺԱՀ 2010-ին SS-ների 29 տոկոսն ուներ համակարգիչ, իսկ ՀԺԱՀ 2015-16-ին այս ցուցանիշն աճել է՝ կազմելով SS-ների 69 տոկոսը: Համակարգիչների սեփականության աճը հատկապես նկատելի է գյուղական բնակավայրերի SS-ներում՝ 2010-ին գրանցված 12 տոկոսից մինչև 62 տոկոս՝ 2015-16-ին:
- Ուսումնառության մեղիան տարիները կանանց համար 9.9 տարի է, իսկ տղամարդկանց համար՝ 9.7 տարի:
- Երիտասարդների շրջանում դպրոցում ընդգրկվածության մակարդակը բարձր է, բայց ոչ համատարած: Հիմնական կրթական մակարդակին համապատասխանող երեխաների 96 տոկոսը և ավագ դպրոցի մակարդակին համապատասխանող երեխաների 56 տոկոսը հաճախում են դպրոց:
- Հիմնական և ավագ դպրոցի կրթական մակարդակներում գրեթե չկա սեռային ճեղքվածք, սակայն, տղաների համեմատությամբ, աղջիկների ընդգրկվածությունը մի փոքր ավելի բարձր է:
- 1-14 տարեկան տասը երեխաներից յոթի նկատմամբ հետազոտությանը նախորդող 30 օրերի ընթացքում կիրառվել է հոգեբանական կամ ֆիզիկական պատժի որևէ տեսակ, 19 տոկոսի նկատմամբ՝ դաստիարակության որևէ ոչ բռնի մեթոդ, երեխաների 65 տոկոսը ենթարկվել է հոգեբանական բռնության, իսկ 38 տոկոսը՝ ֆիզիկական պատժի: Երեխաների 4 տոկոսը ենթարկվել է խիստ ֆիզիկական պատժի:

**Ս**ույն գլուխը ներկայացնում է ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում ներառված տնային տնտեսությունների ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական կառուցվածքը՝ ներառյալ տեղեկատվությունը տարիքի, սեռի, բնակության վայրի, SS անդամների կրթական մակարդակի, կացարանային բնութագրիչների և երկարաժամկետ օգտագործման ապրանքների սեփականության վերաբերյալ: Երեխաների ծննդյան գրանցման և երեխաների դաստիարակության վերաբերյալ տեղեկատվությունը ևս ներկայացված է այստեղ: Տնային տնտեսությունների և հարցվողների բնութագրիչների մասին տեղեկություններն օգնում են հասկանալ և մեկնաբանել հետազոտության արդյունքները, ինչպես նաև գնահատել հետազոտության ներկայացուցչականությունը:

Տնային տնտեսություն համարվում է մեկ անձը կամ ազգակցական կապ ունեցող կամ չունեցող անձանց խումբը, ովքեր ապրում են նույն բնակելի միավորում կամ հարակից շինություններում, որևէ չափահաս անդամի ընդունում են որպես SS գլխավոր, և ովքեր ունեն ընդհանուր հարմարություններ կերակուր պատրաստելու և միասին սնվելու համար: ՀԺԱՀ 2015-16-ի հարցաթերթը տարբերակում է մտցնում մշտական (անձինք, ովքեր սովորաբար բնակվում են տվյալ SS-ում) և առկա բնակչության միջև (անձինք, ովքեր հետազոտությանը նախորդող գիշերը գիշերել են տվյալ SS-ում): Ըստ ՀԺԱՀ 2015-16-ի տվյալների՝ մշտական և առկա բնակչությունների միջև տարբերությունը փոքր է: Սույն գլխում ներառված SS-ների վերաբերյալ աղյուսակները հիմնված են առկա բնակչության տվյալների վրա:

Կախված ընտրանքի կառուցվածքից՝ զեկույցում որոշ մարզերի համար ներկայացված աղյուսակներում ներառված դեպքերի թվաքանակը հնարավոր է շատ փոքր լինի: Պատճառն այն է, որ դրանք կշռվել են՝ ազգային մակարդակում մարզային բաշխումը ներկայացուցչական դարձնելու նպատակով: Վիճակագրական հուսալիությունն ապահովելով՝ փոքրաթիվ դեպքերի վրա հիմնված արդյունքները նույնականացնելու համար 25-49 չկշռված դեպքերի վրա հիմնված տոկոսները ներկայացված են փակագծերի մեջ, իսկ 25-ից քիչ չկշռված դեպքերը ներառված չեն:

## **2.1 ԿԱՅԱՐԱՆԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԵՐ**

Գոյություն ունի ամուր կապ տնային տնտեսության սոցիալ-տնտեսական կարգավիճակի և SS անդամների, հատկապես երեխաների՝ հիվանդությունների նկատմամբ հակվածության միջև: SS հարմարությունների և գույքի առկայությունը կարևոր է բնակչության ընդհանուր սոցիալ-տնտեսական կարգավիճակի որոշման համար: Բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները գնահատելու նպատակով հարցվողներին խնդրել են տրամադրել տեղեկություններ կացարանային պայմանների վերաբերյալ: Նրանք պատասխանել են SS-ում էլեկտրականության հասանելիության, ջրի աղբյուրի տեսակի, սանիտարական հարմարությունների, հատակի նյութի և երկարաժամկետ օգտագործման ապրանքների սեփականության մասին հարցերին: Աղյուսակներ 2.1-2.6-ը ներկայացնում են հիմնական կացարանային բնութագրիչներն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի:

### **2.1.1 Խմելու ջուր**

Խմելու ջրի աղբյուրի տեսակի վերաբերյալ տեղեկատվությունը հնարավորություն է տալիս գնահատելու SS-ի կողմից օգտագործվող խմելու ջրի պիտանելիությունը: Աղյուսակ 2.1-ը ներկայացնում է տեղեկատվություն խմելու ջրի աղբյուրի տեսակի, ջուր բերելու վրա ծախսվող ժամանակի և խմելու ջուրն ապահով դարձնելու նպատակով ձեռնարկվող միջոցների վերաբերյալ: Աղյուսակում առանձին ներկայացված են SS-ների և դրանց մշտական բնակչության համար ստացված արդյունքները:

Ընդհանուր առմամբ, ՀԺԱՀ 2015-16-ի արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում SS-ների մեծամասնության համար (98 տոկոս) հասանելի է խմելու ջրի բարելավված աղբյուր, վերջիններիս մեծ մասը (96 տոկոս) նշել է, որ իրենց ջրի աղբյուրը կացարանում, բակում կամ տնամերձում գտնվող ջրմուղն է (Աղյուսակ 2.1): Գյուղական բնակավայրերի SS-ների 3 և քաղաքային բնակավայրերի SS-ների 1 տոկոսն են օգտվում ջրի չբարելավված աղբյուրից՝ հիմնականում ջրատար մեքենայից կամ փոքր բաքով սայլից: SS-ների փոքր մասը, որ ջուրը հավաքում է ոչ իր SS-ի սահմաններում տեղակայված ջրի աղբյուրից, ջուր բերելու համար ծախսում է 30 րոպեից քիչ ժամանակ:

Քանի որ SS-ները կարող են օգտագործել խմելու ջուրն ապահով դարձնելու մի քանի միջոց, խմելու ջրի մաքրումը Աղյուսակում 2.1-ում ներկայացված է համապատասխան միջոց օգտագործող տնային տնտեսությունների և մշտական բնակչության մասնաբաժինների տեսքով, և ոչ տոկոսային բաշխմամբ: Քանի որ գրեթե բոլոր SS-ների ջրի աղբյուրը ջրմուղն է, որի դեպքում ենթադրաբար ջուրն արդեն մաքրվում է, զարմանալի չէ, որ SS-ների մեծ մասում (94 տոկոս) որևէ միջոց չի ձեռնարկվում խմելու ջուրն ավելի ապահով դարձնելու համար: SS-ների մակարդակով՝ ջուրն ավելի ապահով դարձնելու համար ամենահաճախ կիրառվող միջոցը ջուրը եռացնելն է (4 տոկոս): Ընդհանուր առմամբ, SS-ների 5 տոկոսն օգտագործում է ջուրը մաքրելու որևէ պատշաճ մեթոդ, այսինքն՝ այն եռացնում է, ավելացնում է քլոր, անցկացնում է կտորի միջով, ֆիլտրում է կամ արևային մանրէազերծում է կատարում:

Ջրի մատակարարման ընդհատումները կարող են պատճառ հանդիսանալ, որպեսզի SS-ներն օգտագործեն խմելու ջրի չբարելավված (անապահով) աղբյուր: Հայաստանում SS-ների մեծամասնությունը ջրի մատակարարման և հասանելիության խնդիր չունի: Ջրմուղից, հորատանցքից կամ փորված ջրհորից օգտվող SS-ների միայն 8 տոկոսն է նշել, որ հետազոտությանը նախորդող երկու շաբաթների ընթացքում առնվազն մեկ ամբողջ օր ջուրն անհասանելի է եղել (Աղյուսակ 2.2):

**Աղյուսակ 2.1 Խմելու ջուրը տնային տնտեսություններում**

SS-ների և մշտական բնակչության տոկոսային բաշխումն ըստ խմելու ջրի աղբյուրի և խմելու ջուր բերելու վրա ծախսվող ժամանակի, SS-ների ու մշտական բնակչության տոկոսը, որ օգտագործում է տարբեր միջոցներ խմելու ջուրը մաքրելու համար, և տոկոսը, որ օգտագործում է խմելու ջուրը մաքրելու որևէ պատշաճ միջոց, ըստ բնակավայրի, Հայաստան, 2015-16 թթ.

Բնութագրիչներ	Տնային տնտեսություններ			Բնակչություն		
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
<b>Խմելու ջրի աղբյուր</b>						
<b>Բարելավված աղբյուր</b>	99.0	97.3	98.3	98.9	97.0	98.1
Ջրմուղ կացարանում/ բակում/ տնամերձում	98.7	92.5	96.4	98.6	92.2	96.0
Հասարակական ծորակ/ ցայտաղբյուր	0.1	1.1	0.5	0.1	1.1	0.5
Խողովակային ջրհոր/ հորատանցք	0.0	0.6	0.2	0.0	0.8	0.3
Փակ ջրհոր	0.0	0.6	0.2	0.0	0.5	0.2
Փակ ջրի աղբյուր	0.1	2.5	1.0	0.1	2.3	1.0
<b>Չբարելավված աղբյուր</b>	1.0	2.7	1.7	1.1	3.0	1.9
Բաց ջրի աղբյուր	0.0	0.2	0.1	0.0	0.2	0.1
Ջրատար մեքենա/ փոքր բաքով սայլ	1.0	2.4	1.6	1.1	2.8	1.8
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
<b>Խմելու ջուր բերելու վրա ծախսվող ժամանակը</b>						
Ջուրը SS սահմաններում է	98.8	95.6	97.6	98.7	95.5	97.4
30 րոպեից քիչ	0.9	2.6	1.5	0.9	2.5	1.6
30 րոպե կամ ավելի	0.0	0.6	0.2	0.0	0.7	0.3
Չգիտի/տվյալ չկա	0.3	1.2	0.7	0.3	1.4	0.8
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
<b>Խմելու ջրի մաքրումն օգտագործումից առաջ<sup>1</sup></b>						
Եռացնել	5.4	2.8	4.4	6.2	3.2	5.0
Ավելացնել սպիտակացուցիչ/ քլոր	0.0	0.1	0.0	0.0	0.1	0.0
Անցկացնել կտորի միջով	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1
Կերամիկական/ավազե կամ այլ ֆիլտր	0.9	1.0	1.0	1.1	1.4	1.2
Արևային մանրէազերծում	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0
Թողնել, որ նստվածքն առանձնանա	0.8	0.3	0.6	0.7	0.3	0.5
Այլ	0.8	0.0	0.5	0.9	0.0	0.5
Ոչ մի միջոց չի ձեռնարկում	92.2	95.6	93.5	91.3	94.7	92.7
Մաքրելու պատշաճ միջոց օգտագործողների տոկոսը <sup>2</sup>	6.4	3.8	5.4	7.3	4.6	6.2
<b>Թվաքանակ</b>	<b>4,924</b>	<b>2,969</b>	<b>7,893</b>	<b>16,482</b>	<b>11,475</b>	<b>27,958</b>

<sup>1</sup> Հնարավոր է, որ հարցվողները նշած լինեն ջուրը մաքրելու մի քանի միջոց, այդ իսկ պատճառով պատասխանների ընդհանուր տոկոսը կարող է գերազանցել 100 տոկոսը:

<sup>2</sup> Ջրի մաքրման պատշաճ մեթոդները ներառում են հետևյալը. եռացնել, ավելացնել քլոր, անցկացնել կտորի միջով, ֆիլտրել, արևային մանրէազերծում կատարել:

**Աղյուսակ 2.2 Ջրի հասանելիությունը**

Ջրմուղի կամ խողովակային ջրհորի/հորատանցքի ջուր օգտագործող տնային տնտեսությունների և մշտական բնակչության տոկոսը, ում համար վերջին 2 շաբաթվա ընթացքում երբևէ ջուրն անհասանելի է եղել, ըստ բնակավայրի, Հայաստան, 2015-16 թթ.

Ջրի հասանելիությունը վերջին 2 շաբաթվա ընթացքում	Տնային տնտեսություններ			Բնակչություն		
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
Հասանելի չի եղել առնվազն 1 օր	8.1	8.1	8.1	8.6	8.2	8.4
Հասանելի է եղել առանց ընդհատումների	91.0	90.7	90.9	90.8	91.0	90.9
Չգիտի	0.9	1.2	1.0	0.6	0.8	0.7
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Ջրմուղի կամ խողովակային ջրհորի/հորատանցքի ջուր օգտագործողների թվաքանակ	4,868	2,798	7,666	16,281	10,800	27,081



## 2.1.2 Մանիտարական հարմարություններ

Տնային տնտեսության զուգարանային պայմանները համարվում են հիգիենիկ, եթե այդ զուգարանից օգտվում են միայն մեկ տնային տնտեսության անդամներ (այսինքն՝ ընդհանուր չէ), և եթե զուգարանի տվյալ տեսակը բացառում է մարդու առնչությունը կղանքի հետ: Վերոնշյալ նկարագրությանն առավել համապատասխանում են զուգարանի հետևյալ տեսակները՝ դեպի կոյուղի/սեպտիկ բաք ողողվող զուգարան և փոսի ձևով զուգարան, որը սալահատակված է: Տնային տնտեսության զուգարանային պայմանները համարվում են հակահիգիենիկ, եթե այդ զուգարանից օգտվում են մի քանի տնային տնտեսություններ, կամ եթե զուգարանի տվյալ տեսակը չի բացառում մարդու առնչությունը կղանքի հետ: Աղյուսակ 2.3-ը ցույց է տալիս այն SS-ների և մշտական բնակչության մասնաբաժինը, որոնք ունեն հիգիենիկ զուգարանային հարմարություններ (այսինքն՝ ունեն բարելավված և ոչ ընդհանուր զուգարան), և ընդհանուր այլ SS-ների հետ համատեղ օգտագործվող ու ոչ բարելավված զուգարան:

Ըստ ՀԺԱՀ 2015-16-ի արդյունքների՝ Հայաստանում SS-ների 77 տոկոսն օգտվում է բարելավված զուգարանից, որից այլ SS-ներ չեն օգտվում (Աղյուսակ 2.3): Այս ցուցանիշը փոքր-ինչ ցածր է ՀԺԱՀ 2010-ի արդյունքում գրանցված ցուցանիշից (80 տոկոս)<sup>1</sup>: Ողողվող զուգարանները տարածված են քաղաքային բնակավայրերում (95 տոկոս), մինչդեռ առանց սալահատակի, փոսի ձևով զուգարանները կամ բաց փոսերը՝ գյուղական բնակավայրերում (47 տոկոս):

**Աղյուսակ 2.3 Մանիտարական հարմարությունները տնային տնտեսություններում**

SS-ների և մշտական բնակչության տոկոսային բաշխումն ըստ զուգարանի տեսակի, և SS-ների ու մշտական բնակչության տոկոսային բաշխումն ըստ զուգարանի գտնվելու վայրի, ըստ բնակավայրի, Հայաստան, 2015-16 թթ.

Զուգարանի տեսակը և գտնվելու վայրը	Տնային տնտեսություններ			Բնակչություն		
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
<b>Բարելավված, ոչ ընդհանուր</b>						
Ողողվող դեպի կոյուղի	94.8	27.1	69.3	94.8	28.2	67.5
Ողողվող դեպի սեպտիկ բաք	0.3	4.8	2.0	0.3	5.7	2.5
Զուգարան փոսի ձևով՝ սալահատակված	0.9	14.8	6.2	1.0	14.7	6.6
Ընդամենը	96.0	46.7	77.4	96.1	48.6	76.6
<b>Ընդհանուր<sup>1</sup></b>						
Ողողվող դեպի կոյուղի	0.6	0.1	0.4	0.5	0.1	0.3
Ընդամենը	0.6	0.1	0.4	0.5	0.2	0.4
<b>Չբարելավված</b>						
Ողողվող, սակայն ոչ դեպի կոյուղի/սեպտիկ բաք/ փոս	0.8	5.6	2.6	0.9	5.5	2.8
Զուգարան փոսի ձևով՝ առանց սալահատակի/բաց փոս	2.5	47.4	19.4	2.4	45.8	20.2
Տվյալ չկա	0.1	0.0	0.0	0.1	0.0	0.0
Ընդամենը	3.4	53.1	22.1	3.4	51.3	23.0
<b>Զուգարանի գտնվելու վայրը</b>						
Մեփական կացարանում	94.4	34.6	71.9	94.1	36.7	70.6
Մեփական բակում/տնամերձում	5.4	65.1	27.9	5.7	63.0	29.2
Որևե այլ վայրում	0.2	0.3	0.2	0.2	0.2	0.2
Տվյալ չկա	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Թվաքանակ	4,924	2,969	7,893	16,482	11,475	27,958

<sup>1</sup> Այն զուգարանները, որոնք կհամարվեն բարելավված, եթե չօգտագործվեն երկու կամ ավելի SS-ների կողմից:

<sup>1</sup> Հարկ է նշել, որ, ի տարբերություն ՀԺԱՀ 2010-ի, ՀԺԱՀ 2015-16-ին SS հարցաթերթը չէր ներառում «դեպի փոս ողողվող զուգարան» կատեգորիան:

**Աղյուսակ 2.4 Կացարանային բնութագրիչներ**

SS-ների տոկոսային բաշխումն ըստ կացարանային բնութագրիչների, կերակուր պատրաստելու նպատակով պինդ վառելանյութ օգտագործողների տոկոսը, և SS-ների տոկոսային բաշխումն ըստ կացարանում ծխելու հաճախականության, ըստ բնակավայրի, Հայաստան, 2015-16 թթ.

Կացարանային բնութագրիչներ	Բնակավայր		Ընդամենը
	Քաղաքային	Գյուղական	
<b>Էլեկտրականություն</b>			
Այո	100.0	100.0	100.0
Ոչ	0.0	0.0	0.0
Ընդամենը	100.0	100.0	100.0
<b>Հատակի նյութ/ծածկույթ</b>			
Հող/ավազ	0.4	0.2	0.3
Փայտե տախտակներ	11.7	36.0	20.8
Մանրահատակ/հղկված փայտ/լամինատ	76.5	51.9	67.2
Վինիլ/լինոլիում	3.0	2.3	2.7
Կերամիկական/մարմարե սալիկներ	3.4	3.3	3.4
Ցեմենտ	1.3	4.1	2.3
Գորգային ծածկույթ	3.5	2.3	3.1
Տվյալ չկա	0.2	0.0	0.1
Ընդամենը	100.0	100.0	100.0
<b>Պատերի նյութ</b>			
Պատեր չկան	0.0	0.0	0.0
Հող	0.0	0.0	0.0
Ցեխով ամրացված քարեր	6.0	8.2	6.8
Չթրծած աղյուս (բաց)	0.1	0.0	0.0
Նրբատախտակ (ֆաներա)	0.0	0.0	0.0
Օգտագործված փայտ	0.0	0.0	0.0
Ցեմենտ/մոնոլիտ	3.2	0.8	2.3
Ցեմենտով/կրով պատված քարեր	50.6	86.6	64.1
Աղյուս	0.7	2.5	1.4
Ցեմենտե բլոկներ/ պանելներ	38.9	1.4	24.8
Չթրծած աղյուս (ծածկված)	0.0	0.1	0.0
Փայտե տախտակներ/ կղմինդր	0.4	0.2	0.3
Այլ	0.1	0.1	0.1
Ընդամենը	100.0	100.0	100.0
<b>Տանիքի նյութ</b>			
Տանիք չկա	0.1	0.0	0.1
Փայտե տախտակներ	0.0	0.1	0.1
Մետաղ	20.7	23.5	21.7
Փայտ	0.1	0.3	0.2
Ցինկե/ցեմենտե մանրաթել	3.0	1.4	2.4
Կերամիկական սալիկներ	0.1	0.5	0.3
Ցեմենտ	0.1	0.5	0.2
Կղմինդր/շիֆեր	44.8	73.6	55.6
Տոլ (տանիքի ձյութապատ ստվարաթուղթ)	31.0	0.1	19.4
Տվյալ չկա	0.1	0.0	0.1
Ընդամենը	100.0	100.0	100.0
<b>Քնելու նպատակով օգտագործվող սենյակներ</b>			
Մեկ	34.1	22.2	29.6
Երկու	44.3	37.5	41.8
Երեք կամ ավելի	21.5	40.0	28.4
Տվյալ չկա	0.2	0.3	0.2
Ընդամենը	100.0	100.0	100.0
<b>Կերակուր պատրաստելու վայր</b>			
Տանը	99.5	95.2	97.9
Առանձին կառույցում	0.4	4.7	2.0
Դրսում	0.1	0.0	0.1
Տվյալ չկա	0.0	0.0	0.0
Ընդամենը	100.0	100.0	100.0

**Աղյուսակ 2.4 Կացարանային բնութագրիչներ**

SS-ների տոկոսային բաշխումն ըստ կացարանային բնութագրիչների, կերակուր պատրաստելու նպատակով պինդ վառելանյութ օգտագործողների տոկոսը, և SS-ների տոկոսային բաշխումն ըստ կացարանում ծխելու հաճախականության, ըստ բնակավայրի, Հայաստան, 2015-16 թթ.

Կացարանային բնութագրիչներ	Բնակավայր		Ընդամենը
	Քաղաքային	Գյուղական	
<b>Կերակուր պատրաստելու նպատակով օգտագործվող վառելիք</b>			
Էլեկտրականություն	2.8	2.2	2.6
Հեղուկ գազ	4.5	19.4	10.1
Բնական գազ	92.1	70.2	83.9
Բիոգազ	0.3	0.2	0.3
Փայտ	0.3	7.1	2.9
Աթար	0.0	0.8	0.3
Ընդամենը	100.0	100.0	100.0
Կերակուր պատրաստելու նպատակով պինդ վառելանյութ օգտագործողների տոկոսը <sup>1</sup>	0.3	8.0	3.2
<b>Տան ներսում ծխելու հաճախականություն</b>			
Ամեն օր	49.5	59.7	53.4
Շաբաթական առնվազն մեկ անգամ	4.5	4.7	4.6
Ամսական առնվազն մեկ անգամ	1.8	1.8	1.8
Ամսական մեկ անգամից էլ հազվադեպ	3.9	2.3	3.3
Երբեք	40.3	31.5	37.0
Ընդամենը	400.8	412.8	405.3
Թվաքանակ	4,924	2,969	7,893

<sup>1</sup> Ներառում է փայտ և աթար:

**2.1.3. Կացարանային բնութագրիչներ**

Աղյուսակ 2.4-ը ներկայացնում է SS-ների բաշխումն ըստ կացարանային բնութագրիչների և համաձայն բնակավայրի: Հայաստանում բոլոր SS-ներն ունեն էլեկտրականություն (Աղյուսակ 2.4): Տասը SS-ից ինը կերակուրը պատրաստելու նպատակով օգտագործում են բնական գազ և կացարանի ներսում ունեն կերակուր պատրաստելու համար նախատեսված առանձին հատված: Բնական գազը կերակուր պատրաստելու նպատակով օգտագործվող ամենատարածված վառելիքն է թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակավայրերի SS-ներում (համապատասխանաբար 92 և 70 տոկոս): Գյուղական բնակավայրերի SS-ների 8 տոկոսը կերակուր պատրաստելու նպատակով օգտագործում է կենսազանգվածային վառելիք հատկապես փայտ: Կենսազանգվածային վառելիքի օգտագործումը կարող է ավելացնել շինությունների ներսում օդի աղտոտվածությունը, որն ունի բացասական առողջական հետևանքներ (Fullerton et al., 2008):

SS-ների մեկ քառորդից մի փոքր ավելին (28 տոկոս) ունի քնելու նպատակով օգտագործվող երեք կամ ավելի սենյակ, իսկ 42 տոկոսը՝ երկու սենյակ: Քաղաքային բնակավայրերում ավելի շատ SS-ներ ունեն քնելու նպատակով օգտագործվող միայն մեկ սենյակ՝ գյուղական բնակավայրերի SS-ների համեմատությամբ (համապատասխանաբար 34 և 22 տոկոս):

Ըստ էության, բոլոր SS-ներն ունեն մշակված հատակ: Ե՛վ քաղաքային (77 տոկոս), և՛ գյուղական (52 տոկոս) բնակավայրերում ամենատարածված նյութը, որից պատրաստված է հատակը, մանրահատակը կամ հղկված փայտն է: Գյուղական բնակավայրերի SS-ների մեծամասնության (87 տոկոս) պատերը կառուցված են ցեմենտով կամ կրով պատված քարերից: Քաղաքային բնակավայրերի SS-ների պատերը հիմնականում պատրաստված են կա՛մ քարից (51 տոկոս), կա՛մ ցեմենտե բլոկներից/պանելներից (39 տոկոս): Թե՛ քաղաքային (45 տոկոս), թե՛ գյուղական (74 տոկոս) բնակավայրերում տանիքները հիմնականում պատրաստված են կղմինդրից կամ շիֆերից, մինչդեռ տողից պատրաստված տանիքները բացառապես հանդիպում են քաղաքային բնակավայրերում (31 տոկոս): Մետաղյա տանիքները գրեթե հավասարապես առկա են թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակավայրերում (համապատասխանաբար 21 և 24 տոկոս):

## 2.2 ԵՐԿՐՈՐՂԱՅԻՆ ԾԽԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Երկրորդային ծուխն ազդում է երեխաների և չծխող անձանց առողջության վրա: Երկրորդային ծխի ազդեցության պատճառով հղի կինը կարող է փոքր քաշով երեխա ծննդաբերել (Windham et al., 1999): Երկրորդային ծխի ազդեցության տակ գտնվող երեխաների մոտ մեծ է շնչառական և ականջի վարակներ ունենալու և թոքերի վատ զարգացման վտանգը (US Department of Health and Human Services, 2006): ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հավաքագրվել է տեղեկատվություն տան ներսում ծխելու վերաբերյալ՝ գնահատելու համար այն SS-ների տոկոսը, որտեղ առկա է երկրորդային ծխի ազդեցությունը: Աղյուսակ 2.4-ի վերջին հատվածը ցույց է տալիս SS-ների տոկոսային բաշխումն ըստ տան ներսում ծխելու հաճախականության: Հայաստանում SS-ների կեսից ավելիում անդամներից որևէ մեկն ամեն օր ծխում է տան ներսում՝ համեմատած SS-ների մեկ երրորդից ավելիի հետ, որտեղ անդամներից ոչ մեկը չի ծխում տան ներսում: Գյուղական բնակավայրերի SS-ներն ավելի շատ են նշել (60 տոկոս), որ անդամներից որևէ մեկն ամեն օր ծխում է տան ներսում, և ավելի քիչ են նշել (32 տոկոս), որ անդամներից ոչ մեկը չի ծխում տան ներսում՝ համեմատած քաղաքային բնակավայրերում գրանցված համապատասխանաբար 50 և 40 տոկոսների հետ: ՀԺԱՀ 2010-ի և ՀԺԱՀ 2015-16-ի արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ գրեթե ոչ մի փոփոխություն չի գրանցվել այն SS-ների մասնաբաժնում, որտեղ անդամներն ամեն օր ենթարկվում են երկրորդային ծխի ազդեցությանը (համապատասխանաբար 55 և 53 տոկոս), կամ այն SS-ների մասնաբաժնում, որտեղ անդամներից ոչ մեկը չի ծխում (համապատասխանաբար 38 և 37 տոկոս):

## 2.3 ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՆԵՑՎԱԾՔ

Երկարաժամկետ օգտագործման ապրանքների առկայությունը տնային տնտեսության սոցիալ-տնտեսական կարգավիճակի ցուցանիշ է: Ավելին՝ որոշ ապրանքներ ունեն հատուկ նշանակություն: Այսպես՝ ռադիոյի կամ հեռուստացույցի առկայությունը նպաստում է նորարարական գաղափարների մասին SS անդամների տեղեկացված լինելուն, սառնարանի առկայությունը նպաստում է մթերքի օգտակարության պահպանմանը, տրանսպորտային միջոցի առկայությունը հնարավորություն է տալիս օգտվել նաև տեղանքից դուրս գտնվող ծառայություններից: Աղյուսակ 2.5-ը տրամադրում է տեղեկատվություն SS սեփականություն հանդիսացող երկարաժամկետ օգտագործման ապրանքների (օր.՝ ռադիո, հեռուստացույց, հեռախոս, համակարգիչ, սառնարան) և տրանսպորտային միջոցների մասին (օր.՝ հեծանիվ, մոտոցիկլ, ավտոմեքենա):

Հայաստանում, ըստ էության, բոլոր SS-ներն ունեն հեռուստացույց, SS-ների 97 տոկոսն ունի սառնարան, 93 տոկոսը՝ լվացքի մեքենա: SS-ների մեծամասնությունը (96 տոկոս) ունի բջջային հեռախոս, իսկ 69 տոկոսը՝ համակարգիչ: Բոլոր SS-ներն ունեն տան կահավորանքի հիմնական իրերը՝ սեղան, բազմոց, մահճակալ: SS-ների 39 տոկոսն ունի մարդատար կամ բեռնատար ավտոմեքենա:

Քաղաքային բնակավայրերի ավելի շատ SS-ներ ունեն Աղյուսակ 2.5-ում ներառված երկարատև օգտագործման ապրանքներից, քան գյուղական բնակավայրերի SS-ները՝ չնայած որոշ ապրանքների սեփականության ցուցանիշներն այնքան էլ տարբեր չեն: Գյուղական բնակավայրերում ավելի շատ SS-ներ ունեն մարդատար կամ բեռնատար մեքենա, քան քաղաքային բնակավայրերում (համապատասխանաբար 48 և 34 տոկոս): Ինչպես և սպասվում էր, ի տարբերություն քաղաքային բնակավայրերի SS-ների, գյուղական բնակավայրերի SS-ներն ավելի հավանական է, որ ունեն գյուղատնտեսական հողատարածք և ընտանի կենդանիներ:

ՀԺԱՀ 2010-ից ի վեր՝ երկարատև օգտագործման բազմաթիվ ապրանքների սեփականության մակարդակը SS-ներում աճել է: Մասնավորապես՝ նշանակալի է համակարգչի առկայության արագ աճը: 2015-16-ին տասը SS-ներից գրեթե յոթն ունեն համակարգիչ՝ համեմատած ՀԺԱՀ 2010-ի արդյունքում արձանագրված SS-ների 29 տոկոսի հետ: Համակարգիչների սեփականության աճը հատկապես նկատելի է գյուղական բնակավայրերի SS-ներում՝ 2010-ին գրանցված 12 տոկոսից մինչև 62 տոկոս՝ 2015-16-ին: Բջջային հեռախոս ունեցող SS-ների մասնաբաժինը ևս աճել է՝ 2010-ին գրանցված 87 տոկոսից մինչև 96 տոկոս՝ 2015-16-ին: Մյուս կողմից՝ քաղաքային (ֆիքսված) հեռախոս ունեցող SS-ների տոկոսը կտրուկ նվազել է՝ 2010-ի 78 տոկոսից մինչև 58 տոկոս՝ 2015-16-ին: Այս ցուցանիշը հատկապես նվազել է գյուղական բնակավայրերի SS-ների շրջանում՝ 2010-ին գրանցված 56 տոկոսից մինչև 25 տոկոս՝ 2015-16-ին:

## 2.4 ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՔՎԻՆՏԻԼՆԵՐ

Բարեկեցության ցուցանիշը չափորոշիչ է, որը փորձարկվել է մի շարք երկրներում՝ կապված տնային տնտեսության եկամուտների, առողջապահական ծառայություններից օգտվելու և առողջության ելքերի անհավասարության հետ (Rutstein et al., 2000, Rutstein and Johnston, 2004): Դրա կառուցվածքը հաշվի է առնում տնային տնտեսության և կացարանային բնութագրիչների քաղաքային-գյուղական տարբերությունները (Rutstein 2008): Յուրաքանչյուր SS-ի համար նշանակվում է միավոր՝ հիմնված SS-ի սեփականություն հանդիսացող գույքի վրա, իսկ անհատները տեղաբաշխվում են՝ ըստ այն SS-ի ընդհանուր միավորի, որտեղ իրենք բնակվում են: Այնուհետև ընտրանքը բաժանվում է բնակչության քվինտիլների՝ հինգ խմբերի, որոնցից յուրաքանչյուրում ներառված են նույն քանակությամբ մարդիկ: Ազգային մակարդակով յուրաքանչյուր քվինտիլում ներառված է բնակչության մոտավորապես 20 տոկոսը:

Աղյուսակ 2.6-ը ցույց է տալիս SS-ների մշտական բնակչության բաշխումը հինգ քվինտիլներում՝ ըստ քաղաքային ու գյուղական բնակավայրերի և մարզերի: Այս բաշխումները ցույց են տալիս, թե որքանով հավասարաչափ (կամ անհավասարաչափ) է բաշխված բարեկեցությունն աշխարհագրական առումով: Օրինակ՝ գյուղական բնակչության 82 տոկոսը գտնվում է ամենացածր և երկրորդ ամենացածր բարեկեցության քվինտիլներում: Ի հակադրություն սրան՝ քաղաքային բնակչության 64 տոկոսը գտնվում է բարեկեցության երկու ամենաբարձր քվինտիլներում: Ըստ մարզային բաշխվածության՝ Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերի տասը բնակիչներից յոթը բարեկեցության երկու ամենացածր քվինտիլներում են՝ համեմատած Երևանի բնակիչների 4 տոկոսի հետ:

Աղյուսակ 2.6-ը նաև ցույց է տալիս բարեկեցության Ջինիի գործակիցը Հայաստանում, որն արտահայտում է բարեկեցության կենտրոնացումը, ընդ որում՝ 0-ն ներկայացնում է բարեկեցության

### Աղյուսակ 2.5 Տնային տնտեսության ունեցվածք

SS-ների տոկոսը, որ ունեն երկարատև օգտագործման տարբեր ապրանքներ, տրանսպորտային միջոցներ, գյուղատնտեսական հողատարածք և ընտանի կենդանիներ, ըստ բնակավայրի, Հայաստան, 2015-16 թթ.

Ունեցվածք	Բնակավայր		Ընդամենը
	Քաղաքային	Գյուղական	
<b>Երկարատև օգտագործման ապրանքներ</b>			
Ռադիոընդունիչ	7.8	2.4	5.8
Հեռուստացույց	99.6	99.5	99.5
Բջջային հեռախոս	96.5	96.0	96.3
Քաղաքային հեռախոս	77.7	25.2	57.9
Համակարգիչ	72.7	62.2	68.7
Սառնարան	97.9	95.2	96.9
Լվացքի մեքենա	94.2	90.5	92.8
Փռչեկով	80.3	62.1	73.4
Տեսախցիկ	21.7	12.4	18.2
Մեղան	99.9	99.8	99.9
Աթոռ	100.0	99.8	99.9
Բազմոց	99.3	98.4	99.0
Մահճակալ	99.9	99.9	99.9
Սպասարպահարան	95.4	95.6	95.5
Օդորակիչ	13.9	6.5	11.1
DVD նվագարկիչ	35.4	35.2	35.3
Ալեհավաք	26.4	40.6	31.8
Սառցարան	10.0	6.7	8.8
Կարի մեքենա	42.6	40.0	41.6
Գորգ	93.9	92.2	93.3
Ինտերնետային կապ	72.7	62.2	68.8
<b>Տրանսպորտային միջոցներ</b>			
Հեծանիվ	7.2	11.0	8.6
Մայլ/ծակառք	0.2	0.8	0.4
Մոտոցիկլ/մոտոռլլեր	0.2	0.3	0.2
Մարդատար/բեռնատար ավտոմոբեռնա	34.1	47.7	39.2
Շարժիչով նավակ	0.2	0.3	0.3
<b>Գյուղատնտեսական հողատարածքի սեփականություն</b>	13.0	84.2	39.7
<b>Ընտանի կենդանիների սեփականություն<sup>1</sup></b>	4.1	56.1	23.7
SS-ների թվաքանակ	4,924	2,969	7,893

<sup>1</sup>Ընդլայն կամ ցուլ, խոշոր եղջերավոր անասուններ, ձի, ավանակ, ջորի, այծ, ոչխար, խոզ, ճագար, այլ մորթատու կենդանիներ, հավ կամ այլ ընտանի թռչուններ, մեղվի փեթակներ:

կատարյալ հավասար բաշխումը (յուրաքանչյուրն ունի բարեկեցության նույն աստիճանը), իսկ 1-ը՝ ամբողջովին անհավասար բաշխումը (բարեկեցությունը մեկ անձի ձեռքում է): Ջինիի ընդհանուր գործակիցը 0.05 է, այսինքն՝ ազգային մակարդակում բարեկեցությունը հարաբերականորեն հավասարաչափ է բաշխված: Երևանում գրանցվել է Ջինիի ամենացածր գործակիցը (0.02), որտեղ բնակչության շուրջ կեսը (47 տոկոս) բարեկեցության ամենաբարձր քվինտիլում է: Ջինիի ամենաբարձր գործակիցները, այսինքն՝ բարեկեցության ամենաանարդար բաշխումը, դիտարկվել է Արմավիրի (0.19) և Վայոց ձորի (0.12) մարզերում:

**Աղյուսակ 2.6 Բարեկեցության քվինտիլներ**

Մշտական բնակչության տոկոսային բաշխումն ըստ բարեկեցության քվինտիլների, և Ջինիի գործակիցը, ըստ բնակավայրի և մարզի, Հայաստան, 2015-16 թթ.

Բնակավայր/մարզ	Բարեկեցության քվինտիլ				Ամենաբարձր	Ընդամենը	Անձանց թվաքանակ	Ջինիի գործակից
	Ամենացածր	Երկրորդ	Միջին	Չորրորդ				
<b>Բնակավայր</b>								
Քաղաքային	3.9	6.9	25.4	32.1	31.7	100.0	16,482	0.04
Գյուղական	43.1	38.8	12.3	2.6	3.2	100.0	11,475	0.03
<b>Մարզ</b>								
Երևան	1.5	2.4	17.0	32.3	46.8	100.0	8,558	0.02
Արագածոտն	30.7	40.4	17.4	9.1	2.4	100.0	1,451	0.06
Արարատ	40.1	33.3	13.2	8.3	5.1	100.0	2,623	0.08
Արմավիր	42.9	27.5	15.1	10.4	3.9	100.0	2,550	0.19
Գեղարքունիք	27.4	25.9	29.5	12.6	4.6	100.0	2,208	0.05
Լոռի	28.5	20.6	25.5	20.0	5.3	100.0	1,942	0.08
Կոտայք	16.4	26.0	21.2	19.8	16.7	100.0	3,019	0.10
Շիրակ	18.0	23.8	25.2	20.0	13.0	100.0	2,377	0.09
Սյունիք	19.0	28.2	26.7	15.5	10.6	100.0	1,295	0.06
Վայոց ձոր	27.6	24.4	19.2	16.6	12.2	100.0	578	0.12
Տավուշ	28.6	29.5	23.0	12.6	6.3	100.0	1,357	0.07
Ընդամենը	20.0	20.0	20.0	20.0	20.0	100.0	27,958	0.05

**2.5 Ձեռքերի ԼՎԱՑՈՒՄ**

Ձեռքերն օժանով և ջրով լվանալը լվացվելու ամենահիգիենիկ գործելակերպն է: Այդուհանդերձ, ձեռքերի լվացումը ոչ օժանով, սակայն այլ մաքրող միջոցով, ինչպիսին են մոխիրը կամ ավազը, առավել նախընտրելի է, քան առանց որևէ մաքրող միջոցի լվանալը: ՀՄԱՀ 2015-16-ի շրջանակում հարցազրուցավարը տնային տնտեսությունների հարցվող անդամներին խնդրել է իրեն ուղեկցել այն վայրը, որտեղ տվյալ SS անդամները սովորաբար լվանում են իրենց ձեռքերը, որից հետո հարցազրուցավարը գրառել է այդ վայրում ջրի, օժանով կամ մաքրող որևէ այլ միջոցի (ոչ օժանով) առկայությունը:

ՀՄԱՀ շրջանակում հարցազրույցի մասնակցած SS-ների 96 տոկոսի դեպքում հարցազրուցավարն այցելել է այն վայրը, որտեղ SS անդամները լվանում են իրենց ձեռքերը (Աղյուսակ 2.7): Այն SS-ների շրջանում, որտեղ հարցազրուցավարն այցելել է ձեռքերը լվանալու վայրը, SS-ների 97 տոկոսում հարցազրույցի պահին առկա է եղել օժանո և ջուր: SS-ների 2 տոկոսում առկա է եղել միայն օժանո, իսկ 1 տոկոսից քիչ դեպքերում առկա չի եղել ոչ ջուր, ոչ օժանո, ոչ էլ այլ մաքրող միջոց: Բարեկեցության ամենացածր քվինտիլում գտնվող SS-ները (90 տոկոս) և Արմավիրի մարզում գտնվող SS-ները (91 տոկոս) ամենաքիչն են ունեցել ջուր, օժանո կամ որևէ այլ մաքրող միջոց:

**Աղյուսակ 2.7 Ձեռքերի լվացում**

SS-ների տոկոսը, որոնցում հարցազրուցավարն այցելել է ձեռքերը լվանալու վայրը, և վերջիններիս շրջանում SS-ների տոկոսային բաշխումն ըստ ջրի, օձառի և այլ մաքրող միջոցների առկայության, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	SS-ների տոկոսը, որոնցում հարցազրուցավարն այցելել է ձեռքերը լվանալու վայր <sup>1</sup>	SS-ների թվաքանակ	Այն SS-ների շրջանում, որոնցում ձեռքերը լվանալու վայրը դիտարկվել է, նրանց տոկոսը, որտեղ առկա է եղել							SS-ների թվաքանակը, որոնցում ձեռքերը լվանալու վայրը դիտարկվել է	
			Օձառ և ջուր <sup>2</sup>	Ջուր և այլ մաքրող (ոչ օձառ)	Միայն ջուր	Օձառ, բայց ոչ ջուր <sup>4</sup>	Այլ մաքրող (ոչ օձառ) <sup>3</sup>	Ոչ ջուր, ոչ օձառ, ոչ էլ որևէ այլ մաքրող	Տվյալ չկա		Ընդամենը
<b>Քաղաքային</b>	97.2	4,924	98.4	0.0	0.6	0.5	0.0	0.1	0.5	100.0	4,788
<b>Գյուղական</b>	94.5	2,969	93.4	0.0	2.2	3.5	0.2	0.7	0.0	100.0	2,806
<b>Մարզ</b>											
Երևան	96.8	2,480	98.7	0.0	0.2	0.3	0.0	0.0	0.8	100.0	2,401
Արագածոտն	89.8	387	92.5	0.0	3.3	3.0	0.0	1.1	0.0	100.0	347
Արարատ	96.7	682	95.1	0.1	3.1	0.8	0.2	0.6	0.1	100.0	659
Արմավիր	93.6	633	90.6	0.0	0.5	8.5	0.0	0.5	0.0	100.0	592
Գեղարքունիք	96.2	601	91.9	0.0	3.5	3.8	0.0	0.7	0.1	100.0	579
Լոռի	99.1	645	97.5	0.0	0.5	1.9	0.0	0.0	0.0	100.0	639
Վոտայք	98.1	799	95.7	0.0	2.2	0.3	0.5	1.0	0.3	100.0	784
Շիրակ	93.8	685	98.4	0.0	0.3	1.2	0.0	0.0	0.2	100.0	643
Մյունիք	100.0	448	99.9	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	100.0	448
Վայոց ձոր	95.5	167	98.5	0.0	1.5	0.0	0.0	0.0	0.0	100.0	160
Տավուշ	93.5	366	97.7	0.0	1.1	0.8	0.0	0.4	0.0	100.0	342
<b>Բարեկեցության քվինտիլ</b>											
Ամենացածր	91.4	1,700	89.8	0.0	3.3	5.4	0.3	1.1	0.1	100.0	1,554
Երկրորդ	97.0	1,452	96.2	0.0	1.7	1.7	0.0	0.3	0.1	100.0	1,409
Միջին	97.4	1,791	98.1	0.0	0.6	0.6	0.1	0.2	0.5	100.0	1,744
Չորրորդ	98.3	1,558	99.2	0.0	0.2	0.1	0.0	0.0	0.5	100.0	1,531
Ամենաբարձր	97.4	1,392	99.5	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.5	100.0	1,355
Ընդամենը	96.2	7,893	96.5	0.0	1.2	1.6	0.1	0.3	0.3	100.0	7,594

<sup>1</sup> Ներառում է և՛ ֆիքսված, և՛ շարժական վայրերը:

<sup>2</sup> Օձառ կատեգորիան ներառում է կտորի, հեղուկի, փոշու կամ մածուկի տեսքով օձառները կամ այլ լվացող միջոցները: Այս պունակում ներառված են ինչպես այն SS-ները, որտեղ առկա է եղել օձառ և ջուր, այնպես էլ այն SS-ները, որտեղ առկա է եղել օձառ, ջուր և այլ մաքրող միջոց:

<sup>3</sup> Այլ մաքրող միջոցներից (ոչ օձառ) են մոխիրը, ցեխը, ավազը և այլն:

<sup>4</sup> Ներառում է ինչպես այն SS-ները, որտեղ առկա է եղել միայն օձառ, այնպես էլ այն SS-ները, որտեղ առկա է եղել օձառ և այլ մաքրող միջոց:

**2.6 ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿՆԵՐԻ ԸՍՏ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ՍԵՌԻ**

Տարիքը և սեռը կարևոր ժողովրդագրական փոփոխականներ են, որոնք ձևավորում են պաշտոնական վիճակագրության, մարդահամարների և հետազոտությունների ժողովրդագրական դասակարգման առանցքային հիմքը: Դրանք նաև կարևոր փոփոխականներ են մահացության, ծնելիության և ամուսնությունների ուսումնասիրության համար: Աղյուսակ 2.8-ը ներկայացնում է SS-ներում առկա բնակչության տոկոսային բաշխումն ըստ հնգամյա տարիքային խմբերի և ըստ քաղաքային-գյուղական բնակավայրերի ու սեռի:

ՀԺԱՀ 2015-16-ի արդյունքները ցույց են տալիս, որ, ինչպես և ակնկալվում էր, Հայաստանում կանայք թվով գերազանցում են տղամարդկանց: Հետազոտության ընթացքում հարցազրույցի մասնակցած SS-ների առկա բնակչության շրջանում յուրաքանչյուր 100 կնոջ հաշվով կա 89 տղամարդ: Սեռային անհամաչափությունն ավելի արտահայտված է քաղաքային բնակավայրերում, քան գյուղական (համապատասխանաբար 83 և 98 տղամարդ՝ 100 կնոջ հաշվով): Մինչև 15 տարեկան բնակչության շրջանում տղաներն ավելի շատ են, քան աղջիկները: Իսկ 50 տարեկան և ավելի մեծ բնակչության շրջանում հակառակ պատկերն է, որը տղամարդկանց շրջանում մահացության ավելի բարձր ցուցանիշի արդյունք է:


Գծապատկեր 2.1-ում ցույց տրված տարիքային կառուցվածքը բնորոշ է ծերացող բնակչությանը, որը բնութագրվում է ծնելիության ցածր մակարդակով: Բնակչության երկու երրորդից ավելին 15-64 տարիքային խմբում է, որը կարելի է նույնացնել տնտեսապես ակտիվ բնակչության հետ: Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության (մինչև 15 տարեկան և 65-ից բարձր տարիքի անձինք) և տնտեսապես ակտիվ բնակչության հարաբերակցությունը՝ կախվածության հարաբերակցությունը, 48 է, այսինքն՝ կախվածության հարաբերակցությունը ՀԺԱՀ 2010-ին գրանցված արդյունքից (45) աճել է: Այս աճն արտացոլում է բնակչության ծերացումը, որը բնորոշ է այն երկրներին, որտեղ ծնելիությունը ցածր է բնակչության բնական վերարտադրությունն ապահովող ծնելիության մակարդակից:

**Աղյուսակ 2.8 Տնային տնտեսությունների բնակչությունն ըստ տարիքի, սեռի և բնակավայրի**

SS-ների առկա բնակչության տոկոսային բաշխումն ըստ հնգամյա տարիքային խմբերի, ըստ սեռի և բնակավայրի, Հայաստան, 2015-16 թթ.

Տարիք	Քաղաքային			Գյուղական			Ընդամենը		
	Արական	Իգական	Ընդամենը	Արական	Իգական	Ընդամենը	Արական	Իգական	Ընդամենը
<5	7.0	5.4	6.1	7.3	5.6	6.4	7.1	5.5	6.3
5-9	7.8	5.4	6.5	6.8	6.3	6.5	7.4	5.8	6.5
10-14	7.4	5.4	6.3	7.3	5.7	6.5	7.4	5.5	6.4
15-19	5.5	4.6	5.0	5.3	6.2	5.7	5.4	5.2	5.3
20-24	6.1	6.3	6.2	8.8	7.1	7.9	7.2	6.6	6.9
25-29	7.5	8.1	7.8	8.8	7.6	8.2	8.0	7.9	8.0
30-34	7.8	7.3	7.5	7.5	6.9	7.2	7.7	7.1	7.4
35-39	7.1	6.3	6.7	5.1	6.2	5.6	6.2	6.2	6.2
40-44	5.6	5.5	5.5	4.8	5.8	5.3	5.2	5.6	5.4
45-49	4.5	5.0	4.8	6.0	5.2	5.6	5.2	5.1	5.1
50-54	7.0	8.6	7.9	9.1	10.1	9.6	7.9	9.2	8.6
55-59	7.6	9.3	8.5	8.2	7.8	8.0	7.8	8.7	8.3
60-64	6.6	7.2	6.9	4.9	5.3	5.1	5.9	6.5	6.2
65-69	4.9	5.5	5.2	2.9	3.6	3.3	4.0	4.8	4.4
70-74	2.4	3.0	2.7	1.6	2.2	1.9	2.0	2.7	2.4
75-79	2.8	4.0	3.5	3.0	4.2	3.6	2.9	4.1	3.5
80+	2.5	3.1	2.8	2.8	4.2	3.5	2.6	3.5	3.1
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Անձանց թվաքանակ	7,466	8,955	16,421	5,624	5,758	11,382	13,089	14,713	27,803

**Գծապատկեր 2.1 Բնակչության բուրգ**





**2.7 ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԸ ԵՎ ԿԱԶՄԸ**

Աղյուսակ 2.9-ը ներկայացնում է ՀԺԱՀ 2015-16-ի ընտրանքում ներառված ՏՏ-ների տոկոսային բաշխումն ըստ ՏՏ գլխավորի սեռի և ՏՏ միջին չափի: Այս բնութագրիչները կարևոր են, քանի որ դրանք հաճախ կապված են ՏՏ-ների սոցիալ-տնտեսական մակարդակների միջև գոյություն ունեցող տարբերությունների հետ: Օրինակ՝ այն ՏՏ-ները, որտեղ ՏՏ գլխավորը կին է, հաճախ ավելի աղքատ են, քան այն ՏՏ-ները, որտեղ գլխավորը տղամարդ է: Ի լրումն վերոնշյալի՝ ՏՏ-ի չափը և կազմն ազդեցություն ունեն ՏՏ անդամների միջև ֆինանսական և այլ ռեսուրսների բաշխման վրա, որն իր հերթին ազդում է այդ անձանց ընդհանուր բարեկեցության վրա: ՏՏ չափը նաև փոխկապակցված է կացարանում բնակվող մարդկանց խտության հետ, ինչը կարող է անբարենպաստ լինել առողջության համար:

ՀԺԱՀ 2015-16-ի ընթացքում ՏՏ միջին չափը կազմել է 3.5 մարդ՝ ՀԺԱՀ 2000-ին գրանցված 4.3-ի համեմատությամբ: ՏՏ-ների մեծ մասում գլխավորն արական սեռի ներկայացուցիչ է, և ՏՏ-ների միայն մեկ երրորդում (33 տոկոս) է, որ գլխավորն իգական սեռի ներկայացուցիչ է: Կնոջ գլխավորությամբ ՏՏ-ների տոկոսն ավելի ցածր է՝ համեմատած ՀԺԱՀ 2010-ի արդյունքների հետ, երբ գրանցվել էր հակառակ միտումը, այսինքն՝ կնոջ գլխավորությամբ ՏՏ-ների տոկոսը ՀԺԱՀ 2000-ին արձանագրված 29 տոկոսից աճել էր մինչև 37 տոկոս՝ ՀԺԱՀ 2010-ին: ՏՏ-ների միջին չափը գյուղական բնակավայրերում ավելի մեծ է, քան քաղաքային բնակավայրերում (համապատասխանաբար 3.9 և 3.3 մարդ): Մյուս կողմից կնոջ՝ գլխավորությամբ ՏՏ-ների տոկոսը քաղաքային բնակավայրերում ավելի բարձր է՝ գյուղական բնակավայրերի ՏՏ-ների համեմատությամբ (համապատասխանաբար 37 և 28 տոկոս):

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում տեղեկատվություն է հավաքագրվել նաև այն ՏՏ-ների վերաբերյալ, որտեղ կան հոգեզավակներ և ծնողազուրկ երեխաներ: Հոգեզավակը մինչև 18 տարեկան երեխան է, ով ապրում է հորից և մորից առանձին ՏՏ-ում, մինչդեռ ծնողազուրկ համարվում են այն երեխաները, ում մեկ ծնողը կամ երկու ծնողներն էլ մահացած են: Աղյուսակ 2.9-ը ցույց է տալիս, որ ՏՏ-ների շատ փոքր մասնաբաժնում է (2 տոկոս), որ ապրում են ծնողազուրկ երեխաներ կամ մինչև 18 տարեկան հոգեզավակներ:

**Աղյուսակ 2.9 Տնային տնտեսության կազմը**

Տնային տնտեսությունների տոկոսային բաշխումն ըստ տնային տնտեսության գլխավորի սեռի և տնային տնտեսության չափի, տնային տնտեսությունների միջին չափը, և այն տնային տնտեսությունների տոկոսը, որտեղ ապրում են ծնողազուրկ երեխաներ և մինչև 18 տարեկան հոգեզավակներ, ըստ բնակավայրի, Հայաստան, 2015-16 թթ.

Բնութագրիչներ	Բնակավայր		Ընդամենը
	Քաղաքային	Գյուղական	
<b>ՏՏ գլխավորի սեռը</b>			
Արական	63.5	72.4	66.8
Իգական	36.5	27.6	33.2
Ընդամենը	100.0	100.0	100.0
<b>ՏՏ-ում սովորաբար բնակվող անդամների թվաքանակ</b>			
1	16.6	12.8	15.2
2	21.9	16.9	20.0
3	16.8	15.1	16.1
4	19.1	17.6	18.6
5	12.6	15.7	13.7
6	8.8	13.4	10.5
7	2.6	5.3	3.6
8	0.8	1.8	1.1
9+	0.8	1.5	1.0
<b>Ընդամենը</b>	100.0	100.0	100.0
<b>ՏՏ-ի միջին չափ</b>	3.3	3.9	3.5
<b>ՏՏ-ների տոկոսը, որտեղ ապրում են ծնողազուրկ երեխաներ և մինչև 18 տարեկան հոգեզավակներ</b>			
Երկկողմանի ծնողազուրկ	0.1	0.0	0.1
Միակողմանի ծնողազուրկ <sup>1</sup>	1.3	1.0	1.2
Հոգեզավակներ <sup>2</sup>	0.7	0.7	0.7
Ծնողազուրկ երեխաներ և/կամ հոգեզավակներ	2.0	1.6	1.9
ՏՏ-ների թվաքանակ	4,924	2,969	7,893

Նշում: Աղյուսակը հիմնված է ՏՏ մշտական բնակչության վրա, այսինքն՝ այն անձանց, ովքեր սովորաբար բնակվում են տվյալ ՏՏ-ում:

<sup>1</sup>Ներառում է այն երեխաներին, որոնց մեկ ծնողը մահացած է, իսկ մյուսի կենդանության կարգավիճակը հայտնի չէ:

<sup>2</sup>Հոգեզավակը մինչև 18 տարեկան երեխան է, ով ապրում է իր հորից ու մորից առանձին ՏՏ-ում, սակայն ում հայրը և/կամ մայրը ողջ են:

## 2.8 ԵՐԵՒԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԾՆՈՂԱԶԳՐԿՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 2.10-ը ներկայացնում է տեղեկատվություն մինչև 18 տարեկան երեխաների ընտանեկան պայմանների և ծնողազրկության կարգավիճակի վերաբերյալ: Մինչև 18 տարեկան երեխաների մեծամասնությունը (86 տոկոս) ապրում է երկու ծնողների հետ միասին, 11 տոկոսն ապրում է միայն մոր հետ, 1 տոկոսը՝ միայն հոր հետ, և ևս 1 տոկոսը՝ ոչ իր կենսաբանական ծնողների հետ:

Աղյուսակը նաև ներկայացնում է տվյալներ ծնողազրկության վերաբերյալ, այսինքն՝ երեխաների մասնաբաժնի, ում մեկ ծնողը կամ երկու ծնողներն էլ մահացած են: Մինչև 18 տարեկան երեխաների 3 տոկոսի մեկ ծնողը կամ երկու ծնողներն էլ մահացած են: Մինչև 18 տարեկան երեխաների 2 տոկոսը կորցրել է հորը, իսկ 1 տոկոսից պակասն էլ՝ մորը: Մինչև 18 տարեկան շատ քիչ երեխաներ են կորցրել երկու ծնողներին էլ:

Տարբերություններն ըստ հիմնական բնութագրիչների մեծ չեն: Տարիքով ավելի մեծ երեխաներն ավելի քիչ հավանական է, որ ապրեն երկու ծնողների հետ՝ համեմատած տարիքով ավելի փոքր երեխաների հետ: Սա կապված է այն հանգամանքի հետ, որ տարիքին զուգընթաց՝ ինամակալության տակ վերցված և ծնողազուրկ դարձած երեխաների մասնաբաժինն աճում է: Երկու ծնողների հետ բնակվող երեխաների մասնաբաժինն ամենացածրն է Շիրակում և Երևանում (համապատասխանաբար 77 և 82 տոկոս): Այս մարզերում գրանցվել է նաև երեխաների ամենաշատ մասնաբաժինը, ովքեր բնակվում են միայն մայրերի հետ, այն պարագայում, երբ հայրերը ողջ են (18 տոկոս՝ Շիրակում և 12 տոկոս՝ Երևանում): Վերոնշյալ երկու դեպքերում էլ հավանական է, որ նման ցուցանիշների վրա ազդող գործոն կարող է հանդիսանալ աշխատանքային միգրացիան:

**Աղյուսակ 2.10 Երեխաների ընտանեկան պայմաններ և ծնողազրկություն**

Մինչև 18 տարեկան երեխաների՝ մշտական բնակչության տոկոսային բաշխումն ըստ ընտանեկան պայմանների և ծնողների կենդանության կարգավիճակի, երեխաների տոկոսը, ովքեր չեն ապրում կենսաբանական ծնողների հետ, և երեխաների տոկոսը, ում մեկ ծնողը կամ երկու ծնողներն էլ մահացած են, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Ապրում է մոր, բայց ոչ հոր հետ		Ապրում է հոր, բայց ոչ մոր հետ			Չի ապրում ծնողներից որևէ մեկի հետ						Տոկոսը, ում մեկ ծնողը ապրում է կամ երկու ծնողները մահացած են՝		Երեխաների թվաքանակ	
	Ապրում է երկու ծնողներ հետ	Հայրը մահացած է	Մայրը մահացած է	Մայրը մահացած է	Մայրը մահացած է	Երկուսն էլ ողջ են	Միայն հայրն է ողջ	Միայն մայրն է ողջ	Երկուսն էլ մահացած են	Չկա տվյալ հոր/մոր մասին	Ընդամենը	Տոկոսը, ում մեկ ծնողը ապրում է կամ երկու ծնողները մահացած են՝			
	Հայրը ողջ է	Հայրը ողջ է	Մայրը ողջ է	Մայրը ողջ է	Մայրը ողջ է	Երկուսն էլ ողջ են	Միայն հայրն է ողջ	Միայն մայրն է ողջ	Երկուսն էլ մահացած են	Չկա տվյալ հոր/մոր մասին	Ընդամենը	Տոկոսը, ում մեկ ծնողը ապրում է կամ երկու ծնողները մահացած են՝			
<b>Տարիք</b>															
0-4	91.3	8.0	0.4	0.1	0.1	0.1	0.0	0.0	0.0	0.1	100.0	0.1	0.5	1,743	
<2	92.4	7.3	0.3	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	100.0	0.0	0.3	724	
2-4	90.4	8.5	0.5	0.2	0.1	0.2	0.0	0.0	0.0	0.1	100.0	0.2	0.6	1,019	
5-9	86.9	9.7	1.3	0.7	0.2	0.8	0.2	0.0	0.1	0.1	100.0	1.1	1.8	1,807	
10-14	82.9	9.6	3.8	1.3	0.5	1.3	0.3	0.0	0.0	0.3	100.0	1.6	4.6	1,781	
15-17	82.9	10.7	2.5	0.8	0.6	2.1	0.0	0.0	0.3	0.2	100.0	2.4	3.4	988	
<b>Մեռ</b>															
Արական	85.9	9.6	2.2	0.6	0.3	0.8	0.2	0.0	0.1	0.2	100.0	1.1	2.8	3,366	
Իգական	86.8	9.0	1.7	0.8	0.3	1.1	0.1	0.0	0.0	0.1	100.0	1.2	2.1	2,953	
<b>Բնակավայր</b>															
Քաղաքային	83.3	11.8	2.4	0.7	0.3	1.0	0.2	0.0	0.1	0.1	100.0	1.3	3.0	3,662	
Գյուղական	90.5	6.0	1.3	0.8	0.3	0.9	0.0	0.0	0.0	0.2	100.0	0.9	1.7	2,657	
<b>Մարզ</b>															
Երևան	82.3	12.1	2.8	0.9	0.2	1.1	0.3	0.0	0.2	0.0	100.0	1.6	3.6	1,900	
Արագածոտն	93.2	4.3	1.6	0.3	0.2	0.1	0.0	0.0	0.0	0.3	100.0	0.1	1.8	311	
Արարատ	90.9	5.6	2.1	0.6	0.0	0.6	0.2	0.0	0.0	0.0	100.0	0.8	2.3	600	
Արմավիր	84.8	9.9	1.9	0.7	0.5	1.6	0.0	0.0	0.0	0.6	100.0	1.6	2.4	640	
Գեղարքունիք	91.4	4.6	2.7	0.0	0.8	0.4	0.0	0.0	0.1	0.0	100.0	0.6	3.6	467	
Լոռի	87.7	9.4	1.0	0.0	0.5	1.4	0.0	0.0	0.0	0.2	100.0	1.4	1.4	309	
Կոտայք	89.7	7.9	0.8	0.7	0.4	0.1	0.1	0.0	0.0	0.2	100.0	0.3	1.3	772	
Շիրակ	77.0	17.5	2.5	1.2	0.4	1.4	0.0	0.0	0.0	0.0	100.0	1.4	2.9	568	
Սյունիք	88.9	7.0	1.2	0.7	0.0	2.3	0.0	0.0	0.0	0.0	100.0	2.3	1.2	281	
Վայոց ձոր	94.7	3.5	1.1	0.0	0.0	0.7	0.0	0.0	0.0	0.0	100.0	0.7	1.1	128	
Տավուշ	91.9	4.4	0.1	1.8	0.2	0.7	0.0	0.0	0.0	0.8	100.0	0.7	0.4	344	
<b>Բարեկեցության քվինտիլ</b>															
Ամենացածր	86.3	8.9	2.7	1.2	0.1	0.4	0.1	0.0	0.0	0.3	100.0	0.5	2.8	1,287	
Երկրորդ	88.8	6.7	1.3	0.6	0.4	1.9	0.0	0.0	0.0	0.3	100.0	1.9	1.8	1,201	
Միջին	82.8	11.8	2.4	0.7	0.5	0.8	0.7	0.0	0.2	0.1	100.0	1.7	3.8	1,189	
Չորրորդ	86.1	10.4	1.5	0.6	0.2	1.0	0.0	0.0	0.0	0.2	100.0	1.0	1.8	1,211	
Ամենաբարձր	87.5	9.1	1.7	0.6	0.3	0.7	0.0	0.0	0.1	0.0	100.0	0.8	2.2	1,431	
Ընդամենը <15	87.0	9.1	1.8	0.7	0.2	0.7	0.2	0.0	0.0	0.2	100.0	0.9	2.3	5,331	
Ընդամենը <18	86.3	9.4	1.9	0.7	0.3	0.9	0.1	0.0	0.1	0.2	100.0	1.2	2.5	6,319	

Նշում: Աղյուսակը հիմնված է SS մշտական բնակչության վրա, այսինքն՝ այն անձանց, ովքեր սովորաբար բնակվում են տվյալ SS-ում:  
<sup>1</sup> Ներառում է այն երեխաներին, ում հայրն է մահացած, մայրն է մահացած, երկու ծնողն էլ մահացած են, ծնողներից մեկը մահացած է, իսկ մյուս ծնողի կենդանության կարգավիճակի վերաբերյալ տվյալ չկա:

**2.9 ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՂԱՄՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ**

Կրթությունը կարևոր է, քանի որ այն օգնում է մարդկանց ընդունել իրազեկ որոշումներ, որոնք ազդեցություն ունեն իրենց առողջության և բարեկեցության վրա: Վերջին տասնամյակում Հայաստանի կրթական համակարգը փոփոխվել է մի քանի փուլերով, ինչը հավելյալ դժվարություն է ստեղծել ըստ տարիքային խմբերի կրթական տվյալների վերլուծության համար<sup>2</sup>: Ներկա կրթական

<sup>2</sup> 2007 թ. առաջ Հայաստանում կրթական համակարգը ներառում էր տարրական դպրոցը (1-3 դասարաններ՝ 7-9 տարեկանների համար), միջին դպրոցը (4-8 դասարաններ՝ 10-14 տարեկանների համար) և ավագ դպրոցը (9-10 դասարաններ՝ 15-16 տարեկանների համար): Առնվազն ութամյա կրթությունը եղել է պարտադիր: Ութերորդ դասարանն ավարտած աշակերտները կարող էին իրենց կրթությունը շարունակել միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: 2005 թ. ի վեր՝ 6 տարեկան և 6 ամսական հասակը հաստատվել է որպես

համակարգը ներդրվել է 2007 թ.: Համակարգը ներառում է տարրական դպրոցը (1-4-րդ դասարանները՝ 6-9 տարեկանների համար), միջին դպրոցը (5-9-րդ դասարանները՝ 10-14 տարեկանների համար) և ավագ դպրոցը (10-12-րդ դասարանները՝ 15-17 տարեկանների համար): Տարրական և միջին մակարդակները միասին (1-9-րդ դասարանները) կազմում են հիմնական կրթությունը: Ըստ ՀՀ օրենսդրության՝ հիմնական կրթությունը պարտադիր է: Տարրական, միջին և ավագ դպրոցների ուսուցումը համատեղ (1-12-րդ դասարանները) կազմում են միջնակարգ կրթությունը: Այս զեկույցում այն անձինք, ովքեր հաճախել կամ ավարտել են 1-9 դասարանները, համարվել է, որ ստացել են հիմնական կրթություն, իսկ այն անձինք, ովքեր, ի լրումն հիմնական կրթության, նաև հաճախել են ավագ դպրոց, համարվել է, որ ստացել են միջնակարգ կրթություն:

Այն աշակերտները, ովքեր ավարտել են ամենաքիչը 1-9 դասարանները, կարող են ստանալ միջին մասնագիտական կրթություն, որն ապահովում է միջին մակարդակի որակավորում ունեցող մասնագետներ, օրինակ՝ բուժքույր, մանկաբարձուհի, երաժիշտ, մեխանիկ և այլն: Միջին մասնագիտական կրթություն ուսանողները կարող են ստանալ 3-5 տարվա ընթացքում: Միջին մասնագիտական հաստատությունն ավարտելուց հետո ուսանողները ստանում են միջին մասնագիտական կրթական աստիճան, որը բարձր է միջնակարգ կրթությունից, սակայն ցածր է բարձրագույն կրթությունից: Բարձրագույն կրթությունը և հետբուհական կրթությունը տրամադրում են ուսուցում բարձր մակարդակի մասնագետների համար: Համալսարան կարող են ընդունվել միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն ունեցողները:

Աղյուսակ 2.11.1-ը և Աղյուսակ 2.11.2-ը ներկայացնում են տեղեկատվություն Հայաստանում 6 տարեկան և բարձր տարիքի բնակչության կրթական մակարդակի վերաբերյալ: Ըստ էության, Հայաստանում դպրոց հաճախել են բոլորը: Շատ տարիքային խմբերում կրթություն չունեցողների մասնաբաժինը չնչին է (1 տոկոսից քիչ), ընդ որում՝ կրթություն չունեցողների ամենաբարձր մակարդակներն արձանագրվել են 6-9 տարեկանների շրջանում (պատճառն այն է, որ նրանց մի մասը դեռևս չի հաճախում դպրոց) և 65 տարեկանից բարձր տարիքի բնակչության շրջանում: Ընդհանուր առմամբ, 6 տարեկանից բարձր արական և իգական սեռի տասը ներկայացուցիչներից 9-ը հաճախել են միջնակարգ դպրոց, իսկ տասը կանանցից չորսը և տղամարդկանց մեկ երրորդն ունեն միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն: Ուսումնառության մեղիան տարիները կանանց համար կազմել են 9.9 տարի, իսկ տղամարդկանց համար՝ 9.7 տարի:

Քաղաքային բնակավայրերում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների տոկոսն ավելի մեծ է, քան գյուղական բնակավայրերում: Կրկնակի անգամ մեծ է հավանականությունը, որ Երևանում բնակվողները կունենան բարձրագույն կրթություն՝ համեմատած այլ մարզերի բնակիչների հետ: Բարեկեցության կարգավիճակը դրական կապի մեջ է կրթական մակարդակի հետ. բարեկեցության ամենաբարձր քվինտիլում գտնվող կանանց 43 տոկոսն ունի բարձրագույն կրթություն՝ համեմատած բարեկեցության ամենացածր քվինտիլում գտնվող կանանց 6 տոկոսի հետ: Նույն ցուցանիշները տղամարդկանց համար համապատասխանաբար կազմել են 40 և 6 տոկոս:

Աղյուսակ 2.12-ում ներկայացված են զուտ ընդգրկվածության ցուցանիշը (ԶԸՑ) և համախառն ընդգրկվածության ցուցանիշը (ՀԸՑ)՝ ըստ կրթական մակարդակի, սեռի, բնակավայրի, մարզերի և բարեկեցության քվինտիլի: ԶԸՑ-ն ցույց է տալիս 6-14 տարեկան բնակչության ընդգրկվածությունը հիմնական կրթական մակարդակում (տարրական և միջին դպրոցներում) և 15-17 տարեկան բնակչության ընդգրկվածությունը ավագ դպրոցում: ՀԸՑ-ն արտահայտում է 6-24 տարեկանների ընդգրկվածությունը կրթական յուրաքանչյուր մակարդակում: Միննույն մակարդակի համար ՀԸՑ-ն միշտ ավելի բարձր է լինում ԶԸՑ-ից, քանի որ ՀԸՑ-ն ներառում է նաև նրանց, ովքեր կարող են լինել

---

դպրոց ընդունվելու պարտադիր տարիք: Նախքան 2005 թ., երբ երեխաները կարող էին դպրոց հաճախել 6 կամ 7 տարեկանից, նրանց մեծամասնությունը սկսում էր դպրոց հաճախել 7 տարեկանից:

այդ մակարդակի համար պաշտոնապես սահմանված տարիքից ավելի մեծ կամ փոքր<sup>3</sup>: Եթե ՁԸՑ-ն լինի 100 տոկոս, ապա սա կնշանակի, որ բոլոր երեխաները, ում տարիքը համապատասխանում է տվյալ կրթական մակարդակի համար պաշտոնապես նախատեսված տարիքին, հաճախում են տվյալ կրթական մակարդակ: ՀԸՑ-ն կարող է գերազանցել 100 տոկոսը, եթե տվյալ կրթական մակարդակում շատ է պաշտոնապես սահմանված տարիքից բարձր կամ ցածր անձանց ընդգրկվածությունը:

Հայաստանում դպրոցահասակ բնակչության շրջանում դպրոցում ընդգրկվածության մակարդակը բարձր է: Հիմնական կրթության համար ՁԸՑ-ն 96 է, որը նշանակում է, որ հիմնական կրթական մակարդակին համապատասխանող երեխաների 96 տոկոսը ներկայում ընդգրկված է հիմնական կրթության որևէ մակարդակում: 2015-16-ին հիմնական կրթության ՁԸՑ-ն մի փոքր բարձր է 2010-ին արձանագրված ՁԸՑ-ից (92 տոկոս): Հիմնական կրթության ՁԸՑ-ը, ըստ էության, նույնն է տղաների և աղջիկների համար: Հիմնական դպրոցում ընդգրկվածության տարբերություններն ըստ բնակավայրի, մարզի և բարեկեցության քվինտիլի մեծ չեն: Ամենացածր ՁԸՑ-ն Շիրակի մարզում է (91 տոկոս), իսկ բարեկեցության ամենաբարձր քվինտիլում գրանցվել է ամենաբարձր ՁԸՑ-ն (98 տոկոս): ՀԸՑ-ն հիմնական դպրոցում 101 տոկոս է: ՁԸՑ-ի և ՀԸՑ-ի համեմատությունը ցույց է տալիս, որ հիմնական դպրոց հաճախող աշակերտների մոտ 5 տոկոսը կա՛մ տարիքով մեծ է, կա՛մ տարիքով փոքր է տվյալ դասարան հաճախելու համար:

**Աղյուսակ 2.11.1 Տեսչին տնտեսությունների կանանց բնակչության կրթական մակարդակ**

SS-ների 6 տարեկան և բարձր տարիքի իգական սեռի անկա բնակչության տոկոսային բաշխումն ըստ հաճախած կամ ավարտած ամենաբարձր կրթական մակարդակի և ավարտած մեղիան տարիները, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կրթություն չունի	Ոչ լրիվ տարրական	Լրիվ տարրական <sup>1</sup>	Ոչ լրիվ միջնակարգ	Լրիվ միջնակարգ <sup>2</sup>	Միջին մասնագիտական	Բարձրագույն	Զգիտի/տվյալ չկա	Ընդամենը	Թվաքանակ	Ավարտած մեղիան տարիներ
<b>Տարիք</b>											
6-9	6.7	93.0	0.3	0.0	0.0	0.0	0.0	0.0	100.0	693	0.6
10-14	0.3	7.3	20.0	72.4	0.0	0.0	0.0	0.0	100.0	813	5.0
15-19	0.1	0.0	0.0	46.1	21.5	16.2	16.1	0.0	100.0	770	10.3
20-24	0.2	0.0	0.0	2.9	31.9	16.4	48.6	0.0	100.0	969	12.5
25-29	0.1	0.2	0.2	3.7	34.3	20.4	41.0	0.0	100.0	1,161	12.3
30-34	0.1	0.0	0.1	4.6	42.1	22.5	30.7	0.0	100.0	1,052	11.4
35-39	0.0	0.2	0.0	6.6	43.7	22.9	26.6	0.0	100.0	919	10.0
40-44	0.3	0.0	0.0	4.3	42.3	28.6	24.4	0.0	100.0	825	11.2
45-49	0.3	0.0	0.0	5.6	40.2	30.9	23.0	0.0	100.0	746	11.2
50-54	0.2	0.1	0.1	5.3	46.8	25.6	21.7	0.1	100.0	1,353	9.9
55-59	0.1	0.1	0.2	6.4	44.6	28.5	20.1	0.0	100.0	1,281	10.0
60-64	0.3	0.4	0.2	9.6	40.3	27.5	21.7	0.0	100.0	949	10.0
65+	1.1	2.7	3.6	22.7	38.0	15.0	16.8	0.1	100.0	2,219	9.5
<b>Բնակավայր</b>											
Քաղաքային	0.5	4.8	1.4	11.3	28.8	22.3	30.9	0.0	100.0	8,376	11.3
Գյուղական	1.0	6.9	2.6	18.7	44.4	16.2	10.3	0.0	100.0	5,374	9.5
<b>Մարզ</b>											
Երևան	0.3	4.9	1.3	9.9	23.0	20.3	40.4	0.0	100.0	4,409	12.2
Արագածոտն	0.2	6.2	0.9	13.1	52.5	14.9	12.1	0.0	100.0	697	9.6
Արարատ	0.5	7.4	2.7	20.9	40.9	15.3	12.3	0.0	100.0	1,232	9.5
Արմավիր	1.5	6.5	2.0	19.2	38.8	19.4	12.7	0.0	100.0	1,181	9.6
Գեղարքունիք	1.8	6.3	3.2	18.2	49.9	11.7	8.9	0.0	100.0	1,105	9.5
Լոռի	0.5	4.1	1.8	16.5	41.0	21.7	14.4	0.0	100.0	978	9.7
Վոտայք	0.7	7.0	2.2	12.9	36.2	22.3	18.5	0.1	100.0	1,452	9.8
Շիրակ	0.7	4.6	1.2	12.1	36.8	24.8	19.8	0.0	100.0	1,154	9.9
Սյունիք	0.5	3.8	2.0	16.0	39.9	20.6	17.2	0.0	100.0	627	9.8
Վայոց ձոր	0.2	6.0	3.0	12.3	41.0	24.4	13.1	0.0	100.0	278	9.7
Տավուշ	1.0	7.0	1.6	18.0	29.9	27.5	15.0	0.0	100.0	635	9.8
<b>Բարեկեցության քվինտիլ</b>											
Ամենացածր	1.1	7.4	3.1	23.1	45.9	13.2	6.1	0.0	100.0	2,705	9.4
Երկրորդ	0.8	5.8	2.1	14.3	42.9	19.3	14.8	0.0	100.0	2,667	9.7
Միջին	0.6	4.0	1.3	13.9	39.6	22.6	18.0	0.1	100.0	2,810	9.8
Չորրորդ	0.5	5.1	1.2	9.8	27.0	24.2	32.3	0.0	100.0	2,832	11.6
Ամենաբարձր	0.2	6.0	1.6	10.1	19.6	20.0	42.6	0.0	100.0	2,735	12.3
Ընդամենը	0.7	5.6	1.8	14.2	34.9	19.9	22.9	0.0	100.0	13,750	9.9

<sup>1</sup> Տարրական մակարդակում ավարտել է 4 դասարան:

<sup>2</sup> Ավարտել է 12-րդ դասարանը կամ 9-ից ավելի, և ունի միջնակարգ կրթությունը հաստատող ատեստատ:

<sup>3</sup> Այն աշակերտները, ովքեր տարիքով ավելի մեծ են, քան տվյալ ուսումնական մակարդակին համապատասխան տարիքը, հնարավոր է, որ սկսել են հաճախել դպրոց ավելի բարձր տարիքից, կամ մնացել են նույն դասարանում մեկ կամ մի քանի անգամ, կամ դուրս են մնացել դպրոցից, հետո կրկին ընդունվել:

**Աղյուսակ 2.11.2 Տնային տնտեսությունների տղամարդկանց բնակչության կրթական մակարդակ**

SS-ների 6 տարեկան և բարձր տարիքի արական սեռի արկա բնակչության տոկոսային բաշխումն ըստ հաճախած կամ ավարտած ամենաբարձր կրթական մակարդակի և ավարտած մեդիան տարիները, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կրթություն չունի	Ոչ լրիվ տարրական	Լրիվ տարրական <sup>1</sup>	Ոչ լրիվ միջնակարգ	Լրիվ միջնակարգ <sup>2</sup>	Միջին մասնագիտական	Բարձրագույն	Չգիտի/տվյալ չկա	Ընդամենը	Թվաքանակ	Ավարտած մեդիան տարիներ
<b>Սարիք</b>											
6-9	6.8	93.1	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	100.0	764	0.8
10-14	0.2	6.3	19.2	74.3	0.0	0.0	0.0	0.0	100.0	967	5.2
15-19	0.5	0.0	0.0	49.8	20.7	16.0	13.0	0.0	100.0	706	10.0
20-24	0.2	0.1	0.2	9.6	44.9	10.7	34.3	0.0	100.0	948	10.9
25-29	0.2	0.4	0.0	10.2	43.7	11.5	33.8	0.1	100.0	1,050	9.9
30-34	0.5	0.1	0.0	11.3	44.5	9.4	34.1	0.1	100.0	1,003	9.8
35-39	0.2	0.3	0.2	11.2	51.4	12.5	24.1	0.1	100.0	814	9.7
40-44	0.2	0.0	0.0	7.3	47.9	19.1	25.4	0.0	100.0	686	9.9
45-49	0.0	0.0	0.0	8.5	46.8	25.3	19.4	0.1	100.0	674	9.9
50-54	0.2	0.5	0.1	6.7	50.6	21.8	20.1	0.0	100.0	1,038	9.8
55-59	0.0	0.1	0.2	8.1	42.3	25.1	24.2	0.1	100.0	1,025	10.0
60-64	0.3	0.4	0.1	6.9	45.6	22.8	23.9	0.0	100.0	773	9.9
65+	0.4	1.3	2.5	20.7	37.2	15.7	22.1	0.0	100.0	1,512	9.7
<b>Բնակավայր</b>											
Քաղաքային	0.6	7.1	1.6	13.7	30.8	16.2	30.0	0.0	100.0	6,830	9.9
Գյուղական	0.8	6.3	2.3	22.8	45.1	12.2	10.5	0.0	100.0	5,130	9.5
<b>Մարզ</b>											
Երևան	0.3	7.1	1.6	12.1	24.6	15.0	39.4	0.0	100.0	3,531	11.4
Արագածոտն	0.2	6.5	1.7	17.5	49.0	9.6	15.3	0.2	100.0	662	9.5
Արարատ	0.8	6.7	2.7	23.4	40.3	12.4	13.6	0.0	100.0	1,141	9.5
Արմավիր	0.8	8.5	2.6	28.2	37.0	12.5	10.4	0.0	100.0	1,117	9.3
Գեղարքունիք	1.0	6.3	2.2	18.3	54.7	6.2	11.2	0.0	100.0	1,025	9.5
Լոռի	0.9	5.0	1.4	15.8	49.1	16.2	11.2	0.4	100.0	837	9.6
Կոտայք	1.1	6.6	1.9	17.1	38.5	16.6	18.2	0.0	100.0	1,242	9.7
Շիրակ	1.2	5.9	2.1	16.6	37.9	18.5	17.7	0.0	100.0	984	9.7
Սյունիք	0.2	5.8	1.7	16.6	44.8	14.7	16.3	0.0	100.0	593	9.6
Վայոց ձոր	0.3	6.8	1.2	14.8	37.2	25.1	14.6	0.0	100.0	251	9.8
Տավուշ	0.8	7.9	2.0	24.6	28.9	20.9	14.8	0.0	100.0	578	9.6
<b>Բարեկեցության քվինտիլ</b>											
Ամենացածր	1.0	7.4	2.9	27.8	45.1	10.2	5.5	0.2	100.0	2,421	9.3
Երկրորդ	0.8	5.5	1.7	18.8	44.3	14.0	14.8	0.0	100.0	2,499	9.6
Միջին	0.8	6.8	1.5	16.6	40.0	16.1	18.1	0.0	100.0	2,354	9.7
Չորրորդ	0.2	6.6	1.7	12.3	31.3	17.0	31.0	0.0	100.0	2,353	10.0
Ամենաբարձր	0.6	7.6	1.8	11.9	22.9	15.2	40.0	0.0	100.0	2,334	11.6
Ընդամենը	0.7	6.8	1.9	17.6	36.9	14.5	21.7	0.0	100.0	11,961	9.7

<sup>1</sup> Տարրական մակարդակում ավարտել է 4 դասարան:

<sup>2</sup> Ավարտել է 12-րդ դասարան կամ 9-ից ավելի, և ունի միջնակարգ կրթությունը հաստատող ատեստատ:

ԶԸՅ-ն շատ ավելի ցածր է ավագ դպրոցի մակարդակում. 15-17 տարեկան անձանց (ուլքեր պետք է հաճախեին ավագ դպրոց) միայն 56 տոկոսն է սովորում ավագ դպրոցում: Չնայած ցուցանիշը ցածր է, 2010-ին գրանցված ԶԸՅ-ի հետ (45 տոկոս) համեմատությունը ցույց է տալիս, որ ընդգրկվածությունն ավագ դպրոցում էապես բարելավել է երկու հետազոտությունների միջև ընկած ժամանակահատվածում: Ընդգրկվածությունն ավագ դպրոցում ավելի բարձր է աղջիկների շրջանում, քան տղաների (համապատասխանաբար 62 և 51 տոկոս): Զարմանալիորեն, և՛ ԶԸՅ-ն, և՛ ՀԸՅ-ն ավագ դպրոցում մի փոքր ավելի բարձր են գյուղական բնակավայրերի աշակերտների շրջանում՝ քաղաքային բնակավայրերի աշակերտների համեմատությամբ: Մյուս մարզերի համեմատությամբ՝ Երևանում և՛ ԶԸՅ-ն, և՛ ՀԸՅ-ն ավագ դպրոցում ավելի ցածր են: Ավագ դպրոցում ՀԸՅ-ն 64 տոկոս է: ԶԸՅ-ի և ՀԸՅ-ի համեմատությունը ցույց է տալիս, որ ավագ դպրոց հաճախող աշակերտների մոտ 8 տոկոսը կամ տարիքով մեծ է, կամ տարիքով փոքր է տվյալ դասարան հաճախելու համար: Մյունիքի մարզում գրանցվել է ավագ դպրոց հաճախող աշակերտների ամենամեծ մասնաբաժինը, ուլքեր կամ տարիքով մեծ են, կամ փոքր են իրենց հաճախած դասարանի համար (21 տոկոս):

**Աղյուսակ 2.12 Դպրոցում ընդգրկվածության ցուցանիշներ**

SS առկա բնակչության զուտ ընդգրկվածության (ՁԸՅ) և համախառն ընդգրկվածության ցուցանիշներն (ՀԸՅ) ըստ սեռի և ուսումնառության մակարդակի, սեռային հավասարության ցուցանիշը (ՍՀՅ), ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Զուտ ընդգրկվածության ցուցանիշ <sup>1</sup>				Համախառն ընդգրկվածության ցուցանիշ <sup>2</sup>			
	Արական	Իգական	Ընդամենը	Սեռային հավասարության ցուցանիշ <sup>3</sup>	Արական	Իգական	Ընդամենը	Սեռային հավասարության ցուցանիշ <sup>3</sup>
				ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ				ՍՎԱԳ ԴՊՐՈՑ
<b>Բնակավայր</b>								
Քաղաքային	97.5	95.5	96.6	0.98	102.5	100.1	101.4	0.98
Գյուղական	95.5	96.1	95.8	1.01	100.4	100.3	100.4	1.00
<b>Մարզ</b>								
Երևան	99.5	95.5	97.6	0.96	104.3	101.3	102.9	0.97
Արագածոտն	95.9	95.4	95.6	0.99	104.4	97.5	101.2	0.93
Արարատ	96.9	98.0	97.5	1.01	102.2	101.7	102.0	1.00
Արմավիր	96.0	98.3	96.9	1.02	101.0	102.2	101.5	1.01
Գեղարքունիք	96.2	93.5	95.0	0.97	99.9	96.4	98.2	0.97
Լոռի	95.1	95.0	95.0	1.00	97.9	99.4	98.6	1.01
Կոտայք	95.8	96.1	95.9	1.00	101.0	100.3	100.7	0.99
Շիրակ	94.8	94.8	94.8	1.00	101.9	101.4	101.7	1.00
Սյունիք	91.1	91.5	91.3	1.00	96.6	94.6	95.6	0.98
Վայոց ձոր	97.8	94.4	96.2	0.97	101.6	100.6	101.1	0.99
Տավուշ	94.0	97.7	95.6	1.04	96.3	100.4	98.1	1.04
<b>Բարեկեցության քվինտիլ</b>								
Ամենացածր	95.7	96.1	95.8	1.00	100.8	100.1	100.5	0.99
Երկրորդ	95.8	95.5	95.7	1.00	101.7	100.0	100.9	0.98
Միջին	96.0	94.9	95.5	0.99	99.7	98.5	99.2	0.99
Չորրորդ	97.7	94.9	96.4	0.97	102.8	99.8	101.4	0.97
Ամենաբարձր	98.1	97.0	97.5	0.99	103.3	102.1	102.7	0.99
Ընդամենը	96.7	95.7	96.2	0.99	101.7	100.2	101.0	0.99
ՍՎԱԳ ԴՊՐՈՑ								
<b>Բնակավայր</b>								
Քաղաքային	44.0	53.8	48.7	1.22	49.7	62.6	55.9	1.26
Գյուղական	60.6	71.7	66.1	1.18	70.7	78.3	74.4	1.11
<b>Մարզ</b>								
Երևան	36.5	49.8	43.0	1.36	37.0	58.3	47.4	1.58
Արագածոտն	64.9	61.2	63.6	0.94	72.6	68.4	71.2	0.94
Արարատ	51.8	68.0	59.7	1.31	64.3	74.9	69.5	1.16
Արմավիր	51.8	47.4	49.9	0.92	57.1	50.9	54.4	0.89
Գեղարքունիք	69.0	76.4	73.2	1.11	78.1	83.5	81.2	1.07
Լոռի	59.0	65.7	62.3	1.11	68.1	82.7	75.3	1.21
Կոտայք	51.0	71.0	60.3	1.39	62.2	77.2	69.2	1.24
Շիրակ	52.9	57.4	55.0	1.08	67.5	59.6	63.8	0.88
Սյունիք	64.7	78.9	72.3	1.22	86.8	99.2	93.4	1.14
Վայոց ձոր	67.1	80.8	73.7	1.20	69.8	92.8	80.9	1.33
Տավուշ	61.3	77.0	69.7	1.26	76.7	79.9	78.4	1.04
<b>Բարեկեցության քվինտիլ</b>								
Ամենացածր	61.1	77.7	69.3	1.27	70.1	85.2	77.6	1.21
Երկրորդ	56.3	64.2	60.0	1.14	64.1	72.4	68.0	1.13
Միջին	56.4	53.3	54.8	0.95	69.9	56.4	62.8	0.81
Չորրորդ	43.4	57.6	49.3	1.33	47.8	71.4	57.7	1.49
Ամենաբարձր	41.3	56.8	49.2	1.38	45.7	64.0	55.1	1.40
Ընդամենը	51.3	61.9	56.4	1.21	58.9	69.7	64.1	1.18

<sup>1</sup> Հիմնական դպրոցի ՁԸՅ-ն 6-14 տարեկան բնակչության տոկոսն է, որ հաճախում է հիմնական դպրոց (1-9 դասարաններ): Ավագ դպրոցի ՁԸՅ-ն 15-17 տարեկան բնակչության տոկոսն է, որ հաճախում է ավագ դպրոց (10-12 դասարաններ): Ըստ սահմանման՝ ՁԸՅ-ն չի կարող գերազանցել 100 տոկոսը:

<sup>2</sup> Հիմնական դպրոցի ՀԸՅ-ն հիմնական դպրոցի աշակերտների ընդհանուր թվաքանակի տոկոսային մասնաբաժինն է այդ մակարդակի համար օրենքով սահմանված տարիքային խմբի մշտական բնակչության թվաքանակում: Ավագ դպրոցի ՀԸՅ-ն ավագ դպրոցի աշակերտների ընդհանուր թվաքանակի տոկոսային մասնաբաժինն է այդ մակարդակի համար օրենքով սահմանված տարիքային խմբի մշտական բնակչության թվաքանակում: ՀԸՅ-ն կարող է գերազանցել 100 տոկոսը, եթե տվյալ կրթական մակարդակում օրենքով սահմանված տարիքից բարձր կամ ցածր անձանց ընդգրկվածությունը բարձր է:


<sup>3</sup> Հիմնական դպրոցի համար սեռային հավասարության ցուցանիշը հիմնական դպրոցի աղջիկների ՁԸՅ-ի (ՀԸՅ-ի) և տղաների ՁԸՅ-ի (ՀԸՅ-ի) հարաբերակցությունն է: Ավագ դպրոցի համար սեռային հավասարության ցուցանիշը ավագ դպրոցի աղջիկների ՁԸՅ-ի (ՀԸՅ-ի) և տղաների ՁԸՅ-ի (ՀԸՅ-ի) հարաբերակցությունն է:

Սեռային հավասարության ցուցանիշը (ՍՀՅ) կամ հիմնական և ավագ դպրոցներում աղջիկների ՁԸՅ-ի և ՀԸՅ-ի հարաբերությունը տղաների ՁԸՅ-ի և ՀԸՅ-ի նկատմամբ, ցույց է տալիս ընդգրկվածության ցուցանիշներում առկա սեռային ձեռքվածքի չափը: Եթե չկա սեռային տարբերություն, ապա ՍՀՅ-ն հավասար կլինի մեկի: ՍՀՅ-ն մոտ կլինի զրոյին, եթե անհավասարությունը տղաների օգտին լինի: Եթե սեռային անհավասարությունն աղջիկների օգտին

լինի, ապա ՄՉՑ-ն կլինի մեկից ավելի: Առյուսակ 2.12-ը ցույց է տալիս, որ հիմնական կրթական մակարդակի համար ՁԸՑ-ի ՄՉՑ-ն 0.99 է, ինչը նշանակում է, որ հիմնական կրթական մակարդակում չկա սեռային ճեղքվածք: Ավագ դպրոցի մակարդակում ՄՉՑ-ն 1.18 է, ինչը ցույց է տալիս, որ ավագ դպրոցում սեռային անհավասարությունն աղջիկների օգտին է:

Գծապատկեր 2.2-ը ներկայացնում է 5-24 տարեկան բնակչության կրթական մակարդակներում ընդգրկվածության տարիքային գործակիցներն ըստ սեռի: Այս գործակիցները ցույց են տալիս, որ հիմնական կրթությանը համապատասխան տարիքի (6-14 տարեկան) գրեթե բոլոր անձինք, առանց սեռային տարբերության, հաճախում են դպրոց: Ավագ դպրոցի տարիքի (15-17 տարեկան) բնակչության շրջանում նկատվում է ընդգրկվածության նվազման միտում, ընդ որում՝ ամենակտրուկ նվազումն արձանագրվել է 17 տարեկան տղաների շրջանում: Հնարավոր բացատրություններից մեկն այն է, որ պայմանավորված 18 տարեկանում բանակում ծառայելու պահանջով՝ տղաների որոշ մասը միջնակարգ մակարդակն ավարտելուց հետո այլևս չի շարունակում կրթությունը:

**Գծապատկեր 2.2 5-24 տարեկան առկա բնակչության ընդգրկվածության տարիքային գործակիցներ**



ԴՃԱԲ 2015-16

## 2.10 ԵՐԵՒԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1989 թ. Հայաստանը ստորագրել է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան. փաստաթուղթ, համաձայն որի բոլոր երեխաներն ունեն ցանկացած վիճակում իրավունքից, բռնությունից, անուշադրությունից և տնտեսական շահագործումից պաշտպանված լինելու իրավունք (UN, 1989), իսկ 1992 թ. վավերացրել է այն: 2003 թ. ՀՀ կառավարությունն ընդունել է Երեխաների իրավունքների պաշտպանության գործողությունների ազգային ծրագիրը, որը երեխայի բարեկեցությանն ուղղված բարեփոխումների անբաժան մասն է կազմում: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հավաքագրված տեղեկատվությունը հնարավորություն է տալիս գնահատելու Հայաստանում երեխաների պաշտպանության երկու տեսանկյուններ՝ ծնունդի գրանցումը և երեխայի դաստիարակությունը:



## 2.10.1 Ծնունդի գրանցում

Հայաստանում ծնունդի գրանցումը ճանաչված է որպես երեխայի իրավունք: Ծնունդի գրանցումը ծննդյան փաստի գրանցումն է քաղաքացիական կացության ակտերի պաշտոնական գրանցամատյանում (ՔԿԱԳ): Որպես ծնունդի գրանցումը հավաստող փաստաթուղթ՝ գրանցման ժամանակ կամ ավելի ուշ տրվում է ծննդյան վկայական: Վկայականը հաստատում է երեխայի իրավական ինքնությունը, որը կարևոր է ոչ միայն մանկության ժամանակ (օրինակ՝ դպրոց ընդունվելու համար), այլ նաև հետագայում՝ ամուսնանալիս, քվեարկելու կամ ժառանգություն ստանալու համար:

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում մինչև 5 տարեկան երեխաների ծնունդի գրանցման վերաբերյալ տեղեկատվություն է հավաքագրվել SS հարցաթերթի միջոցով: Աղյուսակ 2.13-ը ցույց է տալիս մինչև 5 տարեկան այն երեխաների տոկոսը, ում ծնունդը գրանցված է պետական մարմինների կողմից, և հետագոտության պահին ծննդյան վկայական ունեցող երեխաների տոկոսը: Ոչ բոլոր գրանցված երեխաները ունեն ծննդյան վկայական, քանի որ այն կարող են կորցրած լինել կամ երբեք էլ վերցրած չլինեն: Ինչևէ, ծննդյան վկայական ունեցող բոլոր երեխաները եղել են գրանցված:

Հայաստանում երեխաների ծնունդի գրանցումը գրեթե համատարած է. հետագոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում տեղի ունեցած ծնունդների 99 տոկոսը գրանցված է: Գրեթե բոլորն ունեն ծննդյան վկայական: Երեխաների ենթախմբերի միջև տարբերությունները շատ փոքր են: Ի տարբերություն մյուս մարզերի՝ Արմավիրի և Արարատի մարզերի երեխաները փոքր-ինչ քիչ են հակված ծննդյան վկայական ունենալուն (համապատասխանաբար 96 և 97 տոկոս):

## 2.10.2 Երեխայի դաստիարակություն

Ծնողների և խնամակալների դաստիարակության մեթոդները կարող են երկարաժամկետ հետևանքներ ունենալ երեխայի ֆիզիկական և հոգեբանական զարգացման և բարեկեցության վրա: Հայաստանում երեխաների դաստիարակության համար կիրառվող մեթոդների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու նպատակով յուրաքանչյուր SS-ում 1-14 տարեկան պատահականորեն ընտրված երեխայի վերաբերյալ տրվել են այդ թեմայով հարցեր<sup>4</sup>: Հարցերը տրվել են SS-ի հարցաթերթով հարցվող անդամին: Դրանք վերաբերել են հարցազրույցին նախորդող 30

**Աղյուսակ 2.13 Մինչև 5 տարեկան երեխաների ծնունդի գրանցում**

Մինչև 5 տարեկան երեխաների մշտական բնակչություն տոկոսը, ում տունը գրանցված է ՔԿԱԳ բաժինների կողմից, ըստ հիմնական տարածքիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Երեխաները, ում ծնունդը գրանցված է			Երեխաների թվաքանակ
	Տոկոսը, ովքեր ունեն ծննդյան վկայական	Տոկոսը, ովքեր չունեն ծննդյան վկայական	Գրանցվածների տոկոս	
<b>Տարիք</b>				
<2	98.6	0.9	99.5	724
2-4	98.7	0.5	99.2	1,019
<b>Մեռ</b>				
Արական	98.7	0.8	99.6	930
Իգական	98.5	0.5	99.1	813
<b>Բնակավայր</b>				
Քաղաքային	99.0	0.4	99.5	1,009
Գյուղական	98.1	1.0	99.1	734
<b>Մարզ</b>				
Երևան	99.0	0.5	99.5	499
Արագածոտն	97.8	2.2	100.0	64
Արարատ	96.5	3.1	99.7	174
Արմավիր	96.0	0.7	96.6	195
Գեղարքունիք	100.0	0.0	100.0	80
Լոռի	98.8	0.0	98.8	98
Կոտայք	99.6	0.0	99.6	249
Շիրակ	99.5	0.5	100.0	182
Սյունիք	100.0	0.0	100.0	64
Վայոց ձոր	100.0	0.0	100.0	37
Տավուշ	100.0	0.0	100.0	98
<b>Բարեկեցության քվինտիլ</b>				
Ամենացածր	98.1	1.2	99.3	340
Երկրորդ	97.4	1.1	98.4	341
Միջին	99.7	0.3	100.0	325
Չորրորդ	99.3	0.1	99.5	311
Ամենաբարձր	98.8	0.6	99.4	427
Ընդամենը	98.6	0.7	99.3	1,743

<sup>4</sup> SS-ում 1-14 տարեկան մեկից ավելի երեխայի առկայության դեպքում պատահականության սկզբունքով ընտրվել է երեխաներից միայն մեկը, և երեխայի դաստիարակության վերաբերյալ հարցերը լրացվել են նրա համար: SS-ում 1-14 տարեկան միայն մեկ երեխայի առկայության դեպքում երեխայի դաստիարակության վերաբերյալ հարցերը լրացվել են հենց այս երեխայի համար: Եթե SS-ում չի եղել 1-14 տարեկան երեխա, այս բաժնի հարցերը չեն լրացվել:

օրերի ընթացքում երեխայի դաստիարակության համար կիրառված մեթոդներին: Մասնավորապես՝ արդյո՞ք SS անդամներից որևէ մեկը կիրառել է հետևյալ մեթոդներից որևէ մեկը երեխայի նկատմամբ. գրկել է երեխային արտոնություններից, արգելել է զբաղվել սիրելի զբաղմունքով կամ թույլ չի տվել տանից դուրս գալ, բացատրել է, թե ինչու է նրա վարքագիծը սխալ, թափահարել է երեխային, բղավել կամ գոռացել է նրա վրա, տվել է լրացուցիչ հանձնարարություն, ձեռքով խփել կամ հարվածել է նրա հետույքին, հարվածել է նրա հետույքին կամ մարմնի այլ մասերին գոտիով, սանրով, փայտով կամ այլ կոշտ առարկայով, անվանել է հիմար, անբան կամ օգտագործել է որևէ այլ վիրավորական արտահայտություն, հարվածել է նրա երեսին, գլխին կամ ականջներին, հարվածել է դաստակներին, ձեռքերին կամ ոտքերին, կամ ծեծել է երեխային՝ ողջ ուժով անընդհատ հարվածներ հասցնելով:

Աղյուսակ 2.14-ը ցույց է տալիս, որ 1-14 տարեկան տասը երեխաներից յոթը հետազոտությանը նախորդող 30 օրերի ընթացքում ենթարկվել են հոգեբանական կամ ֆիզիկական որևէ պատժի: Երեխաների մոտ մեկ հինգերորդի (19 տոկոս) նկատմամբ կիրառվել է դաստիարակման ոչ բռնի մեթոդ: Հոգեբանական ազդեցության ավելի տարածված է, քան ֆիզիկականը. երեխաների երկու երրորդից ավելին (65 տոկոս) ենթարկվել է հոգեբանական ազդեցության, իսկ 38 տոկոսը՝ ֆիզիկական պատժի որևէ տեսակի: Երեխաների 4 տոկոսը ենթարկվել է ֆիզիկական խիստ պատժի:

Բռնի մեթոդները գրեթե հավասարապես կիրառվել են թե՛ աղջիկների (67 տոկոս), թե՛ տղաների (71 տոկոս) նկատմամբ: Վաղ տարիքի երեխաների նկատմամբ բռնություն կիրառվել է ավելի հազվադեպ, քան 3-14 տարեկան երեխաների նկատմամբ: Այնուամենայնիվ, մեկ և երկու տարեկան երեխաների գրեթե կեսի նկատմամբ կիրառվել է դաստիարակության որևէ բռնի մեթոդ: Դաստիարակության բռնի մեթոդները գրեթե նույն կերպով տարածված են քաղաքային (68 տոկոս) և գյուղական (71 տոկոս) բնակավայրերի երեխաների շրջանում: Սյունիքի և Վայոց ձորի մարզերի երեխաներն ամենաքիչն են ենթարկվել դաստիարակության որևէ բռնի մեթոդի (համապատասխանաբար 56 և 59 տոկոս): Եվ հակառակը՝ Արագածոտնի և Լոռու մարզերի տասը երեխաներից մոտ ութի նկատմամբ կիրառվել է որևէ բռնի մեթոդ:

Երեխայի նկատմամբ դաստիարակության բռնի մեթոդների կիրառումը, և հատկապես հոգեբանական մեթոդների, կապված է կրթական մակարդակի հետ: Այն SS-ներում, որտեղ SS գլխավորն ունի միայն հիմնական կրթություն, երեխաների 72 տոկոսը հետազոտությանը նախորդող մեկ ամսվա ընթացքում ենթարկվել է հոգեբանական բռնության որևէ տեսակի՝ համեմատած այն երեխաների 58 տոկոսի հետ, ովքեր բնակվում են այնպիսի SS-ներում, որտեղ SS գլխավորն ունի բարձրագույն կրթություն: Երեխաներին դաստիարակելու համար բռնի մեթոդների կիրառումը միտում ունի նվազելու՝ բարեկեցության քվինտիլի աճին զուգընթաց: Որևէ խիստ ֆիզիկական պատժի կիրառման և կրթական ու բարեկեցության մակարդակների միջև կապը ևս նշանակալի է: Այն SS-ներում, որտեղ SS գլխավորն ունի միայն հիմնական կրթություն, երեխաների 8 տոկոսի նկատմամբ կիրառվել է որևէ խիստ մեթոդ՝ համեմատած այն երեխաների 2 տոկոսի հետ, ովքեր բնակվում են այնպիսի SS-ներում, որտեղ SS գլխավորն ունի միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն: Նմանապես՝ խիստ ֆիզիկական պատժի ենթարկված երեխաների տոկոսը բարեկեցության ամենացածր քվինտիլում կազմել է 8 տոկոս, իսկ բարեկեցության չորրորդ և հինգերորդ քվինտիլներում՝ 2 տոկոս:

**Աղյուսակ 2.14 Երեխայի դաստիարակություն**

1-14 տարեկան երեխաների տոկոսը, ում նկատմամբ հետազոտությանը նախորդող մեկ ամսվա ընթացքում կիրառվել է դաստիարակության որևէ մեթոդ, ըստ կիրառված մեթոդների և ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	1-14 տարեկան երեխաների տոկոսը, ում նկատմամբ կիրառվել է					1-14 տարեկան երեխաների թվաքանակ
	Միայն ոչ բռնի մեթոդ <sup>1</sup>	Հոգեբանական ազդեցիկ <sup>2</sup>	Ֆիզիկական պատիժ		Դաստիարակության որևէ բռնի մեթոդ <sup>3</sup>	
			Որևէ <sup>3</sup>	Խիստ <sup>4</sup>		
<b>Տարիք</b>						
1-2	12.0	41.5	33.0	0.9	50.1	394
3-4	15.1	67.9	53.4	1.2	74.7	375
5-9	17.3	72.0	41.1	4.0	74.9	1,081
10-14	23.8	65.8	30.6	6.6	67.7	1,030
<b>Սեռ</b>						
Արական	16.7	67.2	39.0	4.5	70.8	1,515
Իգական	20.7	62.7	36.6	3.7	66.8	1,365
<b>Բնակավայր</b>						
Քաղաքային	21.0	63.7	37.2	2.7	67.6	1,677
Գյուղական	15.3	67.0	38.8	6.2	70.7	1,203
<b>Մարզ</b>						
Երևան	22.0	63.7	41.8	1.9	68.9	870
Արագածոտն	17.9	70.4	49.4	9.6	78.6	138
Արարատ	7.2	69.0	34.4	9.6	70.4	295
Արմավիր	14.2	62.9	33.2	2.9	65.0	287
Գեղարքունիք	13.9	68.4	57.1	20.0	74.7	203
Լոռի	14.2	76.7	44.8	2.1	79.3	142
Կոտայք	17.8	70.1	24.3	0.7	71.2	353
Շիրակ	18.9	59.4	35.6	1.5	62.7	261
Սյունիք	34.4	51.9	15.1	0.8	56.2	121
Վայոց ձոր	26.3	52.6	36.8	1.7	59.4	58
Տավուշ	26.6	62.5	41.4	0.8	66.3	153
<b>SS գլխավորի կրթությունը</b>						
Չունի կրթություն	*	*	*	*	*	5
Հիմնական	12.4	72.1	40.9	7.7	73.6	359
Միջնակարգ	17.6	66.8	37.6	4.8	71.0	1,370
Միջին մասնագիտական	19.2	64.2	37.2	1.9	66.8	552
Բարձրագույն	24.4	57.7	37.0	2.3	63.1	593
<b>Բարեկեցության քվինտիլ</b>						
Ամենացածր	12.2	69.6	43.1	8.0	73.1	595
Երկրորդ	17.9	65.2	35.4	4.2	69.3	538
Միջին	18.3	66.0	36.8	4.2	69.0	547
Չորրորդ	23.9	61.0	33.2	2.4	64.9	543
Ամենաբարձր	20.9	63.4	39.8	2.0	68.0	657
Ընդամենը	18.6	65.1	37.8	4.1	68.9	2,880

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա: Ընդամենը ներառում է մեկ երեխայի, ում դեպքում չկա տվյալ SS գլխավորի կրթության մասին:

<sup>1</sup> Միայն ոչ բռնի մեթոդներ. (1) դրական պատասխան է տրվել նշվածներից մեկին կամ երկուսին էլ՝ գրկել է երեխային արտոնություններից, արգելել է զբաղվել սիրելի զբաղմունքով կամ թույլ չի տվել տանից դուրս գալ, կամ բացատրել է, թե ինչու է նրա վարքագիծը սխալ կամ տվել է լրացուցիչ հանձնարարություն, և (2) բացասական պատասխան է տրվել հետևյալներից բոլորին՝ թափահարել է երեխային, բղավել կամ գոռացել է երեխայի վրա, ձեռքով խփել կամ հարվածել է երեխայի հետույքին, հարվածել է երեխայի հետույքին կամ մարմնի այլ մասերին գոտիով, սանրով, փայտով կամ այլ կոշտ առարկայով, անվանել է հիմար, անբան կամ օգտագործել է այլ վիրավորական արտահայտություն, հարվածել է երեխայի երեսին, գլխին կամ ականջներին, հարվածել է դաստակներին, ձեռքերին կամ ոտքերին, ծեծել է երեխային՝ անընդհատ ողջ ուժով հարվածներ հասցնելով:

<sup>2</sup> Հոգեբանական ազդեցիկ. դրական պատասխան է տրվել նշվածներից մեկին կամ երկուսին էլ՝ բղավել կամ գոռացել է երեխայի վրա կամ անվանել է հիմար, անբան կամ օգտագործել է այլ վիրավորական արտահայտություն:

<sup>3</sup> Որևէ ֆիզիկական պատիժ. դրական պատասխան է տրվել նշվածներից որևէ մեկին՝ թափահարել է երեխային, ձեռքով խփել կամ հարվածել է երեխայի հետույքին, հարվածել է երեխայի հետույքին կամ մարմնի այլ մասերին գոտիով, սանրով, փայտով կամ այլ կոշտ առարկայով, հարվածել է երեխայի երեսին, գլխին կամ ականջներին, հարվածել է դաստակներին, ձեռքերին կամ ոտքերին, կամ ծեծել է երեխային՝ անընդհատ ողջ ուժով հարվածներ հասցնելով:

<sup>4</sup> Խիստ ֆիզիկական պատիժ. դրական պատասխան է տրվել նշվածներից մեկին կամ երկուսին էլ՝ հարվածել է երեխայի երեսին, գլխին կամ ականջներին, կամ ծեծել է երեխային՝ անընդհատ ողջ ուժով հարվածներ հասցնելով:

<sup>5</sup> Դաստիարակության որևէ բռնի մեթոդ. (MICS ցուցանիշ 8.3 – Բռնի դաստիարակություն) դրական պատասխան է տրվել նշվածներից որևէ մեկին՝ թափահարել է երեխային, բղավել կամ գոռացել է երեխայի վրա, ձեռքով խփել կամ հարվածել է երեխայի հետույքին, հարվածել է երեխայի հետույքին կամ մարմնի այլ մասերին գոտիով, սանրով, փայտով կամ այլ կոշտ առարկայով, անվանել է հիմար, անբան կամ օգտագործել է այլ վիրավորական արտահայտություն, հարվածել է երեխայի երեսին, գլխին կամ ականջներին, հարվածել է դաստակներին, ձեռքերին կամ ոտքերին, ծեծել է երեխային՝ անընդհատ ողջ ուժով հարվածներ հասցնելով:

## 2.11 ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ

ՀՀ կառավարությունն աղքատ ընտանիքներին աջակցելու նպատակով տրամադրում է մի շարք նպաստներ: Համաձայն «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի սահմանվում են պետական նպաստների հետևյալ տասը տեսակները՝ ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ, հրատապ օգնություն, երեխայի ծննդյան միանվագ նպաստ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ, ժամանակավոր անաշխատունակության նպաստ, ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ, թաղման նպաստ:

ՀԺԱՀ 2015-16-ի հարցվողներին տրվել է հարց նպաստների երկու տեսակների՝ ընտանեկան նպաստի և հրատապ օգնության նպաստի վերաբերյալ: Այս նպաստների ընդգրկվածության մասին տեղեկատվություն հավաքագրելու նպատակով ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում ներառված էր հարց այն մասին, թե արդյոք հետազոտությանը նախորդող վեց ամիսների ընթացքում տնային տնտեսությունը ստացել է (1) ամենամսյա դրամական նպաստ, այն է՝ աղքատության ընտանեկան նպաստ, կամ (2) հրատապ օգնություն, որը տարեկան ամենաշատը չորս անգամ տրվող դրամական նպաստ է: Հարցվողներին նաև խնդրել են ասել, թե արդյոք իրենց տնային տնտեսության անդամներից որևէ մեկը նշված ժամանակահատվածում օգտվել է պետպատվերից՝ ստանալու համար անվճար բժշկական ծառայություններ, որոնք այլապես վճարովի են: Բացի այդ, այն SS-ները, որոնք հետազոտությանը նախորդող վեց ամիսների ընթացքում չեն ստացել վերոնշյալ նպաստներից ոչ մեկը, հարցվել են, թե արդյոք հետազոտությանը նախորդող վեց ամիսների ընթացքում գրանցվել կամ թարմացրել են իրենց գրանցումն ընտանեկան նպաստների ծրագրի տվյալների բազայում:

Աղյուսակ 2.15-ը ցույց է տալիս, որ հարցագրույցի մասնակացած SS-ների 14 տոկոսը հետազոտությանը նախորդող 6 ամիսների ընթացքում ստացել է նպաստներից առնվազն մեկը կամ օգտվել է պետպատվերից: SS-ների 11 տոկոսը ստացել է ամենամսյա դրամական նպաստ, 3 տոկոսը պետպատվերի շրջանակում ստացել է անվճար բժշկական ծառայություններ, իսկ 1 տոկոսը՝ հրատապ օգնության նպաստ: Ըստ էության, ոչ մի SS չի ստացել բոլոր երեք նպաստները: Նպաստ չստացած SS-ների շրջանում SS-ների 3 տոկոսը գրանցվել է կամ թարմացրել է իր գրանցումն ընտանեկան նպաստների ծրագրի տվյալների բազայում: Ընդհանուր առմամբ, հետազոտությանը նախորդող 6 ամիսների ընթացքում վեց SS-ներից մեկը կա՛մ ստացել է որևէ նպաստ, կա՛մ գրանցվել է ընտանեկան նպաստների ծրագրի տվյալների բազայում:

**Աղյուսակ 2.15 Աղքատության նպաստներ**

SS-ների տոկոսը, որ հետազոտությանը նախորդող վեց ամիսների ընթացքում ստացել է աղքատության ընտանեկան նպաստ, հրատապ օգնության նպաստ կամ պետպատվերի շրջանակում օգտվել է անվճար բժշկական ծառայություններից, SS-ների տոկոսը, որ հետազոտությանը նախորդող վեց ամիսների ընթացքում ստացել է վերոնշյալներից բոլոր երեքը, և տոկոսը, որ չի ստացել վերոնշյալներից ոչ մեկը, և վերոնշյալ երեքից ոչ մեկը չստացած SS-ների տոկոսը, որ հետազոտությանը նախորդող վեց ամիսների ընթացքում գրանցվել կամ թարմացրել են իրենց գրանցումն ընտանեկան նպաստների ծրագրի տվյալների բազայում, ըստ ընտրված հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

	SS-ների տոկոսը, որ պետպատվերի շրջանակում օգտվել են անվճար							Այն SS-ների շրջանում, որ չեն ստացել վերոնշյալ երեքից ոչ մեկը	
	SS-ների տոկոսը, որ ստացել է աղքատության ընտանեկան նպաստ <sup>1</sup>	SS-ների տոկոսը, որ ստացել է հրատապ օգնության նպաստ <sup>2</sup>	SS-ների բժշկական ծառայություններից, որոնք այլապես վճարովի են <sup>3</sup>	SS-ների տոկոսը, որ ստացել է վերոնշյալ առնվազն մեկը	SS-ների տոկոսը, որ ստացել է տոկոսը, որ չի ստացել վերոնշյալներից բոլոր երեքը	SS-ների տոկոսը, որ չի ստացել վերոնշյալ երեքից ոչ մեկը	SS-ների թվաքանակ	Տոկոսը, որ գրանցվել կամ թարմացրել են իրենց գրանցումն ընտանեկան նպաստների ծրագրի տվյալների բազայում	SS-ների թվաքանակը, որ չի ստացել վերոնշյալ երեքից ոչ մեկը
<b>Բնակավայր</b>									
Քաղաքային	8.5	0.9	2.0	10.8	0.1	89.2	4,924	2.3	4,390
Գյուղական	15.4	1.1	3.3	18.9	0.0	81.1	2,969	2.7	2,408
<b>Մարզ</b>									
Երևան	3.8	0.2	1.9	5.6	0.1	94.4	2,480	2.3	2,340
Արագածոտն	10.1	0.6	0.1	10.9	0.0	89.1	387	1.7	345
Արարատ	8.9	0.6	0.2	9.3	0.0	90.7	682	0.9	618
Արմավիր	8.8	0.7	3.8	12.4	0.0	87.6	633	5.7	554
Գեղարքունիք	23.1	2.8	8.5	31.1	0.3	68.9	601	5.2	414
Լոռի	17.0	0.5	0.5	17.3	0.2	82.7	645	0.2	533
Կոտայք	13.6	0.6	1.2	15.1	0.0	84.9	799	1.7	678
Շիրակ	21.2	0.6	1.3	22.5	0.0	77.5	685	2.4	531
Սյունիք	7.4	6.5	7.7	20.8	0.0	79.2	448	0.1	355
Վայոց ձոր	12.5	0.0	4.4	16.1	0.0	83.9	167	3.4	140
Տավուշ	18.5	0.6	2.5	21.0	0.0	79.0	366	5.9	289
<b>Բարեկեցության քվինտիլ</b>									
Ամենացածր	20.6	1.9	3.2	24.5	0.1	75.5	1,700	3.3	1,284
Երկրորդ	12.8	1.1	2.2	15.7	0.0	84.3	1,452	2.4	1,224
Միջին	10.8	1.2	3.1	14.1	0.3	85.9	1,791	3.0	1,539
Չորրորդ	6.9	0.4	1.8	8.6	0.0	91.4	1,558	1.7	1,423
Ամենաբարձր	2.8	0.1	1.8	4.5	0.0	95.5	1,392	1.9	1,329
<b>Ընդամենը</b>	<b>11.1</b>	<b>1.0</b>	<b>2.5</b>	<b>13.9</b>	<b>0.1</b>	<b>86.1</b>	<b>7,893</b>	<b>2.5</b>	<b>6,798</b>

<sup>1</sup> Աղքատության ընտանեկան նպաստ, այն է՝ ամենամսյա դրամական նպաստ:  
<sup>2</sup> Հրատապ օգնություն, այն է՝ տարեկան ամենաշատը չորս անգամ տրվող դրամական նպաստ:  
<sup>3</sup> Պետպատվեր, այն է՝ ստանալ անվճար բժշկական ծառայություններ, որոնք այլապես վճարովի են (օր.՝ վիրահատություն):

Քաղաքային բնակավայրերի SS-ների համեմատությամբ՝ գյուղական բնակավայրերի կրկնակի անգամ շատ SS-ներ են ստացել վերոնշյալ երեքից առնվազն մեկը: Գեղարքունիքում գրանցվել է SS-ների ամենաբարձր (31 տոկոս), իսկ Երևանում՝ ամենացածր (6 տոկոս) մասնաբաժինը: Նպաստ ստացող SS-ները հիմնականում գտնվում են բարեկեցության վերջին երեք քվինտիլներում, ընդ որում՝ բարեկեցության ամենացածր քվինտիլում գտնվող չորս տնային տնտեսությունից մեկը ստանում է նպաստ:



**Հիմնական արդյունքներ**

- 15-49 տարեկան բոլոր կանայք և տղամարդիկ ունեն առնվազն միջնակարգ կրթություն, իսկ կանանց 31 և տղամարդկանց 27 տոկոսն ունեն բարձրագույն կրթություն:
- Հայաստանում տասը կանանցից և տղամարդկանցից ինը շաբաթական առնվազն մեկ անգամ օգտվում են զանգվածային լրատվամիջոցների որևէ տեսակից՝ մասնավորապես հեռուստացույցից:
- Համացանցի օգտագործումը լայնորեն տարածված է. կանանց 91 և տղամարդկանց 89 տոկոսը շաբաթական առնվազն մեկ անգամ օգտվում են համացանցից:
- Տասը տղամարդկանցից յոթը և տասը կանանցից չորսը նշել են, որ հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում ունեցել են աշխատանք կամ եկամտաբեր զբաղվածություն:

Սույն գլուխը ներկայացնում է ՀԺԱՀ 2015-16-ի ընտրանքում ներառված հարցվողների ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական պատկերը: Հարցված կանանց և տղամարդկանց հիմնական բնութագրիչների վերաբերյալ տեղեկատվությունը կարևոր է զեկույցի վերջին գլուխներում ներկայացված վերարտադրողականության, առողջության, կնոջ կարգավիճակի և այլ թեմաների շուրջ հետազոտության արդյունքների մեկնաբանման համար: Հարցվողների բաշխումն ըստ ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական զանազան բնութագրիչների կարելի է համեմատել նաև ընդամենը բնակչության նույնանուն ցուցանիշների հետ՝ գնահատելու համար ՀԺԱՀ ընտրանքի ներկայացուցչականությունը: Այստեղ մանրամասն ներկայացված և հետագայում վերարտադրողականության ու առողջության վերաբերյալ հաջորդող գլուխներում օգտագործված հիմնական բնութագրիչներն են՝ տարիքը հետազոտության պահին, ամուսնական կարգավիճակը, բնակավայրը, կրթությունը և բարեկեցության մակարդակը: Սույն գլխում նաև ներկայացված է զանգվածային լրատվամիջոցների (ԶԼՄ) ազդեցության և հարցվողների զբաղվածության վերաբերյալ տեղեկատվություն:

**3.1 ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ**

Ինչպես արդեն նշվել է Գլուխ 1-ում, ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում անհատական հարցազրույցի համար հարցվող են հանդիսացել 15-49 տարեկան բոլոր կանայք, ովքեր եղել են տվյալ տնային տնտեսության (SS) մշտական բնակիչ կամ հետազոտությանը նախորդող գիշերը գիշերել են տվյալ SS-ում: 15-49 տարեկան տղամարդիկ անհատական հարցազրույցի են մասնակցել յուրաքանչյուր երկրորդ SS-ում: Հարցվողների կրկնահաշվարկից խուսափելու համար այս զեկույցում ներկայացված աղյուսակները հիմնականում կազմվել են առկա բնակչության հիման վրա, այսինքն՝ այն անձանց, ովքեր հետազոտությանը նախորդող գիշերը գիշերել են տվյալ SS-ում:

Աղյուսակ 3.1-ը ներկայացնում է 15-49 տարեկան հարցված կանանց և տղամարդկանց բաշխումն ըստ հիմնական բնութագրիչների: Տարիքային բաշխումը ցույց է տալիս, որ կանանց 45 տոկոսը և տղամարդկանց 46 տոկոսը մինչև 30 տարեկան են: Ե՛վ կանանց, և՛ տղամարդկանց մոտ մեկ քառորդը 40-49 տարեկան են: Կանանց մոտ երկու երրորդը (64 տոկոս) և տղամարդկանց կեսից ավելին (55 տոկոս) ամուսնացած են կամ բնակվում են համատեղ: Քանի որ տղամարդիկ

ամուսնանում են կանանցից ավելի ուշ, կանանց համեմատությամբ (30 տոկոս)՝ տղամարդկանց ավելի մեծ մասնաբաժին է նշել, որ երբևէ ամուսնացած չի եղել (43 տոկոս): Կանանց 6 տոկոսն ամուսնալուծված է, բաժանված կամ այրի՝ համեմատած տղամարդկանց 2 տոկոսի հետ:

**Աղյուսակ 3.1 Հարցվողների հիմնական բնութագրիչներ**

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ ընտրված հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կանայք			Տղամարդիկ		
	Կշռված տոկոս	Կշռված թվաքանակ	Չկշռված թվաքանակ	Կշռված տոկոս	Կշռված թվաքանակ	Չկշռված թվաքանակ
<b>Տարիք</b>						
15-19	11.9	725	743	12.5	345	346
20-24	15.2	928	922	17.0	467	450
25-29	18.0	1,099	1,076	16.9	464	477
30-34	16.5	1,007	1,005	15.5	427	434
35-39	14.2	867	874	13.6	376	373
40-44	12.8	784	782	12.6	346	341
45-49	11.5	706	714	12.0	330	334
<b>Ամուսնական կարգավիճակ</b>						
Երբևէ չամուսնացած	29.9	1,830	1,747	43.2	1,190	1,179
Ամուսնացած	63.3	3,870	3,973	49.4	1,361	1,368
Համատեղ բնակվող	0.4	25	25	5.3	145	159
Ամուսնալուծված/ բաժանված	4.3	262	244	2.0	56	46
Այրի	2.1	128	127	0.1	3	3
<b>Բնակավայր</b>						
Քաղաքային	59.8	3,657	3,545	56.5	1,558	1,522
Գյուղական	40.2	2,459	2,571	43.5	1,197	1,233
<b>Մարզ</b>						
Երևան	32.7	2,001	1,055	30.2	833	440
Արագածոտն	5.2	315	453	5.8	159	228
Արարատ	9.0	552	597	10.5	290	313
Արմավիր	9.6	586	642	9.7	268	284
Գեղարքունիք	7.8	478	551	8.5	235	268
Լոռի	5.8	355	337	6.7	184	164
Կոտայք	11.1	678	659	10.8	299	288
Շիրակ	8.3	510	536	7.3	201	191
Սյունիք	3.9	238	383	3.8	104	174
Վայոց ձոր	1.9	119	405	2.0	56	186
Տավուշ	4.6	283	498	4.6	126	219
<b>Կրթություն</b>						
Կրթություն չունի	0.1	5	5	0.2	5	6
Հիմնական	6.5	396	406	13.1	360	379
Միջնակարգ	40.0	2,444	2,580	45.4	1,250	1,293
Միջին մասնագիտական	22.2	1,360	1,444	14.6	403	422
Բարձրագույն	31.2	1,910	1,681	26.7	736	655
<b>Բարեկեցության քվինտիլ</b>						
Ամենացածր	17.7	1,081	1,137	19.0	523	536
Երկրորդ	20.3	1,242	1,358	21.2	583	626
Միջին	18.7	1,142	1,324	18.9	521	608
Չորրորդ	21.0	1,287	1,293	20.5	566	565
Ամենաբարձր	22.3	1,365	1,004	20.4	562	420
Ընդամենը	100.0	6,116	6,116	100.0	2,755	2,755

Նշում: Կրթության կատեգորիաները վերաբերում են հաճախած ամենաբարձր կրթական մակարդակին՝ անկախ այն ավարտելու հանգամանքից:

Հարցվողների երեք հինգերորդը բնակվում է քաղաքային բնակավայրերում, ընդ որում՝ մեծամասնությունը՝ Երևանում: Երևանից դուրս հարցվողների ամենամեծ մասնաբաժիններն արձանագրվել են Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերում՝ կազմելով ընդհանուր ընտրանքի շուրջ 10-ական տոկոսը: Հարցվողների ամենափոքր մասնաբաժինները Վայոց ձորում և Սյունիքում են:

Կանայք և տղամարդիկ համատարած ունեն բարձր կրթական մակարդակ. կանանց 93 և տղամարդկանց 87 տոկոսն ունեն միջնակարգ կամ ավելի բարձր կրթություն, իսկ կանանց 31 տոկոսը և տղամարդկանց քառորդից ավելին ունեն բարձրագույն կրթություն:



### 3.2 ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Կրթությունը մարդկանց տալիս է գիտելիքներ և հմտություններ՝ հնարավորություն տալով ունենալ կյանքի ավելի լավ որակ: Կրթական մակարդակը խիստ կապված է մոր և երեխայի առողջության, ինչպես նաև կանանց և տղամարդկանց վերարտադրողական վարքագծի հետ:

Աղյուսակ 3.2.1-ը և Աղյուսակ 3.2.2-ը ցույց են տալիս ուսման ավարտած տարիների մեդիանը և 15-49 տարեկան կանանց ու տղամարդկանց բաշխումն ըստ հաճախած կամ ավարտած ամենաբարձր կրթական մակարդակի<sup>1</sup> և ըստ հիմնական բնութագրիչների: Որոշակի ժամանակաշրջանում կրթությունը Հայաստանում գրեթե համատարած բնույթ է կրել, և գրեթե բոլոր կանայք ու տղամարդիկ ունեցել են առնվազն միջնակարգ կրթություն: Կանանց մեկ հինգերորդից ավելին և տղամարդկանց 15 տոկոսն ունեն միջին մասնագիտական կրթություն: Տասը կանանցից երեքը և տղամարդկանց մեկ քառորդից ավելին ունեն բարձրագույն կրթություն:

**Աղյուսակ 3.2.1 Կրթական մակարդակ. կանայք**

15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումն ըստ հաճախած կամ ավարտած ամենաբարձր կրթական մակարդակի, և ավարտած մեդիան տարիները, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կրթության ամենաբարձր մակարդակը								Ավարտած մեդիան տարիներ	Կանանց թվաքանակ
	Կրթություն չունի	Ոչ լրիվ տարրական	Լրիվ տարրական <sup>1</sup>	Ոչ լրիվ միջնակարգ	Լրիվ միջնակարգ <sup>2</sup>	Միջին մասնագիտական	Բարձրագույն	Ընդամենը		
<b>Տարիք</b>										
15-24	0.0	0.2	0.1	23.0	25.9	16.4	34.3	100.0	11.0	1,653
15-19	0.0	0.3	0.0	48.6	18.2	16.9	16.0	100.0	10.1	725
20-24	0.0	0.2	0.1	3.0	32.0	16.1	48.6	100.0	11.9	928
25-29	0.1	0.6	0.1	3.7	33.9	20.7	40.9	100.0	12.3	1,099
30-34	0.1	0.2	0.1	5.2	41.6	22.6	30.2	100.0	11.5	1,007
35-39	0.0	0.3	0.0	6.6	43.7	22.6	26.9	100.0	10.0	867
40-44	0.3	0.0	0.0	4.4	42.5	28.3	24.6	100.0	11.2	784
45-49	0.0	0.2	0.0	5.8	40.2	30.6	23.1	100.0	11.3	706
<b>Բնակավայր</b>										
Քաղաքային	0.0	0.3	0.0	6.5	26.6	24.9	41.7	100.0	12.2	3,657
Գյուղական	0.2	0.2	0.1	15.0	50.6	18.3	15.6	100.0	9.8	2,459
<b>Մարզ</b>										
Երևան	0.0	0.2	0.0	5.7	20.3	22.0	51.8	100.0	12.7	2,001
Արագածոտն	0.0	0.0	0.0	7.7	57.4	15.4	19.5	100.0	9.9	315
Արարատ	0.0	0.3	0.2	12.9	51.8	16.2	18.6	100.0	9.9	552
Արմավիր	0.5	1.1	0.2	19.6	41.2	19.7	17.7	100.0	9.8	586
Գեղարքունիք	0.0	0.0	0.0	12.7	56.7	17.3	13.3	100.0	9.8	478
Լոռի	0.0	0.0	0.0	7.4	43.3	23.1	26.2	100.0	11.1	355
Կոտայք	0.0	0.4	0.0	9.9	36.5	26.5	26.8	100.0	11.0	678
Շիրակ	0.2	0.2	0.0	8.6	39.6	25.3	26.0	100.0	11.0	510
Սյունիք	0.2	0.0	0.0	13.1	36.6	28.7	21.3	100.0	10.9	238
Վայոց ձոր	0.0	0.0	0.0	10.6	40.2	29.6	19.6	100.0	10.3	119
Տավուշ	0.3	0.0	0.0	13.9	32.3	32.0	21.5	100.0	11.1	283
<b>Բարեկեցության քվինտիլ</b>										
Ամենացածր	0.1	0.4	0.1	21.0	53.2	16.1	9.0	100.0	9.7	1,081
Երկրորդ	0.1	0.1	0.1	9.6	47.6	20.8	21.6	100.0	10.0	1,242
Միջին	0.0	0.4	0.0	9.2	41.4	25.4	23.6	100.0	10.7	1,142
Չորրորդ	0.2	0.4	0.0	5.6	25.5	26.7	41.6	100.0	12.2	1,287
Ամենաբարձր	0.0	0.0	0.0	6.0	18.2	21.6	54.2	100.0	12.8	1,365
Ընդամենը	0.1	0.3	0.0	9.9	36.2	22.2	31.2	100.0	11.3	6,116

<sup>1</sup> Տարրական մակարդակում ավարտել է 4 դասարան:

<sup>2</sup> Ավարտել է միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանը կամ սովորել է 9-ից ավելի տարի և ունի միջնակարգ կրթությունը հաստատող ատեստատ:

Չնայած գրեթե բոլոր կանայք հաճախել են միջնակարգ դպրոց՝ կրթական ավելի բարձր մակարդակներում հաճախման տարբերություններն ըստ հիմնական բնութագրիչների ակնհայտ են:

<sup>1</sup> Ինչպես ներկայացված է Գլուխ 2-ում, Հայաստանում կրթական համակարգը փոփոխվել է մի քանի փուլերով: 2007 թ. ի վեր՝ հիմնական կրթական մակարդակը ներառում է 1-9 դասարանները՝ նախկին համակարգում ներառված 1-8 դասարանների փոխարեն, իսկ ավագ դպրոցը՝ 10-12 դասարանները՝ նախկին 9-10 դասարանների փոխարեն: Այս երկու մակարդակները (հիմնական կրթություն և ավագ դպրոց) միասին կոչվում են միջնակարգ կրթություն (1-12 դասարանները՝ նախկին 1-10 դասարանների փոխարեն):

Օրինակ՝ քաղաքաբնակ կանանց 42 տոկոսն ունի բարձրագույն կրթություն՝ համեմատած գյուղաբնակ կանանց 16 տոկոսի հետ: Մեծ են տարբերությունները նաև ըստ մարզերի. բարձրագույն կրթություն ունեցող կանանց ամենամեծ մասնաբաժինը Երևանում է (52 տոկոս), իսկ ամենափոքրը՝ Գեղարքունիքում (13 տոկոս): Բարձրագույն կրթություն ստանալու հանգամանքը կապված է բարեկեցության կարգավիճակի հետ. բարեկեցության ամենաբարձր քվինտիլում գտնվող կանանց կեսից ավելին (54 տոկոս) ունի բարձրագույն կրթություն՝ համեմատած բարեկեցության ամենացածր քվինտիլում գտնվող տասը կանանցից մեկի հետ:

Նմանատիպ տարբերություններ են արձանագրվել նաև բարձրագույն կրթություն ունեցող տղամարդկանց շրջանում (Աղյուսակ 3.2.2): Քաղաքաբնակ տղամարդկանց 37 տոկոսն ունի բարձրագույն կրթություն՝ համեմատած գյուղաբնակ տղամարդկանց 14 տոկոսի հետ: Ինչպես կանանց շրջանում, տղամարդկանց շրջանում ևս մեծ են տարբերություններն ըստ մարզերի: Երևանում բնակվող տղամարդիկ այս առումով գերազանցում են մյուս մարզերում բնակվողներին. Երևանում բնակվող տղամարդկանց շուրջ կեսը (47 տոկոս) ունի բարձրագույն կրթություն՝ համեմատած Արմավիրում բնակվող տղամարդկանց 10 տոկոսի և Գեղարքունիքում բնակվող տղամարդկանց 12 տոկոսի հետ: Բարեկեցության կարգավիճակը ևս կապված է կրթության հետ. բարեկեցության ամենաբարձր քվինտիլում գտնվող տղամարդկանց կեսն ունի բարձրագույն կրթություն՝ համեմատած բարեկեցության ամենացածր քվինտիլում գտնվող տղամարդկանց 5 տոկոսի հետ:

**Աղյուսակ 3.2.2 Կրթական մակարդակ, տղամարդիկ**

15-49 տարեկան տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ հաճախած կամ ավարտած ամենաբարձր կրթական մակարդակի, և ավարտած մեղիան տարիները, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կրթության ամենաբարձր մակարդակը							Ավարտած մեղիան տարիներ	Տղամարդկանց թվաքանակ	
	Կրթություն չունի	Ոչ լրիվ տարրական	Լրիվ տարրական <sup>1</sup>	Ոչ լրիվ միջնակարգ	Լրիվ միջնակարգ <sup>2</sup>	Միջին մասնագիտական	Բարձրագույն			
<b>Տարիք</b>										
15-24	0.2	0.6	0.0	28.8	31.4	13.4	25.7	100.0	10.4	813
15-19	0.4	0.1	0.0	53.1	18.2	14.4	13.9	100.0	10.1	345
20-24	0.0	0.9	0.0	10.9	41.1	12.6	34.5	100.0	10.9	467
25-29	0.0	1.1	0.0	12.2	40.8	11.7	34.2	100.0	9.9	464
30-34	0.4	0.1	0.0	12.9	45.8	10.2	30.6	100.0	9.8	427
35-39	0.7	0.3	0.3	12.9	50.0	13.2	22.7	100.0	9.7	376
40-44	0.0	0.0	0.0	7.1	52.2	17.9	22.8	100.0	9.8	346
45-49	0.0	0.0	0.0	9.3	42.4	26.0	22.3	100.0	10.0	330
<b>Բնակավայր</b>										
Քաղաքային	0.2	0.1	0.0	11.1	33.6	18.2	36.8	100.0	11.2	1,558
Գյուղական	0.2	0.8	0.1	23.1	52.2	10.0	13.6	100.0	9.6	1,197
<b>Մարզ</b>										
Երևան	0.0	0.0	0.0	7.7	28.1	17.0	47.2	100.0	12.0	833
Արագածոտն	0.0	0.0	0.0	12.7	55.7	9.4	22.2	100.0	9.8	159
Արարատ	0.0	0.6	0.0	22.2	51.1	9.4	16.7	100.0	9.6	290
Արմավիր	0.4	1.5	0.5	33.9	44.5	8.7	10.4	100.0	9.4	268
Գեղարքունիք	0.0	0.9	0.0	17.0	64.2	6.0	11.9	100.0	9.7	235
Լոռի	0.0	1.2	0.0	14.0	53.7	12.5	18.6	100.0	9.8	184
Կոտայք	0.0	0.0	0.0	20.0	39.2	19.5	21.3	100.0	9.9	299
Շիրակ	1.7	0.0	0.0	18.4	38.7	18.4	22.8	100.0	9.9	201
Սյունիք	0.0	0.0	0.0	16.4	40.1	22.4	21.2	100.0	9.9	104
Վայոց ձոր	0.0	0.8	0.0	8.2	44.6	21.9	24.4	100.0	10.0	56
Տավուշ	0.7	0.7	0.0	20.7	36.1	22.6	19.3	100.0	9.9	126
<b>Բարեկեցության քվինտիլ</b>										
Ամենացածր	0.5	0.9	0.2	30.2	53.7	8.9	5.4	100.0	9.4	523
Երկրորդ	0.3	1.1	0.0	17.6	51.5	11.9	17.7	100.0	9.7	583
Միջին	0.0	0.0	0.0	15.6	44.0	16.3	24.1	100.0	9.9	521
Չորրորդ	0.0	0.0	0.0	10.7	36.8	17.1	35.4	100.0	11.0	566
Ամենաբարձր	0.2	0.1	0.0	8.4	22.9	18.8	49.7	100.0	12.4	562
Ընդամենը 15-49	0.2	0.4	0.0	16.3	41.7	14.6	26.7	100.0	9.9	2,755

<sup>1</sup> Տարրական մակարդակում ավարտել է 4 դասարան:

<sup>2</sup> Ավարտել է միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանը կամ սովորել է 9-ից ավելի տարի և ունի միջնակարգ կրթությունը հաստատող ատեստատ:

ՀԺԱՀ 2010-ի և ՀԺԱՀ 2015-16-ի արդյունքում ստացված կանանց և տղամարդկանց շրջանում ուսման մեղիան տարիների համեմատությունը ցույց է տալիս, որ այս ժամանակահատվածում ուսման մեղիան տարիները մի փոքր աճել են կանանց շրջանում՝ 11.2-ից մինչև 11.3 տարի, իսկ տղամարդկանց շրջանում մնացել են անփոփոխ՝ 9.9 տարի: ՀԺԱՀ 2010 և ՀԺԱՀ 2015-16 հետազոտությունների միջև ընկած ժամանակահատվածում բարձրագույն կրթություն ունեցող կանանց մասնաբաժինն աճել է 30 տոկոսից մինչև 31 տոկոս: Սակայն այս նույն ժամանակահատվածում բարձրագույն կրթություն ունեցող տղամարդկանց մասնաբաժինը 2010-ին գրանցված 30 տոկոսից (ԱՎԾ և այլք, 2012) նվազել է մինչև 27 տոկոս 2015-16-ին:

### **3.3 ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՑԱՆՑԻ ԱԶԻՆՑՈՒԹՅՈՒՆ**

Տեղեկատվության հասանելիությունն էական նշանակություն ունի շրջապատի վերաբերյալ մարդկանց իմացությունն ու իրազեկվածությունը բարձրացնելու առումով: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հավաքագրվել է տեղեկատվություն այն մասին, թե որքանով են հեռահաղորդակցության միջոցները, տպագիր լրատվամիջոցները և համացանցը հասանելի հարցվողների համար: Այս տեղեկատվությունը կարող է օգնել ծրագրերի դեկլարներին՝ առողջության, ընտանիքի պլանավորման, սնուցման և այլ ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածումը պլանավորելու համար:

#### **3.3.1 Զանգվածային լրատվամիջոցներ (ԶԼՄ)**

Հետազոտության շրջանակում ԶԼՄ-ների ազդեցությունը գնահատելու համար հարցվողները պատասխանել են, թե որքան հաճախ են թերթ կամ ամսագիր կարդում, հեռուստացույց դիտում կամ ռադիո լսում: Արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում տասը կանանցից ինը շաբաթական առնվազն մեկ անգամ դիտում են հեռուստացույց, մեկ քառորդից ավելին՝ կարդում թերթ կամ ամսագիր, իսկ 15 տոկոսը՝ լսում ռադիո (Աղյուսակ 3.3.1): Տղամարդկանց շրջանում, կանանց համեմատությամբ, հեռուստացույցի և թերթերի ու ամսագրերի ազդեցությունն ավելի ցածր է, իսկ ռադիոյի ազդեցությունը՝ ավելի բարձր (Աղյուսակ 3.3.2): Տղամարդկանց 89 տոկոսը շաբաթական առնվազն մեկ անգամ դիտում է հեռուստացույց, 22 տոկոսը՝ կարդում թերթ կամ ամսագիր, իսկ 24 տոկոսը՝ լսում ռադիո: Ընդհանուր առմամբ, ութ կանանցից և տղամարդկանցից մեկը շաբաթական առնվազն մեկ անգամ օգտվում է ԶԼՄ բոլոր երեք տեսակներից, մինչդեռ տղամարդկանց 10 տոկոսը և կանանց 6 տոկոսը կանոնավոր կերպով չի օգտվում ԶԼՄ այս երեք տեսակներից և ոչ մեկից: Թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց շրջանում ԶԼՄ-ների ազդեցությունն ամենաբարձրն է քաղաքային, Երևանում բնակվող, բարձրագույն կրթություն ունեցող և բարեկեցության ամենաբարձր քվինտիլում գտնվող հարցվողների շրջանում:

**Աղյուսակ 3.3.1 Զանգվածային լրատվամիջոցների ազդեցություն. կանայք**

15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր շաբաթական կտրվածքով օգտվում են ՋԼՄ որևէ տեսակից, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կարողում է թերթ կամ ամսագիր շաբաթական առնվազն մեկ անգամ	Դիտում է հեռուստացույց շաբաթական առնվազն մեկ անգամ	Լսում է ռադիո շաբաթական առնվազն մեկ անգամ	Օգտվում է ՋԼՄ բոլոր 3 տեսակներից շաբաթական առնվազն մեկ անգամ	Չի օգտվում ՋԼՄ 3 տեսակներից և ոչ մեկից շաբաթական առնվազն մեկ անգամ	Կանանց թվաքանակ
<b>Տարիք</b>						
15-19	25.4	90.4	14.6	9.8	8.3	725
20-24	27.1	93.3	16.9	12.9	6.0	928
25-29	28.5	93.9	17.9	13.7	5.5	1,099
30-34	26.9	94.2	17.8	13.0	5.7	1,007
35-39	28.1	94.3	13.9	11.4	5.1	867
40-44	26.5	94.3	13.4	10.4	4.7	784
45-49	27.1	93.4	10.1	7.1	5.8	706
<b>Բնակավայր</b>						
Քաղաքային	33.7	94.6	20.9	15.8	4.5	3,657
Գյուղական	17.4	91.8	7.0	5.1	7.8	2,459
<b>Սարգ</b>						
Երևան	41.3	96.9	30.4	23.8	2.5	2,001
Արագածոտն	15.5	86.9	4.2	3.8	12.7	315
Արարատ	15.9	97.2	15.7	10.1	1.8	552
Արմավիր	18.0	97.8	7.2	5.5	2.0	586
Գեղարքունիք	3.6	65.7	0.3	0.0	32.7	478
Լոռի	8.7	87.3	2.5	1.5	12.1	355
Կոտայք	26.4	97.8	14.0	10.0	1.5	678
Շիրակ	18.4	95.8	11.3	7.3	3.9	510
Սյունիք	29.4	97.7	6.0	4.5	2.0	238
Վայոց ձոր	37.0	98.0	2.1	1.6	1.1	119
Տավուշ	56.1	95.4	2.3	1.6	3.7	283
<b>Կրթություն</b>						
Հիմնական	10.5	91.0	6.3	2.8	8.1	396
Միջնակարգ	14.5	91.7	8.8	5.1	8.0	2,444
Միջին մասնագիտական	26.8	94.8	11.4	8.1	4.5	1,360
Բարձրագույն	47.1	95.4	28.3	24.0	3.5	1,910
<b>Բարեկեցության քվինտիլ</b>						
Ամենացածր	11.5	92.0	4.9	2.5	7.8	1,081
Երկրորդ	22.2	93.1	9.3	7.2	6.3	1,242
Միջին	25.3	91.0	14.9	10.9	8.2	1,142
Չորրորդ	29.4	93.8	17.3	11.9	4.9	1,287
Ամենաբարձր	43.6	96.9	27.5	22.7	2.8	1,365
Ընդամենը	27.2	93.5	15.3	11.5	5.8	6,116

Նշում: Ընդամենը ներառում է կանանց 5 դեպք (կշռված)՝ առանց որևէ կրթության:

ՋԼՄ որևէ տեսակից օգտվելու՝ ՀԺԱՀ 2010-ին և ՀԺԱՀ 2015-16-ին արձանագրված միտումները համեմատելիս ակնհայտ է դառնում, որ ամենամեծ փոփոխությունը շաբաթական առնվազն մեկ անգամ թերթ կամ ամսագիր կարդացող կանանց մասնաբաժնում է, որը 2010-ին գրանցված 45 տոկոսից նվազել է մինչև 27 տոկոսի 2015-16-ին: Տղամարդկանց շրջանում ևս արձանագրվել է այս ցուցանիշի անկում՝ 2010-ին գրանցված 30 տոկոսից մինչև 22 տոկոս՝ 2015-16-ին: Հեռուստացույց դիտելու և ռադիո լսելու ցուցանիշները նույնպես փոխվել են երկու հետազոտությունների միջև ընկած ժամանակահատվածում: Շաբաթական առնվազն մեկ անգամ ռադիո լսող կանանց տոկոսը նվազել է՝ կազմելով 20 տոկոս 2010-ին և 15 տոկոս 2015-16-ին, մինչդեռ տղամարդկանց շրջանում այս ցուցանիշն աճել է 18 տոկոսից մինչև 24 տոկոս: Շաբաթական առնվազն մեկ անգամ հեռուստացույց դիտող տղամարդկանց տոկոսը նվազել է՝ կազմելով 96 տոկոս 2010-ին և 89 տոկոս 2015-16-ին, մինչդեռ կանանց շրջանում այս ցուցանիշը մնացել է գրեթե անփոփոխ (93 տոկոս 2010-ին և 94 տոկոս 2015-16-ին): Ընդհանուր առմամբ, կանանց մասնաբաժինը, ովքեր ՋԼՄ երեք միջոցներից և ոչ մեկից չեն օգտվել, երկու հետազոտությունների արդյունքներով մնացել է կայուն՝ 6 տոկոս, իսկ տղամարդկանց մասնաբաժինն աճել է 3 տոկոսից մինչև 10 տոկոս:

**Աղյուսակ 3.3.2 Զանգվածային լրատվամիջոցների ազդեցություն, տղամարդիկ**

15-49 տարեկան տղամարդկանց տոկոսը, ովքեր շաբաթական կտրվածքով օգտվում են ՋԼՄ որևէ տեսակից, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կարդում է թերթ կամ ամսագիր շաբաթական առնվազն մեկ անգամ	Դիտում է հեռուստացույց շաբաթական առնվազն մեկ անգամ	Լսում է ռադիո շաբաթական առնվազն մեկ անգամ	Օգտվում է ՋԼՄ բոլոր 3 տեսակներից շաբաթական առնվազն մեկ անգամ	Չի օգտվում ՋԼՄ 3 տեսակներից և ոչ մեկից շաբաթական առնվազն մեկ անգամ	Տղամարդկանց թվաքանակ
<b>Տարիք</b>						
15-19	12.2	87.4	10.0	6.4	12.5	345
20-24	17.2	87.2	16.7	8.1	12.3	467
25-29	22.4	89.8	23.3	11.5	9.1	464
30-34	23.5	88.8	27.0	13.6	10.5	427
35-39	28.6	89.9	34.8	19.0	8.5	376
40-44	24.3	87.2	23.9	13.4	12.0	346
45-49	28.8	91.4	32.1	18.0	8.1	330
<b>Բնակավայր</b>						
Քաղաքային	27.5	92.2	30.1	17.5	6.9	1,558
Գյուղական	15.4	84.3	15.6	6.3	15.0	1,197
<b>Մարզ</b>						
Երևան	35.5	97.6	40.6	27.1	1.6	833
Արագածոտն	12.1	98.7	4.6	1.0	1.3	159
Արարատ	12.6	93.4	9.7	4.9	5.6	290
Արմավիր	26.3	99.0	53.9	21.3	0.7	268
Գեղարքունիք	0.7	2.9	0.0	0.0	96.4	235
Լոռի	3.7	98.9	8.2	2.0	1.1	184
Կոտայք	17.6	99.4	22.4	5.7	0.6	299
Շիրակ	27.6	85.6	14.7	4.5	9.8	201
Սյունիք	10.5	98.8	3.6	1.2	1.2	104
Վայոց ձոր	16.8	93.9	6.2	4.2	5.7	56
Տավուշ	42.7	99.7	14.8	13.0	0.0	126
<b>Կրթություն</b>						
Հիմնական	8.0	90.4	17.2	4.0	9.4	360
Միջնակարգ	13.0	83.6	17.1	6.7	15.8	1,250
Միջին մասնագիտական	19.5	94.7	25.1	9.7	4.5	403
Բարձրագույն	46.5	93.5	37.9	28.7	5.2	736
<b>Բարեկեցության քվինտիլ</b>						
Ամենացածր	12.9	87.5	16.6	6.0	12.1	523
Երկրորդ	17.0	86.2	16.9	7.3	12.8	583
Միջին	17.9	82.9	19.0	8.8	16.8	521
Չորրորդ	26.1	91.9	24.9	14.4	7.3	566
Ամենաբարձր	36.5	95.0	40.8	26.1	3.7	562
Ընդամենը	22.2	88.8	23.8	12.6	10.4	2,755

Նշում: Ընդամենը ներառում է տղամարդկանց 5 դեպք (կշռված)՝ առանց որևէ կրթության:

**3.3.2 Համացանցի օգտագործում**

ՋԼՄ տարբեր միջոցների ազդեցության մակարդակների փոփոխությունները մասնակիորեն կապված են այն հանգամանքի հետ, որ ՀԺԱՀ 2010 և ՀԺԱՀ 2015-16 հետազոտությունների միջև ընկած ժամանակահատվածում Հայաստանում շատ արագ աճել է համակարգիչ ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը (տե՛ս Գլուխ 2): Համացանցի հասանելիության բարձր մակարդակն էլ իր հերթին ազդել է ՋԼՄ ավանդական միջոցների օգտագործման վրա: Աղյուսակ 3.4.1-ը և Աղյուսակ 3.4.2-ը ներկայացնում են ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հավաքագրված տեղեկատվությունն այն մասին, թե որքանով է համացանցը հասանելի հարցվողների համար:

Ընդհանուր առմամբ, կանանց և տղամարդկանց մեծամասնությունը նշել է, որ երբևէ օգտվել է համացանցից (համապատասխանաբար 87 և 91 տոկոս): Կանանց ու տղամարդկանց մեծ մասը (համապատասխանաբար 85 և 89 տոկոս) օգտվել է համացանցից հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում: Այն հարցվողների շրջանում, ովքեր հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում օգտվել են համացանցից, 90 տոկոսը հետազոտությանը նախորդող մեկ

ամսվա ընթացքում շաբաթական առնվազն մեկ անգամ օգտվել է համացանցից, իսկ կանանց 70 ու տղամարդկանց 61 տոկոսը նշել են, որ հետազոտությանը նախորդող մեկ ամսվա ընթացքում օգտվել են ամեն օր:

**Աղյուսակ 3.4.1 Համացանցի օգտագործում. կանայք**

15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր երբևէ օգտվել են համացանցից, տոկոսը, ովքեր օգտվել են համացանցից վերջին 12 ամիսների ընթացքում, և վերջին 12 ամիսների ընթացքում համացանցից օգտված կանանց տոկոսային բաշխումն ըստ վերջին մեկ ամսվա ընթացքում օգտվելու հաճախականության, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Երբևէ օգտվել է համացանցից	Օգտվել է համացանցից վերջին 12 ամիսների ընթացքում	Կանանց թվաքանակ	Վերջին 12 ամիսների ընթացքում համացանցից օգտված կանանց շրջանում նրանց տոկոսը, ովքեր վերջին մեկ ամսվա ընթացքում օգտվել են՝						
				Ոչ ամեն օր,			Ընդհան-		Կանանց	
				Գրեթե ամեն օր	շաբաթական անգամ	Շաբաթական հազվադեպ	բայց ամեն օր	շաբաթական մեկ անգամից ավել	Սվլալ չկա	Ընդամենը
<b>Տարիք</b>										
15-19	93.7	93.1	725	85.1	10.2	4.6	0.2	0.0	100.0	675
20-24	94.8	93.4	928	83.4	10.9	5.7	0.1	0.0	100.0	867
25-29	91.1	89.9	1,099	76.7	17.1	5.8	0.4	0.0	100.0	988
30-34	89.5	87.5	1,007	65.5	24.1	10.2	0.1	0.0	100.0	881
35-39	81.5	80.2	867	63.1	25.6	10.1	1.2	0.0	100.0	695
40-44	81.4	79.8	784	54.6	32.1	13.1	0.1	0.0	100.0	625
45-49	71.3	69.3	706	52.6	29.7	16.8	0.8	0.2	100.0	489
<b>Բնակավայր</b>										
Քաղաքային	92.9	91.9	3,657	75.2	18.3	6.2	0.3	0.0	100.0	3,360
Գյուղական	77.8	75.6	2,459	61.3	24.5	13.7	0.5	0.0	100.0	1,860
<b>Մարզ</b>										
Երևան	95.1	94.5	2,001	76.9	17.4	5.4	0.3	0.0	100.0	1,891
Արագածոտն	83.1	77.7	315	63.4	26.2	9.8	0.6	0.0	100.0	245
Արարատ	79.5	78.4	552	66.3	23.8	9.6	0.3	0.0	100.0	433
Արմավիր	73.9	71.5	586	70.3	18.8	10.9	0.0	0.0	100.0	419
Գեղարքունիք	82.4	81.1	478	41.4	37.5	20.5	0.6	0.0	100.0	388
Լոռի	87.1	84.8	355	63.9	22.8	11.7	1.3	0.3	100.0	301
Կոտայք	86.2	84.7	678	67.3	18.4	13.6	0.7	0.0	100.0	574
Շիրակ	84.2	81.7	510	75.6	18.5	5.6	0.3	0.0	100.0	417
Սյունիք	92.2	91.4	238	80.8	16.6	2.5	0.0	0.0	100.0	218
Վայոց ձոր	88.4	87.9	119	68.4	21.4	10.2	0.0	0.0	100.0	105
Տավուշ	81.4	81.1	283	76.3	16.5	7.3	0.0	0.0	100.0	229
<b>Կրթություն</b>										
Հիմնական	65.2	62.8	396	59.1	25.4	15.3	0.1	0.0	100.0	249
Միջնակարգ	80.0	77.7	2,444	59.9	25.9	13.4	0.7	0.0	100.0	1,899
Միջին մասնագիտական	89.4	88.4	1,360	66.3	23.9	9.6	0.2	0.0	100.0	1,203
Բարձրագույն	98.4	97.8	1,910	84.9	12.0	2.9	0.2	0.0	100.0	1,867
<b>Բարեկեցության քվինտիլ</b>										
Ամենացածր	62.9	59.7	1,081	55.0	24.6	19.0	1.3	0.0	100.0	645
Երկրորդ	84.8	82.9	1,242	65.2	23.7	10.8	0.3	0.0	100.0	1,029
Միջին	88.8	87.1	1,142	65.9	24.1	9.7	0.4	0.0	100.0	994
Չորրորդ	95.6	95.2	1,287	75.2	19.2	5.3	0.3	0.1	100.0	1,225
Ամենաբարձր	97.7	97.2	1,365	80.5	14.4	5.1	0.0	0.0	100.0	1,327
Ընդամենը	86.8	85.3	6,116	70.3	20.5	8.8	0.4	0.0	100.0	5,220

Նշում: Ընդամենը ներառում է կանանց 5 դեպք (կշռված)՝ առանց որևէ կրթության:

Ե՛վ կանանց, և՛ տղամարդկանց շրջանում երբևէ և վերջին 12 ամիսների ընթացքում համացանցից օգտված հարցվողների մասնաբաժինը նվազում է տարիքի աճին զուգընթաց: Երբևէ և հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում համացանցից օգտված հարցվողների մասնաբաժինն ավելի ցածր է գյուղաբնակ հարցվողների շրջանում՝ քաղաքաբնակների համեմատությամբ, և Արմավիրի մարզում բնակվող կանանց և Վայոց ձորի մարզում բնակվող տղամարդկանց շրջանում՝ մյուս մարզերի բնակիչների համեմատությամբ: Երբևէ և հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում համացանցից օգտված հարցվողների մասնաբաժինն աճում է կրթական և բարեկեցության մակարդակների աճին զուգընթաց: Հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում համացանցից օգտված հարցվողների

շրջանում վերջին մեկ ամսվա ընթացքում համացանցից ամենաքիչը (շաբաթական մեկ անգամից էլ հազվադեպ կամ ընդհանրապես չեն օգտվել) օգտվել են Գեղարքունիքի մարզում բնակվող (21 տոկոս) և բարեկեցության ամենացածր քվինտիլում գտնվող կանայք (19 տոկոս), և Արագածոտնի (28 տոկոս) ու Արարատի (21 տոկոս) մարզերում բնակվող և բարեկեցության ամենացածր քվինտիլում գտնվող տղամարդիկ (19 տոկոս):

**Աղյուսակ 3.4.2 Համացանցի օգտագործում. տղամարդիկ**

15-49 տարեկան տղամարդկանց տոկոսը, ովքեր երբևէ օգտվել են համացանցից, տոկոսը, ովքեր օգտվել են համացանցից, վերջին 12 ամիսների ընթացքում, և վերջին 12 ամիսների ընթացքում համացանցից օգտված տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ վերջին մեկ ամսվա ընթացքում օգտվելու հաճախականության, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Երբևէ օգտվել է համացանցից	Օգտվել է վերջին 12 ամիսների ընթացքում	Տղամարդկանց թվաքանակ	Վերջին 12 ամիսների ընթացքում համացանցից օգտված տղամարդկանց շրջանում նրանց տոկոսը, ովքեր վերջին մեկ ամսվա ընթացքում օգտվել են՝						
				Գրեթե ամեն օր	Ոչ ամեն օր, բայց առնվազն մեկ անգամ	Շաբաթական մեկ անգամից հազվադեպ	Ընդհանրապես չեն օգտվել	Տվյալ չկա	Ընդամենը	Տղամարդկանց թվաքանակ
<b>Տարիք</b>										
15-19	95.5	95.2	345	76.0	18.3	5.6	0.0	0.0	100.0	329
20-24	96.3	95.2	467	72.5	21.2	5.4	0.9	0.0	100.0	445
25-29	94.1	93.5	464	66.8	24.3	8.5	0.3	0.0	100.0	434
30-34	91.2	89.9	427	64.6	22.4	12.5	0.5	0.0	100.0	384
35-39	89.6	87.0	376	52.0	33.3	13.6	0.5	0.5	100.0	327
40-44	86.9	83.1	346	43.1	38.5	17.6	0.9	0.0	100.0	287
45-49	75.8	74.1	330	36.3	45.9	16.0	1.8	0.0	100.0	244
<b>Բնակավայր</b>										
Քաղաքային	94.4	93.5	1,558	66.7	24.2	8.5	0.4	0.1	100.0	1,456
Գյուղական	85.4	83.0	1,197	52.5	32.7	13.9	1.0	0.0	100.0	994
<b>Մարզ</b>										
Երևան	94.0	93.4	833	67.5	24.1	8.2	0.2	0.0	100.0	778
Արագածոտն	78.5	77.9	159	27.7	43.9	28.4	0.0	0.0	100.0	124
Արարատ	86.9	77.8	290	49.6	25.7	20.5	4.2	0.0	100.0	225
Արմավիր	76.4	76.4	268	67.3	28.1	4.6	0.0	0.0	100.0	204
Գեղարքունիք	94.7	93.2	235	25.0	57.7	17.3	0.0	0.0	100.0	219
Լոռի	94.4	91.9	184	60.2	22.5	16.8	0.6	0.0	100.0	170
Կոտայք	94.1	94.1	299	67.9	24.1	6.3	1.1	0.6	100.0	281
Շիրակ	97.3	97.3	201	74.1	20.7	5.2	0.0	0.0	100.0	196
Սյունիք	92.2	89.8	104	70.1	27.0	2.5	0.5	0.0	100.0	94
Վայոց ձոր	75.8	75.4	56	46.8	39.3	13.9	0.0	0.0	100.0	42
Տավուշ	93.1	92.8	126	91.2	4.8	4.0	0.0	0.0	100.0	116
<b>Կրթություն</b>										
Հիմնական	80.4	78.4	360	53.0	30.8	16.0	0.2	0.0	100.0	282
Միջնակարգ	89.5	87.2	1,250	50.3	34.5	14.2	0.8	0.2	100.0	1,090
Միջին մասնագիտական	90.2	89.1	403	60.9	28.9	9.5	0.7	0.0	100.0	359
Բարձրագույն	97.9	97.4	736	80.2	15.4	3.9	0.5	0.0	100.0	717
<b>Բարեկեցության քվինտիլ</b>										
Ամենացածր	77.3	74.0	523	49.1	31.4	18.5	1.1	0.0	100.0	387
Երկրորդ	90.4	87.8	583	57.3	31.1	10.6	1.0	0.0	100.0	512
Միջին	92.0	91.0	521	55.9	32.4	11.3	0.4	0.0	100.0	474
Չորրորդ	95.0	94.8	566	66.8	22.7	9.9	0.6	0.0	100.0	537
Ամենաբարձր	97.0	96.2	562	71.5	22.5	5.4	0.2	0.3	100.0	540
Ընդամենը	90.5	88.9	2,755	60.9	27.7	10.7	0.6	0.1	100.0	2,450

Նշում: Ընդամենը ներառում է տղամարդկանց 5 դեպք (կշտված)՝ առանց որևէ կրթության:

### 3.4 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հարցվողները պատասխանել են հետազոտության պահին և հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում իրենց զբաղվածության կարգավիճակին վերաբերող հարցերին: Կանանց զբաղվածության գնահատումը կարող է հատկապես բարդ լինել, քանի որ գյուղացիական տնտեսությունում, ընտանեկան բիզնեսում կամ ոչ ֆորմալ հատվածում աշխատանքը կանայք իրենք չեն համարում աշխատանք և չեն հայտնում դրանց մասին: Զբաղվածության վերաբերյալ տվյալներն ամբողջապես հավաքագրելու նպատակով հարցվողները պատասխանել են մի շարք հարցերի, որոնց միջոցով բացահայտվել է թե՛ պետական, թե՛ մասնավոր հատվածում նրանց ներգրավվածությունը:

Աղյուսակ 3.5.1-ը և Աղյուսակ 3.5.2-ը ցույց են տալիս կին և տղամարդ հարցվողների տոկոսային բաշխումն ըստ զբաղվածության կարգավիճակի և ըստ հիմնական բնութագրիչների: Այն հարցվողները, ովքեր հետազոտության պահին աշխատել են (աշխատել են վերջին յոթ օրերի ընթացքում), համարվել են «զբաղված»: Կանանց 34 տոկոսը հետազոտության պահին եղել է զբաղված, իսկ 6 տոկոսը եղել է զբաղված հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում, բայց ոչ հետազոտության պահին: Ինչպես և սպասվում էր, զբաղվածության մակարդակը տղամարդկանց շրջանում ավելի բարձր է, քան կանանց շրջանում (Գծապատկեր 3.1): Տղամարդկանց 56 տոկոսը նշել է, որ զբաղված է եղել հետազոտության պահին, իսկ 16 տոկոսը նշել է, որ եղել է զբաղված հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում, բայց ոչ հետազոտության պահին:



**Աղյուսակ 3.5.1 Զբաղվածության կարգավիճակ. կանայք**

15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումն ըստ զբաղվածության կարգավիճակի և ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Զբաղված է եղել հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում		Աշխատանք չունեցող հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում	Տվյալ չկա/չգիտի	Ընդամենը	Կանանց թվաքանակ
	Զբաղված հետազոտության պահին <sup>1</sup>	Աշխատանք չունեցող հետազոտության պահին				
<b>Տարիք</b>						
15-19	2.5	1.4	96.0	0.1	100.0	725
20-24	19.9	4.2	75.9	0.0	100.0	928
25-29	34.7	6.3	58.9	0.0	100.0	1,099
30-34	34.4	6.7	58.9	0.1	100.0	1,007
35-39	44.7	8.7	46.6	0.0	100.0	867
40-44	50.5	9.2	40.2	0.0	100.0	784
45-49	51.5	7.8	40.7	0.0	100.0	706
<b>Ամուսնական կարգավիճակ</b>						
Երբևէ չամուսնացած	28.6	3.3	68.0	0.1	100.0	1,830
Ամուսնացած/համատեղ բնակվող	34.3	7.5	58.2	0.0	100.0	3,895
Ամուսնալուծված/բաժանված/այրի	56.0	8.7	35.3	0.0	100.0	390
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>						
0	29.8	3.6	66.6	0.0	100.0	2,120
1-2	35.4	6.8	57.8	0.0	100.0	2,990
3-4	39.2	10.5	50.3	0.0	100.0	966
5+	(25.7)	(15.6)	(58.7)	(0.0)	100.0	39
<b>Քնակավայր</b>						
Քաղաքային	37.9	2.7	59.4	0.0	100.0	3,657
Գյուղական	28.2	11.8	60.0	0.0	100.0	2,459
<b>Մարզ</b>						
Երևան	41.5	1.8	56.6	0.0	100.0	2,001
Արագածոտն	27.3	0.9	71.8	0.0	100.0	315
Արարատ	37.3	13.6	49.0	0.1	100.0	552
Արմավիր	36.0	17.0	47.0	0.0	100.0	586
Գեղարքունիք	32.4	15.4	52.3	0.0	100.0	478
Լոռի	15.1	1.1	83.6	0.3	100.0	355
Կոտայք	33.5	8.2	58.3	0.0	100.0	678
Շիրակ	17.7	4.4	77.8	0.0	100.0	510
Սյունիք	39.3	3.8	56.9	0.0	100.0	238
Վայոց ձոր	34.9	2.9	62.2	0.0	100.0	119
Տավուշ	29.1	2.3	68.6	0.0	100.0	283
<b>Կրթություն</b>						
Հիմնական	22.2	8.6	69.3	0.0	100.0	396
Միջնակարգ	23.6	9.3	67.1	0.0	100.0	2,444
Միջին մասնագիտական	37.2	5.6	57.1	0.0	100.0	1,360
Բարձրագույն	47.4	2.6	49.9	0.1	100.0	1,910
<b>Բարեկեցության քվինտիլ</b>						
Ամենացածր	22.6	13.7	63.7	0.0	100.0	1,081
Երկրորդ	31.6	9.4	58.9	0.1	100.0	1,242
Միջին	31.6	5.2	63.2	0.1	100.0	1,142
Չորրորդ	39.5	3.2	57.4	0.0	100.0	1,287
Ամենաբարձր	41.9	1.8	56.2	0.0	100.0	1,365
Ընդամենը	34.0	6.4	59.6	0.0	100.0	6,116

Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Ընդամենը ներառում է կանանց 5 դեպք (կշռված)՝ առանց որևէ կրթության:

<sup>1</sup> Զբաղված հետազոտության պահին հասկացության մեջ ներառվել են վերջին յոթ օրերի ընթացքում զբաղվածություն ունեցող անձինք: Ներառված են նաև այն անձինք, ովքեր, թեպետ ունեն հիմնական աշխատանք, սակայն արձակուրդի, հիվանդության կամ որևէ այլ պատճառով վերջին յոթ օրերի ընթացքում չեն աշխատել:

Ընթացիկ զբաղվածությունը սովորաբար աճում է կանանց և տղամարդկանց տարիքին, կրթական և բարեկեցության մակարդակներին զուգընթաց: Ներկայում ամուսնացած կամ երբևէ չամուսնացած կանանց համեմատությամբ՝ ամուսնալուծված, բաժանված կամ այրի կանանց ավելի մեծ մասն է աշխատանք ունեցել հետազոտության պահին: Տղամարդկանց շրջանում, ի տարբերություն նախկինում ամուսնացած կամ երբևէ չամուսնացած տղամարդկանց, հետազոտության պահին զբաղվածությանն առավելապես հակված են ներկայում ամուսնացած տղամարդիկ: Գյուղաբնակների համեմատությամբ քաղաքաբնակների շրջանում ավելի շատ են աշխատանք ունեցողները: Ըստ մարզերում արձանագրված տարբերությունների՝ հետազոտության պահին կանանց զբաղվածության ամենաբարձր մակարդակը Երևանում է (42 տոկոս) և Սյունիքի մարզում (39 տոկոս), իսկ ամենացածրը՝ Լոռիում (15 տոկոս) և Շիրակի մարզերում (18 տոկոս): Տղամարդկանց շրջանում ընթացիկ զբաղվածության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է Արարատի (76 տոկոս), Սյունիքի (72 տոկոս) և Կոտայքի (71 տոկոս) մարզերում, իսկ ամենացածրը՝ Շիրակի (31 տոկոս) մարզում:

**Աղյուսակ 3.5.2 Զբաղվածության կարգավիճակ, տղամարդիկ**

15-49 տարեկան տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ զբաղվածության կարգավիճակի և ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Զբաղված է եղել հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում		Աշխատանք չունեցող հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում	Ընդամենը	Տղամարդկանց թվաքանակ
	Զբաղված հետազոտության պահին <sup>1</sup>	Աշխատանք չունեցող հետազոտության պահին			
<b>Տարիք</b>					
15-19	4.2	5.7	90.1	100.0	345
20-24	34.9	16.0	49.1	100.0	467
25-29	63.7	18.8	17.5	100.0	464
30-34	73.5	17.4	9.2	100.0	427
35-39	72.4	14.8	12.8	100.0	376
40-44	71.2	17.8	11.0	100.0	346
45-49	68.4	18.5	13.1	100.0	330
<b>Անուսնական կարգավիճակ</b>					
Երբևէ չամուսնացած	33.7	14.2	52.1	100.0	1,190
Ամուսնացած/ համատեղ բնակվող	72.6	16.4	11.0	100.0	1,506
Ամուսնալուծված/ բաժանված/այրի	(59.9)	(30.9)	(9.1)	100.0	59
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>					
0	37.5	14.3	48.1	100.0	1,321
1-2	71.5	17.0	11.5	100.0	1,100
3-4	75.0	16.3	8.8	100.0	322
<b>Քնակավայր</b>					
Քաղաքային	58.8	10.4	30.8	100.0	1,558
Գյուղական	51.4	22.7	25.9	100.0	1,197
<b>Մարզ</b>					
Երևան	59.7	6.9	33.4	100.0	833
Արագածոտն	43.8	18.0	38.2	100.0	159
Արարատ	75.9	7.9	16.2	100.0	290
Արմավիր	59.5	22.6	17.9	100.0	268
Գեղարքունիք	32.5	49.0	18.4	100.0	235
Լոռի	34.6	26.4	39.0	100.0	184
Կոտայք	70.7	9.9	19.4	100.0	299
Շիրակ	30.7	23.3	46.0	100.0	201
Սյունիք	71.5	0.4	28.1	100.0	104
Վայոց ձոր	64.8	9.7	25.5	100.0	56
Տավուշ	48.0	14.3	37.7	100.0	126
<b>Կրթություն</b>					
Հիմնական	44.8	17.7	37.5	100.0	360
Միջնակարգ	51.4	21.7	26.9	100.0	1,250
Միջին մասնագիտական	59.3	15.4	25.3	100.0	403
Բարձրագույն	66.1	5.0	28.9	100.0	736
<b>Բարեկեցության քվինտիլ</b>					
Ամենացածր	49.5	24.0	26.5	100.0	523
Երկրորդ	51.6	20.4	28.0	100.0	583
Միջին	51.8	17.7	30.5	100.0	521
Չորրորդ	58.0	10.9	31.0	100.0	566
Ամենաբարձր	66.4	6.2	27.4	100.0	562
Ընդամենը	55.6	15.7	28.7	100.0	2,755


Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Ընդամենը ներառում է տղամարդկանց 13 դեպք (կշռված), ովքեր ունեն հինգ կամ ավելի կենդանի երեխա, և տղամարդկանց 5 դեպք (կշռված)՝ առանց որևէ կրթության:

<sup>1</sup> Զբաղված հետազոտության պահին հասկացության մեջ ներառվել են վերջին յոթ օրերի ընթացքում զբաղվածություն ունեցող անձինք: Ներառված են նաև այն անձինք, ովքեր, թեպետ ունեն հիմնական աշխատանք, սակայն արձակուրդի, հիվանդության կամ որևէ այլ պատճառով վերջին յոթ օրերի ընթացքում չեն աշխատել:

Այն կանանց և տղամարդկանց մասնաբաժինը, ովքեր աշխատել են հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում, սակայն հետազոտության պահին՝ ոչ, փոփոխվում է ըստ հիմնական բնութագրիչների: Ինչպես և ակնկալվում էր, գյուղատնտեսական զբաղվածության սեզոնայնությունը հաշվի առնելով, այն ավելի բարձր է գյուղական, քան քաղաքային

բնակավայրերում, ընդ որում՝ թե՛ կանանց (համապատասխանաբար 12 և 3 տոկոս), թե՛ տղամարդկանց (համապատասխանաբար 23 և 10 տոկոս) շրջանում: Այն հարցվողների մասնաբաժինը, ովքեր զբաղված են եղել հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում, սակայն հետազոտության պահին չեն աշխատել, ամենամեծն է Գեղարքունիքի մարզում բնակվող տղամարդկանց (49 տոկոս) և Արմավիրի մարզում բնակվող կանանց (17 տոկոս) շրջանում: Այս կանանց և տղամարդկանց մասնաբաժինը նվազելու միտում ունի՝ կրթական և բարեկեցության մակարդակների աճին զուգընթաց՝ չնայած որ այս կապը միանշանակ չէ:

**Գծապատկեր 3.1 Զբաղվածության կարգավիճակ**



### 3.5 ԶԲԱՂՄԱՆՈՒՄ

Այն հարցվողներին, ովքեր նշել են, որ հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում երբևէ աշխատել են, տրվել են հարցեր կատարած աշխատանքի բնույթի վերաբերյալ: Հարցվողների պատասխանները գրանցվել են բառացի, իսկ այնուհետև՝ ՀՀ ԱՎԾ կենտրոնական գրասենյակ ուղարկվելուց հետո կողմնորոշվել են: Զբաղմունքի վերաբերյալ տեղեկատվությունը ոչ միայն հնարավորություն է տալիս գնահատելու կանանց և տղամարդկանց եկամտի աղբյուրը, այլ նաև որոշ առնչություններ ունի կանանց հզորացման հետ:

Աղյուսակ 3.6.1-ը և Աղյուսակ 3.6.2-ը ցույց են տալիս հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում աշխատանք ունեցած կանանց և տղամարդկանց զբաղմունքների վերաբերյալ տվյալներն ըստ հիմնական բնութագրիչների: Զբաղված կանանց մեծամասնությունն աշխատել է մասնագիտական, տեխնիկական կամ վարչակառավարչական պաշտոններում (42 տոկոս) կամ առևտրի և ծառայությունների ոլորտում (23 տոկոս), իսկ մոտ մեկ հինգերորդը՝ գյուղատնտեսության ոլորտում: Զբաղված տղամարդկանց շրջանում 21 տոկոսն ունեցել է մասնագիտական, տեխնիկական կամ վարչակառավարչական պաշտոն, 27 տոկոսը ներգրավված է եղել առևտրի և ծառայությունների ոլորտում, մեկ երրորդից ավելին եղել են բանվորներ՝ որակավորված (28 տոկոս) կամ չորակավորված (6 տոկոս), իսկ 13 տոկոսը զբաղված է եղել գյուղատնտեսության ոլորտում:

**Աղյուսակ 3.6.1 Զբաղմունք կանայք**

Հետազոտությունը նախորդող 12 ամիսների ընթացքում զբաղված 15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումն ըստ զբաղմունքի տեսակի և հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Մասնագիտական/տեխնիկական/վարչական	Ծառայողներ	Առևտուր և ծառայություններ	Որակավորված բանվորներ	Չորակավորված բանվորներ	Գյուղատնտեսություն	Տվյալ չկա	Ընդամենը	Կանանց թվաքանակ
<b>Տարիք</b>									
15-19	(14.4)	(0.0)	(33.4)	(10.0)	(1.0)	(41.2)	(0.0)	100.0	28
20-24	48.6	8.3	27.5	4.1	1.6	8.8	1.2	100.0	224
25-29	50.5	4.7	22.8	5.6	1.3	14.9	0.3	100.0	451
30-34	43.3	3.9	21.3	5.1	4.1	21.5	0.8	100.0	413
35-39	42.9	2.1	21.3	6.8	4.3	21.6	1.1	100.0	463
40-44	32.3	2.3	27.3	9.2	4.8	24.1	0.0	100.0	468
45-49	39.2	2.8	18.9	9.1	4.0	25.3	0.7	100.0	419
<b>Ամուսնական կարգավիճակ</b>									
Երբևէ չամուսնացած	54.9	5.9	27.8	4.0	0.9	6.1	0.4	100.0	585
Ամուսնացած/համատեղ բնակվող	38.8	3.0	18.7	7.3	4.3	27.4	0.5	100.0	1,629
Ամուսնալուծված/բաժանված/այրի	31.5	2.0	39.9	11.2	4.2	9.9	1.4	100.0	252
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>									
0	52.9	5.6	28.1	5.1	0.9	6.9	0.6	100.0	708
1-2	42.2	3.5	23.1	7.8	3.5	19.2	0.7	100.0	1,262
3-4	26.3	0.9	15.5	7.3	6.9	42.5	0.6	100.0	480
<b>Բնակավայր</b>									
Քաղաքային	53.8	4.6	29.0	7.5	1.7	2.4	0.8	100.0	1,484
Գյուղական	23.8	1.9	13.9	6.0	6.1	47.9	0.3	100.0	982
<b>Մարզ</b>									
Երևան	59.7	3.8	27.9	6.6	0.9	0.3	0.8	100.0	868
Արագածոտն	40.1	2.6	15.6	8.5	1.5	31.6	0.0	100.0	89
Արարատ	34.0	0.6	22.6	10.8	3.7	27.3	1.1	100.0	281
Արմավիր	19.0	3.9	11.5	3.5	8.8	52.9	0.4	100.0	311
Գեղարքունիք	18.8	2.9	13.0	1.6	4.1	59.6	0.0	100.0	228
Լոռի	47.8	3.2	36.4	6.4	0.0	3.6	2.7	100.0	57
Կոտայք	34.0	4.7	24.7	11.8	7.1	17.6	0.0	100.0	283
Շիրակ	55.6	8.0	26.3	4.4	1.0	4.7	0.0	100.0	113
Սյունիք	41.6	3.0	28.9	10.4	2.2	14.0	0.0	100.0	102
Վայոց ձոր	39.0	2.2	23.5	12.1	11.1	10.3	1.8	100.0	45
Տավուշ	39.8	4.0	24.7	3.7	0.8	25.7	1.3	100.0	89
<b>Կրթություն</b>									
Հիմնական	5.3	0.0	21.4	8.0	15.7	49.6	0.0	100.0	122
Միջնակարգ	6.4	1.3	34.6	9.2	6.1	41.8	0.6	100.0	804
Միջին մասնագիտական	40.8	5.0	28.2	7.6	2.6	15.3	0.6	100.0	583
Բարձրագույն	77.2	5.1	10.3	4.5	0.2	2.0	0.7	100.0	956
<b>Բարեկեցության քվինտիլ</b>									
Ամենացածր	10.9	1.7	16.6	6.2	9.7	54.6	0.3	100.0	392
Երկրորդ	33.5	2.6	15.8	7.0	4.3	36.5	0.3	100.0	509
Միջին	34.2	5.2	31.0	8.9	2.8	17.3	0.7	100.0	420
Չորրորդ	53.8	4.4	28.3	8.0	1.2	3.5	0.9	100.0	548
Ամենաբարձր	63.9	3.7	22.9	4.9	1.3	2.5	0.8	100.0	597
Ընդամենը	41.9	3.6	23.0	6.9	3.5	20.5	0.6	100.0	2,466

Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Ընդամենը ներառում է կանանց 1 դեպք (կշռված)՝ առանց որևէ կրթության, և հինգ կամ ավելի կենդանի երեխա ունեցող կանանց 16 դեպք:

**Աղյուսակ 3.6.2 Զբաղմունք, տղամարդիկ**

Հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում զբաղված 15-49 տարեկան տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ զբաղմունքի տեսակի և հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Մասնագիտական/տեխնիկական/վարչական	Ծառայողներ	Առևտուր և ծառայություններ	Որակավորված բանվորներ	Չորակավորված բանվորներ	Գյուղատնտեսություն	Տվյալ չկա	Ընդամենը	Տղամարդկանց թվաքանակ
<b>Տարիք</b>									
15-19	(7.8)	(1.5)	(30.8)	(10.8)	(24.3)	(24.8)	(0.0)	100.0	34
20-24	13.9	0.8	19.6	35.3	7.9	16.7	5.8	100.0	238
25-29	21.2	1.6	26.3	26.8	5.7	15.0	3.4	100.0	383
30-34	22.6	1.2	30.6	26.4	5.5	8.7	5.1	100.0	388
35-39	22.6	0.4	28.1	31.0	5.8	8.1	4.0	100.0	328
40-44	19.9	1.1	30.0	26.8	7.0	12.7	2.6	100.0	308
45-49	23.6	0.6	26.8	23.8	3.7	18.9	2.6	100.0	287
<b>Ամուսնական կարգավիճակ</b>									
Երբևէ չամուսնացած	19.1	1.0	23.0	29.7	6.4	17.0	3.7	100.0	570
Ամուսնացած/համատեղ բնակվող	21.4	0.9	29.0	27.2	5.8	11.7	4.0	100.0	1,341
Ամուսնալուծված/բաժանված/այրի	(21.0)	(4.4)	(31.2)	(21.3)	(12.2)	(9.9)	(0.0)	100.0	53
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>									
0	20.1	0.9	23.1	30.0	6.3	15.7	3.9	100.0	685
1-2	21.6	1.3	30.7	26.6	5.5	10.5	3.8	100.0	973
3-4	20.1	0.5	27.4	25.4	7.4	15.2	3.9	100.0	294
<b>Բնակավայր</b>									
Քաղաքային	30.2	1.4	32.5	25.1	5.0	1.4	4.4	100.0	1,078
Գյուղական	9.2	0.6	21.1	30.9	7.6	27.5	3.2	100.0	887
<b>Մարզ</b>									
Երևան	37.1	2.1	33.2	19.9	4.6	0.3	2.8	100.0	555
Արագածոտն	17.5	1.0	28.4	23.4	1.7	26.3	1.7	100.0	98
Արարատ	13.5	0.7	26.9	27.0	6.0	23.0	2.9	100.0	243
Արմավիր	12.0	0.2	19.0	19.0	8.0	37.8	3.8	100.0	220
Գեղարքունիք	6.4	0.0	17.8	41.7	5.7	26.3	2.2	100.0	192
Լոռի	17.2	0.0	28.2	36.1	6.9	6.7	4.9	100.0	113
Կոտայք	18.9	1.1	30.6	34.4	8.9	3.3	2.8	100.0	241
Շիրակ	15.9	1.1	24.6	47.3	2.1	3.2	5.8	100.0	109
Սյունիք	18.0	0.8	22.9	30.1	10.8	5.9	11.5	100.0	75
Վայոց ձոր	13.7	2.0	26.6	15.2	23.5	9.4	9.5	100.0	42
Տավուշ	15.2	0.0	30.1	25.6	1.8	18.6	8.8	100.0	78
<b>Կրթություն</b>									
Հիմնական	5.1	0.0	19.6	30.1	14.3	28.7	2.3	100.0	225
Միջնակարգ	7.2	0.1	28.8	36.3	7.1	17.6	2.9	100.0	913
Միջին մասնագիտական	12.0	2.8	38.9	30.4	6.2	5.5	4.2	100.0	301
Բարձրագույն	56.2	2.1	21.3	10.3	1.1	3.2	5.8	100.0	524
<b>Բարեկեցության քվինտիլ</b>									
Ամենացածր	4.4	0.3	18.7	31.1	8.9	33.8	2.7	100.0	384
Երկրորդ	10.6	0.7	25.0	33.1	7.3	19.5	3.9	100.0	420
Միջին	16.8	0.4	30.7	30.7	6.8	9.0	5.6	100.0	362
Չորրորդ	31.1	1.2	29.1	27.0	5.0	2.0	4.7	100.0	390
Ամենաբարձր	40.1	2.4	33.3	17.1	2.9	1.7	2.4	100.0	408
Ընդամենը	20.7	1.0	27.3	27.7	6.2	13.2	3.8	100.0	1,965

Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չլքոված ղեպերի վրա: Ընդամենը ներառում է տղամարդկանց 1 ղեպը (կշռված)՝ առանց որևէ կրթության, և հինգ կամ ավելի կենդանի երեխա ունեցող տղամարդկանց 13 ղեպը:

Ինչպես սպասվում էր, մասնագիտական, տեխնիկական կամ վարչակառավարչական պաշտոններում զբաղված կանանց և տղամարդկանց մասնաբաժինն ավելի մեծ է քաղաքային բնակավայրերում, քան գյուղական: Նման զբաղմունք ունեցող հարցվողների մասնաբաժինը կտրուկ

աճում է՝ կրթության ու բարեկեցության աճին գուզրնթաց: Հիմնական կրթություն ունեցող և բարեկեցության ամենացածր քվինտիլում գտնվող կանայք և տղամարդիկ մեծամասամբ ներգրավված են գյուղատնտեսության ոլորտում:

### 3.6 ԿԱՆԱՆՑ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

Ինչպես կրթությունը, այնպես էլ զբաղվածությունը կարող է լինել կանանց հզորացման աղբյուր, հասկապես այն զբաղվածությունը, որից կինը ստանում է դրամական եկամուտ: Աղյուսակ 3.7-ը ցույց է տալիս հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում զբաղված կանանց տոկոսային բաշխումն ըստ վարձատրության տեսակի, գործատուի և զբաղվածության տնտեսության՝ համաձայն զբաղվածության տեսակի (գյուղատնտեսական կամ ոչ գյուղատնտեսական): Ընդհանուր առմամբ, զբաղվածություն ունեցող կանանց 74 տոկոսը ստացել է միայն դրամական վարձատրություն, 12 տոկոսը՝ դրամական և բնաիրային, իսկ 14 տոկոսը՝ կա՛մ միայն բնաիրային, կա՛մ ընդհանրապես չի վարձատրվել: Ըստ էության, ոչ գյուղատնտեսական աշխատանք ունեցող բոլոր կանայք (95 տոկոս) ստացել են դրամական վարձատրություն: Մյուս կողմից, գյուղատնտեսական աշխատանք ունեցող կանայք շատ հաճախ չեն ստացել որևէ դրամական վարձատրություն, նրանց կեսից ավելին կա՛մ ստացել է բնաիրային վարձատրություն (33 տոկոս), կա՛մ ընդհանրապես չի վարձատրվել (22 տոկոս):

<b>Աղյուսակ 3.7 Զբաղվածության տեսակ</b>			
Հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում զբաղված կանանց տոկոսային բաշխումն ըստ վարձատրության տեսակի, գործատուի և զբաղվածության տնտեսության և ըստ զբաղվածության տեսակի (գյուղատնտեսական կամ ոչ գյուղատնտեսական), Հայաստան, 2015-16 թթ.			
Զբաղվածության բնութագրիչներ	Գյուղատնտեսական աշխատանք	Ոչ գյուղատնտեսական աշխատանք	Ընդամենը
<b>Վարձատրության տեսակ</b>			
Միայն դրամական	4.5	94.5	73.9
Դրամական և բնաիրային	40.6	3.4	11.9
Միայն բնաիրային	33.0	0.1	7.6
Չի վարձատրվում	21.9	2.1	6.6
Ընդամենը	100.0	100.0	100.0
<b>Գործատու</b>			
Ընտանիքի անդամ	14.2	4.2	6.5
Մեկ այլ անձ	4.2	88.4	69.1
Ինքնազբաղված	81.6	7.4	24.4
Ընդամենը	100.0	100.0	100.0
<b>Զբաղվածության տնտեսություն</b>			
Ամբողջ տարվա ընթացքում	48.4	94.4	83.9
Սեզոնային	51.6	5.2	15.8
Միանգամյա	0.0	0.3	0.2
Տվյալ չկա	0.0	0.1	0.1
Ընդամենը	100.0	100.0	100.0
Վերջին 12 ամիսների ընթացքում զբաղված կանանց թվաքանակ	564	1,887	2,466

Լշում: Ընդամենը ներառում է զբաղվածության տեսակի վերաբերյալ տվյալներ չունեցող կանանց դեպքեր, որոնք առանձին ցույց տրված չեն:

Գյուղատնտեսական աշխատանք ունեցող կանայք հիմնականում եղել են ինքնազբաղված (82 տոկոս) կամ աշխատել են ընտանիքի որևէ անդամի համար (14 տոկոս), մինչդեռ ոչ գյուղատնտեսական աշխատանք ունեցող կանանց մեծամասնության դեպքում գործատուն եղել է մեկ այլ անձ (88 տոկոս):

Զբաղվածություն ունեցող տասը կանանցից ութն աշխատել է ամբողջ տարվա ընթացքում, իսկ 16 տոկոսն ունեցել է սեզոնային աշխատանք: Ինչպես ակնկալվում էր, ՀԺԱՀ արդյունքները հաստատում են, որ զբաղվածության շարունակական բնույթն ավելի ապահովված է ոչ գյուղատնտեսական աշխատանք ունեցող կանանց դեպքում: Գյուղատնտեսական աշխատանք

ունեցող կանանց կեսից ավելիի դեպքում աշխատանքը սեզոնային բնույթ է կրում՝ համեմատած ոչ գյուղատնտեսական աշխատանք ունեցող կանանց 5 տոկոսի հետ:

### 3.7 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Հայաստանն այն երկրներից է, որտեղից աշխատանք գտնելու պատճառով, պարբերաբար տեղի է ունենում քաղաքացիների՝ հատկապես տղամարդկանց արտահոսք: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հավաքագրվել է տեղեկատվություն վերջին ժամանակահատվածում հարցվողների՝ արտասահմանում ունեցած աշխատանքի մասին, որը հանդիսանում է աշխատանքային միգրացիան բնութագրող ցուցանիշ: Այս տեղեկատվությունը հավաքագրելու նպատակով 15-49 տարեկան բոլոր կանայք և տղամարդիկ հարցվել են արդյո՞ք վերջին 3 տարիների ընթացքում երեք կամ ավելի ամիս անընդմեջ աշխատել են արտասահմանում, թե՞ ոչ: Ի լրումն՝ 15-49 տարեկան ներկայում ամուսնացած կանայք և տղամարդիկ հարցվել են արդյո՞ք իրենց կողակիցը վերջին 3 տարիների ընթացքում երեք կամ ավելի ամիս անընդմեջ աշխատել է արտասահմանում, թե՞ ոչ:

Աղյուսակ 3.8-ը ցույց է տալիս 15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում երեք կամ ավելի ամիս անընդմեջ աշխատել են արտասահմանում՝ ըստ հիմնական բնութագրիչների: Ընդհանուր առմամբ, ՀԺԱՀ 2015-16-ին նախորդող երեք տարիների ընթացքում կանանց 1 և տղամարդկանց 12 տոկոսը երեք կամ ավելի ամիս անընդմեջ աշխատել են արտասահմանում: Վերջին հինգ տարիների ընթացքում արտասահմանում զբաղվածության գործակիցը կանանց և տղամարդկանց շրջանում շատ չի փոփոխվել՝ ՀԺԱՀ 2010-ին գրանցված արդյունքներից, երբ կանանց 3 և տղամարդկանց 11 տոկոսը նշել էին արտասահմանում աշխատելու մասին:

Ըստ հիմնական բնութագրիչների՝ ակնհայտ են տարբերություններն արտասահմանում աշխատած տղամարդկանց շրջանում (Աղյուսակ 3.8): Գյուղաբնակ տղամարդկանց 18 տոկոսն

**Աղյուսակ 3.8 Հարցվողների զբաղվածությունն արտասահմանում**

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում երեք կամ ավելի ամիս անընդմեջ աշխատել են արտասահմանում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կանայք		Տղամարդիկ	
	Աշխատել է արտասահմանում <sup>1</sup>	Կանանց թվաքանակ	Աշխատել է արտասահմանում <sup>1</sup>	Տղամարդկանց թվաքանակ
<b>Տարիք</b>				
15-24	1.0	1,653	6.6	813
25-29	0.9	1,099	17.5	464
30-39	1.7	1,874	13.5	802
40-49	1.5	1,490	13.4	676
<b>Ամուսնական կարգավիճակ</b>				
Երբևէ չամուսնացած/Ամուսնացած/	1.2	1,830	8.6	1,190
համատեղ բնակվող/Ամուսնալուծված/բաժանված/այրի	1.3	3,895	15.0	1,506
	2.2	390	(8.4)	59
<b>Բնակավայր</b>				
Քաղաքային	1.7	3,657	7.8	1,558
Գյուղական	0.7	2,459	17.7	1,197
<b>Մարզ</b>				
Երևան	2.5	2,001	3.0	833
Արագածոտն	0.0	315	2.0	159
Արարատ	0.5	552	3.2	290
Արմավիր	1.0	586	18.8	268
Գեղարքունիք	0.4	478	30.9	235
Լոռի	0.8	355	26.9	184
Կոտայք	1.0	678	16.1	299
Շիրակ	1.9	510	25.5	201
Սյունիք	0.0	238	1.1	104
Վայոց ձոր	0.0	119	6.3	56
Տավուշ	0.8	283	16.0	126
<b>Կրթություն</b>				
Հիմնական	1.0	396	12.5	360
Միջնակարգ	0.8	2,444	16.0	1,250
Միջին մասնագիտական	1.5	1,360	13.0	403
Բարձրագույն	1.9	1,910	5.0	736
<b>Բարեկեցության քվինտիլ</b>				
Ամենացածր	0.8	1,081	16.0	523
Երկրորդ	0.6	1,242	16.8	583
Միջին	1.3	1,142	16.5	521
Չորրորդ	1.1	1,287	6.8	566
Ամենաբարձր	2.6	1,365	5.1	562
Ընդամենը	1.3	6,116	12.1	2,755

Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Ընդամենը ներառում է կանանց և տղամարդկանց 5-ական դեպք (կշռված) առանց որևէ կրթության:

<sup>1</sup> Զբաղվածությունն արտասահմանում վերաբերում է հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում երեք կամ ավելի ամիս անընդմեջ արտասահմանում ունեցած աշխատանքին:



աշխատել է արտասահմանում՝ համեմատած քաղաքաբնակների 8 տոկոսի հետ: Ըստ մարզերի՝ տղամարդիկ Շիրակի (26 տոկոս), Լոռիու (27 տոկոս) և Գեղարքունիքի (31 տոկոս) մարզերում ամենաշատն են հակված արտասահմանում աշխատելուն, մինչդեռ տղամարդիկ Սյունիքի մարզում (1 տոկոս)՝ ամենաքիչը: Միջին մասնագիտական կամ ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող տղամարդիկ կրկնակի անգամ ավելի են հակված արտասահմանում աշխատելուն, քան բարձրագույն կրթություն ունեցողները: Նմանապես՝ բարեկեցության երեք ամենացածր քվինտիլներում գտնվող տղամարդիկ կրկնակի անգամ ավելի են հակված արտասահմանում աշխատելուն, քան երկու ամենաբարձր քվինտիլներում գտնվողները:

Չնայած ներկայում ամուսնացած շատ քիչ կանայք են նշել, որ իրենք աշխատել են արտասահմանում, կանանց 22 տոկոսը նշել է, որ ՀԺԱՀ 2015-16-ին նախորդող երեք տարիների ընթացքում իրենց ամուսինն աշխատել է արտասահմանում: Ներկայում ամուսնացած տղամարդկանց միայն 1 տոկոսն է նշել, որ իրենց կինը վերոնշյալ ժամանակահատվածում աշխատել է արտասահմանում (տվյալները ցուցադրված չեն):



**Հիմնական արդյունքներ**

- 15-49 տարեկան կանանց մոտ երեք հինգերորդը (64 տոկոս) և 15-49 տարեկան տղամարդկանց կեսից ավելին (55 տոկոս) ներկայում ամուսնացած են կամ բնակվում են համատեղ գուզրնկերոջ/գուզրնկերուհու հետ: Կանանց 30 և տղամարդկանց 43 տոկոսը երբևէ ամուսնացած չեն եղել, կանանց 4 և տղամարդկանց 2 տոկոսն ամուսնալուծված են կամ բաժանված, կանանց 2 տոկոսն այրի է, սակայն, ըստ էության, ոչ մի տղամարդ այրի չէ:
- Հայաստանում կանանց և տղամարդկանց մեծ մասը կյանքի ընթացքում առնվազն մեկ անգամ ամուսնանում է. երբևէ չամուսնացածների մասնաբաժինը կտրուկ նվազում է՝ տարիքի աճին գուզրնթաց՝ կազմելով 6 տոկոս 45-49 տարեկան կանանց և 4 տոկոս 45-49 տարեկան տղամարդկանց շրջանում:
- 25-49 տարեկան կանանց մոտ 1 տոկոսն է առաջին անգամ ամուսնացել մինչև 15 տարեկանը, իսկ 13 տոկոսն ամուսնացել է մինչև 18 տարեկանը:
- 25-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր ամուսնացել են մինչև 18 տարեկանը, նվազում է՝ 40-44 տարեկան կանանց շրջանում գրանցված 21 տոկոսից մինչև 5 տոկոս 20-24 տարեկանների շրջանում:
- Հայաստանում տղամարդիկ ամուսնանում են կանանցից հինգ տարի ավելի ուշ: 30-49 տարեկան կանանց մեղիան տարիքն առաջին ամուսնության ժամանակ 20.9 տարի է, իսկ նույն տարիքային խմբի տղամարդկանց մեղիան տարիքը 25.9 տարի է:
- Հայաստանում կանայք սովորաբար սկսում են սեռական կյանքն առաջին ամուսնության հետ գուզահետ: Ի հակադրություն սրան՝ 30-49 տարեկան տղամարդիկ սկսում են սեռական կյանքն առաջին ամուսնությունից 4.7 տարի առաջ:
- Կանանց 57 տոկոսը եղել է սեռապես ակտիվ հետազոտությանը՝ նախորդող չորս շաբաթների ընթացքում, ևս 6 տոկոսը՝ հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում, բայց ոչ հետազոտությանը նախորդող մեկ ամսվա ընթացքում. համապատասխան ցուցանիշները տղամարդկանց շրջանում կազմել են 64 և 9 տոկոս:

Սույն գլուխը ներկայացնում է ամուսնության և սեռական ակտիվության վերաբերյալ ՀԺԱՀ 2015-16-ի տվյալները: Սոցիալական միջավայրը մեծ ազդեցություն ունի վերարտադրելու կենսաբանական ունակությամբ օժտված գույզերի երեխաներ ունենալու, երեխաների թվաքանակի և միջծննդյան միջակայքերի վերաբերյալ որոշումների կայացման վրա: Հայաստանում սեռական ակտիվության շրջանը հիմնականում ամուսնության ընթացքում է, ուստի ամուսնությունը կնոջ հղիանալու հավանականության առաջնային ցուցիչ է: Հղիանալու հավանականության ավելի ուղղակի չափանիշներն են տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ և սեռական հարաբերություններ ունենալու հաճախականությունը: Չնայած հետծննդյան ամենորեան, ինքնազսպումը սեռական հարաբերություններից և դաշտանադադարը ևս մեծապես ազդում են ծնելիության վրա, դրանց ազդեցությունը ներկայացված է հաջորդ գլխում: Այս որոշիչ գործոններից ոչ

մեկն անկախ չէ, դրանք փոխկապակցված են և ներագրում են իրար վրա՝ այդպիսով իսկ ազդելով ծնելիության մակարդակների և միտումների վրա: Դրանց ազդեցությունը տատանվում է՝ ըստ անհատի, բնակավայրի և ժամանակի:

#### 4.1 ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Աղյուսակ 4.1-ը ցույց է տալիս 15-49 տարեկան բոլոր կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ հարցման պահին նրանց ամուսնական կարգավիճակի և ըստ տարիքի: «Ամուսնացած» տերմինը վերաբերում է օրինական կամ պաշտոնական ամուսնություններին (քաղաքացիական կամ կրոնական), մինչդեռ «բնակվում են համատեղ» տերմինը՝ ոչ պաշտոնական ամուսնություններին: Հաջորդիվ ներկայացված աղյուսակներում այս երկու տերմինները միացվել են և ստացել են «ներկայում ամուսնացած» անվանումը: Այրի, ամուսնալուծված կամ բաժանված անձանց խումբը հավաքական կերպով անվանվել է «նախկինում ամուսնացած»:

**Աղյուսակ 4.1 Ամուսնության ընթացիկ կարգավիճակը**

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ ամուսնական ընթացիկ կարգավիճակի և ըստ տարիքի, Հայաստան, 2015-16 թթ.

Տարիք	Ամուսնական կարգավիճակ						Ընդամենը	Ներկայում միության մեջ գտնվող հարցվողների տոկոս	Հարցվողների թվաքանակ
	Երբևէ չամուսնա- ցած	Ամուսնա- ցած	Համատեղ բնակվող	Ամուսնա- լուծված	Բաժանված	Այրի			
<b>ԿԱՆԱՅՔ</b>									
15-19	95.2	4.6	0.0	0.2	0.0	0.0	100.0	4.6	725
20-24	60.1	39.2	0.1	0.2	0.2	0.1	100.0	39.3	928
25-29	27.4	69.1	0.2	2.4	0.5	0.4	100.0	69.2	1,099
30-34	12.5	81.5	0.5	4.1	0.8	0.6	100.0	82.0	1,007
35-39	8.2	81.4	0.4	6.3	1.5	2.2	100.0	81.8	867
40-44	5.2	81.1	0.4	6.3	1.3	5.6	100.0	81.5	784
45-49	6.0	78.1	1.5	6.3	0.6	7.5	100.0	79.6	706
Ընդամենը	29.9	63.3	0.4	3.6	0.7	2.1	100.0	63.7	6,116
<b>ՏՂԱՄԱՐԴԻԿ</b>									
15-19	100.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	100.0	0.0	345
20-24	87.9	8.6	2.6	0.4	0.4	0.0	100.0	11.2	467
25-29	55.1	40.1	4.3	0.3	0.2	0.0	100.0	44.4	464
30-34	21.6	67.3	8.1	2.0	0.5	0.5	100.0	75.4	427
35-39	13.5	77.3	8.0	0.7	0.2	0.3	100.0	85.3	376
40-44	6.0	82.2	7.1	3.5	1.1	0.0	100.0	89.3	346
45-49	4.4	82.6	7.3	4.2	1.5	0.0	100.0	90.0	330
Ընդամենը	43.2	49.4	5.3	1.5	0.5	0.1	100.0	54.7	2,755

Ըստ ՀԺԱՀ 2015-16-ի՝ կանանց երեք հինգերորդից ավելին (64 տոկոս) և տղամարդկանց կեսից ավելին (55 տոկոս) ամուսնացած են կամ բնակվում են համատեղ: Կանանց 4 և տղամարդկանց 2 տոկոսը ամուսնալուծված են կամ բաժանված, կանանց 2 տոկոսն այրի է, սակայն, ըստ էության, ոչ մի տղամարդ այրի չէ:

Ներկայում ամուսնացած կանանց մասնաբաժինն աճում է տարիքին զուգընթաց՝ հասնելով առավելագույնի 30-44 տարեկան կանանց շրջանում (82 տոկոս), այնուհետև տարիքով ավելի մեծ կանանց շրջանում մի փոքր նվազում է: 45-49 տարեկան կանանց շրջանում ընդամենը 6 տոկոսը երբևէ ամուսնացած չի եղել, 80 տոկոսն ամուսնացած է կամ բնակվում է տղամարդու հետ, 7 տոկոսն ամուսնալուծված է կամ բաժանված, իսկ 8 տոկոսը՝ այրի:

Տղամարդիկ, ի տարբերություն կանանց, ավելի հավանական է, որ երբևէ ամուսնացած չլինեն (համապատասխանաբար 43 և 30 տոկոս): Այս տարբերությունը հիմնականում բացատրվում է այն հանգամանքով, որ տղամարդիկ ավելի մեծ տարիքում են ամուսնանում: Օրինակ՝ 20-24 տարեկան կանանց 39 տոկոսը միության մեջ է՝ համեմատած նույն տարիքի տղամարդկանց 11 տոկոսի հետ:

Վերջին տասնամյակում ամուսնական կարգավիճակի մոդելները Հայաստանում հիմնականում մնացել են անփոփոխ: Երբևէ ամուսնացած հարցվողների մասնաբաժինը ՀԺԱՀ 2005, 2010 և 2015-16 հետազոտությունների միջև շատ քիչ է փոխվել թե՛ կանանց (համապատասխանաբար 69, 68 և 70 տոկոս), թե՛ տղամարդկանց շրջանում (համապատասխանաբար 58, 55 և 57 տոկոս):

#### 4.2 ՏԱՐԻՔԸ ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՌԱԿԱՆ ՀԱՐԿՎՈՂՆԵՐԻ ԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամուսնությունը կարևոր ժողովրդագրական և սոցիալական ցուցանիշ է, որը սովորաբար մատնանշում է անհատի կյանքի այն կետը, երբ ծնող դառնալը դառնում է սոցիալապես ընդունելի: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում բոլոր երբևէ ամուսնացած հարցվողներից հավաքագրվել է տեղեկատվություն առաջին ամուսնության ժամանակ իրենց տարիքի մասին՝ ճշտելով ամիսն ու տարեթիվը, երբ հարցվողը սկսել է բնակվել իր առաջին կողակցի հետ: Աղյուսակ 4.2-ը ցույց է տալիս առաջին ամուսնության ժամանակ կանանց և տղամարդկանց մասնաբաժինն ըստ կոնկրետ տարիքի և 25-49 տարեկան կանանց և 30-49 տարեկան տղամարդկանց մեղիան տարիքն առաջին ամուսնության ժամանակ: Մեղիան տարիքն առաջին ամուսնության ժամանակ 25-49 տարեկան տղամարդկանց համար ցուցադրված չէ, քանի որ տղամարդկանց 50 տոկոսից քիչն է ամուսնացել մինչև 25 տարեկանը:

Աղյուսակ 4.2-ի արդյունքները ցույց են տալիս, որ 25-49 տարեկան կանանց մեկ երրորդից ավելին ամուսնացել է մինչև 20 տարեկանը, իսկ 73 տոկոսը՝ մինչև 25 տարեկանը: Առաջին ամուսնության ժամանակ մեղիան տարիքը 25-49 տարեկան կանանց շրջանում 21.4 տարի է: 25-49 տարեկան կանանց շրջանում առաջին ամուսնության ժամանակ մեղիան տարիքի կոհորտայի տարբերությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարիքով ավելի երիտասարդ կանայք ամուսնացել են երկու և ավելի տարի ուշ՝ տարիքով ավելի մեծ կանանց համեմատությամբ: Այսպես՝ 25-29 տարեկան կանանց շրջանում առաջին ամուսնության ժամանակ մեղիան տարիքը 22.9 տարի է, իսկ 45-49 տարեկան կանանց շրջանում՝ 20.6 տարի:

**Աղյուսակ 4.2 Տարիքն առաջին ամուսնության ժամանակ**

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր առաջին անգամ ամուսնացել են նշված կոնկրետ տարիքում և մեղիան տարիքն առաջին ամուսնության ժամանակ, ըստ ընթացիկ տարիքի, Հայաստան, 2015-16 թթ.

Ընթացիկ տարիք	Նշված տարիքում առաջին անգամ ամուսնացածների տոկոս					Երբևէ ամուսնացածների տոկոս	Հարցվողների թվաքանակ	Մեղիան տարիքն առաջին ամուսնության ժամանակ
	15	18	20	22	25			
<b>ԿԱՆԱՅՔ</b>								
15-19	0.0	կշ	կշ	կշ	կշ	95.2	725	a
20-24	0.0	5.3	19.1	կշ	կշ	60.1	928	a
25-29	0.2	7.6	23.9	41.7	63.3	27.4	1,099	22.9
30-34	0.1	11.1	32.4	52.4	69.5	12.5	1,007	21.7
35-39	0.7	16.0	39.5	56.7	73.6	8.2	867	21.0
40-44	0.2	20.6	51.4	67.6	81.1	5.2	784	19.9
45-49	0.0	14.0	43.0	65.6	82.6	6.0	706	20.6
25-49	0.2	13.3	36.7	55.3	72.9	13.0	4,463	21.4
30-49	0.2	15.2	40.9	59.8	76.0	8.3	3,364	20.9
<b>ՏՂԱՄԱՐԴԻԿ</b>								
15-19	0.0	կշ	կշ	կշ	կշ	100.0	345	a
20-24	0.0	0.4	1.6	կշ	կշ	87.9	467	a
25-29	0.0	0.3	0.9	7.7	26.9	55.1	464	a
30-34	0.0	0.5	2.4	11.2	35.4	21.6	427	26.3
35-39	0.0	0.9	3.5	13.0	41.7	13.5	376	26.1
40-44	0.0	0.5	4.5	15.1	37.8	6.0	346	26.6
45-49	0.0	0.5	2.8	21.3	52.1	4.4	330	24.7
25-49	0.0	0.5	2.7	13.1	37.9	22.3	1,942	a
30-49	0.0	0.6	3.3	14.8	41.3	12.0	1,478	25.9

Նշում: Տարիքն առաջին ամուսնության ժամանակ համարվում է այն տարիքը, երբ հարցվողը սկսել է ապրել իր առաջին կողակցի/զուգընկերոջ/զուգընկերուհու հետ:

կշ = կիրառելի չէ

a = Բաց է թողնված, քանի որ մինչ այդ տարիքային խումբ հասնելը կանանց կամ տղամարդկանց 50 տոկոսից քիչն է սկսել առաջին անգամ համատեղ բնակվել իր կողակցի հետ:

Ի տարբերություն կանանց՝ 25-49 տարեկան տղամարդկանց շատ քիչ մասն է (3 տոկոս) ամուսնացել մինչև 20 տարեկանը, և միայն 38 տոկոսը՝ մինչև 25 տարեկանը: Տղամարդկանց մեծամասնությունը ամուսնանում է 25-30 տարեկան միջակայքում, ընդ որում՝ 30-49 տարեկան տղամարդկանց մոտ 90 տոկոսն այդպես է նշել: 30-49 տարեկան տղամարդկանց և կանանց՝ առաջին ամուսնության ժամանակ մեղիան տարիքի տարբերությունը հինգ տարի է (համապատասխանաբար 25.9 և 20.9 տարի), որը ևս վկայում է այն մասին, որ տղամարդիկ, կանանց համեմատությամբ, ավելի ուշ տարիքում են ամուսնանում:

Աղյուսակ 4.3-ում ներկայացված է 25-49 տարեկան կանանց և 30-49 տարեկան տղամարդկանց մեղիան տարիքն առաջին ամուսնության ժամանակ՝ ըստ հիմնական բնութագրիչների: 30-49 տարեկան կանանց և տղամարդկանց շրջանում մեղիան տարիքն առաջին ամուսնության ժամանակ ավելի ցածր է գյուղական, քան քաղաքային բնակավայրերում: Ըստ մարզերի՝ կանանց շրջանում ամենաբարձր մեղիան տարիքն առաջին ամուսնության ժամանակ Երևանում է (22.4 տարի), իսկ տղամարդկանց շրջանում ամենաբարձր մեղիան տարիքն առաջին ամուսնության ժամանակ՝ Երևանում և Արագածոտնի մարզում (համապատասխանաբար 26.8 և 27.1 տարի):

Առաջին ամուսնության ժամանակ մեղիան տարիքը կանանց և տղամարդկանց շրջանում աճում է կրթական մակարդակին զուգընթաց: Մակայն կրթական մակարդակն առավել մեծ ազդեցություն ունի առաջին ամուսնության ժամանակ կանանց մեղիան տարիքի վրա, քան տղամարդկանց: Միջինում, 30-49 տարեկան, բարձրագույն կրթություն ունեցող կանայք ամուսնացել են 5 տարի ավելի ուշ, քան հիմնական կրթություն ունեցողները (համապատասխանաբար 23.8 և 18.5 տարի): Իսկ 30-49 տարեկան, բարձրագույն կրթություն ունեցող տղամարդիկ ամուսնացել են 2 տարի ավելի ուշ, քան հիմնական կրթություն ունեցողները (համապատասխանաբար 27.2 և 25.5 տարի): Կանանց շրջանում բարեկեցությունն ուղղակիորեն կապված է առաջին ամուսնության ժամանակ կնոջ տարիքի հետ. 30-49 տարեկան կանանց շրջանում առաջին ամուսնության ժամանակ մեղիան տարիքն աճում է՝ կազմելով 19.9 տարի բարեկեցության ամենացածր քվինտիլում և 22.4 տարի բարեկեցության ամենաբարձր քվինտիլում: Բարեկեցության և առաջին ամուսնության ժամանակ տղամարդու տարիքի միջև կապն այդքան էլ ուժեղ չէ, այնուամենայնիվ, բարեկեցության չորրորդ և ամենաբարձր քվինտիլներում գտնվող տղամարդիկ ավելի ուշ են ամուսնանում (համապատասխանաբար 26.6 և 26.1 տարի), քան մյուս երեք ավելի ցածր քվինտիլներում (25.5-25.8 տարիների միջև):

Ինչ վերաբերում է առաջին ամուսնության ժամանակ մեղիան տարիքի հետ կապված միտումներին, կարող ենք նշել, որ 25-49 տարեկան կանանց շրջանում առաջին ամուսնության ժամանակ մեղիան տարիքն աճել է՝ 2010-ին գրանցված 21.1 տարվանից մինչև 21.4 տարի՝ 2015-16-ին:

**Աղյուսակ 4.3 Մեղիան տարիքն առաջին ամուսնության ժամանակ, ըստ հիմնական բնութագրիչների**

Առաջին ամուսնության ժամանակ մեղիան տարիքը 25-49 և 30-49 տարեկան կանանց և 30-49 տարեկան տղամարդկանց շրջանում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կանայք (տարեկան)		Տղամարդիկ (տարեկան)
	25-49	30-49	30-49
<b>Քնակավայր</b>			
Քաղաքային	22.3	21.9	26.4
Գյուղական	20.1	19.7	25.3
<b>Մարզ</b>			
Երևան	22.8	22.4	26.8
Արագածոտն	21.0	20.3	27.1
Արարատ	21.3	21.0	25.7
Արմավիր	20.0	19.6	25.5
Գեղարքունիք	20.1	19.8	25.4
Լոռի	21.3	20.8	25.3
Կոտայք	20.7	20.4	25.3
Շիրակ	21.0	20.5	26.3
Սյունիք	20.8	20.4	26.6
Վայոց ձոր	20.2	20.0	26.2
Տավուշ	20.4	19.9	24.6
<b>Կրթություն</b>			
Չունի կրթություն	*	*	*
Հիմնական	18.8	18.5	25.5
Միջնակարգ	19.9	19.7	25.6
Միջին մասնագիտական	21.2	20.9	25.9
Բարձրագույն	24.1	23.8	27.2
<b>Բարեկեցության քվինտիլ</b>			
Ամենացածր	20.3	19.9	25.8
Երկրորդ	20.4	20.0	25.5
Միջին	20.8	20.2	25.8
Չորրորդ	22.4	21.7	26.6
Ամենաբարձր	22.7	22.4	26.1
<b>Ընդամենը</b>	21.4	20.9	25.9

Նշում: Տարիքն առաջին ամուսնության ժամանակ համարվում է այն տարիքը, երբ հարցվողը սկսել է ապրել իր առաջին կողակցի/զուգընկերոջ/զուգընկերուհու հետ: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ դեպքերի վրա, և այն չի ներառվել:

30-49 տարեկան տղամարդկանց շրջանում առաջին ամուսնության ժամանակ մեղիան տարիքը ևս աճել է՝ 2010-ին գրանցված 25.8 տարվանից մինչև 25.9 տարի՝ 2015-16-ին:

### 4.3 ՏԱՐԻՔԸ ԱՌԱՋԻՆ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Տարիքն առաջին ամուսնության ժամանակ երբեմն դիտարկվում է որպես կնոջ համար սեռական հարաբերության առաջին փորձ, սակայն այս երկու իրադարձությունները պարտադիր չէ, որ նույն ժամանակ տեղի ունեցած լինեն: Քանի որ կանայք և տղամարդիկ կարող են սեռական հարաբերություն ունենալ նախքան ամուսնությունը, տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ առավել վստահելի ցուցանիշ է կնոջ հղիանալու հավանականության տեսանկյունից, քան տարիքն առաջին ամուսնության ժամանակ: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում կանայք և տղամարդիկ հարցվել են, թե քանի տարեկան էին, երբ առաջին սեռական հարաբերությունն ունեցան: Աղյուսակ 4.4-ը ցույց է տալիս առաջին սեռական հարաբերության ժամանակ կանանց և տղամարդկանց մասնաբաժինն ըստ կոնկրետ տարիքի և կանանց ու տղամարդկանց մեղիան տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ:

Ընդհանուր առմամբ, ՀԺԱՀ 2015-16-ի արդյունքները ցույց են տալիս, որ հայ կանանց շրջանում տարիքն առաջին ամուսնության և տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ մեծապես համընկնում են: Այսպես՝ 25-49 տարեկան բոլոր կանանց շրջանում մեղիան տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ 21.2 տարի է, որը մի փոքր ավելի ցածր է առաջին ամուսնության ժամանակ մեղիան տարիքից (21.4 տարի): Առաջին սեռական հարաբերության ժամանակ տարիքի և առաջին ամուսնության ժամանակ տարիքի նման համընկնումը հնարավոր է, որ մասամբ պայմանավորված լինի այն հանգամանքով, որ կանայք չեն ցանկանում հայտնել իրենց մինչամուսնական սեռական ակտիվության մասին, քանի որ նման վարքագիծը դեմ է մշակութային նորմերին:

#### Աղյուսակ 4.4 Տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր առաջին անգամ սեռական հարաբերություն են ունեցել կոնկրետ տարիքում, նրանց տոկոսը, ովքեր երբեք չեն ունեցել սեռական հարաբերություն և մեղիան տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ, ըստ ընթացիկ տարիքի, Հայաստան, 2015-16 թթ.

Ընթացիկ տարիք	Նշված տարիքում առաջին անգամ սեռական հարաբերություն ունեցածների տոկոս				Երբևէ սեռական հարաբերություն չունեցածների տոկոս	Հարցվողների թվաքանակ	Մեղիան տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ	
	15	18	20	25				
<b>ԿԱՆԱՅՔ</b>								
15-19	0.0	կշ	կշ	կշ	կշ	95.2	725	a
20-24	0.2	5.9	19.6	կշ	կշ	59.9	928	a
25-29	0.2	8.1	25.0	42.1	64.3	27.0	1,099	22.8
30-34	0.1	11.7	33.3	52.9	70.0	12.1	1,007	21.7
35-39	0.7	16.8	40.4	57.3	74.7	8.2	867	20.9
40-44	0.5	21.2	51.9	68.2	81.4	5.1	784	19.9
45-49	0.0	15.4	44.2	66.9	83.6	5.9	706	20.4
20-49	0.2	11.1	30.6	կշ	կշ	29.6	5,265	a
25-49	0.3	14.1	37.6	56.0	73.6	12.8	4,463	21.2
30-49	0.3	16.0	41.8	60.6	76.7	8.2	3,364	20.7
15-24	0.1	կշ	կշ	կշ	կշ	75.4	1,653	a
<b>ՏՂԱՄԱՐԴԻԿ</b>								
15-19	1.0	կշ	կշ	կշ	կշ	87.5	345	a
20-24	1.0	14.9	31.8	կշ	կշ	39.9	467	a
25-29	0.7	15.5	35.4	65.0	87.6	7.5	464	21.1
30-34	0.8	15.9	33.6	58.9	83.4	3.3	427	21.3
35-39	0.8	19.2	37.0	59.3	84.2	3.4	376	21.1
40-44	0.3	11.1	28.0	57.5	84.3	1.7	346	21.5
45-49	0.9	14.4	37.3	66.4	88.9	0.5	330	20.9
20-49	0.8	15.3	33.8	կշ	կշ	10.6	2,410	a
25-49	0.7	15.4	34.3	61.5	85.6	3.6	1,942	21.2
30-49	0.7	15.3	34.0	60.3	85.0	2.3	1,478	21.2
15-24	1.0	կշ	կշ	կշ	կշ	60.1	813	a

կշ = կիրառելի չէ

a = Բաց է թողնված, քանի որ մինչ այդ տարիքային խումբ հասնելը հարցվողների 50 տոկոսից քիչ է ունեցել սեռական հարաբերություն:

Ի տարբերություն կանանց՝ հայ տղամարդիկ ավելի շատ են նշել, որ սեռական հարաբերություն են ունեցել նախքան ամուսնանալը: Օրինակ՝ չնայած 30-49 տարեկան շատ քիչ տղամարդիկ են նշել, որ ամուսնացել են մինչև 20 տարեկանը (3 տոկոս), նրանց մեկ երրորդը նշել է, որ առաջին անգամ սեռական հարաբերություն է ունեցել մինչև 20 տարեկան դառնալը: 30-49 տարեկան տղամարդկանց շրջանում տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ 4 տարով պակաս է առաջին ամուսնության ժամանակ մեղիան տարիքից (համապատասխանաբար 21.2 և 25.9 տարի):

Աղյուսակ 4.5-ում ներկայացված է 25-49 և 30-49 տարեկանների տարիքային խմբերում կանանց և տղամարդկանց մեղիան տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ՝ ըստ հիմնական բնութագրիչների: Կանանց շրջանում արձանագրված արդյունքներին նայելիս ակնհայտ է դառնում, որ ենթախմբերում առկա առաջին սեռական հարաբերության ժամանակ մեղիան տարիքի տարբերությունների և առաջին ամուսնության ժամանակ մեղիան տարիքի տարբերությունների միջև բազմաթիվ զուգահեռներ կան. ամենաբարձր մեղիան տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ դիտարկվել է քաղաքային կանանց, բարձրագույն կրթություն ունեցող կանանց և բարեկեցության ամենաբարձր քվինտիլում գտնվող կանանց շրջանում: Ի հակադրություն կանանց՝ առաջին սեռական հարաբերության ժամանակ մեղիան տարիքը տղամարդկանց շրջանում ավելի ցածր է քաղաքային, քան գյուղական բնակավայրերում, և սովորաբար նվազում է՝ կրթական և բարեկեցության մակարդակների աճին զուգընթաց:

#### 4.4 ՄԵՌԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱԿԱՆՈՒՄ

Սեռական հարաբերությունների հաճախականությունը հակաբեղմնավորման մեթոդներ չօգտագործելու պարագայում հղիությունը պայմանավորող որոշիչ գործոն է, հետևաբար սեռական հարաբերությունների հաճախականության մասին տեղեկատվությունը կարևոր ցուցանիշ է հղիանալու հավանականության մասին: ՀԺԱՀ 2015-16-ի ընթացքում կանանց և տղամարդկանց հարց է տրվել, թե երբ են նրանք վերջին անգամ ունեցել սեռական հարաբերություն: Աղյուսակ 4.6.1-ը և Աղյուսակ 4.6.2-ը ցույց են տալիս 15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ վերջին սեռական հարաբերությունից հետո անցած ժամանակի: Հետազոտությանը նախորդող չորս շաբաթների ընթացքում առնվազն մեկ անգամ սեռական հարաբերություն ունեցած հարցվողները համարվել են սեռապես ակտիվ:

**Աղյուսակ 4.5 Մեղիան տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ, ըստ հիմնական բնութագրիչների**

25-49 և 30-49 տարեկան կանանց և տղամարդկանց մեղիան տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կանայք (տարեկան)		Տղամարդիկ (տարեկան)	
	25-49	30-49	25-49	30-49
<b>Բնակավայր</b>				
Քաղաքային	22.2	21.7	20.8	20.9
Գյուղական	20.0	19.6	21.7	21.7
<b>Մարզ</b>				
Երևան	22.8	22.3	20.1	20.2
Արագածոտն	20.9	20.2	23.7	23.8
Արարատ	21.3	20.9	21.1	21.1
Արմավիր	19.8	19.5	18.8	18.8
Գեղարքունիք	20.0	19.7	22.3	22.3
Լոռի	21.3	20.8	22.0	22.0
Կոտայք	20.6	20.3	21.8	22.1
Շիրակ	20.9	20.4	17.9	17.9
Սյունիք	20.8	20.4	a	25.8
Վայոց ձոր	20.2	20.0	24.2	24.1
Տավուշ	20.3	19.8	23.9	23.4
<b>Կրթություն</b>				
Չունի կրթություն	*	*	*	*
Հիմնական	18.6	18.3	21.0	21.1
Միջնակարգ	19.8	19.6	21.4	21.4
Միջին				
մասնագիտական	21.2	20.8	21.2	21.4
Բարձրագույն	23.9	23.7	20.9	20.8
<b>Բարեկեցության քվինտիլ</b>				
Ամենացածր	20.2	19.8	21.5	21.7
Երկրորդ	20.3	19.9	21.5	21.5
Միջին	20.7	20.1	21.4	21.6
Չորրորդ	22.3	21.6	21.3	21.3
Ամենաբարձր	22.6	22.4	20.0	20.1
Ընդամենը	21.2	20.7	21.2	21.2

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ դեպքերի վրա, և այն չի ներառվել:  
a = Բաց է թողնված, քանի որ մինչ այդ տարիքային խումբ հասնելը հարցվողների 50 տոկոսից քիչն է ունեցել սեռական հարաբերություն:



Հետազոտությանը նախորդող չորս շաբաթների ընթացքում կանանց 57 տոկոսը եղել է սեռապես ակտիվ: Կանանց 6 տոկոսն ունեցել է սեռական հարաբերություն հետազոտությանը նախորդող մեկ տարվա ընթացքում, բայց ոչ հետազոտությանը նախորդող մեկ ամսվա ընթացքում, իսկ ևս 7 տոկոսն ունեցել է սեռական հարաբերություն ավելի քան մեկ տարի առաջ: Հետազոտության պահին բոլոր կին հարցվողների 30 տոկոսը երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն:

Վերջին ժամանակաշրջանում սեռապես ակտիվ կանանց մասնաբաժինն աճում է տարիքին զուգընթաց՝ կազմելով առավելագույնը 76 տոկոս 30-34 տարեկան կանանց տարիքային խմբում, այնուհետև նվազում է մինչև 67 տոկոս 45-49 տարեկան կանանց տարիքային խմբում: 15-19 տարեկան կանանց միայն 4 տոկոսն է վերջին շրջանում ունեցել սեռական հարաբերություն, իսկ այս տարիքային խմբում մեծամասնությունը (95 տոկոս) երբեք չի ունեցել սեռական հարաբերություն: Ինչպես և ակնկալվում էր, ամուսնական կարգավիճակը սերտորեն կապված է սեռական հարաբերությունների հաճախականության հետ: Ներկայում ամուսնացած կանանց 90 տոկոսը նշել է, որ սեռական հարաբերություն է ունեցել հետազոտությանը նախորդող մեկ ամսվա ընթացքում: Երբևէ չամուսնացած կանանց բացարձակ մեծամասնությունը նշել է, որ երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն: Ինչպես արդեն նշվեց, զրեթե ոչ մի կին չի նշել մինչամուսնական սեռական հարաբերությունների մասին, ըստ էության, բոլոր երբևէ չամուսնացած կանայք նշել են, որ երբեք չեն ունեցել սեռական հարաբերություն:

**Աղյուսակ 4.6.1 Սեռական ակտիվությունը վերջին ժամանակաշրջանում. կանայք**

15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումն ըստ վերջին անգամ սեռական հարաբերություն ունենալու ժամանակի և ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Վերջին սեռական հարաբերության ժամանակը				Երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն	Ընդամենը	Կանանց թվաքանակ
	Վերջին 4 շաբաթների ընթացքում	1 տարվա ընթացքում <sup>1</sup>	Մեկ կամ մի քանի տարի առաջ	Տվյալ չկա			
<b>Տարիք</b>							
15-19	4.0	0.8	0.0	0.0	95.2	100.0	725
20-24	35.6	3.6	0.8	0.2	59.9	100.0	928
25-29	62.7	6.7	3.4	0.2	27.0	100.0	1,099
30-34	76.1	5.3	6.5	0.1	12.1	100.0	1,007
35-39	74.5	5.8	11.3	0.1	8.2	100.0	867
40-44	73.0	6.9	14.7	0.2	5.1	100.0	784
45-49	66.7	11.1	16.1	0.2	5.9	100.0	706
<b>Ամուսնական կարգավիճակ</b>							
Երբևէ չամուսնացած	0.4	0.1	0.1	0.0	99.3	100.0	1,830
Ամուսնացած կամ համատեղ բնակվող	89.7	8.1	2.1	0.1	0.0	100.0	3,895
Ամուսնալուծված/ բաժանված/այրի	0.9	8.2	90.1	0.8	0.0	100.0	390
<b>Ամուսնության տևողություն<sup>2</sup></b>							
0-4 տարի	89.1	9.7	1.0	0.2	0.0	100.0	698
5-9 տարի	90.9	7.5	1.4	0.2	0.0	100.0	772
10-14 տարի	91.9	6.0	2.1	0.0	0.0	100.0	694
15-19 տարի	92.4	5.5	2.0	0.2	0.0	100.0	565
20-24 տարի	88.5	8.4	3.0	0.1	0.0	100.0	560
25+ տարի	85.0	11.5	3.3	0.2	0.0	100.0	545
Ամուսնացել է մեկից ավելի անգամ	83.1	9.7	7.3	0.0	0.0	100.0	61
<b>Աշխատանքն արտասահմանում (վերջին 3 տարիների ընթացքում)<sup>3</sup></b>							
Աշխատել է	45.4	10.6	16.3	0.0	27.7	100.0	81
Չի աշխատել	57.4	5.6	7.0	0.1	29.8	100.0	6,035
<b>Ամուսնու աշխատանքն արտասահմանում, որի մասին հայտնել են ներկայում ամուսնացած կանայք<sup>4</sup></b>							
Հարցվողն է աշխատել	*	*	*	*	*	100.0	18
Կողակիցն է աշխատել	72.6	20.0	7.4	0.0	0.0	100.0	834
Երկուսն էլ աշխատել են	(66.6)	(20.8)	(12.7)	(0.0)	(0.0)	100.0	32
Ոչ մեկը չի աշխատել	94.7	4.7	0.5	0.2	0.0	100.0	2,998
Ներկայում ամուսնացած չէ	0.5	1.6	16.0	0.1	81.9	100.0	2,221
Տվյալ չկա	*	*	*	*	*	100.0	13
<b>Բնակավայր</b>							
Քաղաքային	54.3	5.9	8.7	0.1	31.0	100.0	3,657
Գյուղական	61.7	5.4	4.8	0.2	27.8	100.0	2,459
<b>Մարզ</b>							
Երևան	50.8	5.8	9.4	0.1	33.9	100.0	2,001
Արագածոտն	55.3	1.3	4.8	1.3	37.2	100.0	315
Արարատ	62.1	2.8	6.6	0.0	28.6	100.0	552
Արմավիր	60.1	8.1	7.6	0.2	24.0	100.0	586
Գեղարքունիք	59.2	2.7	4.0	0.1	34.0	100.0	478
Լոռի	53.5	5.7	5.5	0.0	35.3	100.0	355
Կոտայք	62.9	6.6	6.4	0.0	24.1	100.0	678
Շիրակ	55.0	11.8	8.2	0.0	25.0	100.0	510
Սյունիք	69.4	2.1	5.4	0.0	23.1	100.0	238
Վայոց ձոր	64.8	7.5	4.0	0.0	23.7	100.0	119
Տավուշ	69.0	4.9	3.9	0.2	21.9	100.0	283
<b>Կրթություն</b>							
Չունի կրթություն	*	*	*	*	*	100.0	5
Հիմնական	45.2	6.1	7.4	0.3	41.0	100.0	396
Միջնակարգ	61.0	6.0	7.8	0.2	25.0	100.0	2,444
Միջին մասնագիտական	62.1	7.4	7.7	0.1	22.6	100.0	1,360
Բարձրագույն	51.6	4.0	5.8	0.0	38.5	100.0	1,910
<b>Բարեկեցության քվինտիլ</b>							
Ամենացածր	58.1	5.4	8.6	0.2	27.8	100.0	1,081
Երկրորդ	61.0	5.2	4.3	0.2	29.3	100.0	1,242
Միջին	56.2	6.7	8.6	0.1	28.3	100.0	1,142
Չորրորդ	55.6	5.5	6.6	0.2	32.1	100.0	1,287
Ամենաբարձր	55.8	5.7	7.8	0.1	30.6	100.0	1,365
Ընդամենը	57.3	5.7	7.1	0.1	29.7	100.0	6,116

Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ դեպքերի վրա, և այն չի ներառվել:

<sup>1</sup> Չի ներառում այն կանանց, ովքեր սեռական հարաբերություն են ունեցել վերջին 4 շաբաթների ընթացքում:

<sup>2</sup> Չի ներառում այն կանանց, ովքեր ներկայում ամուսնացած չեն:

<sup>3</sup> «Աշխատանքն արտասահմանում» վերաբերում է հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում երեք կամ ավելի ամիս անընդմեջ արտասահմանում աշխատելուն:

<sup>4</sup> Տեղեկատվությունը հիմնված է ներկայում ամուսնացած կանանց կողմից հարաբերված տվյալների վրա՝ հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում երեք կամ ավելի ամիս անընդմեջ իր կամ իր ամուսնու արտասահմանում աշխատելու վերաբերյալ:

**Աղյուսակ 4.6.2 Սեռական ակտիվությունը վերջին ժամանակաշրջանում. տղամարդիկ**

15-49 տարեկան տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ վերջին անգամ սեռական հարաբերություն ունենալու ժամանակի, և ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Վերջին սեռական հարաբերության ժամանակը				Տրբևէ չի ունեցել սեռական հարաբերություն	Ընդամենը	Տղամարդկանց թվաքանակ
	Վերջին 4 շաբաթների ընթացքում	1 տարվա ընթացքում <sup>1</sup>	Մեկ կամ մի քանի տարի անոջ	Տվյալ չկա			
<b>Տարիք</b>							
15-19	3.7	7.6	1.2	0.0	87.5	100.0	345
20-24	34.7	14.9	10.5	0.0	39.9	100.0	467
25-29	65.8	15.8	9.9	1.0	7.5	100.0	464
30-34	80.5	10.1	5.7	0.4	3.3	100.0	427
35-39	87.7	4.7	3.9	0.3	3.4	100.0	376
40-44	89.3	3.9	3.9	1.2	1.7	100.0	346
45-49	91.8	3.7	3.4	0.7	0.5	100.0	330
<b>Ամուսնական կարգավիճակ</b>							
Երբևէ չամուսնացած	24.5	16.5	11.8	0.4	46.9	100.0	1,190
Ամուսնացած կամ համատեղ բնակվող	96.5	2.8	0.1	0.6	0.0	100.0	1,506
Ամուսնալուծված/բաժանված/այրի	(33.4)	(30.8)	(35.8)	(0.0)	(0.0)	100.0	59
<b>Ամուսնության տևողություն<sup>2</sup></b>							
0-4 տարի	94.7	5.0	0.0	0.3	0.0	100.0	317
5-9 տարի	95.8	3.9	0.0	0.4	0.0	100.0	331
10-14 տարի	97.4	2.1	0.0	0.5	0.0	100.0	291
15-19 տարի	98.4	0.5	0.0	1.1	0.0	100.0	252
20-24 տարի	96.1	2.1	0.6	1.2	0.0	100.0	182
25+ տարի	99.7	0.3	0.0	0.0	0.0	100.0	83
Ամուսնացել է մեկից ավելի անգամ	94.3	3.5	0.0	2.2	0.0	100.0	51
<b>Բնակավայր</b>							
Քաղաքային	66.1	9.4	6.1	0.5	17.9	100.0	1,558
Գյուղական	61.4	9.1	5.7	0.6	23.2	100.0	1,197
<b>Մարզ</b>							
Երևան	69.3	8.8	6.5	0.0	15.4	100.0	833
Արագածոտն	54.8	4.8	16.0	0.2	24.2	100.0	159
Արարատ	55.8	11.2	11.4	0.0	21.5	100.0	290
Արմավիր	83.1	5.2	0.4	0.0	11.3	100.0	268
Գեղարքունիք	50.1	15.8	3.7	0.0	30.4	100.0	235
Լոռի	47.1	10.3	8.1	7.3	27.3	100.0	184
Կոտայք	68.7	10.4	4.6	0.0	16.4	100.0	299
Շիրակ	70.7	15.4	1.9	0.0	12.0	100.0	201
Սյունիք	55.6	4.2	0.0	0.0	40.2	100.0	104
Վայոց ձոր	54.5	6.3	3.6	0.5	35.0	100.0	56
Տավուշ	60.0	2.1	4.2	0.0	33.6	100.0	126
<b>Կրթություն</b>							
Չունի կրթություն	*	*	*	*	*	100.0	5
Հիմնական	52.6	9.3	6.2	0.3	31.6	100.0	360
Միջնակարգ	63.9	8.6	5.5	0.7	21.3	100.0	1,250
Միջին մասնագիտական	68.4	9.0	4.9	0.7	17.0	100.0	403
Բարձրագույն	67.7	10.8	7.0	0.2	14.3	100.0	736
<b>Բարեկեցության քվինտիլ</b>							
Ամենացածր	62.1	9.3	6.7	0.6	21.3	100.0	523
Երկրորդ	60.1	9.7	5.8	0.6	23.8	100.0	583
Միջին	62.0	10.8	6.0	0.4	20.8	100.0	521
Չորրորդ	68.1	7.3	5.0	0.7	18.9	100.0	566
Ամենաբարձր	67.8	9.5	6.1	0.2	16.4	100.0	562
Ընդամենը	64.1	9.3	5.9	0.5	20.2	100.0	2,755

Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկյոված ղեպերի վրա: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ ղեպերի վրա, և այն չի ներառվել:

<sup>1</sup> Չի ներառում այն տղամարդկանց, ովքեր սեռական հարաբերություն են ունեցել վերջին 4 շաբաթների ընթացքում:

<sup>2</sup> Չի ներառում այն տղամարդկանց, ովքեր ներկայում ամուսնացած չեն:

Աշխատանքն արտասահմանում կապված է ներկայում ամուսնացած կանանց շրջանում վերջին ժամանակահատվածում սեռական ակտիվության հետ: Ամուսնացած կանայք, ում ամուսիններն աշխատել են արտասահմանում, հետագոտությանը նախորդող չորս շաբաթների

ընթացքում ավելի քիչ են հակված եղել սեռական ակտիվության, քան այն կանայք, ովքեր նշել են, որ ոչ իրենք, ոչ էլ իրենց ամուսինները չեն աշխատել արտասահմանում (համապատասխանաբար 73 և 95 տոկոս): Վերջին ժամանակահատվածում սեռական ակտիվությունն ամենացածրն է եղել փոքր թվով ամուսնացած կանանց շրջանում, ովքեր նշել են, որ ոչ իրենք, ոչ իրենց ամուսինները աշխատել են արտասահմանում (66 տոկոս):

Ընդհանուր առմամբ, տղամարդիկ ավելի հաճախ են նշել վերջին ժամանակահատվածում ունեցած սեռական հարաբերության մասին, քան կանայք (Աղյուսակ 4.6.2): Տղամարդկանց 64 տոկոսը սեռական հարաբերություն է ունեցել հետազոտությանը նախորդող չորս շաբաթների ընթացքում, 9 տոկոսն ունեցել է սեռական հարաբերություն հետազոտությանը նախորդող մեկ տարվա ընթացքում, բայց ոչ հետազոտությանը նախորդող չորս շաբաթների ընթացքում, 6 տոկոսն ունեցել է սեռական հարաբերություն ավելի քան մեկ տարի առաջ, իսկ 20 տոկոսը երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն: Մինչև 30 տարեկան տղամարդկանց շրջանում հավանականությունը, որ վերջին ժամանակահատվածում տղամարդը սեռապես ակտիվ է եղել, կտրուկ աճում է տարիքին զուգընթաց՝ կազմելով 4 տոկոս 15-19 տարեկան տղամարդկանց շրջանում և 66 տոկոս՝ 25-29 տարեկանների շրջանում: 30 տարեկան և տարիքով ավելի մեծ տղամարդկանց 80-ից ավելի տոկոսը նշել է, որ վերջին անգամ սեռական հարաբերություն ունեցել է հետազոտությանը նախորդող մեկ ամսվա ընթացքում:

Ինչպես և սպասվում էր, ներկայում ամուսնացած կամ կնոջ հետ համատեղ բնակվող տղամարդիկ ամենաշատն են նշել վերջին ժամանակահատվածում սեռական ակտիվության մասին (97 տոկոս)՝ համեմատած երբևէ չամուսնացած տղամարդկանց 25 տոկոսի և նախկինում ամուսնացած փոքրաթիվ տղամարդկանց մեկ երրորդի հետ:

**Հիմնական արդյունքներ**

- Ծնելիության գումարային գործակիցը ՀՄԱՀ 2015-16-ին նախորդող երեք տարիների համար կազմել է 1.7 ծնունդ՝ մեկ կնոջ հաշվով:
- Նախորդ երեք՝ 2000, 2005 և 2010 թթ. ՀՄԱՀ հետազոտությունների արդյունքում ԾԳԳ-ն նույնպես կազմել է 1.7 ծնունդ մեկ կնոջ հաշվով, այսինքն՝ Հայաստանում ծնելիության մակարդակը մնացել է կայուն 15 և ավելի տարիների ընթացքում:
- Կանայք հետաձգում են մանկածնման գործընթացը մինչև ավելի մեծ տարիք. եթե ՀՄԱՀ 2000-ի ժամանակ ծնելիության գրեթե 60 տոկոսը կենտրոնացած էր 15-24 տարեկան կանանց շրջանում, ապա ՀՄԱՀ 2015-16-ի ժամանակ ծնելիության 40 տոկոսից մի փոքր ավելին է կենտրոնացած այդ տարիքային խմբերում:
- Միջծննդյան կարճ միջակայքերը կարող են բացասաբար ազդել մոր առողջության և երեխայի կենդանի մնալու հավանականության վրա: ՀՄԱՀ 2015-16-ին նախորդող հինգ տարիների ընթացքում ոչ առաջին ծնունդների մեկ հինգերորդից ավելին տեղի է ունեցել նախորդ ծնունդից հետո 24 ամիսների ընթացքում, իսկ 11 տոկոսը՝ նախորդ ծնունդից հետո 18 ամիսների ընթացքում:
- Ծնելիությունը վաղ տարիքում ևս մեծ վտանգի է ենթարկում թե՛ մորը, թե՛ երեխային: Այն դեռահասների մասնաբաժինը, ովքեր արդեն մայր են կամ հղի են իրենց առաջին երեխայով, գյուղական բնակավայրերում ավելի բարձր է, քան քաղաքային բնակավայրերում (համապատասխանաբար 6 և 1 տոկոս):

Ծնելիությունը բնակչության դինամիկայի երեք հիմնական բաղադրիչներից մեկն է՝ մահացության և միգրացիայի հետ միասին: Սույն գլխում ներկայացված են ծնելիության մի շարք գործակիցներ, ներառյալ ընթացիկ և գումարային ծնելիության մակարդակները, բնույթը և միտումները, երբևէ ծնված և կենդանի երեխաները, միջծննդյան միջակայքերը, տարիքը, երբ կինը սկսել է մանկածնման գործընթացը, ծնելիությունը դեռահասների շրջանում: Հետծննդյան ամենորեան, ինքնազսպումը սեռական հարաբերություններից և դաշտանադադարը ևս ներկայացված են սույն գլխում: Հետծննդյան ամենորեան և ինքնազսպումը սեռական հարաբերություններից ազդում են կնոջ հղիանալու ունակության վրա, որն իր հերթին ազդում է միջծննդյան միջակայքերի վրա: Դաշտանադադարը կարևոր է, քանի որ այն մատնանշում է կնոջ հղիանալու հավանականության ժամանակահատվածի ավարտը:

ՀՄԱՀ 2015-16-ի շրջանակում հարցազրույցի մասնակցած բոլոր կանայք պատասխանել են իրենց վերաբառադրողական պատմության վերաբերյալ հարցերին: Յուրաքանչյուր կին նախ հարցվել է իր ունեցած հղիությունների ընդհանուր թվի մասին, որոնք ավարտվել են կենդանի ծնունդով, մեռելածնությամբ, վիժումով և աբորտով (հղիության արհեստական ընդհատում): Այս ընդհանուր տվյալները հավաքագրելուց հետո տեղեկություններ են հավաքագրվել յուրաքանչյուր հղիության մասին առանձին: Յուրաքանչյուր հղիության համար գրանցվել է հղիության ավարտի ամսաթիվը, ամիսն ու տարին և հղիության արդյունքը: Բոլոր հղիությունների մասին տեղեկությունները

հավաքագրվել են ըստ ժամանակագրական հաջորդականության՝ սկսած առաջին հղիությունից: Յուրաքանչյուր կենդանի ծնունդի համար տեղեկատվություն է հավաքագրվել երեխայի սեռի, գոյատևման կարգավիճակի և տարիքի մասին (կենդանի երեխաների համար), կամ մահվան ժամանակ տարիքի մասին (մահացած երեխաների համար): Ի լրումն՝ հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում գրանցված յուրաքանչյուր հղիության համար նշվել է նաև հղիության տևողությունը:

## 5.1 ԸՆԹԱՑԻԿ ԾՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Հղիության պատմության մեջ հավաքագրված տվյալները կիրառվել են ընթացիկ ծնելիությունը բնութագրող երկու լայնորեն կիրառվող չափորոշիչները հաշվարկելու նպատակով: Դրանք են ծնելիության գումարային գործակիցը (ԾԳԳ) և դրա բաղադրիչ՝ ծնելիության տարիքային գործակիցը (ՕՏԳ): ԾԳԳ-ն բնութագրվում է որպես երեխաների միջին թվաքանակ, որ կինը կունենա մինչև իր մանկածնման տարիքի ավարտը՝ ծնելիության տարիքային ընթացիկ գործակիցների պահպանման դեպքում: Ծնելիության ցուցանիշները վերաբերում են հետազոտությանը նախորդող երեք տարիներին (այսինքն՝ մոտ 2013 թ. փետրվարից մինչև 2016 թ. փետրվար):

Ըստ ՀՖԱՀ 2015-16-ի արդյունքների՝ ԾԳԳ-ն կազմել է 1.7 երեխա մեկ կնոջ հաշվով (Աղյուսակ 5.1): ՀՖԱՀ-ի այս ցուցանիշը նույնական է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից 2014 թ. համար հրապարակված ԾԳԳ գործակիցի հետ, որը ևս կազմել է 1.7 ծնունդ մեկ կնոջ հաշվով (ԱՎԾ, 2015), այսինքն՝ այն տարվա հետ, որը համընկնում է ՀՖԱՀ 2015-16-ի ցուցանիշը հաշվարկելու համար օգտագործված երեքամյա ժամանակաշրջանի մեջտեղում<sup>1</sup>: Այսպիսով՝ երկու աղբյուրներն էլ հաստատում են, որ այս ցուցանիշը Հայաստանում ցածր է բնակչության բնական վերարտադրությունն ապահովող ծնելիության գործակիցից, որը 2.1 երեխա է՝ մեկ կնոջ հաշվով:

Աղյուսակ 5.1-ի տարիքային խմբերի սանդղակը ցույց է տալիս, որ ծնելիությունն ամենաբարձրն է 20-24 տարեկանների տարիքային խմբում (124 ծնունդ՝ 1,000 կնոջ հաշվով), որին հաջորդում է 25-29 տարեկան կանանց տարիքային խումբը (116 ծնունդ՝ 1,000 կնոջ հաշվով): Այս տարիքային խմբերում ներառված կանանց ծնունդները կազմում են ծնելիության գումարային գործակիցի 70 տոկոսը:

Աղյուսակ 5.1-ը ցույց է տալիս, որ քաղաքային բնակավայրերում ԾԳԳ-ն մի փոքր ավելի ցածր է, քան գյուղական բնակավայրերում (համապատասխանաբար 1.7 ծնունդ՝ մեկ կնոջ հաշվով և 1.8 ծնունդ մեկ կնոջ հաշվով), չնայած, հաշվի առնելով ընտրանքային տատանումները, այս տարբերությունը վիճակագրորեն էական չէ: Ե՛վ քաղաքաբնակ, և՛ գյուղաբնակ

**Աղյուսակ 5.1 Ընթացիկ ծնելիություն**

Ծնելիության տարիքային և գումարային գործակիցները, ծնելիության հատուկ գործակիցը և ծնելիության ընդհանուր գործակիցը հետազոտությանը նախորդող երեք տարիների կտրվածքով, ըստ բնակավայրերի, Հայաստան, 2015-16 թթ.

Տարիքային խումբ	Բնակավայր		
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
15-19	11	39	24
20-24	108	148	124
25-29	119	112	116
30-34	58	49	55
35-39	31	15	25
40-44	3	4	4
45-49	2	0	1
ԾԳԳ(15-49)	1.7	1.8	1.7
ՕՇԳ	62	67	64
ՕԸԳ	12.7	13.2	12.9

Նշում: Ծնելիության տարիքային գործակիցներն արտահայտված են 1000 կնոջ հաշվով: 45-49 տարեկան տարիքային խմբի ցուցանիշը կարող է ունենալ շեղումներ՝ կլորացման պատճառով: Ցուցանիշները ներկայացված են հարցազրույցին նախորդող 1-36 ամիսների կտրվածքով:

ԾԳԳ - Ծնելիության գումարային գործակից՝ արտահայտված մեկ կնոջ հաշվով  
 ՕՇԳ - Ծնելիության հատուկ գործակից՝ արտահայտված 15-44 տարեկան 1000 կնոջ հաշվով  
 ՕԸԳ - Ծնելիության ընդհանուր գործակից՝ արտահայտված 1000 մարդու հաշվով

<sup>1</sup> Տվյալները, որոնց վրա հիմնված են ՀՖԱՀ ցուցանիշները և ԱՎԾ-ի կողմից հրապարակվող ամենամյա ցուցանիշները, տարբեր են: Այսպես՝ ՀՖԱՀ ցուցանիշները հիմնված են կանանց առկա բնակչության (նրանց, ովքեր հետազոտության նախորդող զիշերը զիշերել են տնային տնտեսությունում) հղիության ամբողջական պատմության մեջ կենդանի ծնունդների վերաբերյալ գրանցված տեղեկությունների վրա հետազոտությանը նախորդող երեք տարիների համար, մինչդեռ պաշտոնական ցուցանիշը հիմնված է կանանց մշտական բնակչության (նրանց, ովքեր սովորաբար բնակվում են տնային տնտեսությունում) ունեցած ծնունդների վրա, որ տեղի են ունեցել 2014 թ.:

կանանց շրջանում ծնելիությունն ամենաբարձրն է 20-24 և 25-29 տարեկանների տարիքային խմբերում: Ծնելիությունը դեռահասների շրջանում ավելի ցածր է քաղաքաբնակ կանանց շրջանում՝ գյուղաբնակ կանանց համեմատ (համապատասխանաբար 11 ծնունդ՝ 1,000 կնոջ հաշվով և 39 ծնունդ՝ 1,000 կնոջ հաշվով): Քաղաքաբնակ կանայք ավելի հակված են սկսելու մանկածնման գործընթացն ավելի մեծ տարիքում, քան գյուղաբնակ կանայք, այսպես՝ 30 տարեկան և ավելի մեծ կանանց ծնունդները կազմում են քաղաքային բնակավայրերի ԾԳԳ-ի 28 տոկոսը՝ համեմատած գյուղական բնակավայրերի ԾԳԳ-ի 19 տոկոսի հետ:

## 5.2 ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ

Աղյուսակ 5.2-ը ներկայացնում է տարբերություններն ըստ հիմնական բնութագրիչների ծնելիության երեք չափորոշիչներում, դրանք են ծնելիության գումարային գործակիցը, 15-49 տարեկան այն կանանց տոկոսային բաշխումը, ովքեր հարցման ժամանակ հղի են եղել, և երբևէ ծնված երեխաների միջին թվաքանակը 40-49 տարեկան կանանց շրջանում: Պետք է ուշադրություն դարձնել այս երեք չափորոշիչներում ենթախմբերի միջև տարբերությունները մեկնաբանելիս, քանի որ տարբերությունների մի մասը հնարավոր է լինի պարզապես ընտրանքային տատանումների պատճառով, մասնավորապես, եթե ենթախմբերը ներառում են համեմատաբար փոքր թվով հարցվողներ<sup>2</sup>:

ԾԳԳ-ն էապես տարբերվում է ըստ մարզերի: Ամենացածր գործակիցները գրանցվել են Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում (յուրաքանչյուրը 1.1 ծնունդ՝ մեկ կնոջ հաշվով), իսկ ամենաբարձրը՝ Տավուշի մարզում (2.4 ծնունդ՝ մեկ կնոջ հաշվով): ԾԳԳ-ն նվազում է կրթական մակարդակի աճին զուգընթաց: Այսպես, միայն հիմնական կրթություն ունեցող կանանց շրջանում այս գործակիցը կազմում է 2.8 ծնունդ՝ մեկ կնոջ հաշվով, մինչդեռ բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում՝ 1.6 ծնունդ մեկ կնոջ հաշվով: Բարեկեցության մակարդակը ևս հակադարձ կապի մեջ է ԾԳԳ-ի հետ. բարեկեցության ամենացածր քվինտիլում այս գործակիցը կազմում է 2 ծնունդ՝ մեկ կնոջ հաշվով, այնուհետև բարեկեցության չորրորդ քվինտիլում նվազում է մինչև 1.4 ծնունդ՝ մեկ կնոջ հաշվով և կրկին բարձրանում ամենաբարձր քվինտիլում՝ կազմելով 1.9 ծնունդ՝ մեկ կնոջ հաշվով:

Հղի կանանց տոկոսային բաշխումը հանդիսանում է ընթացիկ ծնելիության մեկ այլ չափորոշիչ, չնայած այն կարող է ներառել որոշակի սխալներ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ կանայք հնարավոր է՝ տեղյակ չլինեն կամ չհայտնեն երեք ամսական և փոքր հղիությունների մասին: Աղյուսակ 5.2-ը ցույց է տալիս, որ կանանց 3 տոկոսը հայտնել է, որ հղի է եղել հարցման ժամանակ, ընդ որում՝ կանանց ենթախմբերի միջև տարբերությունները շատ քիչ են:

<sup>2</sup> Աղյուսակ 5.2-ում ներառված ծնելիության բոլոր չափորոշիչների համար ընտրանքային սխալները և վստահության միջակայքերը ներկայացված են Հավելված Բ-ում՝ ազգային մակարդակում, քաղաքային և գյուղական մակարդակներում և տարածաշրջանային մակարդակում:

Աղյուսակ 5.2-ի վերջին սյունակում ցույց է տրված երբևէ ծնված երեխաների միջին թվաքանակը 40-49 տարեկան կանանց շրջանում: Սա գումարային ծնելիության ցուցանիշ է, որն արտացոլում է վերարտադրողականության շրջանի ավարտին մոտ գտնվող և տարիքով ավելի մեծ կանանց վերարտադրողական վարքագիծը՝ այդպիսով իսկ ներկայացնելով ամբողջական, ավարտուն ծնելիությունը: Եթե ծնելիությունը ժամանակի ընթացքում մնար կայուն, ապա ծնելիության երկու չափորոշիչները՝ ԾԳԳ-ն և երբևէ ծնված երեխաների թվաքանակը պետք է լինեին հավասար: Արդյունքները ցույց են տալիս, որ երբևէ ծնված երեխաների միջին թվաքանակը 40-49 տարեկան կանանց շրջանում (2.2 երեխա մեկ կնոջ հաշվով) ավելի բարձր է, քան ԾԳԳ-ն հետազոտությանը նախորդող 3 տարիների կտրվածքով (1.7 երեխա՝ մեկ կնոջ հաշվով), ինչը վկայում է, որ ծնելիությունը վերջին 30 տարիների ընթացքում մոտ կես երեխայի չափով նվազել է: Ընդհանուր առմամբ, ԾԳԳ-ի և երբևէ ծնված երեխաների թվաքանակի համեմատությունը ցույց է տալիս, որ վերջին երեք տասնամյակների ընթացքում ենթախմբերի մեծ մասում ծնելիությունը գրեթե մեկ ծնունդով նվազել է: Այստեղ բացառություն են կազմում Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերը, որտեղ ենթադրյալ ծնելիությունը նվազել է համապատասխանաբար 1.4 և 1.3 ծնունդով, իսկ հիմնական կրթություն ունեցողների ենթախմբում աճել է 0.3 ծնունդով:

**Աղյուսակ 5.2 Ծնելիությունն ըստ հիմնական բնութագրիչների**

Ծնելիության գումարային գործակիցը հետազոտությանը նախորդող 3 տարիների կտրվածքով, 15-49 տարեկան այն կանանց տոկոսային բաշխումը, ովքեր հղի են եղել հարցման ժամանակ և երբևէ ծնված երեխաների միջին թվաքանակը 40-49 տարեկան կանանց շրջանում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Ծնելիության գումարային գործակից	15-49 տ. կանանց տոկոսային բաշխումը, ովքեր հարցման ժամանակ հղի են եղել	Երբևէ ծնված երեխաների միջին թվաքանակը 40-49 տ. կանանց շրջանում
<b>Քնակավայր</b>			
Քաղաքային	1.7	2.6	2.0
Գյուղական	1.8	3.2	2.6
<b>Մարզ</b>			
Երևան	1.6	2.3	1.9
Արագածոտն	1.1	1.6	2.5
Արարատ	1.9	2.9	2.3
Արմավիր	2.2	3.5	2.6
Գեղարքունիք	1.1	1.7	2.4
Լոռի	1.5	3.7	2.1
Կոտայք	2.1	4.3	2.3
Շիրակ	1.9	3.3	2.4
Սյունիք	2.0	2.8	2.3
Վայոց ձոր	1.9	3.7	2.6
Տավուշ	2.4	2.8	2.8
<b>Կրթություն</b>			
Հիմնական	2.8	1.6	2.5
Միջնակարգ	1.9	2.7	2.4
Միջին մասնագիտական	1.7	2.8	2.1
Բարձրագույն	1.6	3.4	1.9
<b>Բարեկեցության քվինտիլ</b>			
Ամենացածր	2.0	2.1	2.6
Երկրորդ	1.7	2.8	2.5
Միջին	1.7	3.4	2.1
Չորրորդ	1.4	2.7	2.0
Ամենաբարձր	1.9	3.1	1.9
Ընդամենը	1.7	2.8	2.2

Նշում: Ծնելիության գումարային գործակիցները հետազոտությանը նախորդող 1-36 ամիսների համար են: Ընդամենը ներառում է առանց որևէ կրթության 5 դեպք, որոնց համար ցուցանիշներն առանձին ցույց տրված չեն:

### 5.3 ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄԵՐ

Օգտագործելով ՀԺԱՀ 2015-16-ի տվյալները՝ երկու տարբեր մոտեցումներով կարելի է ուսումնասիրել ծնելիության միտումները Հայաստանում: Առաջին մեթոդն օգտագործում է ՀԺԱՀ հարցվողների վերարտադրողականության վերաբերյալ ռետրոսպեկտիվ տվյալները՝ հետազոտությանը նախորդող 20 տարիների կտրվածքով ծնելիության տարիքային գործակիցներն ուսումնասիրելու նպատակով: Երկրորդ մեթոդը համեմատում է ՀԺԱՀ 2015-16-ի արդյունքներով ստացված ծնելիության գումարային և տարիքային գործակիցները ՀԺԱՀ 2000, 2005 և 2010-ի արդյունքների հետ (ԱՎԾ, 2001; ԱՎԾ, 2006, ԱՎԾ, 2012):



### 5.3.1 Ռետրոսպեկտիվ տվյալներ

Աղյուսակ 5.3-ն օգտագործում է ՀԺԱՀ հարցվողների հղիության ռետրոսպեկտիվ պատմությունների տեղեկատվությունը՝ ուսումնասիրելու համար ծնելիության տարիքային գործակիցների միտումները հետազոտությանը նախորդող 5-ական տարիների կտրվածքով: Քանի որ 50 տարեկան և ավելի մեծ կանայք ներառված չեն եղել հետազոտության մեջ, գործակիցները հաջորդաբար կրճատվել են՝ հետազոտությունից առաջ տարիների քանակի ավելացմանը զուգընթաց: Աղյուսակ 5.3-ի արդյունքները ցույց են տալիս, որ վերջին 20 տարիների ընթացքում ծնելիության տարիքային գործակիցը կտրուկ նվազել է 25 տարեկանից փոքր կանանց շրջանում: Անկումն ամենաարագն է 15-19 տարեկան կանանց շրջանում, որտեղ ծնելիությունը կրճատվել է գրեթե կես չափով, այսպես, հետազոտությունից 15-19 տարի առաջ այն կազմել է 58 ծնունդ՝ 1,000 կնոջ հաշվով, իսկ հետազոտությունից 0-4 տարի առաջ՝ 25 ծնունդ՝ 1,000 կնոջ հաշվով: Ծնելիությունը 20-24 տարեկան կանանց շրջանում ևս նվազել է այս ժամանակահատվածի ընթացքում՝ հետազոտությունից 15-19 տարի առաջ կազմելով 173 ծնունդ 1,000 կնոջ հաշվով, իսկ հետազոտությունից 0-4 տարի առաջ՝ 126 ծնունդ 1,000 կնոջ հաշվով, այսինքն՝ նվազել է շուրջ 27 տոկոսով: Ի տարբերություն երիտասարդ կանանց շրջանում գրանցված միտումների՝ ծնելիության տարիքային գործակիցը 25-49 տարեկան կանանց շրջանում աճել է: Չնայած սա խոսում է կանանց՝ ավելի մեծ տարիքում երեխաներ ունենալու միտումի մասին, 30 տարեկան և տարիքով ավելի մեծ կանանց շրջանում աճը շատ փոքր է, և ծնելիությունը շարունակում է կենտրոնացած մնալ 20-29 տարեկան կանանց շրջանում:

**Աղյուսակ 5.3 Ծնելիության տարիքային գործակիցների միտումներ**

Ծնելիության տարիքային գործակիցները հետազոտությանը նախորդող 5-ական տարիների կտրվածքով, ըստ ծննդաբերության ժամանակ մոր տարիքի, Հայաստան, 2015-16 թթ.

Մոր տարիքը ծննդաբերության ժամանակ	Հետազոտությանը նախորդող տարիների քանակ			
	0-4	5-9	10-14	15-19
15-19	25	31	40	58
20-24	126	141	163	173
25-29	110	116	104	101
30-34	52	52	41	[47]
35-39	21	14	[17]	
40-44	3	[4]		
45-49	[1]			

Նշում: Ծնելիության տարիքային գործակիցներն արտահայտված են 1000 կնոջ հաշվով: Փակագծերում տրված ցուցանիշները կլորացված են: Ցուցանիշները չեն ներառում հարցագրույցի անցկացման ամիսը:

### 5.3.2 Համեմատություն նախորդ ՀԺԱՀ հետազոտությունների հետ

Աղյուսակ 5.4-ում ցույց են տրված ծնելիության գումարային և տարիքային գործակիցները ՀԺԱՀ չորս հետազոտությունների համար, որոնք իրականացվել են 2000 և 2015-16 թթ. միջև: Բոլոր հետազոտությունների արդյունքում ԾԳԳ-ն կազմել է 1.7 ծնունդ՝ մեկ կնոջ հաշվով, այսինքն՝ Հայաստանում ծնելիության ընդհանուր մակարդակը մնացել է կայուն 15 և ավելի տարիների ընթացքում: Սակայն ծնելիության տարիքային գործակիցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծնելիության առումով տեղաշարժ է գրանցվել 15-24 տարեկան կանանցից դեպի ավելի մեծ տարիքի կանայք, մասնավորապես՝ ծնելիությունն աճել է 25-29 տարեկանների շրջանում (Գծապատկեր 5.1): Այսպես՝ ՀԺԱՀ 2000-ի ժամանակ ծնելիության գրեթե 60 տոկոսը կենտրոնացած էր 15-24 տարեկան կանանց շրջանում, իսկ ՀԺԱՀ 2015-16-ի ժամանակ ծնելիության 40 տոկոսից մի փոքր ավելին է կենտրոնացած այդ տարիքային խմբերում:


**Աղյուսակ 5.4 Ծնելիության միտումները**

Ծնելիության տարիքային և գումարային գործակիցները (ԾԳԳ) հետազոտություններին նախորդող 3-ական տարիների կտրվածքով, ըստ ծննդաբերության ժամանակ մոր տարիքի, Հայաստան, 2015-16 թթ.

Տարիք	ՀԺԱՀ 2000 (1997-2000)	ՀԺԱՀ 2005 (2002-2005)	ՀԺԱՀ 2010 (2007-2010)	ՀԺԱՀ 2015-16 (2013-2016)
15-19	50	30	28	24
20-24	149	148	140	124
25-29	88	107	102	116
30-34	35	37	42	55
35-39	16	16	24	25
40-44	3	4	5	4
45-49	0	0	0	1
ԾԳԳ 15-49	1.7	1.7	1.7	1.7

Նշում: Ծնելիության տարիքային գործակիցներն արտահայտված են 1000 կնոջ հաշվով: 45-49 տարեկան տարիքային խմբի ցուցանիշը կարող է ունենալ շեղումներ՝ կլորացման պատճառով: Ցուցանիշները ներկայացված են հարցազրույցին նախորդող 1-36 ամիսների կտրվածքով:

**Գծապատկեր 5.1 Ծնելիության տարիքային գործակիցների միտումներ**



**5.4 ԵՐԲԵՎԷ ԾՆՎԱԾ ԵՎ ԿԵՆՂԱՆԻ ԵՐԵՆԱՆԵՐ**

Աղյուսակ 5.5-ում արտացոլված է բոլոր կանանց և ներկայում ամուսնացած կանանց բաշխումն ըստ երբևէ ծնված երեխաների թվաքանակի: Երիտասարդ տարիքի բոլոր կանանց և ներկայում ամուսնացած կանանց արդյունքների միջև տարբերությունները երբևէ չամուսնացած կանանց համեմատաբար մեծ թվաքանակի պատճառով է, ովքեր երբեք չեն ծննդաբերել: Երբևէ ծնված երեխաների թվաքանակի վերաբերյալ տվյալներն արտահայտում են վերջին երեք տասնամյակի ընթացքում կանանց ունեցած բոլոր ծնունդների հանրագումարը, և հետևաբար, սահմանափակ առնչություն ունեն ծնելիության ընթացիկ մակարդակների հետ: Մակայն այս տեղեկատվությունն օգտակար է ինչպես առաջնային անպտղությունը դիտարկելու, այնպես էլ այն առումով, թե ինչպես է ընտանիքի միջին չափը փոփոխվում ըստ տարիքային խմբերի:

Աղյուսակ 5.5-ը ցույց է տալիս, որ Հայաստանում մեկ կինը միջինում 1.4 երեխա է ունեցել՝ ՀԺԱՀ 2015-16-ի դրությամբ: Կենդանի երեխաների միջին թվաքանակի հետ համեմատությունը ցույց է տալիս, որ երբևէ ծնված բոլոր երեխաները, ըստ էության, դեռևս կենդանի են: Արտացոլելով ընտանիքի կառուցման բնական գործընթացը՝ կնոջ ունեցած երեխաների թվաքանակն աճում է տարիքին զուգընթաց՝ 15-24 տարեկան կանանց շրջանում կազմելով միջինը մեկ երեխայից պակաս և հասնելով միջինը 2.3 ծնունդի 45-49 տարեկան կանանց շրջանում:

Ներկայում ամուսնացած 45-49 տարեկան այն կանանց տոկոսը, ովքեր երբեք երեխա չեն ունեցել, հանդիսանում է առաջնային անպտղության անուղղակի ցուցանիշ, քանի որ ինքնակամ երեխաներ չունենալը հազվադեպ երևույթ է Հայաստանում: Աղյուսակ 5.5-ը ցույց է տալիս, որ ներկայում ամուսնացած 45-49 տարեկան կանանց 1 տոկոսը երբեք չի ունեցել կենդանի ծնունդ, որն էլ իր հերթին նշանակում է, որ առաջնային անպտղությունը Հայաստանում ազդում է համեմատաբար փոքր թվով կանանց վրա:

**Աղյուսակ 5.5 Երբևէ ծնված և կենդանի երեխաներ**

15-49 տարեկան բոլոր կանանց և ներկայում ամուսնացած կանանց տոկոսային բաշխումն ըստ երբևէ ծնված երեխաների թվաքանակի, երբևէ ծնված երեխաների միջին թվաքանակի և կենդանի երեխաների միջին թվաքանակի, ըստ տարիքային խմբերի, Հայաստան, 2015-16 թթ.

Տարիքային խումբ	Երբևէ ծնված երեխաների թվաքանակ							Ընդամենը	Կանանց թվաքանակ	Երբևէ ծնված երեխաների միջին թվաքանակ	Կենդանի երեխաների միջին թվաքանակ
	0	1	2	3	4	5	6+				
<b>ԲՈՒՈՐ ԿԱՆԱՅՔ</b>											
15-19	97.5	2.5	0.0	0.0	0.0	0.0	0.0	100.0	725	0.03	0.03
20-24	69.5	19.5	10.0	0.9	0.0	0.0	0.0	100.0	928	0.42	0.42
25-29	34.9	26.4	31.4	5.9	0.9	0.4	0.0	100.0	1,099	1.13	1.12
30-34	16.5	15.0	49.3	17.2	1.6	0.3	0.1	100.0	1,007	1.74	1.72
35-39	9.8	11.8	50.9	21.6	4.6	1.1	0.3	100.0	867	2.04	2.00
40-44	9.7	9.9	45.9	27.2	5.3	1.1	0.8	100.0	784	2.16	2.10
45-49	7.8	8.4	44.4	29.4	7.6	2.0	0.4	100.0	706	2.28	2.23
Ընդամենը	34.6	14.4	33.5	14.0	2.7	0.7	0.2	100.0	6,116	1.39	1.36
<b>ՆԵՐԿԱՅՈՒՄ ԱՄՈՒՍՆԱՑՈՒ ԿԱՆԱՅՔ</b>											
15-19	(45.0)	(55.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	100.0	33	(0.55)	(0.55)
20-24	23.9	48.5	25.3	2.3	0.0	0.0	0.0	100.0	365	1.06	1.05
25-29	10.7	34.6	44.4	8.4	1.3	0.6	0.0	100.0	761	1.57	1.55
30-34	4.3	14.9	58.2	20.2	1.9	0.4	0.1	100.0	826	2.02	2.00
35-39	1.6	8.2	58.1	25.6	4.9	1.3	0.3	100.0	709	2.29	2.25
40-44	3.4	7.4	50.0	31.2	5.9	1.4	0.7	100.0	639	2.36	2.32
45-49	1.4	4.9	48.9	33.6	8.3	2.5	0.5	100.0	562	2.52	2.46
Ընդամենը	6.7	18.4	49.2	20.8	3.7	1.0	0.3	100.0	3,895	2.01	1.97

Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

**5.5 ՄԻԶՏՆԱՅԱՆ ՄԻՋԱԿԱՅՔԵՐ**

Միջոցնային միջակայքը սահմանվում է որպես երկու կենդանի ծնունդների միջև ընկած ժամանակահատված: Հետազոտությունը ցույց է տվել, որ միջոցնային կարճ միջակայքը կարող է բացասաբար ազդել մոր առողջության և երեխայի կենդանի մնալու հավանականության վրա: Նախորդ ծնունդից հետո 36 ամիսների ընթացքում ծնված երեխաները, հատկապես եթե ծնունդների միջև միջակայքը երկու տարվանից քիչ է, առողջական խնդիրներ ունենալու և վաղ տարիքում մահանալու ավելի մեծ վտանգի կարող են ենթարկվել (Rutstein and Winter, 2014; WHO, 2006; Conde-Agudelo et al., 2006): Մյուս կողմից միջոցնային առավել երկար միջակայքը նպաստում է մոր և մանկան առողջության բարելավմանը:

Աղյուսակ 5.6-ը ներկայացնում է հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում ոչ առաջին, այսինքն՝ երկրորդ, երրորդ և հաջորդ ծնունդների տոկոսային բաշխումն ըստ նախորդ ծնունդից հետո ընկած ամիսների թվի: Ոչ առաջին տասը ծնունդներից վեցի դեպքում խորհուրդ տրվող միջակայքը, այն է՝ նախորդ ծնունդից առնվազն 36 ամիս հետո, պահպանվել է: Միջոցնային միջին միջակայքը 41.5 ամիս է, որը 4.3 ամսով ավելի է ՀԺԱՀ 2010-ի ցուցանիշից (37.2 ամիս): Չնայած միջոցնային միջին միջակայքն աճել է, Աղյուսակ 5.6-ը ցույց է տալիս, որ ոչ առաջին ծնունդների զգալի մասը տեղի է ունենում չափազանց կարճ ընդմիջումից հետո. ՀԺԱՀ 2015-16-ին նախորդող հինգ տարիների ընթացքում ոչ առաջին ծնունդների մեկ հինգերորդից ավելին (23 տոկոս) տեղի է

ունեցել նախորդ ծնունդից հետո 24 ամիսների ընթացքում, իսկ 11 տոկոսը՝ նախորդ ծնունդից հետո 18 ամիսների ընթացքում:

**Աղյուսակ 5.6 Միջնունդյան միջակայքեր**

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում ոչ առաջին ծնունդների տոկոսային բաշխումն ըստ նախորդ ծնունդից հետո ընկած ամիսների թվաքանակի և նախորդ ծնունդից հետո ընկած ամիսների մեդիան թվաքանակի, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Նախորդ ծնունդից հետո ընկած ամիսներ						Ընդամենը	Ոչ առաջին ծնունդների թվաքանակ	Նախորդ ծնունդից հետո ընկած ամիսների մեդիան թվաքանակ
	7-17	18-23	24-35	36-47	48-59	60+			
<b>Տարիք</b>									
20-29	17.4	14.9	24.7	22.1	11.6	9.3	100.0	480	32.3
30-39	3.6	9.5	12.1	10.4	15.2	49.3	100.0	419	59.3
40-49	(4.6)	(5.7)	(5.4)	(3.2)	(10.6)	(70.6)	100.0	32	-
<b>Նախորդ ծնունդի սեռը</b>									
Արական	11.7	12.4	19.4	15.9	12.2	28.4	100.0	464	39.3
Իգական	9.8	11.9	17.3	16.4	14.2	30.4	100.0	467	44.3
<b>Նախորդ ծնունդի կենդանության կարգավիճակը</b>									
Կենդանի	10.7	12.1	18.2	16.2	13.3	29.5	100.0	916	41.6
Մահացած	*	*	*	*	*	*	100.0	15	*
<b>Ծնունդների հերթականություն</b>									
2-3	10.9	12.2	19.1	16.1	13.0	28.7	100.0	876	41.0
4-6	6.1	13.0	6.2	16.4	17.0	41.3	100.0	53	54.6
7+	*	*	*	*	*	*	100.0	3	*
<b>Բնակավայր</b>									
Քաղաքային	8.6	12.0	15.8	16.0	14.3	33.5	100.0	527	45.7
Գյուղական	13.5	12.5	21.7	16.4	11.8	24.1	100.0	404	37.2
<b>Մարզ</b>									
Երևան	8.6	11.8	12.7	16.9	14.6	35.4	100.0	262	49.0
Արագածոտն	(5.1)	(8.7)	(28.1)	(20.3)	(13.5)	(24.2)	100.0	31	(37.9)
Արարատ	9.5	15.0	19.7	14.2	10.3	31.2	100.0	98	41.9
Արմավիր	14.3	14.2	21.1	13.7	14.1	22.5	100.0	99	36.1
Գեղարքունիք	11.9	6.6	20.0	11.5	8.8	41.2	100.0	45	51.0
Լոռի	16.5	19.5	23.1	10.3	16.3	14.3	100.0	56	34.0
Կոտայք	7.6	10.2	14.3	18.9	16.2	32.8	100.0	142	46.8
Շիրակ	17.1	10.1	24.2	20.5	9.4	18.7	100.0	84	35.3
Սյունիք	11.8	8.2	27.3	11.8	6.4	34.5	100.0	34	37.5
Վայոց ձոր	7.0	13.8	21.5	19.4	12.5	25.8	100.0	23	43.3
Տավուշ	12.3	14.1	19.9	16.2	12.8	24.6	100.0	56	37.5
<b>Կրթություն</b>									
Հիմնական	13.6	15.2	15.6	17.4	13.1	25.1	100.0	65	39.4
Միջնակարգ	12.8	10.6	21.0	11.9	11.9	31.8	100.0	390	40.8
Միջին մասնագիտական	7.9	12.8	19.4	17.6	13.2	29.1	100.0	191	42.6
Բարձրագույն	9.1	13.3	14.5	20.8	15.0	27.3	100.0	285	42.1
<b>Բարեկեցության քվինտիլ</b>									
Ամենացածր	15.3	15.7	17.8	14.5	12.3	24.4	100.0	197	36.6
Երկրորդ	10.8	12.3	25.0	17.1	11.7	23.1	100.0	184	37.2
Միջին	11.1	8.0	20.8	14.4	11.2	34.4	100.0	157	43.3
Չորրորդ	11.1	14.7	13.0	17.7	14.4	29.1	100.0	155	43.0
Ամենաբարձր	6.4	10.3	15.4	17.1	15.6	35.3	100.0	238	50.3
Ընդամենը	10.7	12.2	18.3	16.2	13.2	29.4	100.0	931	41.5

Նշում: Առաջին ծնունդները ներառված չեն: Բազմակի ծնունդների համար միջակայքը նախորդ կենդանի ծնունդով ավարտված հղիությունից հետո ընկած ամիսների թվաքանակն է: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

Ընդհանուր առմամբ, ավելի երիտասարդ կանանց մոտ միջնունդյան միջակայքերն ավելի փոքր են, քան տարիքով ավելի մեծ կանանց մոտ: Օրինակ՝ 20-29 տարեկան կանանց ոչ առաջին ծնունդների 57 տոկոսի դեպքում չի պահպանվել խորհուրդ տրվող առնվազն 36 ամիսների միջակայքը, իսկ 32 տոկոսի դեպքում միջակայքը կազմել է նախորդ ծնունդից հետո 24 ամսից էլ պակաս: Մյուս կողմից՝ 30-39 տարեկան կանանց մոտ ծնունդների միայն 25 տոկոսի դեպքում է միջակայքը եղել 36, իսկ 13 տոկոսի դեպքում՝ 24 ամսից պակաս:

Միջձննդյան միջակայքերը կապված են բնակավայրի հետ: Քաղաքային բնակավայրերում միջձննդյան միջին միջակայքը կազմել է 45.7 ամիս՝ գյուղական բնակավայրերի 37.2 ամիսների համեմատությամբ, քաղաքային բնակավայրերում ծնունդների մեկ երրորդից մի փոքր ավելիի դեպքում է միջակայքը կազմել 36 ամսից պակաս՝ գյուղական բնակավայրերի ծնունդների գրեթե կեսի համեմատությամբ: Միջձննդյան միջակայքերը էապես տատանվում են ըստ մարզերի՝ ամենաերկարը Գեղարքունիքում է (51.0 ամիս), իսկ ամենակարճը՝ Լոռիում (34.0 ամիս):

Ե՛վ կրթությունը, և՛ բարեկեցությունը կապված են միջձննդյան միջակայքերի հետ: Օրինակ՝ հիմնական կրթություն ունեցող կանանց ծնունդների 44 տոկոսի դեպքում միջձննդյան միջակայքը կազմել է նախորդ ծնունդից հետո 36 ամսից էլ պակաս՝ բարձրագույն կրթություն ունեցող կանանց ծնունդների 37 տոկոսի համեմատությամբ: Բարեկեցության ամենացածր քվինտիլում գտնվող ծնունդների կեսի դեպքում չի պահպանվել խորհուրդ տրվող առնվազն 36 ամիսների միջակայքը՝ համեմատած ամենաբարձր քվինտիլում գտնվող կանանց ծնունդների մեկ երրորդի հետ:

## 5.6 ՀԵՏՏՆՆՅԱՆ ԱՄԵՆՈՐԵԱ, ԻՆՔՆԱԶՄՊՈՒՄ ԵՎ ԱՆԲԵՂՄՆՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Հետձննդյան ամենորեան ծննդաբերությունից մինչև դաշտանի վերականգնումն ընկած ժամանակահատվածն է, որի ընթացքում հղիանալու հավանականությունը նվազում է: Բեղմնավորման ցածր հավանականության տևողությունը մեծապես կախված է երկու գործոնից՝ կրծքով կերակրման տևողությունից և հաճախականությունից, որը խոչընդոտում է ձվազատման վերականգնմանը, և ծննդաբերությունից հետո սեռական հարաբերությունները վերսկսելու ժամկետից: Այն կանայք, ովքեր գտնվում են հետձննդյան ամենորեայի կամ ինքնազսպման շրջանում (կամ երկուսը միասին), համարվում են անբեղմնունակ (չեն հղիանում):

Հետազոտության նախորդող երեք տարիների ընթացքում տեղի ունեցած ծնունդների համար Աղյուսակ 5.7-ում ցույց է տրված հետազոտության պահին հետձննդյան ամենորեայի, ինքնազսպման կամ անբեղմնունակության շրջանում գտնվող մայրերի տոկոսային բաշխումը: Հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում ծննդաբերած կանանց 11 տոկոսը հետազոտության պահին գտնվել է հետձննդյան ամենորեայի շրջանում, 7 տոկոսը՝ ինքնազսպման: Ընդհանուր առմամբ, այս կանանց 14 տոկոսը եղել է անբեղմնունակ, այսինքն՝ չի ենթարկվել հղիանալու ռիսկին:

Ծննդաբերությունից հետո առաջին տարվա ընթացքում հետձննդյան ամենորեայի արագ նվազում է արձանագրվել. ծննդաբերությունից 2-3 ամիս անց կանանց 43 տոկոսն է եղել հետձննդյան ամենորեայի շրջանում, ծննդաբերությունից 4-5 ամիս անց՝ 34 տոկոսը, իսկ ծննդաբերությունից 10-11 ամիս անց՝ 3 տոկոսը: Ծննդաբերությունից հետո առաջին տարվա ընթացքում հետձննդյան

**Աղյուսակ 5.7 Հետձննդյան ամենորեա, ինքնազսպում և անբեղմնունակություն**

Հետազոտությանը նախորդող 3 տարիների ընթացքում տեղի ունեցած այն ծնունդների տոկոսը, որոնցից հետո մայրերը գտնվում են հետձննդյան ամենորեայի, ինքնազսպման կամ անբեղմնունակության շրջանում, ըստ ծննդաբերությունից հետո անցած ամիսների թվաքանակի, և մեղիան ու միջին տևողությունները, Հայաստան, 2015-16 թթ.

Ծնունդից հետո անցած ամիսներ	Ծնունդների տոկոսը, որից հետո մայրը գտնվում է հետևյալ շրջանում.			Ծնունդների թվաքանակ
	Հետձննդյան ամենորեա	Ինքնազսպում	Անբեղմնունակություն <sup>1</sup>	
<2	(77.9)	(64.2)	(88.2)	42
2-3	43.3	8.2	47.6	57
4-5	34.1	4.5	35.8	75
6-7	17.8	8.7	23.1	63
8-9	9.8	8.7	15.1	61
10-11	3.3	6.3	9.7	54
12-13	0.0	3.4	3.4	52
14-15	3.5	6.5	10.0	59
16-17	0.0	0.0	0.0	57
18-19	1.9	1.2	3.1	71
20-21	0.0	1.5	1.5	52
22-23	(6.2)	(4.3)	(6.2)	47
24-25	2.7	6.5	6.5	69
26-27	5.0	0.0	5.0	56
28-29	1.0	4.0	5.1	65
30-31	(0.0)	(0.0)	(0.0)	43
32-33	0.0	2.5	2.5	54
34-35	(0.0)	(2.7)	(2.7)	46
Ընդամենը	11.1	6.7	14.3	1,021
Մեղիան	(2.4)	(1.3)	2.8	na
Միջին	4.5	3.1	5.6	na

Նշում: Հաշվարկները հիմնված են հետազոտության պահին ունեցած կարգավիճակի վրա: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

կչ = կիրառելի չէ

<sup>1</sup> Ներառում է այն ծնունդները, որոնցից հետո մայրը դեռևս գտնվում է հետձննդյան ամենորեայի կամ ինքնազսպման շրջանում (կամ երկուսը միասին)

ինքնագույն տոկոսը ևս արագ նվազել է՝ կազմելով 8 տոկոս ծննդաբերությունից 2-3 ամիս անց, իսկ 10-11 ամիս անց՝ ընդամենը 6 տոկոս: Ընդհանուր առմամբ, ծննդաբերությունից հետո անբեղմունակության մեղիան տևողությունը կազմել է 2.8 ամիս: Քանի որ Հայաստանում քիչ թվով կանանց մոտ է հետծննդյան ամենորեան կամ ինքնագույն լինում երկարատև, հետծննդյան ամենորեայի, ինքնագույն և անբեղմունակության միջին տևողությունները գերազանցում են մեղիան տևողություններին:

### 5.7 ԴԱՇՏԱՆԱԴԱՐԱՐ

30 տարեկան և տարիքով ավելի մեծ կանանց համար հղիանալու հավանականությունը նվազում է, քանի որ ավելանում է դաշտանադադարի մեջ ընդգրկվող կանանց մասնաբաժինը: Չնայած դժվար է սահմանել դաշտանադադարի սկիզբը յուրաքանչյուր կնոջ համար առանձին, սակայն հնարավոր է գնահատել բնակչության մեջ դաշտանադադարում գտնվող կանանց մասնաբաժինը: Աղյուսակ 5.8-ում ցույց է տրված դաշտանադադարում գտնվող 30 տարեկան և ավելի մեծ կանանց տոկոսը, այսինքն՝ այն կանանց, ովքեր հղի չեն, չեն գտնվում հետծննդյան ամենորեայի շրջանում և հետազոտությանը նախորդող վեց կամ ավելի ամիսների ընթացքում չեն ունեցել դաշտան:

Համաձայն ՀԺԱՀ 2015-16-ի՝ 30-49 տարեկան կանանց 8 տոկոսը գտնվում է դաշտանադադարում: Ինչպես և սպասվում էր, դաշտանադադարում գտնվող կանանց մասնաբաժինն աճում է տարիքին զուգընթաց՝ 30-34 տարեկանների շրջանում կազմելով 1 տոկոս, իսկ 48-49 տարեկանների շրջանում՝ 37 տոկոս:

**Աղյուսակ 5.8 Դաշտանադադար**

Դաշտանադադարում գտնվող 30-49 տարեկան կանանց տոկոսն ըստ տարիքի, Հայաստան, 2015-16 թթ.

Տարիք	Դաշտանադադարում գտնվողների տոկոս <sup>1</sup>	Կանանց թվաքանակ
30-34	1.1	1,007
35-39	2.8	867
40-41	6.2	344
42-43	6.0	293
44-45	13.6	308
46-47	17.5	270
48-49	37.4	274
Ընդամենը	7.9	3,364

<sup>1</sup> Բոլոր կանանց տոկոսը, ովքեր հղի չեն, չեն գտնվում հետծննդյան ամենորեայի շրջանում, և ում մոտ վերջին դաշտանը եղել է հետազոտությունից վեց կամ ավելի ամիս առաջ:

### 5.8 ԿՆՈՋ ՏԱՐԻՔՆ ԱՌԱՋԻՆ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Տարիքը, երբ սկսվում է մանկածնման գործընթացը, ունի ժողովրդագրական կարևոր հետևանքներ ինչպես ողջ հասարակության, այնպես էլ մոր և երեխայի առողջության ու բարեկեցության համար: Աղյուսակ 5.9-ը ներկայացնում է կոնկրետ տարիքում ծննդաբերած 15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումն ըստ հետազոտության պահին նրանց տարիքի: Աղյուսակի վերջին սյունակում ներկայացված է մեղիան տարիքն առաջին ծննդաբերության ժամանակ: Մինչև 25 տարեկան կանանց համար մեղիան տարիքն առաջին ծննդաբերության ժամանակ ցույց տրված չէ, քանի որ այդ տարիքի կանանց 50 տոկոսից պակասն է ծննդաբերել հետազոտությանը նախորդող ժամանակահատվածում:

**Աղյուսակ 5.9 Տարիքն առաջին ծննդաբերության ժամանակ**

15-49 տարեկան այն կանանց տոկոսը, ովքեր ծննդաբերել են կոնկրետ տարիքում, տոկոսը, ովքեր երբեք չեն ծննդաբերել, և մեղիան տարիքն առաջին ծննդաբերության ժամանակ, ըստ ընթացիկ տարիքի, Հայաստան, 2015-16 թթ.

Ընթացիկ տարիքը	Տոկոսը, որ ծննդաբերել է կոնկրետ տարիքում					Տոկոսը, որ երբեք չի ծննդաբերել	Կանանց թվաքանակ	Մեղիան տարիքն առաջին ծննդաբերության ժամանակ
	15	18	20	22	25			
15-19	0.0	կշ	կշ	կշ	կշ	97.5	725	a
20-24	0.0	1.0	9.6	կշ	կշ	69.5	928	a
25-29	0.0	2.5	14.1	29.9	53.8	34.9	1,099	24.4
30-34	0.0	4.0	17.8	39.4	61.8	16.5	1,007	23.2
35-39	0.3	7.2	25.5	45.3	64.0	9.8	867	22.6
40-44	0.0	6.8	30.8	55.9	73.9	9.7	784	21.4
45-49	0.0	3.1	24.2	50.1	76.2	7.8	706	22.0
20-49	0.0	4.0	19.6	կշ	կշ	26.2	5,391	a
25-49	0.1	4.6	21.7	42.8	64.6	17.2	4,463	22.8

կշ = կիրառելի չէ

a = Բաց է թողնված, քանի որ կանանց գրեթե 50 տոկոսը ծննդաբերել է նախքան տվյալ տարիքային խումբ հասնելը:

ՀԺԱՀ 2015-16-ի արդյունքները վկայում են, որ հայ կանայք սկսում են մանկածնման գործընթացը համեմատաբար ուշ: 20-24 տարեկան 10 կանանցից 7-ը և 25-29 տարեկան կանանց մեկ երրորդից ավելին երբեք չեն ծննդաբերել: 35 տարեկան և ավելի մեծ կանայք ավելի հավանական է, որ սկսել են մանկածնման գործընթացն իրենց կյանքի երկրորդ տասնամյակի սկզբում, քան ավելի երիտասարդ կանայք: Օրինակ՝ 45-49 տարեկան կանանց 24 տոկոսը մայրացել է մինչև 20 տարեկան դառնալը, մինչդեռ 20-24 տարեկան կանանց համար այս ցուցանիշը կազմում է ընդամենը 10 տոկոս: Մեղիան տարիքն առաջին ծննդաբերության ժամանակ տատանվում է՝ սկսած 40-44 տարեկան կանանց շրջանում գրանցված ամենաքիչ՝ 21.4 տարվանից մինչև 25-29 տարեկանների շրջանում գրանցված ամենաշատ՝ 24.4 տարիները:

15-19 և 20-24 տարիքային խմբերի կանանց համար առաջին ծննդաբերության ժամանակ մեղիան տարիքը չի կարող հաշվարկվել, քանի որ այդ տարիքային խմբերի կանանց կեսից քիչն է կենդանի ծնունդ ունեցել նախքան տվյալ տարիքային խումբ հասնելը: Մակայն երիտասարդ կանանց շրջանում մանկածնման գործընթացը սկսելու միտումները հնարավոր է գնահատել՝ համեմատելով ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում այս տարիքային խմբերում արդեն ծննդաբերած կանանց մասնաբաժինը ՀԺԱՀ 2010-ի արդյունքների հետ: Համեմատությունները ցույց են տալիս, որ 2015-16-ին 15-19 տարեկան կանանց 3 տոկոսն առաջին անգամ ծննդաբերել է, այսինքն՝ արձանագրվել է շատ փոքր անկում 2010-ի՝ առանց այդ էլ ցածր ցուցանիշից (4 տոկոս): 20-24 տարեկան այն կանանց մասնաբաժնում, ովքեր առաջին անգամ ծննդաբերել են, ևս փոքր անկում է գրանցվել 2010-ի և 2015-16-ի միջև (համապատասխանաբար 33 և 31 տոկոս):

Աղյուսակ 5.10-ում ցուցադրված է մեղիան տարիքն առաջին ծննդաբերության ժամանակ 25-49 տարեկան կանանց շրջանում՝ ըստ հիմնական բնութագրիչների: Մեղիան տարիքն առաջին ծննդաբերության ժամանակ քաղաքային կանանց շրջանում երկու տարով ավելի է գյուղաբնակ կանանց տարիքից (համապատասխանաբար 23.8 և 21.4 տարեկան): Ըստ մարզերի՝ ամենաբարձր մեղիան տարիքն առաջին ծննդաբերության ժամանակ գրանցվել է Երևանում (24.5 տարեկան), իսկ ամենացածրը՝ Գեղարքունիքի մարզում (21.4 տարեկան): Կրթությունը և բարեկեցության մակարդակը դրականորեն են կապված մանկածնման գործընթացն սկսելու տարիքի հետ: Մեղիան տարիքն առաջին ծննդաբերության ժամանակ 20.3 է հիմնական կրթություն ունեցող կանանց շրջանում՝ համեմատած միջին մասնագիտական կրթություն ունեցողների շրջանում արձանագրված 22.7-ի հետ: Նմանապես՝ ամենաաղքատ տնային տնտեսություններում բնակվող կանայք սկսում են մանկածնման գործընթացը միջինում 2.5 տարի ավելի շուտ, քան ամենահարուստ տնային տնտեսություններում բնակվողները (համապատասխանաբար 21.6 և 24.2 տարեկան):

Ի վերջո, ամուսնության ժամանակ տարիքի (Գլուխ 4) և առաջին ծննդաբերության ժամանակ տարիքի վերաբերյալ տեղեկությունները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու այն մասին, թե ամուսնությունից հետո որքան ժամանակ են զույգերը սովորաբար հետաձգում հղիությունը: 25-49 տարեկան կանանց շրջանում առաջին ամուսնության և առաջին ծննդաբերության մեղիան տարիքների համեմատությունը (համապատասխանաբար 21.4 և 22.8 տարեկան) ցույց է

**Աղյուսակ 5.10 Մեղիան տարիքն առաջին ծննդաբերության ժամանակ**

Մեղիան տարիքն առաջին ծննդաբերության ժամանակ 25-49 տարեկան կանանց շրջանում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

	25-49 տարեկան կանայք
<b>Հիմնական բնութագրիչներ</b>	
<b>Բնակավայր</b>	
Քաղաքային	23.8
Գյուղական	21.4
<b>Մարզ</b>	
Երևան	24.5
Արագածոտն	22.4
Արարատ	22.8
Արմավիր	21.5
Գեղարքունիք	21.4
Լոռի	22.7
Կոտայք	22.1
Շիրակ	22.5
Սյունիք	22.5
Վայոց ձոր	21.5
Տավուշ	21.9
<b>Կրթություն</b>	
Հիմնական	20.3
Միջնակարգ	21.3
Միջին մասնագիտական	22.7
Բարձրագույն	a
<b>Բարեկեցության քվինտիլ</b>	
Ամենացածր	21.6
Երկրորդ	21.8
Միջին	22.4
Չորրորդ	23.8
Ամենաբարձր	24.2
Ընդամենը	22.8

a = Բաց է թողնված, քանի որ կանանց գրեթե 50 տոկոսը ծննդաբերել է նախքան տվյալ տարիքային խումբ հասնելը: Ընդամենը ներառում է առանց որևէ կրթության 5 դեպք (չկշռված), որոնց համար մեղիան տարիքն առաջին ծննդաբերության ժամանակ առանձին ցույց տրված չէ:



տալիս, որ կանայք Հայաստանում առաջին անգամ ծննդաբերում են ամուսնությունից հետո 18 ամիսների ընթացքում:

### 5.9 ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ դեռահասների հղիությունը, վաղ ծննդաբերությունը և մայրությունն ունեն բացասական սոցիալ-տնտեսական և առողջական հետևանքներ: Դեռահաս մայրերը հղիության և ծննդաբերության ժամանակ ավելի շատ բարդություններ կարող են ունենալ, ինչն իր հերթին կարող է հանգեցնել ն՝ իրենց, ն՝ իրենց երեխաների հիվանդացության և մահացության վտանգի բարձրացմանը: Ավելին՝ ծննդաբերությունը դեռահաս տարիքում հաճախ ունենում է բացասական սոցիալական հետևանքներ, մասնավորապես՝ կարող է խոչընդոտել կրթություն ստանալուն, քանի որ անչափահաս տարիքում մայր դարձած կանայք ավելի են հակված կրթությունը կիսատ թողնելուն<sup>3</sup>:

Աղյուսակ 5.11-ը ցույց է տալիս, որ, ընդհանուր առմամբ, 15-19 տարեկան կանանց (դեռահասների) 4 տոկոսն արդեն սկսել է մանկածնման գործընթացը, նրանցից 3 տոկոսն արդեն մայր է դարձել, 1 տոկոսը եղել է հղի առաջին երեխայով: Միտումների առումով կարելի է նշել, որ ՀԺԱՀ 2010-ի համեմատությամբ (5 տոկոս)՝ 2015-16-ին դեռահասների հղիության և մայրության տոկոսը մի փոքր նվազել է:

Հաշվի առնելով տարբերություններն ըստ հիմնական բնութագրիչների՝ ՀԺԱՀ ընտրանքում ներգրավված 15 տարեկան կանանցից ոչ մեկը չի սկսել մանկածնման գործընթացը: 16-19 տարեկան կանանց շրջանում մանկածնման գործընթացը սկսած կանանց մասնաբաժինն արագ աճում է՝ 16-17 տարեկանների շրջանում կազմելով մեկ տոկոս կամ ավելի քիչ և հասնելով 12 տոկոսի 19 տարեկանների շրջանում:

Մանկածնման գործընթացը սկսած դեռահասների մասնաբաժինը գյուղական բնակավայրերում ավելի բարձր է, քան քաղաքային բնակավայրերում (համապատասխանաբար 6 և 1 տոկոս): Ըստ մարզերի՝ ամենաբարձր ցուցանիշը Արմավիրում է (12 տոկոս): Ըստ կրթական մակարդակի՝ հիմնական կամ միջնակարգ կրթություն ունեցող կանանց 4-5 տոկոսը սկսել է մանկածնման գործընթացը՝ համեմատած բարձրագույն կրթություն ունեցող կանանց մեկ տոկոսից էլ

**Աղյուսակ 5.11 Դեռահասների հղիություն և մայրություն**

15-19 տարեկան կանանց տոկոսը, ովքեր ունեցել են կենդանի ծնունդ, հղի են առաջին երեխայով, և տոկոսը, ովքեր սկսել են մանկածնման գործընթացը, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

	15-19 տարեկան կանանց տոկոսը, որ		Տոկոսը, որ սկսել է մանկածնման գործընթացը	Կանանց թվաքանակ
	Ունեցել է կենդանի ծնունդ	Հղի է առաջին երեխայով		
<b>Տարիք</b>				
15	0.0	0.0	0.0	137
16	0.0	0.4	0.4	156
17	0.4	0.7	1.1	156
18	4.8	0.8	5.5	135
19	8.0	3.5	11.6	140
<b>Բնակավայր</b>				
Քաղաքային	0.9	0.3	1.2	386
Գյուղական	4.4	2.0	6.3	339
<b>Մարզ</b>				
Երևան	1.0	0.5	1.5	216
Արագածոտն	(3.2)	(0.0)	(3.2)	31
Արարատ	1.0	0.0	1.0	63
Արմավիր	8.1	3.8	11.8	72
Գեղարքունիք	4.0	0.0	4.0	78
Լոռի	(0.0)	(0.0)	(0.0)	37
Կոտայք	1.1	1.1	2.2	82
Շիրակ	5.4	3.9	9.3	56
Սյունիք	0.0	0.0	0.0	35
Վայոց ձոր	1.5	1.8	3.4	17
Տավուշ	4.0	1.5	5.6	39
<b>Կրթություն</b>				
Հիմնական	2.3	1.8	4.1	133
Միջնակարգ	3.4	1.2	4.6	354
Միջին մասնագիտական	2.5	1.0	3.5	122
Բարձրագույն	0.2	0.0	0.2	116
<b>Բարեկեցության քվինտիլ</b>				
Ամենացածր	4.5	1.6	6.1	150
Երկրորդ	3.1	1.8	4.9	154
Միջին	3.2	0.7	3.9	138
Չորրորդ	1.8	0.8	2.6	130
Ամենաբարձր	0.0	0.4	0.4	153
Ընդամենը	2.5	1.1	3.6	725

Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

<sup>3</sup>ՀՀ-ում ամուսնության պաշտոնական տարիքը կանանց համար 18 տարեկանն է:



պակաս ցուցանիշի հետ: Նմանապես՝ մանկածնման գործընթացը սկսած դեռահասաների մասնաբաժինը նվազում է՝ բարեկեցության ամենացածր քվինտիլի 6 տոկոսից հասնելով մեկ տոկոսից էլ պակաս ցուցանիշի ամենաբարձր քվինտիլում:



**Հիմնական արդյունքներ**

- Ամուսնացած կանանց (54 տոկոս) և տղամարդկանց (48 տոկոս) գրեթե կեսը չեն ցանկանում այլևս երեխաներ ունենալ:
- Երեխաների իդեալական թվաքանակը բոլոր կանանց համար 2.6 է, իսկ բոլոր տղամարդկանց համար՝ 2.7:
- Ընդհանուր առմամբ, ծնունդների 92 տոկոսը ցանկալի է եղել հենց հղիանալու պահին, 6 տոկոսը եղել է անժամանակ (ավելի ուշ է ցանկալի եղել), իսկ 2 տոկոսը եղել է անցանկալի:
- Ցանկալի ծնելիության գումարային գործակիցը կազմում է 1.7 երեխա՝ մեկ կնոջ հաշվով, այսինքն՝ այն համընկնում է իրական ծնելիության գումարային գործակցի հետ, որը ևս 1.7 երեխա է մեկ կնոջ հաշվով:

Ծնելիության հետ կապված նախապատվությունների վերաբերյալ տեղեկատվությունը մեծ կարևորություն ունի ընտանիքի պլանավորման հարցերով զբաղվող մասնագետների համար, քանի որ այն թույլ է տալիս գնահատելու հակաբեղմնավորման մեթոդների և միջոցների նկատմամբ գոյություն ունեցող կարիքը ինչպես հղիությունը հետաձգելու, այնպես էլ այլևս չհղիանալու առումով, և հնարավորություն է տալիս գնահատելու անցանկալի և անժամանակ հղիությունների ծավալը: Այս տեղեկատվությունը կարող է նաև օգտակար լինել որպես ծնելիության ապագա միտումների ցուցանիշ: Մույն գլուխը ներկայացնում է տեղեկատվություն այն մասին՝ արդյո՞ք ամուսնացած կանայք և տղամարդիկ ցանկանում են էլի երեխաներ ունենալ, թե՞ ոչ, եթե ցանկանում են ունենալ, ապա՞ երբ, ներկայացված է տեղեկատվություն ընտանիքի իդեալական չափի մասին, այն մասին, թե արդյո՞ք վերջին ժամանակահատվածում տեղի ունեցած ծնունդները եղել են ցանկալի ժամանակ, թե՞ անցանկալի, ինչպես նաև ներկայացվում է ծնելիության տեսական տոկոսը այն դեպքում, եթե բոլոր անցանկալի հղիությունները կանխվեին:

**6.1 ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում կանայք և տղամարդիկ հարցվել են, թե արդյո՞ք ցանկանում են ևս մեկ երեխա ունենալ, և եթե այո, ապա որքան շուտ: Աղյուսակ 6.1-ը ցույց է տալիս ներկայում ամուսնացած կանանց և տղամարդկանց՝ ծնելիության հետ կապված նախապատվություններն ըստ հարցման պահին նրանց ունեցած կենդանի երեխաների թվաքանակի (ներառյալ ընթացիկ հղիությունը):

Հայաստանում ամուսնացած կանանց մեծամասնությունը ցանկանում է վերահսկել իր հետագա ծնելիությունը: Կանանց կեսից ավելին (54 տոկոս) չի ցանկանում այլևս երեխա ունենալ կամ ստերիլացված է: Ամուսնացած կանանց ընդամենը մեկ քառորդն է ցանկանում ապագայում ևս մեկ երեխա ունենալ: Ծնելիությունը սահմանափակելու ցանկությունը նկատելիորեն աճում է կենդանի երեխաների թվաքանակի աճին զուգընթաց: Օրինակ՝ երեխա չունեցող ամուսնացած կանանց 70 տոկոսը ցանկանում է շուտով երեխա ունենալ, իսկ 3 տոկոսն ընդհանրապես չի ցանկանում երեխաներ ունենալ: Մյուս կողմից՝ երկու երեխա ունեցող տասը կանանցից վեցը և երեք կամ ավելի երեխա ունեցող տասը կանանցից ութը նշել են, որ այլևս չեն ուզում երեխաներ ունենալ:

Ծնելիության հետ կապված տղամարդկանց նախապատվությունները, ընդհանուր առմամբ, համընկնում են կանանց նախապատվությունների հետ: Այնուամենայնիվ, ի տարբերություն կանանց, տղամարդկանց ավելի փոքր տոկոսն է նշել, որ այլևս չի ցանկանում երեխա ունենալ (համապատասխանաբար 54 և 48 տոկոս), և ընդհակառակը, տղամարդկանց ավելի մեծ տոկոսն է նշել, որ դեռևս չի որոշել ցանկանում է էլի երեխաներ ունենալ, թե ոչ (21 տոկոս տղամարդիկ և 11 տոկոս կանայք): Տղամարդիկ ավելի քիչ են նշել, որ չեն կարող այլևս երեխաներ ունենալ, քան կանայք:

**Աղյուսակ 6.1 Ծնելիության հետ կապված նախապատվություններն ըստ կենդանի երեխաների թվաքանակի**

15-49 տարեկան ներկայում ամուսնացած կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ ապագայում երեխա ունենալու ցանկության և ըստ կենդանի երեխաների թվաքանակի, Հայաստան, 2015-16 թթ.

Երեխա ունենալու ցանկություն	Կենդանի երեխաների թվաքանակ					Ընդամենը 15-49
	0	1	2	3	4+	
ԿԱՆԱՅԹ <sup>1</sup>						
Ունենալ ևս մեկ երեխա շուտով <sup>2</sup>	69.7	26.3	5.3	0.9	0.0	11.2
Ունենալ ևս մեկ երեխա ավելի ուշ <sup>3</sup>	0.0	38.7	8.7	1.4	1.7	12.0
Ունենալ ևս մեկ երեխա, չի որոշել, թե երբ	2.5	7.2	2.4	1.4	0.6	3.0
Չի որոշել	2.9	6.9	15.8	7.9	4.5	11.4
Այլևս չունենալ	3.0	8.8	60.4	80.1	77.9	52.8
Մտերիլացված է <sup>4</sup>	0.0	0.7	0.4	1.2	2.8	0.7
Չի կարող ունենալ/անպտուղ է	21.9	11.2	7.1	7.2	12.5	8.8
Տվյալ չկա	0.0	0.2	0.0	0.0	0.0	0.1
Ընդամենը Թվաքանակ	100.0 195	100.0 719	100.0 2,009	100.0 811	100.0 161	100.0 3,895
ՏՂԱՄԱՐԴԻԿ <sup>5</sup>						
Ունենալ ևս մեկ երեխա շուտով <sup>2</sup>	76.8	30.1	6.0	3.1	0.6	14.2
Ունենալ ևս մեկ երեխա ավելի ուշ <sup>3</sup>	0.0	27.5	6.9	1.1	1.4	9.7
Ունենալ ևս մեկ երեխա, չի որոշել, թե երբ	16.2	19.9	2.1	0.0	0.0	6.2
Չի որոշել	2.6	13.2	24.6	25.2	17.9	20.8
Այլևս չունենալ	0.5	7.8	59.7	69.9	73.4	47.8
Մտերիլացված է <sup>4</sup>	0.0	0.3	0.1	0.4	0.0	0.2
Չի կարող ունենալ/անպտուղ է	3.8	0.8	0.4	0.1	0.0	0.6
Տվյալ չկա	0.0	0.4	0.3	0.0	6.7	0.5
Ընդամենը Թվաքանակ	100.0 80	100.0 323	100.0 768	100.0 274	100.0 60	100.0 1,506

<sup>1</sup> Կենդանի երեխաների թվաքանակը ներառում է նաև ընթացիկ հղիությունը:  
<sup>2</sup> Ցանկանում է երեխա ունենալ հաջորդ 2 տարիների ընթացքում:  
<sup>3</sup> Ցանկանում է հետաձգել երեխա ունենալը 2 կամ ավելի տարով:  
<sup>4</sup> Ներառում է և՛ կնոջ, և՛ տղամարդու ստերիլացումը:  
<sup>5</sup> Կենդանի երեխաների թվաքանակը ներառում է նաև մեկ հավելյալ երեխա, եթե հարցվողի կինը հղի է:

Աղյուսակ 6.2.1-ը ցույց է տալիս ներկայում ամուսնացած այն կանանց տոկոսը, ովքեր չեն ցանկանում այլևս երեխա ունենալ կամ ստերիլացված են՝ ըստ կենդանի երեխաների թվաքանակի և ըստ հիմնական բնութագրիչների: Քաղաքաբնակ և գյուղաբնակ կանայք հավասարապես չեն ցանկանում հետագայում այլևս երեխա ունենալ: Կանանց միջև տարբերություններն այս առումով ավելի նկատելի են դառնում՝ նրանց ունեցած կենդանի երեխաների թվաքանակի համեմատության պարագայում: Օրինակ, ի տարբերություն գյուղաբնակ կանանց՝ քաղաքաբնակ կանայք առավել հակված են չջարտնակելու մանկածնման գործընթացը կենդանի երեխաների ցանկացած թվաքանակի դեպքում՝ բացառությամբ 1 երեխա ունեցողները: Կանայք Գեղարքունիքի, Վայոց ձորի մարզերում և Երևանում ամենաշատն են հակված հետագայում այլևս երեխա չունենալուն, մինչդեռ կանայք Արագածոտնի և Կոտայքի մարզերում ամենաքիչն են հակված մանկածնման գործընթացը դադարեցնելուն: Բարձրագույն կրթություն ունեցող ամուսնացած կանայք ամենաքիչն են հակված երեխա չունենալու ցանկությանը: Կրթական տարբեր մակարդակներ ունեցող կանանց միջև տարբերություններն ըստ կենդանի երեխաների թվաքանակի շատ փոքր են: Կապը կանանց

բարեկեցության մակարդակի և մանկածնման գործընթացը դադարեցնելու ցանկության միջև ևս շատ փոքր է:

Աղյուսակ 6.2.2-ը ցույց է տալիս ներկայում ամուսնացած այն տղամարդկանց տոկոսը, ովքեր չեն ցանկանում այլևս երեխա ունենալ կամ ստերիլացված են, կամ նշել են, որ իրենց կինը/գուգրնկերն է ստերիլացված՝ ըստ կենդանի երեխաների թվաքանակի և ըստ հիմնական բնութագրիչների: Կապը մանկածնման գործընթացը դադարեցնելու և բնակավայրի, կրթական մակարդակի կամ բարեկեցության մակարդակի միջև փոքր է:

**Աղյուսակ 6.2.1 Մանկածնման գործընթացը սահմանափակելու ցանկություն. կանայք**

15-49 տարեկան ներկայում ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր չեն ցանկանում այլևս երեխաներ ունենալ, ըստ կենդանի երեխաների թվաքանակի և ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կենդանի երեխաների թվաքանակ <sup>1</sup>				Ընդամենը
	0	1	2	3+	
<b>Քնակավայր</b>					
Քաղաքային	3.7	9.4	64.1	84.1	53.3
Գյուղական	1.5	9.7	55.3	79.1	53.8
<b>Սարգ</b>					
Երևան	(5.7)	10.3	69.4	92.3	56.8
Արագածոտն	*	0.0	39.6	71.1	41.5
Արարատ	*	12.4	53.9	74.8	49.2
Արմավիր	*	7.0	59.4	82.4	56.7
Գեղարքունիք	*	7.7	79.0	89.9	68.4
Լոռի	*	(31.1)	61.3	(62.2)	52.7
Կոտայք	*	4.7	45.8	67.5	42.4
Շիրակ	*	9.0	64.2	79.1	54.0
Սյունիք	*	(0.0)	55.9	83.6	52.6
Վայոց ձոր	*	(8.3)	56.8	87.3	57.0
Տավուշ	*	3.3	48.2	88.7	51.0
<b>Կրթություն</b>					
Հիմնական	*	(21.4)	56.0	78.7	59.8
Միջնակարգ	4.3	11.3	59.9	81.6	56.6
Միջին մասնագիտական	(2.8)	9.5	65.1	77.4	56.2
Բարձրագույն	2.2	6.7	58.4	85.5	44.8
<b>Բարեկեցության քվինտիլ</b>					
Ամենացածր	(3.4)	12.3	53.0	76.6	54.0
Երկրորդ	(0.0)	10.8	58.7	78.1	53.7
Միջին	(7.3)	11.1	62.2	86.6	53.7
Չորրորդ	(0.0)	5.7	65.9	81.1	51.7
Ամենաբարձր	(4.7)	9.0	61.9	88.2	54.3
Ընդամենը	3.0	9.5	60.8	81.2	53.5

Նշում: Այն կանայք, ովքեր ստերիլացված են, կամ ում ամուսինն է ստերիլացված, համարվում է, որ չեն ցանկանում այլևս երեխաներ ունենալ: Ընդամենը ներառում է առանց որևէ կրթության 4 դեպք (կշռված): Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա, աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

<sup>1</sup> Կենդանի երեխաների թվաքանակը ներառում է նաև ընթացիկ հղիությունը:

**Աղյուսակ 6.2.2 Մանկածնման գործընթացը սահմանափակելու ցանկություն, տղամարդիկ**

15-49 տարեկան ներկայում ամուսնացած տղամարդկանց տոկոսը, ովքեր չեն ցանկանում այլևս երեխաներ ունենալ, ըստ կենդանի երեխաների թվաքանակի և ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.


Հիմնական բնութագրիչներ	Կենդանի երեխաների թվաքանակ <sup>1</sup>				Ընդամենը
	0	1	2	3+	
<b>Քանակապար</b>					
Քաղաքային	0.0	7.1	59.9	69.9	46.4
Գյուղական	(1.8)	9.4	59.6	71.7	50.1
<b>Կրթություն</b>					
Հիմնական	*	(6.6)	50.8	65.5	45.5
Միջնակարգ	(0.0)	7.0	62.7	71.1	49.5
Միջին մասնագիտական	*	(13.2)	70.4	70.7	57.6
Բարձրագույն	*	8.4	50.4	74.8	40.1
<b>Բարեկեցության քվինտիլ</b>					
Ամենացածր	*	10.8	50.6	69.7	45.6
Երկրորդ	*	9.1	63.6	68.1	50.5
Միջին	*	7.8	73.2	79.8	53.0
Չորրորդ	*	3.4	65.8	76.0	49.4
Ամենաբարձր	*	9.6	48.6	64.6	42.3
Ընդամենը	0.5	8.0	59.8	70.9	48.0

Նշում: Այն տղամարդիկ, ովքեր ստերիլացված են կամ նշել են, որ իրենց կինն է ստերիլացված, համարվում է, որ չեն ցանկանում այլևս երեխաներ ունենալ: Ընդամենը ներառում է առանց որևէ կրթության 3 դեպք (կշռված): Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա, աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

<sup>1</sup> Կենդանի երեխաների թվաքանակը ներառում է նաև մեկ հավելյալ երեխա, եթե հարցվողի կինը հղի է:

Ծնելիության հետ կապված նախապատվությունների առումով՝ ամուսնացած կանանց մասնաբաժինը, որ ցանկանում է դադարեցնել մանկածնման գործընթացը, վերջին 15 տարիների ընթացքում կանոնավոր կերպով նվազել է՝ 2000 թ. գրանցված 74 տոկոսից նվազելով 71 տոկոսի 2005-ին, 58 տոկոսի՝ 2010-ին և 54 տոկոսի՝ 2015-16-ին (Գծապատկեր 6.1): Սակայն, աճ է նկատվում այն կանանց շրջանում, ովքեր նշել են, որ չեն կարող հղիանալ (2005 թ. 3 տոկոսից մինչև 9 տոկոս՝ 2015-16-ին), և այն կանանց շրջանում, ովքեր չեն որոշել, արդյոք ցանկանում են ևս մեկ երեխա ունենալ, թե ոչ, կամ երբ են ցանկանում ունենալ (2005 թ. 6 տոկոսից մինչև 14 տոկոս՝ 2015-16 -ին), ինչպես նաև փոքր աճ է գրանցվել այն կանանց շրջանում, ովքեր շուտով կամ ավելի ուշ ցանկանում են երեխա ունենալ (ԱՎԾ և այլք, 2001, ԱՎԾ և այլք, 2006, ԱՎԾ և այլք, 2012):

**Գծապատկեր 6.1 Ծնելիության հետ կապված նախապատվությունների միտումներն ամուսնացած կանանց շրջանում**



## 6.2 ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՂԵԱԼԱԿԱՆ ԹՎԱՔԱՆԱԿ

ՀՄԱՀ 2015-16-ի շրջանակում հարցվողները պատասխանել են, թե որն է իրենց համար ընտանիքի իդեալական չափը: Այս տեղեկատվությունը ստացվել է հարցաթերթերում ներառված երկու հարցերից որևէ մեկին պատասխանելու միջոցով: Երեխա չունեցող հարցվողներին տրվել է հետևյալ հարցը. «Եթե կարողանայիք ընտրել երեխաների կոնկրետ թիվ, որ կուզենայիք ունենալ Ձեր ամբողջ կյանքի ընթացքում, որքա՞ն կլինեք այդ թիվը»: Երեխա ունեցող հարցվողներին տրվել է հետևյալ հարցը. «Եթե կարողանայիք վերադառնալ այն ժամանակին, երբ դեռ երեխաներ չունեիք և կարող էիք ընտրել երեխաների կոնկրետ թիվ, որ կուզենայիք ունենալ Ձեր ամբողջ կյանքի ընթացքում, որքա՞ն կլինեք այդ թիվը»: Ենթադրվում է, որ այս հարցերին տրվող պատասխանները չպետք է կախված լինեն երեխաների այն թվաքանակից, որ հարցվողն իրականում ունի: Այնուամենայնիվ, որպես կանոն, հարցվողների ունեցած երեխաների թվաքանակի և նրանց կողմից նշված երեխաների իդեալական թվաքանակի միջև կապ գոյություն ունի: Այս կապը կարող է կախված լինել այն հանգամանքից, որ ավելի մեծ ընտանիք ցանկացող հարցվողներն ունեն շատ երեխաներ, կամ հարցվողները համապատասխանեցրել են ընտանիքի իդեալական չափն իրենց ընտանիքի փաստացի չափի հետ (ռացիոնալացում): Աղյուսակ 6.3-ում ներկայացված է 15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ երեխաների իդեալական թվաքանակի և ըստ կենդանի երեխաների թվաքանակի:

Հայաստանում բոլոր կանայք, ըստ էության, ցանկանում են երեխաներ ունենալ: Բոլոր կանանց գրեթե կեսը (47 տոկոս) նշել է, որ երեխաների իդեալական թվաքանակը երկուսն է, իսկ կանանց 33 տոկոսը նշել է, որ երեքն է: Յոթ կանանցից մեկը (14 տոկոս) նշել է, որ նախընտրում է ունենալ չորս կամ ավելի երեխա: Ընդհանուր առմամբ, երեխաների միջին իդեալական թվաքանակը բոլոր կանանց շրջանում կազմում է 2.6 երեխա, իսկ ներկայում ամուսնացած կանանց շրջանում՝ 2.7 երեխա: Երեխաների փաստացի թվաքանակի և իդեալական թվաքանակի միջև գոյություն ունի դրական հարաբերակցություն: Բոլոր կանանց շրջանում երեխաների միջին իդեալական թվաքանակը երեխա չունեցող կանանց շրջանում գրանցված 2.3-ից աճում է՝ չորս կամ ավելի երեխա ունեցող կանանց շրջանում կազմելով 3.9 երեխա:

Հայաստանում տղամարդիկ ցանկանում են նույնքան երեխաներ, որքան կանայք: Տղամարդկանց 47 տոկոսը նշել է, որ երեխաների իդեալական թվաքանակը երկուսն է, 34 տոկոսը նշել է, որ իդեալականը երեք երեխան է, իսկ 15 տոկոսը նշել է չորս կամ ավելի երեխաների մասին: Երեխաների միջին իդեալական թվաքանակը բոլոր տղամարդկանց շրջանում կազմում է 2.7 երեխա, իսկ ներկայում ամուսնացած տղամարդկանց շրջանում՝ 2.8: Ինչպես կանանց դեպքում, այնպես էլ տղամարդկանց, երեխաների փաստացի թվաքանակի և իդեալական թվաքանակի միջև գոյություն ունի դրական հարաբերակցություն:

**Աղյուսակ 6.3 Երեխաների իդեալական թվաքանակն ըստ կենդանի երեխաների թվաքանակի**

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ երեխաների իդեալական թվաքանակի, երեխաների միջին իդեալական թվաքանակը բոլոր և ներկայում ամուսնացած հարցվողների համար, ըստ կենդանի երեխաների թվաքանակի, Հայաստան, 2015-16 թթ.

Երեխաների իդեալական թվաքանակ	Կենդանի երեխաների թվաքանակ					Ընդամենը
	0	1	2	3	4+	
<b>ԿԱՆԱՅՔ<sup>1</sup></b>						
0	1.8	0.2	0.2	0.1	0.0	0.7
1	6.9	5.2	0.5	1.0	0.2	3.4
2	55.7	51.8	51.8	13.3	12.2	46.6
3	21.9	34.1	34.3	56.4	15.8	32.7
4	8.6	7.4	12.0	24.9	55.9	13.3
5	0.5	0.3	0.3	1.2	7.7	0.7
6+	0.0	0.1	0.1	0.7	6.5	0.3
Ոչ թվային պատասխաններ	4.6	0.9	0.7	2.4	1.7	2.3
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Թվաքանակ	2,053	892	2,139	858	175	6,116
<b>Երեխաների միջին իդեալական թվաքանակ<sup>2</sup></b>						
Բոլոր կանայք	2.3	2.5	2.6	3.1	3.9	2.6
Կանանց թվաքանակ	1,958	884	2,124	837	172	5,974
Ներկայում ամուսնացած կանայք	2.4	2.5	2.6	3.2	3.9	2.7
Ներկայում ամուսնացած կանանց թվաքանակ	189	712	1,994	792	158	3,845
<b>ՏՂԱՄԱՐԴԻՔ<sup>3</sup></b>						
0	1.0	0.0	0.1	0.0	0.0	0.5
1	3.0	0.9	0.3	0.0	0.0	1.6
2	56.7	55.5	43.1	10.7	6.2	46.8
3	27.0	36.7	39.0	52.1	4.4	33.7
4	7.6	5.4	15.3	33.8	65.9	13.5
5	0.9	0.7	1.0	3.1	19.3	1.5
6+	0.2	0.0	0.3	0.3	4.2	0.3
Ոչ թվային պատասխաններ	3.6	0.7	0.9	0.0	0.0	2.0
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Թվաքանակ	1,281	337	794	283	61	2,755
<b>Երեխաների միջին իդեալական թվաքանակ<sup>2</sup></b>						
Բոլոր տղամարդիկ	2.4	2.5	2.8	3.3	4.1	2.7
Տղամարդկանց թվաքանակ	1,235	334	786	283	61	2,699
Ներկայում ամուսնացած տղամարդիկ	2.6	2.5	2.8	3.3	4.1	2.8
Ներկայում ամուսնացած տղամարդկանց թվաքանակ	80	321	761	274	60	1,497

<sup>1</sup> Կանանց համար կենդանի երեխաների թվաքանակը ներառում է նաև ընթացիկ հղիությունը:

<sup>2</sup> Միջին թվաքանակների հաշվարկման ժամանակ ոչ թվային պատասխան տված հարցվողները չեն ներառվել:

<sup>3</sup> Կենդանի երեխաների թվաքանակը ներառում է նաև մեկ հավելյալ երեխա, եթե հարցվողի կինը հղի է:

Տվյալները ցույց են տալիս, որ 2000 թ. ի վեր ընտանիքի իդեալական չափի վերաբերյալ կանանց շրջանում որևէ էական փոփոխություն չի գրանցվել. երեխաների միջին իդեալական թվաքանակը 2000-ին կազմել է 2.7 երեխա, 2005-ին՝ 2.6, 2010-ին՝ 2.5 և 2015-16-ին՝ 2.6 երեխա (ԱՎԾ և այլք, 2001, ԱՎԾ և այլք, 2006, ԱՎԾ և այլք, 2012): Նմանապես՝ վերջին տասը տարիների ընթացքում ընտանիքի իդեալական չափի վերաբերյալ տղամարդկանց շրջանում ևս գրեթե ոչ մի փոփոխություն չի գրանցվել (2.8 երեխա 2005-ին, 2.7՝ 2010-ին և 2.7՝ 2015-16-ին):

Աղյուսակ 6.4-ը ցույց է տալիս երեխաների միջին իդեալական թվաքանակն ըստ հիմնական բնութագրիչների: Ընդհանուր առմամբ, երեխաների միջին իդեալական թվաքանակն էապես չի տատանվում: Այնուամենայնիվ, և՛ կանանց, և՛ տղամարդկանց շրջանում երեխաների միջին իդեալական թվաքանակն աճում է տարիքին զուգընթաց: Կրթական մակարդակի և բարեկեցության աճին զուգընթաց՝ նկատվում է թվաքանակի որոշակի նվազման միտում:



**Աղյուսակ 6.4 Երեխաների միջին իդեալական թվաքանակն ըստ հիմնական բնութագրիչների**

Երեխաների միջին իդեալական թվաքանակը 15-49 տարեկան բոլոր կանանց և տղամարդկանց համար, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կանայք		Տղամարդիկ	
	Միջին	Կանանց թվաքանակ <sup>1</sup>	Միջին	Տղամարդկանց թվաքանակ <sup>1</sup>
<b>Տարիք</b>				
15-19	2.4	675	2.5	321
20-24	2.5	899	2.5	460
25-29	2.6	1,081	2.5	455
30-34	2.6	988	2.6	423
35-39	2.6	858	2.7	370
40-44	2.7	774	3.0	340
45-49	2.8	700	2.9	330
<b>Քաակալայր</b>				
Քաղաքային	2.5	3,595	2.6	1,528
Գյուղական	2.7	2,380	2.7	1,171
<b>Մարզ</b>				
Երևան	2.5	1,995	2.6	829
Արագածոտն	2.7	314	2.7	159
Արարատ	2.6	552	2.6	289
Արմավիր	2.7	528	3.0	266
Գեղարքունիք	2.7	475	2.9	234
Լոռի	2.5	320	2.5	157
Կոտայք	2.6	652	2.7	285
Շիրակ	2.5	499	2.4	201
Սյունիք	2.5	238	2.3	104
Վայոց ձոր	2.6	119	2.8	51
Տավուշ	2.8	281	2.7	126
<b>Կրթություն</b>				
Հիմնական	2.7	368	2.8	345
Միջնակարգ	2.7	2,388	2.7	1,222
Միջին մասնագիտական	2.6	1,335	2.6	403
Բարձրագույն	2.5	1,876	2.5	725
<b>Բարեկեցության քվինտիլ</b>				
Ամենացածր	2.8	1,040	2.8	514
Երկրորդ	2.6	1,203	2.7	570
Միջին	2.6	1,113	2.6	509
Չորրորդ	2.6	1,265	2.6	552
Ամենաբարձր	2.5	1,354	2.6	555
Ընդամենը	2.6	5,974	2.7	2,699

Նշում: Ընդամենը ներառում է առանց որևէ կրթության կանանց և տղամարդկանց (կշռված) 5-ական դեպք:

<sup>1</sup> Կանանց և տղամարդկանց թվաքանակը, որ տվել է թվային պատասխան:

**6.3 ԾՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում կանանց տրվել են մի շարք հարցեր հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում ծնված յուրաքանչյուր երեխայի վերաբերյալ, և եթե կինը հղի է եղել, նաև ընթացիկ հղիության վերաբերյալ՝ պարզելու համար արդյո՞ք հղիությունները եղել են ցանկալի (պլանավորված), թե՞ կինը ցանկացել է հղիանալ ավելի ուշ (անժամանակ), կամ դրանք եղել են անցանկալի (չպլանավորված):

Աղյուսակ 6.5-ը ցույց է տալիս հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում տեղի ունեցած ծնունդների տոկոսային բաշխումն ըստ այն հանգամանքի, թե արդյոք հղիությունը եղել է ցանկալի հենց այդ ժամանակ, ցանկալի ավելի ուշ, թե անցանկալի: Հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում գրանցված ծնունդների 92 տոկոսը եղել է ցանկալի հենց այդ ժամանակ: Ծնունդների 6 տոկոսն ավելի ուշ է ցանկալի եղել, իսկ 2 տոկոսն ընդհանրապես այդ ժամանակ ցանկալի չի եղել: Նման տոկոսային բաշխումը թույլ է տալիս ենթադրել, որ վերջին 15

տարիների ընթացքում Հայաստանում ծնունդների պլանավորման առումով զգալի բարելավում է գրանցվել: Անցանկալի հղիությունների տոկոսը 2000-ին գրանցված 8 տոկոսից նվազել է մինչև 7 տոկոս 2005-ին և մինչև 1 տոկոս 2010-ին, այնուհետև 2015-16-ին այն մի փոքր աճել է՝ կազմելով 2 տոկոս: Իսկ ցանկալի հղիությունների տոկոսը 2000-ին գրանցված 83 տոկոսից աճել է մինչև 92 տոկոսի 2015-16-ին (ԱՎԾ և այլք, 2001, ԱՎԾ և այլք, 2006, ԱՎԾ և այլք, 2012):

Ծնելիության պլանավորման կարգավիճակի և ծնունդների հերթականության միջև գոյություն ունի որոշակի կապ: Օրինակ՝ առաջին ծնունդների 98 տոկոսը ցանկալի է եղել հենց հղիանալու պահին, մինչդեռ չորրորդ և դրան հաջորդող ծնունդների 8 տոկոսն ընդհանրապես ցանկալի չի եղել: Երիտասարդ կանայք ավելի շատ են նշել, որ ցանկանում էին երեխա ունենալ հենց հղիանալու ժամանակ, քան ավելի տարիքով կանայք, մինչդեռ ավելի տարիքով կանայք ավելի շատ են նշել, որ չէին ցանկանում այլևս երեխաներ ունենալ:

**Աղյուսակ 6.5 Ծնելիության պլանավորման կարգավիճակ**

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում 15-49 տարեկան կանանց ունեցած ծնունդների տոկոսային բաշխումը (ներառյալ ընթացիկ հղիությունները) ըստ ծնունդի պլանավորման կարգավիճակի, ծնունդների հերթականության և ըստ ծննդաբերության ժամանակ մոր տարիքի, Հայաստան, 2015-16 թթ.

Ծնունդների հերթականությունը և մոր տարիքը ծննդաբերելիս	Ծնունդի պլանավորման կարգավիճակ					Ծնունդների թվաքանակ
	Ցանկանում էր այդ ժամանակ	Ցանկանում էր ավելի ուշ	Այլևս չէր ցանկանում	Տվյալ չկա	Ընդամենը	
<b>Ծնունդների հերթականություն</b>						
1	98.2	1.6	0.1	0.1	100.0	809
2	88.6	10.4	0.8	0.2	100.0	693
3	86.5	7.2	6.3	0.0	100.0	284
4+	86.5	5.6	7.9	0.0	100.0	60
<b>Մոր տարիքը ծննդաբերելիս</b>						
<20	97.7	2.3	0.0	0.0	100.0	108
20-24	92.4	7.2	0.1	0.3	100.0	697
25-29	93.6	5.9	0.5	0.1	100.0	656
30-34	89.7	5.9	4.4	0.0	100.0	278
35-39	88.9	1.1	10.0	0.0	100.0	93
40-44	*	*	*	*	100.0	13
45-49	*	*	*	*	100.0	2
Ընդամենը	92.4	5.9	1.6	0.1	100.0	1,846

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

## 6.4 ՑԱՆԿԱԼԻ ԵՎ ԱՆՑԱՆԿԱԼԻ ԾՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 6.6-ը տրամադրում է տեղեկատվություն «ցանկալի» ծնելիության գումարային գործակցի և ծնելիության գումարային գործակցի վերաբերյալ հետազոտությանը նախորդող երեք տարիների համար՝ ըստ հիմնական բնութագրիչների: Անցանկալի են համարվում այն ծնունդները, որոնք գերազանցում են հարցվողի նշած երեխաների իդեալական թվաքանակը: Այն կանանց համար, ովքեր ընտանիքի իդեալական չափին վերաբերող հարցին տվել են ոչ թվային պատասխան, համարվել է, որ նրանց ունեցած բոլոր ծնունդները եղել են ցանկալի: Ցանկալի ծնելիության գործակիցն իրենից ներկայացնում է ծնելիության այն մակարդակը, որ կգրանցվեր հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում, եթե բոլոր անցանկալի հղիությունները կանխվեին: Ցանկալի ծնելիության գումարային գործակցի և ծնելիության գումարային գործակցի համեմատությունն արտահայտում է անցանկալի ծնունդների կանխման հնարավոր ժողովրդագրական ազդեցությունը:

Անցանկալի հղիությունների ցածր մակարդակի շնորհիվ Հայաստանում դիտարկված ծնելիության գումարային գործակցի (1.7 երեխա՝ մեկ կնոջ հաշվով) և ցանկալի ծնելիության գումարային գործակցի (1.7 երեխա՝ մեկ կնոջ հաշվով) միջև տարբերություն չկա: Ցանկալի և իրական ծնելիությունների միջև տարբերություններն ըստ հիմնական բնութագրիչների շատ փոքր են:

**Աղյուսակ 6.6 Ցանկալի ծնելիության գործակիցներ**

Ցանկալի ծնելիության գումարային գործակիցը և ծնելիության գումարային գործակիցը հետազոտությանը նախորդող 3 տարիների կտրվածքով, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Ցանկալի ծնելիության գումարային գործակից	Ծնելիության գումարային գործակից
<b>Քնակավայր</b>		
Քաղաքային	1.6	1.7
Գյուղական	1.8	1.8
<b>Մարզ</b>		
Երևան	1.5	1.6
Արագածոտն	1.0	1.1
Արարատ	1.9	1.9
Արմավիր	2.1	2.2
Գեղարքունիք	0.9	1.1
Լոռի	1.5	1.5
Կոտայք	2.0	2.1
Շիրակ	1.7	1.9
Սյունիք	2.0	2.0
Վայոց ձոր	1.7	1.9
Տավուշ	2.3	2.4
<b>Կրթություն</b>		
Հիմնական	2.5	2.8
Միջնակարգ	1.8	1.9
Միջին մասնագիտական	1.6	1.7
Բարձրագույն	1.6	1.6
<b>Բարեկեցության քվինտիլ</b>		
Ամենացածր	1.9	2.0
Երկրորդ	1.7	1.7
Միջին	1.6	1.7
Չորրորդ	1.4	1.4
Ամենաբարձր	1.9	1.9
Ընդամենը	1.7	1.7

Նշում: Գործակիցները հաշվարկված են հետազոտությանը նախորդող 1-36 ամիսների ընթացքում 15-49 տարեկան կանանց ունեցած ծնունդների հիման վրա: Ծնելիության գումարային գործակիցները նույնն են, ինչ Աղյուսակ 5.2-ում ներկայացված տվյալները: Ընդամենը ներառում է առանց որևէ կրթության 5 դեպք (կին):



**Հիմնական արդյունքներ**

- Հակաբեղմնավորման մեթոդների իմացության մակարդակը Հայաստանում բարձր է: Կանանց 97 և տղամարդկանց 99 տոկոսը լսել են հակաբեղմնավորման առնվազն մեկ մեթոդի մասին:
- Վերջին 15 տարիների ընթացքում հակաբեղմնավորման մեթոդների տարածվածության ցուցանիշը փոփոխվել է՝ 2000-ին գրանցված 61 տոկոսից նվազելով 53 տոկոսի՝ 2005-ին, այնուհետև 2015-16-ին կրկին բարձրացել է՝ կազմելով ներկայում ամուսնացած կանանց 57 տոկոսը:
- 2000-ից ի վեր հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների օգտագործման մակարդակը բարձրացել է, սակայն ներկայում ամուսնացած կանանց ընդամենը 28 տոկոսն է օգտագործում դրանք:
- Ժամանակի ընթացքում ընդհատված սեռական հարաբերության օգտագործման մակարդակը մի փոքր նվազել է, սակայն այն դեռևս շարունակում է մնալ հակաբեղմնավորման ամենաշատն օգտագործվող մեթոդը (ամուսնացած կանանց 25 տոկոսը):
- Հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդներ օգտագործողների ընդամենը մեկ երրորդն է ձեռք բերել իր մեթոդը պետական հատվածից (հիմնականում ներարգանդային միջոցներ), մինչդեռ նրանց երկու երրորդը ձեռք է բերել օգտագործվող մեթոդը մասնավոր առողջապահական հատվածից (հիմնականում հաբեր և պահպանակ):
- Հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդներ օգտագործողների 87 տոկոսը տեղեկացվել է մեթոդի կողմնակի ազդեցությունների և խնդիրների մասին, 85 տոկոսին ասվել է, թե ինչպես է պետք վարվել, եթե առաջանան կողմնակի ազդեցություններ, և 72 տոկոսը տեղեկացվել է հակաբեղմնավորման այլ մեթոդների մասին:
- Կանանց կեսը գիտի, որ ամենապտղաբեր ժամանակահատվածը երկու դաշտանների մեջտեղում է:
- Ներկայում ամուսնացած կանանց ընդամենը 13 տոկոսն ունի ընտանիքի պլանավորման ծառայությունների չբավարարված կարիք, ընդ որում՝ նրանց կեսը՝ հղիությունը հետաձգելու, մյուս կեսը՝ այլևս չհղիանալու:

Ընտանիքի պլանավորում ասելով նկատի ունենք գույզի՝ հղիությունը հետաձգելու կամ այլևս երեխաներ չունենալու գիտակցված ջանքերը հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման միջոցով: Ընտանիքի պլանավորման արդյունավետությունը կախված է հակաբեղմնավորման մեթոդների վերաբերյալ մարդկանց իմացությունից և այդ մեթոդների մատչելիությունից՝ տարբեր պահանջներ ունեցող հնարավոր սպառողների լայն շրջանակին բավարարելու համար: Մեթոդների մատչելիությունն էլ իր հերթին կախված է ծառայություն մատուցողների որակական և քանակական հատկանիշներից և ֆինանսական ու տեխնիկական միջոցներից: Ըստ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի, որն ընդունվել է 2002 թ. ՀՀ ազգային ժողովի կողմից, Հայաստանում

հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը, ներառյալ կամավոր ստերիլացումը, համարվում է օրինական:

Սույն գլխում ներկայացված են ՀԺԱՀ 2015-16-ի արդյունքները հակաբեղմնավորման մեթոդների իմացության, օգտագործման, աղբյուրների, ընտանիքի պլանավորման բավարարված և չբավարարված կարիքի, ինչպես նաև ընտանիքի պլանավորման մասին տրամադրվող տեղեկատվության ազդեցության վերաբերյալ: Այս տեղեկատվությունը հատկապես օգտակար է քաղաքականություն մշակողների, ծրագրերի ղեկավարների, միջազգային և ազգային հասարակական կազմակերպությունների, բնակչության և ընտանիքի պլանավորման վերաբերյալ հետազոտություններ իրականացնողների համար: Այն նաև հանդիսանում է Հայաստանում գործող ընտանիքի պլանավորման ծրագրի հաջողության գնահատման միջոց: Չնայած այստեղ շեշտը դրված է կանանց վրա՝ որոշ արդյունքներ ներկայացված են նաև տղամարդկանց հետազոտությունից, քանի որ տղամարդիկ կարևոր դեր ունեն կանանց վերարտադրողական նպատակների իրականացման հարցում: Գնահատելու համար վերջին 15 տարիների ընթացքում Հայաստանում առկա միտումները՝ ներկայացված են նաև համեմատություններ նախորդ հետազոտությունների արդյունքների հետ:

### **7.1 ՀԱԿԱԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ծնելիության վերահսկման վերաբերյալ գիտելիքների ձեռքբերումը կարևոր քայլ է հակաբեղմնավորման մեթոդները հասանելի դարձնելու և համապատասխան մեթոդի ժամանակին և արդյունավետ օգտագործման համար: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հավաքագրվել է տեղեկատվություն հակաբեղմնավորման մեթոդների իմացության և օգտագործման վերաբերյալ: Այս տեղեկատվությունը հավաքագրելու նպատակով հարցազրուցավարները բարձրաձայն ընթերցել են հակաբեղմնավորման յուրաքանչյուր մեթոդի անունը և հարցրել՝ արդյոք հարցվողը լսել է տվյալ մեթոդի մասին, թե ոչ: Եթե պատասխանը ՈՉ է եղել, հարցազրուցավարներն ընթերցել են հակաբեղմնավորման մեթոդի նկարագրությունը: Ոչ հղի կանայք հարցվել են, թե արդյոք իրենք (կամ իրենց գուրզները) ներկայումս օգտագործում են որևէ մեթոդ՝ հղիությունից խուսափելու կամ այն հետաձգելու նպատակով: Բոլոր կանայք հարցվել են հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման շրջանների մասին (օրացույց): Վերլուծական նպատակներով հակաբեղմնավորման մեթոդները խմբավորվել են հետևյալ երկու տեսակների մեջ՝ ժամանակակից և ավանդական: Ժամանակակից մեթոդներն են կնոջ ստերիլացում, տղամարդու ստերիլացում, հաբեր, ներարգանդային միջոցներ, ներարկումներ, իմպլանտներ, տղամարդու պահպանակ, լակտացիոն ամենորեայի մեթոդ (ԼԱՄ) և շտապ բեղմնականխում: Պարբերական ինքնագսպումը (ռիթմիկ մեթոդը), ընդհատված սեռական հարաբերությունը և այլ ժողովրդական միջոցները համարվում են ավանդական մեթոդներ:

Աղյուսակ 7.1-ը ցույց է տալիս, որ կանանց և տղամարդկանց շրջանում հակաբեղմնավորման մեթոդների իմացության մակարդակը բարձր է: Գրեթե բոլոր հարցվողներն իմացել են հակաբեղմնավորման առնվազն մեկ մեթոդ (կանանց 97 և տղամարդկանց 99 տոկոսը): Ներկայումս ամուսնացած հարցվողների իմացությունը մի փոքր ավելի բարձր է, քան բոլոր հարցվողներինը: Հակաբեղմնավորման մեթոդների իմացության միջին թվաքանակն ընտանիքի պլանավորման մեթոդների իմացության տարածվածության մոտավոր ցուցանիշ է: Ներկայումս ամուսնացած կանայք, ում մոտ հղիանալու հավանականությունն ամենաբարձրն է, միջինում գիտեն հակաբեղմնավորման ութ մեթոդ: Գոնե մեկ ժամանակակից մեթոդի իմացությունը գրեթե համատարած է: Ամուսնացած տասը կանանցից ինը լսել են տղամարդու պահպանակի, ներարգանդային միջոցների և հաբերի մասին: Սակայն ամուսնացած կանանց շրջանում ժամանակակից մյուս մեթոդներն ավելի քիչ են հայտնի: Օրինակ՝ ամուսնացած կանանց միայն երկու երրորդն է տեղյակ կնոջ ստերիլացման մասին, իսկ ներարկումների և շտապ բեղմնականխման մասին լսել է ամուսնացած կանանց մոտ կեսը: Տղամարդու ստերիլացման (37 տոկոս) և իմպլանտների (24 տոկոս) մասին իմացությունը

զգալիորեն ավելի ցածր է: Ամուսնացած կանանց շրջանում ամենահայտնի ավանդական մեթոդն ընդհատված սեռական հարաբերությունն է (94 տոկոս):

**Աղյուսակ 7.1 Հակաբեղմնավորման մեթոդների իմացություն**

15-49 տարեկան բոլոր հարցվողների, ներկայում ամուսնացած հարցվողների և սեռապես ակտիվ չամուսնացած հարցվողների տոկոսը, ովքեր լսել են հակաբեղմնավորման որևէ մեթոդի մասին, ըստ հակաբեղմնավորման կոնկրետ մեթոդների, Հայաստան, 2015-16 թթ.

Մեթոդ	Կանայք			Տղամարդիկ		
	Բոլոր կանայք	Ներկայում ամուսնացած կանայք	Սեռապես ակտիվ չամուսնացած կանայք <sup>1</sup>	Բոլոր տղամարդիկ	Ներկայում ամուսնացած տղամարդիկ	Սեռապես ակտիվ չամուսնացած տղամարդիկ <sup>1</sup>
<b>Որևէ մեթոդ</b>	97.4	99.8	*	99.3	99.8	100.0
<b>Որևէ ժամանակակից մեթոդ</b>	97.2	99.7	*	99.3	99.7	100.0
Կնոջ ստերիլացում	57.4	64.7	*	58.8	66.7	51.6
Տղամարդու ստերիլացում	32.5	36.8	*	45.8	53.1	43.6
Հաբեր	89.1	93.5	*	74.3	81.7	81.2
Ներարգանդային միջոցներ	87.9	94.8	*	75.4	85.4	68.8
Ներարկումներ	43.1	47.7	*	41.0	46.4	40.6
Իմպլանտներ	21.2	24.3	*	24.3	29.3	23.3
Տղամարդու պահպանակ	96.3	99.1	*	99.2	99.6	100.0
Շտապ բեղմնականիում	40.1	46.4	*	46.0	52.5	43.7
Լակտացիոն ամենորեայի մեթոդ (ԼԱՄ)	60.5	74.1	*	26.0	37.3	18.4
Այլ ժամանակակից մեթոդ	0.2	0.3	*	0.2	0.1	1.4
<b>Որևէ ավանդական մեթոդ</b>	83.3	96.3	*	90.9	97.5	89.9
Ռիթմիկ	70.3	82.1	*	45.4	55.3	34.4
Ընդհատված սեռական հարաբերություն	78.2	93.5	*	90.3	96.8	89.7
Այլ ավանդական մեթոդ	1.1	1.4	*	0.1	0.0	0.4
Հարցվողներին ծանոթ մեթոդների միջին թվաքանակ	6.8	7.6	*	6.3	7.0	6.0
Հարցվողների թվաքանակ	6,116	3,895	11	2,755	1,506	311

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

<sup>1</sup> Վերջին անգամ սեռական հարաբերություն են ունեցել հետազոտությանը նախորդող 30 օրերի ընթացքում:

Ինչպես ներկայում ամուսնացած կանայք, այնպես էլ ամուսնացած տղամարդիկ ամենաշատը տեղյակ են տղամարդու պահպանակի (100 տոկոս), ներարգանդային միջոցների (85 տոկոս) և հաբերի (82 տոկոս) մասին: Տղամարդիկ կանանցից ավելի շատ են տեղյակ այն մեթոդների մասին, որոնցում իրենք ուղղակիորեն ներգրավված են՝ տղամարդու ստերիլացում, պահպանակ, ընդհատված սեռական հարաբերություն, իսկ այնպիսի մեթոդների մասին, ինչպիսիք են հաբերը, ներարգանդային միջոցները, ԼԱՄ-ը և ռիթմիկ մեթոդը, ավելի քիչ են տեղյակ: Ամուսնացած տղամարդիկ միջինում գիտեն հակաբեղմնավորման յոթ մեթոդ, այսինքն՝ ավելի քիչ, քան ամուսնացած կանայք:

Ներկայում ամուսնացած կանանց և տղամարդկանց տոկոսը, որ գիտեն հակաբեղմնավորման առնվազն մեկ մեթոդ, ըստ հիմնական բնութագրիչների, չի փոփոխվում: Որևէ մեկ մեթոդի և ժամանակակից մեկ մեթոդի իմացությունը գրեթե համատարած է (տվյալները ներկայացված չեն):

Վերջին 15 տարիների ընթացքում հակաբեղմնավորման մեթոդների իմացության մակարդակը Հայաստանում մնացել է բարձր: Վերջին հինգ տարիների ընթացքում ներկայում ամուսնացած կանանց և տղամարդկանց շրջանում կոնկրետ մեթոդների մասին տեղեկացվածությունն աճել է, մասնավորապես կնոջ և տղամարդու ստերիլացման, իմպլանտների, ԼԱՄ-ի<sup>1</sup> և շտապ բեղմնականիուման մեթոդների վերաբերյալ, իսկ ահա ներարկումների վերաբերյալ իմացությունը նվազել է: Ընդհանուր առմամբ, հակաբեղմնավորման մեթոդների միջին թվաքանակը,

<sup>1</sup> ՀԺԱՀ 2000-ի և ՀԺԱՀ 2015-16-ի ժամանակ, եթե կնոջը ծանոթ չի եղել «լակտացիոն ամենորեայի մեթոդ» տերմինը, ապա հարցազրուցավարն ընթերցել է մեթոդի նկարագրությունը, մինչդեռ ՀԺԱՀ 2005-ի և ՀԺԱՀ 2010-ի ժամանակ նկարագրությունը չի ընթերցվել:

որոնց մասին ներկայում ամուսնացած կանայք և տղամարդիկ գիտեն, 2010-ից ի վեր մնացել է գրեթե կայուն (7.7 մեթոդ կանանց համար և 6.8 մեթոդ տղամարդկանց համար՝ 2010-ին, 7.6 մեթոդ կանանց համար և 7.0 մեթոդ տղամարդկանց համար՝ 2015-16-ին):

## 7.2 ՀԱԿԱԲԵՂՄԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Մույն բաժինը ներկայացնում է 15-49 տարեկան կանանց շրջանում հակաբեղմնավորման մեթոդների ընթացիկ օգտագործման տարածվածության վերաբերյալ տեղեկատվություն: Ընթացիկ օգտագործման մակարդակը հանդիսանում է հետազոտության ժամանակահատվածում հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման իրական չափորոշիչ: Աղյուսակ 7.2-ը ցույց է տալիս բոլոր կանանց և ներկայում ամուսնացած կանանց տոկոսային բաշխումն ըստ այն հակաբեղմնավորման մեթոդի, որը նրանք ներկայում օգտագործում են, և ըստ տարիքային խմբերի:

**Աղյուսակ 7.2 Հակաբեղմնավորման մեթոդների ընթացիկ օգտագործումն ըստ տարիքի**

15-49 տարեկան բոլոր կանանց և ներկայում ամուսնացած կանանց տոկոսային բաշխումն ըստ այն հակաբեղմնավորման մեթոդի, որը նրանք ներկայում օգտագործում են, և ըստ տարիքի, Հայաստան, 2015-16 թթ.

Տարիք	Ժամանակակից մեթոդ									Ավանդական մեթոդ						
	Որևէ մեթոդ	Որևէ ժամանակակից մեթոդ	Կնոջ ստերիլացում	Ներարգանդային Ներարգանդային միջոցներ	Ներարգանդային կոնդոմ	Տղամարդու պահպանակ	ԼԱՄ	Այլ	Որևէ ավանդական մեթոդ	Ընդհատ ված սեռական հարաբերություն	Ներկայում չի օգտագործում	Ընդամենը	Կանանց թվաքանակ			
<b>ԲՈՒՈՐ ԿԱՆԱՅՔ</b>																
15-19	1.5	1.0	0.0	0.0	0.0	0.6	0.4	0.0	0.5	0.1	0.3	0.0	98.5	100.0	725	
20-24	16.9	9.0	0.0	1.0	1.6	0.0	5.2	1.3	0.0	7.9	0.6	7.2	0.1	83.1	100.0	928
25-29	38.5	20.4	0.1	1.5	5.4	0.0	12.4	0.8	0.3	18.1	2.9	15.1	0.1	61.5	100.0	1,099
30-34	54.7	29.8	0.5	2.4	9.7	0.5	16.2	0.5	0.1	24.9	2.9	21.5	0.5	45.3	100.0	1,007
35-39	54.5	26.7	0.8	3.0	9.7	0.0	13.1	0.0	0.1	27.8	3.4	23.9	0.5	45.5	100.0	867
40-44	49.9	21.8	0.6	2.4	8.5	0.3	10.0	0.1	0.0	28.1	5.2	22.6	0.3	50.1	100.0	784
45-49	34.0	13.0	1.6	1.5	4.0	0.0	5.9	0.0	0.0	21.0	1.7	19.3	0.0	66.0	100.0	706
Ընդամենը	36.7	18.1	0.5	1.7	5.7	0.1	9.6	0.5	0.1	18.6	2.5	15.9	0.2	63.3	100.0	6,116
<b>ՆԵՐԿԱՅՈՒՄ ԱՄՈՒՍՆԱԳԱԾ ԲՈՒՈՐ ԿԱՆԱՅՔ</b>																
15-19	(32.4)	(21.9)	(0.0)	(0.0)	(0.0)	(14.0)	(7.8)	(0.0)	(10.5)	(3.1)	(7.4)	(0.0)	(67.6)	100.0	33	
20-24	42.5	22.4	0.0	2.1	3.9	0.0	13.2	3.2	0.0	20.1	1.6	18.2	0.4	57.5	100.0	365
25-29	55.0	28.8	0.1	2.1	7.7	0.0	17.3	1.1	0.4	26.1	4.2	21.8	0.1	45.0	100.0	761
30-34	66.4	36.0	0.6	2.9	11.8	0.6	19.5	0.6	0.1	30.4	3.6	26.3	0.6	33.6	100.0	826
35-39	66.2	32.2	1.0	3.7	11.8	0.0	15.5	0.0	0.1	34.0	4.2	29.3	0.6	33.8	100.0	709
40-44	60.9	26.6	0.8	2.9	10.3	0.4	12.1	0.1	0.0	34.4	6.3	27.7	0.4	39.1	100.0	639
45-49	41.7	15.4	1.7	1.9	4.6	0.0	7.2	0.0	0.0	26.4	2.1	24.3	0.0	58.3	100.0	562
Ընդամենը	57.1	28.0	0.7	2.6	8.9	0.2	14.7	0.7	0.1	29.2	3.8	25.0	0.3	42.9	100.0	3,895

Նշում: Եթե օգտագործվում է մեկից ավելի մեթոդ, այս աղյուսակում հաշվարկվում է միայն ամենաարդյունավետ մեթոդը: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

ԼԱՄ = Լակտացիոն ամենորեայի մեթոդ

Արդյունքները ցույց են տալիս, որ վերարտադրողական տարիքում գտնվող ամուսնացած կանանց 57 տոկոսն օգտագործում է հակաբեղմնավորման որևէ մեթոդ: Ամուսնացած կանանց շրջանում ավանդական մեթոդների (29 տոկոս) օգտագործումը մի փոքր ավելի տարածված է, քան ժամանակակից մեթոդների (28 տոկոս) օգտագործումը: Ներկայում ամուսնացած կանանց շրջանում ամենատարածված մեթոդը դեռևս ընդհատված սեռական հարաբերությունն է (25 տոկոս), որին հաջորդում են տղամարդու պահպանակը (15 տոկոս) և ներարգանդային միջոցները (9 տոկոս):

Հակաբեղմնավորման որևէ մեթոդի օգտագործումն աճում է տարիքին զուգընթաց՝ հասնելով իր գագաթնակետին (66 տոկոս) 30-39 տարեկան ներկայում ամուսնացած կանանց շրջանում, ապա նվազում է մինչև 42 տոկոս՝ 45-49 տարեկան կանանց շրջանում: Ինչպես և սպասվում էր, հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը բոլոր կանանց շրջանում (37 տոկոս) ավելի ցածր է,



քան ամուսնացած կանանց (57 տոկոս), քանի որ բոլոր կանանց մեջ ներառված են նաև չամուսնացած և սեռապես ոչ ակտիվ կանայք, ովքեր չունեն հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման կարիք:

### 7.3 ԸՆԹԱՑԻԿ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ

Աղյուսակ 7.3-ում ներկայացված է տեղեկատվություն ներկայում ամուսնացած կանանց շրջանում հակաբեղմնավորման մեթոդների ընթացիկ օգտագործման վերաբերյալ՝ ըստ հիմնական բնութագրիչների: Ընդհանուր առմամբ, Հայաստանում կանայք չեն օգտագործում հակաբեղմնավորման որևէ մեթոդ մինչև առնվազն մեկ երեխա ունենալը: Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման մակարդակը քաղաքաբնակ և գյուղաբնակ ամուսնացած կանանց շրջանում գրեթե նույնն է (համապատասխանաբար 57 և 58 տոկոս): Սակայն, ի տարբերություն գյուղաբնակ կանանց՝ քաղաքաբնակ կանայք ավելի են հակված ժամանակակից մեթոդների օգտագործմանը (համապատասխանաբար 32 և 23 տոկոս):

<b>Աղյուսակ 7.3 Հակաբեղմնավորման մեթոդների ընթացիկ օգտագործումն ըստ հիմնական բնութագրիչների</b>																
15-49 տարեկան ներկայում ամուսնացած կանանց տոկոսային բաշխումն ըստ այն հակաբեղմնավորման մեթոդի, որը նրանք ներկայում օգտագործում են, և ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.																
Հիմնական բնութագրիչներ	Որևէ մեթոդ	Ժամանակակից մեթոդ							Ավանդական մեթոդ							
		Որևէ ժամանակակից	Կնոջ ստերիլացում	Ներարգանդային Ներարգանդային	Տղամարդու պահպանակ	ԼԱՄ	Այլ	Որևէ ավանդական	Ընդհատված սեռական հարաբերություն	Ներկայումս չի օգտագործում	Ընդամենը	Կանանց թվաքանակ				
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>																
0	2.3	0.2	0.0	0.0	0.2	0.0	0.0	0.0	0.0	2.1	0.5	1.6	0.0	97.7	100.0	261
1-2	60.3	31.4	0.5	3.0	10.0	0.3	16.7	0.8	0.2	28.9	4.3	24.1	0.4	39.7	100.0	2,690
3-4	64.1	26.1	1.2	2.5	8.4	0.0	13.5	0.4	0.0	38.1	3.6	34.3	0.2	35.9	100.0	908
5+	(46.7)	(23.9)	(7.2)	(0.0)	(5.0)	(0.0)	(5.4)	(6.3)	(0.0)	(22.7)	(0.0)	(22.7)	(0.0)	(53.3)	100.0	36
<b>Բնակավայր</b>																
Քաղաքային	56.5	31.9	0.7	3.0	9.5	0.3	17.4	0.8	0.2	24.5	4.9	19.3	0.4	43.5	100.0	2,221
Գյուղական	58.1	22.7	0.7	2.2	8.1	0.0	11.2	0.6	0.0	35.3	2.5	32.5	0.3	41.9	100.0	1,674
<b>Մարզ</b>																
Երևան	58.4	40.1	0.9	4.1	11.0	0.6	22.3	1.0	0.2	18.3	6.3	11.6	0.4	41.6	100.0	1,140
Արագածոտն	63.0	35.3	0.0	7.8	8.7	0.0	17.8	1.0	0.0	27.7	0.9	26.8	0.0	37.0	100.0	187
Արարատ	66.1	34.7	1.8	0.8	13.4	0.0	18.1	0.5	0.0	31.4	4.4	26.9	0.1	33.9	100.0	360
Արմավիր	59.7	22.4	0.5	2.3	5.0	0.0	14.6	0.0	0.0	37.3	0.8	35.6	0.9	40.3	100.0	405
Գեղարքունիք	69.7	19.3	0.0	2.1	9.7	0.0	5.4	1.9	0.2	50.5	2.4	47.7	0.4	30.3	100.0	298
Լոռի	60.0	13.4	0.0	2.4	8.0	0.0	3.0	0.0	0.0	46.6	1.5	44.2	0.9	40.0	100.0	214
Կոտայք	55.6	23.2	0.5	0.8	8.8	0.0	12.1	1.0	0.0	32.4	3.9	28.5	0.0	44.4	100.0	476
Շիրակ	40.6	18.7	0.0	2.6	7.1	0.0	8.7	0.3	0.0	22.0	6.5	15.5	0.0	59.4	100.0	349
Սյունիք	20.8	13.1	0.3	0.3	1.2	0.0	10.8	0.4	0.0	7.7	1.3	6.4	0.0	79.2	100.0	172
Վայոց ձոր	68.5	13.4	0.3	0.3	4.8	0.0	7.6	0.4	0.0	55.1	0.7	54.4	0.0	31.5	100.0	87
Տավուշ	60.3	26.8	2.5	1.9	8.8	0.0	12.1	0.3	1.2	33.6	1.1	31.4	1.0	39.7	100.0	208
<b>Կրթություն</b>																
Հիմնական	59.0	20.5	0.0	0.8	4.9	0.0	13.6	1.1	0.0	38.5	1.9	35.7	0.9	41.0	100.0	205
Միջնակարգ	58.1	24.1	1.0	2.3	7.5	0.1	12.4	0.8	0.1	34.0	2.7	31.0	0.3	41.9	100.0	1,669
Միջին մասնագիտ.	56.4	28.4	0.6	2.0	11.1	0.2	13.9	0.2	0.3	28.0	3.8	23.7	0.5	43.6	100.0	953
Բարձրագույն	55.9	35.3	0.5	4.1	9.9	0.2	19.3	1.1	0.2	20.6	6.0	14.4	0.2	44.1	100.0	1,064
<b>Բարեկեցության քվինտիլ</b>																
Ամենացածր	58.6	21.1	0.7	2.2	7.5	0.0	10.2	0.5	0.0	37.6	2.5	34.7	0.4	41.4	100.0	695
Երկրորդ	56.8	24.6	0.6	2.1	8.2	0.0	12.7	0.6	0.3	32.2	2.3	29.6	0.3	43.2	100.0	834
Միջին	54.4	25.2	0.5	2.1	7.5	0.3	13.2	1.3	0.2	29.2	2.4	26.6	0.3	45.6	100.0	721
Չորրորդ	55.2	30.3	0.6	2.5	9.0	0.0	17.3	0.8	0.1	24.9	4.9	19.6	0.4	44.8	100.0	790
Ամենաբարձր	60.4	37.2	1.0	4.2	11.8	0.5	19.2	0.5	0.0	23.2	6.7	16.2	0.4	39.6	100.0	855
<b>Ընդամենը</b>	57.1	28.0	0.7	2.6	8.9	0.2	14.7	0.7	0.1	29.2	3.8	25.0	0.3	42.9	100.0	3,895

Նշում: Եթե օգտագործվում է մեկից ավելի մեթոդ, այս աղյուսակում հաշվարկվում է միայն ամենաարդյունավետ մեթոդը: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Ընդամենը ներառում է առանց որևէ կրթության 4 դեպք (կշռված):  
 ԼԱՄ = Լակտացիոն ամենորեայի մեթոդ

Ըստ մարզերի՝ հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը փոփոխվում է: Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում գրանցվել են հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման ամենաբարձր մակարդակները (համապատասխամաբար 70 և 69 տոկոս), մինչդեռ Սյունիքի մարզում՝ ամենացածրը (21 տոկոս): Ժամանակակից մեթոդների օգտագործման առումով առաջատարը Երևանն է (40 տոկոս): 2010 թ. համեմատությամբ արձանագրվել են հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման հետ կապված մեծ փոփոխություններ. ավանդական մեթոդների (մասնավորապես ընդհատված սեռական հարաբերության) օգտագործումը զգալիորեն աճել է Գեղարքունիքի մարզում և զգալիորեն նվազել՝ Սյունիքի մարզում: Պարզ չէ, սակայն, թե արդյոք այս միտումները ճշգրիտ են, թե սա ուղղակի անոմալիա է, և հետագա ուսումնասիրության անհրաժեշտություն կա:

Չնայած, ընդհանուր առմամբ, հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման մակարդակը մի փոքր նվազում է կնոջ կրթական մակարդակի աճին զուգընթաց, ժամանակակից մեթոդների օգտագործումը, ընդհակառակը, աճում է: Բարձրագույն կրթություն ունեցող կանայք գրեթե կրկնակի անգամ ավելի են հակված հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների օգտագործմանը, քան հիմնական կրթություն ունեցող կանայք (համապատասխանաբար 35 և 21 տոկոս): Այս տարբերությունը մեծապես պայմանավորված է ներարգանդային միջոցների և տղամարդու պահպանակի օգտագործման ավելացմամբ: Ըստ բարեկեցության քվինտիլների՝ հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման ընդհանուր մակարդակը համաչափորեն չի փոփոխվում: Սակայն ժամանակակից մեթոդների օգտագործումը զգալիորեն աճում է տնային տնտեսության բարեկեցության աճին զուգընթաց՝ կազմելով 21 տոկոս բարեկեցության ամենացածր քվինտիլում գտնվող ամուսնացած կանանց շրջանում և 37 տոկոս՝ բարեկեցության ամենաբարձր քվինտիլում գտնվողների շրջանում:

Վերջին տասը տարիների ընթացքում հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման մակարդակը մի փոքր աճել է: 2005-ին այն կազմում էր ամուսնացած կանանց 53 տոկոսը, 2010-ին՝ 55 տոկոսը, իսկ 2015-16-ին՝ 57 տոկոսը, չնայած մակարդակները դեռևս այնքան բարձր չեն, ինչքան 2000-ին, երբ ամուսնացած կանանց 61 տոկոսն օգտագործում էր հակաբեղմնավորման որևէ մեթոդ (Աղյուսակ 7.4 և Գծապատկեր 7.1): Ժամանակակից մեթոդների օգտագործման մակարդակը 2000-ին գրանցված ամուսնացած կանանց 22 տոկոսից սկզբնապես նվազել է մինչև 20 տոկոս 2005-ին, այնուհետև աճել՝ 2010-ին կազմելով 27 տոկոս, իսկ 2015-16-ին՝ 28 տոկոս: Ավանդական մեթոդների օգտագործման մակարդակը 2000-ին գրանցված ամուսնացած կանանց 38 տոկոսից<sup>2</sup> նախ զգալիորեն նվազել է՝ 2010-ին կազմելով 28 տոկոս, իսկ այնուհետև մի փոքր աճել է՝ 2015-16-ին կազմելով 29 տոկոս:

<sup>2</sup> Այս ցուցանիշը տարբերվում է ՀԺԱՀ 2000-ի հիմնական զեկույցում հրապարակված ցուցանիշից (36.7 տոկոս): Տարբերությունը հետևյալն է. 2000 թ. զեկույցի աղյուսակում «Որևէ ավանդական մեթոդ» կատեգորիայում չէր ներառվել «ժողովրդական մեթոդը», ինչն արվել է 2005, 2010 և 2015-16 թթ. զեկույցների աղյուսակների դեպքում:


**Աղյուսակ 7.4 Հակաբեղմնավորման մեթոդների ընթացիկ օգտագործման միտումներ**

15-49 տարեկան ներկայում ամուսնացած կանանց տոկոսային բաշխումն ըստ այն հակաբեղմնավորման մեթոդի, որը նրանք ներկայում օգտագործում են, ըստ մի քանի հետազոտությունների, Հայաստան, 2015-16 թթ.

Մեթոդ	ՀԺԱՀ 2000	ՀԺԱՀ 2005	ՀԺԱՀ 2010	ՀԺԱՀ 2015-16
<b>Որևէ մեթոդ</b>	<b>60.5</b>	<b>53.1</b>	<b>54.9</b>	<b>57.1</b>
<b>Որևէ ժամանակակից մեթոդ</b>	<b>22.3</b>	<b>19.5</b>	<b>27.2</b>	<b>28.0</b>
Կնոջ ստերիլացում	2.7	0.6	0.2	0.7
Հաբեր	1.1	0.8	1.5	2.6
Ներարգանդային միջոցներ	9.4	9.4	9.6	8.9
Տղամարդու պահպանակ	6.9	8.1	14.6	14.7
Այլ ժամանակակից մեթոդ	2.2	0.6	1.3	1.0
<b>Որևէ ավանդական մեթոդ</b>	<b>38.2*</b>	<b>33.6</b>	<b>27.7</b>	<b>29.2</b>
Ռիթմիկ	4.8	3.8	2.4	3.8
Ընդհատված սեռական հարաբերություն	31.9	27.7	24.5	25.0
Այլ	1.5	2.1	0.8	0.3
<b>Ներկայում չի օգտագործում</b>	<b>39.5</b>	<b>46.9</b>	<b>45.1</b>	<b>42.9</b>
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
Կանանց թվաքանակ	4,125	4,044	3,626	3,895

\* Ներառում է «այլ» ավանդական մեթոդներ, ինչպիսիք են ժողովրդական մեթոդները: Այս ցուցանիշը տարբերվում է ՀԺԱՀ 2000-ի հիմնական զեկույցում հրապարակված ցուցանիշից (36.7 տոկոս), քանի որ 2000 թ. զեկույցի աղյուսակում «ժողովրդական մեթոդը» չէր ներառվել «որևէ ավանդական մեթոդ» կատեգորիայում:

**Գծապատկեր 7.1 Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման միտումները ներկայում ամուսնացած կանանց շրջանում**



Վերջին 10 տարիների ընթացքում նախկին ԽՍՀՄ երկրներում և Ալբանիայում իրականացված ԺԱՀ հետազոտությունների տվյալների հետ համեմատած՝ Հայաստանում 15-49 տարեկան ամուսնացած կանանց շրջանում հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների օգտագործման ցուցանիշը (28 տոկոս) ավելի բարձր է, քան Ալբանիայում (11 տոկոս՝ 2008-09 թթ.), Ադրբեջանում (14 տոկոս՝ 2006 թ.) և Տաջիկստանում (26 տոկոս՝ 2012 թ.), սակայն ավելի ցածր է, քան Ուկրաինայում (48 տոկոս՝ 2007 թ.) և Ղրղզստանում (34 տոկոս՝ 2012 թ.): Հայաստանում հակաբեղմնավորման ավանդական մեթոդների օգտագործման ցուցանիշն ամուսնացած կանանց շրջանում (29 տոկոս) ավելի բարձր է, քան Տաջիկստանում (2 տոկոս), Ղրղզստանում (3 տոկոս) և Ուկրաինայում (19 տոկոս), սակայն ավելի ցածր է, քան հարևան Ադրբեջանում (37 տոկոս) (ICF, 2016):

#### **7.4 ԸՆՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ**

Հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների ձեռքբերման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունն օգտակար է ընտանիքի պլանավորման մասնագետների և այն իրականացնողների համար: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում ներկայում որևէ ժամանակակից հակաբեղմնավորման մեթոդ օգտագործող կանանց տրվել է հարց, թե որտեղից են նրանք վերջին անգամ ձեռք բերել այդ մեթոդը: Քանի որ հարցվողները ոչ միշտ է, որ կարող են հստակորեն տարբերակել, թե արդյոք տվյալ աղբյուրը կամ հաստատությունը պետական է, թե մասնավոր, հարցազրուցավարները գրանցել են աղբյուրի կամ հաստատության անվանումը: Այնուհետև, ճշգրտությունն ապահովելու համար, խմբավարը կամ խմբագիրը ճշտում և կողավորում էին այս տեղեկատվությունը:

Աղյուսակ 7.5-ը ցույց է տալիս, որ ժամանակակից մեթոդներ օգտագործող կանանց գրեթե երկու երրորդը ձեռք է բերել մեթոդը մասնավոր հատվածից, որոնց ճնշող մեծամասնությունը, որպես աղբյուր, նշել է դեղատունը, և օգտագործողների միայն մեկ երրորդն է ձեռք բերել մեթոդը պետական հատվածից՝ հատկապես ծննդատնից և պետական հիվանդանոցից: Ձեռքբերման աղբյուրը մեծապես կախված է օգտագործվող մեթոդից: Կանանց ստերիլացում և ներարգանդային միջոցներ օգտագործող գրեթե բոլոր կանայք ձեռք են բերել մեթոդը պետական հատվածից (համապատասխանաբար 98 և 94 տոկոս), մինչդեռ հարբեր և տղամարդու պահպանակ օգտագործող գրեթե բոլոր կանայք՝ մասնավոր հատվածից (համապատասխանաբար 96 և 98 տոկոս): 2010-ից ի վեր՝ մեթոդների բաշխումը պետական և մասնավոր հատվածների միջև շատ քիչ է փոփոխվել:

**Աղյուսակ 7.5 Ժամանակակից հակաբեղմնավորման մեթոդների ձեռքբերման աղբյուր**

15-49 տարեկան հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդներ օգտագործողների տոկոսային բաշխումն ըստ վերջին անգամ մեթոդի ձեռքբերման աղբյուրի և ըստ մեթոդի, Հայաստան, 2015-16 թթ.

Աղբյուր	Կնոջ ստերիլացում	Հարեր	Ներարգանդային միջոցներ	Տղամարդու պահպանակ	Ընդամենը
<b>Պետական հատված</b>	<b>(97.9)</b>	<b>4.5</b>	<b>94.0</b>	<b>1.7</b>	<b>35.0</b>
Հիվանդանոց	(58.8)	1.8	38.6	0.1	14.8
Ծննդատուն	(31.8)	0.3	48.5	0.2	16.9
Ախտորոշիչ կենտրոն	(0.0)	0.6	0.5	0.2	0.3
Կանանց խորհրդատվության կենտրոն	(0.0)	1.9	4.4	0.3	1.8
Պոլիկլինիկա	(0.0)	0.0	1.4	0.2	0.6
Ամբուլատորիա/ընտանեկան բժշկի գրասենյակ	(0.0)	0.0	0.4	0.6	0.4
Այլ պետական առողջապահական հատված	(7.3)	0.0	0.1	0.0	0.2
<b>Մասնավոր առողջապահական հատված</b>	<b>(2.1)</b>	<b>95.5</b>	<b>6.0</b>	<b>98.0</b>	<b>64.8</b>
Հիվանդանոց	(2.1)	0.9	3.4	0.0	1.3
Ծննդատուն	(0.0)	0.0	1.3	0.0	0.4
Ախտորոշիչ կենտրոն	(0.0)	0.0	0.7	0.0	0.2
Կանանց խորհրդատվության կենտրոն	(0.0)	2.4	0.0	0.0	0.2
Պոլիկլինիկա	(0.0)	0.0	0.0	0.3	0.2
ԲՄԿ	(0.0)	0.0	0.0	0.2	0.1
Դեղատուն	(0.0)	92.2	0.6	97.4	62.3
<b>Այլ աղբյուր</b>	<b>(0.0)</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.3</b>	<b>0.2</b>
Ընկեր/բարեկամ	(0.0)	0.0	0.0	0.3	0.2
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0
Կանանց թվաքանակ	29	105	349	586	1,081

Նշում: Ընդամենը ներառում է ժամանակակից այլ մեթոդներ՝ բացի լակտացիոն ամենորեայի մեթոդից (ԼԱՄ): Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

Որպես ՀՏԱՀ 2015-16-ի մաս՝ ներարգանդային միջոցներ օգտագործող կանայք հարցվել են, թե արդյոք վերջին անգամ ներարգանդային միջոց ձեռք բերելիս նրանք վճարել են դրա համար, թե այն տրվել է անվճար: Արդյունքները ցույց են տալիս, որ ներարգանդային միջոցներ օգտագործողների ընդամենը 3 տոկոսն է դրանք ստացել անվճար (տվյալները ցուցադրված չեն): Կանայք նաև հարցվել են, թե արդյոք գիտեն որևէ վայր, որտեղից կարող են անվճար ձեռք բերել հակաբեղմնավորման որևէ մեթոդ: Բոլոր կանանց միայն 3 և ներկայում ամուսնացած կանանց 4 տոկոսն են նշել, որ գիտեն վայր, որտեղից կարող են անվճար ձեռք բերել հակաբեղմնավորման մեթոդ (տվյալները ցուցադրված չեն):

**7.5 ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ**

Տեղեկացված ընտրությունն ընտանիքի պլանավորման ծառայությունների կարևոր ասպեկտ է: Ընտանիքի պլանավորման ծառայություններից օգտվողներն իրավասու են ստանալու տեղեկություններ իրենց նախընտրած հակաբեղմնավորման մեթոդի մասին: Հակաբեղմնավորման մեթոդներ առաջարկողները պարտավոր են օգտագործողներին տեղեկացնել (1) մեթոդի հնարավոր կողմնակի ազդեցությունների մասին, (2) թե ինչպես է պետք վարվել, եթե առաջանան կողմնակի ազդեցություններ կամ խնդիրներ, և (3) հակաբեղմնավորման այլ մեթոդների մասին: Հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդներ օգտագործողները, ովքեր լավ տեղեկացված են այդ մեթոդի կողմնակի ազդեցությունների և խնդիրների մասին և գիտեն այլ մեթոդների մասին ևս, կարող են կատարել նախընտրած մեթոդի տեղեկացված ընտրություն: Այս տեղեկատվությունը

բարելավում է խնամքի և համապատասխանության որակը՝ աջակցելով օգտագործողներին հաղթահարել կողմնակի ազդեցությունները՝ միևնույն ժամանակ կրճատելով օգտագործվող մեթոդների անհարկի դադարեցումները:

Ներկայում հակաբեղմնավորման որևէ ժամանակակից մեթոդ օգտագործողները հարցվել են, թե արդյոք իրենց նախընտրած մեթոդի ընտրության ժամանակ նրանց տեղեկացրել են այն կողմնակի ազդեցությունների կամ խնդիրների մասին, որ կարող էին առաջանալ մեթոդի պատճառով: Աղյուսակ 7.6-ը ցույց է տալիս ներկայում հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդ օգտագործողների այն տոկոսը, ովքեր տեղեկացվել են օգտագործվող մեթոդի կողմնակի ազդեցությունների կամ խնդիրների մասին, տեղեկացվել են, թե ինչպես է պետք վարվել, եթե առաջանան կողմնակի ազդեցություններ կամ խնդիրներ, և տեղեկացվել են հակաբեղմնավորման այլ մեթոդների մասին, որ իրենք կարող են օգտագործել: Այս տվյալները ներկայացված են ստորև՝ ըստ մեթոդի տեսակի և մեթոդի նախնական աղբյուրի:

**Աղյուսակ 7.6 Տեղեկացված ընտրություն**

15-49 տարեկան ներկայում հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդ օգտագործողների շրջանում նրանց տոկոսը, ովքեր մեթոդի օգտագործման վերջին փուլը սկսել են հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում, նրանց տոկոսը, ովքեր տեղեկացվել են օգտագործվող մեթոդի կողմնակի ազդեցությունների կամ խնդիրների մասին, ովքեր տեղեկացվել են, թե ինչպես է պետք վարվել, եթե առաջանան կողմնակի ազդեցություններ կամ խնդիրներ, և ովքեր տեղեկացվել են հակաբեղմնավորման այլ մեթոդների մասին, որ կարող են օգտագործել, ըստ մեթոդի և նախնական աղբյուրի, Հայաստան, 2015-16 թթ.

Մեթոդ/աղբյուր	Այն կանանց շրջանում, ովքեր ժամանակակից մեթոդի օգտագործման վերջին փուլը սկսել են հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում.			
	Տոկոսը, որ տեղեկացվել է օգտագործվող մեթոդի կողմնակի ազդեցությունների կամ խնդիրների մասին	Տոկոսը, որ տեղեկացվել է, թե ինչպես է պետք վարվել, եթե առաջանան կողմնակի ազդեցություններ	Տոկոսը, որ բուժաշխատողի կամ ընտանիքի պահանջարկի մասնագետի կողմից տեղեկացվել է հակաբեղմնավորման այլ մեթոդների մասին	Կանանց թվաքանակ
<b>Մեթոդ</b>				
Հաբեր	68.8	65.9	82.5	62
Ներարգանդային միջոցներ	94.5	92.5	67.8	167
<b>Մեթոդի նախնական աղբյուրը<sup>1</sup></b>				
Պետական հատված	92.9	90.9	70.9	172
Հիվանդանոց	92.6	92.6	85.0	74
Ծննդատուն	94.9	90.3	56.2	74
Մասնավոր առողջապահական հատված	74.2	71.7	76.4	71
Դեղատուն	76.2	73.1	72.3	58
Ընդամենը	87.2	85.1	72.3	243

Նշում: Ընդամենը ներառում է կնոջ ստերիլացում մեթոդն օգտագործողների 7 (չկշռված) և ներարկումներ օգտագործողների 7 դեպք, որոնք առանձին ցույց տրված չեն:  
<sup>1</sup> Ընթացիկ օգտագործումը սկսելու ժամանակ մեթոդի աղբյուրը:

Ժամանակակից մեթոդ օգտագործող տասը կանանցից ինը հայտնել են, որ տեղեկացված են եղել կողմնակի ազդեցությունների մասին (87 տոկոս), և թե ինչպես է պետք վարվել կողմնակի ազդեցություններ ունենալու դեպքում (85 տոկոս): Ներկայում ամուսնացած կանանց տոկոսը, որ տեղեկացվել են կողմնակի ազդեցությունների և դրանց առաջացման դեպքում ձեռնարկվող քայլերի մասին, աճել է՝ 2010-ին գրանցված 69 և 62 տոկոսի համեմատությամբ: Ավելին՝ 2015-16-ին ներկայում ամուսնացած կանանց 72 տոկոսը նշել է, որ տեղեկացված է եղել հակաբեղմնավորման այլ մեթոդների մասին, այսինքն՝ կրկին գրանցվել է աճ՝ 2010-ի 49 տոկոսի համեմատությամբ:

Ներարգանդային միջոցներ օգտագործողներն ավելի հավանական է, որ տեղեկացվեն կողմնակի ազդեցությունների և դրանց առաջացման դեպքում ձեռնարկվող քայլերի մասին, քան

հաբեր օգտագործողները: Մակայն հաբեր օգտագործողներն ավելի հավանական է, որ տեղեկացվեն հակաբեղմնավորման այլ մեթոդների մասին, որ կարող են օգտագործել, քան ներարգանդային միջոցներ օգտագործողները: Կանայք, ովքեր ձեռք են բերում իրենց մեթոդը պետական հատվածի աղբյուրներից, ավելի հավանական է, որ տեղեկություններ են ստանում մեթոդների մասին, քան մասնավոր հատվածից ձեռք բերող կանայք: Օրինակ՝ պետական հատվածից իրենց մեթոդը ձեռքբերած կանանց 90 տոկոսից ավելին տեղեկացվել է օգտագործվող մեթոդի կողմնակի ազդեցությունների և խնդիրների մասին, և այն մասին, թե ինչպես վարվել կողմնակի ազդեցությունների առաջացման դեպքում՝ համեմատած մասնավոր հատվածից իրենց մեթոդը ձեռք բերած կանանց երեք քառորդի հետ: Այս հարաբերակցությունը կարող է կախված լինել մեթոդների տեսակից, որ ձեռք են բերվում պետական կամ մասնավոր հատվածներից: Ներարգանդային միջոցները և կնոջ ստերիլացումը պետական աղբյուրներից ձեռքբերվող հիմնական մեթոդներն են, մինչդեռ մասնավոր աղբյուրներից ձեռքբերվող հիմնական մեթոդները հաբերն ու պահպանակն են (վերջիններս ունեն ամենաքիչ կողմնակի ազդեցությունները): Մեթոդների նման համադրությունը կարող է նաև բացատրել, թե ինչու իրենց մեթոդը մասնավոր հատվածից (հիմնականում հաբեր և պահպանակ) ձեռք բերած կանայք որոշ չափով ավելի հավանական է, որ նշած լինեն, որ իրենց տեղակացրել են հակաբեղմնավորման այլ մեթոդների մասին, քան այն կանայք, ովքեր ձեռք են բերել իրենց մեթոդը պետական հատվածից (հիմնականում ներարգանդային միջոցներ և կնոջ ստերիլացում):

## **7.6 ՀԱԿԱԲԵՂՄԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ՄԿՍԵԼՈՒՑ ՉԵՏՈ 12 ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Վերարտադրողական նպատակները կարող են իրականացվել միայն հակաբեղմնավորման մեթոդների շարունակաբար և ճիշտ օգտագործման շնորհիվ: Ընտանիքի պլանավորման ծրագրեր մշակողների համար էական մտահոգությունն իրենց նախընտրած հակաբեղմնավորման մեթոդի օգտագործումը դադարեցնողների մասնաբաժինն է: Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման դադարեցման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կանանց անհատական հարցաթերթում ներառված «օրացույց» բաժնում նշվել են հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման բոլոր փուլերը, ինչպես նաև օգտագործման դադարեցման պատճառները: Այս տվյալների վերլուծության ժամանակ հետազոտության անցկացման ամսվա և դրան նախորդող երկու ամիսների տվյալներն անտեսվել են՝ դեռևս չբացահայտված հղիությունների հետ կապված շեղումից խուսափելու նպատակով:

Աղյուսակ 7.7-ը ցույց է տալիս 15-49 տարեկան կանանց շրջանում հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը դադարեցնելու տոկոսները՝ մեթոդի օգտագործումն սկսելուց հետո 12 ամիսների ընթացքում: Ընդհանուր առմամբ, հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում հակաբեղմնավորման որևէ մեթոդի օգտագործում սկսած կանանց 32 տոկոսը դադարեցրել է մեթոդը՝ օգտագործումն սկսելուց հետո 12 ամիսների ընթացքում: Մեկ տարվա ընթացքում օգտագործումը դադարեցնելու տոկոսն ամենացածրն է ներարգանդային միջոցներ օգտագործողների շրջանում (2 տոկոս), ամենաբարձրն է ԼԱՄ (99 տոկոս) և ընդհատված սեռական հարաբերություն (30 տոկոս) օգտագործողների շրջանում, իսկ պահպանակ օգտագործողների շրջանում գրանցվել է միջին ցուցանիշ (17 տոկոս): Դադարեցման ցուցանիշի գրեթե մեկ երրորդի դեպքում դադարեցման պատճառն ավելի արդյունավետ մեթոդ օգտագործելու ցանկությունն է:

**Աղյուսակ 7.7 Հակաբեղմնավորման մեթոդի օգտագործումը դադարեցնելու ցուցանիշներն օգտագործումն սկսելուց հետո 12 ամիսների ընթացքում**

15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում սկսել են հակաբեղմնավորման որևէ մեթոդի օգտագործում, և դադարեցման դեպքերի տոկոսը՝ օգտագործումն սկսելուց հետո 12 ամիսների ընթացքում՝ ըստ դադարեցման պատճառի և կոնկրետ մեթոդի, Հայաստան, 2015-16 թթ.

Մեթոդ	Մեթոդի ձևախորոն	Հղիանալու ցանկություն	Մեթոդի պատճառներ <sup>2</sup>	Կողմնակի ազդեցություններ/ առողջական խնդիրներ	Ավելի արդյունավետ մեթոդ օգտագործելու ցանկություն	Մեթոդի հետ կապված այլ պատճառներ <sup>3</sup>	Այլ պատճառներ	Որևէ պատճառ <sup>4</sup>	Փոխել է մեթոդը <sup>5</sup>	Օգտագործման փուլերի քանակը <sup>6</sup>
Ներարգանդային միջոցներ	(0.8)	(0.4)	(0.0)	(0.3)	(0.0)	(0.0)	(0.5)	(2.0)	(0.5)	234
Տղամարդու պահպանակ	3.0	4.3	6.2	0.4	0.8	1.1	0.8	16.5	2.3	560
Լակտացիոն ամենորեայի մեթոդ (ԼԱՄ)	4.1	4.2	4.6	0.8	63.4	16.0	5.8	99.0	74.1	279
Ընդհատված սեռական հարաբերություն	9.7	5.5	10.9	0.0	2.9	0.0	1.0	30.0	2.6	1,026
Այլ <sup>1</sup>	(7.4)	(6.1)	(5.5)	(2.8)	(2.4)	(0.9)	(0.4)	(25.6)	(6.2)	271
Բոլոր մեթոդները	6.4	4.6	7.3	0.6	9.5	2.4	1.4	32.2	11.6	2,377

Նշում: Ցուցանիշները հիմնված են կյանքի աղյուսակների հաշվարկների վրա՝ օգտագործելով հետազոտությանը նախորդող 3-62 ամիսների ընթացքում հակաբեղմնավորման մեթոդի օգտագործման փուլերի մասին տեղեկությունները: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 125-249 չկշռված դեպքերի վրա, երբ կանայք սկսել են մեթոդի օգտագործումը կյանքի աղյուսակի առաջին ամսվա ընթացքում:

<sup>1</sup> Ներառում է հետևյալ մեթոդները՝ հարեր, ներարկումներ, շտապ բեղմնականխում և ռիթմիկ մեթոդ:

<sup>2</sup> Ներառում է հետևյալ պատճառները՝ հազվադեպ սեռ. հարաբերություն/ամուսնու բացակայություն, հղիանալը դժվար է/դաշտանաղաղար (մենպաուզա), ամուսնության անկում/բաժանություն:

<sup>3</sup> Ներառում է հետևյալ պատճառները՝ մատչելի չէ/չափազանց հեռու է, չափազանց թանկ արժեք, հարմար չէ օգտագործման համար:

<sup>4</sup> Դադարեցման պատճառները միմյանց բացառող են և գումարվում են այս սյունակում տրված ընդհանուր թվին:

<sup>5</sup> Այս սյունակում ներառված օգտագործման փուլերը հանդիսանում են դադարեցված փուլերի ենթախումբ (վերջինս ներառված է դադարեցման ցուցանիշի մեջ): Համարվում է, որ կինը փոխել է մեթոդը, եթե նա սկսել է օգտագործել նոր մեթոդ նախորդ մեթոդի դադարեցմանը հաջորդող ամսում, կամ եթե որպես դադարեցման պատճառ նա նշել է «ցանկանում էր ավելի արդյունավետ մեթոդ» և սկսել է օգտագործել նոր մեթոդ նախորդ մեթոդի դադարեցումից հետո երկու ամսվա ընթացքում:

<sup>6</sup> Օգտագործման փուլերի քանակը ներառում է ինչպես օգտագործման այն փուլերը, որոնք դադարեցվել են ուսումնասիրության ժամանակաշրջանում, այնպես էլ նրանք, որոնք չեն դադարեցվել ուսումնասիրության ժամանակաշրջանում:

Համաձայն մեթոդի նկարագրության՝ անհնար է օգտագործել ԼԱՄ-ը 6 ամսից ավելի: Լակտացիոն ամենորեայի մեթոդի (ԼԱՄ) արդյունավետ օգտագործումը նշանակում է, որ կինը բացառապես կամ առավելապես կերակրում է կրծքով, ծննդաբերել է մոտ 6 ամիս առաջ, գտնվում է հետծննդյան ամենորեայի շրջանում, և գիտի, որ անհրաժեշտ է օգտագործել հակաբեղմնավորման որևէ այլ մեթոդ, եթե նախորդ չափորոշիչներից որևէ մեկը չի պահպանվում: Հետևաբար, ակնկալվում է, որ օգտագործումից հետո 12 ամիսների ընթացքում ԼԱՄ-ի դադարեցման տոկոսը պետք է բարձր լինի, սակայն չի ակնկալվում, որ այն պետք է լինի 100 տոկոս: Քանի որ Աղյուսակ 7.7-ում ներկայացված ցուցանիշները հիմնված են կյանքի աղյուսակի հաշվարկների վրա, որի դեպքում օգտագործվում են հետազոտությանը նախորդող 3-62 ամիսների ընթացքում հակաբեղմնավորման մեթոդի օգտագործման փուլերի մասին տեղեկությունները, քիչ թվով ԼԱՄ օգտագործողներ կարող են համարվել մեթոդի իրական օգտագործողներ հարցազրույցի ժամանակ, և միայն այն դեպքում, եթե նրանք սկսել են օգտագործումը հետազոտությունից առաջ 3-5 ամիսների ընթացքում: Օգտագործումից հետո 12 ամիսների ընթացքում մեթոդի դադարեցման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ԼԱՄ-ի համար՝ ԼԱՄ օգտագործողների 99 տոկոսը, որ սկսել էր մեթոդի օգտագործումը հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում, հարցազրույցի պահին այնու չէին օգտագործում այն: Որպես մեթոդի օգտագործման դադարեցման պատճառ ԼԱՄ օգտագործողների 63 տոկոսը նշել է, որ ցանկանում էր ավելի արդյունավետ մեթոդ: Ինչպես և սպասվում էր, ԼԱՄ օգտագործումը դադարեցնողների մեծ մասը (74 տոկոս) սկսել էր օգտագործել այլ մեթոդ:

Աղյուսակ 7.8-ը ցույց է տալիս հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում բոլոր հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման դադարեցման բաշխումն ըստ դադարեցման պատճառի: Հղիանալու ցանկությունն ամենահաճախ նշված պատճառն է՝ կազմվելով բոլոր դադարեցումների մեկ քառորդից մի փոքր ավելին (27 տոկոս): Գրեթե նույն հաճախականությամբ



նշվել է մեթոդի ձախողում պատճառը (հղիացել է մեթոդի օգտագործման ընթացքում)՝ կազմելով դադարեցումների 24 տոկոսը: Մյուս հաճախ նշված պատճառները հետևյալն են՝ հազվադեպ սեռական հարաբերություններ կամ գուգրնկերոջ բացակա լինելը (17 տոկոս) և ավելի արդյունավետ մեթոդ օգտագործելու ցանկությունը (15 տոկոս):

**Աղյուսակ 7.8 Դադարեցման պատճառներ**

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման դադարեցումների տոկոսային բաշխումն ըստ դադարեցման հիմնական պատճառի և ըստ առանձնացված մեթոդների, Հայաստան, 2015-16 թթ.

Պատճառ	Հաբեր	Ներարգանդային միջոց	Տղամարդու պահպանակ	ԼԱՄ	Ռիթմիկ	Ընդհատված սեռ. հարաբերություն	Բոլոր մեթոդները
Հղիացել է մեթոդի օգտագործման ընթացքում	13.1	3.4	16.7	4.1	40.8	34.4	24.1
Ցանկացել է հղիանալ	15.8	44.9	46.1	4.6	35.0	26.1	27.1
Ամուսինը/գուգրնկերը հավանություն չի տվել	0.0	0.0	4.1	4.8	2.9	3.8	3.5
Ցանկանում էր ավելի արդյունավետ մեթոդ	8.4	0.0	4.5	61.4	12.4	7.7	15.3
Կողմնակի ազդեցություններ/ մտավախություն առողջության վերաբերյալ	29.4	33.6	0.9	1.0	0.0	0.0	3.6
Մատչելի չէ/չափազանց հեռու է	1.8	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1
Չափազանց թանկ արժե	0.0	0.0	2.2	0.2	0.0	0.2	0.5
Հարմար չէ օգտագործման համար	5.1	1.9	2.0	16.7	0.9	0.1	3.4
Աստճո կամրով է/ճակատագիր է	0.0	0.0	0.0	0.4	0.0	0.1	0.2
Հղիանալը դժվար է/ դաշտանադադար	5.1	6.7	1.5	0.9	1.2	2.1	2.3
Հազվադեպ սեռ. հարաբ./ ամուսինը բացակա է	18.9	5.2	18.6	4.1	4.1	23.2	17.1
Ամուսնության անկում/բաժանություն	1.4	0.0	1.0	0.2	0.0	0.3	0.4
Այլ	0.9	0.7	0.5	0.3	0.0	0.4	0.4
Տվյալ չկա	0.0	3.5	2.0	1.4	2.6	1.6	1.9
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Դադարեցումների թվաքանակ	67	91	259	239	91	781	1,546

Նշում: Բոլոր մեթոդները ներառում է ներարկումներ օգտագործողների 2 կշռված դեպք, շտապ բեղմնակահխում օգտագործողների 4 դեպք և այլ մեթոդներ օգտագործողների 13 դեպք:  
 ԼԱՄ = Լակտացիոն ամենորեայի մեթոդ

Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը դադարեցնելու պատճառները տարբերվում են՝ կախված մեթոդից: Օրինակ՝ ռիթմիկ մեթոդը և ընդհատված սեռական հարաբերություն մեթոդն օգտագործողները որպես դադարեցման պատճառ ամենաշատը նշել են մեթոդի ձախողումը, ընդ որում՝ ռիթմիկ մեթոդի օգտագործումը դադարեցնողների 41 և ընդհատված սեռական հարաբերության օգտագործումը դադարեցնողների 34 տոկոսը նշել են, որ պատճառը եղել է մեթոդի օգտագործման ընթացքում հղիանալը: Պահպանակների (46 տոկոսը) և ներարգանդային միջոցների (45 տոկոս) օգտագործումը դադարեցնելու հիմնական պատճառը եղել է հղիանալու ցանկությունը: Կողմնակի ազդեցությունները և առողջության վերաբերյալ մտավախությունները հանդիսանում են հաբերի օգտագործումը դադարեցնելու հիմնական պատճառը, որի մասին նշել է կանանց 29 տոկոսը: ԼԱՄ օգտագործողները, որպես դադարեցման հիմնական պատճառ, նշել են ավելի արդյունավետ մեթոդ օգտագործելու ցանկությունը (61 տոկոս), իսկ նրանց 17 տոկոսը դադարեցրել է մեթոդը՝ օգտագործման անհարմարության հետ կապված:

Ռիթմիկ մեթոդի և ընդհատված սեռական հարաբերության ցածր արդյունավետությունը հիմնավորվում է օգտագործման ընթացքում մեթոդի ձախողման բարձր ցուցանիշներով: Ինչպես արդեն նշվել է, ընդհատված սեռական հարաբերությունը հակաբեղմնավորման ամենատարածված մեթոդն է Հայաստանում: Այն օգտագործվում է ներկայում ամուսնացած կանանց 25 տոկոսի կողմից, ինչը կազմում է օգտագործվող հակաբեղմնավորման մեթոդների մոտ կեսը: Ջարմանալի է, որ ձախողման նման բարձր ցուցանիշ ունեցող մեթոդն օգտագործվում է հայ կանանց զգալի մասի կողմից, ովքեր փորձում են կառավարել իրենց վերարտադրողականությունը:

## 7.7 ՊՏՂԱԲԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերարտադրողականության ֆիզիոլոգիայի վերաբերյալ հիմնական գիտելիքները հատկապես օգտակար են սեռական հարաբերության հետ կապված մեթոդների արդյունավետ օգտագործման համար, ինչպիսիք են ընդհատված սեռական հարաբերությունը, պահպանակը, ներարգանդային միջոցները, և պտղաբերության իմացության հետ կապված մեթոդների արդյունավետ օգտագործման համար, որոնք միասին անվանում են ժամանակավոր ինքնազսպման, ռիթմիկ կամ օրացուցային մեթոդ: Կնոջ դաշտանային ցիկլի ընթացքում պտղաբեր ժամանակահատվածի իմացությունը հատկապես կարևոր է ռիթմիկ մեթոդի դեպքում, և ընտանիքի բնական պլանավորման հաջողությունը կախված է այն գիտելիքից, թե դաշտանային ցիկլի ընթացքում երբ է ավելի հավանական, որ կինը կհղիանա:

ՀԺԱՀ 2015-16-ում ներառված էր հարց՝ պարզելու համար հարցվողների իմացությունն այն մասին, թե դաշտանային ցիկլի ընթացքում երբ է ավելի հավանական, որ կինը կհղիանա: Բոլոր կանանց տրվել է հետևյալ հարցը. «Մի դաշտանից մինչև հաջորդն ընկած ժամանակահատվածում կա՞ն որոշակի օրեր, երբ կինը հղիանալու ավելի մեծ հավանականություն ունի»: Եթե պատասխանը «այո» է եղել, նրանց տրվել է հաջորդ հարցն այն մասին, թե՞ որոնք են այդ օրերը՝ դաշտանից առաջ, դաշտանի օրերին, դաշտանի ավարտից անմիջապես հետո, թե՞ երկու դաշտանների մեջտեղում: Աղյուսակ 7.9-ը ցույց է տալիս 15-49 տարեկան բոլոր կանանց և ներկայում ռիթմիկ մեթոդ օգտագործող կանանց արդյունքները:

**Աղյուսակ 7.9 Պտղաբեր ժամանակահատվածի իմացություն**

15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումն ըստ դաշտանային ցիկլի ընթացքում պտղաբեր ժամանակահատվածի իմացության և ըստ ռիթմիկ մեթոդի ընթացիկ օգտագործման, Հայաստան, 2015-16 թթ.

Պտղաբեր ժամանակահատվածի ընկալում	Ռիթմիկ մեթոդ օգտագործողներ	Ռիթմիկ մեթոդ չօգտագործողներ	Բոլոր կանայք
Դաշտանի սկսվելուց անմիջապես առաջ	5.4	3.1	3.2
Դաշտանի օրերին	0.0	0.1	0.1
Դաշտանի ավարտից անմիջապես հետո	13.4	19.5	19.3
Երկու դաշտանների մեջտեղում	77.2	48.9	49.6
Այլ	0.0	0.1	0.1
Չկա հատուկ ժամանակահատված	3.2	2.3	2.3
Չգիտի	0.8	25.9	25.3
Ընդամենը	100.0	100.0	100.0
Կանանց թվաքանակ	150	5,966	6,116

15-49 տարեկան բոլոր կանանց կեսը ճիշտ է սահմանել պտղաբեր ժամանակահատվածը, այն է՝ երկու դաշտանների մեջտեղում: Սակայն կանանց մեկ քառորդը պատասխանել է, որ չգիտի, թե երբ կինը հղիանալու ավելի մեծ հավանականություն ունի: Ռիթմիկ մեթոդն օգտագործող կանանց շրջանում պտղաբեր ժամանակահատվածի իմացությունն ամենաբարձրն է. նրանց 77 տոկոսը ճիշտ է սահմանել պտղաբեր ժամանակահատվածը:

2010-ից ի վեր՝ պտղաբեր ժամանակահատվածի մասին իմացության մակարդակն աճել է: Ընդհանուր առմամբ, այն կանանց մասնաբաժինը, ովքեր գիտեն, որ երկու դաշտանների մեջտեղում կնոջ հղիանալու հավանականությունը ավելի մեծ է, 2010-ի 32 տոկոսից աճել է մինչև 50 տոկոս՝ 2015-16-ին: Ռիթմիկ մեթոդն օգտագործող կանանց մասնաբաժինը, ովքեր ճիշտ են սահմանել պտղաբեր ժամանակահատվածը, 2010-ի 71 տոկոսից աճել է մինչև 77 տոկոս՝ 2015-16-ին:

## 7.8 ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԻՔ

Մայրական առողջությամբ զբաղվող ծառայությունների նպատակներից է բացահայտել բնակչության մեջ այն կանանց թվաքանակը, ովքեր ունեն ընտանիքի պլանավորման ծառայությունների կարիք և հակաբեղմնավորման մեթոդների չբավարարված կարիք: Ընտանիքի պլանավորման չբավարարված կարիքը վերաբերում է վերարտադրողական տարիքի այն կանանց, ովքեր չեն օգտագործում հակաբեղմնավորման մեթոդներ, բայց ցանկանում են հետաձգել իրենց հաջորդ հղիությունը կամ այլևս երեխաներ չունենալ: Մասնավորապես՝ համարվում է, որ կանայք ունեն չբավարարված կարիք՝ իրենց հաջորդ հղիությունը հետաձգելու հետ կապված, եթե նրանք՝

- ունեն հղիանալու հավանականություն, չեն օգտագործում հակաբեղմնավորման մեթոդներ, չեն ցանկանում հղիանալ հաջորդ 2 տարիների ընթացքում կամ համոզված չեն, թե երբ են ցանկանում հղիանալ, կամ արդյոք ցանկանում են հղիանալ, թե ոչ.
- ունեն անժամանակ հղիություն.
- անժամանակ հղիությունից հետո մինչև 2 տարի գտնվում են հետծննդյան ամենորեայի շրջանում և չեն օգտագործում հակաբեղմնավորման մեթոդներ:

Համարվում է, որ կանայք ունեն չբավարարված կարիք՝ այլևս երեխաներ չունենալու հետ կապված, եթե նրանք՝

- ունեն հղիանալու հավանականություն, չեն օգտագործում հակաբեղմնավորման մեթոդներ և (այլև) չեն ցանկանում երեխաներ ունենալ.
- ունեն անցանկալի հղիություն.
- անցանկալի հղիությունից հետո մինչև 2 տարի գտնվում են հետծննդյան ամենորեայի շրջանում և չեն օգտագործում հակաբեղմնավորման մեթոդներ:

Կանայք, ովքեր անպտուղ են, չունեն ընտանիքի պլանավորման չբավարարված կարիք, քանի որ չունեն հղիանալու հավանականություն:

Հակաբեղմնավորման մեթոդներ օգտագործող կանանց դեպքում համարվում է, որ ընտանիքի պլանավորման կարիքը բավարարված է: Կանայք, ովքեր օգտագործում են հակաբեղմնավորման մեթոդներ և ասում են, որ (այլև) չեն ցանկանում ունենալ երեխաներ, համարվում է, որ ունեն բավարարված կարիք՝ այլևս երեխաներ չունենալու հետ կապված, և կանայք, ովքեր օգտագործում են հակաբեղմնավորման մեթոդներ և ասում են, որ ցանկանում են հետաձգել իրենց հաջորդ հղիությունը կամ համոզված չեն, թե երբ են ցանկանում հղիանալ, կամ արդյոք ցանկանում են հղիանալ, թե ոչ, համարվում է, որ ունեն բավարարված կարիք՝ իրենց հաջորդ հղիությունը հետաձգելու հետ կապված:

Ընտանիքի պլանավորման չբավարարված կարիքը, ընդհանուր պահանջը, բավարարված պահանջի տոկոսը և ժամանակակից մեթոդներով բավարարված պահանջի տոկոսը սահմանվում են հետևյալ կերպ.

- **չբավարարված կարիք.** հղիությունը հետաձգելու չբավարարված կարիքի և այլևս չհղիանալու չբավարարված կարիքի գումարը,
- **ընտանիքի պլանավորման ընդհանուր պահանջ.** չբավարարված կարիքի և հակաբեղմնավորման մեթոդների ընդհանուր օգտագործման գումարը,
- **բավարարված պահանջի տոկոս.** հակաբեղմնավորման մեթոդների ընդհանուր օգտագործումը՝ բաժանած չբավարարված կարիքի և հակաբեղմնավորման մեթոդների ընդհանուր օգտագործման գումարի վրա,
- **ժամանակակից մեթոդներով բավարարված պահանջի տոկոս.** հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների օգտագործումը՝ բաժանած չբավարարված կարիքի և հակաբեղմնավորման մեթոդների ընդհանուր օգտագործման գումարի վրա:

Ընտանիքի պլանավորման չբավարարված կարիքի սահմանումը վերանայվել է՝ չբավարարված կարիքի մակարդակները ժամանակի ընթացքում և տարբեր հետազոտությունների կտրվածքով համեմատելի դարձնելու համար (Bradley et al. 2012): Սահմանման մեջ արված փոփոխությունը, որ ամենամեծ ազդեցությունն ունի չբավարարված կարիքի մակարդակների վրա, հակաբեղմնավորման օրացույցում հավաքագրված տեղեկատվության բացառումն է, որը ներառված չի եղել բոլոր երկրներում անցկացվող ԺԱՀ հետազոտություններում: Նախկինում այն

հետազոտություններում, որտեղ ներառված է եղել օրացույց, չէր համարվում, որ մեթոդի ձախողման պատճառով հղիացած կամ հետծննդյան ամենօրեայի շրջանում գտնվող կանայք ունեն հակաբեղմնավորման մեթոդների չբավարարված կարիք, անգամ եթե նրանց վերջին հղիությունը/ծնունդը եղել է անցանկալի կամ անժամանակ: Եվ հակառակը, եթե հետազոտության շրջանակում օրացույցում չէր հավաքագրվում տեղեկատվություն մեթոդի ձախողման վերաբերյալ, համարվում էր, որ բոլոր հղի և հետծննդյան ամենօրեայի շրջանում գտնվող կանայք, ում վերջին հղիությունը/ծնունդը եղել է անցանկալի կամ անժամանակ, ունեն հակաբեղմնավորման մեթոդների չբավարարված կարիք: Այս երկու տեսակի հետազոտություններում չբավարարված կարիքի սահմանումը համեմատելի դարձնելու համար, չբավարարված կարիքի կարգավիճակը որևէ կնոջ համար որոշելիս, նոր սահմանման մեջ չի ներառվում հակաբեղմնավորման մեթոդի ձախողման վերաբերյալ տեղեկատվությունը: Հաշվարկների մեջ հակաբեղմնավորման մեթոդների ձախողման վերաբերյալ տվյալները չներառելը կարող է հանգեցնել չբավարարված կարիքի մակարդակի մի փոքր աճի՝ տեղափոխելով մեթոդի ձախողման կատեգորիայում գտնվող կանանց դեպի չբավարարված կարիք ունեցողների կատեգորիա: Վերանայված սահմանումն օգտագործվել է ընտանիքի պլանավորման կարիք ունեցող կանանց որոշելու համար (Աղյուսակ 7.10):

Աղյուսակ 7.10-ում ներկայացված է ընտանիքի պլանավորման ծառայությունների չբավարարված կարիքը, բավարարված կարիքը և ընդհանուր պահանջը ներկայում ամուսնացած կանանց համար: Ընդհանուր առմամբ, ներկայում ամուսնացած կանանց 13 տոկոսն ունի ընտանիքի պլանավորման չբավարարված կարիք, որը հավասարապես բաշխված է հղիությունը հետաձգելու չբավարարված կարիքի (6 տոկոս) և այլևս չհղիանալու չբավարարված կարիքի (6 տոկոս) միջև: Կանանց կեսից ավելին (57 տոկոս) ունի ընտանիքի պլանավորման բավարարված կարիք, քանի որ նրանք ներկայում օգտագործում են հակաբեղմնավորման որևէ մեթոդ: Եթե բոլոր ամուսնացած կանայք, ովքեր նշել են, որ ցանկանում են հետաձգել հղիությունը կամ այլևս երեխաներ չունենալ, օգտագործեին հակաբեղմնավորման որևէ մեթոդ, ապա հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման ցուցանիշը կաճեր մինչ 70 տոկոս (ընտանիքի պլանավորման ընդհանուր պահանջ): Ներկայում ամուսնացած կանանց ընտանիքի պլանավորման կարիքի 82 տոկոսը բավարարված է, որի կեսից պակասը բավարարված է ժամանակակից մեթոդներով (40 տոկոս): Ընտանիքի պլանավորման ընդհանուր պահանջն ավելի շատ բաղկացած է չհղիանալու պահանջից (45 տոկոս), իսկ հղիությունը հետաձգելու պահանջը կազմում է ընդհանուր պահանջի ընդամենը 25 տոկոսը:

Չբավարարված կարիքն ամենաբարձրն է 20-24 տարեկան ամուսնացած կանանց շրջանում (20 տոկոս): Ըստ բնակության վայրի, կրթության մակարդակի և բարեկեցության քվինտիլի՝ չբավարարված կարիքի տարբերությունները շատ փոքր են: Մակայն ըստ մարզերի այն էապես տարբերվում է՝ սկսած Արագածոտնի մարզում ամուսնացած կանանց 5 տոկոսից մինչև Շիրակի մարզում գրանցված 22 տոկոսը:

**Աղյուսակ 7.10 Ընտանիքի պլանավորման կարիքը և պահանջը ներկայում ամուսնացած կանանց շրջանում**

15-49 տարեկան ներկայում ամուսնացած այն կանանց տոկոսը, ովքեր ունեն ընտանիքի պլանավորման չբավարարված կարիք, տոկոսը, ովքեր ունեն ընտանիքի պլանավորման բավարարված կարիք, ընտանիքի պլանավորման ընդհանուր պահանջը և ընտանիքի պլանավորման պահանջի այն տոկոսը, որը բավարարված է, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

	Ընտանիքի պլանավորման չբավարարված կարիք			Ընտանիքի պլանավորման բավարարված կարիք (ներկայում օգտագործող)			Ընտանիքի պլանավորման ընդհանուր պահանջ <sup>1</sup>			Ժամանակակից մեթոդներով բավարարված պահանջի տոկոսը <sup>2</sup>		Կանանց թվաքանակ
	Հղիությունը հետաձգելու համար	Չհղիանալու համար	Ընդամենը	Հղիությունը հետաձգելու համար	Չհղիանալու համար	Ընդամենը	Հղիությունը հետաձգելու համար	Չհղիանալու համար	Ընդամենը	Բավարարված պահանջի տոկոսը <sup>2</sup>	Բավարարված պահանջի տոկոսը <sup>3</sup>	
<b>Սարք</b>												
15-19	(9.3)	(0.0)	(9.3)	(28.1)	(4.3)	(32.4)	(37.4)	(4.3)	(41.7)	(77.7)	(52.5)	33
20-24	19.4	1.1	20.4	36.2	6.3	42.5	55.6	7.4	63.0	67.6	35.6	365
25-29	12.3	3.3	15.6	38.0	17.0	55.0	50.3	20.3	70.6	77.9	40.9	761
30-34	5.9	4.2	10.1	25.9	40.5	66.4	31.8	44.7	76.5	86.8	47.1	826
35-39	2.6	8.7	11.2	9.2	57.0	66.2	11.8	65.6	77.5	85.5	41.6	709
40-44	0.8	7.7	8.5	2.6	58.4	60.9	3.4	66.1	69.5	87.7	38.2	639
45-49	0.0	13.1	13.1	0.8	40.9	41.7	0.8	54.0	54.8	76.2	28.0	562
<b>Բնակավայր</b>												
Քաղաքային	6.2	7.4	13.6	19.7	36.7	56.5	26.0	44.1	70.1	80.5	45.6	2,221
Գյուղական	6.0	5.0	11.0	17.5	40.6	58.1	23.5	45.5	69.0	84.1	32.9	1,674
<b>Սարգ</b>												
Երևան	6.0	7.1	13.1	19.6	38.8	58.4	25.6	45.9	71.5	81.6	56.1	1,140
Արագածոտն	2.7	1.7	4.5	23.9	39.1	63.0	26.6	40.8	67.4	93.4	52.4	187
Արարատ	5.7	1.9	7.7	21.3	44.9	66.1	27.0	46.8	73.8	89.6	47.1	360
Արմավիր	5.8	5.4	11.2	17.1	42.5	59.7	22.9	48.0	70.8	84.2	31.6	405
Գեղարքունիք	2.8	4.7	7.5	9.9	59.8	69.7	12.7	64.5	77.3	90.3	24.9	298
Լոռի	7.7	4.3	12.0	16.5	43.5	60.0	24.3	47.8	72.1	83.3	18.6	214
Կոտայք	7.8	7.2	15.0	26.5	29.1	55.6	34.3	36.3	70.6	78.7	32.9	476
Շիրակ	7.5	14.7	22.2	14.5	26.1	40.6	22.1	40.8	62.9	64.6	29.7	349
Սյունիք	9.4	7.9	17.3	9.2	11.6	20.8	18.7	19.5	38.1	54.6	34.3	172
Վայոց ձոր	1.2	4.3	5.5	20.6	48.0	68.5	21.8	52.2	74.0	92.6	18.1	87
Տավուշ	7.6	4.3	11.8	20.1	40.2	60.3	27.7	44.5	72.2	83.6	37.1	208
<b>Կրթություն</b>												
Հիմնական	6.8	6.7	13.5	14.1	44.9	59.0	20.9	51.6	72.5	81.4	28.3	205
Միջնակարգ	5.9	6.1	12.0	17.2	40.9	58.1	23.1	47.0	70.2	82.8	34.3	1,669
Միջին մասնագիտակ.	5.7	6.2	11.9	16.3	40.1	56.4	22.0	46.4	68.3	82.5	41.6	953
Բարձրագույն	6.8	6.8	13.6	24.4	31.5	55.9	31.2	38.3	69.5	80.4	50.8	1,064
<b>Բարեկեցության քվինտիլ</b>												
Ամենացածր	6.8	5.9	12.7	17.2	41.4	58.6	24.0	47.3	71.3	82.2	29.5	695
Երկրորդ	6.4	5.3	11.7	17.4	39.4	56.8	23.8	44.7	68.5	82.9	35.9	834
Միջին	6.3	7.3	13.6	18.1	36.3	54.4	24.4	43.6	68.0	80.0	37.0	721
Չորրորդ	5.8	5.9	11.7	18.4	36.8	55.2	24.3	42.6	66.9	82.5	45.3	790
Ամենաբարձր	5.5	7.5	13.0	22.3	38.1	60.4	27.8	45.6	73.4	82.3	50.6	855
Ընդամենը	6.1	6.4	12.5	18.8	38.4	57.1	24.9	44.7	69.6	82.1	40.2	3,895

Նշում: Այս աղյուսակում ներկայացված թվերը համապատասխանում են չբավարարված կարիքի նոր վերանայված սահմանմանը (Bradley et al. 2012): Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Ընդամենը ներառում է նաև առանց որևէ կրթության 4 (կշռված) դեպք:

<sup>1</sup> Ընդհանուր պահանջը չբավարարված և բավարարված կարիքի գումարն է:


<sup>2</sup> Բավարարված պահանջի տոկոսը հավասար է բավարարված կարիքը բաժանած ընդհանուր պահանջի վրա:

<sup>3</sup> Ժամանակակից մեթոդներն են կնոջ ստերիլացում, տղամարդու ստերիլացում, հաբեր, ներարգանդային միջոցներ, ներարկումներ, իմպլանտներ, տղամարդու պահպանակ, շտապ բեղմնականխում, լակտացիոն ամենորեայի մեթոդ (ԼԱՄ) և այլ ժամանակակից մեթոդներ:

ՀԺԱՀ 2000-ի, 2005-ի և 2010-ի համեմատությամբ՝ չբավարարված կարիքը որոշ չափով նվազել է, մասնավորապես՝ 2005-ից ի վեր (Գծապատկեր 7.2)<sup>3</sup>: Փոփոխությունն ամբողջությամբ չհղիանալու չբավարարված կարիքի նվազման հետևանքով է: 2005-ից ի վեր ընտանիքի պլանավորման ընդհանուր պահանջը բավական կայուն է մնացել՝ ամուսնացած կանանց մոտ 70 տոկոսը:

<sup>3</sup> Գծապատկեր 7.2-ի բոլոր թվերը վերահաշվարկվել են՝ օգտագործելով չբավարարված կարիքի վերանայված սահմանումը, և տարբերվում են նախորդ հետազոտություններից յուրաքանչյուրի հիմնական զեկույցում հրապարակված թվերից:

**Գծապատկեր 7.2 Ընտանիքի պլանավորման չբավարարված կարիքի միտումները**



**7.9 ՀԱԿԱԲԵՂՄԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԳԱՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ**

Վերարտադրողական տարիքին զուգընթաց՝ հակաբեղմնավորման մեթոդների կարիքներն ու օգտագործումը կանանց մոտ փոփոխվում է: Հարցման պահին հակաբեղմնավորման մեթոդ չօգտագործող ամուսնացած կանայք հարցվել են, թե արդյոք նրանք մտադիր են ապագայում օգտագործել ընտանիքի պլանավորման մեթոդներ: Արդյունքները ներկայացված են Աղյուսակ 7.11-ում:

**Աղյուսակ 7.11 Հակաբեղմնավորման մեթոդների հետագա օգտագործում**

15-49 տարեկան ներկայում ամուսնացած այն կանանց տոկոսային բաշխումը, ովքեր չեն օգտագործում հակաբեղմնավորման մեթոդ, ըստ ապագայում որևէ մեթոդ օգտագործելու մտադրության և ըստ կենդանի երեխաների թվաքանակի, Հայաստան, 2015-16 թթ.

Մտադրություն	Կենդանի երեխաների թվաքանակ <sup>1</sup>					Ընդամենը
	0	1	2	3	4+	
Մտադիր է օգտագործել	25.2	33.6	20.0	14.9	9.3	22.4
Վստահ չէ	39.8	37.2	30.4	26.4	17.0	31.8
Մտադիր չէ օգտագործել	34.6	28.6	49.4	58.7	73.7	45.5
Տվյալ չկա	0.3	0.6	0.2	0.0	0.0	0.3
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Կանանց թվաքանակ	189	400	707	297	75	1,669

<sup>1</sup> Ներառում է ընթացիկ հղիությունը:

Ներկայում ամուսնացած և հակաբեղմնավորման մեթոդներ չօգտագործող կանանց 22 տոկոսը նշել է, որ մտադիր է ապագայում օգտագործել հակաբեղմնավորման որևէ մեթոդ, որը գրեթե նույնական է ՀԺԱՀ 2010-ի արդյունքներով գրանցված 23 տոկոսի հետ, սակայն ՀԺԱՀ 2005-ի 29 տոկոսի համեմատությամբ գրանցվել է անկում: Մեկ երեխա ունեցող և հակաբեղմնավորման մեթոդներ չօգտագործող կանանց մեկ երրորդը (34 տոկոս) նշել է, որ մտադիր է ապագայում օգտագործել հակաբեղմնավորման որևէ մեթոդ: Այս կանայք ավելի շատ են հակված ապագայում հակաբեղմնավորման մեթոդներ օգտագործելուն, քան երեխա չունեցող կամ երկու կամ ավելի կենդանի երեխա ունեցող կանայք: Ինչքան ավելի շատ երեխաներ ունի կինը, այնքան ավելի շատ է հակված ապագայում հակաբեղմնավորման մեթոդներ չօգտագործելուն:

## **7.10 ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՁԻՅՑՈՒԹՅՈՒՆԸ**

Զանգվածային լրատվամիջոցները (ԶԼՄ) հնարավորություն են ընձեռում ընտանիքի պլանավորման վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի դարձնել բնակչության լայն զանգվածներին: Լրատվամիջոցների ազդեցության մակարդակի մասին տեղեկատվությունը կարևոր է ծրագրեր մշակողների և իրականացնողների համար՝ բնակչության թիրախային ենթախմբերն առավել արդյունավետ բացահայտելու և տեղեկատվական, կրթական ու հաղորդակցական արշավներ կազմակերպելու համար: Ընտանիքի պլանավորման վերաբերյալ ԶԼՄ-ների միջոցով տեղեկատվության ազդեցությունը գնահատելու համար հարցվողները պատասխանել են, թե արդյոք նրանք լսել, տեսել կամ ստացել են ընտանիքի պլանավորման վերաբերյալ որևէ հաղորդագրություն ռադիոյով, հեռուստատեսությամբ, թերթերում կամ ամսագրերում, բջջային հեռախոսով կամ համացանցում հետազոտությանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում: 15-49 տարեկան կանանց և տղամարդկանց շրջանում ԶԼՄ-ների միջոցով ընտանիքի պլանավորման մեթոդների վերաբերյալ տեղեկատվության ազդեցությունը ցույց է տրված Աղյուսակ 7.12.1-ում և 7.12.2-ում, համապատասխանաբար:

Կանանց շրջանում համացանցն ընտանիքի պլանավորման մասին տեղեկատվություն ստանալու ամենատարածված աղբյուրն է: Բոլոր կին հարցվողների մեկ քառորդը հետազոտությանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում հակաբեղմնավորման մեթոդների մասին տեղեկատվություն է ստացել համացանցի միջոցով: Գրեթե նույնքան կանայք (22 տոկոս) տեսել են ընտանիքի պլանավորման մասին հաղորդագրություն հեռուստացույցով: Թերթերն ու ամսագրերն ընտանիքի պլանավորման մասին տեղեկատվություն ստանալու տարածված աղբյուրներ չեն (10 տոկոս): Որպես տեղեկատվության աղբյուր՝ կանայք ամենաքիչը նշել են ռադիոյի մասին. կանանց ընդամենը 3 տոկոսն է նշել, որ լսել է ընտանիքի պլանավորման մասին հաղորդագրություն ռադիոյով հետազոտությանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում:

**Աղյուսակ 7.12.1 Ընտանիքի պլանավորման հաղորդագրությունների ազդեցությունը, կանայք**

15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր լսել, տեսել կամ ստացել են ընտանիքի պլանավորման մասին հաղորդագրություններ ռադիոյով, հեռուստատեսությամբ, թերթերում կամ ամսագրերում, բջջային հեռախոսով կամ համացանցում հետազոտությանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կանայք						Կանանց թվաքանակ
	Ռադիո	Հեռուստատեսություն	Թերթ/ամսագիր	Բջջային հեռախոս	Ինտերնետ	Այս հինգ միջոցներից ոչ մեկը	
<b>Տարիք</b>							
15-19	1.7	15.1	8.7	3.6	21.0	72.6	725
20-24	2.6	18.6	11.5	3.3	26.9	66.3	928
25-29	4.3	23.5	12.0	3.6	28.6	62.7	1,099
30-34	3.1	27.6	10.4	3.7	27.6	60.2	1,007
35-39	2.8	25.9	9.1	3.6	25.8	61.8	867
40-44	2.3	20.9	9.5	3.1	21.9	67.9	784
45-49	1.4	20.7	10.2	1.9	15.8	72.4	706
<b>Բնակավայր</b>							
Քաղաքային	3.6	23.5	13.1	4.2	30.1	61.2	3,657
Գյուղական	1.4	20.1	6.2	2.0	16.3	72.4	2,459
<b>Մարզ</b>							
Երևան	5.4	20.6	14.2	4.7	33.9	60.2	2,001
Արագածոտն	0.5	14.3	5.3	3.4	23.4	70.7	315
Արարատ	1.3	16.7	5.0	1.1	8.0	77.2	552
Արմավիր	0.0	3.2	0.3	0.0	5.7	92.0	586
Գեղարքունիք	0.0	16.5	4.0	0.4	14.8	76.4	478
Լոռի	0.6	18.3	5.4	1.6	17.3	74.7	355
Կոտայք	4.7	26.9	14.3	0.0	25.6	58.6	678
Շիրակ	1.8	28.2	8.4	1.7	21.5	66.0	510
Սյունիք	2.4	67.8	19.2	21.4	55.4	20.0	238
Վայոց ձոր	0.0	17.6	5.6	3.8	20.3	71.8	119
Տավուշ	0.0	46.7	25.2	6.5	35.6	44.5	283
<b>Կրթություն</b>							
Հիմնական	0.5	6.8	2.4	1.8	6.5	88.0	396
Միջնակարգ	1.2	19.0	4.9	2.2	14.7	73.7	2,444
Միջին մասնագիտական	2.4	26.7	11.1	3.2	27.5	61.3	1,360
Բարձրագույն	5.4	26.1	18.4	5.1	38.9	53.8	1,910
<b>Բարեկեցության քվինտիլ</b>							
Ամենացածր	0.6	12.8	4.1	1.3	10.9	81.0	1,081
Երկրորդ	1.9	24.5	7.8	2.3	18.7	67.0	1,242
Միջին	1.6	24.7	8.8	2.8	23.3	65.2	1,142
Չորրորդ	3.2	22.7	13.5	3.6	31.1	60.7	1,287
Ամենաբարձր	5.6	24.7	15.8	6.0	35.6	57.4	1,365
Ընդամենը	2.7	22.1	10.3	3.3	24.5	65.7	6,116

Նշում: Ընդամենը ներառում է առանց կրթության 5 դեպք (կին):

Տղամարդիկ ավելի քիչ են նշել, որ հետազոտությանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում տեսել, լսել կամ ստացել են ընտանիքի պլանավորման մասին հաղորդագրություններ, ընդ որում՝ սա ճիշտ է բոլոր տեսակի աղբյուրների համար: Օրինակ, եթե կանանց 22 տոկոսն էր նշել, որ տեսել է ընտանիքի պլանավորման մասին հաղորդագրություն հեռուստացույցով, ապա տղամարդկանց 14 տոկոսն է նշել այս աղբյուրի մասին: Ընդհանուր առմամբ, տղամարդկանց գրեթե երեք քառորդն առանձնացված հինգ աղբյուրներից և ոչ մեկով չի տեսել և չի լսել ընտանիքի պլանավորման մասին ոչ մի հաղորդագրություն՝ համեմատած կանանց երկու երրորդի հետ: Ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց շրջանում համացանցն ընտանիքի պլանավորման մասին տեղեկատվություն ստանալու ամենատարածված աղբյուրն է (19 տոկոս):



**Աղյուսակ 7.12.2 Ընտանիքի պլանավորման հաղորդագրությունների ազդեցությունը տղամարդիկ**

15-49 տարեկան տղամարդկանց տոկոսը, ովքեր լսել, տեսել կամ ստացել են ընտանիքի պլանավորման մասին հաղորդագրություններ ռադիոյով, հեռուստատեսությամբ, թերթերում կամ ամսագրերում, բջջային հեռախոսով կամ համացանցում հետազոտությանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Տղամարդիկ					Մյս հինգ միջոցներից ոչ մեկը	Տղամարդկանց թվաքանակ
	Ռադիո	Հեռուստատեսություն	Թերթ/ամսագիր	Բջջային հեռախոս	Ինտերնետ		
<b>Տարիք</b>							
15-19	0.0	6.1	0.8	2.0	13.7	81.9	345
20-24	0.5	10.2	1.0	1.5	20.2	76.0	467
25-29	2.5	18.0	3.7	1.8	26.2	65.8	464
30-34	3.8	18.0	3.7	2.6	20.7	70.4	427
35-39	4.0	13.3	5.7	1.5	16.7	74.6	376
40-44	3.6	19.0	3.6	2.5	17.3	73.6	346
45-49	3.8	15.9	3.1	3.0	13.0	75.8	330
<b>Բնակավայր</b>							
Քաղաքային	3.6	12.9	3.6	1.6	20.0	73.6	1,558
Գյուղական	1.2	16.4	2.4	2.8	17.2	73.8	1,197
<b>Մարզ</b>							
Երևան	3.1	6.1	2.9	0.1	16.7	80.6	833
Արագածոտն	0.0	30.6	3.3	0.0	33.4	56.2	159
Արարատ	0.4	2.4	0.4	0.0	8.6	91.4	290
Արմավիր	0.5	4.0	2.9	0.5	11.6	86.6	268
Գեղարքունիք	0.5	25.7	0.8	1.3	23.4	64.4	235
Լոռի	0.7	5.1	0.0	0.0	7.2	89.9	184
Կոտայք	5.3	9.0	0.4	0.0	4.8	84.3	299
Շիրակ	11.6	62.6	18.4	11.0	56.9	15.4	201
Սյունիք	0.0	23.2	3.7	29.2	44.7	37.7	104
Վայոց ձոր	0.7	36.5	0.8	0.0	9.2	58.8	56
Տավուշ	0.0	10.0	1.2	0.0	15.8	78.9	126
<b>Կրթություն</b>							
Հիմնական	1.1	7.4	0.3	2.3	10.0	84.6	360
Միջնակարգ	1.7	14.9	2.3	1.9	15.3	75.7	1,250
Միջին մասնագիտական	6.1	16.8	3.0	3.3	17.8	72.5	403
Բարձրագույն	2.8	15.8	5.6	1.8	29.5	65.5	736
<b>Բարեկեցության քվինտիլ</b>							
Ամենացածր	0.8	11.1	1.0	1.2	12.3	80.6	523
Երկրորդ	1.9	18.0	2.5	2.9	18.8	71.1	583
Միջին	2.3	17.5	4.2	2.9	18.3	73.1	521
Չորրորդ	3.5	14.6	4.5	2.3	22.9	69.7	566
Ամենաբարձր	4.1	10.8	3.1	1.3	21.0	74.3	562
Ընդամենը	2.6	14.4	3.1	2.1	18.8	73.6	2,755

Նշում: Ընդամենը ներառում է առանց կրթության 5 դեպք (տղամարդ):

Ընտանիքի պլանավորման վերաբերյալ հաղորդագրությունների ազդեցությունը կապված է բնակության վայրի, կրթական մակարդակի և տնային տնտեսության բարեկեցության մակարդակի հետ: Գյուղաբնակ, ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող և ավելի աղքատ տնային տնտեսությունների կանայք ավելի քիչ են ենթարկվել ընտանիքի պլանավորման մասին հաղորդագրությունների ազդեցությանը, քան քաղաքաբնակ, ավելի բարձր կրթական մակարդակ ունեցող և բարեկեցիկ տնային տնտեսությունների կանայք: Տղամարդկանց շրջանում տարբերություններն ըստ բնակության վայրի, կրթության և բարեկեցության առավել քիչ են արտահայտված՝ կանանց համեմատությամբ:

Տարբերություններն ըստ մարզերի էական են: Կանանց շրջանում Արմավիրի մարզում գրանցվել է պատասխանողների ամենամեծ մասնաբաժինը, որ առանձնացված հինգ աղբյուրներից ոչ մեկով չի ստացել ընտանիքի պլանավորման մասին հաղորդագրություն (92 տոկոս), իսկ տղամարդկանց շրջանում ամենամեծ մասնաբաժինը գրանցվել է Արարատի մարզում (91 տոկոս): Կանայք Սյունիքի մարզում և տղամարդիկ Շիրակի մարզում ամենաշատն են լսել ընտանիքի

պլանավորման մասին հաղորդագրություններ: 15-19 տարեկան տղամարդիկ ամենաքիչն են ստանում ընտանիքի պլանավորման մասին հաղորդագրություններ ԶԼՄ-ների միջոցով:

2010-ից ի վեր՝ ընտանիքի պլանավորման վերաբերյալ հաղորդագրությունների ազդեցությունն էապես նվազել է: Օրինակ՝ այն կանանց մասնաբաժինը, որ տեսել է ընտանիքի պլանավորման մասին հաղորդագրություն հեռուստացույցով, 2010-ին գրանցված 51 տոկոսից նվազել է 22 տոկոսի՝ 2015-16-ին: Նմանապես, այն կանանց մասնաբաժինը, որ տեսել է հաղորդագրություն թերթում կամ ամսագրում, 32 տոկոսից նվազել է մինչև 10 տոկոս: Ցուցանիշները տղամարդկանց շրջանում ևս նվազել են:

#### **7.11 ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԶՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՅՆ ՏՐԱՄԱԴՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԸ**

Որոշելու համար, թե արդյոք Հայաստանում հակաբեղմնավորման մեթոդներ չօգտագործող կանայք ունեն ընտանիքի պլանավորման մեթոդների վերաբերյալ դրանք տրամադրողների կողմից տեղեկատվություն ստանալու հնարավորություն, թե ոչ, հակաբեղմնավորման մեթոդներ չօգտագործող կանայք հարցվել են, թե արդյոք նրանք հետազոտությանը նախորդող մեկ տարվա ընթացքում որևէ պատճառով այցելել են որևէ բուժհաստատություն, և եթե այցելել են, ապա այդ բուժհաստատության բուժաշխատողներից որևէ մեկը գրուցել է արդյոք նրանց հետ ընտանիքի պլանավորման մեթոդների մասին: Այս հարցերն օգնում են գնահատելու հակաբեղմնավորման մեթոդների մասին տեղեկատվություն հաղորդելու այսպես կոչված «բաց թողնված հնարավորությունների» մակարդակը: Արդյունքները ներկայացված են Աղյուսակ 7.13-ում:

**Աղյուսակ 7.13 Ընտանիքի պլանավորման մեթոդներ չօգտագործողների և այն տրամադրողների միջև կապը**

15-49 տարեկան հակաբեղմնավորման մեթոդ չօգտագործող կանանց տոկոսը, ովքեր վերջին 12 ամիսների ընթացքում այցելել են բուժհաստատություն, տոկոսը, ովքեր այցելել են բուժհաստատություն և քննարկել են ընտանիքի պլանավորումը որևէ բուժաշխատողի հետ, տոկոսը, ովքեր այցելել են բուժհաստատություն, սակայն չեն քննարկել ընտանիքի պլանավորումը որևէ բուժաշխատողի հետ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Բուժհաստատություն այցելած կանանց տոկոս	Վերջին 12 ամիսների ընթացքում բուժհաստատություն այցելած կանանց տոկոսը, որ		
		Քննարկել է		Կանանց թվաքանակ
		ընտանիքի պլանավորումը բուժաշխատողի հետ	Չի քննարկել ընտանիքի պլանավորումը	
<b>Տարիք</b>				
15-19	16.2	0.3	15.9	714
20-24	31.7	3.2	28.5	771
25-29	50.8	5.9	44.9	676
30-34	55.6	5.6	50.0	456
35-39	46.8	3.8	43.0	394
40-44	42.3	2.1	40.2	393
45-49	41.2	2.1	39.2	466
<b>Բնակավայր</b>				
Քաղաքային	44.0	2.9	41.1	2,384
Գյուղական	30.3	3.7	26.6	1,487
<b>Մարզ</b>				
Երևան	47.4	1.6	45.7	1,321
Արագածոտն	27.0	4.1	22.9	197
Արարատ	21.4	3.8	17.6	312
Արմավիր	29.3	2.2	27.0	344
Գեղարքունիք	23.8	1.4	22.4	270
Լոռի	25.5	0.0	25.5	227
Կոտայք	55.6	11.0	44.5	412
Շիրակ	34.1	2.3	31.8	368
Սյունիք	46.4	5.3	41.1	202
Վայոց ձոր	40.2	4.4	35.8	60
Տավուշ	37.5	2.9	34.5	157
<b>Կրթություն</b>				
Հիմնական	22.1	1.4	20.7	273
Միջնակարգ	34.7	2.6	32.1	1,468
Միջին մասնագիտական	44.6	3.8	40.8	819
Բարձրագույն	43.1	3.9	39.2	1,308
<b>Բարեկեցության քվինտիլ</b>				
Ամենացածր	27.3	2.8	24.5	674
Երկրորդ	31.5	3.9	27.7	765
Միջին	40.9	4.0	36.9	742
Չորրորդ	43.7	3.7	40.0	843
Ամենաբարձր	47.6	1.9	45.7	847
Ընդամենը	38.7	3.2	35.5	3,870

Նշում: Ընդամենը ներառում է առանց որևէ կրթության 2 (կշռված) դեպք:

Հակաբեղմնավորման մեթոդներ չօգտագործող տասը կանանցից չորսը (39 տոկոս) հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում այցելել են որևէ բուժհաստատություն: Հակաբեղմնավորման մեթոդներ չօգտագործող կանանց 36 տոկոսն այցելել է բուժհաստատություն, սակայն բուժաշխատողի հետ չի քննարկել ընտանիքի պլանավորումը, և նրանց ընդամենը 3 տոկոսն է, որ այցելել է բուժհաստատություն և քննարկել է ընտանիքի պլանավորումը: Չնայած, ըստ հիմնական բնութագրիչների, կան տարբերություններ հակաբեղմնավորման մեթոդներ չօգտագործողների շրջանում, ովքեր այցելել են որևէ բուժհաստատություն, ընտանիքի պլանավորումը բուժաշխատողի հետ քննարկածների շրջանում տարբերությունները մեծ չեն:

## 7.12 ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋՐԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ընտանիքի պլանավորման մեթոդների մասին հարցերի օրինակով՝ ՀԺԱՀ 2015-16-ը ներառում էր նաև հարցեր համացանցում վերարտադրողական առողջության վերաբերյալ հաղորդագրությունների ազդեցության մասին: Հարցվողները պատասխանել են, թե արդյոք հետազոտությանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում կարդացել են վերարտադրողական առողջության մասին համացանցում, թե ոչ: 15-49 տարեկան կանանց և տղամարդկանց շրջանում վերարտադրողական առողջության հաղորդագրությունների ազդեցությունը ցույց է տրված Աղյուսակ 7.14-ում:

**Աղյուսակ 7.14 Վերարտադրողական առողջության վերաբերյալ հաղորդագրությունների ազդեցությունը**

15-49 տարեկան այն կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր հետազոտությանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում կարդացել են վերարտադրողական առողջության մասին համացանցում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կանայք		Տղամարդիկ	
	Կանանց տոկոս	Կանանց թվաքանակ	Տղամարդկանց տոկոս	Տղամարդկանց թվաքանակ
<b>Տարիք</b>				
15-19	9.4	725	3.8	345
20-24	22.7	928	9.8	467
25-29	26.6	1,099	12.8	464
30-34	28.1	1,007	9.4	427
35-39	24.6	867	7.3	376
40-44	20.9	784	8.1	346
45-49	16.6	706	6.9	330
<b>Բնակավայր</b>				
Քաղաքային	26.7	3,657	10.3	1,558
Գյուղական	15.1	2,459	6.3	1,197
<b>Մարզ</b>				
Երևան	26.8	2,001	12.8	833
Արագածոտն	13.5	315	26.2	159
Արարատ	11.5	552	2.7	290
Արմավիր	7.0	586	2.4	268
Գեղարքունիք	14.2	478	9.7	235
Լոռի	19.0	355	2.0	184
Կոտայք	26.5	678	2.7	299
Շիրակ	19.4	510	8.1	201
Սյունիք	52.5	238	8.2	104
Վայոց ձոր	31.0	119	14.5	56
Տավուշ	31.5	283	5.4	126
<b>Կրթություն</b>				
Հիմնական	6.7	396	2.6	360
Միջնակարգ	13.3	2,444	4.8	1,250
Միջին մասնագիտական	23.8	1,360	7.4	403
Բարձրագույն	35.2	1,910	18.7	736
<b>Բարեկեցության քվինտիլ</b>				
Ամենացածր	8.7	1,081	4.5	523
Երկրորդ	17.4	1,242	5.5	583
Միջին	21.6	1,142	8.1	521
Չորրորդ	25.6	1,287	12.2	566
Ամենաբարձր	33.8	1,365	12.5	562
Ընդամենը	22.1	6,116	8.6	2,755

Նշում: Ընդամենը ներառում է առանց որևէ կրթության կանանց (կշտված) և տղամարդկանց 5-ական դեպք:

Հինգ կանանցից մոտ մեկն է հետազոտությանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում կարդացել վերարտադրողական առողջության մասին համացանցում: Այս առումով քաղաքաբնակ կանանց և Սյունիքի մարզում բնակվող կանանց շրջանում գրանցվել են ամենաբարձր ցուցանիշները: Այն կանանց մասնաբաժինը, որ ստացել է տեղեկատվություն համացանցում, աճում է կրթական մակարդակին և բարեկեցության քվինտիլին զուգընթաց:

Կանանց համեմատությամբ՝ տղամարդիկ ավելի քիչ են կարդացել վերարտադրողական առողջության մասին համացանցում (9 տոկոս) հետազոտությանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում: Տղամարդկանց շրջանում տարբերություններն ըստ հիմնական բնութագրիչների նման են կանանց շրջանում առկա տարբերություններին, սակայն, առավել քիչ են արտահայտված: Արագածոտնի մարզում բնակվող տղամարդիկ ամենաշատն են նշել, որ համացանցում կարդացել են վերարտադրողական առողջության մասին:



**Հիմնական արդյունքներ**

- Հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում չորս հղիություններից մոտ մեկն ավարտվել է հղիության արհեստական ընդհատումով (աբորտով):
- Հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում աբորտների գումարային գործակիցը (ԱԳԳ) կազմել է 0.6 աբորտ մեկ կնոջ հաշվով, այսինքն՝ արձանագրվել է մի փոքր փոփոխություն ՀԺԱՀ 2010-ին գրանցված 0.8 աբորտ մեկ կնոջ հաշվով գործակիցից, սակայն ՀԺԱՀ 2000-ի և 2005-ի համեմատությամբ փոփոխությունն էական է (համապատասխանաբար 2.6 և 1.8 աբորտ մեկ կնոջ հաշվով):
- Քաղաքաբնակ կանանց համեմատությամբ (0.4) ԱԳԳ-ն գյուղաբնակ կանանց շրջանում (0.8) կրկնակի անգամ ավելի բարձր է: Ըստ մարզերի՝ ամենաբարձր ԱԳԳ-ն Գեղարքունիքի մարզում է (1.4), որին հաջորդում է Արմավիրի մարզը (1.2):
- Հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում աբորտ ունեցած կանանց կեսը հղիանալու ժամանակ օգտագործել է հակաբեղմնավորման որևէ մեթոդ, հատկապես ավանդական:
- Աբորտների մոտ երկու երրորդը կատարվել է այլևս երեխա չունենալու ցանկությամբ պայմանավորված: Աբորտների կատարման մյուս պատճառներն են մոր առողջության հետ կապված մտահոգությունները (7 տոկոս), պտղի՝ արատներ ունենալու վտանգը (8 տոկոս), սեռի ընտրությունը (8 տոկոս) և տնտեսական միջոցների բացակայությունը (6 տոկոս):

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հղիության արհեստական ընդհատումների (աբորտների) վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն է հավաքագրվել վերարտադրողական պատմության միջոցով: Նախ կանայք հարցվել են իրենց ունեցած հղիությունների թվաքանակի մասին (եթե եղել են), որոնք ավարտվել են մեռելաձնությամբ, վիժումով կամ հղիության արհեստական ընդհատումով (աբորտ): Այնուհետև հավաքագրվել է հղիությունների ամբողջական պատմությունը: Հղիության պատմության մեջ կանանց խնդրել են նշել իրենց յուրաքանչյուր հղիության ելքը, այսինքն՝ արդյոք այն ավարտվել է կենդանի ծնունդով, մեռելաձնությամբ, վիժումով թե՛ աբորտով: Նախորդ երեք ՀԺԱՀ հետազոտությունների համեմատությամբ՝ հղիության պատմության մեջ տեղեկատվության հավաքագրման եղանակը փոփոխվել է: ՀԺԱՀ 2015-16-ին հարցվողներին խնդրել են ներկայացնել իրենց հղիություններն ըստ ժամանակագրական հաջորդականության՝ սկսելով իրենց առաջին հղիությունից և ավարտելով ամենավերջին հղիությամբ, մինչդեռ նախորդ ՀԺԱՀ հետազոտությունների ժամանակ հարցվողները թվարկել են իրենց հղիությունները հակառակ հերթականությամբ՝ սկսելով իրենց ամենավերջին հղիությունից և ավարտելով ամենաառաջին հղիությամբ:

Նվազագույնի հասցնելու համար աբորտների մասին չհայտնելու դեպքերը՝ հղիության ելքերի մասին հարցերի շարքում ներառված էր նաև հարց, որտեղ կանայք պետք է նշեին այն աբորտների մասին, որոնք տեղի են ունեցել Սայտոտեկի կամ նմանատիպ վիժեցնող հատկություն ունեցող դեղամիջոցներ օգտագործելու արդյունքում: Չնայած այս մասին ուղղակիորեն չէր տրվում հարց՝ ՀԺԱՀ 2015-16-ին հարցազրուցավարներն առանձնահատուկ կերպով վերապատրաստվել էին

գրանցելու համար այն աբորտները, որոնք կինն ինքն է կատարել տանը կամ որևէ այլ վայրում վիժեցնող հասկոություն ունեցող դեղաբույսերի միջոցով<sup>1</sup>: Հարցազրուցավարները հղիության պատմության վերջում նաև ստուգել են վերարտադրողականության բաժնում հավաքագրված և հղիությունների պատմության մեջ նշված հղիությունների թվաքանակների համապատասխանությունը:

### 8.1 ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵԼՔԵՐ

Աղյուսակ 8.1-ը ցույց է տալիս հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում հղիությունների ելքերի տոկոսային բաշխումը (այսինքն՝ մոտ 2013-ի փետրվարից մինչև 2016-ի փետրվար): Տասը հղիություններից գրեթե յոթն ավարտվել են կենդանի ծնունդով (69 տոկոս), իսկ չորսից մեկը՝ աբորտով (23 տոկոս): Հղիությունների 8 տոկոսն ավարտվել է վիժումով, իսկ 1 տոկոսից պակասը՝ մեռելածնությամբ:

**Աղյուսակ 8.1 Հղիությունների ելքերն ըստ հիմնական բնութագրիչների**

Հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում ավարտված հղիությունների տոկոսային բաշխումն ըստ հղիության ելքի և ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Հղիության ելք				Հղիությունների թվաքանակ
	Կենդանի ծնունդ	Աբորտ	Վիժում	Մեռելածնություն	
<b>Տարիքը հղիության ելքի ժամանակ</b>					
<20	84.7	5.9	9.4	0.0	64
20-24	77.6	12.3	9.9	0.2	479
25-34	65.2	26.6	7.5	0.7	811
35-44	51.6	42.1	5.4	0.9	140
45-49	*	*	*	*	2
<b>Հղիությունների հերթականություն</b>					
Առաջին	90.6	2.3	6.7	0.4	423
Երկրորդ	82.4	5.3	12.1	0.2	392
Երրորդ	65.3	24.2	9.7	0.7	271
Չորրորդ	45.2	49.6	3.8	1.4	161
Հինգերորդ կամ բարձր	29.0	65.2	5.3	0.5	249
<b>Բնակավայր</b>					
Քաղաքային	72.4	18.7	8.6	0.3	827
Գյուղական	64.3	27.4	7.5	0.8	669
<b>Մարզ</b>					
Երևան	77.8	14.8	7.1	0.3	401
Արագածոտն	79.6	10.4	4.6	5.4	41
Արարատ	78.4	18.9	2.7	0.0	137
Արմավիր	57.2	30.7	11.5	0.6	211
Գեղարքունիք	42.1	56.7	1.2	0.0	100
Լոռի	65.5	22.5	10.8	1.3	82
Կոտայք	67.0	23.8	8.7	0.5	210
Շիրակ	64.2	23.5	12.3	0.0	156
Սյունիք	92.8	3.9	3.3	0.0	39
Վայոց ձոր	77.6	10.0	12.4	0.0	27
Տավուշ	67.6	19.2	11.9	1.4	91
<b>Կրթություն</b>					
Հիմնական	68.8	27.9	3.3	0.0	99
Միջնակարգ	64.1	27.0	8.0	0.9	625
Միջին մասնագիտական	65.3	25.8	8.9	0.0	311
Բարձրագույն	77.7	12.9	8.9	0.5	459
<b>Բարեկեցության քվինտիլ</b>					
Ամենացածր	61.3	30.1	7.6	1.0	318
Երկրորդ	65.4	24.3	9.7	0.5	318
Միջին	68.9	21.4	9.7	0.0	274
Չորրորդ	73.1	21.2	4.6	1.1	247
Ամենաբարձր	75.4	16.0	8.4	0.2	339
<b>Ընդամենը</b>	<b>68.7</b>	<b>22.6</b>	<b>8.1</b>	<b>0.5</b>	<b>1,496</b>

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկողմնորոշող դեպքերի վրա, և այն չի ներառվել: Ընդամենը ներառում է կանանց 2 դեպք (կողմնորոշող)՝ առանց որևէ կրթության:

<sup>1</sup> ՀԺԱՀ 2000-ին հարցվողներին տրվել են առանձին հարցեր կնոջ կողմից ինքնուրույն կատարված աբորտների և բուժաշխատողի միջամտությամբ կատարված աբորտների վերաբերյալ: Սակայն ՀԺԱՀ 2000-ին ընդամենը 37 կին էր նշել, որ ինքնուրույն կատարել է հղիության արհեստական ընդհատում (աբորտ): Այսպիսով՝ ՀԺԱՀ 2005-ի, 2010-ի և 2015-16-ի հարցաթերթերում հարցերի այս տարանջատումը (կնոջ կողմից և բուժաշխատողի միջամտությամբ կատարված աբորտների միջև) չի ներառվել:



Աբորտով ավարտված հղիությունների մասնաբաժինը զգալիորեն աճում է կնոջ տարիքին զուգընթաց: Դեռահասների հղիությունների 6 տոկոսն ավարտվել է աբորտով՝ համեմատած 20-24 տարեկան կանանց հղիությունների 12 տոկոսի, 25-34 տարեկան կանանց հղիությունների 27 տոկոսի և 35-44 տարեկան կանանց հղիությունների 42 տոկոսի հետ: Աբորտով ավարտված հղիությունների կտրուկ աճ է գրանցվել նաև ըստ հղիությունների հերթականության: Այսպես՝ առաջին հղիությունների միայն 2 տոկոսը և երկրորդ հղիությունների 5 տոկոսն է ավարտվել աբորտով՝ համեմատած երրորդ հղիությունների 24 տոկոսի, չորրորդ հղիությունների 50 և հինգերորդ կամ հաջորդ ավելի բարձր կարգի հղիությունների 65 տոկոսի հետ:

Գյուղաբնակ կանանց շրջանում աբորտով ավարտված հղիությունների թվաքանակը մի փոքր ավելի մեծ է՝ քաղաքաբնակ կանանց համեմատությամբ (համապատասխանաբար 27 և 19 տոկոս): Աբորտով ավարտված հղիությունների մասնաբաժինն ըստ մարզերի տատանվում է՝ Սյունիքի մարզում գրանցված 4 տոկոսից մինչև Գեղարքունիքի մարզում գրանցված 57 տոկոսը: Քանի որ մարզային կտրվածքով ներկայացված արդյունքները հիմնված են հղիությունների փոքր թվաքանակի վրա, դրանք պետք է դիտարկվեն որոշակի զգուշավորությամբ:


Հիմնական կրթություն ունեցող կանանց շրջանում աբորտով ավարտված հղիությունների տոկոսն ամենաբարձրն է (28 տոկոս), որին հաջորդում են միջին մասնագիտական և միջնակարգ կրթություն ունեցող կանայք (26-27 տոկոս): Մինչդեռ բարձրագույն կրթություն ունեցող կանանց շրջանում այս ցուցանիշը 13 տոկոս է: Բարեկեցության մակարդակի և աբորտների միջև գոյություն ունի հակադարձ հարաբերակցություն: Այսպես՝ բարեկեցության ամենացածր քվինտիլում գտնվող մայրերի շրջանում տասը հղիություններից երեքն ավարտվել են աբորտով (30 տոկոս)՝ համեմատած բարեկեցության ամենաբարձր քվինտիլում գտնվող կանանց հղիությունների 16 տոկոսի հետ:

Գծապատկեր 8.1-ը ցույց է տալիս, որ վերջին 16 տարիների ընթացքում աբորտով ավարտված հղիությունների մասնաբաժինը կտրուկ նվազել է՝ 2000-ի 55 տոկոսից մինչև 2005-ի 45 տոկոսը, 2010-ի 29 տոկոսը և 2015-16-ի 23 տոկոսը: Եվ հակառակը, կենդանի ծնունդով ավարտված հղիությունների մասնաբաժինն աճել է՝ 2000-ի 38 տոկոսից մինչև 2005-ի 48 տոկոսը, 2010-ի 63 տոկոսը և 2015-16-ի 69 տոկոսը (ԱՎԾ և այլք, 2001, ԱՎԾ և այլք, 2006, ԱՎԾ և այլք, 2012):

Վերջին 6 տարիների ընթացքում հղիությունների էլքերի առումով դիտարկվում է որոշակի փոփոխություն քաղաքային-գյուղական բնակավայրերի կտրվածքով: Օրինակ՝ քաղաքաբնակ կանանց շրջանում աբորտով ավարտված հղիությունների մասնաբաժինը 2010-ին գրանցված 29 տոկոսից նվազել է մինչև 19 տոկոս 2015-16-ին: Այսինքն՝ 2010-ից ի վեր ցուցանիշը 34 տոկոսով նվազել է, սակայն գյուղաբնակ կանանց շրջանում նման փոփոխություն չի արձանագրվել (28 տոկոս 2010-ին և 27 տոկոս 2015-16-ին):

**Գծապատկեր 8.1 Հղիության արհեստական ընդհատումների միտումներն ըստ քաղաքային-գյուղական բնակավայրերի, Հայաստան, 2000-2016**

Տոկոս



## 8.2 ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐԶԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐ (ԱԲՈՐՏՆԵՐ)

Աղյուսակ 8.2-ը ցույց է տալիս կյանքի ընթացքում կանանց ունեցած աբորտների թվաքանակը: Վիճակագրությունը հիմնված է 15-49 տարեկան բոլոր կանանց վրա՝ անկախ նրանց հղիանալու հավանականությունից:

<b>Աղյուսակ 8.2 Կանգնի ընթացքում կատարած հղիության արհեստական ընդհատումներ (աբորտներ)</b>									
Առնվազն մեկ աբորտ ունեցած կանանց տոկոսը, այդ կանանց տոկոսային բաշխումն ըստ ունեցած աբորտների թվաքանակի և աբորտների միջին թվաքանակը, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.									
Հիմնական բնութագրիչներ	Աբորտ ունեցած կանանց տոկոս	Կանանց թվաքանակ	Աբորտ ունեցած կանանց տոկոսային բաշխումն ըստ աբորտների թվաքանակի				Ընդամենը	Աբորտների միջին թվաքանակ	Աբորտ ունեցած կանանց թվաքանակ
			1	2-3	4-5	6+			
<b>Տարիք</b>									
<20	0.2	725	*	*	*	*	100.0	1.0	2
20-24	2.4	928	(73.9)	(23.3)	(0.0)	(2.8)	100.0	1.4	23
25-34	21.9	2,106	54.0	38.0	5.1	2.9	100.0	1.8	461
35+	45.4	2,357	31.9	51.3	11.6	5.2	100.0	2.4	1,070
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>									
0	0.3	2,120	*	*	*	*	100.0	2.6	7
1	10.9	899	69.2	26.5	2.4	1.9	100.0	1.5	98
2-3	46.1	2,924	37.8	48.6	9.8	3.8	100.0	2.2	1,348
4+	59.7	172	27.7	44.3	12.9	15.2	100.0	3.2	103
<b>Ամուսնական կարգավիճակ</b>									
Երբևէ չամուսնացած	0.0	1,830	*	*	*	*	100.0	10.0	1
Ներկայումս ամուսնացած	37.2	3,895	38.3	47.7	9.5	4.5	100.0	2.2	1,450
Նախկինում ամուսնացած	27.0	390	50.4	36.4	9.0	4.3	100.0	2.2	105
<b>Բնակավայր</b>									
Քաղաքային	21.8	3,657	47.0	41.0	8.3	3.8	100.0	2.1	797
Գյուղական	30.8	2,459	30.8	53.1	10.8	5.3	100.0	2.4	758
<b>Մարզ</b>									
Երևան	18.7	2,001	56.6	36.2	4.5	2.7	100.0	1.8	373
Արագածոտն	26.9	315	50.2	49.0	0.4	0.4	100.0	1.6	85
Արարատ	26.5	552	39.9	51.1	8.4	0.6	100.0	1.9	147
Արմավիր	34.6	586	24.7	49.0	16.4	9.9	100.0	2.9	202
Գեղարքունիք	35.2	478	17.6	56.0	17.5	8.8	100.0	2.9	168
Լոռի	23.6	355	36.6	37.1	16.9	9.3	100.0	2.7	84
Կոտայք	34.1	678	32.3	52.8	10.4	4.4	100.0	2.3	231
Շիրակ	28.5	510	36.4	52.6	8.6	2.4	100.0	2.1	146
Մյուսիք	9.0	238	(56.4)	(38.8)	(2.3)	(2.4)	100.0	1.8	21
Վայոց ձոր	17.9	119	50.2	46.3	3.5	0.0	100.0	1.7	21
Տավուշ	27.0	283	45.2	47.8	4.6	2.4	100.0	2.0	77
<b>Կրթություն</b>									
Հիմնական	29.4	396	26.6	47.2	16.8	9.4	100.0	2.9	116
Միջնակարգ	30.5	2,444	32.1	52.0	10.8	5.0	100.0	2.3	746
Միջին ասանագիտական	29.4	1,360	45.1	43.7	6.8	4.5	100.0	2.1	400
Բարձրագույն	15.2	1,910	54.3	38.2	6.2	1.3	100.0	1.8	290
<b>Բարեկեցության քվինտիլ</b>									
Ամենացածր	30.0	1,081	32.3	49.8	10.3	7.6	100.0	2.6	324
Երկրորդ	28.8	1,242	30.9	53.5	12.4	3.2	100.0	2.3	357
Միջին	26.5	1,142	36.9	46.6	10.6	5.9	100.0	2.3	303
Չորրորդ	21.3	1,287	48.1	39.7	9.4	2.8	100.0	2.0	274
Ամենաբարձր	21.8	1,365	50.4	42.7	4.1	2.8	100.0	1.9	298
Ընդամենը	25.4	6,116	39.1	46.9	9.5	4.5	100.0	2.2	1,555

Նշում: Ներկայումս ամուսնացած կատեգորիան ներառում է նաև համատեղ բնակվող հարցվողներին: Նախկինում ամուսնացած կատեգորիան ներառում է ամուսնալուծված, բաժանված և այլի հարցվողներին: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Ընդամենը ներառում է կանանց 5 դեպք (կշռված)՝ առանց որևէ կրթության:

Հայաստանում 15-49 տարեկան կանանց գրեթե մեկ քառորդը երբևէ կատարել է աբորտ (25 տոկոս): Ինչպես ակնկալվում էր, աբորտների հավանականությունն աճում է տարիքին զուգընթաց՝ կազմելով 2 տոկոս 20-24 տարեկան կանանց շրջանում, 22 տոկոս՝ 25-34 տարեկանների շրջանում և 45 տոկոս՝ 35 տարեկան և տարիքով ավելի մեծ կանանց շրջանում: Երբևէ աբորտ կատարած լինելու փաստի և կենդանի երեխաների թվաքանակի միջև գոյություն ունի ուղիղ հարաբերակցություն: Երեխա չունեցող կանանց 1 տոկոսից քիչն է ունեցել աբորտ՝ համեմատած մեկ երեխա ունեցող կանանց 11 տոկոսի, երկու կամ երեք երեխա ունեցող կանանց 46 տոկոսի և չորս կամ ավելի երեխա ունեցող կանանց 60 տոկոսի հետ:

Ամուսնական բաժանությունները (ամուսնության անկում) առնչություն ունեն աբորտների ցածր մակարդակի հետ: Այսպես՝ ներկայում ամուսնացած կանանց 37 տոկոսը երբևէ ունեցել է աբորտ՝ համեմատած ամուսնալուծված, բաժանված կամ այրի կանանց 27 տոկոսի հետ: Գյուղաբնակ կանայք ավելի հավանական է, որ երբևէ աբորտ կատարած լինեն, քան քաղաքաբնակները (համապատասխանաբար 31 և 22 տոկոս): Երբևէ աբորտ ունեցած կանանց տոկոսն ամենաբարձրն է Գեղարքունիքի, Արմավիրի և Կոտայքի մարզերում (34-35 տոկոս), իսկ ամենացածրը՝ Սյունիքի մարզում (9 տոկոս): Բարձրագույն կրթություն ունեցող կանանց 15 տոկոսը երբևէ կատարել է աբորտ՝ համեմատած ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող կանանց 29-31 տոկոսի հետ: Երբևէ աբորտ կատարած կանանց մասնաբաժինը նվազում է բարեկեցության մակարդակի աճին զուգընթաց:

Երբևէ աբորտ ունեցած կանանց 39 տոկոսը կատարել է միայն մեկ աբորտ, կանանց գրեթե կեսը (47 տոկոս) նշել է երկուսից երեք աբորտների մասին, իսկ 14 տոկոսը՝ չորս կամ ավելի աբորտների մասին: Ընդհանուր առմամբ, երբևէ աբորտ ունեցած կանանց շրջանում աբորտների միջին թվաքանակը մեկ կնոջ հաշվով 2.2 է:

### 8.3 ՀՂԻՌԻԹՅԱՆ ԱՐՉԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐԻ (ԱԲՈՐՏՆԵՐԻ) ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Աղյուսակ 8.3-ը ցույց է տալիս աբորտների գործակիցները ՀԺԱՀ 2015-16-ին նախորդող 3 տարիների կտրվածքով (մոտ 2013-ի փետրվարից մինչև 2016-ի փետրվար): Ներկայացված են երեք տեսակի գործակիցներ՝ աբորտների տարիքային գործակից, աբորտների գումարային գործակից և աբորտների հատուկ գործակից: Աբորտների տարիքային գործակիցը (ԱՏԳ), որը ներկայացված է 1,000 կնոջ հաշվով, արտահայտում է տվյալ տարիքային խմբի կանանց կատարած աբորտների թվաքանակի և նույն տարիքային խմբին պատկանող կանանց ընդհանուր թվաքանակի հարաբերակցությունը: Աբորտների գումարային գործակիցը (ԱԳԳ), որը ներկայացված է մեկ կնոջ հաշվով, աբորտների տարիքային գործակիցների հանրագումարն է: ԱԳԳ-ն մեկնաբանվում է որպես աբորտների թվաքանակ, որը կինը կարող էր ունենալ իր կյանքի ընթացքում, եթե նրա վերարտադրողական տարիներին պահպանվեին ներկայում արձանագրված աբորտների տարիքային գործակիցները: Աբորտների հատուկ գործակիցը (ԱՀԳ) աբորտների թվաքանակի հարաբերությունն է 15-44 տարեկան կանանց թվաքանակի նկատմամբ՝ արտահայտված 1,000 կնոջ հաշվով:

Տարիքային խումբ	Բնակավայր		
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
15-19	2	2	2
20-24	17	24	19
25-29	30	63	42
30-34	20	45	29
35-39	15	19	16
40-44	8	10	9
45-49	0	0	0
ԱԳԳ(15-49) <sup>1</sup>	0.4	0.8	0.6
ԱԳԳ(15-44)	0.4	0.8	0.6
ԱՀԳ <sup>2</sup>	16.0	28.0	21.0


<sup>1</sup>Աբորտների գումարային գործակից (ԱԳԳ)՝ արտահայտված մեկ կնոջ հաշվով  
<sup>2</sup>Աբորտների հատուկ գործակից (ԱՀԳ) = աբորտների թվաքանակի հարաբերակցությունը 15-44 տարեկան կանանց թվաքանակի նկատմամբ՝ արտահայտված 1,000 կնոջ հաշվով

Աղյուսակ 8.3-ը ցույց է տալիս, որ ՀԺԱՀ 2015-16-ին նախորդող երեք տարիների կտրվածքով աբորտների գումարային գործակիցը մեկ կնոջ հաշվով 0.6 է: Ազգային մակարդակում աբորտների

տարիքային գործակիցն իր գագաթնակետին է հասնում 25-29 տարեկան կանանց շրջանում, ապա նվազում է՝ տարիքային խմբերի աճին զուգընթաց: Աղյուսակ 8.3-ը նաև ցույց է տալիս, որ ԱԳԳ-ն գյուղաբնակ կանանց շրջանում կրկնակի անգամ բարձր է քաղաքաբնակ կանանց ԱԳԳ-ից (համապատասխանաբար 08 և 04): Աբորտների տարիքային գործակիցները բոլոր տարիքային խմբերում ավելի բարձր են գյուղաբնակ կանանց շրջանում՝ քաղաքաբնակ կանանց համեմատությամբ, իսկ ամենամեծ տարբերությունները գրանցվել են 25-29 և 30-34 տարեկան կանանց շրջանում:

Գծապատկեր 8.2-ը ներկայացնում է ծնելիության և աբորտների տարիքային գործակիցների տարբերությունները ՀՏԱՀ 2015-16-ին նախորդող երեք տարիների կտրվածքով: 40 տարեկանից փոքր կանանց շրջանում աբորտների տարիքային գործակիցներն ավելի ցածր են, քան ծնելիության տարիքային գործակիցները, սակայն դրանք գրեթե նույնն են տարիքով ավելի մեծ կանանց շրջանում (Գծապատկեր 8.2):

**Գծապատկեր 8.2 Ծնելիության տարիքային գործակիցները և աբորտների տարիքային գործակիցները, 2015-16**



Աղյուսակ 8.4-ը ներկայացնում է աբորտների մակարդակների գնահատման 2 չափորոշիչների տարբերություններն ըստ հիմնական բնութագրիչների: Առաջին պլանակը ցույց է տալիս աբորտների գումարային գործակիցները 2015-16-ին նախորդող երեք տարիների համար: Երկրորդ պլանակը ցույց է տալիս 40-49 տարեկան կանանց շրջանում երբևէ ունեցած աբորտների միջին թվաքանակը: Վերջինս ընդհատումների գումարային ցուցանիշն է, որն արտահայտում է վերարտադրողական շրջանի ավարտին մոտ կանգնած, տարիքով ավելի մեծ կանանց ունեցած աբորտների թվաքանակը, որ գրանցվել է նրանց ամբողջ կյանքի ընթացքում:

Աբորտների գումարային գործակիցները զգալիորեն տատանվում են ըստ մարզերի՝ Սյունիքի մարզում գրանցված 0.1 աբորտից՝ մեկ կնոջ հաշվով, մինչև Գեղարքունիքի մարզում գրանցված 1.4 ցուցանիշը: Բարձրագույն կրթություն ունեցող և ավելի բարեկեցիկ տնային տնտեսությունների կանանց շրջանում գրանցվել են ԱԳԳ ամենացածր ցուցանիշները:

ԱԳԳ-ի և 40-49 տարեկան կանանց շրջանում աբորտների միջին թվաքանակի համեմատությունն արտահայտում է վերջին տասնամյակներում աբորտների մակարդակների փոփոխությունները Հայաստանում: 40-49 տարեկան կանանց շրջանում երբևէ կատարած աբորտների միջին թվաքանակը (1.3 աբորտ՝ մեկ կնոջ հաշվով) գրեթե կրկնակի անգամ բարձր է ԱԳԳ-ից (0.6 աբորտ՝ մեկ կնոջ հաշվով), ինչը ցույց է տալիս, որ վերջին 30 տարիների ընթացքում աբորտների մակարդակն էապես նվազել է: Աբորտների մակարդակի նվազում արձանագրվել է կանանց բոլոր ենթախմբերում, բայց այն մասնավորապես ակնհայտ է ամենացածր կրթական մակարդակ ունեցող կանանց և Լոռու, Արմավիրի ու Կոտայքի մարզերում բնակվող կանանց շրջանում: ԱԳԳ-ի և աբորտների միջին թվաքանակի միջև տարբերությունն այս կանանց համար 1.0-ից մինչև 1.3 աբորտ է՝ մեկ կնոջ հաշվով:

#### 8.4 ՀՂԻՌԻԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐԻ (ԱԲՈՐՏՆԵՐԻ) ՄԻՏՈՒՄՆԵՐ

*Համեմատություններ նախորդ հետազոտությունների հետ*

2000 թ. ի վեր Հայաստանում աբորտների միտումները հասկանալու համար անհրաժեշտ է համեմատել 2000-2015-16 թթ. ընթացքում իրականացված չորս ՀԺԱՀ հետազոտություններում ստացված աբորտների գումարային գործակիցները: Այս ժամանակահատվածում ԱԳԳ-ն հաստատուն կերպով նվազել է՝ 2000-ին գրանցված 2.6 աբորտ՝ մեկ կնոջ հաշվով ցուցանիշից մինչև 1.8 աբորտ 2005-ին, 0.8 աբորտ 2010-ին և 0.6 աբորտ 2015-16-ին: Գծապատկեր 8.3-ը ցույց է տալիս, որ ցուցանիշի նվազումն արձանագրվել է բոլոր տարիքային խմբերում:


Վերջին 16 տարիների ընթացքում աբորտների տարածվածության նվազումը նաև արտացոլվում է 2000 թ. ի վեր կյանքի ընթացքում ունեցած աբորտների գնահատման չափորոշիչների փոփոխությունների մեջ: Օրինակ՝ ՀԺԱՀ 2000-ին բոլոր հարցվողների գրեթե կեսը (47 տոկոս) ունեցել էր առնվազն մեկ աբորտ՝ համեմատած ՀԺԱՀ 2005-ի 37 տոկոսի, ՀԺԱՀ 2010-ի 31 տոկոսի և ՀԺԱՀ 2015-16-ի 25 տոկոսի հետ: 2000-ին 40-49 տարեկան կանանց շրջանում գրանցվել էր միջինում 2.8

**Աղյուսակ 8.4 Աբորտների գործակիցներն ըստ հիմնական բնութագրիչների**

Աբորտների գումարային հետազոտությանը նախորդող երեք տարիների համար, և աբորտների միջին թվաքանակը 40-49 տարեկան կանանց շրջանում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.	Աբորտների միջին թվաքանակը	
	ԱԳԳ-ն 15-49 տ. կանանց շրջանում	40-49 տ. կանանց շրջանում
<b>Բնակավայր</b>		
Քաղաքային	0.4	1.0
Գյուղական	0.8	1.7
<b>Մարզ</b>		
Երևան	0.3	0.8
Արագածոտն	0.2	0.9
Արարատ	0.5	1.2
Արմավիր	1.2	2.4
Գեղարքունիք	1.4	1.9
Լոռի	0.5	1.8
Կոտայք	0.7	1.9
Շիրակ	0.7	1.5
Սյունիք	0.1	0.3
Վայոց ձոր	0.3	0.7
Տավուշ	0.7	1.1
<b>Կրթություն</b>		
Հիմնական	0.9	1.9
Միջնակարգ	0.8	1.5
Միջին մասնագիտակ.	0.6	1.1
Բարձրագույն	0.3	0.9
<b>Բարեկեցության քվինտիլ</b>		
Ամենացածր	0.9	1.6
Երկրորդ	0.7	1.6
Միջին	0.6	1.3
Չորրորդ	0.4	1.0
Ամենաբարձր	0.4	1.0
Ընդամենը	0.6	1.3

աբորտ՝ համեմատած 2005-ին գրանցված 1.7, 2010-ին գրանցված 1.6 և 2015-16-ին գրանցված 1.3 աբորտի հետ:

**Գծապատկեր 8.3 Աբորտների տարիքային գործակիցների միտումները, 2000-2016**



**Ռետրոսպեկտիվ տվյալներ**

ՀԺԱՀ 2015-16-ի հարցվողների շրջանում աբորտների տարիքային գործակիցների ուսումնասիրությունը որոշակի ժամանակահատվածների ընթացքում աբորտների միտումները հասկանալու մեկ այլ մոտեցում է: Առյուսակ 8.5-ը ցույց է տալիս աբորտների տարիքային գործակիցները ՀԺԱՀ 2015-16-ին նախորդող հնգական տարիների կտրվածքով: Քանի որ 50 տարեկան և տարիքով ավելի մեծ կանայք չեն մասնակցել հետազոտությանը, ուստի հետազոտությանը նախորդող տարիների աճին գուրընթաց գործակիցները հաջորդաբար կրճատվել են:

**Առյուսակ 8.5 Աբորտների տարիքային գործակիցների միտումներ**

Աբորտների տարիքային գործակիցները հետազոտությանը նախորդող հնգական տարիների կտրվածքով, ըստ աբորտը կատարելու ժամանակ կնոջ տարիքի, Հայաստան, 2015-16 թթ.

Կնոջ տարիքն աբորտ կատարելու ժամանակ	Հետազոտությանը նախորդող տարիների թվաքանակ			
	0-4	5-9	10-14	15-19
15-19	1	3	1	5
20-24	22	31	34	53
25-29	45	68	74	111
30-34	32	44	60	[85]
35-39	18	28	[45]	
40-44	8	[9]		
45-49	[0]			

Նշում: Աբորտների տարիքային գործակիցները 1,000 կնոջ հաշվով են: Փակագծերում տրված ցուցանիշները կրճատված են:

Ժամանակի ընթացքում աբորտների գործակիցների փոփոխությունները, որոնց մասին հաղորդել են ՀԺԱՀ 2015-16-ի հարցվողները, համապատասխանում են ՀԺԱՀ 2000, 2005 և 2010

հետազոտությունների ընթացքում արձանագրված միտումներին: Օրինակ՝ 25-29 տարեկան կանանց շրջանում աբորտների տարիքային գործակիցը նվազել է գրեթե 40 տոկոսով՝ հետազոտությանը նախորդող 10-14 տարիների ընթացքում գրանցված 74 աբորտ 1,000 կնոջ հաշվով ցուցանիշից մինչև հետազոտությանը նախորդող 0-4 տարիների ընթացքում գրանցված 45 աբորտ 1,000 կնոջ հաշվով ցուցանիշը: Աբորտների տարիքային գործակիցների ամենակտրուկ անկումը 30-34 տարեկան կանանց տարիքային խմբում է, որտեղ գործակիցը նվազել է գրեթե 50 տոկոսով՝ հետազոտությանը նախորդող 10-14 տարիների ընթացքում գրանցված 60 աբորտ 1,000 կնոջ հաշվով ցուցանիշից մինչև հետազոտությանը նախորդող 0-4 տարիների ընթացքում գրանցված 32 աբորտ 1,000 կնոջ հաշվով ցուցանիշը:

**8.5 ՀԱԿԱԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՇԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԻՑ (ԱԲՈՐՏԻՑ) ԱՌԱՋ**

ՀԺԱՀ հետազոտության շրջանակում ներառված վերարտադրողական օրացույցի միջոցով հավաքագրված տեղեկատվությունն օգտագործվել է Աղյուսակ 8.6-ում՝ ուսումնասիրելու համար, թե ինչպես է կնոջ՝ հակաբեղմնավորման մեթոդների նկատմամբ ունեցած վարքագիծը կապված աբորտների հետ, հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում: Այս տեղեկատվությունն անհրաժեշտ է ինչպես ընտանիքի պլանավորման մասնագետներին, այնպես էլ աբորտ իրականացնող բուժաշխատողներին, քանի որ կինը, որն ունեցել է աբորտ, հղիանալու ժամանակ կա՛մ չի օգտագործել հակաբեղմնավորման ոչ մի մեթոդ, կա՛մ օգտագործել է որևէ մեթոդ (հավանաբար սխալ), որը, սակայն, ձախողվել է:

Աբորտ ունեցած կանանց կեսից մի փոքր ավելին (51 տոկոս) հղիանալու ժամանակ օգտագործել է հակաբեղմնավորման որևէ մեթոդ: Սա նշանակում է, որ աբորտների գրեթե կեսի դեպքում պատճառը հակաբեղմնավորման մեթոդի ձախողումն է: Հակաբեղմնավորման մեթոդների ձախողումների մեծամասնությունը տեղի է ունեցել հակաբեղմնավորման ավանդական մեթոդների օգտագործման ժամանակ, ընդ որում՝ աբորտների 36 տոկոսը տեղի է ունեցել ընդհատված սեռական հարաբերություն մեթոդն օգտագործող կանանց, իսկ 4 տոկոսը՝ ռիթմիկ մեթոդն օգտագործողների շրջանում:

Չնայած մեծ թվով աբորտներ կապված են հակաբեղմնավորման մեթոդների ձախողման հետ՝ ՀԺԱՀ արդյունքները ցույց են տալիս, որ աբորտով ավարտված հղիությունների գրեթե կեսը տեղի է ունեցել այն կանանց շրջանում, ովքեր չեն օգտագործել հակաբեղմնավորման ոչ մի մեթոդ: Հակաբեղմնավորման ավելի վստահելի մեթոդների մատչելիությունը և դրանց օգտագործումը կկրճատի անցանկալի հղիությունների, հետևաբար նաև աբորտների դեպքերը, ինչն էլ իր հերթին կբարելավի կանանց վերարտադրողական առողջությունը Հայաստանում:

**8.6 ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՇԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐ (ԱԲՈՐՏՆԵՐ) ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐ**

Աղյուսակ 8.7-ը ներկայացնում է հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում աբորտների կատարման հիմնական պատճառները: Աբորտների մոտ երկու երրորդը (65 տոկոս) պայմանավորված է եղել այն փաստով, որ կինը այլևս չի ցանկացել երեխաներ ունենալ: Աբորտների 15 տոկոսը պայմանավորված է եղել կամ մոր առողջության հետ կապված մտահոգություններով (7 տոկոս), կամ պտղի՝ արատներ ունենալու վտանգով (8 տոկոս): Աբորտների 8 տոկոսի դեպքում որպես պատճառ նշվել է սեռի ընտրությունը, իսկ սոցիալ-տնտեսական կամ այլ պատճառները հանդիսացել են աբորտների 6 տոկոսի կատարման պատճառ:

**Աղյուսակ 8.6 Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը հղիանալուց առաջ**

Հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում հղիությունների ելքերի տոկոսային բաշխումն ըստ հղիանալու ժամանակ օգտագործվող հակաբեղմնավորման մեթոդի, Հայաստան, 2015-16 թթ.

Հակաբեղմնավորման մեթոդ	Հղիության ելք			Բոլոր հղիությունները
	Կենդանի ծնունդ	Աբորտ	Վիժում	
Ոչ մի մեթոդ	92.0	49.1	81.5	81.4
Որևէ մեթոդ	8.0	50.9	18.5	18.6
Որևէ ժամանակակից մեթոդ	2.0	10.2	1.4	3.8
Հաբեր	0.3	1.0	0.0	0.4
Ներարգանդային միջոցներ	0.1	0.6	0.0	0.2
Տղամարդու պահպանակ	1.1	8.0	1.4	2.7
Լակտացիոն ամենորեայի մեթոդ (ԼԱՄ)	0.5	0.4	0.0	0.4
Շտապ բեղմնականխում	0.0	0.2	0.0	0.1
Որևէ ավանդական մեթոդ	6.0	40.7	17.1	14.8
Ռիթմիկ	0.8	4.3	1.3	1.6
Ընդհատված սեռ. հարաբերություն	5.2	36.3	15.9	13.2
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
Բոլոր հղիությունները	1,028	338	122	1,496

Նշում: Ընդամենը ներառում է մեռելածնության 8 դեպք, որոնք առանձին ցուցադրված չեն:

**Աղյուսակ 8.7 Հղիության արհեստական ընդհատումներ (աբորտներ) կատարելու պատճառներ**

Հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում կատարված աբորտների տոկոսային բաշխումն ըստ աբորտի կատարման հիմնական պատճառի և ըստ առանձնացված հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Պատճառ									Ընդամենը	Աբորտների թվաքանակ
	Մոր առողջություն	Պտղի արատների վտանգ	Մեծի ընտրություն	Աղքատություն	Ոչ ցանկալի երեխա	Չամուսնացած	Այլ	Չի հիշում	Տվյալ չկա		
<b>Տարիք</b>	*	*	*	*	*	*	*	*	*	100.0	2
15-19	(2.4)	(26.0)	(0.0)	(0.0)	(64.9)	(0.0)	(6.7)	(0.0)	(0.0)	100.0	27
20-24	8.5	7.6	13.0	3.1	59.1	0.0	7.9	0.8	0.0	100.0	120
25-29	2.9	0.7	2.9	12.4	76.3	0.0	4.7	0.0	0.0	100.0	111
30-34	12.1	11.4	9.3	1.8	59.6	0.8	3.3	1.7	0.0	100.0	79
35+											
<b>Կրթություն</b>											
Հիմնական	(4.2)	(5.2)	(8.0)	(17.2)	(65.5)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	100.0	28
Միջնակարգ	4.4	5.2	5.3	4.0	70.5	0.0	10.5	0.0	0.0	100.0	169
Միջին մասնագիտական	4.5	10.4	5.4	7.7	69.6	0.8	0.0	1.7	0.0	100.0	80
Բարձրագույն	19.3	13.7	17.9	2.1	43.4	0.0	2.1	1.6	0.0	100.0	59
<b>Բարեկեցության քվինտիլ</b>											
Ամենացածր	2.3	5.3	11.0	8.7	66.4	0.0	4.8	1.4	0.0	100.0	96
Երկրորդ	8.0	6.1	2.8	1.6	77.6	0.0	2.6	1.2	0.0	100.0	77
Միջին	3.3	9.3	11.0	0.0	75.3	1.1	0.0	0.0	0.0	100.0	58
Չորրորդ	1.6	9.2	7.4	4.7	70.1	0.0	7.0	0.0	0.0	100.0	52
Ամենաբարձր	(23.0)	(12.1)	(5.7)	(12.6)	(30.5)	(0.0)	(16.0)	(0.0)	(0.0)	100.0	54
Ընդամենը	7.0	7.9	7.7	5.6	65.4	0.2	5.6	0.7	0.0	100.0	338

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Ընդամենը ներառում է կանանց 2 դեպք (կշռված)՝ առանց որևէ կրթության:



**Հիմնական արդյունքներ**

- Հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում ծննդաբերած բոլոր կանայք իրենց վերջին ծնունդով հղիության ժամանակ ստացել են նախածննդյան հսկողություն և խնամք (ՆՀԽ) որակավորված բուժաշխատողի կողմից, նրանց 94 տոկոսը ստացել է ՆՀԽ հղիության առաջին եռամսյակում:
- Ըստ էության, հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում ծննդաբերած բոլոր կանայք նշել են, որ իրենց վերջին ծնունդով հղիության ժամանակ չափվել է արյան ճնշումը, վերցվել են մեզի և արյան անալիզներ, կատարվել է ուլտրաձայնային հետազոտություն: Մենդային հավելումներն ավելի քիչ են տարածված: Այսպես՝ կանանց ընդամենը 40 տոկոսն է ընդունել երկաթի հավելումներ, իսկ 45 տոկոսը՝ ֆոլաթթվի հավելումներ կամ պոլիվիտամիններ հղիության ընթացքում:
- Հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում կենդանի ծնունդների 99 տոկոսը տեղի է ունեցել բուժհաստատությունում, և 100 տոկոսի դեպքում ծնունդն ընդունել է որակավորված բուժաշխատողը:
- Հայաստանում հինգ ծննդաբերությունից գրեթե մեկը կատարվում է կեսարյան հատումով:
- Հետազոտությանը նախորդող երկու տարիների ընթացքում ծննդաբերած կանանց 97 տոկոսն անցել է հետծննդյան ստուգում որակավորված բուժաշխատողի կողմից ծննդաբերությունից հետո առաջին երկու օրվա ընթացքում:
- Հետազոտությանը նախորդող երկու տարիների ընթացքում տեղի ունեցած ծնունդների 98 տոկոսի դեպքում նորածիններն անցել են հետծննդյան ստուգում որակավորված բուժաշխատողի կողմից ծնվելուց հետո առաջին երկու օրվա ընթացքում:
- 15-49 տարեկան կանանց կեսից ավելին նշել է, որ անհրաժեշտ գումարի բացակայությունը հանդիսանում է բժշկական խորհրդատվություն կամ բուժում ստանալու համար լուրջ խոչընդոտ, մինչդեռ կանանց մեկ քառորդը որպես խոչընդոտ նշել է մենակ չգնալու ցանկությունը:

Վերարտադրողական և մայրական առողջության հսկողությունն ու պահպանումն իրականացվում է բուժակ<sup>1</sup>-մանկաբարձական կետերի (ԲՄԿ), պոլիկլինիկաների և հիվանդանոցների ընդարձակ համակարգի միջոցով: Ամբուլատոր առողջապահական ծառայությունների ցանցը կազմակերպված է ըստ աշխարհագրական միավորների (մարզերի) և իրականացվում է կանանց խորհրդատվության կենտրոնների և գյուղերում տեղակայված առողջապահական կազմակերպությունների միջոցով: Մանկաբարձական բուժօգնությունն

<sup>1</sup> Բուժակը քույրական և մանկաբարձական, ինչպես նաև հիվանդանոցային ախտորոշման ուսուցում անցած բուժմասնագետ է:

իրականացվում է հիվանդանոցների մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքներում, քաղաքային ծննդատներում և հանրապետական մասնագիտացված կենտրոններում: Հիմնական ծառայությունների փաթեթի շրջանակում վերարտադրողական առողջությանն առնչվող մի շարք ծառայություններ մատուցվում են անվճար բոլորի համար, իսկ որոշ խոցելի խմբերի համար նախատեսված է ծառայությունների առավել լայն շրջանակ:

Մույն գլխում ներկայացված են վերարտադրողական և մայրական առողջության վերաբերյալ մի քանի կարևոր թեմաներ՝ նախածննդյան հսկողություն և խնամք, ծննդօգնություն, հետծննդյան խնամք, անվճար ծննդօգնության հասանելիություն, ծննդօգնության ծառայությունների արժեք և բուժօգնության ստացման հետ կապված արգելքներ մոտակա բուժհաստատություն հասնելու համար անհրաժեշտ ժամանակ: Այս տվյալները մեծապես օգնում են բացահայտել կանանց այն ենթախմբերը, ովքեր օգտվում են առողջապահական որոշակի ծառայություններից, ինչպես նաև դրանք օգտակար են ծառայությունների մատուցման որակի բարելավմանն ուղղված ծրագրերի մշակման ժամանակ:

## **9.1 ՆԱԽԱԾՆՆԴՅԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՆԱՄՔ (ՆՀԽ)**

Ե՛վ մոր, և՛ մանկան գոյատևումն ու առողջությունը սերտորեն կապված են հղիության ընթացքում և ծննդաբերության ժամանակ մայրերին տրամադրվող բուժօգնությունից և խնամքից: Մույն գլխում նախածննդյան հսկողությունն ու խնամքը (ՆՀԽ) ներկայացվում է ըստ այն մատուցողի, այցերի քանակի, առաջին այցի ժամանակ հղիության ժամկետի, այցերի ժամանակ տրամադրված ծառայությունների և տեղեկատվության, ներառյալ՝ ուլտրաձայնային հետազոտությունը:

### **9.1.1 Նախածննդյան հսկողություն և խնամք մատուցողները**

Աղյուսակ 9.1-ը ցույց է տալիս, որ Հայաստանում բոլոր կանայք (100 տոկոս) ստացել են նախածննդյան հսկողություն և խնամք որակավորված մասնագետի կողմից: Այս ցուցանիշը շարունակաբար աճել է՝ ՀԺԱՀ 2000-ի արդյունքներով կազմելով 92 տոկոս, ՀԺԱՀ 2005-ի արդյունքներով՝ 93 տոկոս, և ՀԺԱՀ 2010-ի արդյունքներով՝ 99 տոկոս (ԱՎԾ, 2001, ԱՎԾ 2006, ԱՎԾ 2012): Նախածննդյան հսկողության և խնամքի համար դիմած գրեթե բոլոր կանայք (99 տոկոս) այդ ծառայությունները ստացել են բժշկի կողմից, և ընդամենը 1 տոկոսը՝ բուժքրոջ/մանկաբարձուհու կողմից: ՆՀԽ մատուցելու տեսանկյունից բուժքրոջ, մանկաբարձուհու և բուժակի մասնակցությունը աստիճանաբար նվազել է՝ 2000-ին կազմելով 9 տոկոս, 2005-ին՝ 3 տոկոս, իսկ 2010-ին և 2015-16-ին՝ 1 տոկոսից էլ քիչ<sup>2</sup>:

<sup>2</sup> Պետք է նկատի ունենալ, որ հարցվողը կարող էր նշել ՆՀԽ մատուցած մի քանի բուժաշխատողի մասին, սակայն աղյուսակները կազմելիս հաշվի է առնվել միայն ամենաբարձր որակավորում ունեցող բուժաշխատողը:

**Աղյուսակ 9.1 Նախաձեռնության հսկողություն և խնամք**

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած 15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումն ըստ վերջին հղիության ժամանակ նախաձեռնության հսկողություն և խնամք մատուցող բուժաշխատողի, և այն կանանց տոկոսը, ովքեր իրենց վերջին հղիության ժամանակ ստացել են ՆՀԽ որակավորված մասնագետի կողմից, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Նախաձեռնության հսկողություն և խնամք մատուցողը						Կանանց թվաքանակ
	Բժիշկ	Բուժքույր/ մանկաբար- ձուհի	Տվյալ չկա	Չի ստացել ՆՀԽ	Ընդամենը	Տոկոսը, որ ստացել է ՆՀԽ որակավորված մասնագետի կողմից <sup>1</sup>	
<b>Մոր տարիքը</b>							
<b>ծննդաբերելիս</b>							
<20	100.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	63
20-34	98.7	0.8	0.1	0.4	100.0	99.6	1,207
35-49	97.3	2.7	0.0	0.0	100.0	100.0	92
<b>Մուտքերի հաջորդականություն</b>							
1	98.8	1.1	0.1	0.0	100.0	99.9	495
2-3	99.0	0.6	0.0	0.4	100.0	99.6	818
4-5	(91.4)	(5.9)	(0.0)	(2.7)	(100.0)	(97.3)	45
6+	*	*	*	*	*	*	3
<b>Բնակավայր</b>							
Քաղաքային	99.3	0.5	0.1	0.1	100.0	99.9	794
Գյուղական	97.8	1.5	0.0	0.7	100.0	99.3	568
<b>Մարզ</b>							
Երևան	100.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	398
Արագածոտն	100.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	51
Արարատ	97.6	0.9	0.4	1.1	100.0	98.5	140
Արմավիր	96.7	2.3	0.0	1.0	100.0	99.0	147
Գեղարքունիք	86.8	10.4	0.0	2.8	100.0	97.2	65
Լոռի	98.6	1.4	0.0	0.0	100.0	100.0	76
Կոտայք	100.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	200
Շիրակ	100.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	130
Սյունիք	100.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	46
Վայոց ձոր	99.1	0.9	0.0	0.0	100.0	100.0	30
Տավուշ	100.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	78
<b>Կրթություն</b>							
Հիմնական	98.0	0.0	0.0	2.0	100.0	98.0	70
Միջնակարգ	98.0	1.2	0.1	0.6	100.0	99.3	533
Միջին մասնագիտական	98.8	1.2	0.0	0.0	100.0	100.0	286
Բարձրագույն	99.5	0.5	0.0	0.0	100.0	100.0	472
<b>Բարեկեցության քվինտիլ</b>							
Ամենացածր	97.0	1.9	0.0	1.1	100.0	98.9	252
Երկրորդ	98.6	1.4	0.0	0.0	100.0	100.0	275
Միջին	98.1	1.1	0.0	0.8	100.0	99.2	253
Չորրորդ	99.2	0.5	0.2	0.0	100.0	99.8	250
Ամենաբարձր	100.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	331
Ընդամենը	98.7	0.9	0.0	0.3	100.0	99.6	1,361

Նշում: Եթե որպես ՆՀԽ մատուցող նշվել է մի քանի բուժաշխատող, ապա այս աղյուսակում հաշվի է առնվել միայն ամենաբարձր որակավորում ունեցող անձը: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա, աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

<sup>1</sup> Որակավորված մասնագետ ասելով նկատի ունենք բժիշկ, բուժքույր, մանկաբարձուհի և բուժակ: Բուժակը քույրական և մանկաբարձական, ինչպես նաև հիվանդանոցային ախտորոշման ուսուցում անցած բուժմասնագետ է:

Ըստ ՆՀԽ մատուցողների՝ տարբերությունները կանանց ենթախմբերի մեջ շատ փոքր են: Ամենանկատելի տարբերություններն արտահայտվում են մարզային կտրվածքով: Գեղարքունիքում կանանց 87 տոկոսը ստացել է ՆՀԽ բժշկի կողմից, 10 տոկոսը՝ բուժքրոջ կամ մանկաբարձուհու, իսկ 3 տոկոսն ընդհանրապես չի ստացել նախաձեռնության հսկողություն և խնամք:

**9.1.2 ՆՀԽ այցերի քանակը և ժամկետները**

Հղիության և ծննդաբերության ժամանակ բարդությունների կանխումը և բարեհաջող ելքը թե՛ մոր, թե՛ երեխայի համար կապված են նախաձեռնության հսկողության և խնամքի որակի, այցերի քանակի և առաջին այցի ժամանակ հղիության ժամկետի հետ: ՀՀ առողջապահության նախարարությունն ընդունել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության

ուղեցույցները, համաձայն որոնց՝ նորմալ ընթացող հղիության համար առաջարկվում է իրականացնել ՆՀԽ 4-6 այց, իսկ առաջին այցն իրականացնել մինչև հղիության 12-րդ շաբաթը:

Այն, որ ժամանակի ընթացքում ՆՀԽ մատուցման որակը բարելավվել է, արտացոլված է այն կանանց մասնաբաժնի աճով, ովքեր իրենց վերջին հղիության համար կատարել են չորս կամ ավելի ՆՀԽ այց: Աղյուսակ 9.2-ը ցույց է տալիս, որ հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց 96 տոկոսն իրենց վերջին հղիության ժամանակ կատարել է չորս կամ ավելի ՆՀԽ այց: Այստեղ նկատվում է կայուն աճ՝ 2000-ին (65 տոկոս), 2005-ին (71 տոկոս) և 2010-ին (93 տոկոս) գրանցված մասնաբաժինների համեմատությամբ: Չնայած ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի չորս կամ ավելի ՆՀԽ այց կատարած կանանց մասնաբաժինը որոշակիորեն տարբերվում է 2015-16-ին (համապատասխանաբար 98 և 94 տոկոս)՝ այդ երկուսի միջև տարբերությունը շատ ավելի փոքր է, քան նախորդ ՀԺԱՀ հետազոտությունների արդյունքում գրանցված տարբերությունները (օրինակ՝ 2000-ին գրանցվել էր համապատասխանաբար 82 և 45 տոկոս):

**Աղյուսակ 9.2 Նախածննդյան հսկողության և խնամքի այցերի քանակը և առաջին այցի ժամանակ հղիության ժամկետը**

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած 15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումն ըստ վերջին հղիության ժամանակ նախածննդյան հսկողության և խնամքի (ՆՀԽ) այցերի քանակի, առաջին ՆՀԽ այցի ժամկետի, և ՆՀԽ ստացած կանանց շրջանում առաջին ՆՀԽ այցի ժամանակ հղիության ամիսների մեղիանն ըստ բնակավայրի, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Բնակավայր		
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
<b>ՆՀԽ այցերի քանակ</b>			
Ոչ մի	0.1	0.7	0.3
1	0.2	0.3	0.2
2-3	1.0	3.5	2.1
4+	97.8	93.6	96.0
Չգիտի/տվյալ չկա	1.0	1.9	1.3
Ընդամենը	100.0	100.0	100.0
<b>Առաջին ՆՀԽ այցի ժամանակ հղիության ամիսների քանակը</b>			
Ոչ մի ՆՀԽ այց	0.1	0.7	0.3
<4	94.6	92.3	93.6
4-5	4.9	5.9	5.4
6-7	0.1	0.7	0.3
8+	0.3	0.0	0.2
Չգիտի/տվյալ չկա	0.0	0.3	0.1
Ընդամենը	100.0	100.0	100.0
Կանանց թվաքանակ	794	568	1,361
Առաջին ՆՀԽ այցի ժամանակ հղիության ամիսների մեղիանը (նրանց համար, ով ստացել է ՆՀԽ)	2.9	3.0	2.9
ՆՀԽ ստացած կանանց թվաքանակ	793	563	1,357

Ընդհանուր առմամբ, կանանց 94 տոկոսը կատարել է ՆՀԽ առաջին այցը հղիության առաջին եռամսյակում: Քաղաքաբնակ կանայք մի փոքր ավելի են հակված առաջին այցը կատարել առաջին եռամսյակում, քան գյուղաբնակները (համապատասխանաբար 95 և 92 տոկոս):

### 9.1.3 Ֆուլաթթվի և երկաթի հավելումներ

Հղիությունից առաջ կամ հղիության ընթացքում կանանց խորհուրդ է տրվում ընդունել ֆուլաթթվի հաբեր կամ պոլիվիտամիններ՝ պտղի մոտ հնարավոր արատների առաջացումը, ինչպիսին են նյարդային խողովակի արատները, կանխելու նպատակով: Նրանց նաև խորհուրդ է տրվում ընդունել երկաթ պարունակող հավելումներ հղիության ընթացքում, քանի որ մոր սակավարյունությունը ինչպես մայրական, այնպես էլ նորածնային մահացության հիմնական

պատճառն է: Աղյուսակ 9.3-ը ցույց է տալիս, որ վերջին հինգ տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց 16 տոկոսն ընդունել է ֆոլաթթվի հաբեր կամ պոլիվիտամիններ հղիությունից անմիջապես առաջ, իսկ 45 տոկոսը՝ հղիության ընթացքում: Կանանց 40 տոկոսն ընդունել է երկաթ պարունակող հաբեր կամ օշարակ իրենց վերջին կենդանի ծնունդով ավարտված հղիության ընթացքում, այսինքն՝ այս ցուցանիշը, ՀՏԱՀ 2010-ին գրանցված 29 տոկոսի հետ համեմատ, աճել է:

**Աղյուսակ 9.3 Նախածննդյան հսկողության և խնամքի բաղադրիչները**

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած 15-49 տարեկան այն կանանց տոկոսը, ովքեր վերջին կենդանի ծնունդով հղիության ժամանակ ընդունել են երկաթ պարունակող հաբեր կամ օշարակ և ֆոլաթթվի հաբեր կամ պոլիվիտամիններ, և հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում վերջին կենդանի ծնունդի ժամանակ նախածննդյան հսկողություն և խնամք ստացած այն կանանց տոկոսը, ում մատուցվել է ՆՀՆ որոշակի ծառայություններ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Վերջին 5 տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց տոկոսը, որ վերջին կենդանի ծնունդով հղիությունից անմիջապես առաջ ընդունել է ֆոլաթթվի հաբեր կամ պոլիվիտամիններ			Վերջին 5 տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց տոկոսը, որ վերջին կենդանի ծնունդով հղիության ժամանակ			Վերջին 5 տարիների ընթացքում իրենց վերջին կենդանի ծնունդի ժամանակ ՆՀՆ ստացած կանանց տոկոսը, ում մատուցվել է որոշակի ծառայություն		
	Ընդունել է երկաթ պարունակող հաբեր կամ օշարակ	Ընդունել է ֆոլաթթվի հաբեր կամ պոլիվիտամիններ	Ընդունել է ֆոլաթթվի հաբեր կամ պոլիվիտամիններ	Չափվել է արյան ճնշումը	Հանձնել է մեզի անալիզ	Հանձնել է արյան անալիզ	Այն կանանց թվաքանակը, որ իրենց վերջին ծնունդի ժամանակ ստացել են ՆՀՆ		
<b>Մոր տարիքը ծննդաբերելիս</b>									
<20	10.0	29.1	30.8	63	100.0	100.0	100.0	63	
20-34	16.0	39.5	46.3	1,207	99.8	99.8	99.8	1,202	
35-49	20.6	53.5	41.7	92	99.1	98.2	99.1	92	
<b>Ծնունդների հաջորդականություն</b>									
1	19.9	42.2	47.3	495	99.4	99.4	99.4	495	
2-3	13.8	38.4	44.7	818	99.9	99.8	99.9	815	
4-5	(15.0)	(42.6)	(36.2)	45	(100.0)	(100.0)	(100.0)	44	
6+	*	*	*	3	*	*	*	3	
<b>Բնակավայր</b>									
Քաղաքային	18.3	42.6	49.5	794	99.8	99.8	99.8	793	
Գյուղական	13.0	36.3	39.5	568	99.6	99.4	99.6	563	
<b>Մարզ</b>									
Երևան	17.1	42.8	48.0	398	100.0	100.0	100.0	398	
Արագածոտն	29.1	70.2	57.2	51	100.0	100.0	100.0	51	
Արարատ	9.6	44.7	19.6	140	98.7	98.1	98.7	139	
Արմավիր	12.3	31.2	42.4	147	99.4	99.4	99.4	146	
Գեղարքունիք	17.0	25.9	45.9	65	100.0	100.0	100.0	63	
Լոռի	11.7	51.0	67.4	76	100.0	100.0	100.0	76	
Կոտայք	10.9	35.8	56.0	200	99.6	99.6	99.6	200	
Շիրակ	12.8	19.0	30.3	130	100.0	100.0	100.0	130	
Սյունիք	63.7	92.0	90.3	46	100.0	100.0	100.0	46	
Վայոց ձոր	14.6	27.4	39.3	30	99.2	99.2	99.2	30	
Տավուշ	15.5	33.4	27.0	78	100.0	100.0	100.0	78	
<b>Կրթություն</b>									
Հիմնական	16.0	39.7	38.7	70	100.0	98.9	100.0	69	
Միջնակարգ	14.3	37.0	40.0	533	99.7	99.7	99.7	530	
Միջին մասնագիտական	15.8	38.3	43.2	286	99.4	99.4	99.4	286	
Բարձրագույն	18.3	44.4	53.6	472	99.9	99.9	99.9	472	
<b>Բարեկեցության քվինտիլ</b>									
Ամենացածր	11.7	31.6	34.1	252	99.4	99.1	99.4	249	
Երկրորդ	15.2	42.1	42.1	275	99.6	99.6	99.6	275	
Միջին	18.1	40.0	47.3	253	100.0	100.0	100.0	251	
Չորրորդ	19.2	42.1	46.2	250	99.7	99.7	99.7	250	
Ամենաբարձր	16.2	42.8	54.3	331	99.9	99.9	99.9	331	
Ընդամենը	16.1	40.0	45.3	1,361	99.7	99.7	99.7	1,357	

Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա, աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

Տարիքով ավելի մեծ և քաղաքաբնակ կանայք ավելի են հակված ֆուլաթթվի և երկաթի հավելումներ ընդունելուն, քան մյուս կանայք: Տարբերություններն ըստ կրթական և բարեկեցության մակարդակների միանշանակ չեն: Մակայն բարեկեցության ամենացածր քվինտիլում գտնվող կանայք ամենաքիչն են հակված թե՛ ֆուլաթթվի, թե՛ երկաթի հավելումներ ընդունելուն: Ամենաշատ տարբերություններն արտահայտված են մարզային կտրվածքով: Օրինակ՝ այն կանանց մասնաբաժինը, ովքեր իրենց վերջին ծնունդով հղիության ժամանակ ընդունել են երկաթի հավելումներ, տատանվում է Շիրակի մարզում գրանցված 19 տոկոսից մինչև Սյունիքի մարզում գրանցված 92 տոկոսը: Նմանապես՝ այն կանանց մասնաբաժինը, ովքեր ընդունել են ֆուլաթթվի հաբեր կամ պոլիվիտամիններ հղիության ընթացքում, տատանվում է Արարատի մարզում գրանցված 20 տոկոսից մինչև Սյունիքի մարզում գրանցված 90 տոկոսը:

#### **9.1.4 Նախածննդյան հսկողության և խնամքի բաղադրիչները**

Հայաստանում ստանդարտ նախածննդյան հսկողությունն ու խնամքը ներառում է մեզի և արյան անալիզ և արյան ճնշման չափում: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում կանայք, ովքեր վերջին հինգ տարիների ընթացքում իրենց վերջին ծնունդի համար ստացել են նախածննդյան հսկողություն և խնամք, պատասխանել են՝ արդյոք ՆՀԽ այցերից առնվազն մեկի ժամանակ այս ծառայություններից յուրաքանչյուրը մատուցվել է իրենց, թե ոչ (Աղյուսակ 9.3): Նախածննդյան հսկողության և խնամքի բաղադրիչները կարևոր են դրա արժեքայնությունը գնահատելիս: Հղիության ժամանակ առաջացած բարդությունները հանդիսանում են մոր և մանկան մահացության և հիվանդացության պատճառ, և հետևաբար, բարդությունների բացահայտման նման հետազոտությունները պետք է ներառված լինեն նախածննդյան հսկողության և խնամքի մեջ:

Ըստ էության, Հայաստանում բոլոր կանայք, ովքեր հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում ունեցել են կենդանի ծնունդ, իրենց վերջին հղիության ժամանակ կատարած ՆՀԽ այցերից առնվազն մեկի ժամանակ ստացել են բոլոր առանձնացված ծառայությունները, ներառյալ արյան ճնշման չափումը և մեզի ու արյան անալիզը:

#### **9.1.5 Ուլտրաձայնային հետազոտություն**

Ի հավելումն մեզի և արյան անալիզի՝ նախածննդյան ուլտրաձայնային հետազոտությունները ևս կարող են երևան հանել հղիության հետ կապված որոշակի խնդիրների նշաններ: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հարցազրույցի մասնակցած կանայք, ովքեր վերջին հինգ տարիների ընթացքում իրենց վերջին ծնունդի համար ստացել են նախածննդյան հսկողություն և խնամք, հարցվել են, թե արդյոք ՆՀԽ այցերից առնվազն մեկի ժամանակ կատարվել է պտղի ուլտրաձայնային հետազոտություն, թե ոչ: Արդյունքները ցույց են տալիս, որ կանանց 99 տոկոսը հղիության ընթացքում անցել է առնվազն մեկ ուլտրաձայնային հետազոտություն (Աղյուսակ 9.4): Այն կանանց շրջանում, ովքեր նշել են, որ անցել են առնվազն մեկ ուլտրաձայնային հետազոտություն, մեծամասնությունը (77 տոկոս) ասել է, որ ուլտրաձայնային հետազոտությունները եղել են երեք կամ ավելի անգամ:

**Աղյուսակ 9.4 Ուլտրաձայնային հետազոտությունները նախաձեռնության հսկողության և խնամքի ժամանակ**

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում իրենց վերջին կենդանի ծնունդի համար նախաձեռնության հսկողություն և խնամք (ՆՀԽ) ստացած կանանց տոկոսը, ովքեր անցել են պտղի ուլտրաձայնային հետազոտություն, և նրանց թվում այն կանանց տոկոսը, որ անցել են մեկ, երկու կամ երեք հետազոտություն և առաջին ուլտրաձայնային հետազոտության ժամանակ հղիության ամիսների թվի մեղիանը, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Անցել է առնվազն մեկ ՌԻՉՀ	Այն կանանց թվաքանակը, որ իրենց վերջին ծնունդի ժամանակ ստացել է ՆՀԽ	ՆՀԽ ստացած կանանց տոկոսը, ովքեր վերջին 5 տարիների ընթացքում իրենց վերջին ծնունդի համար անցել են ՌԻՉՀ, նրանց թվում այն կանանց տոկոսը, որ անցել է մեկ, երկու կամ երեք հետազոտություն և առաջին ՌԻՉՀ ժամանակ հղիության ամիսների թվի մեղիանը					Այն կանանց թվաքանակը, որ անցել են ՌԻՉՀ
			Մեկ ՌԻՉՀ	Երկու ՌԻՉՀ	Երեք կամ ավելի ՌԻՉՀ	Չգիտի/տվյալ չկա	Առաջին ՌԻՉՀ ժամանակ հղիության ամիսների թվի մեղիանը	
<b>Տարիքը հղիության ելքի ժամանակ</b>								
<20	97.5	58	2.8	17.7	77.8	1.8	3.7	57
20-24	99.1	459	5.6	18.0	75.9	0.4	3.5	455
25-34	99.7	742	4.0	18.0	77.5	0.5	3.4	740
35-44	100.0	96	2.4	18.9	78.7	0.0	3.4	96
45-49	*	2	*	*	*	*	*	2
<b>Ծնունդների հաջորդականություն</b>								
1	98.8	495	3.9	16.0	79.5	0.6	3.4	489
2-3	99.8	815	4.7	19.3	75.6	0.5	3.5	813
4-5	(100.0)	44	(2.8)	(19.4)	(77.8)	(0.0)	(3.7)	44
6+	*	3	*	*	*	*	*	3
<b>Վերջին ծնունդի սեռը</b>								
Արական	99.5	723	3.8	19.1	76.5	0.5	3.4	719
Իգական	99.4	633	5.0	16.8	77.7	0.5	3.5	630
<b>Բնակավայր</b>								
Քաղաքային	99.9	793	2.2	16.4	81.1	0.4	3.4	792
Գյուղական	98.8	563	7.5	20.4	71.4	0.7	3.5	556
<b>Մարզ</b>								
Երևան	100.0	398	1.1	9.6	88.5	0.8	3.2	398
Արագածոտն	100.0	51	0.0	9.7	84.9	5.4	4.3	51
Արարատ	95.6	139	27.9	29.2	42.9	0.0	4.2	133
Արմավիր	99.0	146	0.9	16.2	82.4	0.4	3.4	144
Գեղարքունիք	100.0	63	3.7	16.1	80.2	0.0	3.9	63
Լոռի	100.0	76	2.7	41.6	55.7	0.0	3.6	76
Կոտայք	100.0	200	2.1	17.9	80.0	0.0	3.4	200
Շիրակ	100.0	130	4.3	16.4	79.3	0.0	3.2	130
Սյունիք	100.0	46	0.0	39.3	60.7	0.0	3.5	46
Վայոց ձոր	99.2	30	2.9	13.8	82.3	0.9	3.5	30
Տավուշ	100.0	78	1.4	21.4	77.2	0.0	3.3	78
<b>Կրթություն</b>								
Հիմնական	97.9	69	8.2	22.5	69.3	0.0	3.5	67
Միջնակարգ	99.2	530	6.0	22.3	70.7	1.1	3.6	525
Միջին մասնագիտական	99.6	286	4.2	18.0	77.3	0.4	3.4	285
Բարձրագույն	99.9	472	2.1	12.7	85.3	0.0	3.3	471
<b>Բարեկեցության քվինտիլ</b>								
Ամենացածր	98.4	249	7.9	25.9	65.2	1.1	3.6	245
Երկրորդ	98.9	275	7.8	19.3	72.6	0.4	3.5	272
Միջին	100.0	251	1.9	18.5	78.3	1.2	3.4	251
Չորրորդ	100.0	250	2.4	18.3	79.3	0.0	3.4	250
Ամենաբարձր	99.8	331	2.3	10.7	87.1	0.0	3.3	331
Ընդամենը	99.4	1,357	4.4	18.0	77.1	0.5	3.4	1,349

Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չլշոված դեպքերի վրա, աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չլշոված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

Չնայած, ըստ հիմնական բնութագրիչների, հղիության ընթացքում առնվազն մեկ ուլտրաձայնային հետազոտություն անցած կանանց միջև տարբերությունները նշանակալի չեն, ավելի կրթված և բարեկեցության ավելի բարձր քվինտիլներում գտնվող կանայք ավելի են հակված երեք կամ ավելի ուլտրաձայնային հետազոտություն անցնելուն: Կանայք քաղաքային

բնակավայրերում և Երևանում ևս ավելի են հակված հղիության ընթացքում երեք կամ ավելի ուլտրաձայնային հետազոտություն անցնելուն, քան կանայք գյուղական բնակավայրերում և մյուս մարզերում: Առաջին ուլտրաձայնային հետազոտության ժամանակ հղիության ամիսների թվի մեղիանը 3.4 է, այսինքն՝ կանանց մեծամասնությունն անցնում է հետազոտությունը հղիության առաջին եռամսյակի վերջում կամ երկրորդ եռամսյակի սկզբում:

## **9.2 ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

Հիգիենիկ պայմանները և որակավորված բուժաշխատողների հսկողությունը ծննդաբերության ժամանակ նվազեցնում են վարակների վտանգը և ապահովում են ծննդաբերության ընթացքում հնարավոր բարդությունների արդյունավետ կանխումը: ՀԺԱՀ 2015-16-ը հավաքագրել է տեղեկատվություն նախորդող հինգ տարիների ընթացքում ծնված բոլոր երեխաների ծննդաբերության վայրի և ծնունդն ընդունած բուժանձնակազմի վերաբերյալ: Հարցեր են տրվել նաև ծննդաբերության համար կատարված վճարումների մասին:

### **9.2.1 Ծննդաբերության վայրը**

Աղյուսակ 9.5-ը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր ծննդաբերությունները (99 տոկոս) տեղի են ունեցել բուժհաստատությունում: Բուժհաստատությունում տեղի ունեցած ծննդաբերությունների մասնաբաժինն աճել է՝ 2000-ին գրանցված 91 տոկոսից մինչև 97 տոկոս 2005-ին, այնուհետև 99 տոկոս 2010-ին և 2015-16-ին: Գրեթե բոլոր ծննդաբերությունները տեղի են ունեցել պետական հատվածի բուժհաստատություններում, իսկ ընդամենը 4 տոկոսը՝ մասնավոր բուժհաստատություններում: Ըստ հիմնական բնութագրիչների՝ տարբերությունները շատ փոքր են: Միակ բացառությունն Արմավիրի մարզն է, որտեղ ծննդաբերությունների համեմատաբար մեծ մասնաբաժինը (14 տոկոս) տեղի է ունեցել մասնավոր բուժհաստատություններում:



**Աղյուսակ 9.5 Ծննդաբերության վայրը**

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում տեղի ունեցած կենդանի ծնունդների տոկոսային բաշխումն ըստ ծննդաբերության վայրի, և բուժհաստատությունում տեղի ունեցած ծննդաբերությունների տոկոսը, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Բժշկական հաստատություն		Տուն	Այլ	Տվյալ չկա	Ընդամենը	Բուժհաստատությունում տեղի ունեցած ծննդաբերությունների տոկոսը	Ծնունդների թվաքանակ
	Պետական հատված	Մասնավոր հատված						
<b>Մոր տարիքը ծննդաբերելիս</b>								
<20	94.2	4.6	0.0	0.0	1.2	100.0	98.8	99
20-34	95.8	3.5	0.2	0.1	0.4	100.0	99.3	1,475
35-49	97.7	2.3	0.0	0.0	0.0	100.0	100.0	98
<b>Ծնունդների հաջորդականություն</b>								
1	94.8	4.4	0.3	0.0	0.4	100.0	99.3	741
2-3	96.5	2.9	0.0	0.1	0.5	100.0	99.3	876
4-5	100.0	0.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	51
6+	*	*	*	*	*		*	4
<b>Բնակավայր</b>								
Քաղաքային	96.4	2.6	0.2	0.1	0.7	100.0	99.0	962
Գյուղական	95.1	4.7	0.0	0.1	0.2	100.0	99.8	710
<b>Մարզ</b>								
Երևան	96.7	2.9	0.4	0.0	0.0	100.0	99.6	475
Արագածոտն	95.1	3.8	0.5	0.0	0.5	100.0	98.9	61
Արարատ	95.6	4.4	0.0	0.0	0.0	100.0	100.0	168
Արմավիր	85.0	14.0	0.0	0.3	0.6	100.0	99.0	190
Գեղարքունիք	99.2	0.0	0.0	0.0	0.8	100.0	99.2	77
Լոռի	97.9	2.1	0.0	0.0	0.0	100.0	100.0	99
Կոտայք	96.7	2.6	0.0	0.0	0.7	100.0	99.3	239
Շիրակ	97.6	0.0	0.0	0.0	2.4	100.0	97.6	168
Սյունիք	100.0	0.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	61
Վայոց ձոր	99.0	0.0	0.0	1.0	0.0	100.0	99.0	37
Տավուշ	100.0	0.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	99
<b>Մոր կրթությունը</b>								
Հիմնական	99.3	0.7	0.0	0.0	0.0	100.0	100.0	95
Միջնակարգ	96.0	3.8	0.0	0.0	0.3	100.0	99.7	670
Միջին մասնագիտական	97.8	1.7	0.1	0.3	0.1	100.0	99.5	346
Բարձրագույն	93.9	4.7	0.3	0.0	1.0	100.0	98.6	562
<b>Բարեկեցության քվինտիլ</b>								
Ամենացածր	95.3	4.4	0.0	0.1	0.2	100.0	99.7	324
Երկրորդ	95.8	3.8	0.0	0.0	0.4	100.0	99.6	338
Միջին	95.1	3.5	0.0	0.2	1.2	100.0	98.6	305
Չորրորդ	98.0	1.3	0.0	0.0	0.7	100.0	99.3	299
Ամենաբարձր	95.3	4.0	0.6	0.0	0.1	100.0	99.4	406
Ընդամենը	95.9	3.5	0.1	0.1	0.5	100.0	99.3	1,672

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

**9.2.2 Աջակցություն ծննդաբերության ժամանակ**

Հայաստանում ծնունդների ընդունումը որակավորված բուժաշխատողի կողմից համընդհանուր է (Աղյուսակ 9.6): Հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում տեղի ունեցած կենդանի ծնունդների 96 տոկոսի դեպքում ծնունդն ընդունել է բժիշկը, մինչդեռ բուժքրոջ կամ մանկաբարձուհու համար այս ցուցանիշը կազմել է 3 տոկոս: Որակավորված մասնագետի կողմից ընդունված ծնունդների մասնաբաժինը կանանց ենթախմբերի միջև էապես չի տարբերվում: Մակայն, համեմատած մյուս մարզերի հետ, բուժքրոջ և մանկաբարձուհու մասնակցությունը ծննդաբերությունների ժամանակ գերակշռում է Գեղարքունիքի (14 տոկոս) և Լոռու (11 տոկոս) մարզերում:

**Աղյուսակ 9.6 Աջակցությունը ծննդաբերության ժամանակ**

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում տեղի ունեցած կենդանի ծնունդների տոկոսային բաշխումն ըստ ծննդաբերության ժամանակ աջակցություն ցուցաբերած անձի, և ծնունդների տոկոսը, որոնց ժամանակ աջակցություն է ցուցաբերել որակավորված մասնագետը, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Ծննդաբերության ժամանակ աջակցություն ցուցաբերած անձ					Որակավորված մասնագետի օգնությամբ ծննդաբերածների տոկոս <sup>1</sup>	Ծնունդների թվաքանակ
	Բժիշկ	Բուժքույր/ մանկաբարձուհի	Բարեկամ/այլ	Չգիտի/ տվյալ չկա	Ընդամենը		
<b>Սոր տարիքը ծննդաբերելիս</b>							
<20	97.7	2.3	0.0	0.0	100.0	100.0	99
20-34	96.3	3.5	0.0	0.2	100.0	99.8	1,475
35-49	97.0	3.0	0.0	0.0	100.0	100.0	98
<b>Ծնունդների հաջորդականություն</b>							
1	96.7	3.0	0.0	0.3	100.0	99.7	741
2-3	96.4	3.5	0.0	0.1	100.0	99.9	876
4-5	92.4	7.6	0.0	0.0	100.0	100.0	51
6+	*	*	*	*	*	*	4
<b>Բնակավայր</b>							
Քաղաքային	96.2	3.5	0.0	0.3	100.0	99.7	962
Գյուղական	96.6	3.3	0.1	0.0	100.0	99.9	710
<b>Մաքր</b>							
Երևան	94.9	4.7	0.0	0.5	100.0	99.5	475
Արագածոտն	100.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	61
Արարատ	100.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	168
Արմավիր	93.8	6.2	0.0	0.0	100.0	100.0	190
Գեղարքունիք	84.8	14.4	0.0	0.8	100.0	99.2	77
Լոռի	89.3	10.7	0.0	0.0	100.0	100.0	99
Կոտայք	100.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	239
Շիրակ	99.4	0.6	0.0	0.0	100.0	100.0	168
Սյունիք	100.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	61
Վայոց ձոր	97.5	1.6	1.0	0.0	100.0	99.0	37
Տավուշ	100.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	99
<b>Սոր կրթությունը</b>							
Հիմնական	98.5	1.5	0.0	0.0	100.0	100.0	95
Միջնակարգ	95.6	4.3	0.0	0.1	100.0	99.9	670
Միջին մասնագիտական	97.6	2.3	0.1	0.0	100.0	99.9	346
Բարձրագույն	96.3	3.3	0.0	0.4	100.0	99.6	562
<b>Բարեկեցության քվինտիլ</b>							
Ամենացածր	95.6	4.1	0.1	0.2	100.0	99.7	324
Երկրորդ	96.8	3.2	0.0	0.0	100.0	100.0	338
Միջին	98.8	1.2	0.0	0.0	100.0	100.0	305
Չորրորդ	97.0	2.2	0.0	0.8	100.0	99.2	299
Ամենաբարձր	94.4	5.6	0.0	0.0	100.0	100.0	406
Ընդամենը	96.4	3.4	0.0	0.2	100.0	99.8	1,672

Նշում: Եթե հարցվողը նշել է մի քանի անձանց, ովքեր աջակցություն են ցուցաբերել ծննդաբերության ժամանակ, ապա այս աղյուսակում հաշվի է առնվել միայն ամենաբարձր որակավորում ունեցող անձը: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

<sup>1</sup> Որակավորված մասնագետ ասելով՝ նկատի ունենք բժիշկ, բուժքույր, մանկաբարձուհի և բուժակ:

**9.2.3 Կեսարյան հատումով ծննդաբերություններ**

Աղյուսակ 9.7-ը ներկայացնում է տեղեկատվություն կեսարյան հատումով ծննդաբերությունների ծավալի վերաբերյալ: Կեսարյան հատումով ծննդաբերությունների հասանելիությունը ծննդաբերությունների ժամանակ ի հայտ եկած բարդությունների պարագայում շտապ բուժօգնության հասանելիության գնահատման չափանիշ է: Առողջապահության համաշխարհային կազմակերպության «Ծննդաբերության համար համապատասխան տեխնոլոգիա» (1985) հրապարակման մեջ նշված է, որ կեսարյան հատումով ծննդաբերությունների ցուցանիշը չպետք է լինի 10-15 տոկոսից ավելի: Ըստ կեսարյան հատման ցուցանիշների վերաբերյալ ԱՀԿ վերջին հայտարարության (2015), որը հիմնված է առկա տվյալների վրա՝ բնակչության մակարդակով 10 տոկոսից ավելի կեսարյան հատման ցուցանիշները կապված չեն մայրական և նորածինների մահացության ցուցանիշների նվազման հետ (ԱՀԿ, 2015b):

**Աղյուսակ 9.7 Կեսարյան հատում**

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում տեղի ունեցած կենդանի ծնունդների տոկոսը, որի դեպքում ծննդաբերությունը եղել է կեսարյան հատումով, տոկոսը, որի դեպքում կեսարյան հատում կատարելու որոշումը կայացվել է ծննդաբերական ցավերից առաջ, և տոկոսը, որի դեպքում կեսարյան հատում կատարելու որոշումը կայացվել է ծննդաբերական ցավերից հետո, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կեսարյան հատումով	Կեսարյան հատում կատարելու որոշման կայացման ժամանակը		Ծնունդների թվաքանակ
	տոկոսը	Օննդաբերական ցավերից առաջ	Օննդաբերական ցավերից հետո	
<b>Սոր տարիքը ծննդաբերելիս</b>				
<20	8.1	5.2	2.8	99
20-34	18.0	15.1	2.9	1,475
35-49	27.5	25.0	2.6	98
<b>Ծնունդների հաջորդականություն</b>				
1	19.6	15.4	4.2	741
2-3	17.0	15.1	1.9	876
4-5	11.5	11.5	0.0	51
6+	*	*	*	4
<b>Բնակավայր</b>				
Քաղաքային	20.1	17.4	2.8	962
Գյուղական	15.0	12.0	3.0	710
<b>Մարզ</b>				
Երևան	23.1	20.0	3.1	475
Արագածոտն	6.5	3.3	3.3	61
Արարատ	14.6	13.8	0.7	168
Արմավիր	19.3	15.0	4.3	190
Գեղարքունիք	0.8	0.8	0.0	77
Լոռի	12.8	12.8	0.0	99
Կոտայք	21.4	18.7	2.7	239
Շիրակ	13.7	8.0	5.8	168
Սյունիք	13.5	12.4	1.0	61
Վայոց ձոր	14.5	11.0	3.4	37
Տավուշ	24.9	20.7	4.2	99
<b>Սոր կրթությունը</b>				
Հիմնական	15.2	13.8	1.4	95
Միջնակարգ	13.9	11.0	2.9	670
Միջին մասնագիտական	20.4	17.7	2.7	346
Բարձրագույն	21.8	18.5	3.2	562
<b>Բարեկեցության քվինտիլ</b>				
Ամենացածր	16.7	13.1	3.7	324
Երկրորդ	16.5	14.1	2.4	338
Միջին	16.5	12.8	3.7	305
Չորրորդ	19.2	16.5	2.8	299
Ամենաբարձր	20.4	18.2	2.1	406
Ընդամենը	18.0	15.1	2.9	1,672


Նշում: Կեսարյան հատմանը վերաբերող հարցը տրվում է միայն այն կանանց, ովքեր ծննդաբերել են բուժհաստատությունում: Այս աղյուսակում ենթադրվում է, որ եթե կինը չի ծննդաբերել բուժհաստատությունում, ապա նրան կեսարյան հատում չի կատարվել: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

Հայաստանում հինգ ծնունդից գրեթե 1-ի դեպքում (18 տոկոս) կատարվում է կեսարյան հատում: Այս ցուցանիշը գրանցել է շարունակական աճ՝ 2000-ին կազմելով 7, 2005-ին՝ 9, 2010-ին՝ 13 տոկոս: Կեսարյան հատումների մասնաբաժինն աճում է կնոջ տարիքին, կրթության և բարեկեցության մակարդակների աճին զուգընթաց: Առաջին ծնունդներն ավելի շատ են կատարվել կեսարյան հատմամբ, քան երկրորդ, երրորդ և հաջորդ ծնունդները: Քաղաքային կանանց շրջանում կեսարյան հատումով ծննդաբերությունները փոքր-ինչ ավելի տարածված են, քան գյուղային կանանց շրջանում (համապատասխանաբար 20 և 15 տոկոս): Կեսարյան հատումով ծննդաբերությունների տոկոսը խիստ տատանվում է ըստ մարզերի՝ Գեղարքունիքի մարզում գրանցված 1 տոկոսից մինչև Տավուշի մարզում գրանցված 25 տոկոսը: Ինչ վերաբերում է կեսարյան հատում կատարելու որոշման կայացման ժամանակին, գրեթե բոլոր դեպքերում որոշումը կայացվել

է ծննդաբերական ցավերից առաջ (15 տոկոս), և ընդամենը 3 տոկոսի դեպքում է որոշումը կայացվել ծննդաբերական ցավերից հետո:

Գծապատկեր 9.1-ը ներկայացնում է, թե ծննդաբերությունից հետո որքան ժամանակ է մայրը մնացել բուժհաստատությունում: Բնական ճանապարհով ծննդաբերած 10 կանանցից գրեթե 9-ը (86 տոկոս) մնացել են բուժհաստատությունում երեք կամ ավելի օր, մինչդեռ 13 տոկոսը՝ 1-2 օր: Կեսարյան հատումով ծննդաբերած մայրերի 98 տոկոսն առնվազն երեք օր մնացել է բուժհաստատությունում:

**Գծապատկեր 9.1 Ծննդաբերությունից հետո մայրերի բուժհաստատությունում գտնվելու տևողությունը**



ՀԺԱՀ 2015-16

#### 9.2.4 Ծննդաբերության համար կատարված վճարումներ

Որպես վերարտադրողական առողջության լայնածավալ բարեփոխումների մաս՝ 2008 թ. Հայաստանում ներդրվել է ծննդօգնության պետական հավաստագիրը, որի միջոցով կանայք իրավասու են ստանալ անվճար բուժճառայություններ ծննդաբերության համար: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում բուժհաստատությունում ծննդաբերած կանայք հարցվել են, թե արդյոք նրանք ունեցել են ծննդօգնության պետական հավաստագիր, արդյոք իրավասու են եղել ստանալ անվճար բուժսպասարկում և դեղորայք, և արդյոք վճարել են, կամ նրանցից գանձել են գումար ծննդաբերության հետ կապված որևէ ծառայության համար: Աղյուսակ 9.8-ը ցույց է տալիս, որ ծնունդների 99 տոկոսի դեպքում կանայք ունեցել են ծննդօգնության պետական հավաստագիր, 98 տոկոսի դեպքում իրավասու են եղել ստանալ անվճար բուժսպասարկում, իսկ 89 տոկոսի դեպքում իրավասու են եղել ստանալ անվճար դեղորայք: Ծնունդների միայն 13 տոկոսի դեպքում են կատարվել ծննդաբերության հետ կապված վճարումներ:

Անվճար ծառայություններ ստանալու իրավասության առումով տարբերությունները, ըստ հիմնական բնութագրիչների, աննշան են: Անվճար դեղորայք ստանալու իրավասության առումով հատկապես ցածր ցուցանիշ գրանցվել է Արագածոտնի մարզում, և համեմատաբար բարձր ցուցանիշ՝ գյուղական բնակավայրերի և ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող կանանց շրջանում: Մայրերը Կոտայքի մարզում ամենահաճախ են վճարել ծննդաբերության հետ կապված ծառայությունների համար:

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում ծննդաբերության հետ կապված վճարումներ կատարած փոքրաթիվ կանայք հարցվել են մատուցված տարբեր ծառայությունների դիմաց կատարված վճարի չափի մասին վերջին հինգ տարիների ընթացքում իրենց վերջին ծնունդի համար: Արդյունքները ներկայացված են Աղյուսակ 9.9-ում: Ծննդաբերության հետ կապված որևէ ծառայության համար վճարում կատարած գրեթե բոլոր կանայք վճարել են կանխիկ, նրանց միայն 12 տոկոսն է նշել, որ մատուցած ծառայություններից ոչ մեկի դիմաց գումար չի վճարել: 5 կանանցից մոտ 2-ը (43 տոկոս) վճարել են 51,000 կամ ավելի ՀՀ դրամ: Կանայք ավելի շատ վճարել են ծննդաբերության և այլ ծախսերի, քան լաբորատոր ծառայությունների և դեղորայքի համար: Ծննդաբերության բոլոր ծառայությունների համար կատարված վճարումների մեղիանը կազմել է 59, 231 ՀՀ դրամ:

**Աղյուսակ 9.8 Ծննդաբերության հետ կապված անվճար ծառայությունների հասանելիություն**

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում տեղի ունեցած կենդանի ծնունդների տոկոսը, որի դեպքում կինն ունեցել է ծննդոգնության պետական հավաստագիր, տոկոսը, որի դեպքում մայրն իրավասու է եղել ստանալ անվճար բուժսպասարկում և դեղորայք, տոկոսը, որի դեպքում գանձվել է գումար ծննդաբերության համար, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում տեղի ունեցած կենդանի ծնունդների տոկոսը, որի դեպքում մայրը				
	Ունեցել է ծննդոգնության պետական հավաստագիր	Իրավասու է եղել ստանալ անվճար բուժսպասարկում ծննդաբերության ժամանակ	Իրավասու է եղել ստանալ անվճար դեղորայք ծննդաբերության ժամանակ	Վճարել է ծննդաբերության համար	Ծնունդների թվաքանակ
<b>Մոր տարիքը ծննդաբերելիս</b>					
<20	99.7	96.1	91.0	10.7	99
20-34	99.1	98.0	88.8	13.5	1,475
35-49	96.6	96.6	80.3	6.8	98
<b>Քնակավայր</b>					
Քաղաքային	99.1	98.2	85.9	12.2	962
Գյուղական	98.8	97.2	92.0	14.1	710
<b>Մարզ</b>					
Երևան	99.5	99.1	79.6	9.4	475
Արագածոտն	99.4	97.2	56.8	2.2	61
Արարատ	98.4	98.4	94.2	13.4	168
Արմավիր	99.7	100.0	96.7	12.6	190
Գեղարքունիք	99.2	99.2	94.7	21.8	77
Լոռի	97.6	98.7	98.7	9.8	99
Կոտայք	98.3	99.5	93.1	30.1	239
Շիրակ	98.2	85.4	83.8	2.8	168
Սյունիք	100.0	100.0	100.0	6.5	61
Վայոց ձոր	98.6	99.3	92.4	13.5	37
Տավուշ	99.6	99.6	98.4	13.0	99
<b>Կրթություն</b>					
Հիմնական	97.8	97.8	96.6	10.5	95
Միջնակարգ	98.9	97.6	88.3	12.0	670
Միջին մասնագիտական	99.4	97.9	89.5	12.3	346
Բարձրագույն	99.0	97.9	86.7	14.9	562
<b>Բարեկեցության քվինտիլ</b>					
Ամենացածր	98.5	97.1	92.4	12.3	324
Երկրորդ	99.3	97.9	91.8	13.2	338
Միջին	99.3	98.3	91.9	12.6	305
Չորրորդ	98.7	95.8	85.1	13.4	299
Ամենաբարձր	99.1	99.3	82.6	13.4	406
Ընդամենը	99.0	97.8	88.5	13.0	1,672

**Աղյուսակ 9.9 Վերջին ծնունդի համար կատարված վճարումներ**

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում ծնված վերջին երեխայի ժամանակ ծննդաբերության համար գումար վճարած կանանց տոկոսային բաշխումն ըստ այն հանգամանքի, թե արդյոք գումար վճարվել է, թե ոչ, վճարելու պարագայում գումարի չափի, և վճարումների մեղիանը, ըստ ծառայությունների տեսակի, Հայաստան, 2015-16 թթ.

Ծննդաբերության համար վճարը և գումարի չափը	Վճարում ծննդաբերության հետ կապված որևէ ծառայության համար	Ծննդաբերության հետ կապված վճարումներն ըստ մատուցված ծառայության տեսակի			
		Լաբորատորիա	Դեղորայք	Ծննդաբերություն	Այլ ծախսեր
<b>Վճարել է և գիտի գումարի չափը</b>	<b>79.3</b>	<b>13.3</b>	<b>10.4</b>	<b>48.5</b>	<b>45.4</b>
1,000-5,000 ՀՀ դրամ	0.6	0.7	0.0	1.3	0.6
6,000-10,000 ՀՀ դրամ	0.2	1.6	1.3	0.2	1.6
11,000-25,000 ՀՀ դրամ	6.3	5.1	4.1	2.6	7.7
26,000-50,000 ՀՀ դրամ	28.8	3.1	2.7	14.0	20.7
51,000+ ՀՀ դրամ	43.4	2.7	2.2	30.4	14.8
<b>Վճարել է, բայց չգիտի գումարի չափը</b>	<b>8.8</b>	<b>12.7</b>	<b>14.0</b>	<b>12.0</b>	<b>12.6</b>
<b>Չի վճարել</b>	<b>11.9</b>	<b>74.0</b>	<b>75.6</b>	<b>39.5</b>	<b>42.1</b>
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0
Կանանց թվաքանակ	175	175	175	175	175
Վճարումների մեղիան (ՀՀ դրամ) <sup>1</sup>	59,231	22,428	24,753	59,848	39,682

<sup>1</sup> Կանանց շրջանում, ովքեր նշել են վճարված գումարի չափը, 1 ԱՄՆ դոլարը համարժեք է 486 ՀՀ դրամին: Առաջին սյունակում մեղիանը հաշվարկվել է գումարելով բոլոր ծառայությունների համար կնոջ վճարած գումարի չափերը:

**9.3 ՀԵՏՏՆՆՅԱՆ ԽՆԱՄՔ ՄՈՐ ՀԱՄԱՐ**

Հետծննդյան շրջանը ծննդաբերությունից անմիջապես հետո և դրան հաջորդող 42 օրվա ժամանակահատվածն է: Հետծննդյան խնամքը հնարավորություն է տալիս հաղթահարել ծննդաբերությունից հետո առաջացած բարդությունները և մայրերին տրամադրել տեղեկատվություն իրենց և իրենց երեխաների ճիշտ խնամքի վերաբերյալ: Քանի որ մայրական մահացությունների մեծ մասը տեղի է ունենում ծննդաբերությանը հաջորդող առաջին մի քանի օրերի ընթացքում, հետծննդյան խնամքի ցուցաբերման ժամկետը շատ կարևոր է:

**9.3.1 Մոր հետծննդյան ստուգումների ժամկետը**

Աղյուսակ 9.10-ը ներկայացնում է տեղեկատվություն հետազոտությանը նախորդող երկու տարիների ընթացքում ծննդաբերած կանանց վերջին ծննդաբերության ժամանակ հետծննդյան առաջին խնամք ստանալու վերաբերյալ: Տվյալները ցույց են տալիս, որ այս կանանց 97 տոկոսն անցել է հետծննդյան ստուգում ծննդաբերությունից հետո առաջին երկու օրվա ընթացքում: Հինգ կանանցից երեքը (60 տոկոս) անցել են հետծննդյան ստուգումը ծննդաբերությունից հետո 4 ժամվա ընթացքում: Տարբերություններն ըստ հիմնական բնութագրիչների՝ շատ փոքր են:

**Աղյուսակ 9.10 Հետծննդյան առաջին ստուգման ժամկետը մոր համար**

Հետազոտությանը նախորդող 2 տարիների ընթացքում ծննդաբերած կանանց տոկոսային բաշխումն ըստ վերջին կենդանի ծնունդի ծննդաբերությունից հետո հետծննդյան առաջին ստուգման ժամկետի, և տոկոսը, որ անցել է հետծննդյան առաջին ստուգումը ծննդաբերությունից հետո առաջին երկու օրվա ընթացքում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Ծննդաբերությունից հետո հետծննդյան առաջին ստուգման ժամկետը մոր համար <sup>1</sup>						Չի անցել հետծննդյան ստուգում <sup>2</sup>	Ընդամենը	Ծննդաբերությունից հետո առաջին 2 օրվա ընթացքում հետծննդյան ստուգում անցածների տոկոս <sup>1</sup>	Կանանց թվաքանակ
	Մինչև 4 ժամ	4-23 ժամ	1-2 օր	3-6 օր	7-41 օր	Չգիտի/ տվյալ չկա				
<b>Մոր տարիքը ծննդաբերելիս</b>										
<20	(57.0)	(10.2)	(32.8)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(100.0)	(100.0)	36
20-34	59.5	13.7	23.8	0.9	0.1	0.5	1.6	100.0	97.0	579
35-49	(70.5)	(6.8)	(22.7)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(100.0)	(100.0)	52
<b>Օնուղևների հաջորդականություն</b>										
1	57.7	14.9	25.5	1.1	0.0	0.0	0.8	100.0	98.1	278
2-3	61.5	12.3	23.0	0.6	0.1	0.8	1.8	100.0	96.7	367
4+	*	*	*	*	*	*	*	*	*	21
<b>Բնակավայր</b>										
Քաղաքային	60.5	13.8	23.4	1.1	0.1	0.2	1.0	100.0	97.6	391
Գյուղական	59.8	11.9	25.3	0.4	0.0	0.8	1.8	100.0	97.0	275
<b>Մարզ</b>										
Երևան	58.7	15.9	24.2	1.2	0.0	0.0	0.0	100.0	98.8	190
Արագածոտն	(10.5)	(19.4)	(70.1)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(100.0)	(100.0)	22
Արարատ	55.5	21.8	22.8	0.0	0.0	0.0	0.0	100.0	100.0	65
Արմավիր	49.0	4.6	45.4	1.0	0.0	0.0	0.0	100.0	99.0	79
Գեղարքունիք	(30.6)	(24.9)	(38.2)	(0.0)	(0.0)	(6.3)	(0.0)	(100.0)	(93.7)	28
Լոռի	(28.7)	(17.9)	(47.9)	(2.9)	(0.0)	(0.0)	(2.6)	(100.0)	(94.5)	36
Կոտայք	87.8	2.9	6.4	0.8	0.0	1.1	1.1	100.0	97.0	103
Շիրակ	60.6	18.5	12.2	0.0	0.0	0.0	8.7	100.0	91.3	65
Սյունիք	(95.4)	(4.6)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(100.0)	(100.0)	24
Վայոց ձոր	(60.6)	(16.1)	(10.8)	(2.5)	(0.0)	(0.0)	(10.1)	(100.0)	(87.4)	13
Տավուշ	78.2	6.8	14.1	0.0	0.9	0.0	0.0	100.0	99.1	43
<b>Կրթություն</b>										
Հիմնական	(59.3)	(11.5)	(29.2)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(100.0)	(100.0)	39
Միջնակարգ	59.0	11.2	26.7	1.0	0.0	0.4	1.6	100.0	97.0	266
Միջին մասնագիտական	62.4	10.0	24.9	0.2	0.0	0.8	1.7	100.0	97.2	133
Բարձրագույն	60.4	17.0	20.0	1.0	0.2	0.3	1.2	100.0	97.4	229
<b>Բարեկեցության քվինտիլ</b>										
Ամենացածր	53.4	11.3	31.0	0.7	0.0	0.9	2.7	100.0	95.7	117
Երկրորդ	61.7	13.2	23.8	0.0	0.0	0.0	1.3	100.0	98.7	141
Միջին	66.9	10.7	19.9	0.3	0.0	1.4	0.8	100.0	97.6	126
Չորրորդ	60.0	10.9	23.5	3.4	0.3	0.0	1.8	100.0	94.5	122
Ամենաբարձր	58.6	17.3	23.5	0.0	0.0	0.0	0.6	100.0	99.4	161
Ընդամենը	60.2	13.0	24.2	0.8	0.1	0.4	1.4	100.0	97.4	666

Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկրթված դեպքերի վրա, աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկրթված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

<sup>1</sup> Ներառում է կանանց, ովքեր ստուգվել են բժշկի, մանկաբարձուհու, բուժքրոջ, բուժակի կամ ավանդական ծնունդ ընդունողի կողմից:


<sup>2</sup> Ներառում է կանանց, ովքեր անցել են ստուգում 41 օր հետո:

**9.3.2 Մոր հետծննդյան ստուգումներ իրականացնողը**

Գծապատկեր 9.2-ը ներկայացնում է հետազոտությանը նախորդող երկու տարվա ընթացքում վերջին ծննդաբերությունից հետո հետծննդյան ստուգում իրականացնող բուժաշխատողի մասին տեղեկատվություն: Գրեթե բոլորին զննել է բժիշկը (95 տոկոս), ընդամենը 3 տոկոսին՝ բուժքույրը կամ մանկաբարձուհին, և ևս 3 տոկոսը չի անցել հետծննդյան ստուգում ծննդաբերությունից հետո առաջին երկու օրվա ընթացքում:

**Գծապատկեր 9.2 Մորը տրամադրված հետծննդյան խնամքն իրականացնողը**

Վերջին 2 տարիների ընթացքում ծննդաբերած կանանց տոկոս



ՀԺԱՀ 2015-16

**9.4 ՀԵՏԾՆՆՈՅԱՆ ԽՆԱՄՔ ԿԱՆԱՅԻ ԶԱՄԱՐ**

**9.4.1 Նորածինների հետծննդյան խնամքի ժամկետը**

Աղյուսակ 9.11-ը ցույց է տալիս, որ հետազոտությանը նախորդող երկու տարիների ընթացքում ծնված երեխաների 98 տոկոսն անցել է հետծննդյան ստուգում ծննդաբերությունից հետո առաջին երկու օրվա ընթացքում, այսինքն՝ 2010 թ. համեմատությամբ (50 տոկոս) այս ցուցանիշը գրեթե կրկնակի անգամ աճել է<sup>3</sup>: Նորածինների ընդամենը 30 տոկոսն է անցել հետծննդյան ստուգում ծննդաբերությունից հետո առաջին մեկ ժամվա ընթացքում, իսկ 50 տոկոսը՝ ծննդաբերությունից հետո 1-3 ժամվա ընթացքում: Հետծննդյան խնամքի ծավալի և ժամկետի առումով տարբերություններն ըստ հիմնական բնութագրիչների մեծ չեն, հետծննդյան խնամքի ժամկետի առումով տարբերություններն ըստ մարզերի համեմատելի չեն դեպքերի փոքր թվաքանակի պատճառով:

<sup>3</sup> ՀԺԱՀ 2015-16-ի՝ հետծննդյան ստուգումների վերաբերյալ տվյալները նախորդ հետազոտությունների տվյալների հետ համեմատելիս պետք է նկատի ունենալ, որ նորածինների հետծննդյան խնամքին վերաբերող հարցերը փոփոխվել են՝ հետծննդյան խնամքի ծավալների մասին ավելի լավ պատկերացում կազմելու համար: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում բուժհաստատությունում ծննդաբերած կանայք հարցվել են, թե արդյոք բուժհաստատությունում գտնվելու ընթացքում որևէ մեկը ստուգել է երեխայի առողջական վիճակը, և երբ է տեղի ունեցել առաջին ստուգումը: Կանայք նաև հարցվել են, թե արդյոք որևէ մեկը ստուգել է երեխայի առողջությունը բուժհաստատությունից դուրս գրվելուց հետո՝ 2 ամսվա ընթացքում, և երբ է տեղի ունեցել այդ ստուգումը: Իսկ ՀԺԱՀ 2010-ի և նախորդ հետազոտությունների ժամանակ բուժհաստատությունում ծննդաբերած կանայք հարցվել են, թե արդյոք որևէ մեկը ստուգել է երեխայի առողջական վիճակը ծննդաբերությունից հետո՝ 2 ամսվա ընթացքում, և երբ է տեղի ունեցել առաջին ստուգումը, սակայն չի մասնավորեցվել՝ ստուգումը վերաբերում է բուժհաստատությունում գտնվելու ժամանակահատվածին, թե բուժհաստատությունից դուրս գրվելուց հետո ընկած ժամանակահատվածին:



**Աղյուսակ 9.11 Հետծննդյան առաջին ստուգման ժամկետը նորածնի համար**

Հետազոտությանը նախորդող 2 տարիների ընթացքում տեղի ունեցած ծնունդների տոկոսային բաշխումն ըստ ծննդաբերությունից հետո հետծննդյան առաջին ստուգման ժամկետի, և ծնունդների տոկոսը, որ անցել է հետծննդյան առաջին ստուգումը ծննդաբերությունից հետո առաջին 2 օրվա ընթացքում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Ծննդաբերությունից հետո հետծննդյան առաջին ստուգման ժամկետը նորածնի համար <sup>1</sup>						Չի անցել հետծննդյան ստուգում <sup>2</sup>	Ընդամենը	Ծննդաբերությունից հետո առաջին 2 օրվա ընթացքում հետծննդյան ստուգում անցածների տոկոս <sup>1</sup>	Ծնունդների թվաքանակ
	Մինչև 1 ժամ	1-3 ժամ	4-23 ժամ	1-2 օր	3-6 օր	Չգիտի/տվյալ չկա				
<b>Մոր տարիքը ծննդաբերելիս</b>										
<20	(23.6)	(55.9)	(4.8)	(15.8)	(0.0)	(0.0)	(0.0)	(100.0)	(100.0)	36
20-34	30.1	50.2	8.8	8.9	0.2	1.7	0.1	100.0	97.9	579
35-49	(38.8)	(45.7)	(12.3)	(3.2)	(0.0)	(0.0)	(0.0)	(100.0)	(100.0)	52
<b>Ծնունդների հաջորդականություն</b>										
1	29.4	54.5	6.0	9.9	0.0	0.0	0.3	100.0	99.7	278
2-3	31.6	46.8	11.4	7.2	0.3	2.7	0.0	100.0	97.0	367
4+	*	*	*	*	*	*	*	*	*	21
<b>Բնակավայր</b>										
Քաղաքային	32.6	49.8	9.0	6.6	0.3	1.5	0.2	100.0	98.0	391
Գյուղական	27.3	50.7	8.5	12.0	0.0	1.5	0.0	100.0	98.5	275
<b>Մարզ</b>										
Երևան	27.0	56.0	11.2	4.6	0.0	1.2	0.0	100.0	98.8	190
Արագածոտն	(0.0)	(48.2)	(10.8)	(41.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(100.0)	(100.0)	22
Արարատ	16.2	68.2	12.8	2.0	0.0	0.8	0.0	100.0	99.2	65
Արմավիր	0.0	50.3	11.3	38.5	0.0	0.0	0.0	100.0	100.0	79
Գեղարքունիք	(2.0)	(40.1)	(38.9)	(14.8)	(0.0)	(4.1)	(0.0)	(100.0)	(95.9)	28
Լոռի	(81.7)	(12.2)	(0.0)	(0.0)	(2.9)	(3.3)	(0.0)	(100.0)	(93.8)	36
Կոտայք	84.2	11.6	2.0	1.1	0.0	1.1	0.0	100.0	98.9	103
Շիրակ	7.5	75.5	6.2	5.1	0.0	4.5	1.2	100.0	94.3	65
Սյունիք	(15.2)	(84.8)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(100.0)	(100.0)	24
Վայոց ձոր	(10.2)	(75.9)	(5.9)	(8.1)	(0.0)	(0.0)	(0.0)	(100.0)	(100.0)	13
Տավուշ	33.5	63.6	0.9	0.0	0.0	2.1	0.0	100.0	97.9	43
<b>Մոր կրթությունը</b>										
Հիմնական	(33.8)	(49.9)	(9.9)	(6.4)	(0.0)	(0.0)	(0.0)	(100.0)	(100.0)	39
Միջնակարգ	27.2	47.6	9.6	13.9	0.0	1.6	0.0	100.0	98.4	266
Միջին մասնագիտական	38.2	51.4	2.3	5.7	0.0	1.7	0.6	100.0	97.7	133
Բարձրագույն	29.1	52.4	11.4	5.1	0.5	1.5	0.0	100.0	98.0	229
<b>Բարեկեցության քվինտիլ</b>										
Ամենացածր	27.1	47.4	8.9	15.1	0.0	1.6	0.0	100.0	98.4	117
Երկրորդ	26.5	53.9	8.4	10.4	0.0	0.8	0.0	100.0	99.2	141
Միջին	38.4	43.4	6.4	8.0	0.0	3.1	0.6	100.0	96.3	126
Չորրորդ	29.7	56.6	6.8	3.5	0.9	2.7	0.0	100.0	96.5	122
Ամենաբարձր	30.6	49.4	12.4	7.5	0.0	0.0	0.0	100.0	100.0	161
Ընդամենը	30.4	50.2	8.8	8.8	0.2	1.5	0.1	100.0	98.2	666

Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկրթված դեպքերի վրա, աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկրթված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

<sup>1</sup> Ներառում է նորածինների, ովքեր ստուգվել են բժշկի, մանկաբարձուհու, բուժքրոջ, բուժակի կամ ավանդական ծնունդ ընդունողի կողմից:

<sup>2</sup> Ներառում է նորածինների, ովքեր անցել են ստուգում 41 օր հետո:

**9.4.2 Նորածինների հետծննդյան ստուգումներ իրականացնողը**

Աղյուսակ 9.12-ը ցույց է տալիս, որ նորածինների մեծ մասի հետծննդյան ստուգումն իրականացրել է բժիշկը (88 տոկոս), 10 տոկոսինը՝ բուժքույրը կամ մանկաբարձուհին: Քաղաքաբնակ, ավելի բարձր կրթական և բարեկեցության մակարդակ ունեցող մայրերի դեպքում նորածինների հետծննդյան խնամքն ավելի շատ իրականացվում է բժշկի կողմից: Դեպքերի փոքր թվաքանակը դժվարացնում է տարբերությունների մեկնաբանությունը մարզային կտրվածքով:

**Աղյուսակ 9.12 Նորածնի հետծննդյան առաջին ստուգումն իրականացնողը**

Հետազոտությանը նախորդող 2 տարիների ընթացքում տեղի ունեցած վերջին ծնունդների տոկոսային բաշխումն ըստ ծննդաբերությունից հետո առաջին 2 օրվա ընթացքում նորածնի հետծննդյան առաջին ստուգումն իրականացնող անձի և ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Նորածնի հետծննդյան առաջին ստուգումն իրականացնող բուժաշխատող				
	Բժիշկ	Բուժքույր/ մանկաբարձուհի	Չի անցել հետծննդյան ստուգում ծննդաբերությունից հետո առաջին 2 օրվա ընթացքում	Ընդամենը	Ծնունդների թվաքանակ
<b>Սոր տարիքը ծննդաբերելիս</b>					
<20	(83.8)	(16.2)	(0.0)	(100.0)	36
20-34	88.8	9.2	2.1	100.0	579
35-49	(88.3)	(11.7)	(0.0)	(100.0)	52
<b>Ծնունդների հաջորդականություն</b>					
1	90.0	9.7	0.3	100.0	278
2-3	87.8	9.2	3.0	100.0	367
4+	*	*	*	*	21
<b>Բնակավայր</b>					
Քաղաքային	91.5	6.5	2.0	100.0	391
Գյուղական	84.1	14.5	1.5	100.0	275
<b>Մարզ</b>					
Երևան	95.5	3.3	1.2	100.0	190
Արագածոտն	(90.8)	(9.2)	(0.0)	(100.0)	22
Արարատ	93.2	6.0	0.8	100.0	65
Արմավիր	57.7	42.3	0.0	100.0	79
Գեղարքունիք	(79.0)	(16.8)	(4.1)	(100.0)	28
Լոռի	(91.6)	(2.3)	(6.2)	(100.0)	36
Կոտայք	91.0	7.9	1.1	100.0	103
Շիրակ	92.6	1.7	5.7	100.0	65
Սյունիք	(100.0)	(0.0)	(0.0)	(100.0)	24
Վայոց ձոր	(62.5)	(37.5)	(0.0)	(100.0)	13
Տավուշ	97.9	0.0	2.1	100.0	43
<b>Սոր կրթությունը</b>					
Հիմնական	(84.8)	(15.2)	(0.0)	(100.0)	39
Միջնակարգ	84.6	13.7	1.6	100.0	266
Միջին մասնագիտական	93.3	4.4	2.3	100.0	133
Բարձրագույն	90.7	7.3	2.0	100.0	229
<b>Բարեկեցության քվինտիլ</b>					
Ամենացածր	83.2	15.2	1.6	100.0	117
Երկրորդ	83.5	15.7	0.8	100.0	141
Միջին	90.2	6.1	3.7	100.0	126
Չորրորդ	92.3	4.2	3.5	100.0	122
Ամենաբարձր	92.3	7.7	0.0	100.0	161
Ընդամենը	88.4	9.8	1.8	100.0	666

Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա, աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

**9.4.3 Նորածինների հետծննդյան խնամքի բաղադրիչներ**

Աղյուսակ 9.13-ը ներկայացնում է տեղեկատվություն հետազոտությանը նախորդող երկու տարիների ընթացքում տեղի ունեցած վերջին ծնունդի համար ծննդաբերությունից հետո առաջին երկու օրվա ընթացքում նորածիններին տրված խնամքի վերաբերյալ: Մայրերը նշել են, որ գրեթե բոլոր ծնունդների դեպքում (99 տոկոս) ստուգվել է պորտալարը, իսկ ծնունդների 98 տոկոսի դեպքում չափվել է երեխայի ջերմությունը: Գրեթե բոլոր մայրերին (96 տոկոս) խորհուրդ է տրվել կրծքով կերակրման վերաբերյալ, իսկ նրանց 89 տոկոսի դեպքում բուժաշխատողը հետևել է կրծքով կերակրման ընթացքին: Մայրերի 86 տոկոսը նշել է, որ ստացել է խորհրդատվություն նորածինների մոտ հնարավոր վտանգավոր նշանների մասին (որ կարող են վկայել որևէ լուրջ հիվանդության

մասին): Մայրերը հաղորդել են, որ բոլոր նորածինները (100 տոկոս), բացառությամբ շատ փոքր տոկոսի, ծնվելուց անմիջապես հետո կշռվել են: Ըստ էության, բոլոր նորածինները ստացել են հետծննդյան խնամքի բաղադրիչներից առնվազն երկուսը, իսկ 5 ծնունդից գրեթե 4-ը (79 տոկոս)՝ հետծննդյան խնամքի բոլոր վեց բաղադրիչներ (տվյալներն առանձին ցույց տրված չեն): Տարբերություններն ըստ հիմնական բնութագրիչների մեծ չեն:

**Աղյուսակ 9.13 Նորածինների հետծննդյան խնամքի բաղադրիչներ**

Հետազոտությանը նախորդող 2 տարիների ընթացքում տեղի ունեցած վերջին ծնունդների տոկոսն ըստ ծնվելուց հետո առաջին 2 օրվա ընթացքում իրականացված հետծննդյան խնամքի առանձին բաղադրիչների, և տոկոսը, ում դեպքում ծնվելուց հետո առաջին 2 օրվա ընթացքում իրականացվել է հետծննդյան խնամքի բաղադրիչներից առնվազն երկուսը, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հետազոտությանը նախորդող 2 տարիների ընթացքում տեղի ունեցած վերջին ծնունդների տոկոսը, ում ծնվելուց հետո առաջին 2 օրվա ընթացքում իրականացվել է հետծննդյան խնամքի բաղադրիչներից յուրաքանչյուրը

Հիմնական բնութագրիչներ	Ստուգվել է պորտալարը	Չափվել է ջերմությունը	Տրվել է		Կրծքով կերակրման ընթացքի դիտարկում	Կշռվել է <sup>1</sup>	Ծնվելուց հետո առաջին 2 օրվա ընթացքում խնամքի առնվազն 2 բաղադրիչ ստացածների տոկոս	Ծնունդների թվաքանակ
			Վտանգավոր նշանների վերաբերյալ	Սրվել է խորհրդատվություն հնարավոր վտանգավոր կերակրման վերաբերյալ				
<b>Մոր տարիքը ծննդաբերելիս</b>								
<20	(98.2)	(95.1)	(86.2)	(97.4)	(92.7)	(100.0)	(100.0)	36
20-34	99.2	97.8	85.6	95.1	88.7	99.5	99.4	579
35-49	(100.0)	(98.1)	(96.1)	(98.8)	(86.8)	(100.0)	(100.0)	52
<b>Ծնունդների հաջորդականություն</b>								
1	99.0	97.1	87.8	95.3	92.0	99.4	99.7	278
2-3	99.3	98.0	85.4	95.3	86.5	99.6	99.3	367
4-5	*	*	*	*	*	*	*	19
6+	*	*	*	*	*	*	*	2
<b>Բնակավայր</b>								
Քաղաքային	99.0	98.2	88.1	94.6	87.3	99.6	99.1	391
Գյուղական	99.5	97.0	84.2	96.7	90.9	99.5	100.0	275
<b>Մայրը</b>								
Երևան	99.2	99.2	91.5	95.3	88.4	100.0	99.2	190
Արագածոտն	(100.0)	(90.9)	(84.7)	(95.5)	(89.3)	(100.0)	(100.0)	22
Արարատ	100.0	98.8	80.5	90.3	90.0	97.1	100.0	65
Արմավիր	98.2	100.0	82.3	100.0	92.6	100.0	100.0	79
Գեղարքունիք	(100.0)	(100.0)	(76.7)	(100.0)	(83.5)	(100.0)	(100.0)	28
Լոռի	(96.7)	(96.7)	(62.9)	(84.5)	(81.9)	(100.0)	(96.7)	36
Կոտայք	100.0	100.0	99.0	99.2	89.1	100.0	100.0	103
Շիրակ	98.8	85.9	78.9	97.3	94.6	98.8	98.8	65
Սյունիք	(97.4)	(100.0)	(91.7)	(88.4)	(79.9)	(100.0)	(100.0)	24
Վայոց ձոր	(100.0)	(100.0)	(92.5)	(94.5)	(94.5)	(100.0)	(100.0)	13
Տավուշ	100.0	98.0	84.0	94.7	84.3	99.0	100.0	43
<b>Մոր կրթությունը</b>								
Հիմնական	(96.3)	(100.0)	(77.8)	(97.1)	(84.2)	(100.0)	(100.0)	39
Միջնակարգ	99.3	97.1	85.1	96.5	91.5	99.1	99.6	266
Միջին մասնագիտական	99.4	97.3	85.3	96.4	88.7	99.4	99.4	133
Բարձրագույն	99.3	98.1	90.3	93.4	86.5	100.0	99.3	229
<b>Բարեկեցության քվինտիլ</b>								
Ամենացածր	98.8	97.8	77.8	96.3	86.6	100.0	100.0	117
Երկրորդ	99.6	97.3	87.2	96.4	91.4	99.3	100.0	141
Միջին	99.4	97.2	90.4	96.1	90.4	99.4	99.4	126
Չորրորդ	99.0	98.1	84.9	93.9	88.9	100.0	99.0	122
Ամենաբարձր	99.1	98.0	90.2	94.7	86.7	99.1	99.1	161
Ընդամենը	99.2	97.7	86.5	95.5	88.8	99.5	99.5	666

Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա, աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

<sup>1</sup> Բացահայտում է այն նորածիններին, ովքեր կշռվել են ծնվելուց անմիջապես հետո: Այն նորածինները, ովքեր կշռվել են ծնվելուց հետո 2 օրվա ընթացքում, հնարավոր է այստեղ ներառված չլինեն:

## 9.5 ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԲՈՒԺՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՇԵՏ ԿԱՊԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Շատ հանգամանքներ կարող են խոչընդոտել կնոջը բժշկական խորհրդատվություն կամ բուժում ստանալու հարցում: ՀԺԱՀ 2015-16-ը ներառում էր հարցեր այն խոչընդոտների վերաբերյալ, որոնց կինը կարող է բախվել իր առողջության համար խնամք ստանալիս: Բոլոր կանայք հարցվել են, թե արդյոք հետևյալ գործոնները հանդիսանում են մեծ խնդիր նրանց համար, թե ոչ, հիվանդության ժամանակ բժշկական խորհրդատվություն կամ բուժում ստանալու առումով. բժշկի գնալու համար թույլտվություն ստանալը, անհրաժեշտ գումարի ձեռքբերումը, բուժհաստատության հեռավորությունը կամ մենակ չգնալու ցանկությունը:

Աղյուսակ 9.14-ը ցույց է տալիս, որ երեք կանանցից գրեթե երկուսի համար այս գործոններից առնվազն մեկը կարող է հանդիսանալ կարևոր խոչընդոտ բուժօգնության ստանալու հարցում: Որպես ամենահաճախ հանդիպող խոչընդոտ՝ կանայք նշել են անհրաժեշտ գումարի բացակայությունը (55 տոկոս): Չորս կանանցից մեկը (25 տոկոս), որպես խոչընդոտ նշել է մենակ չգնալու ցանկությունը, կանանց 9 տոկոսը նշել է բուժհաստատության հեռավորությունը, իսկ բժշկի գնալու համար թույլտվության ստացումն ամենաքիչը նշված խոչընդոտն է (4 տոկոս):

**Աղյուսակ 9.14 Բժշկական խորհրդատվություն կամ բուժում ստանալու հետ կապված խոչընդոտներ**

Հիվանդության ժամանակ իրենց համար խորհրդատվություն կամ բուժում ստանալու հետ կապված լուրջ խոչընդոտներ ունեցող 15-49 տարեկան կանանց տոկոսն ըստ խոչընդոտի տեսակի և ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Խորհրդատվություն և բուժում ստանալու հետ կապված խոչընդոտներ					
	Բժշկի գնալու համար թույլտվության ստացում	Անհրաժեշտ գումարի ձեռքբերում	Բուժհաստատության հեռավորություն	Մենակ չգնալու ցանկություն	Առնվազն մեկ խոչընդոտ	Կանանց թվաքանակ
<b>Տարիք</b>						
15-19	6.3	45.3	9.1	50.8	67.9	725
20-34	4.3	53.4	9.7	26.2	62.3	3,034
35-49	3.6	60.1	8.7	14.4	65.3	2,357
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>						
0	5.3	47.6	8.0	35.5	63.2	2,120
1-2	3.4	58.4	8.8	18.8	64.0	2,990
3-4	4.6	59.9	12.8	18.0	65.4	966
5+	(10.1)	(81.1)	(18.7)	(31.0)	(89.6)	39
<b>Ամուսնական կարգավիճակ</b>						
Երբևէ չամուսնացած	5.5	47.1	8.0	36.6	63.1	1,830
Ամուսնացած կամ համատեղ բնակվող	3.7	57.1	9.8	19.9	63.5	3,895
Ամուսնալուծված/բաժանված/այրի	4.4	71.6	9.0	14.4	74.7	390
<b>Զբաղվածությունը վերջին 12 ամիսների ընթացքում</b>						
Գործազուրկ	4.2	56.6	9.8	29.1	66.9	3,650
Աշխատող դրամական վարձատվությամբ	4.4	53.3	7.6	18.1	60.6	2,115
Աշխատող ոչ դրամական վարձատվությամբ	4.8	49.7	13.4	15.9	55.9	351
<b>Քնակալայր</b>						
Քաղաքային	3.3	54.4	5.6	21.7	63.6	3,657
Գյուղական	5.8	56.0	14.7	28.8	64.8	2,459
<b>Մարզ</b>						
Երևան	3.7	57.4	6.1	24.0	68.5	2,001
Արագածոտն	13.6	72.9	25.1	23.0	73.7	315
Արարատ	2.7	54.8	14.5	32.8	64.6	552
Արմավիր	0.0	40.4	5.6	12.2	42.5	586
Գեղարքունիք	15.4	45.5	16.1	36.9	60.2	478
Լոռի	0.0	44.0	0.2	21.4	55.0	355
Կոտայք	0.5	56.0	1.6	24.2	64.5	678
Շիրակ	3.0	65.9	9.5	23.2	73.4	510
Սյունիք	5.1	64.2	13.2	13.8	67.1	238
Վայոց ձոր	11.2	49.1	17.3	26.7	54.4	119
Տավուշ	4.4	52.1	21.7	33.8	68.5	283
<b>Կրթություն</b>						
Հիմնական	6.2	62.4	16.2	36.0	74.4	396
Միջնակարգ	5.4	62.1	11.3	27.7	70.1	2,444
Միջին մասնագիտական	2.5	60.0	8.6	20.9	67.2	1,360
Բարձրագույն	3.7	41.0	5.7	20.7	52.2	1,910
<b>Բարեկեցության քվինտիլ</b>						
Ամենացածր	5.7	65.1	18.9	30.7	71.5	1,081
Երկրորդ	5.2	55.2	10.9	24.5	62.3	1,242
Միջին	4.4	55.9	8.4	23.7	65.3	1,142
Չորրորդ	3.9	54.6	5.1	23.7	65.3	1,287
Ամենաբարձր	2.6	46.6	4.7	21.3	57.8	1,365
Ընդամենը	4.3	55.0	9.2	24.5	64.1	6,116

Նշում: Ընդամենը ներառում է առանց որևէ կրթության 5 դեպք (կին):

Վերջին 5 տարիների ընթացքում առնվազն մեկ խոչընդոտ նշած կանանց մասնաբաժինը քիչ թե շատ կայուն է մնացել՝ 2010-ին գրանցված 66 տոկոսից նվազելով 64 տոկոսի 2015-16-ին: Այն կանանց մասնաբաժինը, ովքեր, որպես խոչընդոտ, նշել են բուժհաստատության հեռավորությունը, 19 տոկոսից նվազել է մինչև 9 տոկոս, իսկ մենակ չգնալու ցանկությունը 2010-ին գրանցված 33 տոկոսից նվազել է մինչև 25 տոկոս:

Ամուսնալուծված, բաժանված կամ այրի կանայք ավելի են հակված առնվազն մեկ խոչընդոտ նշելուն, քան երբևէ չամուսնացած կամ ներկայում ամուսնացած կանայք: Չաշխատող կանայք ևս

ավելի հավանական է, որ բախված լինեն որևէ խոչընդոտի: Կանայք Արագածոտնի և Շիրակի մարզերում ամենաշատն են հակված նշելու առնվազն մեկ խոչընդոտ, մինչդեռ կանայք Արմավիրի մարզում ամենաքիչն են հանդիպում որևէ խոչընդոտի բժշկական խորհրդատվություն կամ բուժում ստանալու հետ կապված: Առնվազն մեկ խոչընդոտ նշած կանանց մասնաբաժինը նվազում է կնոջ կրթական և բարեկեցության մակարդակների աճին գուրնթաց:

## 9.6 ՄՈՏԱԿԱ ԲՈՒԺՆԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հավաքագրվել է տեղեկատվություն, թե մոտակա բուժհաստատություն հասնելու համար սովորաբար ինչ փոխադրամիջոց են օգտագործում SS-ները, և թե որքան ժամանակ է անհրաժեշտ այնտեղ հասնելու համար: Այս տեղեկատվությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու առողջապահական ծառայությունների հասանելիության և բուժհաստատություն հասնելու հետ կապված հնարավոր դժվարությունների մասին: Աղյուսակ 9.15-ը ցույց է տալիս, որ SS-ների կեսից մի փոքր ավելին նշել է, որ իրենց տնային տնտեսության անդամները ոտքով են գնում մոտակա բուժհաստատություն, որից սովորաբար օգտվում են, 29 տոկոսը գնում է մեքենայով կամ տաքսիով, իսկ 15 տոկոսը՝ հասարակական տրանսպորտով: SS-ների մեծամասնությունը (89 տոկոս) նշել է, որ մոտակա բուժհաստատություն հասնելու համար անհրաժեշտ է 30 րոպեից պակաս ժամանակ: Գրեթե ոչ մի SS չի նշել, որ մոտակա բուժհաստատություն հասնելու համար անհրաժեշտ է 1 ժամից ավելի: SS-ների մասնաբաժինը, որ նշել է, թե իրենց անհրաժեշտ է 30 րոպեից պակաս ժամանակ մոտակա բուժհաստատություն հասնելու համար, ավելի մեծ է ոտքով բուժհաստատություն գնացողների շրջանում (93 տոկոս)՝ համեմատած հասարակական տրանսպորտով գնացողների հետ (82 տոկոս) (տվյալներն առանձին ներկայացված չեն):

Արագածոտնի (35 տոկոս) և Լոռու (30 տոկոս) մարզերում ամենաքիչ SS-ներն են նշել, որ իրենց SS անդամները մոտակա բուժհաստատություն գնում են ոտքով (Աղյուսակ 9.15): Հասարակական տրանսպորտով բուժհաստատություն գնալու ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Լոռու մարզում (37 տոկոս): SS-ների մասնաբաժինը, ում անհրաժեշտ է 30 կամ ավելի րոպե բուժհաստատություն հասնելու համար, ամենամեծն է Լոռու և Գեղարքունիքի մարզերում (համապատասխանաբար 18 և 17 տոկոս): SS-ների մասնաբաժինը, ում անհրաժեշտ է 30 կամ ավելի րոպե բուժհաստատություն հասնելու համար, տատանվում է՝ բարեկեցության ամենացածր քվինտիլում գրանցված 12 տոկոսից մինչև ամենաբարձր քվինտիլում գրանցված 6 տոկոսը:

**Աղյուսակ 9.15 Մոտակա բուժհաստատության հասանելիություն**

SS-ների տոկոսային բաշխումն ըստ մոտակա բուժհաստատություն հասնելու համար SS անդամների կողմից օգտագործվող հիմնական միջոցի և այնտեղ հասնելու համար անհրաժեշտ մոտավոր ժամանակը՝ արտահայտված րոպեներով, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

ՀՀ առողջապահության նախարարությունն ընդունել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ)՝ երեխաների պատվաստումների մասին ուղեցույցը, համաձայն որի՝ երեխան իր կյանքի առաջին մեկ տարվա ընթացքում պետք է ստանա հետևյալ պատվաստումները (բացի վերջինից). ԲՅԺ՝ տուբերկուլոզի դեմ, ԱԿԴՓ երեք դեղաչափ՝ դիֆթերիայի, կապույտ հազի և փայտացման դեմ, երեք դեղաչափ պատվաստում պոլիոմիելիտի դեմ և պատվաստում կարմրուկի դեմ: Հայաստանում կարմրուկի կանխարգելումը կատարվում է ԿԿԽ պատվաստման միջոցով երեխայի կյանքի 12-րդ ամսվա ընթացքում, և այն կանխում է կարմրուկը, կարմրախտը և խոզուկը: Ի հավելումն նշված պատվաստումների՝ սկսած 1999 թ. ՀՀ առողջապահության նախարարությունն առաջարկում է, որ երեխաները ստանան 3 դեղաչափ Հեպատիտ Բ պատվաստանյութ, որի առաջին դեղաչափը պետք է կատարվի նորածնի կյանքի առաջին 24 ժամվա ընթացքում: Հնգավալենտ պատվաստումը «ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ», որը Հայաստանում ներդրվել է 2009 թ. սեպտեմբերից, փոխարինել է ԱԿԴՓ պատվաստմանը և կատարվում է ԱԿԴՓ-ի ճիշտ նույն ժամանակացույցով: Ի լրումն ԱԿԴՓ-ի՝ հնգավալենտ պատվաստանյութը ներառում է նաև հեպատիտ Բ-ի (ՎՀԲ) և հեմոֆիլուս ինֆլուենզա Բ տիպի (ՀԻԲ) դեմ պատվաստանյութեր: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հավաքագրվել են տեղեկություններ նաև պնևմոկոկային վարակի դեմ տրվող 3 դեղաչափ պատվաստման մասին, որը Հայաստանում ընդգրկվել է պատվաստումների ազգային օրացույցի մեջ 2014 թ. սեպտեմբերից, և ռոտավիրուսային վարակի դեմ տրվող 2 դեղաչափ պատվաստման մասին, որն էլ ընդգրկվել է 2012 թ.:

ՀԺԱՀ 2015-16-ի ընթացքում պատվաստումների ընդգրկվածության վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել է մինչև 3 տարեկան բոլոր երեխաների համար: Հայաստանում երեխայի առողջության քարտերը (ՀՀ ԱՆ, ձև 112) և պատվաստումների քարտերը (ՀՀ ԱՆ, ձև 63) պահվում են տարածքային բուժհաստատություններում: «Կանխարգելիչ պատվաստումների վկայականը» (քարտեր, որոնք պահվում են երեխայի ծնողների/խնամակալների մոտ) ներդրվել է 1995 թ.: Այս հետազոտության ընթացքում տվյալները հավաքագրել են նշված երկու աղբյուրներից այն դեպքում, երբ երկուսն էլ հասանելի են եղել: Եթե մայրը չի ունեցել «Կանխարգելիչ պատվաստումների վկայականը», նրան խնդրել են վերհիշել իր երեխայի ստացած բոլոր պատվաստումները: Նրան նաև խնդրել են տալ իր համաձայնությունը, որպեսզի հետազոտության անձնակազմը այցելի այն բուժհաստատություն, որտեղ պահվում են երեխայի պատվաստումների մասին գրառումները, և գրանցի դրանք: Յուրաքանչյուր քլաստերում բոլոր հարցազրույցներն ավարտելուց հետո խմբավարն այցելել է տեղի բուժհաստատություն և բժշկական քարտերից գրանցել է ընտրանքում ներառված երեխաների պատվաստումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Աղյուսակ 11.2-ում ցույց է տրված պատվաստումների ընդգրկվածությունն ըստ տեղեկատվության աղբյուրի: Այս զեկույցում արդյունքները ցույց են տրված 12-23 ամսական երեխաների համար, քանի որ պատվաստումների մեծ մասը երեխաներին կատարվում է հենց այս տարիքում, և հետևաբար այս տարիքային խումբն ապահովում է պատվաստումների ընդգրկվածության վերաբերյալ թարմացված տվյալներ: Բայց քանի որ Հայաստանում երեխաները ստանում են ԿԿԽ պատվաստումը 12 ամսական հասակում, արդյունքները ցուցադրված են նաև 24-35 ամսական երեխաների համար: Ընդհանուր առմամբ, 10 երեխաներից 9-ի դեպքում պատվաստումների վերաբերյալ տեղեկատվությունը գրանցվել է բուժակտիվության քարտից կամ «Կանխարգելիչ պատվաստումների վկայականից» (12-23 ամսական երեխաների 96 և 24-35 ամսական երեխաների 92 տոկոսը): Այսպես՝ Աղյուսակ 11.2-ի տվյալները մեծամասամբ հիմնված են բուժհաստատություններում պահվող քարտերի կամ տանը պահվող պատվաստումների վկայականների վրա, իսկ այն դեպքում, երբ երեխայի համար չեն գտնվել ո՛չ բուժհաստատությունում

պահվող քարտը, ո՛չ պատվաստումների վկայականը, տվյալները հիմնված են մոր կողմից տրված տեղեկությունների, նրա հիշողության վրա:

**Աղյուսակ 11.2 Պատվաստումներն ըստ տեղեկատվության աղբյուրի**

12-23 ամսական և 24-35 ամսական երեխաների տոկոսը, ովքեր ստացել են կոնկրետ պատվաստումներ հետազոտությանից առաջ ցանկացած ժամանակ, ըստ տեղեկատվության աղբյուրի (պատվաստումների քարտ կամ մոր հաղորդած տվյալներ), և տոկոսը, ովքեր ստացել են կոնկրետ պատվաստումները համապատասխան տարիքում, Հայաստան, 2015-16 թթ.

Տեղեկատվության աղբյուր	12-23 ամսական երեխաներ				24-35 ամսական երեխաներ			
	Պատվաստումների քարտ <sup>1</sup>	Մոր հայտնած տվյալներ	Աղբյուրներից որևէ մեկը	Պատվաստվել է համապատասխան տարիքում <sup>2,3</sup>	Պատվաստումների քարտ <sup>1</sup>	Մոր հայտնած տվյալներ	Աղբյուրներից որևէ մեկը	Պատվաստվել է համապատասխան տարիքում <sup>3,4</sup>
<b>ԲՑԺ</b>	95.5	3.5	99.0	99.0	92.4	6.8	99.2	99.2
<b>Հեպ Բ (ծնվելիս)<sup>5</sup></b>	94.4	3.5	97.9	97.9	91.3	6.8	98.2	98.2
Մովելուց հետո առաջին օրվա ընթացքում	79.1	կչ	կչ	կչ	75.2	կչ	կչ	կչ
Մովելուց 1 օր անց	13.1	կչ	կչ	կչ	14.5	կչ	կչ	կչ
<b>ԱԿԴՓ-ՎՀԲ-ՀԻԲ</b>								
1	95.0	3.5	98.5	97.7	91.1	5.4	96.4	94.5
2	92.1	3.5	95.6	94.2	89.9	4.8	94.6	92.8
3	90.1	2.6	92.7	90.4	88.3	4.3	92.6	87.4
<b>ԱԿԴՓ 4</b>	կչ	կչ	կչ	կչ	77.0	0.9	77.9	74.4
<b>Պոլիո</b>								
1	94.3	3.5	97.8	97.8	92.4	6.5	98.9	96.1
2	93.3	3.5	96.8	96.2	91.4	6.5	97.9	95.0
3	90.6	2.6	93.2	92.0	89.7	5.9	95.6	91.3
4	կչ	կչ	կչ	կչ	79.0	1.2	80.1	75.7
<b>Պնևմոկոկային</b>								
1	59.1	2.6	61.6	61.2	23.7	3.1	26.8	25.5
2	55.5	2.2	57.7	57.3	21.1	3.1	24.2	23.0
3	50.3	1.2	51.5	50.5	15.6	1.9	17.5	17.5
<b>Ռոտավիրուսային</b>								
1	90.0	2.6	92.6	92.6	87.7	4.7	92.4	92.4
2	87.7	2.4	90.2	89.2	84.0	3.3	87.3	85.6
<b>Կարմրուկ, կարմրախտ, խոզուկ (ԿԿԽ)</b>	կչ	կչ	կչ	կչ	87.4	5.4	92.8	91.2
<b>Բոլոր հիմնական պատվաստումները<sup>6</sup></b>	կչ	կչ	կչ	կչ	85.8	3.2	88.9	83.6
<b>Տարիքին համապատասխանող բոլոր պատվաստումները<sup>7</sup></b>	84.2	2.2	86.4	84.4	71.7	0.9	72.6	67.1
<b>Ոչ մի պատվաստում</b>	0.3	0.3	0.6	կչ	0.0	0.6	0.6	կչ
Երեխաների թվաքանակ	325	13	338	338	310	25	335	335

կչ = կիրառելի չէ

ԲՑԺ = Կալմետ-Գերենի Բացիլ

ԱԿԴՓ = Դիֆթերիա-կապույտ հազ-փայտացում

Հեպ Բ = Հեպատիտ Բ

ՀԻԲ = Հեմոֆիլուս ինֆլուենզա Բ տիպի

ԱԿԴՓ-ՎՀԲ-ՀԻԲ երբեմն անվանվում է Հնգավալենտ

<sup>1</sup> Պատվաստումների քարտ, տանը կամ բուժհաստատությունում գտնվող որևէ գրառում:

<sup>2</sup> Ստացել է մինչև 12 ամսականը:

<sup>3</sup> Այն երեխաների համար, ում պատվաստումների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել է մայրը՝ հիմնվելով հիշողության վրա, պատվաստման ստացման ամաթիվը չի գրանցվել: Կյանքի առաջին և երկրորդ տարիների ընթացքում ստացված պատվաստումների մասնաբաժինը ենթադրվում է, որ նույնն է, ինչ պատվաստումների վերաբերյալ գրավոր փաստաթուղթ ունեցող երեխաների դեպքում:

<sup>4</sup> Ստացել է մինչև 12 ամսականը բոլոր պատվաստումները՝ բացի ԱԿԴՓ 4, Պոլիո 4, ԿԿԽ (կարմրուկ, կարմրախտ, խոզուկ) պատվաստումներից, վերջիններս ստացել է մինչև 24 ամսականը:

<sup>5</sup> Այն երեխաների համար, ում պատվաստումների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել է մայրը՝ հիմնվելով հիշողության վրա, ենթադրվում է, որ եթե երեխան ստացել է Հեպ Բ (ծնվելիս), ապա այն ստացել է ծնվելուց հետո առաջին 24 ժամվա ընթացքում: Այն երեխաների համար, ում պատվաստումների վերաբերյալ տեղեկատվությունը գրանցվել է որևէ գրավոր փաստաթղթից, ենթադրվում է, որ երեխան ստացել է Հեպ Բ (ծնվելիս), եթե պատվաստումը գրանցված է քարտում՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է այն կատարվել:

<sup>6</sup> Հիմնական պատվաստումներն են ԲՑԺ, երեք դեղաչափի ԱԿԴՓ-ՎՀԲ-ՀԻԲ, երեք դեղաչափի օրալ պոլիոմիելիտային պատվաստում և մեկ դեղաչափի ԿԿԽ (կարմրուկ, կարմրախտ, խոզուկ):

<sup>7</sup> Տարիքին համապատասխան պատվաստումներն են. 12-23 ամսական երեխաների համար՝ ԲՑԺ, Հեպ Բ (ծնվելիս), երեք դեղաչափի ԱԿԴՓ-ՎՀԲ-ՀԻԲ, երեք դեղաչափի օրալ պոլիոմիելիտային պատվաստում և երկու դեղաչափի ռոտավիրուսային վարակի դեմ պատվաստում (չի ներառում պնևմոկոկային վարակի դեմ պատվաստումը), իսկ 24-35 ամսական երեխաների համար՝ բոլոր վերոնշյալները՝ ավելացրած մեկ դեղաչափի ԱԿԴՓ 4, պոլիոյի 4-րդ դեղաչափը և մեկ դեղաչափի ԿԿԽ (կարմրուկ, կարմրախտ, խոզուկ):

Աղյուսակ 11.2-ը ցույց է տալիս, որ 24-35 ամսական երեխաների 89 տոկոսը ստացել է ԱՀԿ-ի կողմից խորհուրդ տրվող բոլոր հիմնական պատվաստումները, որոնք ներառում են ԲՅԺ, երեք դեղաչափի ԱԿԴՓ-ՎՀԲ-ՀԻԲ, երեք դեղաչափի պոլիոմիելիտային վարակի դեմ պատվաստում և առնվազն մեկ դեղաչափի ԿԿԽ (կարմրուկ, կարմրախտ, խոզուկ) (տվյալները հիմնված են բժշկական քարտի կամ մոր հիշողության վրա): Այս երեխաներից գրեթե բոլորը (84 տոկոս) ստացել են հիմնական պատվաստումները համապատասխան տարիքում: Ինչ վերաբերում է Առողջապահության նախարարության կողմից խորհուրդ տրվող լրացուցիչ պատվաստումներին (ներառյալ՝ Հեպ Բ ծնվելիս, երկու դեղաչափ ռոտավիրուսային վարակի դեմ պատվաստում, և 24-35 ամսական երեխաների համար ԱԿԴՓ 4-րդ և պոլիո 4-րդ դեղաչափի)<sup>1</sup>, ապա դրանց ընդգրկվածությունը փոքր-ինչ ցածր է. 24-35 ամսական երեխաների 73 տոկոսը ստացել է բոլոր պատվաստումները, իսկ 67 տոկոսը ստացել է դրանք համապատասխան տարիքում:

Աղյուսակ 11.3-ը ցույց է տալիս 12-23 ամսական և 24-35 ամսական երեխաների պատվաստումների ընդգրկվածության ցուցանիշներն ըստ հիմնական բնութագրիչների: 12-23 ամսական գրեթե բոլոր երեխաները (98-99 տոկոս) ստացել են ԲՅԺ, Հեպատիտ Բ ծնվելիս և ԱԿԴՓ-ՎՀԲ-ՀԻԲ ու պոլիո պատվաստումների առաջին դեղաչափերը: Այն երեխաների մասնաբաժինը, ովքեր ստացել են ԱԿԴՓ-ՎՀԲ-ՀԻԲ ու պոլիո պատվաստումների երկրորդ և երրորդ դեղաչափերը, փոքր-ինչ ցածր է՝ երեխաների 93 տոկոսն է ստացել ԱԿԴՓ-ՎՀԲ-ՀԻԲ և պոլիո պատվաստումների պահանջվող երեք դեղաչափերը: 12-23 ամսական երեխաների 90 տոկոսը ստացել է ռոտավիրուսային վարակի դեմ պատվաստման երկու դեղաչափերն էլ, իսկ 52 տոկոսը՝ պնևմոկոկային վարակի դեմ պատվաստման բոլոր երեք դեղաչափերը: Վերջինիս համեմատաբար ցածր ընդգրկվածությունը սպասված էր, քանի որ այս պատվաստումը ներդրվել է միայն 2014 թ. սեպտեմբերին: Այսպիսով՝ 12-23 ամսական երեխաների 86 տոկոսը ստացել է տարիքին համապատասխանող բոլոր պատվաստումները, բացի վերջերս ներդրված պնևմոկոկային վարակի դեմ պատվաստումից:

---

<sup>1</sup> Քանի որ պնևմոկոկային վարակի դեմ պատվաստումը ներդրվել է 2014 թ., այն չի ներառվել ամփոփ վիճակագրական տվյալների հաշվարկման ժամանակ:




Աղյուսակ 11.3-ը ցույց է տալիս, որ 24-35 ամսական երեխաների 93 տոկոսը ստացել է ԿԿԽ պատվաստման մեկ դեղաչափ, 78 տոկոսը՝ ԱԿԴՓ պատվաստման չորրորդ դեղաչափը, 80 տոկոսը՝ պոլիո պատվաստման չորրորդ դեղաչափը: 24-35 ամսական երեխաների 89 տոկոսը ստացել է խորհուրդ տրվող բոլոր հիմնական պատվաստումները, մինչդեռ 73 տոկոսը ստացել է ՀՀ ԱՆ կողմից խորհուրդ տրվող բոլոր հիմնական պատվաստումները (պնևմոկոկային վարակի դեմ պատվաստումը ներառված չէ):

Պատվաստումների ընդգրկվածության տարբերություններն ըստ սեռի նվազագույնն են՝ չնայած 24-35 ամսական աղջիկների ավելի մեծ մասնաբաժինն է ստացել ՀՀ ԱՆ կողմից խորհուրդ տրվող պատվաստումները՝ նույն տարիքի տղաների համեմատությամբ (համապատասխանաբար 77 և 68 տոկոս): Այս տարբերությունը կապված է տղաների շրջանում ԱԿԴՓ և պոլիո պատվաստումների չորրորդ դեղաչափերի ընդգրկվածության ավելի ցածր մակարդակի հետ: Զարմանալիորեն՝ պատվաստումների ընդգրկվածությունը քաղաքաբնակ երեխաների շրջանում ավելի ցածր է, քան գյուղաբնակ երեխաների շրջանում: Օրինակ՝ 24-35 ամսական քաղաքաբնակ երեխաների 86 տոկոսն է ստացել ԱՀԿ-ի կողմից խորհուրդ տրվող բոլոր հիմնական պատվաստումները՝ գյուղաբնակ երեխաների 93 տոկոսի համեմատությամբ: Որևէ հստակ կապ պատվաստումների ընդգրկվածության և մոր կրթական մակարդակի կամ տնային տնտեսության բարեկեցության մակարդակի միջև չկա:

### 11.3 ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԸՆԴԳՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում պատվաստումների ընդգրկվածության ցուցանիշները հաշվարկվել են 12-23 և 24-35 ամսական երեխաների համար առանձին, որպեսզի հնարավոր լինի ուսումնասիրել երկու տարիքային խմբերի համար համապատասխան պատվաստումների ստացումը: Սակայն ՀԺԱՀ 2010-ի ժամանակ տվյալները ներկայացվել էին 18-29 ամսական երեխաների համար: Արդյունքները համեմատելի դարձնելու նպատակով ՀԺԱՀ 2015-16-ի տվյալները վերահաշվարկվել են ըստ միևնույն տարիքային խմբի, ինչ ՀԺԱՀ 2010-ի ժամանակ, այսինքն՝ 18-29 ամսական երեխաների համար (Հավելված Գ, Աղյուսակ Գ.8): Արդյունքները ցույց են տալիս, որ վերջին հինգ տարիների ընթացքում բոլոր հիմնական պատվաստումների ընդգրկվածությունը մի փոքր նվազել է 18-29 ամսական երեխաների շրջանում: Եթե 2010-ին այս երեխաների 92 տոկոսը ստացել էր բոլոր հիմնական պատվաստումները մինչև հարցազրույցի օրը, ապա 2015-16-ին այս ցուցանիշը կազմել է 89 տոկոս (Գծապատկեր 11.1): Առանձին պատվաստումների ընդգրկվածության մակարդակները ևս մի փոքր նվազել են:

**Գծապատկեր 11.1 Պատվաստումների ընդգրկվածության միտումները 18-29 ամսական երեխաների շրջանում**



\* Ներառում է ԲՑԺ, ԿԿԽ, ԱԿԴՓ և պոլիո 3-ական դեղաչափ



## 11.4 ՍՈՒՐ ՇՆՃԱՌԱԿԱՆ ՎԱՐԱԿ

Սուր շնչառական վարակները (ՄՇՎ) հանդիսանում են երեխաների հիվանդացության և մահացության հիմնական պատճառներից մեկն ամբողջ աշխարհում: Վաղ տարիքի երեխաների շրջանում սուր շնչառական վարակներից ամենավտանգավորը թոքաբորբն է: Ճիշտ ժամանակին ախտորոշումը և հակաբիոտիկներով բուժումը կարող են կանխել սուր շնչառական վարակներով (ՄՇՎ) պայմանավորված մահերի մեծ մասը: Հետևաբար, այս հիվանդությունների ախտանիշներ ունեցող երեխաների արագ բուժումը խիստ կարևոր է երեխաների բարեկեցությունը բարձրացնելու և մահացությունը նվազեցնելու առումով: Որպեսզի տեղեկություններ հավաքագրվեն ՄՇՎ տարածվածության վերաբերյալ, ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում մայրերը հարցվել են, թե արդյոք հետազոտությանը նախորդող 2 շաբաթների ընթացքում նրանց մինչև 5 տարեկան երեխաներն ունեցել են հազ, որն ուղեկցվել է արագ, հաճախացած կամ դժվարացած շնչառությամբ, կրծքավանդակում առկա որևէ խնդրի պատճառով: Սրանք համարվում են ՄՇՎ ախտանիշներ: Հիվանդացության վերաբերյալ տվյալները սուբյեկտիվ բնույթ են կրում, քանի որ դրանք հիմնված են հիվանդությունների վերաբերյալ մայրերի ունեցած ընկալված վրա՝ առանց բժշկական անձնակազմի հաստատման: Աղյուսակ 11.4-ը ցույց է տալիս մինչև 5 տարեկան երեխաների տոկոսը, ովքեր ունեցել են ՄՇՎ ախտանիշներով ուղեկցվող հազ:

Մայրերի հաղորդած տվյալների հիման վրա հաշվարկվել է, որ մինչև հինգ տարեկան երեխաների ընդամենը 1 տոկոսն է ունեցել ՄՇՎ ախտանիշներ հետազոտությանը նախորդող 2 շաբաթների ընթացքում: Արարատի մարզում բնակվող երեխաների շրջանում ՄՇՎ ախտանիշների տարածվածությունն ավելի բարձր է, քան մյուս մարզերի երեխաների մոտ: ՄՇՎ ախտանիշների տարածվածության տարբերություններն ըստ մյուս հիմնական բնութագրիչների նվազագույնն են: Քանի որ հետազոտությանը նախորդող 2 շաբաթների ընթացքում ՄՇՎ ախտանիշներ ունեցած երեխաների թվաքանակը փոքր է, բուժման հետ կապված վարքագծային ուսումնասիրությունը նպատակային չէ:

**Աղյուսակ 11.4 ՄՇՎ ախտանիշների տարածվածություն և բուժում**

Մինչև 5 տարեկան երեխաների շրջանում հետազոտությանը նախորդող 2 շաբաթների ընթացքում սուր շնչառական վարակի (ՄՇՎ) ախտանիշներ ունեցած երեխաների տոկոսն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Մինչև 5 տարեկան երեխաների շրջանում <sup>1</sup>	
	ՄՇՎ ախտանիշներ ունեցածների տոկոսը <sup>1</sup>	Երեխաների թվաքանակ
<b>Տարիքի ամիսներով</b>		
<6	1.1	177
6-11	2.3	180
12-23	0.6	338
24-35	1.1	335
36-47	1.4	309
48-59	2.2	324
<b>Մեռ</b>		
Արական	1.4	888
Իգական	1.4	776
<b>Բնակավայր</b>		
Քաղաքային	0.7	958
Գյուղական	2.3	705
<b>Մարզ</b>		
Երևան	0.0	475
Արագածոտն	0.0	61
Արարատ	9.6	166
Արմավիր	0.8	188
Գեղարքունիք	0.0	76
Լոռի	0.7	98
Կոտայք	0.8	239
Շիրակ	0.0	167
Սյունիք	0.0	61
Վայոց ձոր	1.5	36
Տավուշ	2.6	97
<b>Սոր կրթությունը</b>		
Հիմնական	2.3	93
Միջնակարգ	1.9	664
Միջին մասնագիտական	0.4	344
Բարձրագույն	1.3	562
<b>Բարեկեցության քվինտիլ</b>		
Ամենացածր	2.1	323
Երկրորդ	3.0	333
Միջին	1.6	303
Չորրորդ	0.6	299
Ամենաբարձր	0.0	406
<b>Ընդամենը</b>	1.4	1,663

<sup>1</sup>ՄՇՎ ախտանիշներն են արագ և հաճախացած շնչառությունը, որը կապված է եղել կրծքավանդակում որևէ խնդրի հետ, և/կամ դժվարացած շնչառությունը՝ ևս կապված կրծքավանդակում որևէ խնդրի հետ:



## 11.5 ՁԵՐՄՈՒԹՅՈՒՆ (ՏԵՆՂ)

Այն տարածաշրջաններում, որտեղ մալարիան տարածված է, ջերմությունը (տենդը) հանդիսանում է այդ հիվանդության ախտանիշ: Քանի որ Հայաստանը չի համարվում մալարիայի տարածաշրջան, ջերմությունը համարվում է մանկական վարակների նշան (մալարիայից տարբեր), ինչպիսիք են ՄՇՎ կամ ականջի վարակները: Ջերմության (տենդի) վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու համար մայրերը հարցվել են (մինչև 5 տարեկան յուրաքանչյուր երեխայի համար), թե արդյոք երեխան հետազոտությանը նախորդող 2 շաբաթների ընթացքում ունեցել է ջերմություն (տենդ): Աղյուսակ 11.5-ը ցույց է տալիս ջերմություն ունեցած երեխաների տոկոսն ըստ առանձնացված հիմնական բնութագրիչների:

Մինչև 5 տարեկան բոլոր երեխաների 9 տոկոսը հետազոտությանը նախորդող 2 շաբաթների ընթացքում ունեցել է ջերմություն (տենդ): Ջերմությունը ամենաշատը տարածված է 36-47 ամսական երեխաների շրջանում (11 տոկոս), իսկ ամենաքիչը՝ մինչև 6 ամսական երեխաների շրջանում (6 տոկոս): Ջերմության տարածվածությունը մեծապես տատանվում է ըստ մարզերի: Այսպես՝ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Արարատի մարզում (20 տոկոս), ամենացածրը՝ Սյունիքի մարզում (3 տոկոս): Ջերմության (տենդի) տարածվածությունը միտում ունի նվազելու՝ մոր կրթական մակարդակի և բարեկեցության մակարդակի աճին զուգընթաց:

Ջերմություն (տենդ) ունեցած երեխաների գրեթե երեք քառորդին (72 տոկոս) բուժման համար տարել են որևէ բուժհաստատություն, 4 տոկոսին տրվել են հակաբիոտիկ հաբեր (տվյալները ցուցադրված չեն): Ջերմության բուժման տարբերություններն ըստ հիմնական բնութագրիչների մեծ չեն, և որոշ կատեգորիաներում դրանք հնարավոր չէ դիտարկել դեպքերի փոքր թվաքանակի պատճառով:

## 11.6 ՓՈՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մուր փորլուծությամբ պայմանավորված ջրազրկումը վաղ տարիքի երեխաների մահացության հիմնական պատճառներից մեկն է: Ջրազրկմանն արձագանքելու պարզ և արդյունավետ տարբերակը երեխային տրվող հեղուկների քանակի ավելացումն է օրալ ռեհիդրատացիոն թերապիայի (ՕՌԹ) որևէ միջոցով: Սա կարող է ներառել վաճառվող օրալ ռեհիդրատացիոն աղերի (ՕՌԱ) փաթեթից կամ տանը՝ շաքարավազից, աղից և ջրից պատրաստված լուծույթի օգտագործում: Փորլուծություն ունեցող երեխային տրվող այլ հեղուկների քանակի ավելացումը ջրազրկման կանխարգելման մեկ այլ միջոց է:

### Աղյուսակ 11.5 Ջերմության (տենդի) տարածվածություն և բուժում

Մինչև 5 տարեկան երեխաների շրջանում հետազոտությանը նախորդող 2 շաբաթների ընթացքում ջերմություն (տենդ) ունեցած երեխաների տոկոսն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Ջերմություն (տենդ) ունեցածների տոկոսը	
	Տոկոս	Երեխաների թվաքանակ
<b>Տարիքի ասիսներով</b>		
<6	6.0	177
6-11	9.7	180
12-23	8.9	338
24-35	9.2	335
36-47	11.1	309
48-59	9.1	324
<b>Մեռ</b>		
Արական	8.5	888
Իգական	9.9	776
<b>Բնակավայր</b>		
Քաղաքային	8.2	958
Գյուղական	10.5	705
<b>Մարզ</b>		
Երևան	5.6	475
Արագածոտն	8.4	61
Արարատ	20.3	166
Արմավիր	8.9	188
Գեղարքունիք	4.0	76
Լոռի	13.4	98
Կոտայք	10.4	239
Շիրակ	9.3	167
Սյունիք	3.3	61
Վայոց ձոր	3.9	36
Տավուշ	11.3	97
<b>Մոր կրթությունը</b>		
Հիմնական	11.4	93
Միջնակարգ	10.9	664
Միջին		
մասնագիտական	7.5	344
Բարձրագույն	7.8	562
<b>Բարեկեցության քվինտիլ</b>		
Ամենացածր	10.3	323
Երկրորդ	12.3	333
Միջին	8.6	303
Չորրորդ	6.5	299
Ամենաբարձր	8.1	406
Ընդամենը	9.2	1,663

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում մայրերը հարցվել են, թե արդյոք հետազոտությանը նախորդող 2 շաբաթների ընթացքում իրենց մինչև 5 տարեկան երեխաներն ունեցել են փորլուծություն, թե ոչ: Եթե երեխան ունեցել է փորլուծություն, ապա մայրը հարցվել է փորլուծությունը բուժելու համար նախաձեռնած միջոցառումների և այդ ընթացքում երեխային տրված սննդի մասին:

Աղյուսակ 11.6-ը ցույց է տալիս մինչև 5 տարեկան այն երեխաների տոկոսը, ովքեր հետազոտությանը նախորդող 2 շաբաթների ընթացքում ունեցել են փորլուծություն: Անհրաժեշտ է նշել, որ փորլուծության տարածվածության վերաբերյալ տվյալները կարող են ունենալ հաղորդման որոշակի սխալ, քանի որ դրանք հիմնված են երեխայի հիվանդության վերաբերյալ մայրերի սուբյեկտիվ գնահատականի վրա: Նաև քանի որ փորլուծությունը բնորոշվում է սեզոնային տարբերություններով, Աղյուսակ 11.6-ում տրված տոկոսները հնարավոր է, որ ներկայացնեն փորլուծության տարածվածությունը ՀԺԱՀ 2015-16-ի ժամանակահատվածում (2015 թ. դեկտեմբերից 2016 թ. ապրիլի սկիզբ), և ոչ տարվա մյուս եղանակներին տիրող իրավիճակը:

Մինչև 5 տարեկան երեխաների 4 տոկոսի դեպքում մայրերը նշել են, որ ՀԺԱՀ հարցազրույցին նախորդող երկու շաբաթների ընթացքում իրենց երեխան ունեցել է փորլուծություն: 6-35 ամսական երեխաների շրջանում գրանցվել են փորլուծության ավելի շատ դեպքեր, քան տարիքով ավելի մեծ և մինչև 6 ամսական երեխաների շրջանում: Փորլուծությունն ամենաշատը տարածված է Արագածոտնի և Շիրակի մարզերում բնակվող երեխաների շրջանում, իսկ ամենաքիչը՝ Երևանում բնակվողների շրջանում: Փորլուծության տարածվածությունը նվազվում է՝ մոր կրթական մակարդակի և տնային տնտեսության բարեկեցության մակարդակի աճին զուգընթաց:

Մայրերին խորհուրդ է տրվում պահպանել երեխաներին տրվող սննդի սովորական չափաբաժինը և ավելացնել տրվող հեղուկների քանակը, եթե երեխան փորլուծություն ունի: Այս միջոցառումները նպաստում են, որպեսզի երեխան չջրագրկվի, և նվազագույնի հասցվեն փորլուծության բացասական հետևանքները երեխայի սնուցման կարգավիճակի վրա: ՀԺԱՀ 2015-16 ընթացքում մայրերը հարցվել են, թե արդյոք փորլուծություն ունեցող երեխային տրվել է սովորականից քիչ, նույն քանակությամբ, թե ավելի շատ սնունդ և հեղուկ: Աղյուսակ 11.7-ը ցույց է տալիս հետազոտությանը նախորդող երկու շաբաթների ընթացքում մինչև 5 տարեկան երեխաների շրջանում փորլուծություն ունեցողների տոկոսային բաշխումն ըստ կերակրման կարգավիճակի: Կարևոր է հիշել, որ մինչև հինգ տարեկան երեխաների ընդամենը 4 տոկոսի դեպքում են մայրերը

**Աղյուսակ 11.6 Փորլուծության տարածվածություն**

Մինչև 5 տարեկան երեխաների շրջանում հետազոտությանը նախորդող 2 շաբաթների ընթացքում փորլուծություն ունեցած երեխաների տոկոսն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Փորլուծություն ունեցածների տոկոսը	Երեխաների թվաքանակ
<b>Տարիքն ամիսներով</b>		
<6	1.7	177
6-11	5.3	180
12-23	4.9	338
24-35	4.7	335
36-47	3.2	309
48-59	2.7	324
<b>Մեռ</b>		
Արական	4.5	888
Բզական	3.0	776
<b>Զուգարան<sup>1</sup></b>		
Բարելավված, ոչ ընդհանուր	3.2	1,299
Չբարելավված	5.9	352
Ընդհանուր <sup>2</sup> /չկա տվյալ	*	12
<b>Բնակավայր</b>		
Քաղաքային	2.6	958
Գյուղական	5.4	705
<b>Մարզ</b>		
Երևան	0.4	475
Արագածոտն	8.8	61
Արարատ	5.7	166
Արմավիր	6.4	188
Գեղարքունիք	1.5	76
Լոռի	2.2	98
Կոտայք	5.6	239
Շիրակ	8.4	167
Սյունիք	1.7	61
Վայոց ձոր	3.9	36
Տավուշ	1.5	97
<b>Սոր կրթությունը</b>		
Հիմնական	6.2	93
Միջնակարգ	5.0	664
Միջին մասնագիտական	4.5	344
Բարձրագույն	1.5	562
<b>Բարեկեցության քվինտիլ</b>		
Ամենացածր	5.6	323
Երկրորդ	4.2	333
Միջին	4.7	303
Չորրորդ	3.3	299
Ամենաբարձր	1.7	406
<b>Ընդամենը</b>	3.8	1,663

<sup>1</sup>Տե՛ս Աղյուսակ 2.3-ը՝ կատեգորիաների բացատրության համար:

<sup>2</sup>Այն զուգարանները, որոնք կհամարվեն բարելավված, եթե չօգտագործվեն երկու կամ ավելի տնային տնտեսությունների կողմից:

նշել, որ հետազոտությանը նախորդող 2 շաբաթների ընթացքում իրենց երեխան ունեցել է փորլուծություն, հետևաբար բուժման վերաբերյալ արդյունքները հիմնված են դեպքերի փոքր թվաքանակի վրա, և պետք է մեկնաբանվեն ամենայն ուշադրությամբ:

**Աղյուսակ 11.7 Գերակրան կարգավիճակը փորլուծության ժամանակ**

Մինչև 5 տարեկան երեխաների շրջանում հետազոտությանը նախորդող 2 շաբաթների ընթացքում փորլուծություն ունեցած երեխաների տոկոսային բաշխումն ըստ փորլուծության ժամանակ տրված սննդի և հեղուկի քանակի՝ համեմատած սննդի և հեղուկի սովորաբար տրվող քանակների հետ, Հայաստան, 2015-16 թթ.

	Տրված հեղուկների քանակ						Տրված սննդի քանակ						Փորլուծություն ունեցած երեխաների թվաքանակ	
	Ավելի շատ	Սովորականի չափ	Մի քիչ քիչ	Շատ քիչ	Չստ չկա	Չգիտի/Ընդամենը	Ավելի շատ	Սովորականի չափ	Մի քիչ քիչ	Շատ քիչ	Սյդ ընթացքում սնունդ չի տրվել	Երբեք սնունդ չի տրվել		Ընդամենը
Ընդամենը	38.9	47.4	7.8	3.8	2.2	100.0	3.4	55.9	34.4	2.8	1.6	1.9	100.0	63

Նշում: Փորլուծության ժամանակ խորհուրդ է տրվում ավելացնել երեխաներին տրվող հեղուկի քանակը և չպակասեցնել տրվող սննդի քանակը:

Փորլուծություն ունեցող երեխաների 39 տոկոսին է տրվել սովորականից ավելի շատ հեղուկ, 47 տոկոսին՝ սովորականի չափ, իսկ 12 տոկոսին՝ մի փոքր քիչ կամ շատ քիչ հեղուկ: Փորլուծություն ունեցող երեխաների մասնաբաժինը, ում տրվել է սովորականից շատ հեղուկ, էապես նվազել է 2010-ին գրանցված 65 տոկոսից մինչև 39 տոկոսի 2015-16-ին:

Փորլուծության ժամանակ երեխաներին տրվող սննդի քանակն ավելի շատ է կրճատվել, քան տրվող հեղուկների քանակը: Փորլուծություն ունեցող երեխաների միայն 3 տոկոսին է տրվել սովորականից ավելի շատ քանակությամբ սնունդ, 56 տոկոսին տրվել է սովորականի չափ, 34 տոկոսին՝ մի փոքր քիչ, իսկ 3 տոկոսին՝ սովորականից շատ ավելի քիչ սնունդ:

Աղյուսակ 11.8-ը ցույց է տալիս փորլուծություն ունեցող այն երեխաների տոկոսը, ում տարել են որևէ բուժհաստատություն կամ բուժաշխատողի մոտ բուժում ստանալու նպատակով, ՕՌՄ ստացածների և այլ բուժում ստացածների տոկոսը: Ընդհանուր առմամբ, փորլուծություն ունեցած երեխաների 41 տոկոսին տարել են որևէ բուժհաստատություն կամ որևէ բուժաշխատողի մոտ:

**Աղյուսակ 11.8 Փորլուծության բուժում**

Մինչև 5 տարեկան երեխաների շրջանում հետազոտությանը նախորդող 2 շաբաթների ընթացքում փորլուծություն ունեցած այն երեխաների տոկոսը, ում խորհրդատվության կամ բուժման նպատակով տարել են որևէ բուժհաստատություն կամ որևէ բուժաշխատողի մոտ, տոկոսը, ում տրվել է ՕՌՄ փաթեթից որևէ հեղուկ, տանը պատրաստված որևէ հեղուկ (ՏՊՀ), ՕՌՄ կամ ՏՊՀ, ցինկ, ՕՌՄ և ցինկ, ՕՌՄ կամ ավելի շատ հեղուկներ, օրալ ռեհիդրատացիոն թերապիա (ՕՌԹ), շարունակել են կերակրել և ՕՌԹ, այլ բուժում, և տոկոսը, ում ոչ մի բուժում չի կատարվել, Հայաստան, 2015-16 թթ.

Տոկոսը, ում խորհրդատվության կամ բուժման նպատակով տարել են բուժհաստատություն կամ բուժաշխատողի մոտ <sup>1</sup>	Փորլուծություն ունեցած երեխաների տոկոսը, ում տրվել է															
	ՕՌՄ փաթեթից որևէ հեղուկ (ՏՊՀ)	ՕՌՄ կամ ՏՊՀ	Ցինկ և ցինկ	ՕՌՄ կամ ՏՊՀ	ՕՌՄ կամ ՏՊՀ	ՕՌՄ կամ ՏՊՀ	ՕՌՄ կամ ՏՊՀ	ՕՌՄ կամ ՏՊՀ	ՕՌՄ կամ ՏՊՀ	ՕՌՄ կամ ՏՊՀ	ՕՌՄ կամ ՏՊՀ	ՕՌՄ կամ ՏՊՀ	ՕՌՄ կամ ՏՊՀ	ՕՌՄ կամ ՏՊՀ	ՕՌՄ կամ ՏՊՀ	ՕՌՄ կամ ՏՊՀ
Ընդամենը	40.6	36.9	24.5	48.8	3.7	2.0	36.9	66.4	63.1	18.3	19.5	0.0	7.8	4.1	18.3	63

ՕՌՄ = Օրալ ռեհիդրատացիոն աղեր  
<sup>1</sup> Չի ներառում դեղատոն, իսանոթ, հանրախանութ, ավանդական մասնագետ և շրջիկ դեղավաճառ:  
<sup>2</sup> Շարունակել են կերակրել կատեգորիան ներառում է այն երեխաներին, ում փորլուծության ժամանակ տրվել է սովորականից շատ, սովորականի չափ կամ սովորականից մի փոքր քիչ սնունդ:

Օրալ ռեհիդրատացիոն թերապիան, որի շրջանակում երեխային տրվում է օրալ ռեհիդրատացիոն աղերից (ՕՌՄ) պատրաստված լուծույթ կամ տանը պատրաստված հեղուկ (ՏՊՀ) (սովորաբար պատրաստվում է շաքարավազից, աղից և ջրից), համարվում է պարզ և արդյունավետ միջոց փորլուծության դեմ: Ըստ ՀԺԱՀ 2015-16-ի՝ փորլուծություն ունեցած երեխաների կեսին (49 տոկոս) բուժման նպատակով տրվել է կա՛մ ՕՌՄ (37 տոկոս), կա՛մ տանը պատրաստված հեղուկ (25

տոկոս): Երեք երեխաներից երկուսին (66 տոկոս) բուժման նպատակով տրվել է ՕՌԱ, ՏՊՀ կամ ավելի շատ հեղուկ:

Սովորաբար խորհուրդ չի տրվում օգտագործել հակաբիոտիկներ վաղ տարիքի երեխաների մոտ ոչ արյունային փորլուծության բուժման նպատակով: Ըստ ՀԺԱՀ 2015-16-ի արդյունքների՝ փորլուծության բուժման նպատակով երեխաների 18 տոկոսին տրվել են հակաբիոտիկներ, 20 տոկոսին՝ հակափորլուծային դեղեր, իսկ 4 տոկոսին՝ ցինկի հավելումներ: Երեխաների 8 տոկոսին տրվել է որևէ տնային դեղամիջոց, իսկ 18 տոկոսին ոչ մի բուժում չի կատարվել:

Վերջին 5 տարիների ընթացքում փորլուծության բուժման նպատակով որևէ բուժաշխատողի դիմաձևերի մասնաբաժինը մնացել է կայուն, սակայն ՕՌԱ փաթեթների և, մասնավորապես՝ տանը պատրաստված հեղուկների օգտագործումն էապես նվազել է: ՀԺԱՀ 2010-ի տվյալներով՝ փորլուծություն ունեցած երեխաների 90 տոկոսին տրվել է ՕՌԱ, ՏՊՀ կամ ավելի շատ հեղուկներ՝ ՀԺԱՀ 2015-16-ին գրանցված 66 տոկոսի համեմատությամբ: Հակաբիոտիկների օգտագործման մակարդակն աճել է (12 տոկոս 2010-ին և 18 տոկոս 2015-16-ին), սակայն հակափորլուծային դեղամիջոցների օգտագործումը մնացել է գրեթե նույնը (18 տոկոս 2010-ին և 20 տոկոս 2015-16-ին): Վերջին 5 տարիների ընթացքում տնային դեղամիջոցների օգտագործումը 2010-ին գրանցված 26 տոկոսից նվազել է՝ կազմելով 8 տոկոս 2015-16-ին:

### 11.7 ՕՌԱ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՄԱՅՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն նշվել էր, փորլուծության ժամանակ երեխային տրվող հեղուկի կտրուկ ավելացումը պարզ և արդյունավետ միջոց է ջրազրկումը կանխարգելելու համար, և որպեսզի փորլուծությունը չվերաճի կյանքին սպառնացող հիվանդության: Օրալ ռեհիդրատացիոն թերապիան (ՕՌԹ) կարող է ներառել օրալ ռեհիդրատացիոն աղերի (ՕՌԱ) փաթեթից պատրաստված լուծույթի օգտագործում: Հայաստանում ՕՌԱ լուծույթի մասին բնակչության իմացությունը գնահատելու նպատակով կանանց տրվել է հարց, թե արդյոք նրանք գիտեն ՕՌԱ փաթեթների մասին:

Աղյուսակ 11.9-ը ցույց է տալիս հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում ծննդաբերած կանանց տոկոսը, ովքեր գիտեն փորլուծության բուժման նպատակով ՕՌԱ փաթեթների օգտագործման մասին՝ ըստ հիմնական բնութագրիչների: Հայաստանում վաղ տարիքի երեխաների 5 մայրերից 4-ը գիտեն ՕՌԱ փաթեթների մասին (83 տոկոս): Երիտասարդ տարիքի մայրերը փոքր-ինչ ավելի քիչ են տեղեկացված ՕՌԱ փաթեթների մասին, քան տարիքով ավելի մեծ մայրերը: Ըստ մարզերի՝ մայրերի մասնաբաժինը, որ գիտի ՕՌԱ փաթեթների

**Աղյուսակ 11.9 ՕՌԱ փաթեթների մասին իմացություն**

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած 15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր գիտեն ՕՌԱ փաթեթների մասին՝ որպես երեխայի փորլուծության բուժման միջոց, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կանանց տոկոսը, որ գիտի	
	ՕՌԱ փաթեթների մասին	Կանանց թվաքանակ
<b>Տարիք</b>		
15-19	*	18
20-24	73.7	279
25-34	84.6	890
35-49	88.2	173
<b>Բնակավայր</b>		
Քաղաքային	83.3	794
Գյուղական	81.6	568
<b>Մարզ</b>		
Երևան	80.8	398
Արագածոտն	86.1	51
Արարատ	92.8	140
Արմավիր	70.4	147
Գեղարքունիք	82.5	65
Լոռի	74.5	76
Վոտայք	90.8	200
Շիրակ	70.5	130
Սյունիք	100.0	46
Վայոց ձոր	83.6	30
Տավուշ	90.1	78
<b>Մոր կրթությունը</b>		
Հիմնական	58.7	70
Միջնակարգ	77.5	533
Միջին մասնագիտական	88.8	286
Բարձրագույն	88.2	472
<b>Բարեկեցության քվինտիլ</b>		
Ամենացածր	75.7	252
Երկրորդ	86.7	275
Միջին	78.6	253
Չորրորդ	88.0	250
Ամենաբարձր	83.4	331
Ընդամենը	82.6	1,361

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:  
ՕՌԱ = Օրալ ռեհիդրատացիոն աղեր

մասին, տատանվում է՝ Արմավիրի մարզում գրանցված 70 տոկոսից մինչև Սյունիքի մարզում գրանցված 100 տոկոսը: ՕՌԱ փաթեթների մասին իմացությունն աճում է մոր կրթական մակարդակին զուգընթաց: Այսպես, հիմնական կրթություն ունեցող մայրերի միայն 59 տոկոսը գիտի ՕՌԱ փաթեթների մասին՝ միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ունեցող մայրերի 88-89 տոկոսի համեմատությամբ:

Վերջին հինգ տարիների ընթացքում ՕՌԱ փաթեթների մասին իմացությունը որոշ չափով աճել է՝ 2010-ին գրանցված 75 տոկոսից մինչև 83 տոկոս՝ 2015-16-ին:

### **11.8 ԵՐԵՄԱՅԻ ԿՂԱՆՔԻ ՀԵՌԱՑՈՒՄ**

Վատ հիգիենան, որը ներառում է կղանքից սխալ ազատվելը, կարող է պատճառ հանդիսանալ հիվանդությունների, ներառյալ՝ փորլուծության տարածման համար: Աղյուսակ 11.10-ը ցույց է տալիս մոր հետ ապրող մինչև 2 տարեկան երեխաների տոկոսային բաշխումն ըստ նրա, թե ինչպես են ազատվել երեխայի կղանքից, և ըստ հիմնական բնութագրիչների ու տնային տնտեսությունում առկա զուգարանի տեսակի:

Վաղ տարիքի երեխաների կղանքի հեռացման ամենատարածված միջոցն այն աղբի մեջ նետելն է (55 տոկոս), որին հաջորդում է զուգարանի կամ արտաքնոցի մեջ նետելը (33 տոկոս), իսկ վերջինիս էլ հաջորդում է այն պատասխանը, որ երեխան ինքնուրույն է օգտվել զուգարանից կամ արտաքնոցից (11 տոկոս): Ընդհանուր առմամբ, երեխաների 43 տոկոսի պարագայում կղանքը հեռացվել է ապահով ձևով:

Տարիքով ավելի մեծ երեխաների պարագայում ավելի շատ դեպքերում է կղանքը հեռացվել ապահով ձևով՝ վաղ տարիքի երեխաների համեմատությամբ: Տարբերություններն ըստ բնակավայրի, մոր կրթական մակարդակի և տնային տնտեսության բարեկեցության մակարդակի, փոքր են: Տարբերություններն ըստ մարզերի դժվար է մեկնաբանել՝ կապված որոշ մարզերում երեխաների փոքր թվաքանակի հետ:

Վերջին 5 տարիների ընթացքում վաղ տարիքի երեխաների մասնաբաժինը, ում կղանքը հեռացվել է ապահով ձևով, կտրուկ նվազել է: ՀԺԱՀ 2010-ին տվյալները հաշվարկվել էին մինչև 5 տարեկան երեխաների համար, մինչդեռ ՀԺԱՀ 2015-16-ին աղյուսակները վերաբերում են մինչև 2 տարեկան երեխաներին: Այնուամենայնիվ, ՀԺԱՀ 2010-ի տվյալների վերահաշվարկը ցույց է տալիս, որ մինչև 2 տարեկան երեխաների մասնաբաժինը, ում կղանքը հեռացվել է ապահով ձևով, 75 տոկոսից նվազել է մինչև 43 տոկոսի՝ 2015-16-ին:

**Աղյուսակ 11.10 Երեխայի կղանքի հեռացում**

Մոր հետ ապրող մինչև 2 տարեկան ամենակրտսեր երեխաների տոկոսային բաշխումն ըստ նրա, թե ինչպես են վերջին անգամ ազատվել երեխայի կղանքից, և երեխաների տոկոսը, ում կղանքը հեռացվել է ապահով ձևով, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Երեխայի կղանքի հեռացման ձևը						Երեխաների տոկոսը, ում կղանքը հեռացվել է ապահով ձևով <sup>1</sup>	Երեխաների թվաքանակ
	Երեխան օգտվել է գուգարանից կամ արտաքննցից	Նետել են/ ողողել են գուգարանի/ արտաքննցի մեջ	Նետել են առվի կամ փոսի մեջ	Նետել են աղբի մեջ	Տվյալ չկա	Ընդամենը		
<b>Երեխայի տարիքն ամիսներով</b>								
0-1	(0.0)	(36.8)	(0.9)	(62.2)	(0.0)	100.0	(36.8)	41
2-3	1.0	20.7	2.7	75.5	0.0	100.0	21.8	57
4-5	2.4	23.9	0.8	72.9	0.0	100.0	26.3	73
6-8	2.8	42.8	0.0	54.4	0.0	100.0	45.6	86
9-11	7.7	26.2	1.0	65.0	0.0	100.0	34.0	91
12-17	16.7	30.9	3.3	48.7	0.4	100.0	47.7	165
18-23	21.3	40.3	1.6	36.8	0.0	100.0	61.6	148
6-23	14.0	34.9	1.8	49.1	0.1	100.0	48.9	490
<b>Զուգարան<sup>2</sup></b>								
Բարելավված, ոչ ընդհանուր	11.0	33.3	0.7	55.0	0.1	100.0	44.2	531
Ընդհանուր <sup>3</sup>	*	*	*	*	*	100.0	*	5
Չբարելավված	8.6	29.7	6.2	55.4	0.0	100.0	38.3	125
<b>Քնակավայր</b>								
Քաղաքային	9.3	34.4	0.2	55.9	0.2	100.0	43.8	390
Գյուղական	12.7	30.0	3.9	53.4	0.0	100.0	42.7	272
<b>Մարզ</b>								
Երևան	6.3	42.1	0.0	51.6	0.0	100.0	48.4	190
Արագածոտն	(4.5)	(25.8)	(4.6)	(65.1)	(0.0)	100.0	(30.3)	22
Արարատ	0.0	15.8	0.0	84.2	0.0	100.0	15.8	65
Արմավիր	5.4	30.4	6.0	57.3	0.8	100.0	35.8	75
Գեղարքունիք	(15.0)	(66.5)	(4.0)	(14.5)	(0.0)	100.0	(81.5)	28
Լոռի	(41.2)	(45.8)	(0.0)	(13.0)	(0.0)	100.0	(87.0)	36
Կոտայք	4.8	24.0	0.0	71.2	0.0	100.0	28.8	103
Շիրակ	21.4	13.5	1.6	63.5	0.0	100.0	34.9	64
Սյունիք	(25.0)	(60.9)	(7.4)	(6.7)	(0.0)	100.0	(86.0)	24
Վայոց ձոր	(25.1)	(37.6)	(14.1)	(23.2)	(0.0)	100.0	(62.7)	13
Տավուշ	16.7	21.7	0.0	61.6	0.0	100.0	38.4	42
<b>Մոր կրթությունը</b>								
Հիմնական	(8.7)	(39.8)	(3.7)	(47.7)	(0.0)	100.0	(48.5)	39
Միջնակարգ	13.3	30.5	2.9	53.1	0.2	100.0	43.8	264
Միջին մասնագիտական	11.1	31.0	1.4	56.5	0.0	100.0	42.1	132
Բարձրագույն	7.8	34.8	0.1	57.2	0.0	100.0	42.6	227
<b>Բարեկեցության քվինտիլ</b>								
Ամենացածր	15.3	28.2	5.7	50.8	0.0	100.0	43.6	115
Երկրորդ	10.0	28.1	1.3	60.6	0.0	100.0	38.1	139
Միջին	13.8	34.3	2.0	49.9	0.0	100.0	48.1	125
Չորրորդ	9.7	32.6	0.4	56.8	0.5	100.0	42.3	122
Ամենաբարձր	6.3	38.4	0.0	55.3	0.0	100.0	44.7	161
Ընդամենը	10.7	32.6	1.7	54.9	0.1	100.0	43.3	662

Նշում: Ընդամենը ներառում է 1 երեխայի, ում համար նշված չի եղել գուգարանի տեսակը: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա, աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

<sup>1</sup> Համարվում է, որ երեխայի կղանքը հեռացվել է ապահով ձևով, եթե երեխան օգտվել է գուգարանից կամ արտաքննցից, կամ եթե երեխայի կղանքը նետվել է/ ողողվել է գուգարանի կամ արտաքննցի մեջ, կամ եթե այն թաղվել է:

<sup>2</sup> Տե՛ս Աղյուսակ 2.3-ը՝ կատեգորիաների բացատրության համար:

<sup>3</sup> Այն գուգարանները, որոնք կհամարվեն բարելավված, եթե չօգտագործվեն երկու կամ ավելի տնային տնտեսությունների կողմից:

**11.9 ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ**

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում մանկական և երեխաների մահացության մասին տվյալները հավաքագրվել են կանանց հարցաթերթի վերարտադրողականության պատմության միջոցով: Կանայք հայտնել են մինչև 5 տարեկան երեխաների մահվան ընդամենը 16 դեպքերի մասին (չկշռված), որոնք գրանցվել են հետազոտությանը նախորդող 0-4 տարիների ընթացքում տեղի ունեցած 1,724 կենդանի ծնունդներից: ՀԺԱՀ-ում արձանագրված մահվան փոքրաթիվ դեպքերն

արտացոլում են այն փաստը, որ Հայաստանում մանկական մահացությունը հաստատուն կերպով նվազում է (ԱՎԾ, 2015): Սակայն մահերի փոքր թվաքանակի պատճառով անհնար է ստանալ մանկական մահացության ցուցանիշների վստահելի գնահատականներ: Հետևաբար, որոշում է կայացվել այս զեկույցում չներկայացնել մահացության ցուցանիշները: ՀԺԱՀ հիմնական ցուցանիշների զեկույցում հրապարակված՝ Հայաստանում մանկական մահացության վերաբերյալ տվյալները ևս չպետք է դիտարկվեն որպես վստահելի գնահատականներ տվյալներն օգտագործողների կողմից (ԱՎԾ և այլք, 2016):





**Հիմնական արդյունքներ**

- Մինչև 5 տարեկան երեխաների 9 տոկոսը թերաճ է (կարճահասակ իրենց տարիքի համար), 4 տոկոսը՝ թերսնված (նիհար իրենց հասակի համար), 3 տոկոսը՝ թերքաշ (նիհար իրենց տարիքի համար), իսկ 14 տոկոսը գերքաշ/գեր է (ծանրաքաշ իրենց հասակի համար):
- Գրեթե բոլոր երեխաները (97 տոկոս) իրենց կյանքի որոշակի ժամանակահատվածում կերակրվում են կրծքի կաթով, իսկ մինչև 6 ամսական երեխաների 45 տոկոսը բացառապես կերակրվում է կրծքի կաթով:
- 6-23 ամսական երեխաների միայն մեկ քառորդն է (25 տոկոս) համապատասխանում նվազագույն ընդունելի սննդակարգի ստանդարտներին:
- 6-59 ամսական երեխաների 16 տոկոսը և 15-49 տարեկան կանանց 13 տոկոսն ունեն սակավարյունություն:
- 15-49 տարեկան կանանց 45 տոկոսը գերքաշ/գեր է:
- Բոլոր տնային տնտեսությունները կերակուր պատրաստելիս օգտագործում են յոդացված աղ:

Լավ սնուցումն ազգային զարգացման և անհատական բարեկեցության նախապայման է: Չնայած վատ սնուցման հետ կապված խնդիրներն ազդում են ողջ բնակչության վրա՝ կանայք և երեխաները հատկապես խոցելի են՝ պայմանավորված իրենց առանձնահատուկ ֆիզիոլոգիայով և սոցիալ-տնտեսական հատկանիշներով: Ծննդից մինչև երկու տարեկան հասակը երեխայի զարգացման, առողջության և ձևավորման կարևոր ժամանակահատվածն է: Ցավոք, այս շրջանում հաճախ նկատվում է սպիտակուցային և միկրոսննդային նյութերի պակաս, որը խոչընդոտում է ֆիզիկական աճին և ճանաչողական զարգացմանը: Վաղ տարիքի երեխաների շրջանում տարածված այնպիսի հիվանդությունները, ինչպիսիք են փորլուծությունը և սուր շնչառական վարակները, ևս նպաստում են սննդային նյութերի պակասին (Black et al., 2008): Թերսնումը չափահասների շրջանում պատճառ է վերարտադրողականության կրճատման, վարակների նկատմամբ զգայունության ավելացման, հիվանդություններից դանդաղ վերականգնման, իսկ կանանց շրջանում նաև հղիության բացասական ելքերի ավելացման համար (Cesar et al., 2008): Սնուցման վատ կարգավիճակ ունեցող կինը (որն արտահայտվում է մարմնի զանգվածի ցածր ցուցանիշով, կարճ հասակով, սակավարյունությամբ կամ այլ միկրոսննդային նյութերի պակասով) ունի ծննդաբերության ժամանակ խնդիրների բխվելու առավել մեծ վտանգ, կարող է ունենալ փոքր քաշով երեխա, ավելանում է հետծննդյան արյունահոսության, այդ թվում՝ մայրական մահացության ռիսկը: Թերսնուցման պարագայում հիվանդացության ռիսկը բարձր է և՛ մոր, և՛ երեխայի համար: Սոցիալ-տնտեսական և մշակութային որոշակի գործոններ ևս ազդում են կերակրման և սնուցման կարգավիճակի վրա:

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում սնուցման կարգավիճակը գնահատելու համար բուժաշխատողները տնային տնտեսություններում կատարել են մինչև 5 տարեկան երեխաների և 15-49 տարեկան կանանց հասակի ու քաշի և հեմոգլոբինի մակարդակի չափումներ: Ի լրումն սրան՝ կանանցից հավաքագրվել են նաև տվյալներ նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման

վերաբերյալ, ներառյալ՝ կրծքով կերակրման, հավելյալ սնուցման (կոշտ և կիսակոշտ սննդի ներառման), սննդատեսակների բազմազանության և կերակրման հաճախականության վերաբերյալ: Տեղեկատվություն է հավաքագրվել նաև կանանց և երեխաների կողմից երկաթի հավելումների ընդունման վերաբերյալ: Կերակուր պատրաստելու համար օգտագործվող աղը ստուգվել է՝ դրանում յոդի առկայությունը որոշելու նպատակով:

Մույն գլխում տվյալներն օգտագործվել են Հայաստանում երեխաների և կանանց սնուցման կարգավիճակը տարբեր տեսանկյուններից գնահատելու համար: Այն ներառում է հետևյալ թեմաները՝ կանանց և մինչև 5 տարեկան երեխաների սնուցման կարգավիճակը՝ հետազոտության ընթացքում հավաքագրված անտրոպոմետրիկ տվյալների (հասակ և քաշ) հիման վրա, նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցումը, այդ թվում՝ կրծքով կերակրումը, հավելյալ սննդի ներառումը և շշով կերակրելու տարածվածությունը, միկրոտարրերի ընդունումը կանանց և երեխաների շրջանում, տնային տնտեսությունում օգտագործվող աղի յոդացվածության աստիճանը, սակավարյունության տարածվածությունը կանանց և երեխաների շրջանում, սակավարյունության վերաբերյալ կանանց և տղամարդկանց ունեցած գիտելիքները: Ներառված է նաև նորածինների և վաղ տարիքի երեխաների (6-23 ամսական) կերակրման գործելակերպի որակը նկարագրող ամփոփ գործակիցը:

## **12.1 ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄՆՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հարցազրույցի մասնակցած տնային տնտեսություններում հավաքագրվել են տվյալներ երեխաների սնուցման կարգավիճակի վերաբերյալ՝ մինչև 5 տարեկան երեխաների հասակը և քաշը չափելու միջոցով: Մնուցման կարգավիճակի գնահատումն օգնում է բացահայտելու երեխաների այն ենթախմբերին, որոնք ունեն աճի հետ կապված խնդիրներ:

### **12.1.1 Վաղ տարիքի երեխաների շրջանում սնուցման կարգավիճակի գնահատում**

Տնային տնտեսության հարցաթերթի ցուցակում գրանցված բոլոր այն երեխաները, ովքեր ծնվել են 2010 թ. հունվարին կամ ավելի ուշ, համարվել են համապատասխանող հասակի և քաշի չափումների համար: Հասակի և քաշի չափումներ կարող էին հավաքագրվել անգամ այն երեխաներից, ում մայրերը հնարավոր է՝ մասնակցած չլինեին հետազոտությանը: Քաշը չափվել է թվային կերան ունեցող SECA (878) կշեռքներով: Հասակը չափվել է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից տրամադրված հասակաչափերով<sup>1</sup>: Մինչև 2 տարեկան երեխաների հասակը չափվել է պառկած, իսկ ավելի մեծ երեխաներինը՝ կանգնած:

Այս չափումների հիման վրա ստացվել են միջազգայնորեն ընդունված երեք ցուցանիշ, որոնք արտացոլում են երեխաների սնուցման կարգավիճակը.

- հասակն ըստ տարիքի (թերաճության գնահատման չափանիշ),
- քաշն ըստ հասակի (թերսնվածության կամ գերքաշության գնահատման չափանիշ),
- քաշն ըստ տարիքի (թերքաշության գնահատման չափանիշ):

ՀԺԱՀ 2015-16-ին երեխաների սնուցման կարգավիճակը հաշվարկվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից 2006 թ. հրապարակված աճի ստանդարտների համաձայն: Աճի այս ստանդարտները ստացվել են ԱՀԿ-ի աճի վերաբերյալ ցուցանիշների մշակման բազմակենտրոն հետազոտության շրջանակում հավաքագրված տվյալների հիման վրա (WHO Multicentre Growth Reference Study Group, 2006): Որպես համեմատության կետ՝ երեխաների բազային բնակչության օգտագործումը հեշտացնում է բնակչության ենթախմբերի անտրոպոմետրիկ կարգավիճակի տարբերությունների և ժամանակի ընթացքում սնուցման կարգավիճակի փոփոխությունների ուսումնասիրությունը: Սնուցման կարգավիճակի նշված երեք ցուցանիշներից

<sup>1</sup> Շարժական մանկան/երեխայի/չափահասի հասակաչափ, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի նյութերի կատալոգ, համար S0114540:

յուրաքանչյուրն արտահայտված է ԱՀԿ-ի կողմից առաջարկված երեխաների աճի ստանդարտների մեդիանից ստանդարտ շեղման միավորներով (SD):

Հասակն ըստ տարիքի ցուցանիշն աճի գծային հետաձգման և աճի գումարային դեֆիցիտի չափանիշ է: Երեխաները, ում հասակն ըստ տարիքի Z-միավորը 2 ստանդարտ շեղումով ցածր է (-2 SD) բազային բնակչության մեդիանից, համարվում են կարճահասակ իրենց տարիքի համար (թերաճ) կամ քրոնիկ թերսնված: Երեխաները, ում հասակն ըստ տարիքի 3 ստանդարտ շեղումով է ցածր (-3 SD), համարվում են խիստ թերաճ: Երեխայի թերաճությունը կարող է լինել տևական ժամանակահատվածում բավարար սնուցման բացակայության, անընդհատ ոչ բալանսավորված սննդի ստացման կամ քրոնիկ հիվանդությունների ազդեցության հետևանք: Հետևաբար, հասակն ըստ տարիքի ցուցանիշը երկար ժամանակահատվածում բնակչության թերսնուցման չափանիշ է, և տվյալների հավաքագրման ժամանակահատվածով (սեզոնով) պայմանավորված՝ այն էապես չի փոփոխվում:

Քաշն ըստ հասակի ցուցանիշն արտահայտում է մարմնի զանգվածի և հասակի/երկարության հարաբերությունը և նկարագրում է սնուցման ընթացիկ կարգավիճակը: Այն հնարավորություն է տալիս բացահայտելու այն երեխաներին, ովքեր վերջին ժամանակահատվածում ունեցել են քաշի էական կորուստ, որը սովորաբար պայմանավորված է լինում սննդի խիստ պակասով, սուր հիվանդությամբ կամ այս երկու գործոնների համադրությամբ: Երեխաները, ում քաշն ըստ հասակի Z-միավորը 2 ստանդարտ շեղումով ցածր է (-2 SD) բազային բնակչության մեդիանից, համարվում են նիհար (թերսնված) կամ սուր թերսնված: Երեխաները, ում քաշն ըստ հասակի Z-միավորը 3 ստանդարտ շեղումով է ցածր (-3 SD) բազային բնակչության մեդիանից, համարվում են խիստ թերսնված: Թերսնվածությունն անմիջապես հետազոտությանը նախորդող ժամանակահատվածում բավարար սնուցման բացակայության հետևանք է և սովորաբար արտահայտում է սեզոնայնությամբ պայմանավորված սննդատեսակների հասանելիության տարբերությունները կամ հիվանդությունների տարածվածությունը: Այն կարող է առաջանալ նաև վերջին ժամանակահատվածում գրանցված հիվանդություններից, մասնավորապես՝ փորլուծությունից, ոչ պատշաճ կերակրման գործելակերպից կամ սննդի կտրուկ պակասից:

Քաշն ըստ տարիքի ցուցանիշը հանդիսանում է հասակն ըստ տարիքի և քաշն ըստ հասակի ցուցանիշների բաղադրյալ ցուցանիշ: Այն հաշվի է առնում ինչպես սուր, այնպես էլ քրոնիկ թերսնումը: Երեխաները, ում քաշն ըստ տարիքի Z-միավորը 2 ստանդարտ շեղումով ցածր է (-2 SD) բազային բնակչության մեդիանից, համարվում են թերքաշ: Երեխաները, ում քաշն ըստ տարիքի Z-միավորը 3 ստանդարտ շեղումով է ցածր (-3 SD) բազային բնակչության մեդիանայից, համարվում են խիստ թերքաշ:

Գերքաշությունը և զիրությունը տարբեր երկրների երեխաների համար վերաձվում են խնդիրների: Երեխաները, ում քաշն ըստ հասակի Z-միավորը երկու ստանդարտ շեղումով բարձր է (2 SD) բազային բնակչության մեդիանից, համարվում են գերքաշ:

Միջին Z-միավորները (Z-scores) նույնպես հաշվարկվել են սնուցման յուրաքանչյուր ցուցանիշի համար: Միջին Z-միավորը ցույց է տալիս քննարկվող բնակչության սնուցման կարգավիճակը՝ առանց բացառությունների: Ցուցանիշներից որևէ մեկի 0-ից ցածր միջին Z-միավորը (այսինքն՝ բացասական միջին արժեքը) նշանակում է, որ հետազոտության մեջ ներառված մանկական բնակչության (կամ հետազոտության մեջ ներառված երեխաների բնակչության որևէ ենթախմբի) կարգավիճակը, ըստ տվյալ ցուցանիշի, միջինում ցածր է ԱՀԿ-ի բազային բնակչության միավորից:

### 12.1.2 Երեխաների թերսնուցման մակարդակները

Հետազոտության շրջանակում տնային տնտեսությունների մինչև 5 տարեկան (հետազոտության ժամանակ 0-59 ամսական) երեխաները համարվել են համապատասխանող

հասակի և քաշի չափումների համար: Չափումների համար համապատասխանող 1,740 երեխաների 7 տոկոսի դեպքում չի կատարվել հասակի չափում, իսկ 6 տոկոսի դեպքում՝ քաշի չափում, քանի որ երեխան ներկա չի եղել, ծնողները թույլ չեն տվել կատարել չափումներ, կամ երեխան հիվանդ է եղել: Երեխաների 8-10 տոկոսի դեպքում գրանցվել են հասակի կամ քաշի անհավանական բարձր կամ ցածր արժեքներ: Այս վերլուծությունը կենտրոնացած է այն երեխաների վրա, ում համար հավաքագրվել էին անտրոպոմետրիկ չափումների և տարիքի վերաբերյալ հավաստի և հավանական սովյալներ: Աղյուսակ 12.1-ը ցույց է տալիս որպես թերսնուցված դասակարգված երեխաների տոկոսը՝ համաձայն հասակն ըստ տարիքի, քաշն ըստ հասակի և քաշն ըստ տարիքի ցուցանիշների և ըստ ժողովրդագրական և այլ հիմնական բնութագրիչների:

#### *Հասակն ըստ տարիքի (թերաճություն)*

Հավաքագրված սովյալները ցույց են տալիս, որ մինչև 5 տարեկան երեխաների 9 տոկոսը թերաճ է կամ քրոնիկ թերսնված (հասակն ըստ տարիքի ցածր է -2 SD), իսկ 4 տոկոսը՝ խիստ թերաճ (Աղյուսակ 12.1): Ըստ տարիքային խմբերի թերաճության վերլուծությունը ցույց է տալիս, որ թերաճության ամենամեծ մասնաբաժինը (17 տոկոս) 6-8 ամսական երեխաների շրջանում է, որը կտրուկ կերպով նվազում է կյանքի երկրորդ տարվա ընթացքում մինչև ամենացածր 5 տոկոսը 24-35 ամսական երեխաների շրջանում, որից հետո տարիքով ավելի մեծ երեխաների շրջանում ցուցանիշը տատանվում է 10 և 6 տոկոսների միջև (Գծապատկեր 12.1): Տղա երեխաների շրջանում թերաճությունը մի փոքր ավելի շատ է տարածված, քան աղջիկ երեխաների շրջանում (համապատասխանաբար 11 և 8 տոկոս): Թերաճության մակարդակների միջև տարբերություններն ըստ միջճննդյան միջակայքի, ծնվելու պահին երեխայի չափերի կամ մոր սնուցման կարգավիճակի մեծ չեն: Մակայն տարբերություններն ըստ քաղաքային-գյուղական բնակավայրերի, մոր կրթական մակարդակի և բարեկեցության մակարդակի զգալի են: Թերաճությունն ավելի տարածված է գյուղական բնակավայրերում: Այսպես գյուղաբնակ երեխաների շրջանում թերաճության ցուցանիշը կրկնակի անգամ բարձր է՝ քաղաքաբնակ երեխաների համեմատությամբ (համապատասխանաբար 13 և 6 տոկոս): Ընդհանուր առմամբ, ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող մայրերի երեխաներն ավելի հակված են թերաճության: Օրինակ՝ հիմնական կրթություն ունեցող մայրերի երեխաների շրջանում թերաճությունը գրեթե կրկնակի անգամ բարձր է, քան միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ունեցող կանանց երեխաների շրջանում: Թերաճությունն ավելի տարածված է բարեկեցության ամենացածր, երկրորդ և միջին քվինտիլներում (12-ական տոկոս)՝ համեմատած բարեկեցության չորրորդ և ամենաբարձր քվինտիլների հետ (6-ական տոկոս): Մարզային տարբերությունները թերաճության տարածվածության առումով տատանվում են՝ Երևանում գրանցված ամենացածր 4 տոկոսից մինչև Շիրակում գրանցված ամենաբարձր 20 տոկոսը:

#### *Քաշն ըստ հասակի (թերսնվածություն)*

Մինչև 5 տարեկան երեխաների 4 տոկոսը թերսնված է (քաշն ըստ հասակի ցածր է -2 SD): Ըստ տարիքի՝ թերսնվածությունն ամենաբարձրն է մինչև 6 ամսական և 36-47 ամսական երեխաների շրջանում (յուրաքանչյուրը՝ 6-ական տոկոս), իսկ ամենացածրը՝ 18-23 ամսական երեխաների շրջանում է (0 տոկոս): Ըստ սեռի կամ միջճննդյան միջակայքի՝ տարբերությունները շատ փոքր են: Աղջիկ և տղա երեխաները գրեթե հավասարապես թերսնված են: Երեխաները, ովքեր ծնվելու պահին եղել են «փոքր» կամ «շատ փոքր», ավելի թերսնված են, քան «միջին» կամ «միջինից փարթամ» ծնված երեխաները: Թերսնվածությունն ավելի տարածված է Արագածոտնի (23 տոկոս), Արարատի (13 տոկոս) և Գեղարքունիքի (11 տոկոս) մարզերի երեխաների շրջանում՝ մյուս մարզերի համեմատությամբ (5 տոկոս և ավելի ցածր):

#### *Քաշն ըստ տարիքի (թերքաշություն)*

Ընդհանուր առմամբ, երեխաների 3 տոկոսը թերքաշ է (քաշն ըստ տարիքի ցածր է -2 SD): Թերքաշության ամենաբարձր մակարդակները մինչև 9 ամսական երեխաների շրջանում են: Արագածոտնի մարզում բնակվող երեխաների շրջանում թերքաշությունն ամենատարածվածն է (14 տոկոս)՝ համեմատած մյուս մարզերի երեխաների հետ (5 տոկոս և ավելի ցածր):

**Աղյուսակ 12.1 Երեխաների սնուցման կարգավիճակ**

Միջև 5 տարեկան երեխաների տոկոսը, ովքեր համարվում են թերսնված ըստ սնուցման կարգավիճակի երեք անտրոպոմետրիկ ցուցանիշների՝ հասակն ըստ տարիքի, քաշն ըստ հասակի և քաշն ըստ տարիքի, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Հասակն ըստ տարիքի <sup>1</sup>						Քաշն ըստ հասակի						Քաշն ըստ տարիքի						
	Սոկոսը գածր		Սոկոսը գածր		Սոկոսը գածր		Սոկոսը գածր		Սոկոսը գածր		Սոկոսը գածր		Սոկոսը գածր		Սոկոսը գածր		Սոկոսը գածր		
	-3 SD	-2 SD <sup>2</sup>	-3 SD	-2 SD <sup>2</sup>	-3 SD	-2 SD <sup>2</sup>	-3 SD	-2 SD <sup>2</sup>	-3 SD	-2 SD <sup>2</sup>	-3 SD	-2 SD <sup>2</sup>	-3 SD	-2 SD <sup>2</sup>	-3 SD	-2 SD <sup>2</sup>	-3 SD	-2 SD <sup>2</sup>	
<b>Տարիքն ամբանդով</b>																			
<6	4.2	15.4	-0.3	150	1.7	6.3	11.2	0.3	153	1.9	7.5	4.3	-0.1	163					
6-8	14.6	16.9	-0.0	75	0.0	1.6	12.2	0.7	75	2.4	7.8	8.1	0.4	80					
9-11	7.5	11.8	-0.3	85	2.7	5.4	12.6	0.8	85	0.0	0.8	3.8	0.4	86					
12-17	4.7	12.8	-0.1	161	0.0	2.1	16.7	0.9	159	0.0	0.4	12.2	0.7	167					
18-23	4.2	9.5	-0.4	157	0.0	0.0	18.6	1.1	157	0.0	0.0	10.6	0.7	166					
24-35	1.4	5.4	0.2	330	2.2	5.1	32.0	0.6	326	1.1	1.0	7.1	0.5	330					
36-47	3.2	9.7	-0.3	304	2.1	6.1	14.8	0.6	299	0.8	4.0	4.5	0.3	305					
48-59	2.0	6.2	-0.2	311	1.8	4.2	12.2	0.4	301	1.1	2.3	7.4	0.2	314					
<b>Սեռ</b>																			
Արական	4.4	10.9	-0.2	833	1.2	3.6	14.5	0.7	822	1.0	3.2	7.7	0.3	854					
Իգական	2.9	7.8	-0.0	740	1.9	5.0	12.7	0.6	733	0.4	2.0	6.5	0.4	755					
<b>Միջնորդական միջակայքն ամբանդով</b>																			
Առաջին ծնունդ <sup>3</sup>	4.4	9.7	-0.2	684	1.2	3.2	12.3	0.6	678	0.9	2.6	7.1	0.4	703					
<24	3.1	10.2	-0.3	195	0.5	5.1	19.4	0.8	191	0.0	3.3	9.7	0.4	197					
24-47	3.0	9.7	-0.2	315	1.6	4.6	12.4	0.6	309	0.8	1.1	7.0	0.3	317					
48+	3.2	8.2	0.0	367	2.6	5.5	13.6	0.5	365	0.5	3.7	5.9	0.4	380					
<b>Չափը ծնվելու պահին<sup>4</sup></b>																			
Շատ փոքր	*	*	*	19	(7.2)	(12.4)	(8.7)	0.0	22	(19.5)	(33.0)	(0.0)	1.5	23					
Փոքր	3.0	10.9	-0.2	115	3.5	7.1	8.3	0.4	115	0.6	3.6	6.7	0.2	117					
Միջին կամ միջինից փառթում	3.5	8.9	-0.1	1,422	1.3	3.8	14.1	0.7	1,403	0.4	2.1	7.2	0.4	1,453					
<b>Սոք սնուցման կարգավիճակ<sup>5</sup></b>																			
Նիսար (ՄՁՑ <18.5)	6.3	8.9	-0.2	71	1.9	1.9	14.2	0.5	70	1.3	1.3	9.4	0.3	73					
Նորսնու (ՄՁՑ 18.5-24.9)	3.7	10.5	-0.2	821	1.2	4.4	13.7	0.6	813	0.8	2.9	7.2	0.4	838					
Գերքաշ/գեր (ՄՁՑ ≥ 25)	3.7	8.1	-0.1	532	2.2	4.4	14.3	0.7	525	0.5	2.5	6.8	0.4	549					
<b>Բնակավայր</b>																			
Քաղաքային	2.4	6.2	-0.1	876	1.5	3.3	11.5	0.6	877	0.5	2.3	5.4	0.4	907					
Գյուղական	5.3	13.4	-0.2	697	1.5	5.5	16.4	0.7	679	0.9	3.1	9.4	0.4	702					
<b>Մարզ</b>																			
Երևան	1.5	3.5	0.0	419	1.4	1.4	11.4	0.6	420	0.0	1.9	4.7	0.5	441					
Արագածոտն	11.0	18.1	0.2	65	10.1	22.9	10.3	-0.4	61	4.4	14.3	6.5	-0.2	65					
Արարատ	7.9	13.7	0.8	161	2.7	13.4	35.9	1.0	147	1.1	2.8	34.8	1.2	164					
Արմավիր	1.5	9.7	-0.4	185	0.7	2.2	13.1	0.7	187	1.0	4.8	1.7	0.2	191					
Գեղարքունիք	6.7	9.9	0.6	75	3.5	10.6	12.3	0.2	73	0.0	0.0	11.7	0.6	74					
Լոռի	0.0	5.6	-0.2	69	0.0	1.2	10.8	0.7	69	0.0	0.0	6.1	0.3	69					
Կոտայք	1.8	7.7	-0.5	245	0.0	1.1	4.9	0.6	244	0.0	1.2	0.8	0.1	246					
Շիրակ	8.6	19.5	-0.7	169	1.7	5.1	18.4	0.7	170	1.1	2.4	4.3	0.1	172					
Սյունիք	3.9	12.3	-0.5	62	1.1	2.6	12.2	0.4	62	2.0	4.4	1.5	-0.1	63					
Վայոց ձոր	3.8	11.5	-0.5	37	0.0	2.2	18.9	0.9	36	0.7	1.5	6.8	0.4	37					
Տավուշ	1.8	7.4	-0.5	86	0.0	0.0	7.8	0.8	86	1.0	1.0	4.5	0.3	87					

(Շարունակվել...)

**Աղյուսակ 12.1 - Շարժունություն**

Հիմնական բնութագրիչներ	Հատակ և ըստ տարիքի <sup>1</sup>						Քաշն ըստ ստրիքի							
	Տղթան			Միջին			Տղթան			Միջին				
	Տղթան -3 SD	Տղթան -2 SD	Տղթան (SD)	Z-վիճակ	Տղթան -3 SD	Տղթան -2 SD	Տղթան (SD)	Z-վիճակ	Տղթան +2 SD	Տղթան +3 SD	Տղթան (SD)	Z-վիճակ		
<b>Մոր կրթություն<sup>2</sup></b>														
Հիմնական	5.5	17.3	-0.3	91	1.2	5.7	24.4	0.8	89	0.0	3.1	7.7	0.2	91
Միջնակարգ	4.0	10.6	-0.2	640	1.3	5.9	14.2	0.6	632	0.7	2.7	7.9	0.3	650
Միջին մասնագիտական	3.8	8.2	-0.2	327	0.6	1.6	13.6	0.7	321	1.2	1.6	6.3	0.4	332
Բարձրագույն	3.0	7.3	-0.1	510	2.4	3.7	11.0	0.6	509	0.4	3.1	6.7	0.4	533
<b>Բարեկեցության բլիճանի</b>														
Ամենացածր	3.2	12.0	-0.2	315	1.1	6.1	16.8	0.6	309	1.4	4.9	9.5	0.2	315
Երկրորդ	3.9	11.5	-0.1	325	2.7	5.6	16.1	0.6	319	0.5	1.6	12.0	0.5	333
Միջին	7.1	11.5	-0.3	300	1.0	4.3	15.1	0.7	293	0.3	1.8	6.3	0.4	302
Չորրորդ	2.7	6.2	-0.2	264	0.6	2.3	12.5	0.7	266	0.8	2.0	3.7	0.4	274
Ամենաբարձր	1.9	5.9	-0.0	369	1.8	2.8	8.5	0.5	368	0.5	2.8	4.1	0.3	384
Ընդամենը	3.7	9.4	-0.1	1,573	1.5	4.2	13.6	0.6	1,555	0.7	2.6	7.2	0.4	1,609

<sup>1</sup> Նշում: Աղյուսակը հիմնված է այն երեխաների վրա, ովքեր հարցազրույցին նախորդող զեշերը գեշերել են տնային տնտեսությունում: Ցուցանիշները յուրաքանչյուրն արտահայտված է ստանդարտ շեղման միավորներով՝ ԱՇԿ-ի կողմից 2006 թ. ընդունված Երեխայի աճի ստանդարտների մեղիանից: Այս աղյուսակի ցուցանիշները համեմատելի ՉՇՆ այն ցուցանիշների հետ, որոնք հիմնված են նախկինում օգտագործվող ԱՇԿ/ՀԿԿ/ԱՇԿ ստանդարտների վրա: Աղյուսակը հիմնված է ճշգրիտ ճնշման տարբերիկ (ամիս և տարի) և հասակի ու քաշի ճշգրիտ չափումներ ունեցած երեխաների տվյալների վրա: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Ընդամենը ներառում է 3 դեպք, երբ բացակայում են ճակատային չափերի մասին տվյալները, և երեխաների 5 դեպք, ում մայրերը կրթություն չունեն:

<sup>2</sup> Միջին 2 տարեկան կամ այն երեխաների ղեկավարում, ում տարիքը հայտնի չէր, և 85 ամ-ից պակաս հասակ ունեցող երեխաների ղեկավարում հասանքը չափվել է պատկան, մյուս բոլոր երեխաների հասանքը չափվել է կանգնած:

<sup>3</sup> Ներառում է երեխաներին, ովքեր -3 ստանդարտ շեղումով (SD) ցածր են ԱՇԿ-ի երեխայի աճի ստանդարտների մեղիանից:

<sup>4</sup> Չի ներառում այն երեխաներին, ում մայրերը չեն մասնակցել հարցազրույցին:

<sup>5</sup> Եթե առաջին ճնշվել է երկվորյակ (տղթան և այլն), ապա երկու (երեք և ավելի) երեխաներն էլ խամարվել են առաջին ճնշման, բանի որ այս դեպքում չկա նախորդ ճնշումներից հետո ընկած միջակայք:


<sup>6</sup> Չի ներառում այն երեխաներին, ում մայրերը չեն կշռվել, և չեն չափվել, այն երեխաներին, ում մայրերը չեն մասնակցել հարցազրույցին, և այն երեխաներին, ում մայրերը եղել են կամ ճնշումներով են նախորդող 2 ամիսների ընթացքում: Մոր սնունդի կարգավիճակը ՄՅՑ-ի (մարմնի զանգվածի ցուցանիշ) առումով ներկայացված է Աղյուսակ 12.9-ում:

<sup>7</sup> Այն կանանց համար, ում հետ հարցազրույց չի անցկացվել, տվյալները վերցվել են տնային տնտեսության հարցաթղթից: Չի ներառում այն երեխաներին, ում մայրերն առկա չեն եղել տնային տնտեսության ցուցակում:

*Գերքաշություն*

Աղյուսակ 12.1-ը նաև ցույց է տալիս այն երեխաների մասնաբաժինը, ովքեր բազային մեդիանից 2 ստանդարտ շեղումով բարձր են: Այս երեխաները համարվում են գերքաշ իրենց տարիքի համեմատ: Մինչև 5 տարեկան երեխաների 14 տոկոսը գերքաշ է (քաշն ըստ հասակի բարձր է +2 SD): Մա նշանակում է, որ գերքաշությունը շատ ավելի մեծ խնդիր է Հայաստանի երեխաների շրջանում, քան թերքաշությունը: Չնայած տարբերությունները մեծ չեն գերքաշության մակարդակը ավելի բարձր է տղաների (15 տոկոս), քան աղջիկների շրջանում (13 տոկոս), այն բարձր է նաև գյուղական բնակավայրերում (16 տոկոս)՝ քաղաքայինի հետ համեմատած (12 տոկոս): Արարատի մարզում բնակվող երեխաները ավելի են հակված գերքաշության (36 տոկոս), քան մյուս մարզերի երեխաները (5-19 տոկոս): Հիմնական կրթական մակարդակ ունեցող մայրերի երեխաները (24 տոկոս)՝ համեմատած միջնակարգ, միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող մայրերի երեխաների հետ (11-14 տոկոս), նույնպես ավելի են հակված գերքաշության: Գերքաշ ունեցող երեխաների մասնաբաժինը հաստատուն կերպով նվազում է բարեկեցության աճին զուգընթաց:

**Գծապատկեր 12.1 Երեխաների սնուցման կարգավիճակն ըստ տարիքի**



Նշում: Թերածությունն արտահայտում է քրոնիկ թերսնումը, թերսնվածությունը՝ խիստ թերսնումը, թերքաշությունը՝ կամ քրոնիկ, կամ խիստ թերսնումը, կամ երկուսը միասին:

ՀԺԱՀ 2015-16

Ինչպես ցույց է տրված Գծապատկեր 12.1-ում, ըստ տարիքի՝ երեխաների սնուցման կարգավիճակը փոխվում է: Լինելով կայուն կյանքի առաջին 6-7 ամիսների ընթացքում՝ մոտ 15-16 տոկոս թերածությունը հաստատուն կերպով նվազում է սկսած 8 ամսականից մինչև 2 տարեկանը, որից հետո կյանքի 3-րդ և 4-րդ տարիների ընթացքում ցուցանիշը կրկին աճում է: Թերսնվածության և թերքաշության ամենաբարձր մակարդակները գրանցվել են 6-10 ամսականում, երբ կրծքի կաթից բացի տրվում է նաև լրացուցիչ սնունդ: 12 ամսականից հետո և՛ թերսնվածության, և՛ թերքաշության մակարդակները մնում են ցածր՝ մինչև կյանքի 2-րդ տարվանից հետո կրկին բարձրանալը:



### 12.1.3 Երեխաների սնուցման կարգավիճակի միտումները

Հայաստանում ՀժԱՀ 2015-16-ի շրջանակում չափումների մասնակցած երեխաների սնուցման կարգավիճակը կարող է համեմատվել նախորդ երկու ՀժԱՀ հետազոտությունների՝ ՀժԱՀ 2005-ի և ՀժԱՀ 2010-ի տվյալների հետ<sup>2</sup>: Գծապատկեր 12.2-ը ներկայացնում է երեխաների սնուցման կարգավիճակի միտումները ՀժԱՀ 2005-ից ՀժԱՀ 2015-16-ն ընկած ժամանակահատվածի համար՝ ըստ թերաճության, թերսնվածության և թերքաշության կատեգորիաների:

Գծապատկեր 12.2-ը ցույց է տալիս, որ թերաճությունը 2005-ին և 2010-ին գրանցված 18-19 տոկոսից նվազել է մինչև 9 տոկոսի՝ 2015-16-ին: 2005-ից ի վեր թերսնվածության մակարդակները գրեթե չեն փոխվել: Թերքաշ երեխաների մասնաբաժինը 2010-ին գրանցված 5 տոկոսից գրեթե կեսով նվազել է՝ կազմելով 3 տոկոս 2015-16-ին: Գերքաշություն ունեցող երեխաների (քաշն ըստ հասակի բարձր է +2 SD) մասնաբաժինը 2005-ի 11 տոկոսից աճել է մինչև 15 տոկոսի 2010-ին, սակայն վերջին 5 տարիների ընթացքում շատ քիչ է փոխվել (14 տոկոս 2015-16-ին): Հասկանալու համար ՀժԱՀ 2015-16-ին թերաճության և որոշ չափով նաև թերքաշության ցուցանիշների բարելավման պատճառները՝ ՀժԱՀ 2005-ի և ՀժԱՀ 2010-ի համեմատությամբ, անհրաժեշտ է հետազոտությունները: Մինչև 2 տարեկան երեխաների շրջանում թերաճության ցուցանիշները երեք հետազոտությունների արդյունքներով նման են իրար (14 տոկոս ՀժԱՀ 2005-ին, 17 տոկոս ՀժԱՀ 2010-ին և 13 տոկոս ՀժԱՀ 2015-16-ին): Թերաճության մակարդակը 24-59 ամսական երեխաների շրջանում բավական բարձր էր 2010-ին (21 տոկոս)՝ համեմատած ՀժԱՀ 2015-16-ի (7 տոկոս) և ՀժԱՀ 2005-ի հետ (12 տոկոս): Հասակի չափման համար օգտագործված տարբեր սարքավորումները<sup>3</sup>, ինչպես նաև երեք հետազոտությունների դաշտային աշխատանքների անցկացման ժամանակահատվածները<sup>4</sup> կարող են նշվել որպես գործոններ, որոնք հնարավոր է՝ իրենց ազդեցությունն են ունեցել այս փոփոխությունների վրա: Ընտրանքային փոփոխությունները ևս հանդիսանում է ազդող գործոն: Սակայն ՀժԱՀ 2005 և 2010 հետազոտությունների և ՀժԱՀ 2015-16-ի արդյունքում ստացված սնուցման կարգավիճակի համեմատությունները ցույց են տալիս, որ Հայաստանում երեխաները շարունակում են մնալ ավելի հակված թերաճության և գերքաշության, քան թերքաշության կամ թերսնվածության:


<sup>2</sup> Երեխաների սնուցման կարգավիճակի վերաբերյալ ՀժԱՀ 2000-ի տվյալները միտումների այս վերլուծության մեջ չեն օգտագործվել, քանի որ ՀժԱՀ 2000-ի շրջանակներում անտրոպոմետրիկ չափումներ կատարվել են միայն այն կանանց երեխաներին, ովքեր մասնակցել են հարցազրույցին: ՀժԱՀ 2005, ՀժԱՀ 2010 և ՀժԱՀ 2015-16-ում ներառվեցին հասակի և քաշի չափումներ բոլոր երեխաների համար, ովքեր ծնվել էին հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում և առկա էին տնային տնտեսության ցուցակում՝ անկախ նրանց մայրերի անհատական հարցազրույցի մասնակցած լինել կամ չլինելուց: Գծապատկեր 12.2-ում ցույց տրված թերաճության, թերսնվածության և թերքաշության մակարդակները տարբերվում են ՀժԱՀ 2005-ի վերջնական զեկույցում հրապարակված տվյալներից (ԱՎՕ և այլք, 2006), որոնք հաշվարկվել էին ըստ Առողջության վիճակագրության ազգային կենտրոնի (ԱՎԱԿ) բազային բնակչության ստանդարտների: Սնուցման կարգավիճակի միտումները գնահատելու համար ՀժԱՀ 2005-ի արդյունքում ստացված սնուցման կարգավիճակի ցուցանիշները վերահաշվարկվել են ըստ ԱՀԿ-ի կողմից 2006 թ. ընդունված Երեխայի աճի ստանդարտների:

<sup>3</sup> ՀժԱՀ 2015-16-ին օգտագործվել են շարժական մանկան/երեխայի/չափահասի հասակաչափեր (ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի նյութերի կատալոգ, համար S0114540), ՀժԱՀ 2005-ին՝ Shorr հասակաչափեր: ՀժԱՀ 2010-ին օգտագործվել են տեղական պատրաստման հասակաչափեր:

<sup>4</sup> ՀժԱՀ 2015-16-ն անցկացվել է ձմռանը, մինչդեռ նախորդ երկու հետազոտությունները՝ հիմնականում աշնանը: ՀժԱՀ 2015-16-ի անցկացման ժամանակահատվածի պատճառով անտրոպոմետրիկ չափումների համար երեխաների հագուստն ամբողջովին հանելը որոշակի դժվարություններ է առաջացրել, որը, հնարավոր է, իր ազդեցությունն է թողել ՀժԱՀ 2015-16-ի և նախորդ հետազոտությունների արդյունքում գրանցված սնուցման ցուցանիշների տարբերությունների վրա: Չնայած դաշտային աշխատանքներն իրականացնելու տեսանկյունից ձմռան ժամանակահատվածը նախընտրելի չէր՝ ՀժԱՀ տվյալների հավաքագրումը սկսվեց 2015 թ. դեկտեմբերին՝ ՀժԱՀ սակավարյունության թեստի արդյունքները ՀՀ առողջապահության նախարարության արագ տրամադրելու նպատակով: ՀՀ ԱՆ-ին անհրաժեշտ էին սակավարյունության տարածվածության վերաբերյալ տվյալները՝ ՀՀ ազգային ժողովին ներկայացված ցորենի այլուրի հարստացման մասին օրենքի նախագիծը



**Գծապատկեր 12.2 Մինչև 5 տարեկան երեխաների սնուցման կարգավիճակի միտումները, 2005-2016**



**12.2 ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԵՎ ՀԱՎԵԼՅԱԼ ՄՆՈՒՄ**

**12.2.1 Կրծքով կերակրման նախաձեռնում**

Կրծքով կերակրման վաղ նախաձեռնումը խորհուրդ է տրվում՝ մի շարք հանգամանքներից ելնելով: Վաղ կերակրումը նպաստավոր է մայրերի համար, քանի որ այն խթանում է կրծքի կաթի արտադրությունը և օքսիտոցին հորմոնի արտադրությունը, որն էլ իր հերթին նպաստում է արգանդի կրճատմանը և նվազեցնում է հետծննդաբերական արյան կորուստը: Կրծքի առաջնային կաթը պարունակում է կաթնախեժ, որն ունի բարձր սննդարարություն և հակամարմիններ, որոնք պաշտպանում են նորածինն վարակներից: Նախալակտացիոն կերակրումը (երեխայի կյանքի առաջին երեք օրերի ընթացքում որևէ այլ հեղուկ՝ ոչ կրծքի կաթ տալը) սովորաբար չի ողջունվում, քանի որ այն կարող է խոչընդոտել կրծքով կերակրման նախաձեռնմանը և պատճառ դառնալ նորածնի մոտ որևէ հիվանդության առաջացման համար:

Հայաստանում կրծքով կերակրման կարևորությունն ու անհրաժեշտությունը լայն տարածում են գտել՝ սկսած 1993 թ., երբ ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատվեց «Կրծքով կերակրման խրախուսման» ազգային ծրագիրը: Ազգային ծրագրին զուգահեռ իրականացվել են նաև ծննդատների ուղղված բարեփոխումներ՝ որպես «Մանկան բարեկամ ծննդատուն» ծրագրի մաս: Բարեփոխումների արդյունքում ներդրվել են հետևյալ փոփոխությունները՝ մոր և մանկան շփումը ծննդաբերությունից անմիջապես հետո, կրծքով կերակրման վաղ նախաձեռնումը (հետծննդյան առաջին 30-60 րոպեների ընթացքում), մոր և մանկան համատեղ կեցությունը, ըստ պահանջի կերակրումը և մանկանն աջակից այլ միջոցառումներ: 2000 թ. ի վեր՝ «Մանկան բարեկամ ծննդատուն» ծրագիրն ընդլայնվել է, սակայն 2010-ից հետո, երբ արդեն 22 ծննդատների և 10 պոլիկլինիկաների շնորհիվ էր «Մանկան բարեկամ» կարգավիճակը, ծրագիրն այլևս փոփոխությունների չի ենթարկվել:

պաշտպանելու համար, որն ուղղված է լինելու Հայաստանում սակավարյունության կանխարգելմանն ու վերահսկմանը:

Աղյուսակ 12.2-ը ցույց է տալիս հետազոտությանը նախորդող երկու տարիների ընթացքում<sup>5</sup> բոլոր վերջին ծնված երեխաների կրծքով կերակրման կարգավիճակն ըստ հիմնական բնութագրիչների: Աղյուսակը ցույց է տալիս երեխաների տոկոսն ըստ այն հանգամանքի, թե արդյոք նրանք երբևէ կերակրվել են կրծքի կաթով, երբ են սկսել կերակրվել կրծքի կաթով, և արդյոք նրանք, նախքան հավելյալ սննդի ներմուծումը, կերակրվել են որևէ այլ բանով, բացի կրծքի կաթից: Հայաստանում կրծքով կերակրումը գրեթե համատարած է: Այսպես՝ հետազոտությանը նախորդող երկու տարիների ընթացքում բոլոր վերջին ծնված երեխաների 97 տոկոսը երբևէ կերակրվել է կրծքի կաթով: Ընդհանուր առմամբ, վերջին ծնված երեխաների 41 տոկոսը կերակրվել է կրծքով ծնվելուց հետո առաջին մեկ ժամվա ընթացքում, իսկ 86 տոկոսը՝ ծնվելուց հետո առաջին մեկ օրվա ընթացքում:

**Աղյուսակ 12.2 Կրծքով կերակրման նախաձեռնում**

Հետազոտությանը նախորդող երկու տարիների ընթացքում վերջին ծնված երեխաների շրջանում նրանց տոկոսը, ովքեր երբևէ կերակրվել են կրծքի կաթով, տոկոսը, ովքեր կերակրվել են ծնվելուց հետո առաջին մեկ ժամվա ու առաջին մեկ օրվա ընթացքում, և հետազոտությանը նախորդող երկու տարիների ընթացքում վերջին ծնված և երբևէ կրծքով կերակրված երեխաների շրջանում նրանց տոկոսը, ովքեր ստացել են նախալակտացիոն սնունդ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Վերջին 2 տարիների ընթացքում վերջին ծնված երեխաների շրջանում՝			Վերջին 2 տարիների ընթացքում վերջին ծնված և երբևէ կրծքով կերակրված երեխաների շրջանում՝		
	Տոկոսը, որ երբևէ կերակրվել է կրծքի կաթով	Տոկոսը, որ կրծքով կերակրվել է ծնվելուց հետո 1 ժամվա ընթացքում	Տոկոսը, որ կրծքով կերակրվել է ծնվելուց հետո 1 օրվա ընթացքում <sup>1</sup>	Վերջին ծնված երեխաների թվաքանակ	Տոկոսը, որ ստացել է նախալակտացիոն սնունդ <sup>2</sup>	Վերջին ծնված և երբևէ կրծքով կերակրված երեխաների թվաքանակ
<b>Մեռ</b>						
Արական	97.0	40.3	84.8	337	11.5	327
Իգական	96.0	41.5	86.4	329	10.7	316
<b>Բնակավայր</b>						
Քաղաքային	96.7	35.3	84.8	391	13.1	378
Գյուղական	96.1	48.7	86.7	275	8.2	265
<b>Մարզ</b>						
Երևան	96.8	34.9	87.2	190	14.2	184
Արագածոտն	(100.0)	(67.8)	(86.2)	22	(13.6)	22
Արարատ	91.6	74.4	91.6	65	7.9	59
Արմավիր	94.0	16.3	59.1	79	5.6	74
Գեղարքունիք	(98.0)	(59.5)	(98.0)	28	(0.0)	27
Լոռի	(100.0)	(20.1)	(97.4)	36	(0.0)	36
Կոտայք	99.0	27.4	83.6	103	17.2	102
Շիրակ	97.6	65.8	94.5	65	4.7	63
Սյունիք	(100.0)	(37.5)	(97.2)	24	(4.9)	24
Վայոց ձոր	(92.2)	(27.9)	(83.8)	13	(25.1)	12
Տավուշ	93.1	54.0	84.4	43	21.8	40
<b>Մոր կրթությունը</b>						
Հիմնական	(89.4)	(34.3)	(73.5)	39	(8.7)	35
Միջնակարգ	96.8	43.5	86.5	266	7.5	258
Միջին մասնագիտական	97.9	41.8	89.5	133	15.8	130
Բարձրագույն	96.5	38.4	84.3	229	12.9	221
<b>Բարեկեցության քվինտիլ</b>						
Ամենացածր	94.8	45.2	83.0	117	8.3	111
Երկրորդ	96.5	50.7	83.5	141	9.0	136
Միջին	97.2	36.3	81.1	126	13.9	122
Չորրորդ	98.0	36.0	86.1	122	14.5	119
Ամենաբարձր	96.0	36.4	92.3	161	10.0	155
Ընդամենը	96.5	40.9	85.6	666	11.1	643

Լշում: Աղյուսակը հիմնված է հետազոտությանը նախորդող երկու տարիների ընթացքում վերջին ծնված երեխաների վրա, անկախ այն հանգամանքից, թե հարցման պահին երեխան ողջ է, թե մահացած: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

<sup>1</sup> Ներառում է այն երեխաներին, ովքեր կրծքով կերակրվել են ծնվելուց հետո առաջին մեկ ժամվա ընթացքում:

<sup>2</sup> Կյանքի առաջին երեք օրերի ընթացքում կրծքի կաթից բացի որևէ հեղուկ ստացած երեխաներ:

<sup>5</sup> ՀՄԱՀ 2000-ի և ՀՄԱՀ 2005-ի ժամանակ կրծքով կերակրման ցուցանիշները հաշվարկվել էին տվյալ հետազոտություններին նախորդող 5 տարիների ընթացքում ծնված բոլոր երեխաների համար: ՀՄԱՀ 2000-ին և ՀՄԱՀ 2005-ին ծննդաբերությունից հետո մեկ ժամվա և մեկ օրվա ընթացքում կրծքով կերակրման նախաձեռնման ցուցանիշները հաշվարկվել էին երբևէ կրծքով կերակրված երեխաների շրջանում, մինչդեռ ՀՄԱՀ 2010-ի և ՀՄԱՀ 2015-16-ի արդյունքները հիմնված են հետազոտությանը նախորդող երկու տարիների ընթացքում վերջին ծնված երեխաների տվյալների վրա: Հետևաբար անհրաժեշտ է ուշադիր լինել այս աղյուսակի տվյալները նախորդ ՀՄԱՀ հետազոտությունների հիմնական զեկույցներում հրատարակված արդյունքների հետ համեմատելիս:

Ըստ երեխայի սեռի՝ կրծքով կերակրումը վաղ նախաձեռնելու միջև տարբերությունները փոքր են: Ի տարբերություն քաղաքաբնակ երեխաների՝ գյուղաբնակ երեխաներն առավել հակված են ծնվելուց հետո առաջին մեկ ժամվա ընթացքում կրծքի կաթով կերակրվելուն: Գյուղաբնակ երեխաների գրեթե կեսը (49 տոկոս) սկսել է կրծքով կերակրվել ծնվելուց հետո առաջին մեկ ժամվա ընթացքում՝ քաղաքաբնակ երեխաների մեկ երրորդի (35 տոկոս) համեմատ: Սակայն այս տարբերությունը գրեթե վերանում է առաջին 24 ժամվա ընթացքում կրծքով կերակրման ցուցանիշի առումով: Այսպես՝ գյուղաբնակ երեխաների 87 և քաղաքաբնակ երեխաների 85 տոկոսը սկսել է կրծքով կերակրվել ծնվելուց հետո առաջին մեկ օրվա ընթացքում: Միջին մասնագիտական կրթություն ունեցող մայրերի և բարեկեցության ամենաբարձր քվինտիլում գտնվող տնային տնտեսությունների երեխաներն ավելի հակված են կրծքով կերակրվելը սկսել ծնվելուց հետո առաջին մեկ օրվա ընթացքում՝ համեմատած կրթական այլ մակարդակ ունեցող մայրերի և բարեկեցության մյուս քվինտիլներում գտնվող տնային տնտեսությունների երեխաների հետ:

Մինչև 2 տարեկան և երբևէ կրծքով կերակրված վերջին ծնված երեխաների 11 տոկոսը ստացել է նախալակտացիոն սնունդ (կյանքի առաջին երեք օրերի ընթացքում նրանք ստացել են որևէ այլ սնունդ, սակայն ոչ կրծքի կաթ): Քաղաքաբնակ երեխաներն ավելի հաճախ են նախալակտացիոն սնունդ ստացել, քան գյուղաբնակ երեխաները (համապատասխանաբար 13 և 8 տոկոս): Ըստ մարզերի՝ նախալակտացիոն սնունդի ստացման տարբերություններն ակնառու են, սակայն դրանք հնարավոր չէ դիտարկել դեպքերի փոքր թվաքանակի պատճառով: Մոր կրթական մակարդակի կամ տնային տնտեսության բարեկեցության մակարդակի և նախալակտացիոն սնունդի ստացման ցուցանիշի միջև կապն ակներև չէ:

ՀՄԱՀ 2000-ի, 2005-ի և 2010-ի տվյալների հետ համեմատությունները ցույց են տալիս, որ վերջին 15 տարիների ընթացքում այն երեխաների տոկոսը, ովքեր կրծքով կերակրվել են ծնվելուց հետո առաջին մեկ ժամվա ընթացքում, էապես աճել է (25 տոկոս 2000-ին, 32 տոկոս 2005-ին, 36 տոկոս 2010-ին և 41 տոկոս 2015-16-ին, ընդ որում՝ ամենակտրուկ աճը նկատվում է ՀՄԱՀ 2000-ի և ՀՄԱՀ 2005-ի միջև ընկած ժամանակահատվածում)<sup>6</sup>: Այն երեխաների տոկոսը, ովքեր կրծքով կերակրվել են ծնվելուց հետո առաջին մեկ օրվա ընթացքում, ևս արագ աճ է գրանցել (70 տոկոս 2000-ին, 78 տոկոս 2005-ին, 84 տոկոս 2010-ին և 86 տոկոս 2015-16-ին) (ICF, 2015b):

## 12.2.2 Կրծքով կերակրման կարգավիճակն ըստ տարիքի

Կրծքի կաթը սննդային նյութերի լավագույն աղբյուրն է նորածինների համար: Բացառապես կրծքով կերակրումը խորհուրդ է տրվում երեխայի կյանքի առաջին վեց ամիսների ընթացքում, քանի որ այն սահմանափակում է հիվանդածին մանրէների հնարավոր ազդեցությունը և ապահովում է նորածնին անհրաժեշտ բոլոր սննդարար նյութերը: Երեխայի աճին զուգահեռ միայն կրծքի կաթն այլևս չի ապահովում անհրաժեշտ սնուցումը, այդ իսկ պատճառով երեխայի սննդակարգին անհրաժեշտ է ավելացնել այլ սննդատեսակներ և հեղուկներ:

ՀՄԱՀ 2015-16-ի շրջանակում տեղեկատվություն է հավաքագրվել նորածինների և վաղ տարիքի երեխաների կերակրման վերաբերյալ իրենց մայրերի հետ բնակվող, վերջին ծնված մինչև 2 տարեկան երեխաների համար՝ օգտագործելով վերհիշելու 24-ժամյա մեթոդը: Աղյուսակ 12.3-ը ցույց է տալիս մոր հետ բնակվող մինչև 2 տարեկան կրտսեր երեխաների տոկոսային բաշխումն ըստ կրծքով կերակրման կարգավիճակի, և մինչև երկու տարեկան երեխաների տոկոսը, ովքեր օգտագործում են ծծակով շիշ՝ ըստ ամիսներով արտահայտված երեխայի տարիքի<sup>7</sup>: Գծապատկեր

<sup>6</sup> Գնահատելու համար կրծքով կերակրումը վաղ նախաձեռնելու միտումները՝ ՀՄԱՀ 2000-ի և ՀՄԱՀ 2005-ի ցուցանիշները վերահաշվարկվել են հետազոտություններին նախորդող երկու տարիների ընթացքում վերջին ծնված բոլոր երեխաների համար:

<sup>7</sup> ՀՄԱՀ 2015-16-ի տվյալները ՀՄԱՀ 2000-ի և ՀՄԱՀ 2005-ի հետ համեմատելիս անհրաժեշտ է նշել, որ 2015-16-ին կրծքով կերակրման կարգավիճակն ըստ տարիքի աղյուսակը հիմնված է մոր հետ բնակվող մինչև 2 տարեկան

12.3-ը ներկայացնում է Հայաստանում կրծքով կերակրման գործելակերպն ըստ տարիքի: Աղյուսակ 12.3-ում և Գծապատկեր 12.3-ում ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում մինչև 6 ամսական երեխաների 85 տոկոսը կերակրվում է կրծքով: Կրծքով կերակրման տևողությունը, սակայն, երկար չէ: Այսպես՝ 12-17 ամսականում երեխաների 69 տոկոսն այլևս կրծքով չի կերակրվում, իսկ 18-23 ամսականում երեխաների 74 տոկոսին այլևս կրծքի կաթ չի տրվում:

**Աղյուսակ 12.3 Կրծքով կերակրման կարգավիճակն ըստ տարիքի**

Մոր հետ բնակվող մինչև 2 տարեկան կրտսեր երեխաների տոկոսային բաշխումն ըստ կրծքով կերակրման կարգավիճակի, և ներկայում կրծքով կերակրվողների տոկոսը, ինչպես նաև մինչև 2 տարեկան երեխաների տոկոսը, ովքեր օգտագործում են ծծակով շիշ, ըստ ամիսներով արտահայտված տարիքի, Հայաստան, 2015-16 թթ.

Տարիքն ամիսներով	Չի կերակրվում կրծքով	Կրծքով կերակրման կարգավիճակ							Մոր հետ բնակվող մինչև 2 տարեկան կրտսեր երեխաների տոկոսը, որ կերակրվում է կրծքով	Մինչև 2 տարեկան երեխաների տոկոսը, որ օգտագործում է ծծակով շիշ	Մինչև 2 տարեկան երեխաների տոկոսը
		Բացառապես կերակրվում է կրծքով	Կերակրվում է միայն սովորական ջուր	Կերակրվում է կրծքով և սովորական ջուր	Կերակրվում է կրծքով և կաթնային հեղուկներ <sup>1</sup>	Կերակրվում է կրծքով և սովորական ջուր	Կերակրվում է կրծքով և սովորական ջուր	Կերակրվում է կրծքով և սովորական ջուր			
0-1	(6.9)	(79.7)	(4.7)	(2.9)	(1.0)	(4.8)	(100.0)	(93.1)	41	(8.6)	42
2-3	11.4	57.2	9.8	0.4	8.0	13.1	100.0	88.6	57	24.9	60
4-5	22.3	14.8	20.6	2.8	4.0	35.5	100.0	77.7	73	53.6	75
6-8	29.1	6.7	1.3	0.0	0.0	62.9	100.0	70.9	86	53.5	87
9-11	29.1	0.7	0.0	0.7	0.0	69.5	100.0	70.9	91	66.6	94
12-17	69.2	0.4	0.0	0.0	0.0	30.4	100.0	30.8	165	56.3	170
18-23	73.6	0.0	0.0	0.0	0.0	26.4	100.0	26.4	148	50.1	169
0-3	9.5	66.6	7.7	1.5	5.1	9.6	100.0	90.5	99	18.2	101
0-5	15.0	44.5	13.2	2.0	4.6	20.7	100.0	85.0	172	33.3	177
6-9	28.0	5.1	0.9	0.0	0.0	66.0	100.0	72.0	124	56.1	126
12-15	64.0	0.6	0.0	0.0	0.0	35.4	100.0	36.0	109	56.9	113
12-23	71.3	0.2	0.0	0.0	0.0	28.5	100.0	28.7	313	53.2	338
20-23	78.4	0.0	0.0	0.0	0.0	21.6	100.0	21.6	82	44.7	97

Նշում: Կրծքով կերակրման կարգավիճակը վերաբերում է «24-ժամյա» ժամանակահատվածին (երեկ և անցյալ գիշեր): Երեխաները, ովքեր դասակարգվել են «կերակրվում է կրծքով և տրվում է միայն սովորական ջուր» կատեգորիայում, համարվել է, որ չեն ստացել ոչ մի այլ հավելյալ հեղուկ կամ կոշտ սնունդ: Չի կերակրվում կրծքով, բացառապես կերակրվում է կրծքով, կերակրվում է կրծքով և տրվում է սովորական ջուր, ոչ կաթնային հեղուկ, այլ կաթ, հավելյալ սնունդ (կոշտ և կիսակոշտ) կատեգորիաները հիերարխիկ են, միմյանց բացառող, և նրանց հանրագումարը կազմում է 100 տոկոս: Այն երեխաները, ովքեր ստացել են կրծքի կաթ և ոչ կաթնային հեղուկ, բայց չեն ստացել այլ կաթ կամ հավելյալ սնունդ, դասակարգվել են ոչ կաթնային հեղուկ կատեգորիայում, չնայած հնարավոր է, որ նրանք ստացած լինեն նաև սովորական ջուր: Որևէ հավելյալ սնունդ ստացած երեխաները, քանի դեռ նաև կերակրվում են կրծքով, ընդգրկվել են համապատասխան կատեգորիայում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

<sup>1</sup> Ոչ կաթնային հեղուկները ներառում են հյութ, արգանակ/մսաջուր կամ այլ հեղուկ:

Ի հակադրություն խորհուրդ տրվող գործելակերպի՝ կրծքի կաթի հետ միասին հավելյալ հեղուկների և սննդի օգտագործումը սկսվում է շատ վաղ տարիքում, և մինչև 6 ամսական երեխաների գրեթե կեսն է (45 տոկոս) բացառապես կերակրվում կրծքով: Ի հավելումն կրծքի կաթի՝ մինչև 6 ամսական երեխաների 13 տոկոսին տրվել է սովորական ջուր, 5 տոկոսին՝ այլ կաթ, 2 տոկոսին՝ ոչ կաթնային հեղուկներ, իսկ 21 տոկոսին՝ հավելյալ սնունդ: Հայաստանում երեխաներին կերակրելու նպատակով ծծակով շիշերի օգտագործումը բավական տարածված է: 2-3 ամսական երեխաների 25 տոկոսին կերակրում են ծծակով շիշ: Այս ցուցանիշն աճում է երեխայի տարիքին զուգընթաց, և 9-11 ամսական երեխաների շրջանում այն հասնում է առավելագույնի՝ 67 տոկոս, որից հետո կրկին նվազում է: Վաղ տարիքի երեխաների շրջանում (2-3 ամսական) ծծակով շիշ օգտագործման ցուցանիշը ՀԺԱՀ 2010-ի համեմատությամբ նվազել է 12 տոկոսով՝ 2010-ին գրանցված 37 տոկոսից մինչև 2015-16-ին գրանցված 25 տոկոսը, իսկ 9-11 ամսական երեխաների շրջանում նվազել է 9 տոկոսով՝ 2010-ին գրանցված 76 տոկոսից մինչև 2015-16-ին գրանցված 67 տոկոսը:


2010-ից ի վեր՝ մինչև 6 ամսական երեխաների շրջանում հետազոտության պահին կրծքով կերակրվող երեխաների մասնաբաժինը մի փոքր նվազել է՝ 2010-ին գրանցված 89 տոկոսից մինչև

կրտսեր երեխաների վրա, մինչդեռ ՀԺԱՀ 2005-ին այն հիմնված է եղել մոր հետ բնակվող մինչև 3 տարեկան կրտսեր երեխաների վրա, իսկ ՀԺԱՀ 2000-ին՝ մինչև 3 տարեկան բոլոր երեխաների վրա:

2015-16-ին գրանցված 85 տոկոսը: Բացառապես կրծքով կերակրումն այնպես, ինչպես խորհուրդ է տրվում ՀՀ ԱՆ-ի կողմից, այս տարիքային խմբում բարելավվել է (2015-16-ին 45 տոկոս՝ 2010-ի 35 տոկոսի համեմատ): Մինչև 6 ամսական երեխաների մասնաբաժինը, ովքեր կրծքի կաթին զուգահեռ ստացել են հավելյալ սնունդ, 2010-ին գրանցված 17 տոկոսից աճել է մինչև 21 տոկոս 2015-16-ին:


Վաղ տարիքում երեխաներին կրծքի կաթով այլևս չկերակրելու մակարդակը չի փոփոխվել: 6-8 ամսական երեխաների 29 տոկոսին այլևս չի տրվում կրծքի կաթ, այսինքն՝ պահպանվել է 2010-ին գրանցված ցուցանիշը: 2015-16-ին 6-8 ամսական երեխաների 63 տոկոսին տրվել է և՛ կրծքի կաթ, և՛ հավելյալ սնունդ, որը նշանակում է ցուցանիշի 15 տոկոսով աճ՝ 2010-ի համեմատությամբ (48 տոկոս):

**Գծապատկեր 12.3 Նորածինների կերակրման գործելակերպերն ըստ տարիքի**



Գծապատկեր 12.4-ը ցույց է տալիս նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման գործելակերպի (ՆՎՏԵՄԳ) վերաբերյալ ՀԺԱՀ 2015-16-ի արդյունքները: Ինչպես արդեն նշվել է, մինչև 6 ամսական երեխաների 45 տոկոսը բացառապես կրծքով է կերակրվել, իսկ 6-8 ամսական երեխաների 90 տոկոսը ստացել է հավելյալ սնունդ: 10 երեխաներից գրեթե 3-ը (36 տոկոս) 1 տարեկանում դեռևս շարունակում են կերակրվել կրծքով, իսկ 10-ից 2-ը (22 տոկոս) շարունակում են կերակրվել կրծքի կաթով 2 տարեկանում: Հայաստանում 0-23 ամսական երեխաների 43 տոկոսը ստանում է տարիքին համապատասխան սնուցում: Սա ներառում է հետևյալը. մինչև 6 ամսական երեխաների դեպքում բացառապես կրծքի կաթով կերակրումը, իսկ 6-23 ամսական երեխաների համար՝ կրծքի կաթով կերակրումը և հավելյալ սննդի ներմուծումը: Մինչև 6 ամսական երեխաների 60 տոկոսը կերակրվում է գերազանցապես կրծքի կաթով: Այս տոկոսը ներառում է այն երեխաներին, ովքեր բացառապես կերակրվում են կրծքով, և այն երեխաներին, ում տրվում է կրծքի կաթ և սովորական ջուր կամ ոչ կաթնային հեղուկներ, օրինակ՝ հյութ: Մինչև 2 տարեկան երեխաների 50 տոկոսը կերակրվում է ծծակով շից:

**Գծապատկեր 12.4 ՆՎՏԵՍԳ ցուցանիշները կրծքով կերակրման կարգավիճակի վերաբերյալ**



**12.2.3 Կրծքով կերակրման տևողություն**

Աղյուսակ 12.4-ը ցույց է տալիս կրծքով կերակրման մեղիան տևողությունն ըստ սեռի և բնակավայրի: Կրծքով կերակրման մեղիան և միջին տևողությունների հաշվարկները հիմնված են ընթացիկ կարգավիճակի տվյալների վրա, այսինքն՝ հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում ծնված երեխաների մասնաբաժնի, ովքեր հետազոտության պահին կերակրվում էին կրծքով:

Հայաստանում երբևէ կրծքով կերակրման մեղիան տևողությունը 11.9 ամիս է: Սակայն բացառապես կրծքով կերակրման և գերազանցապես կրծքով կերակրման (կրծքով կերակրում և սովորական ջուր, ջրային հիմքով հեղուկներ կամ հյութեր) մեղիան տևողություններն ավելի կարճ են (համապատասխանաբար 2.2 և 3.4 ամիս): Երբևէ, բացառապես և գերազանցապես կրծքով կերակրման միջին տևողություններն ավելի երկար են (համապատասխանաբար 13.2, 3.6 և 4.4 ամիս): Այս ցուցանիշները վկայում են, որ կանայք դեռևս ամբողջովին չեն հետևում ՀՀ ԱՆ-ի կողմից տրվող խորհուրդներին, այն է՝ 6 ամիս կերակրել երեխային բացառապես կրծքի կաթով: Այնուամենայնիվ, երբևէ կրծքով կերակրման մեղիան տևողությունն աճել է՝ ՀԺԱՀ 2005-ին գրանցված 10.5 ամիս ցուցանիշից մինչև ՀԺԱՀ 2010-ին գրանցված 10.9 ամիսը, որից հետո ՀԺԱՀ 2015-16-ին աճել է մինչև 11.9 ամիս:

**Աղյուսակ 12.4 Կրծքով կերակրման մեղիան տևողություն**

Երբևէ կրծքով կերակրման, բացառապես կրծքով կերակրման և գերազանցապես կրծքով կերակրման մեղիան տևողությունները հետազոտությանը նախորդող 3 տարիների ընթացքում ծնված երեխաների շրջանում, ըստ սեռի և բնակավայրի, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կրծքով կերակրման մեղիան տևողությունը (ամիս) վերջին երեք տարիների ընթացքում ծնված երեխաների շրջանում <sup>1</sup>		
	Երբևէ կրծքով կերակրում	Բացառապես կրծքով կերակրում	Գերազանցապես կրծքով կերակրում <sup>2</sup>
<b>Սեռ</b>			
Արական	12.4	(2.1)	3.2
Իգական	11.7	*	3.6
<b>Բնակավայր</b>			
Քաղաքային	12.1	(2.0)	3.1
Գյուղական	11.5	2.7	3.8
Ընդամենը	11.9	(2.2)	3.4
Միջինը՝ բոլոր երեխաների համար	13.2	3.6	4.4

Նշում: Մեղիան և միջին տևողությունները հիմնված են հետազոտության պահին ծնունդների մասնաբաժինների բաշխվածության վրա՝ ըստ ծննդից հետո ամիսների թվի: Ներառում է հետազոտության պահին և՛ կենդանի, և՛ մահացած երեխաներին: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

<sup>1</sup> Ենթադրվում է, որ ոչ վերջինը ծնված և վերջինը ծնված, սակայն ներկայում մոր հետ չբնակվող երեխաները ներկայում չեն կերակրվում կրծքով:

<sup>2</sup> Կա՛մ կերակրվում է բացառապես կրծքով, կա՛մ ստանում է կրծքի կաթի հետ համատեղ միայն սովորական ջուր և/կամ ոչ կաթնային հեղուկներ:

#### 12.2.4 Հավելյալ սննդի տեսակներ

Ինչպես արդեն նշվել է, խորհուրդ է տրվում 6 ամսականից հետո երեխային տալ նաև հավելյալ սնունդ (կրծքի կաթին զուգահեռ տալ կիսակոշտ կամ կոշտ սնունդ), քանի որ այդ ժամանակ միայն կրծքի կաթն այլևս բավարար չէ երեխայի նորմալ աճի և զարգացման համար (WHO, 2008): ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում կանայք, ովքեր ունեն 2013 թ. կամ ավելի ուշ ծնված, իրենց հետ բնակվող առնվազն մեկ երեխա, հարցվել են այն հեղուկների և սննդատեսակների մասին (մանկական հավելյալ սնունդ, միս, ձու և այլն), որ հարցազրույցին նախորդող գիշերվա ընթացքում և ցերեկը տրվել է նրանց կրտսեր երեխային: Այս պատասխանների վրա հիմնված տվյալները մի շարք սահմանափակումների են ենթարկվում: Նախ՝ մայրը կարող է չհիշել բոլոր հեղուկները և սննդատեսակները, որ տրվել են երեխային: Բացի այդ, մայրը հնարավոր է՝ ամբողջությամբ չկարողանա նշել երեխային տրված բոլոր հեղուկները և սննդատեսակները, եթե երեխային մեկ այլ անձ է կերակրել: Ի հեճուկս այս սահմանափակումներին՝ վաղ տարիքի երեխաների կողմից սպառված հեղուկների և սննդատեսակների մասին տեղեկատվությունը օգտակար է՝ գնահատելու համար ժամանակին և համապատասխան հավելյալ սնուցումը:

Աղյուսակ 12.5-ը ցույց է տալիս այն հեղուկները և սննդատեսակները, որոնք տրվել են մոր հետ բնակվող մինչև երկու տարեկան կրտսեր երեխային հարցազրույցին նախորդող գիշերվա ընթացքում և ցերեկը՝ ըստ երեխայի տարիքի և կրծքով կերակրման կարգավիճակի<sup>8</sup>:

Արդյունքները ցույց են տալիս, որ կրծքով կերակրվող շատ երեխաների դեպքում, բացի կրծքի կաթից, այլ սննդատեսակների և հեղուկների սպառումը սկսվում է խորհուրդ տրվող 6 ամսականից շատ ավելի վաղ: Օրինակ՝ հետազոտությանը նախորդող օրվա ընթացքում կրծքով կերակրվող 2-3 ամսական երեխաների 15 տոկոսին տրվել է կոշտ կամ կիսակոշտ սնունդ, 10 տոկոսին՝ այլ կենդանու կաթ, 6 տոկոսին՝ մանկական հավելյալ սնունդ, իսկ երեխաների 5-ական տոկոսին՝ կրծքի կաթի հետ համատեղ այլ հեղուկներ (ոչ սովորական ջուր), հացահատիկներից և արմատներից կամ պալարներից (կարտոֆիլ) պատրաստված սնունդ:

---

<sup>8</sup> ՀԺԱՀ 2015-16-ի ընդհանուր տվյալները ՀԺԱՀ 2000-ի և ՀԺԱՀ 2005-ի հետ համեմատելիս անհրաժեշտ է նշել, որ 2015-16-ին հետազոտությանը նախորդող գիշերվա ընթացքում և ցերեկը երեխաների կողմից սպառված հեղուկների և սննդատեսակների վերաբերյալ աղյուսակը հիմնված է մոր հետ բնակվող մինչև 2 տարեկան կրտսեր երեխաների վրա, մինչդեռ ՀԺԱՀ 2005-ին այն հիմնված է եղել մոր հետ բնակվող մինչև 3 տարեկան կրտսեր երեխաների վրա (ՀԺԱՀ 2005-ի զեկույց), իսկ ՀԺԱՀ 2000-ին՝ մինչև 3 տարեկան բոլոր երեխաների վրա (ՀԺԱՀ 2000-ի զեկույց): Բացի այդ՝ ՀԺԱՀ 2015-16-ին և ՀԺԱՀ 2010-ին հարցերի ձևակերպումները տարբերվում են ՀԺԱՀ 2005-ի և ՀԺԱՀ 2000-ի ձևակերպումներից, և բուսայուղով, ճարպով կամ կարագով պատրաստված սննդատեսակների վերաբերյալ հարցերը ներառված չեն եղել:



**Աղյուսակ 12.5 Հարցմանը նախորդող գիշերվա ընթացքում կամ ցերեկը երեխաների սպառած հեղուկներ և սննդատեսակներ**

Մոր հետ բնակվող մինչև 2 տարեկան երեխաների տոկոսն ըստ հարցազրույցին նախորդող գիշերվա ընթացքում և ցերեկը սպառված սննդատեսակների, ըստ կրծքով կերակրման կարգավիճակի և տարիքի, Հայաստան, 2015-16 թթ.

Տարիքն ամիսներով	Հեղուկ			Կոշտ կամ կիսակոշտ սնունդ										
	Գաթնա-խառնուրդ	Այլ կաթ <sup>1</sup>	Այլ հեղուկ <sup>2</sup>	Մանկական սնունդ	Հացահատիկներից պատրաստված սնունդ <sup>3</sup>	Վիտամին A-ով հարուստ քանջարեղեն <sup>4</sup>	Այլ մրգեր	Արմատներից և պալարներից պատրաստված սնունդ	Ընդդեմից կամ դենից պատրաստված սնունդ	Միս, թռչնամիս	Պանիր, կամ այլ կաթ-նախթերք	Որևեղև կոշտ կամ կիսակոշտ սնունդ	Մինչև 2 տարեկան երեխաների թվաքանակ	
<b>ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԵՐԵՄԱՆԵՐ</b>														
0-1	(2.1)	(1.1)	(3.1)	(5.2)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(5.2)	38
2-3	1.5	10.1	5.4	6.4	4.9	2.5	0.0	4.9	0.0	0.0	0.0	5.9	14.8	51
4-5	2.3	12.2	13.1	21.0	18.2	9.8	13.9	11.6	2.0	2.6	1.1	14.4	45.7	57
6-8	6.8	10.9	44.0	11.3	65.3	36.6	55.0	46.7	0.0	10.1	4.6	39.3	88.7	61
9-11	0.7	22.2	61.0	16.5	78.4	40.3	56.9	75.6	0.0	38.2	15.6	52.6	98.0	65
12-17	5.0	18.0	75.2	3.8	92.1	56.2	79.7	84.9	4.3	44.7	25.4	67.6	98.8	51
18-23	(10.7)	(26.9)	(62.8)	(13.4)	(92.8)	(46.5)	(65.0)	(82.4)	(6.1)	(57.3)	(24.6)	(77.0)	(100.0)	39
0-5	2.0	8.5	7.8	11.8	8.8	4.7	5.4	6.2	0.8	1.0	0.4	7.7	24.3	146
6-11	3.7	16.7	52.8	14.0	72.0	38.5	56.0	61.6	0.0	24.6	10.3	46.2	93.5	125
6-23	5.3	18.8	59.9	11.5	80.5	44.1	63.2	70.8	2.1	35.3	16.4	56.8	95.9	215
Ընդամենը	3.9	14.7	38.8	11.6	51.5	28.2	39.8	44.7	1.6	21.4	10.0	36.9	66.9	362
<b>ԿՐԾՔՈՎ ՉԿԵՐԱԿՐՄԱՆ ԵՐԵՄԱՆԵՐ</b>														
0-1	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	3
2-3	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	7
4-5	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	16
6-8	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	25
9-11	(0.0)	(57.1)	(71.1)	(13.4)	(94.4)	(43.0)	(67.5)	(80.9)	(0.0)	(37.7)	(8.6)	(71.8)	(100.0)	26
12-17	1.4	44.8	74.0	5.7	96.3	49.2	72.2	83.1	5.5	58.4	23.3	66.1	100.0	114
18-23	6.7	43.7	77.2	4.0	96.5	50.8	84.2	82.9	10.5	62.5	30.0	74.8	99.2	109
0-5	(11.5)	(58.9)	(17.2)	(25.9)	(18.8)	(3.8)	(29.8)	(18.8)	(0.0)	(5.1)	(3.3)	(36.0)	(59.8)	26
6-11	(8.2)	(56.8)	(58.0)	(20.7)	(77.1)	(36.1)	(51.5)	(66.5)	(2.6)	(27.4)	(14.1)	(59.0)	(96.4)	51
6-23	4.8	46.6	72.3	7.8	92.8	47.4	73.1	79.9	7.0	54.2	24.2	68.2	99.0	274
Ընդամենը	5.3	47.7	67.5	9.4	86.4	43.6	69.3	74.7	6.4	50.0	22.4	65.5	95.6	300

Նշում: Կրծքով կերակրման կարգավիճակը և սպառված սնունդը վերաբերում են «24-ժամյա» ժամանակահատվածին (երեկ և անցյալ գիշեր): Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

<sup>1</sup> Այլ կաթ կատեգորիան ներառում է թարմ, գործարանային արտադրության, փոշի և կովի կամ այլ կենդանու կաթ:

<sup>2</sup> Չի ներառում սովորական ջուր: Ներառում է հյութ, արգանակ/մսաջուր կամ այլ ոչ կաթնային հեղուկներ:

<sup>3</sup> Ներառում է մանկական հավելյալ սնունդը:

<sup>4</sup> Ներառում է այնպիսի մրգեր և բանջարեղեն, ինչպիսիք են կարմիր քաղցր պղպեղը, դդումը, գազարը, մուգ կանաչ տերևախիտ բանջարեղենը, հասած ծիրանը կամ ծիրանի չիրը, դեղձի, սեխի չիրը և վիտամին A-ով հարուստ այլ մրգեր և բանջարեղեն:

Երբ երեխաները դառնում են 6 ամսական, նրանց պետք է տրվի փոքր քանակությամբ կոշտ և կիսակոշտ սնունդ՝ կրծքի կաթի հետ համատեղ: Աղյուսակ 12.5-ում ամփոփված արդյունքները ցույց են տալիս, որ 6 ամսական և ավելի մեծ երեխաների փոքր մասնաբաժնի դեպքում այս ուղեցույցները չեն պահպանվել: Օրինակ՝ կրծքով կերակրվող 6-8 ամսական երեխաների 89 տոկոսին հետազոտությանը նախորդող օրվա ընթացքում տրվել է որևէ կոշտ կամ կիսակոշտ սնունդ: Կրծքով կերակրվող 9-11 ամսական գրեթե բոլոր երեխաներին (98 տոկոս) հետազոտությանը նախորդող օրվա ընթացքում տրվել է որևէ կոշտ կամ կիսակոշտ սնունդ:

Աղյուսակ 12.5-ը ցույց է տալիս, որ, ինչպես և սպասվում էր, հացահատիկներից պատրաստված սննդատեսակները վաղ տարիքի երեխաների սննդակարգի հիմնական մասն են կազմում: Կրծքով կերակրվող 6-23 ամսական երեխաների գրեթե չորս հինգերորդը (81 տոկոս) սպառել է հացահատիկներից պատրաստված սննդատեսակ (ներառյալ՝ մանկական հավելյալ սնունդ), 71 տոկոսը՝ արմատներից կամ պալարներից (կարտոֆիլ) պատրաստված սննդատեսակ, 57 տոկոսը՝ պանիր, յոգուրտ կամ այլ կաթնամթերք, 35 տոկոսը՝ միս, ձուկ կամ թռչնամիս, իսկ 16 տոկոսը՝ ձու: Ի լրումն կրծքի կաթին՝ այս երեխաների 5 տոկոսին նաև տրվել է կաթնախառնուրդ, իսկ 19 տոկոսին՝ այլ կաթ: Կրծքով կերակրվող երեխաների 44 տոկոսը սպառել է վիտամին A-ով



հարուստ մրգեր ու բանջարեղեն, իսկ 63 տոկոսը՝ այլ մրգեր ու բանջարեղեն: Ընդհանուր առմամբ, Հայաստանում կրծքով կերակրվող 6-23 ամսական երեխաների 96 տոկոսին տրվել է կոշտ կամ կիսակոշտ սնունդ:

Հավելյալ սննդի սպառումը սովորաբար ավելի բարձր է կրծքով չկերակրվող երեխաների շրջանում, քան կրծքով կերակրվողների: Կրծքով չկերակրվող 6-23 ամսական գրեթե բոլոր երեխաները (99 տոկոս) ստացել են կոշտ կամ կիսակոշտ սնունդ: Կրծքով չկերակրվող 6-23 ամսական երեխաների 93 տոկոսը սպառել է հացահատիկներից պատրաստված սննդատեսակ, 80 տոկոսը՝ արմատներից կամ պալարներից (կարտոֆիլ) պատրաստված սննդատեսակ, 68 տոկոսը՝ պանիր, յոգուրտ կամ այլ կաթնամթերք: Կրծքով չկերակրվող 6 ամսականից մեծ երեխաների գրեթե կեսը (47 տոկոս) սպառել է վիտամին A-ով հարուստ մրգեր ու բանջարեղեն, իսկ 73 տոկոսը՝ այլ մրգեր ու բանջարեղեն: Մսի, ձկան և թռչնամսի (54 տոկոս) և ձվի (24 տոկոս) սպառումն ավելի բարձր է կրծքով չկերակրվող երեխաների շրջանում՝ կրծքով կերակրվողների համեմատությամբ:

### 12.3 ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՂ ՍԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄՆՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐ

Նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման գործելակերպը ենթադրում է ժամանակին՝ 6 ամսականից հետո, հաճախակի կրծքով կերակրմանը զուգահեռ, կոշտ և կիսակոշտ սննդի տրամադրում երեխային, որից հետո՝ երեխայի աճին զուգընթաց, տրվող սննդի քանակի, բազմազանության, ինչպես նաև հաճախականության ավելացում: Նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման գործելակերպի վերաբերյալ ուղեցույցները մշակվել են 6-23 ամսական երեխաների համար (PAHO/WHO, 2003, WHO, 2005, WHO, 2008): Չնայած կրծքով կերակրումը խորհուրդ է տրվում մինչև 2 տարեկանը՝ ուղեցույցները ներառում են ինչպես կրծքով չկերակրվող, այնպես էլ կրծքով կերակրվող երեխաների սնուցման գործելակերպի գնահատման ստանդարտներ, քանի որ տարբեր պատճառներով պայմանավորված կրծքով կերակրումը կարող է դադարեցված լինել մինչև երեխայի 2 տարեկան դառնալը (WHO, 2005): Այս ուղեցույցները ներառում են և՛ սննդակարգի բազմազանության, և՛ կերակրման հաճախականության վերաբերյալ խորհուրդներ:

Կապված սննդակարգի բազմազանության հետ՝ հետազոտությունները ցույց են տվել, որ բուսական հիմքով հավելյալ սնունդը բավարար չէ երեխաների մոտ որոշակի սննդաբար նյութերի կարիքը լրացնելու համար (WHO and UNICEF, 1998): Հետևաբար, խորհուրդ է տրվում երեխաներին ամեն օր կամ որքան հնարավոր է հաճախ տալ միս, թռչնամիս, ձուկ և ձու: Կարևոր է նաև ուշադրություն դարձնել, թե ինչ մրգեր և բանջարեղեն է երեխան սպառում, քանի որ հավելանյութերի կամ հարստացված սննդի բացակայության պարագայում բուսական սննդակարգը հնարավոր է՝ չլրացնի երեխաների մոտ անհրաժեշտ սննդաբար նյութերի պահանջը: Մասնավորապես՝ երեխաներին ամեն օր պետք է տրվեն վիտամին A-ով հարուստ մրգեր և բանջարեղեն: Երեխաների սննդակարգում պետք է նաև ներառել համապատասխան քանակով ճարպ, քանի որ այն ապահովում է կարևոր ճարպային թթուներ, հեշտացնում է ճարպալույծ վիտամինների յուրացումը (ինչպիսին է վիտամին A-ն) և բարձրացնում է սննդի խտությունն ու համային որակները: Հաշվի առնելով այս գործոնները՝ նվազագույն ընդունելի սննդակարգի վերաբերյալ նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման գործելակերպի ուղեցույցները խորհուրդ են տալիս կերակրել երեխային հետևյալ յոթ խմբերից առնվազն չորսում ներառված սննդատեսակներով՝ հացահատիկներ, արմատներ և պալարներ, ընդդեմ և ընկուզեղեն, կաթնամթերք (կաթ, յոգուրտ, պանիր), մսամթերք (միս, ձուկ, թռչնամիս և լյարդ/ներքին օրգանների մսամթերք), Ձու, վիտամին A-ով հարուստ մրգեր և բանջարեղեն, այլ մրգեր և բանջարեղեն: Այս խմբերից առնվազն չորսում ներառված սննդի սպառումը նշանակում է, որ մեծ է հավանականությունը, որ երեխան, ի լրումն հիմնականում սպառվող սննդատեսակների (հացահատիկներ, արմատներ և պալարներ), կսպառի առնվազն մեկ կենդանական ծագման սննդատեսակ և առնվազն մեկ միրգ կամ բանջարեղեն (WHO, 2008):

Ի լրումն սննդակարգի բազմազանության՝ կերակրման հաճախականությունը ևս կարևոր է երեխաների մոտ սննդանյութերի և կալորիաների պահանջը լրացնելու համար: Կերակրման

նվազագույն հաճախականությունները հիմնված են հավելյալ սննդից ունեցած էներգիայի պահանջի վրա, որը գնահատվում է ըստ օրական կտրվածքով էներգիայի տարիքային պահանջի: Ուղեցույցները կրծքով կերակրվող և կրծքով չկերակրվող երեխաների համար տարբեր են: Քանի որ սննդի հաճախականությունը համարվում է կրծքի կաթից բացի այլ սննդատեսակներից էներգիայի ստացման գործոն, կրծքով չկերակրվող երեխաների կերակրման հաճախականության ցուցանիշը ներառում է ն՝ տրվող կաթնամթերքը, և՛ տրվող կոշտ/կիսակոշտ սնունդը (WHO, 2008):

Կերակրման խորհուրդ տրվող քանակները հետևյալն են.

- 6-8 ամսական կրծքով կերակրվող երեխաներին օրական երկու կամ երեք անգամ պետք է տրվի հավելյալ սնունդ, և մեկ կամ երկու անգամ էլ պետք է տրվեն նախուտեստներ, իսկ 9-23 ամսական կրծքով կերակրվող երեխաները պետք է կերակրվեն օրական երեք կամ չորս անգամ, և մեկ կամ երկու անգամ էլ պետք է տրվեն նախուտեստներ:
- 6-23 ամսական կրծքով չկերակրվող երեխաներին օրական առնվազն երկու անգամ պետք է տրվի կաթնամթերք՝ կալցիումի պահանջը լրացնելու համար: Այս երեխաները պետք է կերակրվեն օրական չորսից հինգ անգամ, և մեկ կամ երկու անգամ էլ պետք է տրվեն նախուտեստներ (WHO, 2005):

Աղյուսակ 12.6-ը ներկայացնում է ՀԺԱՀ 2015-16-ի արդյունքները՝ կապված մոր հետ բնակվող, կրծքով կերակրվող և կրծքով չկերակրվող երեխաների շրջանում նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման գործելակերպերի հետ: Խորհուրդները ներառում են այն երեխաների վրա, ում համար կերակրման գործելակերպը համապատասխանում է նվազագույն ստանդարտներին՝ ըստ հետևյալ ասպեկտների.

- սննդատեսակների բազմազանություն (սպառված սննդային խմբերի քանակ),
- կերակրման հաճախականություն (քանի անգամ է երեխան կերակրվում),
- կրծքի կաթի, այլ կաթի կամ կաթնամթերքի սպառում:

**Աղյուսակ 12.6 Նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման գործելակերպեր**

Մոր հետ բնակվող 6-23 ամսական կրտսեր երեխաների տոկոսը, ովքեր կերակրվում են համաձայն նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման երեք գործելակերպերի՝ հիմնված կրծքով կերակրման կարգավիճակի, սննդային խմբերի քանակի և հետազոտությանը նախորդող զիջերվա ընթացքում կամ ցերեկը կերակրման հաճախականության վրա, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

	6-23 ամսական կրծքով կերակրվող երեխաների տոկոսը, ովքեր կերակրվում են				6-23 ամսական կրծքով չկերակրվող երեխաների տոկոսը, ովքեր կերակրվում են				6-23 ամսական բոլոր երեխաների տոկոսը, ովքեր կերակրվում են					
	4+ սննդային խումբ <sup>1</sup>	Մենդի տրման նվազագույն հաճախականություն <sup>2</sup>	Մենդի տրման նվազագույն հաճախականություն <sup>2</sup>	6-23 ամս. կրծքով վող երեխաների թվաքանակ	Կաթ կամ կաթնամթերք <sup>3</sup>	4+ սննդային խումբ <sup>1</sup>	Մենդի տրման նվազագույն հաճախականություն <sup>2</sup>	Շատ նորածինների վաղ տարիքի երեխաների սնուցման 3 գործելակերպերի <sup>5</sup>	6-23 ամսական կրծքով չկերակրվող երեխաների թվաքանակ	Կրծքի կաթ կամ կաթնամթերք <sup>6</sup>	4+ սննդային խումբ <sup>1</sup>	Մենդի տրման նվազագույն հաճախականություն <sup>2</sup>	Շատ նորածինների վաղ տարիքի երեխաների սնուցման 3 գործելակերպերի	6-23 ամսական բոլոր երեխաների թվաքանակ
<b>Տարիքի ամիսներով</b>														
6-8	20.2	69.7	16.3	61	*	*	*	*	25	91.0	24.7	69.6	13.0	86
9-11	36.0	64.1	26.1	65	(46.4)	(45.4)	(68.2)	(5.6)	26	84.4	38.7	65.3	20.2	91
12-17	47.3	72.7	40.4	51	49.5	62.5	66.9	21.0	114	65.1	57.8	68.7	27.0	165
18-23	(53.1)	(72.2)	(39.6)	39	57.0	67.3	82.6	27.8	109	68.3	63.5	79.9	30.9	148
<b>Մեռ</b>														
Արական	39.7	69.7	33.2	109	57.4	59.0	81.1	21.0	129	76.9	50.2	75.9	26.6	238
Իգական	34.8	68.7	25.0	106	50.9	61.4	66.7	20.6	146	71.6	50.2	67.5	22.5	252
<b>Բնակավայր</b>														
Քաղաքային	37.3	64.2	27.1	125	56.0	64.6	75.7	24.7	156	75.5	52.5	70.6	25.8	280
Գյուղական	37.4	76.1	32.0	91	51.3	54.6	70.5	15.5	118	72.4	47.1	72.9	22.7	209
<b>Մոր կրթությունը</b>														
Հիմնական	*	*	*	13	*	*	*	*	16	(80.0)	(36.8)	(73.5)	(9.4)	29
Միջնակարգ	37.4	68.2	30.9	90	57.4	52.5	77.2	21.6	108	76.7	45.7	73.2	25.8	198
Միջին մասնագիտ.	(29.1)	(72.1)	(22.1)	43	39.0	62.9	63.6	15.0	58	65.2	48.4	67.2	18.0	101
Բարձրագույն	49.2	70.1	36.8	69	57.6	66.7	73.5	24.0	92	75.8	59.2	72.0	29.5	162
<b>Բարեկեցության քվինտիլ</b>														
Ամենացածր	(33.8)	(71.3)	(28.6)	35	47.4	64.0	73.5	15.1	53	68.3	52.0	72.6	20.5	89
Երկրորդ	36.1	75.0	29.4	53	62.7	50.3	75.7	16.8	53	81.3	43.2	75.4	23.1	107
Միջին	42.7	67.3	37.4	44	47.4	57.7	70.2	15.4	49	72.2	50.6	68.8	25.8	93
Չորրորդ	(29.3)	(62.3)	(18.2)	37	44.3	67.4	61.3	21.2	50	68.3	51.0	61.8	19.9	87
Ամենաբարձր	(42.9)	(68.2)	(30.5)	46	63.7	61.8	82.7	31.7	69	78.1	54.3	76.9	31.2	115
Ընդամենը	37.3	69.2	29.2	215	53.9	60.3	73.5	20.8	274	74.2	50.2	71.6	24.5	490

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

<sup>1</sup> Մենդային խմբեր. ա. կաթնախառնուրդ, կաթ (ոչ կրծքի), պանիր, յոգուրտ կամ այլ կաթնամթերք, բ. հացահատիկներից, արմատներից, պալարներից պատրաստված սնունդ՝ ներառյալ շիլա, և հացահատիկներից պատրաստված մանկական հավելյալ սնունդ, գ. վիտամին A-ով հարուստ մրգեր և բանջարեղեն, դ. այլ մրգեր և բանջարեղեն, ե. ձու, գ. միս, թռչնամիս, ձուկ, խեցգետին (և ներքին օրգանների մասամթերք), է. ընդդեմ և ընկուզեղեն:

<sup>2</sup> 6-8 ամսական կրծքով կերակրվող երեխաներին օրական առնվազն երկու անգամ պետք է տրվի կոշտ կամ կիսակոշտ սնունդ, իսկ 9-23 ամսական կրծքով կերակրվող երեխաներին՝ օրական առնվազն երեք անգամ:

<sup>3</sup> Ներառում է երեխային երկու կամ ավելի անգամ կաթնախառնուրդ, թարմ, գործարանային արտադրության, փոշի և կովի կամ այլ կենդանու կաթ տալը:

<sup>4</sup> 6-23 ամսական կրծքով չկերակրվող երեխաների համար կերակրման նվազագույն հաճախականությունն օրական նվազագույնը չորս անգամ կոշտ կամ կիսակոշտ սնունդ ստանալն է:

<sup>5</sup> 6-23 ամսական կրծքով չկերակրվող երեխաները համարվում է, որ կերակրվել են ըստ նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման 3 գործելակերպերի նվազագույն ստանդարտի, եթե նրանք օրական երկու անգամ տրվել է կաթ կամ կաթնամթերք, նրանք կերակրվել են բավարար անգամներ, և նրանք նվազագույնը չորս սննդային խմբերից տրվել է կոշտ կամ կիսակոշտ սնունդ՝ չհաշված կաթ կամ կաթնամթերք խումբը:

<sup>6</sup> Կրծքով կերակրվող կամ չկերակրվող և առնվազն երկու կամ ավելի անգամ կաթնախառնուրդ, թարմ, գործարանային արտադրության, փոշի, կովի կամ այլ կենդանու կաթ կամ յոգուրտ ստացող:

<sup>7</sup> Երեխաները, ովքեր կերակրվել են օրական առնվազն խորհուրդ տրվող հաճախականությամբ՝ ըստ իրենց տարիքի և կրծքով կերակրման կարգավիճակի, ինչպես ներկայացված է ծանոթագրություն 2-ում և 4-ում:

Համարվում է, որ կուրծք ուտող երեխաները կերակրվել են ըստ նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման նվազագույն ստանդարտների, եթե նրանք սպառում են սնունդ առնվազն չորս սննդային խմբերից և կերակրվում են օրական առնվազն երկու անգամ՝ 6-8 ամսական երեխաների դեպքում, և օրական առնվազն երեք անգամ՝ 9-23 ամսական երեխաների դեպքում:

Աղյուսակ 12.6-ը ցույց է տալիս, որ 6-23 ամսական կրծքով կերակրվող երեխաների 37 տոկոսը հետազոտությանը նախորդող 24 ժամվա ընթացքում սնունդ է ստացել առնվազն չորս սննդային խմբերից, իսկ 69 տոկոսը կերակրվել է առաջարկվող ճիշտ հաճախականությամբ: Կրծքով

կերակրվող տասը երեխաներից երեքը (29 տոկոս) ներառված են միաժամանակ այս երկու կատեգորիաներում, այսինքն՝ նրանք կերակրվել են ըստ խորհուրդ տրվող նվազագույն ստանդարտների՝ աննդատեսակների բազմազանության և կերակրման հաճախականության առումով:

6-23 ամսական կրծքով չկերակրվող երեխաները համարվում է, որ կերակրվել են ըստ նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման նվազագույն ստանդարտների, եթե նրանք ստանում են գործարանային արտադրության կաթնախառնուրդ, կենդանու կաթ կամ կաթնամթերք օրական առնվազն երկու անգամ, ստանում են կոշտ կամ կիսակոշտ սնունդ կամ կաթնամթերք օրական առնվազն չորս անգամ, և սպառում են կոշտ կամ կիսակոշտ սնունդ առնվազն չորս աննդային խմբերից՝ չհաշված կաթ/կաթնամթերք սննդային խումբը:

6-23 ամսական կրծքով չկերակրվող երեխաների 54 տոկոսին տրվել է կաթ կամ կաթնամթերք, 60 տոկոսին՝ սնունդ առնվազն չորս աննդային խմբերից, իսկ 74 տոկոսը կերակրվել է օրական չորս կամ ավելի անգամ: Մակայն կրծքով չկերակրվող հինգ երեխաներից միայն մեկն է (21 տոկոս), որ կերակրվել է ըստ նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման բոլոր երեք գործելակերպերի:


Աղյուսակ 12.6-ը ցույց է տալիս, որ 6-23 ամսական բոլոր երեխաների գրեթե երեք չորրորդին (74 տոկոս) տրվում է կրծքի կաթ կամ կաթնամթերք, 72 տոկոսն օրական կերակրվում է խորհուրդ տրվող հաճախականությամբ, իսկ մեկ երկրորդին տրվում է սնունդ՝ սննդային խմբերի խորհուրդ տրվող քանակից (տարիքին համապատասխան): Երեխաների միայն մեկ քառորդն է (25 տոկոս) կերակրվում ըստ նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման բոլոր երեք գործելակերպերի, այն է՝ սպառել է կաթ կամ կաթնամթերք, կերակրվել է ըստ սննդակարգի նվազագույն բազմազանության և հաճախականության:

Կերակրման գործելակերպի նվազագույն չափանիշներն ավելի շատ պահպանվում են բարձր տարիքի երեխաների դեպքում: 18-23 ամսական երեխաները (31 տոկոս) ամենահավանականն է, որ կկերակրվեն համաձայն նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման գործելակերպերի, մինչդեռ 6-8 ամսական երեխաները (13 տոկոս)՝ ամենաքիչը: Սնուցման գործելակերպը մի փոքր տարբերվում է՝ ըստ սեռի և բնակավայրի: Տղաները և քաղաքաբնակ երեխաներն առավել հաճախ են կերակրվել սնուցման երեք գործելակերպերին համապատասխան: Նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման գործելակերպերի և մոր կրթական ու բարեկեցության մակարդակների միջև կապն ակնհայտ չէ չնայած բարձրագույն կրթություն ունեցող մայրերի կամ բարեկեցության ամենաբարձր քվինտիլում գտնվող տնային տնտեսությունների երեխաների դեպքում նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման գործելակերպերն ավելի շատ են պահպանվում, քան մյուս երեխաների դեպքում:

Գծապատկեր 12.5-ը ցույց է տալիս մոր հետ բնակվող 6-23 ամսական կրտսեր երեխաների տոկոսը, ովքեր կերակրվում են՝ համաձայն սնուցման գործելակերպերի նվազագույն ստանդարտների և ըստ կրծքով կերակրման կարգավիճակի: Սնուցման ընդհանուր գործելակերպերի տեսանկյունից կրծքով կերակրվող երեխաների ավելի մեծ մասնաբաժին է (29 տոկոս) բավարարում նվազագույն պահանջներին՝ համեմատած կրծքով չկերակրվող երեխաների հետ (21 տոկոս):

6-23 ամսական երեխաների մասնաբաժինը, որ կերակրվում է ըստ նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման բոլոր երեք գործելակերպերի, 2010-ի համեմատությամբ նվազել է (32 տոկոս 2010-ին և 25 տոկոս 2015-16-ին):

**Գծապատկեր 12.5 ՆՎՏԵՍ ցուցանիշները նվազագույն ընդունելի սննդակարգի վերաբերյալ**



**12.4 ՅՈՂԱՏՈՒՄ ԱՂԻ ՍՈՍՏԱՆՈՒՄԸ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Տնային տնտեսությունում օգտագործվող աղը յոդի հարստացման ամենատարածված աղբյուրն է, որը կանխում է առողջության վերաբերյալ մտահոգությունները՝ կապված յոդի անբավարարությամբ պայմանավորված խանգարումների հետ: ՀՀ կառավարությունը մշակել և ընդունել է ազգային օրենքներ՝ աղի համընդհանուր յոդացման միջոցով բնակիչների շրջանում յոդի անբավարարության տարածվածությունը կանխարգելելու և նվազեցնելու նպատակով: 2004 թ. փետրվարին ՀՀ կառավարությունն ընդունել է որոշում, ըստ որի բնակչության սպառման համար նախատեսված աղը պետք է պարտադիր կերպով յոդացվի: Ոչ յոդացված աղի ներմուծումը ևս արգելվում է (UNICEF, 2005 թ.):

Հայաստանում յոդացված աղի օգտագործումը գնահատելու համար ՀԺԱՀ 2015-16-ը ներառում էր տնային տնտեսություններում արագ իրականացվող աղի թեստ՝ աղի մեջ կալիումի յոդատի առկայությունը ստուգելու համար, քանի որ Հայաստանում աղը սովորաբար յոդացվում է հենց կալիումի յոդատով: MBI արագ թեստն ապահովում է յոդատի առկայության կամ բացակայության որակական ցուցանիշ: Թեստն իրականացնելու համար հարցազրուցավարները խնդրել են տնային տնտեսություններին տրամադրել մի թեյի գդալ այն աղից, որ նրանք օգտագործում են կերակուր պատրաստելու նպատակով: Այն դեպքերում, երբ աղի գույնի փոփոխություն տեղի չի ունեցել, օգտագործվել է կրկնակի թեստի լուծույթը:

Աղյուսակ 12.7-ը ցույց է տալիս յոդացված աղ օգտագործող տնային տնտեսությունների մասնաբաժինն ըստ հիմնական բնութագրիչների: Ընդհանուր առմամբ, աղի թեստ անցկացվել է տնային տնտեսությունների 99 տոկոսում, և այս բոլոր տնային տնտեսություններում օգտագործվող աղն առնվազն որոշ չափով յոդացված է եղել: Ըստ ԱՀԿ-ի՝ որևէ երկրի՝ աղի յոդացման ծրագիրը յոդի անբավարարությունը վերացնելու տեսակետից համարվում է արդյունավետ, եթե տնային տնտեսությունների 90 տոկոսն օգտագործում է յոդացված աղ:

**Աղյուսակ 12.7 Յողացված աղի առկայությունը տնային տնտեսությունում**

Բոլոր SS-ների տոկոսը, որտեղ յոդատի պարունակությունը ստուգելու համար իրականացվել է աղի թեստ, և նրանց տոկոսը, որտեղ աղ չի եղել, աղի թեստ անցկացված SS-ների տոկոսային բաշխումն ըստ աղի մեջ յոդի պարունակության մակարդակի (մեկ միլիոներորդ մաս կամ մկգ), և այն SS-ների տոկոսը, որտեղ աղը յոդացված է եղել, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Բոլոր SS-ների շրջանում տոկոսը, որտեղ			Աղի թեստ անցկացված SS-ների շրջանում՝					
	Իրականացվել է աղի թեստ	Աղ չի եղել	SS-ների թվաքանակ	Յոդ չկա (0 մկգ)	Անբավարար (<15 մկգ)	Բավարար (15+ մկգ)	Ընդամենը	Յողացված աղ ունեցողների տոկոս	SS-ների թվաքանակ
<b>Քանակային</b>									
Քաղաքային	99.1	0.9	4,924	0.2	0.8	99.0	100.0	99.8	4,879
Գյուղական	99.7	0.3	2,969	0.3	1.5	98.1	100.0	99.7	2,959
<b>Մարզ</b>									
Երևան	98.7	1.3	2,480	0.0	0.4	99.6	100.0	100.0	2,449
Արագածոտն	99.6	0.4	387	0.0	7.8	92.2	100.0	100.0	385
Արարատ	99.2	0.8	682	0.0	0.2	99.8	100.0	100.0	676
Արմավիր	99.9	0.1	633	0.3	0.5	99.2	100.0	99.7	632
Գեղարքունիք	99.8	0.2	601	0.0	0.8	99.2	100.0	100.0	600
Լոռի	100.0	0.0	645	0.0	0.0	100.0	100.0	100.0	645
Կոտայք	98.9	1.1	799	0.0	0.4	99.6	100.0	100.0	790
Շիրակ	99.1	0.9	685	2.1	4.8	93.1	100.0	97.9	679
Մյունիք	100.0	0.0	448	0.0	0.0	100.0	100.0	100.0	448
Վայոց ձոր	100.0	0.0	167	0.4	0.2	99.5	100.0	99.6	167
Տավուշ	99.8	0.2	366	0.0	0.3	99.7	100.0	100.0	365
<b>Բարեկեցության քվինտիլ</b>									
Ամենացածր	99.4	0.6	1,700	0.2	1.3	98.4	100.0	99.8	1,690
Երկրորդ	99.5	0.5	1,452	0.3	1.4	98.3	100.0	99.7	1,444
Միջին	99.0	1.0	1,791	0.1	1.9	98.1	100.0	99.9	1,774
Չորրորդ	99.6	0.4	1,558	0.3	0.4	99.2	100.0	99.7	1,551
Ամենաբարձր	99.0	1.0	1,392	0.1	0.3	99.6	100.0	99.9	1,378
Ընդամենը	99.3	0.7	7,893	0.2	1.1	98.7	100.0	99.8	7,838

Չնայած յոդատի՝ ցանկացած քանակության առկայության պարագայում ընդունված է համարել, որ աղը յոդացված է, ՀԺԱՀ 2015-16-ի ընթացքում օգտագործված թեստերը հնարավորություն են տալիս դասակարգելու, թե արդյոք աղի մեջ յոդի պարունակությունը 15 մկգ է, թե ոչ, որը համարվում է յոդացվածության բավարար քանակ<sup>9</sup>: Ըստ այս չափանիշի՝ աղի թեստ անցկացված տնային տնտեսությունների 99 տոկոսում աղը եղել է բավարար յոդացված: Այս արդյունքները նշանակում են, որ, ՀԺԱՀ 2000-ից ի վեր, յոդացված աղի օգտագործումն էապես բարելավվել է:

**12.5 ՄԻԿՐՈՍՆՆԱՅՈՒԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՐԵՄԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ**

Միկրոսննդարար նյութերի պակասը հանդիսանում է երեխաների հիվանդացության և մահացության գլխավոր պատճառներից մեկը: Երեխաները կարող են ստանալ միկրոսննդարար նյութեր մթերքից, սննդային հավելումներից և ուղղակիորեն միկրոսննդարար նյութի հավելման միջոցով: Աղյուսակ 12.8-ը ներկայացնում է այն ցուցանիշները, որոնք օգտագործվում են գնահատելու համար մի քանի հիմնական միկրոսննդանյութերի ընդունումը երեխաների շրջանում: Աղյուսակը նաև ներկայացնում է տեղեկատվություն 6-59 ամսական երեխաների մասնաբաժնի վերաբերյալ, ովքեր ապրում են յոդացված աղ օգտագործող տնային տնտեսություններում:

Վիտամին A-ն կարևորագույն միկրոսննդանյութ է իմունային համակարգի համար, և այն ապահովում է մարմնի էպիթելային հյուսվածքների պահպանումը: Վիտամինի A-ի պակասը կարող է սրել այնպիսի վարակները, ինչպիսիք են կարմրուկը և փորլուծություն առաջացնող վարակները,

<sup>9</sup> Վերջին լաբորատոր հետազոտությունների արդյունքները ենթադրում են, որ աղի արագ թեստերը կարող են վստահելի լինել միայն աղի մեջ յոդատի առկայությունը կամ բացակայությունը որոշելու համար, սակայն դրանք վստահելի չեն որոշելու համար, թե արդյոք աղը բավարար քանակությամբ է յոդացված, թե ոչ (Gorstein et al., 2016):

ինչպես նաև կարող է խոչընդոտել հիվանդություններից արագ ապաքինմանը: Վիտամին A-ն պարունակվում է կրծքի կաթի, այլ կաթի, լյարդի, ձվի, ձկան, կարագի, գազարի, դդմի, դեղին ու նարնջագույն քաղցր կարտոֆիլի և մուգ կանաչ տերևախիտ բանջարեղենի մեջ: Ռիսկային խմբերում գտնվող երեխաների շրջանում վիտամինի A-ի պակասից խուսափելու նպատակով անհրաժեշտ է պարբերաբար (սովորաբար յուրաքանչյուր 6 ամիսը մեկ) երեխաների տալ վիտամին A-ի հավելումներ:

Երկաթը կարևոր է ճանաչողական զարգացման համար: Երկաթի ցածր մակարդակը կարող է նաև հանգեցնել սակավարյունության: Երկաթի հավելումներն առավելապես անհրաժեշտ են 6-12 ամսականների շրջանում, երբ երեխայի աճն ընթանում է չափազանց արագ: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հավաքագրվել են տեղեկություններ վիտամին A-ով հարուստ և երկաթով հարուստ սննդի սպառման վերաբերյալ: Որոշվել է նաև տնային տնտեսությունում օգտագործվող աղի մեջ յոդատի պարունակությունը:

Աղյուսակ 12.8-ը ցույց է տալիս, որ մոր հետ բնակվող 6-23 ամսական երեխաների երկու երրորդից ավելին (69 տոկոս) հարցմանը նախորդող 24 ժամվա ընթացքում սպառել է վիտամին A-ով հարուստ սնունդ, իսկ երեխաների կեսը (52 տոկոս) սպառել է երկաթով հարուստ սնունդ: Վիտամին A-ով ու երկաթով հարուստ սնունդ սպառող երեխաների մասնաբաժինը կտրուկ աճում է երեխայի տարիքին զուգահեռ: Վիտամին A-ով հարուստ սնունդ ստացած երեխաների մասնաբաժինն աճում է՝ 6-8 ամսական երեխաների շրջանում կազմելով 46, իսկ 12-17 ամսականների շրջանում՝ 77 տոկոսը, այնուհետև 18-23 ամսականների շրջանում մնում է անփոփոխ: Նույնանման միտում է նկատվում նաև երկաթով հարուստ մթերքների օգտագործման առումով, որտեղ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 18-23 ամսականների շրջանում (66 տոկոս):

Կրծքով չկերակրվող երեխաներն ավելի շատ են սպառում վիտամին A-ով և երկաթով հարուստ սնունդ, քան կրծքով կերակրվող երեխաները: Երեխաների տոկոսը, որ վերջին 24 ժամվա ընթացքում սպառել է վիտամին A-ով և երկաթով հարուստ սնունդ, մեծապես տարբերվում է՝ ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի: Գոյություն ունի դրական կապ մոր կրթական մակարդակի և այն հանգամանքի միջև, որ երեխան ստանում է կարևորագույն միկրոսնդանյութեր պարունակող սնունդ:

**Աղյուսակ 12.8 Միկրոսնդանությունների ընդունումը երեխաների շրջանում**

Մոր հետ բնակվող 6-23 ամսական կրտսեր երեխաների տոկոսը, ովքեր սպառել են վիտամին A-ով հարուստ և երկաթով հարուստ սնունդ հարցմանը նախորդող 24 ժամվա ընթացքում, 6-59 ամսական բոլոր երեխաների տոկոսը, ում տրվել են երկաթի հավելումներ վերջին յոթ օրվա ընթացքում, և աղի թեստ անցկացված SS-ներում բնակվող 6-59 ամսական բոլոր երեխաների տոկոսը, ովքեր ապրում են յոդացված աղ օգտագործող SS-ներում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

	Մոր հետ բնակվող 6-23 ամսական կրտսեր երեխաների շրջանում			6-59 ամսական բոլոր երեխաների շրջանում		Աղի թեստ անցկացված SS-ներում բնակվող 6-59 ամսական երեխաների շրջանում	
	Վերջին 24 ժամվա ընթացքում վիտամին A-ով հարուստ սնունդ սպառածների տոկոսը <sup>1</sup>	Վերջին 24 ժամվա ընթացքում երկաթով հարուստ սնունդ սպառածների տոկոսը <sup>2</sup>	Երեխաների թվաքանակ	Վերջին 7 օրվա ընթացքում երկաթի հավելումներ ստացածների տոկոսը <sup>3</sup>	Երեխաների թվաքանակ	Յոդացված աղ օգտագործող SS-ներում բնակվողների տոկոսը <sup>4</sup>	Երեխաների թվաքանակ
<b>Հիմնական բնութագրիչներ</b>							
<b>Տարիքն ամիսներով</b>							
6-8	45.7	17.8	86	0.8	87	100.0	87
9-11	66.0	45.5	91	0.0	94	100.0	92
12-17	76.8	61.6	165	1.8	170	98.8	170
18-23	76.5	66.2	148	0.6	169	100.0	169
24-35	կչ	կչ	կչ	0.6	335	99.7	332
36-47	կչ	կչ	կչ	2.6	309	100.0	309
48-59	կչ	կչ	կչ	1.4	324	99.7	320
<b>Սեռ</b>							
Արական	68.7	51.7	238	1.2	787	99.6	785
Իգական	69.7	52.9	252	1.4	700	99.9	694
<b>Կրծքով կերակրման կարգավիճակ</b>							
Կերակրվում է կրծքով	63.6	43.9	215	0.6	239	99.5	238
Չի կերակրվում կրծքով	73.7	59.0	274	1.4	1,248	99.8	1,241
<b>Մոր տարիքը ծննդաբերելիս</b>							
15-19	*	*	8	*	11	*	11
20-29	68.9	52.7	326	0.9	939	99.6	932
30-39	69.3	51.1	148	2.0	501	100.0	500
40-49	*	*	7	(1.7)	35	(100.0)	35
<b>Բնակավայր</b>							
Քաղաքային	70.4	52.2	280	1.7	845	99.9	840
Գյուղական	67.7	52.5	209	0.8	641	99.5	639
<b>Մարզ</b>							
Երևան	68.8	47.9	142	1.4	425	100.0	423
Արագածոտն	*	*	15	1.1	54	100.0	54
Արարատ	54.2	46.7	53	0.0	154	100.0	154
Արմավիր	71.7	59.4	57	1.1	168	99.3	168
Գեղարքունիք	*	*	17	0.0	65	100.0	65
Լոռի	*	*	23	0.0	85	100.0	85
Կոտայք	81.7	41.1	74	1.0	209	100.0	208
Շիրակ	(55.2)	(44.5)	47	0.0	149	98.1	145
Սյունիք	(77.9)	(77.9)	18	14.2	55	100.0	55
Վայոց ձոր	(63.9)	(51.6)	10	1.6	34	100.0	34
Տավուշ	79.1	75.0	33	0.5	88	100.0	88
<b>Մոր կրթությունը</b>							
Հիմնական	(57.7)	(45.9)	29	0.0	83	100.0	83
Միջնակարգ	64.6	48.5	198	1.4	598	99.7	598
Միջին մասնագիտական	67.3	52.4	101	1.2	313	99.7	311
Բարձրագույն	78.1	58.1	162	1.4	493	99.8	487
<b>Բարեկեցության քվինտիլ</b>							
Ամենացածր	69.8	54.2	89	0.9	296	99.4	295
Երկրորդ	59.7	46.2	107	1.0	300	99.6	299
Միջին	71.6	54.3	93	0.4	271	100.0	270
Չորրորդ	68.1	54.5	87	2.3	264	99.6	262
Ամենաբարձր	76.8	53.3	115	1.8	356	100.0	354
Ընդամենը	69.2	52.3	490	1.3	1,486	99.7	1,479

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

կչ = կիրառելի չէ:

<sup>1</sup> Ներառում է միս (ներքին օրգանների մսամթերք), ձուկ, թռչնամիս, ձու, կարմիր քաղցր պղպեղ, դդում, այլ դրամագիններ, գազար, մուգ կանաչ տերևախիտ բանջարեղեն, մանգո, հասած ծիրան կամ ծիրանի չիր, դեղձի, սեխի չիր և տեղում աճեցվող վիտամին A-ով հարուստ այլ մրգեր ու բանջարեղեն:

<sup>2</sup> Ներառում է միս (ներքին օրգանների մսամթերք), ձուկ, թռչնամիս, ձու:

<sup>3</sup> Հիմնված է մոր հիշողության վրա:

<sup>4</sup> Չի ներառում այն SS-ներում բնակվող երեխաներին, որտեղ չի կատարվել աղի թեստ:



ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հավաքագրվել են նաև տեղեկություններ երկաթի հավելումների մասին: Մայրերը հարցվել են, թե արդյոք հարցմանը նախորդող 7 օրվա ընթացքում իրենց մինչև 5 տարեկան երեխային տրվել են երկաթ պարունակող հաբեր, թե ոչ: 6-59 ամսական երեխաների միայն 1 տոկոսին են տրվել երկաթ պարունակող հավելումներ հարցմանը նախորդող 7 օրվա ընթացքում: Երկաթ պարունակող հավելումներ ստացած երեխաների մասնաբաժինն ամենաբարձրն է Սյունիքի մարզում (14 տոկոս): Տարբերություններն ըստ մյուս հիմնական բնութագրիչների փոքր են:

Հարստացված աղը, որի մեջ յոդատի քանակությունը 15 մկգ է, համարվում է բավարար՝ յոդի պակասը կանխելու համար (ICCIDD, UNICEF, and WHO, 2001): Աղյուսակ 12.8-ը ցույց է տալիս, որ ազգային մակարդակով, ըստ էության, բոլոր երեխաներն ապրում են յոդացված աղ օգտագործող տնային տնտեսություններում:

## 12.6 ԿԱՆԱՆՑ ՄՆՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Կանանց կարճ հասակը և հղիությունից առաջ մարմնի զանգվածի (ՄՁՑ) ցածր ցուցանիշը ռիսկային գործոններ են, որոնք կարող են ազդել հղիության ոչ բարենպաստ ելքի վրա և կարող են առաջացնել ծննդաբերական բարդություններ: Ջարգացող երկրներում մայրական թերթաշությունը ռիսկի առաջնային գործոն է կանխարգելելի մահերի և հիվանդությունների համար (The World Health Report, WHO 2002): Կանանց և տղամարդկանց շրջանում գերթաշության տարածվածությունն աճող մտահոգություն է զարգացող երկրներում, որը կապված է առողջական մի շարք խնդիրների հետ, ինչպիսիք են շաքարախտը և սիրտ-անոթային հիվանդությունները, ինչպես նաև ծննդաբերության ոչ բարենպաստ ելքը կանանց համար: Բազմաթիվ երկրներում չափահասների շրջանում էներգիայի քրոնիկ պակասը դեռևս խնդիր է, որը հանգեցնում է աշխատանքի ցածր արտադրողականության և նվազեցնում է դիմադրողականությունը հիվանդությունների հանդեպ:

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում կատարվել են 15-49 տարեկան կանանց հասակի և քաշի չափումներ՝ օգտագործելով նույն սարքավորումները, որոնցով կատարվել են երեխաների չափումները (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հասակաչափերը և SECA թվային կշեռքները): Այդ տվյալներն օգտագործվել են կանանց սնուցման կարգավիճակի երկու չափորոշիչները՝ հասակը և մարմնի զանգվածի ցուցանիշը (ՄՁՑ) ստանալու համար: Ունենալով հասակի և կոնքի չափերի հարաբերակցությունը՝ կնոջ հասակը կարող է օգտակար լինել կանխագուշակելու համար ծննդաբերական ռիսկերը: Կարճ հասակ ունեցող կանայք ավելի հավանական է, որ կծննդաբերեն փոքր քաշով երեխաներ: Սահմանային միավորը, երբ համարվում է, որ ցածր հասակի պատճառով մայրերը կարող են վտանգի ենթարկվել, 140-150 սմ-ի միջակայքն է: ՄՁՑ-ն օգտագործվում է նիհարությունը կամ գերթաշությունը չափելու համար: Այն հաշվարկվում է քաշը (կիլոգրամներով) բաժանելով հասակի (մետրերով) քառակուսուն (կգ/մ<sup>2</sup>): 18.5-ից քիչ ՄՁՑ-ն օգտագործվում է նիհարությունը կամ սուր թերսնվածությունը բնութագրելու համար: 25 և բարձր ՄՁՑ-ն սովորաբար նշանակում է գերթաշություն, իսկ 30 և բարձր ՄՁՑ-ն՝ գիրություն (ճարպակալում):

Աղյուսակ 12.9-ը ներկայացնում է կանանց սնուցման կարգավիճակը: 15-49 տարեկան 6,116 բոլոր կանանցից 96 տոկոսի դեպքում չափվել է հասակը, իսկ 93 տոկոսի դեպքում հաշվարկվել է ՄՁՑ-ն: Աղյուսակը չի ներառում այն կանանց, ում հասակի և/կամ քաշի տվյալները բացակայում էին, և այն կանանց, ում համար հնարավոր չէր հաշվարկել ՄՁՑ-ն, քանի որ նրանք հղի էին կամ ծննդաբերել էին վերջին երկու ամիսների ընթացքում:

Ընդհանուր առմամբ, կանանց 1 տոկոսից քիչն ունի 145 սմ-ից ցածր հասակ, որը փոքր քաշով երեխաներ ծննդաբերելու ռիսկի սահմանային միջակայքի մեջտեղում է:

Կանանց կեսից ավելին (51 տոկոս) ունի նորմալ ՄՁՑ, մինչդեռ 4 տոկոսը՝ թերսնված է կամ նիհար (ՄՁՑ-ն 18.5-ից քիչ է), իսկ 45 տոկոսը՝ գերթաշ է կամ գեր (ՄՁՑ-ն 25 և ավելի բարձր է): 15-49

տարեկան կանանց շրջանում միջին ՄՁՑ-ն 25.3 է, որը դասակարգվում է գերքաշություն կատեգորիայում:

ՄՁՑ մակարդակների միջև տարբերություններն ըստ հիմնական բնութագրիչների ակնհայտ են: Դեռահաս կանայք կամ մինչև 30 տարեկան կանայք ավելի նիհար կամ թերսնված են, քան տարիքով ավելի մեծ կանայք (համապատասխանաբար 7-8 տոկոս և 1 տոկոս): Ի հակադրություն սրան՝ գերքաշություն ունեցող կանանց մասնաբաժինը տարիքին զուգընթաց աճում է: Այսպես՝ 40-49 տարեկան կանանց 45 տոկոսը գերքաշ է, իսկ 35 տոկոսը՝ գեր: Տարբերություններն ըստ քաղաքային-գյուղական բնակավայրերի փոքր են. գյուղաբնակ կանայք (46 տոկոս) գրեթե նույնքան հավանական է, որ կլինեն գերքաշ կամ գեր, ինչքան որ քաղաքաբնակ կանայք (44 տոկոս): Թերսնվածություն ունեցող կանանց մասնաբաժինն ըստ մարզերի շատ չի տատանվում (1-7 տոկոս), սակայն գերքաշություն ունեցող կանանց մասնաբաժինն էապես տատանվում է՝ Տավուշի մարզում գրանցված 23 տոկոսից մինչև Արագածոտնի մարզում գրանցված 45 տոկոսը: Գիրությունն ավելի տարածված է Տավուշի (27 տոկոս), Արմավիրի (23 տոկոս) և Վայոց ձորի (21 տոկոս) մարզերի կանանց շրջանում՝ համեմատած մյուս մարզերի կանանց հետ (9-19 տոկոս): Բարձրագույն կրթություն ունեցող կանայք ավելի քիչ են հակված գիրության, քան կրթական ավելի ցածր մակարդակ ունեցողները (համապատասխանաբար 10 տոկոս և 16-20 տոկոս): Ըստ բարեկեցության քվինտիլների՝ գերքաշության/գիրության տարածվածության տարբերությունները մեծ չեն:

Համեմատած ՀԺԱՀ 2000-ի և ՀԺԱՀ 2005-ի տվյալների հետ՝ 15-49 տարեկան ոչ հղի կանանց տոկոսը, ովքեր նիհար են (ՄՁՑ <18.5), չի փոխվել և շարունակում է մնալ մոտ 4 տոկոս: Կանանց տոկոսը, ովքեր գերքաշ կամ գեր են (ՄՁՑ  $\geq$ 25.0), որոշ չափով ավելացել է՝ 2000-ին և 2005-ին գրանցված 42-ական տոկոսից մինչև 45 տոկոս 2015-16-ին (Գծապատկեր 12.6):

**Աղյուսակ 12.9 Կանանց սեռային կարգավիճակ**


15-49 տարեկան կանանց տոկոսը, ում հասակը մինչև 145 սմ է, մարմնի զանգվածի միջին ցուցանիշը (ՄՁՑ), և նրանց տոկոսը, ովքեր ունեն ՄՁՑ կոնկրետ մակարդակ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Հասակ Մինչև 145 սմ հասակ ունեցողների տոկոս		Մարմնի զանգվածի ցուցանիշ <sup>1</sup>									
			Միջին ՄՁՑ	Նորմալ			Նիհար		Գերքաշ/գեր			Կանանց թվաքանակ
				18.5-24.9 (Ընդամենը նորմալ)	<18.5 (Ընդամենը նիհար)	17.0-18.4 (Ոչ շատ նիհար)	<17 (Չափավոր և շատ նիհար)	≥25.0 (Ընդամենը գերքաշ կամ գեր)	25.0-29.9 (Գերքաշ)	≥30.0 (Գեր)		
<b>Տարիք</b>												
15-19	1.7	701	21.6	82.2	8.2	6.3	1.9	9.6	7.0	2.6	689	
20-29	0.4	1,941	23.1	71.0	6.6	5.1	1.6	22.4	17.8	4.5	1,796	
30-39	0.5	1,801	26.0	45.5	1.2	1.1	0.2	53.3	38.6	14.7	1,758	
40-49	0.5	1,434	28.9	19.4	0.6	0.5	0.0	80.1	45.3	34.8	1,432	
<b>Բնակավայր</b>												
Քաղաքային	0.3	3,474	25.1	51.6	4.1	3.3	0.9	44.3	30.6	13.7	3,366	
Գյուղական	1.0	2,402	25.5	51.2	2.9	2.2	0.7	45.9	28.8	17.1	2,308	
<b>Մարզ</b>												
Երևան	0.1	1,884	25.1	51.4	3.8	3.1	0.7	44.8	32.4	12.3	1,835	
Արագածոտն	1.8	312	26.4	40.4	0.9	0.8	0.1	58.7	45.4	13.3	306	
Արարատ	0.3	539	25.0	53.6	2.7	2.3	0.5	43.6	27.5	16.1	519	
Արմավիր	1.2	584	26.4	44.9	3.7	2.7	0.9	51.4	28.9	22.5	561	
Գեղարքունիք	0.8	472	24.8	60.4	1.0	1.0	0.0	38.6	25.1	13.5	461	
Լոռի	1.4	300	25.5	48.1	3.9	2.5	1.4	48.0	33.8	14.1	287	
Կոտայք	0.2	670	25.3	53.3	3.5	2.6	0.9	43.2	27.4	15.8	632	
Շիրակ	0.2	507	24.0	56.9	7.3	6.1	1.1	35.8	26.6	9.3	486	
Մյունիք	1.9	235	25.3	53.8	4.0	2.5	1.5	42.2	23.7	18.6	228	
Վայոց ձոր	1.2	113	25.9	47.1	5.0	4.6	0.4	47.9	27.1	20.8	107	
Տավուշ	1.7	261	26.5	46.4	4.1	2.4	1.7	49.5	22.9	26.6	251	
<b>Կրթություն</b>												
Հիմնական	2.0	382	25.3	51.0	5.6	4.4	1.2	43.4	23.7	19.7	371	
Միջնակարգ	0.8	2,374	25.6	49.5	3.0	2.3	0.7	47.4	31.0	16.4	2,298	
Միջին մասնագիտական	0.5	1,313	25.9	46.0	3.9	3.5	0.5	50.1	31.7	18.4	1,269	
Բարձրագույն	0.1	1,803	24.5	58.0	3.7	2.7	1.0	38.2	28.4	9.8	1,732	
<b>Բարեկեցության քվինտիլ</b>												
Ամենացածր	1.3	1,054	25.3	51.9	3.8	2.9	0.9	44.3	27.9	16.4	1,026	
Երկրորդ	0.7	1,214	25.5	51.0	2.3	1.8	0.6	46.7	29.8	16.9	1,170	
Միջին	0.7	1,103	25.3	51.5	4.0	2.6	1.4	44.5	29.4	15.1	1,058	
Չորրորդ	0.4	1,205	25.2	51.9	3.6	3.1	0.5	44.5	30.5	14.1	1,172	
Ամենաբարձր	0.2	1,300	25.1	51.0	4.4	3.8	0.6	44.7	31.4	13.3	1,250	
Ընդամենը	0.6	5,876	25.3	51.4	3.6	2.8	0.8	45.0	29.9	15.1	5,675	

Նշում: Մարմնի զանգվածի ցուցանիշը (ՄՁՑ) արտահայտվում է որպես քաշի (կիլոգրամներով) և հասակի քառակուսու (մետրերով) հարաբերություն (կգ/մ<sup>2</sup>): Ընդամենը ներառում է կանանց 5 դեպք (կշռված) առանց որևէ կրթության:

<sup>1</sup> Չի ներառում հղի կանանց և հետազոտությանը նախորդող 2 ամիսների ընթացքում ծննդաբերած կանանց:

**Գծապատկեր 12.6 15-49 տարեկան կանանց սնուցման կարգավիճակի միտումներ**



**12.7 ՄԻԿՐՈՍՆՆՈՒԱՅԻՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԿԱՆԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԱՅՐԵՐՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ**

Միկրոսննդանյութերի համապատասխան ընդունումը կանանց շրջանում կարևոր է թե՛ կանանց, թե՛ նրանց երեխաների համար: Կրճրով կերակրվող երեխաներն օգուտ են ստանում այն միկրոսննդանյութերի հավելումներից՝ հատկապես վիտամին A-ի, որ մայրերն են ընդունում: Հղիության ընթացքում երկաթի հավելումների ընդունումը կարող է նվազեցնել սակավարյունության հավանականությունը: Յողի պակասը կարող է հանգեցնել հղիության բացասական ելքերի, այդ թվում՝ արհեստական ընդհատումների և մեռելաճնության, ինչպես նաև պտղի ուղեղի զարգացման խանգարումների կամ այլ բնածին արատների:

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում ծննդաբերած 15-49 տարեկան կանանցից հավաքագրվել է տեղեկատվություն, թե արդյոք նրանք ընդունել են երկաթի, ֆոլաթթվի կամ պոլիվիտամինների հավելումներ հղիության ընթացքում: Երկաթի հավելումների մասին տեղեկատվություն հավաքագրելու համար կանայք հարցվել են, թե արդյոք նրանց տրվել է, կամ նրանք գնել են երկաթ պարունակող հաբեր կամ օշարակ իրենց վերջին հղիության ժամանակ: Դրական պատասխանի դեպքում նրանք հարցվել են, թե քանի օր են ընդունել հաբերը կամ օշարակը: Հարցերի նույն շարքը տրվել է նաև ֆոլաթթվի և պոլիվիտամինների վերաբերյալ:

Աղյուսակ 12.10-ը ներկայացնում է, որ հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում վերջին հղիության ժամանակ տասը կանանցից վեցը չեն ընդունել երկաթ պարունակող հաբեր կամ օշարակ: Երկաթի հավելումներ ընդունած կանանց մեծ մասն ընդունել է դրանք 60 օրից էլ քիչ, և կանանց միայն 5 տոկոսն է նշել, որ 90 կամ ավելի օր ընդունել է երկաթի հավելումներ: Հղիության ընթացքում երկաթի հավելումների ընդունումն ամենատարածվածն է 40-49 տարեկան կանանց, քաղաքային կանանց, Սյունիքի և Արագածոտնի մարզերի կանանց և բարձրագույն կրթություն ունեցող կանանց շրջանում: Բարեկեցության ամենացածր քվինտիլում գտնվող մայրերը (28 տոկոս) ավելի քիչ են հակված երկաթի հավելումներ ընդունելուն, քան բարեկեցության մյուս քվինտիլներում գտնվողները (38-41 տոկոս):

Աղյուսակ 12.10-ը նաև ցույց է տալիս, որ հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում ծննդաբերած 15-49 տարեկան բոլոր կանայք, ըստ էության, ապրում են յոդացված աղ օգտագործող տնային տնտեսությունում:

**Աղյուսակ 12.10 Միկրունեղանյութերի ընդունումը մայրերի շրջանում**

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում ծննդաբերած 15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումը, ովքեր վերջին երեխայով հղիության ժամանակ ընդունել են երկաթ պարունակող հաբեր կամ օշարակ ըստ ընդունման օրերի, և հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում ծննդաբերած 15-49 տարեկան և աղի թեստ անցկացված SS-ներում բնակվող կանանց տոկոսը, ովքեր ապրում են յոթացված աղ օգտագործող SS-ներում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Վերջին երեխայով հղիության ընթացքում երկաթ պարունակող հաբեր կամ օշարակ ընդունելու օրերի թիվը						Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում ծննդաբերած և աղի թեստ անցկացված SS-ներում բնակվող կանանց շրջանում		
	Ոչ մի	<60	60-89	90+	Չգիտի/ տվյալ չկա	Ընդամենը	Յոդացված աղ օգտագործող SS-ներում բնակվողների տոկոս <sup>1</sup>	Գանանց թվաքանակ	
<b>Տարիք</b>	*	*	*	*	*	*	18	*	18
15-19									
20-29	59.0	29.7	2.8	4.1	4.4	100.0	833	99.4	828
30-39	56.7	30.1	2.4	5.5	5.4	100.0	476	100.0	475
40-49	(55.3)	(36.4)	(0.0)	(4.8)	(3.5)	100.0	34	100.0	34
<b>Բնակավայր</b>									
Քաղաքային	55.4	30.2	2.9	7.0	4.4	100.0	794	99.8	790
Գյուղական	62.2	29.2	2.3	1.0	5.3	100.0	568	99.5	565
<b>Մարդ</b>									
Երևան	55.5	27.9	2.5	10.5	3.6	100.0	398	100.0	395
Արագածոտն	27.3	68.3	1.9	0.0	2.5	100.0	51	100.0	51
Արարատ	48.2	30.2	7.0	1.8	12.8	100.0	140	100.0	140
Արմավիր	67.6	21.7	0.2	4.2	6.3	100.0	147	98.7	147
Գեղարքունիք	74.1	12.6	0.0	0.0	13.4	100.0	65	100.0	65
Լոռի	44.2	43.1	3.2	1.5	7.9	100.0	76	100.0	76
Կոտայք	64.2	31.1	1.9	1.3	1.5	100.0	200	100.0	199
Շիրակ	81.0	17.6	0.0	0.7	0.8	100.0	130	97.8	127
Սյունիք	6.9	64.3	14.4	12.0	2.5	100.0	46	100.0	46
Վայոց ձոր	72.6	22.1	3.6	1.8	0.0	100.0	30	100.0	30
Տավուշ	65.5	29.0	1.1	0.5	3.8	100.0	78	100.0	78
<b>Կրթություն</b>									
Հիմնական	56.3	29.5	4.5	3.0	6.6	100.0	70	100.0	70
Միջնակարգ	61.0	28.2	2.7	3.0	5.1	100.0	533	99.6	533
Միջին մասնագիտական	60.2	27.4	2.3	4.6	5.5	100.0	286	99.7	284
Բարձրագույն	54.2	33.1	2.5	6.4	3.8	100.0	472	99.6	468
<b>Բարեկեցության քվինտիլ</b>									
Ամենացածր	66.2	24.8	2.8	0.4	5.7	100.0	252	99.3	251
Երկրորդ	55.7	31.9	1.8	3.9	6.7	100.0	275	99.6	274
Միջին	57.7	29.6	4.0	3.9	4.8	100.0	253	100.0	252
Չորրորդ	56.1	30.8	3.7	5.0	4.3	100.0	250	99.3	249
Ամենաբարձր	56.3	31.2	1.5	8.3	2.8	100.0	331	100.0	329
Ընդամենը	58.2	29.8	2.7	4.5	4.8	100.0	1,361	99.7	1,355

<sup>1</sup> Չի ներառում այն SS-ներում բնակվող կանանց, որտեղ չի կատարվել աղի թեստ: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

Աղյուսակ 12.11-ը ցույց է տալիս, որ ֆոլաթթվի և պոլիվիտամինների հավելումների գործածությունը մի փոքր ավելի տարածված է, քան երկաթի հավելումների օգտագործումը: Հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում վերջին հղիության ժամանակ տասը կանանցից մոտ հինգը չեն ընդունել ֆոլաթթվի հաբեր կամ պոլիվիտամիններ: Ֆոլաթթվի կամ պոլիվիտամինների հավելումներ ընդունած կանանց մեծ մասն ընդունել է դրանք 60 օրից էլ քիչ, կանանց 4 տոկոսն ընդունել է 60-89 օր, իսկ 6 տոկոսը՝ 90 կամ ավելի օր: Հղիության ընթացքում ֆոլաթթվի և պոլիվիտամինների հավելումների ընդունումն ամենատարածվածն է 20-29 տարեկան կանանց, քաղաքային կանանց, Սյունիքի և Լոռու մարզերի կանանց և կրթական ու բարեկեցության ավելի բարձր մակարդակ ունեցող կանանց շրջանում:

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում վերջին երեխայով հղիության ժամանակ կանանց 16 տոկոսն ընդունել է ֆոլաթթվի կամ պոլիվիտամինների հավելումներ հղիությունից անմիջապես *առաջ*: Հղիությունից *առաջ* ֆոլաթթվի կամ պոլիվիտամինների հավելումների ընդունումն ավելի տարածված է Սյունիքի (64 տոկոս) և Արագածոտնի (29 տոկոս) մարզերում բնակվող կանանց շրջանում՝ համեմատած այլ մարզերի կանանց շրջանում գրանցված 10-17 տոկոսի հետ (տվյալները ցուցադրված չեն):

**Աղյուսակ 12.11 Ֆոլաթթվի կամ պոլիվիտամինների ընդունումը մայրերի շրջանում**

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում ծննդաբերած 15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումը, ովքեր վերջին երեխայով հղիության ժամանակ ընդունել են ֆոլաթթվի հաբեր կամ պոլիվիտամիններ՝ ըստ ընդունման օրերի, և ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում ծննդաբերած կանանց շրջանում վերջին երեխայով հղիության ժամանակ ֆոլաթթվի հաբեր կամ պոլիվիտամիններ ընդունելու օրերի թիվը					Ընդամենը	Կանանց թվաքանակ
	Ոչ մի	<60	60-89	90+	Չգիտի/ տվյալ չկա		
<b>Տարիք</b>							
15-19	*	*	*	*	*	*	18
20-29	49.9	34.1	4.4	6.2	5.5	100.0	833
30-39	53.7	32.9	3.3	5.4	4.7	100.0	476
40-49	(62.2)	(18.2)	(6.4)	(7.8)	(5.4)	100.0	34
<b>Բնակավայր</b>							
Քաղաքային	47.2	33.9	5.1	8.6	5.3	100.0	794
Գյուղական	58.1	32.0	2.5	2.0	5.4	100.0	568
<b>Մարզ</b>							
Երևան	48.6	30.4	3.4	12.5	5.1	100.0	398
Արագածոտն	42.8	41.7	6.1	7.5	1.9	100.0	51
Արարատ	70.1	16.0	1.2	1.3	11.4	100.0	140
Արմավիր	56.3	30.0	3.0	5.2	5.4	100.0	147
Գեղարքունիք	48.8	28.5	0.0	0.0	22.7	100.0	65
Լոռի	25.9	58.4	7.8	0.0	8.0	100.0	76
Կոտայք	43.5	49.3	2.6	3.7	0.9	100.0	200
Շիրակ	69.1	23.8	3.7	2.0	1.4	100.0	130
Սյունիք	9.7	48.5	30.0	10.4	1.4	100.0	46
Վայոց ձոր	60.7	33.2	3.5	1.7	0.9	100.0	30
Տավուշ	73.0	21.9	1.3	1.1	2.6	100.0	78
<b>Կրթություն</b>							
Հիմնական	56.5	26.2	7.9	2.0	7.4	100.0	70
Միջնակարգ	56.1	30.8	3.0	3.1	7.0	100.0	533
Միջին մասնագիտական	54.6	31.5	4.6	5.1	4.2	100.0	286
Բարձրագույն	44.3	37.8	4.2	9.9	3.8	100.0	472
<b>Բարեկեցության քվինտիլ</b>							
Ամենացածր	61.2	28.3	2.1	0.4	8.0	100.0	252
Երկրորդ	57.0	30.7	3.1	3.7	5.5	100.0	275
Միջին	49.1	32.8	6.7	5.7	5.7	100.0	253
Չորրորդ	50.3	32.2	5.8	6.3	5.4	100.0	250
Ամենաբարձր	43.3	39.7	2.8	11.5	2.8	100.0	331
Ընդամենը	51.7	33.1	4.0	5.8	5.3	100.0	1,361

**12.8 ՄԱԿԱՎԱՐՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ (ԱՆԵՄԻԱ)**

Սակավարյունությունն ախտաբանական վիճակ է, որի դեպքում նվազում է արյան կարմիր գնդիկների քանակը և արյան մեջ հեմոգլոբինի կոնցենտրացումը: Հեմոգլոբինն անհրաժեշտ է թթվածինը հյուսվածքներ և մարմնի այլ օրգաններ փոխադրելու համար: Մոտ 1.62 միլիարդ մարդ աշխարհում կամ երկրի բնակչության մոտ մեկ քառորդն ունի սակավարյունություն (WHO and CDC, 2008): 2011 թ. տվյալներով ամբողջ աշխարհում երեխաների 43 տոկոսը, հղի կանանց 38 տոկոսը և վերարտադրողական տարիքի բոլոր կանանց 29 տոկոսն ունեն սակավարյունություն: Սակավարյունության դեպքերի գրեթե կեսը պայմանավորված է երկաթի պակասով (WHO, 2015a): Երկաթի պակասն էլ իր հերթին պայմանավորված է կենսաբանորեն ակտիվ երկաթ պարունակող սննդի ոչ պատշաճ ընդունումով, արագ աճի ժամանակահատվածներում երկաթի պահանջի ավելացմամբ, ինչպիսիք են, օրինակ՝ հղիության ընթացքը կամ մանկությունը, և արյան կորստի

ավելացմամբ՝ անկիլոստոմոզի կամ շիստոսոմոզի պատճառով: Մննդային սակավարյունությունը հիմնականում առաջանում է ինչպես երկաթի պակասի, այնպես էլ ֆոլաթթվի, վիտամին B-ի և B12-ի և արյան կարմիր գնդիկների ստեղծման մեջ ներգրավված որոշակի միկրոէլեմենտների պակասի պատճառով: Երեխաների շրջանում սակավարյունությունը կապված է մտավոր և ֆիզիկական զարգացման խանգարումների և մահացության ու հիվանդացության աճի հետ: Սակավարյունությունը կարող է մասնավորապես լուրջ խնդիր լինել հղի կանանց համար, քանի որ այն կարող է դառնալ վաղաժամ ծննդաբերության և փոքր քաշով երեխա ունենալու պատճառ:

ՀԺԱՀ բաղադրիչներից մեկը կանանց և նրանց մինչև 5 տարեկան երեխաների շրջանում սակավարյունության մակարդակների որոշումն է: Սակավարյունության մակարդակները որոշվել են արյան մեջ հեմոգլոբինի մակարդակը չափելու միջոցով, որի ցածր կոնցենտրացումը վկայում է սակավարյունության մասին: Հեմոգլոբինի կոնցենտրացումը չափվել է՝ օգտագործելով HemoCue-ի Hb301+ վերլուծիչը: Հեմոգլոբինի չափման համար մատից վերցվել է մազանոթային արյուն մանրէագերծված, մեկանգամյա օգտագործման պարագաներով: Արյան առաջին երկու կաթիլները սրբվել են մանրէագերծված բինտի միջոցով, իսկ երրորդ կաթիլն օգտագործվել է սակավարյունության թեստի համար: Ինչպես նկարագրված է Գլուխ 1-ում, ՀԺԱՀ 2015-16-ի հարցազրուցավարների յուրաքանչյուր խմբի հետ աշխատել է հատուկ ուսուցում անցած մեկական բուժաշխատող՝ անցկացնելով թեստը թեստավորման ենթակա և թեստին մասնակցելու համաձայնություն տված հարցվողների հետ: Թեստից հետո բուժաշխատողը հեմոգլոբինի ցուցանիշը հայտնել է հարցվողին կամ ծնողին/պատասխանատու չափահասին: Ծանր սակավարյունության դեպքում տրվել է ուղեգիր՝ բուժհաստատությունում հետագա ստուգում անցնելու համար:

### 12.8.1 Սակավարյունության տարածվածությունը կանանց շրջանում

Բացի այն, որ սակավարյունությունն առաջացնում է թուլություն, հաճախակի հոգնածության և հիվանդությունների հանդեպ ցածր դիմադրողականություն, այն նաև կարող է լուրջ խնդիր հանդիսանալ հղի կանանց համար՝ հանգեցնելով վաղաժամ ծննդաբերության և նորածնի ծննդյան ցածր քաշի: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հարցազրույցի մասնակցած ՏՏ-ների 15-49 տարեկան բոլոր կանանց առաջարկել են անցնել սակավարյունության թեստ: Մինչև հետազոտվելը յուրաքանչյուր հարցվող կարդացել և տեղեկացել է սակավարյունության թեստին չմասնակցելու իր իրավունքի մասին: Յուրաքանչյուր կին հարցվել է, թե արդյոք թույլ կտա իրենից և իր երեխաներից վերցնել արյուն նմուշ: Համապատասխանող կանանց 93 տոկոսը մասնակցել է հեմոգլոբինի չափումներին:

Ըստ արյան մեջ հեմոգլոբինի կոնցենտրացման և համաձայն ԱՀԿ-ի կողմից սահմանված չափանիշների՝ դասակարգվում են սակավարյունության ծանր, միջին և թեթև մակարդակները (DeMaeyer et al., 1989): Քանի որ հեմոգլոբինի մակարդակները փոփոխվում են՝ ըստ ծովի մակարդակից եղած բարձրության, դրանք համապատասխանեցվել են յուրաքանչյուր քլաստերի բարձրության հետ: Սակավարյունության մակարդակները դասակարգվել են հետևյալ կերպ՝

- թեթև՝ հեմոգլոբինի կոնցենտրացումը 10.0-10.9 գ/դլ,
- միջին՝ հեմոգլոբինի կոնցենտրացումը 7.0-9.9 գ/դլ,
- ծանր՝ հեմոգլոբինի կոնցենտրացումը 7.0 գ/դլ-ից պակաս:

Աղյուսակ 12.12-ը ներկայացնում է 15-49 տարեկան կանանց շրջանում սակավարյունության տարածվածությունը՝ ըստ բնակավայրի բարձրության համապատասխանեցված հեմոգլոբինի մակարդակների և ըստ ԱՄՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի (ՀՎԿԿ) կողմից առաջարկվող բանաձևերով ստացված ծխելու կարգավիճակի (CDC, 1998): Հայաստանում կանանց 13 տոկոսն ունի սակավարյունության որևէ աստիճան. նրանց մեծամասնությունը (բոլոր կանանց 12 տոկոսը) ունի թեթև սակավարյունություն, 1 տոկոսը՝ միջին սակավարյունություն, և գրեթե ոչ ոք չունի ծանր սակավարյունություն: Աղյուսակ 12.12-ը ցույց է տալիս, որ սակավարյունության ցուցանիշները սովորաբար նվազում են տարիքին զուգընթաց:

Սակավարյունության տարածվածությունը մի փոքր ավելի բարձր է կրծքով կերակրող կանանց շրջանում (16 տոկոս)՝ համեմատած հղի կանանց (11 տոկոս) և այն կանանց հետ, ովքեր ոչ հղի են, ոչ էլ կերակրում են կրծքով (13 տոկոս): Մյուս մարզերի կանանց համեմատությամբ (7-14 տոկոս)՝ սակավարյունությունն ամենատարածվածն է Գեղարքունիքի մարզի կանանց շրջանում (39 տոկոս): Սակավարյունության տարածվածությունը նվազում է կրթական մակարդակի աճին զուգընթաց՝ հիմնական կրթություն ունեցող կանանց 17 տոկոսից հասնելով մինչև բարձրագույն կրթություն ունեցող կանանց 11 տոկոսը:

ՀԺԱՀ 2000, 2005 և 2015-16 հետազոտությունների արդյունքում ստացված սակավարյունության ցուցանիշների համեմատությունը (Գծապատկեր 12.7) ցույց է տալիս, որ 15-49 տարեկան կանանց շրջանում սակավարյունության տարածվածությունը վերադարձել է 2000-ին գրանցված արդյունքներին:




**Աղյուսակ 12.12 Սակավարյունության տարածվածությունը կանանց շրջանում**

15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր ունեն սակավարյունություն (անեմիա), ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Ոչ հղի Հղի	Սակավարյունության կարգավիճակն ըստ հեմոգլոբինի մակարդակի				Կանանց թվաքանակ
		Ցանկացած տեսակ		Միջին	Ծանր	
		<12.0 գ/դլ	10.0-11.9 գ/դլ			
		<11.0 գ/դլ	10.0-10.9 գ/դլ	7.0-9.9 գ/դլ	<7.0 գ/դլ	
<b>Տարիք</b>						
15-19		17.2	16.6	0.4	0.3	686
20-29		13.7	12.9	0.8	0.0	1,894
30-39		11.1	10.2	0.7	0.2	1,770
40-49		14.1	10.8	3.1	0.2	1,419
<b>Երբևէ ունեցած երեխաների թվաքանակ</b>						
0		15.1	14.5	0.4	0.1	1,972
1		11.5	10.6	0.6	0.3	813
2-3		12.8	10.8	1.9	0.2	2,775
4-5		14.2	10.3	3.9	0.0	197
6+		*	*	*	*	12
<b>Մայրական կարգավիճակ</b>						
Հղի		11.2	9.8	1.3	0.0	156
Կրճրով կերակրող		16.1	15.6	0.5	0.0	351
Ոչ մեկը		13.3	11.8	1.3	0.2	5,261
<b>Օգտագործում է ներարգանդ. միջոց</b>						
Այո		11.9	10.2	1.6	0.1	322
Ոչ		13.5	12.1	1.3	0.2	5,448
<b>Ծխելու կարգավիճակ</b>						
Ծխում է		(18.5)	(13.4)	(5.1)	(0.0)	36
Չի ծխում		13.4	12.0	1.3	0.2	5,733
<b>Քնակավայր</b>						
Քաղաքային		12.9	11.4	1.4	0.2	3,381
Գյուղական		14.2	12.9	1.1	0.1	2,388
<b>Մարզ</b>						
Երևան		11.9	10.4	1.4	0.1	1,812
Արագածոտն		14.2	14.1	0.1	0.0	308
Արարատ		9.0	8.9	0.1	0.0	539
Արմավիր		7.4	6.3	0.9	0.2	580
Գեղարքունիք		39.2	37.8	1.1	0.4	468
Լոռի		13.8	10.2	2.9	0.7	299
Կոտայք		12.6	10.9	1.7	0.0	662
Շիրակ		11.3	9.8	1.4	0.2	504
Սյունիք		10.4	8.9	1.5	0.0	232
Վայոց ձոր		9.6	7.5	1.1	1.1	113
Տավուշ		9.5	7.2	2.4	0.0	253
<b>Կրթություն</b>						
Հիմնական		17.3	15.6	1.2	0.5	380
Միջնակարգ		14.9	13.4	1.3	0.2	2,340
Միջին մասնագիտական		13.4	11.2	2.1	0.1	1,296
Բարձրագույն		10.7	9.9	0.7	0.1	1,748
<b>Բարեկեցության քվինտիլ</b>						
Ամենացածր		13.9	12.0	1.6	0.3	1,047
Երկրորդ		14.4	13.1	1.2	0.1	1,196
Միջին		14.1	12.4	1.6	0.2	1,092
Չորրորդ		13.6	11.9	1.5	0.2	1,175
Ամենաբարձր		11.4	10.8	0.6	0.0	1,260
Ընդամենը		13.4	12.0	1.3	0.2	5,769

Նշում: Տարածվածությունը համապատասխանեցված է ըստ բարձրության և ՀՎԿԿ-ի 1998 թ. բանաձևերով ստացված ծխելու կարգավիճակի: Ընդամենը ներառում է կանանց 5 դեպք (կշռված)՝ առանց որևէ կրթության: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

**Գծապատկեր 12.7 Սակավարյունության տարածվածության միտումները 15-49 տարեկան կանանց շրջանում, 2000-2016**



Նշում: 2005-ի սակավարյունության արդյունքները վերահաշվարկվել են՝ համաձայն ՀԺԱՀ 2005-ի բարձրությունների տվյալներում կատարված ուղղումների:

**12.8.2 Սակավարյունության տարածվածությունը երեխաների շրջանում**

Աղյուսակ 12.13-ը ներկայացնում է սակավարյունության տարածվածությունը 6-59 ամսական երեխաների շրջանում: Արդյունքները հիմնված են 1,349 (կշռված) երեխաների թեստերի արդյունքների վրա, ովքեր հետազոտության ժամանակ ներկա են եղել, ում ծնողները տվել են իրենց համաձայնությունը թեստի անցկացման համար, և ում համար ստացվել են հեմոգլոբինի հավանական տվյալներ: Այս երեխաները ներկայացնում են հեմոգլոբինի թեստավորման համապատասխանող 1,582 (կշռված) երեխաների 85 տոկոսը: Աղյուսակ 12.13-ը ներկայացնում է սակավարյունության տարածվածությունը 6-59 ամսական երեխաների շրջանում՝ հիմնված ըստ բնակավայրի բարձրության համապատասխանեցված հեմոգլոբինի մակարդակների:

Աղյուսակ 12.13-ում ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ 6-59 ամսական 6 երեխաներից մեկը (16 տոկոս) ունի սակավարյունության որևէ աստիճան: Սակավարյունություն ունեցող գրեթե բոլոր երեխաների մոտ թեթև (բոլոր երեխաների 11 տոկոսը) կամ միջին աստիճանի սակավարյունություն է (բոլոր երեխաների 4 տոկոսը): 6-59 ամսական երեխաների 1 տոկոսից քիչն ունի ծանր սակավարյունություն:

Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 12.13-ում, սակավարյունության տարածվածությունը նվազում է տարիքին զուգընթաց: Սակավարյունությունն ավելի տարածված է մինչև 24 ամսական երեխաների շրջանում՝ համեմատած տարիքով ավելի մեծ երեխաների հետ, իսկ ամենաբարձր ցուցանիշը՝ 35 տոկոս, 9-11 ամսական երեխաների շրջանում է: 12-17 ամսական երեխաների համեմատությամբ՝ 48-59 ամսական երեխաների շրջանում սակավարյունությունը հինգ անգամ պակաս տարածված է (համապատասխանաբար 31 և 6 տոկոս): Սակավարյունությունը գրեթե հավասարաչափ է տարածված տղաների և աղջիկների շրջանում (համապատասխանաբար 16 և 15 տոկոս): Սակավարյունության տարածվածությունը մի փոքր ավելի բարձր է գյուղաբնակ երեխաների շրջանում (18 տոկոս)՝ քաղաքաբնակ երեխաների համեմատ (14 տոկոս): Սակավարյունության տարածվածության տարբերությունները, ըստ մոր կրթական մակարդակի կամ բարեկեցության, փոքր են:

Ի տարբերություն ՀԺԱՀ 2015-16-ի և ՀԺԱՀ 2005-ի՝ ՀԺԱՀ 2000-ի շրջանակում հեմոգլոբինի չափումներն իրականացվել են միայն այն երեխաների համար, ում մայրերը մասնակցել են հարցազրույցի կանանց անհատական հարցաթերթով: Հետևաբար, 2015-16-ի և 2005-ի սակավարյունության տարածվածության մակարդակները 2000-ի հետ համեմատելու համար, 2015-16-ի և 2005-ի մակարդակները վերահաշվարկվել են՝ ներառելով 6-59 ամսական այն երեխաներին, ում մայրերը մասնակցել են հարցազրույցի կանանց անհատական հարցաթերթով:

**Աղյուսակ 12.13 Սակավարյունության տարածվածությունը երեխաների շրջանում**

6-59 ամսական երեխաների տոկոսը, ովքեր ունեն սակավարյունություն (անեմիա), ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.


Հիմնական բնութագրիչներ	Սակավարյունության կարգավիճակն ըստ հեմոգլոբինի մակարդակի				6-59 ամսական երեխաների թվաքանակ
	Ցանկացած տեսակ (<11.0 գ/դլ)	Թեթև (10.0-10.9 գ/դ)	Միջին (7.0-9.9 գ/դ)	Ծանր (< 7.0 գ/դ)	
<b>Տարիքն ամիսներով</b>					
6-8	24.4	15.8	8.6	0.0	66
9-11	34.7	20.6	14.1	0.0	77
12-17	30.5	20.2	8.2	2.0	155
18-23	21.7	15.4	6.3	0.0	142
24-35	13.0	10.4	2.3	0.3	309
36-47	10.4	8.6	1.8	0.0	299
48-59	6.3	3.8	1.8	0.7	301
<b>Սեռ</b>					
Արական	15.8	11.7	3.5	0.6	718
Իգական	15.4	10.2	4.9	0.3	631
<b>Բնակավայր</b>					
Քաղաքային	13.6	9.9	3.0	0.7	721
Գյուղական	18.0	12.3	5.5	0.1	628
<b>Մարզ</b>					
Երևան	10.4	6.9	1.9	1.6	331
Արագածոտն	11.5	9.7	1.8	0.0	58
Արարատ	10.3	9.7	0.0	0.5	159
Արմավիր	7.4	5.3	2.1	0.0	172
Գեղարքունիք	48.8	41.7	7.1	0.0	64
Լոռի	33.6	19.5	14.1	0.0	52
Կոտայք	20.2	11.9	8.3	0.0	207
Շիրակ	21.4	13.5	7.9	0.0	153
Սյունիք	9.8	6.6	3.2	0.0	53
Վայոց ձոր	15.1	10.6	4.5	0.0	34
Տավուշ	11.2	9.8	1.4	0.0	66
<b>Մոր կրթությունը<sup>1</sup></b>					
Հիմնական	16.6	10.1	6.5	0.0	82
Միջնակարգ	18.9	13.5	5.3	0.1	571
Միջին և ամենագիտական	13.4	8.8	3.5	1.1	280
Բարձրագույն	12.6	9.5	2.6	0.5	411
<b>Բարեկեցության քվինտիլ</b>					
Ամենացածր	18.8	14.7	3.9	0.3	285
Երկրորդ	14.4	8.6	5.8	0.0	292
Միջին	19.9	12.8	6.2	0.8	250
Չորրորդ	13.8	9.2	3.6	0.9	219
Ամենաբարձր	11.6	9.7	1.6	0.4	302
Ընդամենը	15.6	11.0	4.2	0.4	1,349

Նշում: Աղյուսակը հիմնված այն երեխաների վրա, ովքեր հետազոտությանը նախորդող զիշերը զիշերել են տվյալ SS-ում, և ում համար անցկացվել է սակավարյունության թեստ: Սակավարյունության տարածվածությունը, որը հիմնված է հեմոգլոբինի մակարդակների վրա, համապատասխանեցվել է ըստ բարձրության՝ օգտագործելով ՀՎԿԿ-ի բանաձևերը (1998 թ.): Հեմոգլոբինի մակարդակը արտահայտված է գրամ/դեցիլիտր (գ/դլ) միավորով:

<sup>1</sup> Այն կանանց համար, ում հետ հարցազրույց չի անցկացվել, տվյալները վերցվել են տնային տնտեսության հարցաթերթից: Չի ներառում այն երեխաներին, ում մայրերն առկա չեն եղել տնային տնտեսության ցուցակում:

Գծապատկեր 12.8-ը ներկայացնում է ՀԺԱՀ 2000, 2005 և 2015-16 հետազոտությունների արդյունքում ստացված սակավարյունության տվյալների համեմատությունը: 2015-16-ին սակավարյունությունն ավելի քիչ է տարածված երեխաների շրջանում, քան նախորդ երկու հետազոտությունների ժամանակ: Նվազման միտումը մասնավորապես նկատելի է միջին սակավարյունության ցուցանիշների առումով:

**Գծապատկեր 12.8** Սակավարյունության տարածվածության միտումները 6-59 ամսական երեխաների շրջանում, 2000-2016



Նշում: Հաշվարկներում ներառված են միայն այս երեխաները, ում մայրերը մասնակցել են հարցազրույցի: 2005-ի սակավարյունության արդյունքները վերահաշվարկվել են՝ համաձայն 2005-ի բարձրությունների տվյալներում կատարված ուղղումների:

### 12.8.3 Գիտելիքներ սակավարյունության մասին

Չնայած սակավարյունության մակարդակները երեխաների և կանանց շրջանում նվազել են սակավարյունությունը շարունակում է մնալ լուրջ առողջապահական խնդիր Հայաստանում: Սակավարյունության կանխարգելման և վերահսկման նպատակով ՀՀ ազգային ժողով է ներկայացվել այլուրի հարստացման օրենքի նախագիծ: Սակավարյունության վերաբերյալ բնակչության ունեցած գիտելիքների մակարդակի մասին տեղեկատվությունը չափազանց կարևոր է արդյունավետ ռազմավարություն մշակելու համար, որոնք կուղղվեն հասարակության շրջանում այս խնդրի շուրջ իրազեկվածության բարձրացմանը: Այս տեղեկատվությունը ստանալու նպատակով ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում Կնոջ և Տղամարդու անհատական հարցաթերթերի մեջ ներառվել են մի շարք հարցեր՝ սակավարյունության վերաբերյալ ընդհանուր իրազեկվածության մակարդակը, սակավարյունության ախտանիշների, այն կանխարգելելու և վերահսկելու ուղիների մասին ունեցած գիտելիքների մակարդակը գնահատելու համար:

#### Գիտելիքներ սակավարյունության մասին

Աղյուսակ 12.14-ը ներկայացնում է 15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր լսել են սակավարյունության մասին: Տասը կանանցից մոտ ութը (78 տոկոս) և տասը տղամարդկանցից հինգը (55 տոկոս) նշել են, որ լսել են սակավարյունության մասին, ինչը վկայում է, որ Հայաստանում այս հիվանդության վերաբերյալ իրազեկվածությունը բավական տարածված է, բայց համատարած չէ: Սակավարյունության մասին տեղյակ կանանց տոկոսն ամենացածրն է Գեղարքունիքի մարզում (42 տոկոս), 15-19 տարեկան կանանց տարիքային խմբում (57 տոկոս) և հիմնական կրթական մակարդակ ունեցողների շրջանում (46 տոկոս): Սակավարյունության մասին տեղյակ տղամարդկանց տոկոսն ամենացածրն է 15-19 տարեկան տղամարդկանց տարիքային խմբում (30 տոկոս), գյուղաբնակ տղամարդկանց շրջանում (44 տոկոս), Լոռու (11 տոկոս), Սյունիքի (25 տոկոս), Շիրակի (30 տոկոս) և Գեղարքունիքի (32 տոկոս) մարզերում բնակվողների շրջանում: Ե՛վ կանանց, և՛ տղամարդկանց մասնաբաժինը, ովքեր լսել են սակավարյունության մասին, սովորաբար աճում է՝ կրթական և բարեկեցության մակարդակների աճին զուգընթաց:

**Աղյուսակ 12.14 Գիտելիքներ սակավարյունության մասին**

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր լսել են սակավարյունության մասին, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

	Կանայք		Տղամարդիկ	
	Տոկոսը, որ լսել է սակավարյունության մասին	Կանանց թվաքանակ	Տոկոսը, որ լսել է սակավարյունության մասին	Տղամարդկանց թվաքանակ
<b>Հիմնական բնութագրիչներ</b>				
<b>Տարիք</b>				
15-19	57.1	725	30.1	345
20-24	73.0	928	43.2	467
25-29	81.2	1,099	52.3	464
30-34	81.5	1,007	60.9	427
35-39	83.4	867	65.9	376
40-44	83.6	784	65.4	346
45-49	83.9	706	66.3	330
<b>Բնակավայր</b>				
Քաղաքային	83.4	3,657	62.3	1,558
Գյուղական	70.1	2,459	44.3	1,197
<b>Մարզ</b>				
Երևան	87.5	2,001	78.8	833
Արագածոտն	66.8	315	52.5	159
Արարատ	75.5	552	73.8	290
Արմավիր	59.3	586	51.7	268
Գեղարքունիք	41.5	478	31.5	235
Լոռի	67.8	355	10.7	184
Կոտայք	84.6	678	30.4	299
Շիրակ	90.0	510	25.4	201
Սյունիք	94.6	238	77.2	104
Վայոց ձոր	84.9	119	49.2	56
Տավուշ	89.1	283	51.6	126
<b>Կրթություն</b>				
Հիմնական	45.7	396	35.1	360
Միջնակարգ	70.9	2,444	47.3	1,250
Միջին մասնագիտական	84.9	1,360	54.8	403
Բարձրագույն	89.3	1,910	76.5	736
<b>Բարեկեցության ցվինտիլ</b>				
Ամենացածր	63.9	1,081	41.1	523
Երկրորդ	76.2	1,242	47.1	583
Միջին	74.7	1,142	49.1	521
Չորրորդ	84.4	1,287	63.4	566
Ամենաբարձր	88.0	1,365	70.5	562
Ընդամենը	78.1	6,116	54.5	2,755

Նշում: Ընդամենը ներառում է կանանց և տղամարդկանց 5-ական դեպք (կշռված)՝ առանց որևէ կրթության:

### *Գիտելիքներ սակավարյունության ախտանիշների մասին*

ՀԺԱՀ 2015-16-ի այն հարցվողները, ովքեր լսել էին սակավարյունության մասին, հարցվել են նաև այն ախտանիշների մասին, որոնց առկայության պարագայում կարելի է մտածել, որ տվյալ անձը սակավարյություն ունի: Հարցվողների կողմից նշված բոլոր ախտանիշները և նշանները գրանցվել են հարցազրուցավարի կողմից:

Աղյուսակ 12.15.1-ի և Աղյուսակ 12.15.2-ի արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում սակավարյունության մասին տեղյակ կանանց մոտ երեք քառորդը (72 տոկոս) և տղամարդկանց երկու երրորդը (66 տոկոս) որպես հիվանդության ախտանիշ նշել են գունատ մաշկը: Որպես հիվանդության ախտանիշ՝ կանանց և տղամարդկանց գրեթե կեսը նշել են թուլությունը, կանանց երկու հինգերորդը և տղամարդկանց մոտ մեկ հինգերորդը՝ գլխապտույտը, կանանց մեկ հինգերորդը և տղամարդկանց մեկ քառորդը՝ հոգնածությունը, և կանանց մեկ հինգերորդն ու տղամարդկանց մեկ տասներորդը՝ գլխացավը: Հնոցի և հաճախակի վարակների մասին նշել է կանանց ու տղամարդկանց 7 կամ պակաս տոկոսը: Կանանց և տղամարդկանց մոտ երկու տոկոսը նշել են այլ ախտանիշներ կամ ասել են, որ սակավարյունությունը չունի ոչ մի ակնհայտ նշան:

Ընդհանուր առմամբ, սակավարյունության մասին տեղյակ կանանց 10 և տղամարդկանց 8 տոկոսը չեն կարողացել նշել սակավարյունության ոչ մի ախտանիշ: Այս կանանց և տղամարդկանց մասնաբաժինը, որպես կանոն, նվազում է՝ տարիքին և կրթական ու բարեկեցության մակարդակների աճին զուգընթաց: Ըստ մարզերի՝ հարցվողների մասնաբաժինը, ովքեր չեն կարողացել նշել սակավարյունության ոչ մի ախտանիշ, ամենաբարձրն է Արմավիրի (30 տոկոս), Վայոց ձորի (23 տոկոս) և Լոռու (22 տոկոս) մարզերի կանանց և Վայոց ձորի (68 տոկոս) ու Տավուշի (33 տոկոս) մարզերի տղամարդկանց շրջանում:

### *Սակավարյունության պատճառներ*

ՀԺԱՀ 2015-16-ի այն հարցվողները, ովքեր լսել էին սակավարյունության մասին, հարցվել են նաև այն պատճառների մասին, որոնք կարող են հանգեցնել սակավարյունության: Հարցվողների նշած բոլոր պատճառները գրանցվել են հարցազրուցավարի կողմից: Աղյուսակ 12.16.1-ում և Աղյուսակ 12.16.2-ում ներկայացված արդյունքներն առանձնացնում են հարցվողների կողմից ամենաշատը նշված պատճառները:

15-49 տարեկան սակավարյունության մասին տեղյակ կանանց և տղամարդկանց գրեթե կեսը վստահ են, որ սննդի մեջ երկաթի պակասը (համապատասխանաբար 49 և 55 տոկոս) և վատ սնուցումը (համապատասխանաբար 58 և 55 տոկոս) կարող են հանգեցնել սակավարյունության: Որպես սակավարյունության առաջացման պատճառ՝ տասը կանանցից երեքը և տասը տղամարդկանցից երկուսը նշել են արյան կորուստը կամ վնասվածքը: Ժառանգական սակավարյունության մասին նշել է կանանց 14 և տղամարդկանց 9 տոկոսը:

Ընդհանուր առմամբ, սակավարյունության մասին տեղյակ կանանց 13 տոկոսը և տղամարդկանց 8 տոկոսը չեն կարողացել նշել սակավարյունության առաջացման ոչ մի պատճառ:

### *Սակավարյունության կանխարգելում*

ՀԺԱՀ 2015-16-ի այն հարցվողները, ովքեր լսել էին սակավարյունության մասին, հարցվել են նաև, թե ինչ կարող է անձը ուտել կամ խմել սակավարյունությունը կանխարգելելու նպատակով: Հարցվողների նշած բոլոր պատասխանները գրանցվել են հարցազրուցավարի կողմից: Արդյունքները ներկայացված են Աղյուսակ 12.17.1-ում և Աղյուսակ 12.17.2-ում:

15-49 տարեկան սակավարյունության մասին տեղյակ տասը կանանցից երեքը և նույնքան տղամարդիկ նշել են, որ անհրաժեշտ է ուտել երկաթով հարուստ սնունդ՝ առանց կոնկրետացնելու սննդատեսակը: Տասը կանանցից վեցը և նույնքան տղամարդիկ հավատում են, որ կարմիր մսի/ցանկացած մսի/ներքին օրգանների մսամթերքի սպառումը կարող է կանխարգելել

սակավարյունությունը: Որպես սակավարյունությունը կանխարգելող աննդատեսակներ՝ կանայք ավելի հաճախ նշել են ճակնդեղի (43 տոկոս), քանջարեղենի/կարմիր մրգերի կամ քանջարեղենի (25 տոկոս) և կանաչ խնձորի մասին (21 տոկոս): Որպես սակավարյունությունը կանխարգելող աննդատեսակներ՝ տղամարդիկ ավելի շատ են նշել քանջարեղենի/կարմիր մրգերի կամ քանջարեղենի (29 տոկոս) մասին, և ընդհակառակը, ավելի քիչ են նշել ճակնդեղի (15 տոկոս) կամ կանաչ խնձորի մասին (15 տոկոս): Կանանց 18 և տղամարդկանց 17 տոկոսը նշել են, որ երկաթ պարունակող դեղամիջոցները կարող են կանխարգելել սակավարյունությունը: Կանանց և տղամարդկանց գրեթե 10 տոկոսը նշել են սակավարյունության կանխարգելման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են ցանկացած վիտամինի, վիտամին C-ի/վիտամին B12-ի ընդունումը և վիտամին C-ով հարուստ սննդի սպառումը: Ընդհանուր առմամբ, սակավարյունության մասին տեղյակ կանանց 12 և տղամարդկանց 11 տոկոսը չեն կարողացել նշել, թե ինչ կարող է անձը ուտել կամ խմել սակավարյունությունը կանխարգելելու նպատակով:

**Աղյուսակ 12.15.1 Գիտելիքներ սակավարյունության ախտանիշների մասին. կանայք**

15-49 տարեկան սակավարյունության մասին տեղյակ կանանց տոկոսը, ովքեր նշել են որոշակի ախտանիշների մասին, որոնց առկայության պարագայում կարելի է մտածել, որ տվյալ անձը սակավարյունություն ունի, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Գունատ մաշկ	Թուլություն	Հոգնածություն	Հնոց	Գլխացավ	Գլխապտույտ	Հաճախակի վարակներ	Ոչ մի սկնհայտ նշան	Այլ	Զգիտի	Սակավարյունության մասին տեղյակ կանանց թվաքանակ
<b>Տարիք</b>											
15-19	62.9	39.2	18.9	5.5	19.2	33.7	5.1	1.3	3.4	15.4	414
20-24	70.0	45.9	21.9	3.4	19.0	39.7	5.3	1.4	1.4	12.0	678
25-29	73.9	43.9	20.2	5.3	19.9	40.4	4.8	1.2	2.1	9.7	893
30-34	74.5	47.9	23.0	4.2	17.9	40.2	3.0	1.3	2.0	9.0	821
35-39	75.0	45.6	21.1	5.7	18.5	40.4	4.5	0.8	1.4	9.2	723
40-44	72.6	45.6	20.2	5.6	19.3	37.4	5.7	1.0	2.0	7.3	655
45-49	73.1	47.9	24.2	4.3	19.2	42.1	4.5	1.9	2.4	7.5	593
<b>Բնակավայր</b>											
Քաղաքային	73.1	47.4	22.6	3.9	18.3	40.8	5.1	0.7	2.6	8.7	3,052
Գյուղական	71.1	42.1	19.5	6.5	20.2	37.1	3.8	2.2	1.0	11.6	1,725
<b>Մարզ</b>											
Երևան	71.1	50.8	24.5	3.6	18.6	42.3	4.4	0.2	4.1	8.1	1,751
Արագածոտն	64.4	50.6	19.9	18.9	15.3	59.0	1.5	0.0	0.0	0.4	211
Արարատ	86.3	45.7	25.3	5.6	22.5	14.1	2.1	5.6	0.0	2.5	417
Արմավիր	48.1	29.3	6.5	0.5	23.6	30.8	1.0	0.4	0.4	29.9	347
Գեղարքունիք	57.4	53.0	29.1	6.8	21.8	53.6	4.7	12.6	0.0	6.6	198
Լոռի	61.0	18.1	21.1	5.2	29.3	39.5	1.5	0.0	2.4	22.1	241
Կոտայք	74.5	39.7	10.7	1.5	11.1	49.9	13.5	0.2	1.0	10.1	574
Շիրակ	80.7	45.4	18.0	6.0	14.7	36.1	0.7	0.2	0.2	10.5	459
Սյունիք	87.9	63.4	33.4	8.4	12.5	10.1	9.5	1.9	0.0	1.4	225
Վայոց ձոր	62.7	34.4	9.7	0.7	25.0	44.5	1.9	0.0	0.3	23.4	101
Տավուշ	90.9	47.8	34.7	8.1	29.8	52.8	4.7	0.0	4.3	3.2	252
<b>Կրթություն</b>											
Հիմնական	65.9	38.7	14.7	3.1	19.6	29.5	1.7	3.1	2.0	20.4	181
Միջնակարգ	68.0	38.6	17.6	4.9	17.3	35.7	3.8	1.9	1.8	12.0	1,734
Միջին մասնագիտական	73.9	45.7	23.9	5.2	19.2	40.1	5.1	0.8	1.6	9.0	1,155
Բարձրագույն	76.4	53.0	24.5	4.7	20.5	44.0	5.4	0.7	2.5	6.8	1,705
<b>Բարեկեցության քվինտիլ</b>											
Ամենացածր	66.8	39.3	15.2	4.6	17.8	34.8	2.1	2.6	1.4	15.2	691
Երկրորդ	74.1	42.8	21.1	8.5	21.5	35.4	4.8	2.0	1.0	8.8	946
Միջին	72.8	45.7	23.4	4.4	18.4	39.4	4.9	1.6	1.7	8.8	853
Չորրորդ	71.7	47.3	22.2	4.2	17.5	39.5	5.5	0.3	2.7	9.4	1,085
Ամենաբարձր	74.5	49.2	23.2	3.1	19.5	45.4	4.9	0.4	2.8	8.3	1,202
Ընդամենը	72.4	45.5	21.4	4.8	19.0	39.5	4.6	1.2	2.0	9.7	4,777

Նշում: Ընդամենը ներառում է 1 կին (կշոված)՝ առանց որևէ կրթության:

**Աղյուսակ 12.15.2 Գիտելիքներ սակավարյունության ախտանիշների մասին, տղամարդիկ**

15-49 տարեկան սակավարյունության մասին տեղյակ տղամարդկանց տոկոսը, ովքեր նշել են որոշակի ախտանիշների մասին, որոնց առկայության պարագայում կարելի է մտածել, որ տվյալ անձը սակավարյունություն ունի, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Գունատ մաշկ	Թուլություն	Հոգնածություն	Հևոց	Գլխացավ	Գլխապտույտ	Հաճախակի վարակներ	Ոչ մի ակնհայտ նշան	Այլ	Չգիտի	Սակավարյունության մասին տեղյակ տղամարդկանց թվաքանակ
<b>Տարիք</b>											
15-19	68.5	50.7	24.6	2.4	5.0	23.8	4.0	1.7	0.0	6.0	104
20-24	68.0	58.2	18.5	4.1	11.4	18.1	6.1	1.6	1.1	6.6	202
25-29	67.6	57.2	22.8	4.1	8.6	19.7	7.0	2.4	0.4	7.3	243
30-34	58.2	58.8	28.0	5.1	8.4	14.9	7.8	1.3	0.0	10.1	260
35-39	65.0	57.4	23.2	5.1	11.6	19.2	4.7	2.5	0.8	7.5	247
40-44	68.9	58.1	23.9	7.1	18.6	22.2	8.6	2.3	0.9	7.7	226
45-49	66.3	56.3	29.9	4.1	6.8	18.5	8.1	2.1	0.2	11.2	219
<b>Բնակավայր</b>											
Քաղաքային	65.3	62.2	24.9	4.2	11.0	19.0	5.0	1.2	0.5	6.7	970
Գյուղական	66.3	48.1	23.8	5.8	9.4	19.1	10.2	3.4	0.5	11.2	531
<b>Մարզ</b>											
Երևան	61.8	71.5	26.4	2.6	11.9	18.3	2.7	0.0	0.6	4.7	657
Արագածոտն	59.1	94.6	90.4	16.8	4.7	7.1	1.9	0.0	0.0	2.7	84
Արարատ	54.0	49.7	4.9	2.8	1.0	4.2	5.6	9.8	0.0	8.9	214
Արմավիր	94.7	12.8	3.8	3.2	2.8	3.5	0.0	0.0	0.0	5.1	138
Գեղարքունիք	45.6	63.6	47.7	5.0	36.8	78.0	13.4	0.0	0.0	0.0	74
Լոռի	*	*	*	*	*	*	*	*	*	*	20
Կոտայք	84.4	43.6	32.5	12.6	17.0	61.5	45.8	6.5	3.5	13.4	91
Շիրակ	(75.4)	(46.0)	(22.6)	(3.3)	(8.0)	(8.6)	(1.7)	(0.0)	(0.0)	(18.9)	51
Սյունիք	100.0	39.9	19.9	14.2	25.2	7.5	8.8	0.8	0.0	0.0	80
Վայոց ձոր	14.6	17.0	6.9	0.0	0.0	14.1	2.4	8.8	1.6	67.7	28
Տավուշ	55.1	51.2	8.1	1.9	2.3	19.7	15.0	0.0	0.0	33.4	65
<b>Կրթություն</b>											
Հիմնական	68.9	40.5	22.8	7.0	6.2	11.9	5.0	2.3	2.4	10.3	126
Միջնակարգ	58.3	54.7	23.9	3.6	10.6	19.7	5.2	2.0	0.1	10.6	591
Միջին մասնագիտական	65.8	53.7	22.9	3.9	8.6	18.6	12.7	2.0	1.9	9.9	221
Բարձրագույն	72.6	65.0	26.3	5.8	11.9	20.2	6.7	1.9	0.0	4.8	563
<b>Բարեկեցության քվինտիլ</b>											
Ամենացածր	70.4	38.1	18.1	4.0	8.2	12.9	6.2	3.7	0.0	11.5	215
Երկրորդ	64.1	51.4	28.3	7.3	7.9	17.6	11.4	3.7	0.8	11.2	275
Միջին	62.4	55.7	27.3	3.9	9.3	22.8	7.6	2.0	0.8	9.9	256
Չորրորդ	63.2	60.0	26.2	2.3	9.2	19.2	5.6	1.0	0.8	6.1	359
Ամենաբարձր	68.5	70.1	22.1	6.2	15.2	20.9	4.6	0.8	0.1	5.4	396
Ընդամենը	65.7	57.2	24.5	4.8	10.4	19.1	6.8	2.0	0.5	8.3	1,501

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:



**Աղյուսակ 12.16.1 Գիտելիքներ սակավարյունության արտաճանաչման աստիճանների մասին, կանաք**

15-49 տարեկան սակավարյունության մասին տեղյակ կանանց տոկոսը, ովքեր նշել են սակավարյունության արտաճանաչման աստիճաններ, ըստ ինֆունկլան բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հինմական բնութագրիչներ	Մենդի մեջ երկաթի պակաս սնուցում	Միայն հացով վարյունություն	Ժառանգական կորուստ կամ վնասվածություն	Սրբան կորուստ կամ վնասվածություն	Շրջակա միջավայրի աղտոտվածություն				Մոծակներ/մաշկաբաշտումներ	Սրբան պակաս փոխներարկումներ	Սրբան բույրներ	Ներքին կուրսներ	Սյլ Չգիտելիք	Սակավարյունության մասին տեղյակ կանանց թվաքանակը						
					Արբուս	Ղազտան	Հրիտքային	Մետաղների կոնտակտ							Վառարկայի փոխարկումներ	Վարակներ	Սրբան բույրներ			
<b>Տարիք</b>																				
15-19	44.7	50.6	7.3	12.8	20.6	4.1	4.5	6.2	3.9	0.6	0.5	6.5	3.0	0.0	1.3	2.5	0.5	1.3	22.1	414
20-24	45.7	55.7	5.3	13.4	26.4	6.6	4.7	8.0	7.0	0.8	0.3	7.8	4.2	0.1	1.5	2.6	0.5	1.1	16.9	678
25-29	49.6	57.6	5.4	13.3	31.4	8.5	7.2	8.6	6.0	0.8	0.2	8.2	5.3	0.2	0.9	2.1	0.6	1.1	12.5	893
30-34	52.6	58.6	5.6	15.1	28.3	6.4	5.8	7.2	7.4	0.7	0.0	8.9	5.2	0.7	1.2	2.9	0.9	1.6	12.5	821
35-39	51.3	59.0	3.3	14.2	32.3	6.7	4.6	5.6	6.9	0.6	0.1	7.2	4.0	0.2	0.3	2.1	0.8	1.6	12.5	723
Ընդամենը	5.4	2,755	62.4	150	28.8	2,021	82.8	583	4.0	1,994

Նշում: Ընդամենը ներառում է տղամարդկանց 2 դեպք, երբ առկա չեն տվյալներն արտասահմանում աշխատանքի մասին, և տղամարդկանց 5 դեպք՝ առանց որևէ կրթության: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չվշտված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չվշտված դեպքերի վրա:

<sup>1</sup> Անձ, որ հարցվողի կինը չէ կամ չի ապրում նրա հետ:

<sup>2</sup> Միջին թվաքանակները հաշվարկելիս չեն ներառվել ոչ թվային պատասխան տված հարցվողները:

<sup>3</sup> «Աշխատանքն արտասահմանում» վերաբերում է հետազոտությանը նախորդող 3 տարիների ընթացքում 3 ամիս կամ ավելի անընդմեջ արտասահմանում ունեցած աշխատանքին:

Վերջին 12 ամիսների ընթացքում ոչ իրենց կնոջ/համատեղ բնակվող կողակցի հետ սեռական հարաբերություն ունեցած տղամարդկանց 83 տոկոսը նշել է, որ նման վերջին դեպքի ժամանակ օգտագործել է պահպանակ: Ոչ իրենց կնոջ/համատեղ բնակվող կողակցի հետ սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած ամուսնացած տղամարդկանց տոկոսն ավելի բարձր է, քան երբևէ չամուսնացածներինը (համապատասխանաբար 95 և 82 տոկոս), և արտասահմանում չաշխատած տղամարդկանց շրջանում այս ցուցանիշը ևս ավելի բարձր է՝ արտասահմանում աշխատած տղամարդկանց համեմատությամբ (համապատասխանաբար 87 և 60 տոկոս): Այն ավելի բարձր է նաև քաղաքաբնակ տղամարդկանց շրջանում, և կրթական ու բարեկեցության մակարդակի աճին զուգընթաց՝ նկատվում է ցուցանիշի աճման միտում:

Երբևէ սեռական հարաբերություն ունեցած տղամարդկանց շրջանում կյանքի ընթացքում ունեցած սեռական զուգընկերների միջին թվաքանակը 4.0 է, այսինքն՝ գրեթե չորս անգամ ավելի շատ երբևէ սեռական հարաբերություն ունեցած կանանց շրջանում գրանցված միջին թվաքանակից (1.1 սեռական զուգընկեր) (տվյալները ցուցադրված չեն): Կյանքի ընթացքում ունեցած սեռական զուգընկերների միջին թվաքանակը տղամարդկանց շրջանում աճում է տարիքին զուգընթաց, և այն փոքր-ինչ ավելի բարձր է արտասահմանում աշխատած և քաղաքաբնակ տղամարդկանց շրջանում՝ համապատասխանաբար արտասահմանում չաշխատած և գյուղաբնակ տղամարդկանց համեմատությամբ: Ըստ մարզերի՝ ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Արմավիրի մարզում (7.5): ՀԺԱՀ 2010-ի համեմատությամբ՝ կյանքի ընթացքում ունեցած սեռական զուգընկերների միջին թվաքանակը 2015-16-ին նվազել է (համապատասխանաբար 5.8 և 4.0) (ԱՎԾ և այլք, 2012):

### 13.5.2 Սեռական հարաբերություններ՝ փոխհատուցման դիմաց

Փոխհատուցման դիմաց սեռական հարաբերությունը դրամի, նվերների կամ որևէ իրի դիմաց սեռական հարաբերություն ունենալն է: Փոխհատուցման դիմաց սեռական հարաբերությունները կապված են ՄԻԱՎ և այլ ՍՃՓՎ-ներ ձեռք բերելու մեծ հավանականության հետ, քանի որ դրանք ենթադրում են մի քանի սեռական զուգընկերների առկայություն: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում տղամարդ հարցվողները պատասխանել են, թե արդյոք հետագոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում վճարել են ինչ-որ մեկին սեռական հարաբերության համար: Արդյունքներն ամփոփված են Աղյուսակ 13.7-ում:

**Աղյուսակ 13.7 Սեռական հարաբերություններ՝ վճարումների դիմաց, և պահպանակի օգտագործումը վերջին վճարովի սեռական հարաբերության ժամանակ**

15-49 տարեկան այն տղամարդկանց տոկոսը, ովքեր երբևէ վճարել են սեռական հարաբերության համար, նրանց տոկոսը, ովքեր վճարել են վերջին 12 ամիսների ընթացքում, և վերջիններիս շրջանում նրանց տոկոսը, ովքեր օգտագործել են պահպանակ վերջին վճարովի սեռական հարաբերության ժամանակ, ըստ տարիքի, Հայաստան, 2015-16 թթ.

Տարիք	Բոլոր տղամարդկանց շրջանում՝			Վերջին 12 ամիսների ընթացքում սեռական հարաբ. համար վճարած տղամարդկանց շրջանում՝		
	Տոկոսը, որ երբևէ վճարել է սեռական հարաբ. համար	Տոկոսը, որ վերջին 12 ամիսների ընթացքում վճարել է սեռական հարաբ. համար	Տղամարդկանց թվաքանակ	Տոկոսը, որ օգտագործել է պահպանակ վերջին վճարովի սեռ. հարաբ. ժամանակ	Տղամարդկանց թվաքանակ	
15-24	17.4	13.6	813	91.2	111	
15-19	7.7	7.4	345	*	25	
20-24	24.6	18.2	467	88.6	85	
25-29	36.0	13.2	464	73.5	61	
30-39	31.0	6.6	802	83.8	53	
40-49	25.9	7.9	676	82.6	53	
Ընդամենը	26.6	10.1	2,755	84.2	278	

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկողմած դեպքերի վրա, և այն չի ներառվել:

15-49 տարեկան տղամարդկանց 27 տոկոսը նշել է, որ երբևէ վճարել է սեռական հարաբերության համար: Սեռական հարաբերության համար երբևէ վճարած տղամարդկանց ամենամեծ մասնաբաժինը կազմում են 25-29 տարեկան տղամարդիկ (36 տոկոս):

Տասը տղամարդկանցից մեկը նշել է, որ հետագոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում վճարել է սեռական հարաբերության համար: Հետագոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում սեռական հարաբերության համար վճարած տղամարդկանց 84 տոկոսն օգտագործել է պահպանակ վերջին նման դեպքի ժամանակ:

### 13.6 ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՑՆԵԼՈՒ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՎ-ի նկատմամբ բացասական կարգավիճակ ունեցող անձանց համար իրենց կարգավիճակի իմացությունն օգնում է կայացնել որոշումներ, որոնք կարող են նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակվելու հավանականությունը, նպաստել առավել անվտանգ սեռական հարաբերություններ ունենալուն և զերծ պահել հիվանդություններից: ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական կարգավիճակ ունեցող մարդկանց համար իրենց կարգավիճակի իմացությունը հնարավորություն կտա ձեռնարկելու միջոցներ իրենց սեռական գույքնկերներին պաշտպանելու, բուժում ստանալու և ապագայի ծրագրեր կազմելու համար: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հարցվողները պատասխանել են, թե արդյոք նրանք երբևէ անցել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն: Եթե այո, ապա հարցվել են, թե երբ են վերջին անգամ անցել հետազոտություն, արդյոք ստացել են վերջին հետազոտության արդյունքները, և թե որտեղ են անցել այդ հետազոտությունը: Եթե նրանք երբևէ չեն հետազոտվել, ապա հարցվել են, թե արդյոք գիտեն որևէ վայր, որտեղ կարելի է անցնել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն:

Աղյուսակ 13.8.1-ը և 13.8.2-ը ցույց են տալիս, որ 15-49 տարեկան կանանց 48 և տղամարդկանց 45 տոկոսը գիտեն ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու որևէ վայր, այսինքն՝ 2010-ի համեմատությամբ (կանանց 43 և տղամարդկանց 35 տոկոս) գրանցվել է աճ (ԱՎԾ և այլք, 2012): ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու որևէ վայրի մասին ամենաշատը տեղյակ են 25-49 տարեկան հարցվողները, երբևէ ամուսնացած հարցվողները, քաղաքային հարցվողները և կանայք Կոտայքի մարզում ու տղամարդիկ Տավուշի մարզում: Հետաքրքիր է, որ վերջին երեք տարիների ընթացքում արտասահմանում աշխատած կանայք ավելի հավանական է, որ իմանան հետազոտություն անցնելու որևէ վայր, քան արտասահմանում չաշխատած կանայք, սակայն տղամարդկանց շրջանում այս հարաբերակցությունը հակառակ բնույթն է կրում, այսինքն՝ իրազեկվածության մակարդակն ավելի բարձր է արտասահմանում չաշխատած տղամարդկանց շրջանում: Ե՛վ կանանց, և՛ տղամարդկանց շրջանում իրազեկվածության մակարդակը զգալիորեն աճում է կրթական և բարեկեցության մակարդակին զուգընթաց:

Երբևէ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության անցած հարցվողների մասնաբաժինը շատ փոքր է. 15-49 տարեկան կանանց ընդամենը 15 և տղամարդկանց 2 տոկոսն են նշել, որ երբևէ անցել են հետազոտություն, և կանանց 12 ու տղամարդկանց 1 տոկոսն են նշել, որ երբևէ անցել են հետազոտություն և ստացել են հետազոտության արդյունքները: ՀԺԱՀ 2015-16-ին նախորդող 12 ամիսների ընթացքում այն հարցվողների մասնաբաժինը, ովքեր անցել են հետազոտություն և ստացել են արդյունքները, անգամ ավելի փոքր է՝ կանանց 3 տոկոսը և տղամարդկանց 1 տոկոսից էլ պակասը:

Երբևէ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցած կանանց շրջանում 15-19 տարեկան կանանց մասնաբաժինն ամենափոքրն է (2 տոկոս), իսկ 25-29 տարեկանների մասնաբաժինը՝ ամենամեծը (28 տոկոս): Ներկայում ամուսնացած կանայք (21 տոկոս) ավելի հակված են հետազոտություն անցնելուն, քան երբևէ չամուսնացած (2 տոկոս) կամ նախկինում ամուսնացած կանայք (12 տոկոս): Ըստ մարզերի՝ տարբերությունները բավական զգալի են: Կանանց մասնաբաժինը, որ երբևէ անցել է ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, տատանվում է՝ Գեղարքունիքի մարզում գրանցված 0 տոկոսից մինչև Սյունիքի մարզում գրանցված 27 տոկոսը: Այս առումով կանանց մասնաբաժինը մի փոքր աճում է կրթական և բարեկեցության մակարդակներին զուգընթաց:

Ընդհանուր առմամբ, երբևէ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցած տղամարդկանց միջև տարբերություններն ըստ հիմնական բնութագրիչների ցայտուն արտահայտված չեն, ամենաբարձր տոկոսը գրանցվել է ՀԺԱՀ 2015-16-ին նախորդող երեք տարիների ընթացքում արտասահմանում աշխատած տղամարդկանց (9 տոկոս) և Շիրակի մարզում բնակվող տղամարդկանց շրջանում (8 տոկոս):

**Աղյուսակ 13.8.1 ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու կանաչ**

15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր գիտեն ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու վայր, 15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումն ըստ հետազոտվելու կարգավիճակի և ըստ այն հանգամանքի, թե ստացել են վերջին հետազոտության արդյունքները, թե ոչ, երբևէ հետազոտություն անցածների տոկոսը, և վերջին 12 ամիսների ընթացքում հետազոտություն անցածների և վերջին հետազոտության արդյունքները ստացածների տոկոսը, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Տոկոսը, ովքեր գիտեն ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու վայր	Կանանց տոկոսային բաշխումն ըստ հետազոտվելու կարգավիճակի և ըստ այն հանգամանքի, թե ստացել են վերջին հետազոտության արդյունքները, թե ոչ.			Ընդամենը	Երբևէ հետազոտություն անցածների տոկոսը	Վերջին 12 ամիսների ընթ. հետազոտություն անցածների և վերջինիս արդյունքները ստացածների տոկոսը	Կանանց թվաքանակ
		Երբևէ անցել են հետազոտություն և ստացել են արդյունքները	Երբևէ անցել են հետազոտություն, բայց չեն ստացել արդյունքները	Երբևէ չեն անցել հետազոտություն <sup>1</sup>				
<b>Տարիք</b>								
15-24	35.6	7.0	2.5	90.5	100.0	9.5	3.0	1,653
15-19	25.9	1.5	0.5	98.0	100.0	2.0	0.6	725
20-24	43.2	11.3	4.0	84.7	100.0	15.3	4.9	928
25-29	57.2	21.9	5.5	72.5	100.0	27.5	5.5	1,099
30-39	53.6	14.5	3.5	81.9	100.0	18.1	2.7	1,874
40-49	48.5	6.0	1.0	93.0	100.0	7.0	2.2	1,490
<b>Ամուսնական կարգավիճակ</b>								
Երբևէ չամուսնացած	36.5	1.5	0.1	98.4	100.0	1.6	0.8	1,830
Ունեցել է սեռական հարաբերություն	*	*	*	*	100.0	*	*	12
Երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն	36.2	1.4	0.1	98.5	100.0	1.5	0.6	1,818
Ամուսնացած/ համատեղ բնակվող	52.8	16.8	4.4	78.8	100.0	21.2	4.4	3,895
Ամուսնալուծված/ բաժանված/ այրի	55.7	9.3	2.6	88.1	100.0	11.9	2.1	390
<b>Աշխատանքն արտասահմանում<sup>2</sup></b>								
Աշխատել է	67.1	14.6	1.6	83.8	100.0	16.2	0.0	81
Չի աշխատել	47.9	11.7	3.0	85.3	100.0	14.7	3.2	6,035
<b>Ամուսնու/կնոջ աշխատանքն արտասահմանում<sup>3</sup></b>								
Միայն հարցվողն է աշխատել	*	*	*	*	100.0	*	*	18
Միայն ամուսինը/կինն է աշխատել <sup>3</sup>	44.1	14.5	2.2	83.3	100.0	16.7	3.4	834
Երկուսն էլ աշխատել են	(74.6)	(22.6)	(2.0)	(75.4)	100.0	(24.6)	(0.0)	32
Ոչ մեկը չի աշխատել	55.0	17.5	5.1	77.5	100.0	22.5	4.8	2,998
<b>Բնակավայր</b>								
Քաղաքային	53.4	13.6	2.7	83.7	100.0	16.3	3.4	3,657
Գյուղական	40.3	9.0	3.3	87.6	100.0	12.4	2.9	2,459
<b>Մարզ</b>								
Երևան	58.2	15.0	1.7	83.3	100.0	16.7	2.9	2,001
Արագածոտն	22.5	0.4	0.0	99.6	100.0	0.4	0.1	315
Արարատ	59.6	12.5	7.2	80.3	100.0	19.7	2.9	552
Արմավիր	47.8	14.6	3.3	82.0	100.0	18.0	2.7	586
Գեղարքունիք	11.0	0.0	0.0	100.0	100.0	0.0	0.0	478
Լոռի	19.7	7.8	1.0	91.3	100.0	8.7	3.0	355
Կոտայք	67.5	15.3	6.0	78.6	100.0	21.4	7.8	678
Շիրակ	46.0	14.8	0.8	84.5	100.0	15.5	4.9	510
Սյունիք	45.9	10.6	16.0	73.4	100.0	26.6	3.0	238
Վայոց ձոր	27.9	4.5	0.3	95.2	100.0	4.8	1.6	119
Տավուշ	50.4	9.0	0.5	90.5	100.0	9.5	1.9	283
<b>Կրթություն</b>								
Հիմնական	29.2	8.6	3.5	87.9	100.0	12.1	2.8	396
Միջնակարգ	37.7	8.2	3.3	88.5	100.0	11.5	2.1	2,444
Միջին մասնագիտական	50.8	12.8	2.5	84.7	100.0	15.3	3.6	1,360
Բարձրագույն	63.6	16.2	2.9	81.0	100.0	19.0	4.3	1,910
<b>Բարեկեցության քվինտիլ</b>								
Ամենացածր	32.8	8.7	3.0	88.3	100.0	11.7	2.4	1,081
Երկրորդ	45.8	9.0	3.4	87.6	100.0	12.4	2.5	1,242
Միջին	43.8	11.8	2.8	85.4	100.0	14.6	3.5	1,142
Չորրորդ	52.6	12.6	2.8	84.6	100.0	15.4	4.2	1,287
Ամենաբարձր	61.8	15.8	2.9	81.2	100.0	18.8	3.2	1,365
<b>Ընդամենը</b>	48.1	11.7	3.0	85.3	100.0	14.7	3.2	6,116

Նշում: Ընդամենը ներառում է կանանց 13 դեպք, երբ առկա չեն տվյալներն արտասահմանում ամուսնու աշխատանքի մասին, և կանանց 5 դեպք՝ առանց որևէ կրթության: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

<sup>1</sup> Ներառում է «չգիտի/տվյալ չկա»:

<sup>2</sup> «Աշխատանքն արտասահմանում» վերաբերում է հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում երեք ամիս կամ ավելի անընդմեջ արտասահմանում ունեցած աշխատանքին:

<sup>3</sup> Միայն ներկայում ամուսնացած հարցվողները, արտասահմանում ամուսնու/կնոջ աշխատանքի վերաբերյալ տվյալները հիմնված են հարցվողի հաղորդած տեղեկատվության վրա:

**Աղյուսակ 13.8.2 ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելը, տղամարդիկ**

15-49 տարեկան տղամարդկանց տոկոսը, ովքեր գիտեն ՄԻԱՎ վերաբերյալ հետազոտություն անցնելու վայր, 15-49 տարեկան տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ հետազոտվելու կարգավիճակի և ըստ այն հանգամանքի, թե ստացել են վերջին հետազոտության արդյունքները, թե ոչ, երբևէ հետազոտություն անցածների տոկոսը, և վերջին 12 ամիսների ընթացքում հետազոտություն անցածների և վերջինիս արդյունքները ստացածների տոկոսը, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Տոկոսը, ովքեր գիտեն ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու վայր	Տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ հետազոտվելու կարգավիճակի և ըստ այն հանգամանքի, թե ստացել են վերջին հետազոտության արդյունքները, թե ոչ.				Ընդամենը	Վերջին 12 ամիսների ընթացքում հետազոտություն անցածների և վերջինիս արդյունքները ստացածների տոկոսը	Տղամարդկանց թվաքանակ
		Երբևէ անցել են հետազոտություն և ստացել են արդյունքները	Երբևէ անցել են հետազոտություն, բայց չեն ստացել արդյունքները	Երբևէ չեն անցել հետազոտություն <sup>1</sup>	Երբևէ անցել են հետազոտություն և ստացել են արդյունքները			
<b>Տարիք</b>								
15-24	31.9	0.7	0.5	98.8	100.0	1.2	0.3	813
15-19	25.9	0.2	0.0	99.8	100.0	0.2	0.2	345
20-24	36.3	1.1	0.9	98.0	100.0	2.0	0.3	467
25-29	51.2	2.2	0.5	97.3	100.0	2.7	0.5	464
30-39	49.5	1.7	0.1	98.2	100.0	1.8	0.4	802
40-49	52.4	1.3	0.1	98.6	100.0	1.4	0.6	676
<b>Ամուսնական կարգավիճակ</b>								
Երբևէ չամուսնացած	37.1	0.9	0.1	99.0	100.0	1.0	0.2	1,190
Ունեցել է սեռական հարաբերություն	47.7	1.7	0.2	98.1	100.0	1.9	0.4	631
Երբևէ չի ունեցել սեռ. հարաբերություն	25.2	0.1	0.0	99.9	100.0	0.1	0.0	559
Ամուսնացած/ համատեղ բնակվող	51.7	1.8	0.5	97.7	100.0	2.3	0.6	1,506
Ամուսնալուծված/ բաժանված/ այրի	(48.8)	(0.0)	(0.0)	(100.0)	100.0	(0.0)	(0.0)	59
<b>Աշխատանքն արտասահմանում<sup>2</sup></b>								
Աշխատել է	38.4	7.0	1.9	91.1	100.0	8.9	1.6	334
Չի աշխատել	46.3	0.6	0.1	99.3	100.0	0.7	0.2	2,419
<b>Ամուսնու/կնոջ աշխատանքն արտասահմանում<sup>3</sup></b>								
Միայն հարցվողն է աշխատել	43.3	6.6	2.3	91.1	100.0	8.9	2.1	220
Միայն ամուսինը/կինն է աշխատել <sup>3</sup>	*	*	*	*	100.0	*	*	10
Երկուսն էլ աշխատել են	*	*	*	*	100.0	*	*	6
Ոչ մեկը չի աշխատել	53.4	1.0	0.2	98.8	100.0	1.2	0.3	1,264
<b>Բնակավայր</b>								
Քաղաքային	53.5	0.8	0.4	98.8	100.0	1.2	0.2	1,558
Գյուղական	34.6	2.1	0.2	97.7	100.0	2.3	0.7	1,197
<b>Սարգ</b>								
Երևան	69.7	0.0	0.0	100.0	100.0	0.0	0.0	833
Արագածոտն	8.2	0.6	0.0	99.4	100.0	0.6	0.6	159
Արարատ	58.1	0.0	0.0	100.0	100.0	0.0	0.0	290
Արմավիր	8.2	4.1	0.0	95.9	100.0	4.1	1.8	268
Գեղարքունիք	9.9	0.0	0.0	100.0	100.0	0.0	0.0	235
Լոռի	12.3	0.5	1.0	98.5	100.0	1.5	0.0	184
Կոտայք	60.0	3.5	0.7	95.8	100.0	4.2	0.6	299
Շիրակ	46.1	6.4	1.1	92.5	100.0	7.5	1.8	201
Սյունիք	19.8	0.0	2.1	97.9	100.0	2.1	0.0	104
Վայոց ձոր	24.3	1.7	0.0	98.3	100.0	1.7	0.0	56
Տավուշ	89.9	0.7	0.0	99.3	100.0	0.7	0.0	126
<b>Կրթություն</b>								
Հիմնական	28.0	2.2	0.6	97.3	100.0	2.7	0.4	360
Միջնակարգ	35.6	1.2	0.4	98.4	100.0	1.6	0.5	1,250
Միջին մասնագիտական	51.1	1.8	0.2	97.9	100.0	2.1	0.3	403
Բարձրագույն	67.4	1.1	0.1	98.8	100.0	1.2	0.4	736
<b>Քարեկեցության քվինտիլ</b>								
Ամենացածր	27.5	1.1	0.0	98.9	100.0	1.1	0.4	523
Երկրորդ	37.5	2.7	0.1	97.2	100.0	2.8	1.2	583
Միջին	40.2	1.9	1.1	97.0	100.0	3.0	0.1	521
Չորրորդ	54.6	0.6	0.3	99.0	100.0	1.0	0.4	566
Ամենաբարձր	65.4	0.6	0.0	99.4	100.0	0.6	0.0	562
<b>Ընդամենը</b>	<b>45.3</b>	<b>1.4</b>	<b>0.3</b>	<b>98.3</b>	<b>100.0</b>	<b>1.7</b>	<b>0.4</b>	<b>2,755</b>

Նշում: Ընդամենը ներառում է տղամարդկանց 2 դեպք, երբ բացակայում են տվյալներն արտասահմանում աշխատանքի մասին, տղամարդկանց 7 դեպք, երբ բացակայում են տվյալներն արտասահմանում կնոջ աշխատանքի մասին, և տղամարդկանց 5 դեպք՝ առանց որևէ կրթության: Անտղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չվշտված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չվշտված դեպքերի վրա:

<sup>1</sup> Ներառում է «զվիտի/տվյալ չկա»:

<sup>2</sup> «Աշխատանքն արտասահմանում» վերաբերում է հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում երեք ամիս կամ ավելի անընդմեջ արտասահմանում ունեցած աշխատանքին:

<sup>3</sup> Միայն ներկայում ամուսնացած հարցվողները, արտասահմանում ամուսնու/կնոջ աշխատանքի վերաբերյալ տվյալները հիմնված են հարցվողի հարորդած տեղեկատվության վրա:



### 13.7 ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՇՎԱԾ ՍԵՌԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՎԱՐԱԿՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Սեռական ճանապարհով փոխանցվող վարակները (ՍՃՓՎ) սերտ կապված են ՄԻԱՎ-ի հետ, քանի որ բարձրացնում են ՄԻԱՎ-ով վարակվելու հավանականությունը և ունեն վտանգի միանման գործոններ: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում երբևէ սեռական հարաբերություն ունեցած բոլոր հարցվողները պատասխանել են, թե արդյոք հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում նրանք ունեցել են սեռական ճանապարհով փոխանցվող վարակ կամ նման վարակի նշաններ (ներառյալ՝ գարշահոտ/անկանոն արտադրություն սեռական օրգաններից և վերքեր կամ խոցեր սեռական օրգանների շրջանում): Կարևոր է նշել, որ այս տվյալները հնարավոր է՝ չարտահայտեն ՍՃՓՎ տարածվածության իրական ծավալները՝ որոշ պատճառներից ելնելով (թերզնահատում): Նախ, եթե նշաններն ակնհայտ և երկարատև չեն, հնարավոր է՝ հարցվողը չդիտարկի այն որպես ՍՃՓՎ: Այնուհետև՝ հնարավոր է հարցվողը չդիմի բուժում ստանալու համար ամոթի կամ նման վարակների հետ կապված ենթադրյալ խարանի պատճառով և անգամ չգնա ախտորոշման: Ի վերջո, անգամ եթե հարցվողը գիտի, որ ունի ՍՃՓՎ, հնարավոր է՝ նա չցանկանա հայտնել դրա մասին հարցազրույցի ժամանակ:

Աղյուսակ 13.9-ը ցույց է տալիս, որ կանանց և տղամարդկանց մեկ տոկոսից քիչն է նշել, որ վերջին 12 ամիսների ընթացքում ունեցել է ՍՃՓ վարակ: Այս արդյունքները ենթադրում են, որ հարցվողները թերի տվյալներ են տրամադրել ՍՃՓՎ մասին: Այնուամենայնիվ, երբ տրվել է հարց վերջին 12 ամիսների ընթացքում սեռական օրգաններից ունեցած գարշահոտով, անկանոն արտադրության կամ սեռական օրգանների շուրջ խոցերի կամ վերքերի մասին, համապատասխանաբար կանանց 5 և 1 տոկոսը, և տղամարդկանց 1-ական տոկոսը (յուրաքանչյուր դեպքի համար) նշել են իրենց մոտ նման երևույթների առկայության մասին: Հաշվի առնելով, որ կանայք հնարավոր է՝ սեռական օրգաններից կանոնավոր արտադրությունը ներկայացրած լինեն որպես անկանոն, այս ցուցանիշը կարող է լինել կանանց շրջանում ՍՃՓՎ տարածվածության ծավալների գերազնահատում:

Ընդհանուր առմամբ՝ կանանց 5 տոկոսը նշել է, որ ունեցել է ՍՃՓՎ, արտադրություն սեռական օրգաններից կամ խոց ու վերքեր սեռական օրգանների շրջանում: Նույն ցուցանիշը 2010-ին կազմել է 3 տոկոս, իսկ 2005-ին՝ 8 տոկոս (ԱՎԾ և այլք, 2006, ԱՎԾ և այլք, 2012): ՍՃՓՎ կամ դրանց նշանների առկայության մասին հայտնել է տղամարդկանց 1 տոկոսից էլ քիչ մասը, որը գրեթե նույնն է, ինչ 2005-ին (1 տոկոսից քիչ) և 2010-ին (2 տոկոս) գրանցված ցուցանիշները:

Կանանց շրջանում ՍՃՓՎ կամ դրանց նշանների տարածվածությունը մի փոքր աճում է տարիքին զուգընթաց, և ընդհակառակը, նվազում է կրթական և բարեկեցության մակարդակի աճին զուգընթաց: Գյուղաբնակ կանայք և այն կանայք, ում ամուսիններն աշխատել են արտասահմանում, ավելի շատ են հայտնել ՍՃՓՎ կամ դրանց նշաններ ունենալու մասին (8-ական տոկոս): Մյուս մարզերի համեմատությամբ՝ կանայք Արարատի, Արագածոտնի և Շիրակի մարզերում ավելի շատ են նշել հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում վարակ կամ վարակի նշաններ ունենալու մասին: Տղամարդկանց շրջանում այս ցուցանիշն ըստ հիմնական բնութագրիչների գրեթե չի տարբերվում:



**Աղյուսակ 13.9 Հարցվողների կողմից նշված սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (ՍՃՓՎ) և դրանց ախտանիշների առկայությունը**

15-49 տարեկան երբևէ սեռական հարաբերություն ունեցած այն կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր նշել են, որ հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում ունեցել են ՍՃՓՎ և/կամ նման վարակի նշաններ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.


	Կանայք					Տղամարդիկ				
	Կանանց տոկոսը, որ վերջին 12 ամիսների ընթացքում ունեցել է՝					Տղամարդկանց տոկոսը, որ վերջին 12 ամիսների ընթացքում ունեցել է՝				
	ՍՃՓՎ	Գարշահոտ, անկանոն արտադրություն	Խոց կամ վերքեր սեռական օրգանների շրջանում	ՍՃՓՎ/ գարշահոտ, անկանոն արտադրություն/ խոց կամ վերքեր	Երբևէ սեռական հարաբ. ունեցած կանանց թվաքանակ	ՍՃՓՎ	Գարշահոտ, անկանոն արտադրություն	Խոց կամ վերքեր սեռական օրգանների շրջանում	ՍՃՓՎ/ գարշահոտ, անկանոն արտադրություն/ խոց կամ վերքեր	Երբևէ սեռական հարաբ. ունեցած տղամարդկանց թվաքանակ
<b>Տարիք</b>										
15-24	0.3	2.1	0.7	2.4	407	0.6	0.6	0.0	0.6	324
15-19	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	35	(4.5)	(4.5)	(0.0)	(4.5)	43
20-24	0.3	2.3	0.8	2.6	372	0.0	0.0	0.0	0.0	281
25-29	0.9	3.8	0.9	4.1	802	0.7	0.0	0.0	0.7	428
30-39	0.9	4.4	0.9	5.2	1,681	0.4	0.5	0.3	0.9	776
40-49	0.9	6.1	1.9	6.3	1,408	0.0	0.2	0.0	0.2	668
<b>Ամուսնական կարգավիճակ</b>										
Երբևէ չամուսնացած	*	*	*	*	12	0.8	0.3	0.0	0.8	631
Ամուսնացած/ համատեղ բնակվող	0.9	4.6	1.3	5.1	3,895	0.1	0.3	0.2	0.4	1,506
Ամուսնալուծված/ բաժանված/ այրի	0.0	4.8	0.5	4.8	390	(3.1)	(0.0)	(0.0)	(3.1)	59
<b>Աշխատանքի արտասահմանում<sup>1</sup></b>										
Աշխատել է	2.4	3.7	0.0	3.7	59	0.0	0.0	0.0	0.0	322
Չի աշխատել	0.8	4.6	1.2	5.1	4,239	0.4	0.4	0.2	0.7	1,872
<b>Ամուսնու/կնոջ աշխատանքի արտասահմանում<sup>2</sup></b>										
Միայն հարցվողն է աշխատել	*	*	*	*	18	0.0	0.0	0.0	0.0	220
Միայն ամուսինը/կինն է աշխատել <sup>2</sup>	1.1	7.1	2.1	7.8	834	*	*	*	*	10
Երկուսն էլ աշխատել են	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	32	*	*	*	*	6
Ոչ մեկը չի աշխատել	0.8	4.0	1.1	4.5	2,998	0.1	0.4	0.2	0.5	1,264
<b>Քնակավայր</b>										
Քաղաքային	0.6	2.9	0.6	3.3	2,523	0.3	0.2	0.0	0.3	1,278
Քաղաքային	1.2	7.1	2.1	7.7	1,775	0.4	0.5	0.3	0.9	918
<b>Մարզ</b>										
Երևան	0.6	1.5	0.0	1.9	1,322	0.6	0.3	0.0	0.6	705
Արագածոտն	1.0	8.8	5.6	11.3	198	1.1	0.3	0.3	1.1	120
Արարատ	1.1	12.0	5.1	12.0	394	0.3	0.5	0.0	0.8	227
Արմավիր	1.2	1.9	0.6	2.5	445	0.0	1.0	0.5	1.5	237
Գեղարքունիք	1.4	7.7	0.0	7.7	315	0.0	0.0	0.0	0.0	164
Լոռի	0.0	2.1	0.0	2.1	230	0.0	0.0	0.0	0.0	133
Կոտայք	1.6	4.3	1.9	5.3	515	0.4	0.0	0.0	0.4	250
Շիրակ	0.5	10.3	1.6	10.5	383	0.6	0.6	0.6	0.6	177
Սյունիք	0.0	0.0	0.3	0.3	183	0.0	0.0	0.0	0.0	62
Վայոց ձոր	1.2	3.2	0.3	3.8	91	0.6	0.6	0.6	0.6	37
Տավուշ	0.4	5.4	0.5	5.7	221	0.0	0.0	0.0	0.0	83
<b>Կրթություն</b>										
Հիմնական	0.3	6.4	2.7	7.1	234	0.0	0.4	0.0	0.4	246
Միջնակարգ	1.0	6.3	1.4	6.7	1,833	0.5	0.4	0.3	0.9	982
Միջին մասնագիտական	0.7	3.9	1.2	4.5	1,053	0.6	0.6	0.0	0.6	334
Բարձրագույն	0.9	2.2	0.6	2.8	1,175	0.2	0.0	0.0	0.2	631
<b>Քարեկեցության քվինտիլ</b>										
Ամենացածր	0.6	6.9	2.3	7.5	780	0.2	0.3	0.3	0.8	411
Երկրորդ	0.9	6.5	1.8	6.8	878	0.2	0.5	0.0	0.7	444
Միջին	0.8	6.1	1.3	6.4	818	0.1	0.1	0.1	0.1	413
Չորրորդ	0.8	2.9	0.2	3.4	874	1.1	0.4	0.0	1.1	458
Ամենաբարձր	0.9	1.3	0.6	2.1	948	0.3	0.3	0.3	0.3	470
Ընդամենը	0.8	4.6	1.2	5.1	4,298	0.4	0.3	0.1	0.6	2,196

Նշում: Ընդամենը ներառում է տղամարդկանց 2 դեպք, երբ բացակայում են տվյալներն արտասահմանում աշխատանքի մասին, կանանց 13 և տղամարդկանց 7 դեպք, երբ բացակայում են տվյալներն արտասահմանում ամուսնու/կնոջ աշխատանքի մասին, և կանանց 4 ու տղամարդկանց 3 դեպք՝ առանց որևէ կրթության: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

<sup>1</sup> «Աշխատանքի արտասահմանում» վերաբերում է հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում երեք ամիս կամ ավելի անընդմեջ արտասահմանում ունեցած աշխատանքին:  
<sup>2</sup> Միայն ներկայում ամուսնացած հարցվողները, արտասահմանում ամուսնու/կնոջ աշխատանքի վերաբերյալ տվյալները հիմնված են հարցվողի հաղորդած տեղեկատվության վրա:

Եթե հարցվողը նշել է, որ վերջին 12 ամիսների ընթացքում ունեցել է ՍՃՓՎ կամ նման վարակի նշաններ (արտադրություն կամ խոց ու վերքեր), ապա նա հարցվել է բուժման նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին: Գծապատկեր 13.1-ը ցույց է տալիս, որ 10 կանանցից մոտ 6-ից ավելին (62 տոկոս), ովքեր նշել են վերջին 12 ամիսների ընթացքում ՍՃՓՎ կամ նման վարակի նշանների առկայության մասին, դիմել են որևէ բուժհաստատություն խորհրդատվության կամ բուժման նպատակով<sup>2</sup>: Կանանց մեկ երրորդից ավելին (35 տոկոս) խորհրդատվության կամ բուժման համար չի դիմել ոչ մեկին:

**Գծապատկեր 13.1 ՍՃՓՎ դեպքում խորհրդատվության կամ բուժման դիմած կանայք**



ՀԺԱՀ 2015-16

### 13.8 ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հարցվողները պատասխանել են այն հարցին, թե հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում քանի ներարկում է նրանց կատարվել բժշկի, բուժքրոջ, դեղագործի, ատամնաբույժի կամ որևէ այլ բուժաշխատողի կողմից: Եթե նման ներարկումներ կատարվել են, ապա նրանց տրվել է հարց, թե արդյոք վերջին ներարկման ժամանակ բուժաշխատողը վերցրել է ներարկիչը և ասեղը նոր, փակ տուփից, թե ոչ: Հարկ է նշել, որ բժշկական նպատակով (ինսուլին՝ շաքարախտով հիվանդների դեպքում), սակայն ինքնուրույն կատարված ներարկումները չեն համարվել բժշկական ներարկում այս վերլուծության ժամանակ: Աղյուսակ 13.10-ը ցույց է տալիս 15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ում վերջին 12 ամիսների ընթացքում կատարվել է ներարկում բուժաշխատողի կողմից, կատարված ներարկումների միջին թվաքանակը և այն, թե արդյոք օգտագործված ներարկիչն ու ասեղը վերցվել են նոր, փակ տուփից, թե ոչ:

Տվյալները ցույց են տալիս, որ հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում կանանց 12 և տղամարդկանց 17 տոկոսին կատարվել են ներարկումներ բուժաշխատողի կողմից, իսկ ներարկումների միջին թվաքանակը վերջին 12 ամիսների համար կազմել է 1.2 ն՝ կանանց, և՛ տղամարդկանց շրջանում: Տարիքով ավելի մեծ կանայք և տղամարդիկ ավելի շատ ներարկումներ են ստացել, քան տարիքով ավելի երիտասարդները: Հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում բուժաշխատողի կողմից ներարկում ստացած կանանց մասնաբաժինը Տավուշի մարզում

<sup>2</sup> Շատ քիչ թվով տղամարդիկ են նշել ՍՃՓՎ կամ նման վարակի նշաններ ունենալու մասին, այդ իսկ պատճառով բուժում կամ խորհրդատվություն ստանալու վերաբերյալ տվյալները ցուցադրված չեն:

(19 տոկոս) կրկնակի անգամ շատ է Սյունիքի և Արագածոտնի մարզերում գրանցված մասնաբաժիններից (8-ական տոկոս): Մարզային տարբերությունները տղամարդկանց շրջանում ավելի մեծ են: Ցուցանիշները տատանվում են՝ Արարատի մարզում գրանցված գրեթե 1 տոկոսից մինչև Արմավիրի մարզում գրանցված 36 տոկոսը: Բուժաշխատողի կողմից կատարված ներարկումների և կրթական ու բարեկեցության մակարդակների միջև կապն ուժեղ չէ ո՛չ կանանց, ո՛չ էլ տղամարդկանց շրջանում:

Կանանց 98 և տղամարդկանց 96 տոկոսը նշել են, որ վերջին ներարկման ժամանակ ներարկիչը վերցվել է նոր, փակ տուփից:

Վերջին հինգ տարիների ընթացքում կանանց մասնաբաժինը, ովքեր ստացել են ներարկում բուժաշխատողի կողմից հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում, մի փոքր նվազել է վերջին 5 տարիների ընթացքում՝ 2010-ին գրանցված 14 տոկոսից մինչև 12 տոկոս 2015-16-ին: Մակայն տղամարդկանց շրջանում էական աճ է նկատվել՝ 2010-ին գրանցված 8 տոկոսից մինչև 17 տոկոս 2015-16-ին (ԱՎԾ և այլք, 2012):

**Աղյուսակ 13.10 Բուժաշխատողի կողմից կատարված ներարկումների տարածվածությունը**

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ում վերջին 12 ամիսների ընթացքում կատարվել է առնվազն 1 ներարկում բուժաշխատողի կողմից, վերջին 12 ամիսների ընթացքում կատարված ներարկումների միջին թվաքանակը և ներարկում ստացածների շրջանում նրանց տոկոսը, ում կատարված վերջին ներարկման ժամանակ ներարկիչն ու ասեղը վերցվել են նոր, փակ տուփից, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կանայք				Տղամարդիկ					
	Վերջին 12 ամիսների ընթացքում բժշկական ներարկում ստացածների տոկոս	Վերջին 12 ամիսների կատարված ներարկումների միջին թվաքանակը	Կանանց թվաքանակ	Վերջին 12 ամիսների ընթացքում ներարկիչն ու ասեղը վերցվել են նոր, փակ տուփից	Վերջին 12 ամիսների ընթացքում ստացած թվաքանակ	Վերջին 12 ամիսների ընթացքում ստացածների տոկոս	Վերջին 12 ամիսների ընթացքում կատարված ներարկումների միջին թվաքանակը	Տղամարդկանց թվաքանակ	Վերջին 12 ամիսների ընթացքում ժամանակ ներարկիչն ու ասեղը վերցվել են նոր, փակ տուփից	Վերջին 12 ամիսների ընթացքում ստացած տղամարդկանց թվաքանակ
<b>Տարիք</b>										
15-24	7.2	0.5	1,653	98.1	119	13.6	0.7	813	98.9	111
15-19	5.0	0.2	725	(93.6)	36	15.1	0.7	345	99.5	52
20-24	9.0	0.6	928	100.0	83	12.6	0.7	467	98.4	59
25-29	14.2	1.4	1,099	98.1	156	15.3	0.9	464	96.8	71
30-39	12.5	1.4	1,874	97.6	235	17.5	1.4	802	97.3	141
40-49	15.5	1.8	1,490	98.5	231	19.8	1.6	676	91.8	134
<b>Ամուսնական կարգավիճակ</b>										
Երբևէ չամուսնացած	5.3	0.3	1,830	97.6	98	15.0	0.9	1,190	96.5	179
Ունեցել է սեռական հարաբերություն	*	*	12	*	2	17.8	1.0	631	95.5	112
Երբեք չի ունեցել սեռական հարաբերություն	5.2	0.3	1,818	97.6	95	11.9	0.8	559	98.2	67
Ամուսնացած/ համատեղ բնակվող	15.1	1.6	3,895	98.0	590	17.9	1.4	1,506	96.1	270
Ամուսնալուծված/ բաժանված/ այրի	13.6	1.5	390	100.0	53	(13.3)	(0.8)	59	*	8
<b>Աշխատանքն արտասահմանում<sup>1</sup></b>										
Աշխատել է	16.4	1.3	81	*	13	16.1	1.2	334	98.0	54
Չի աշխատել	12.1	1.2	6,035	98.2	728	16.7	1.2	2,419	95.7	403
<b>Ամուսնու/կնոջ աշխատանքն արտասահմանում<sup>2</sup></b>										
Միայն հարցվողն է աշխատել	*	*	18	*	5	17.9	1.5	220	(97.3)	39
Միայն ամուսինը/կինն է աշխատել <sup>2</sup>	16.0	1.5	834	99.2	134	*	*	10	*	4
Երկուսն էլ աշխատել են	(19.9)	(1.8)	32	*	6	*	*	6	*	0
Ոչ մեկը չի աշխատել	14.8	1.6	2,998	97.8	445	17.8	1.4	1,264	95.8	225
<b>Ֆնակավայր</b>										
Քաղաքային	12.2	1.2	3,657	97.9	447	18.2	1.3	1,558	94.6	283
Գյուղական	12.0	1.3	2,459	98.3	294	14.5	1.1	1,197	98.3	173
<b>Մարզ</b>										
Երևան	11.4	1.0	2,001	96.1	229	19.4	1.3	833	91.1	161
Արագածոտն	8.1	0.7	315	(100.0)	26	31.5	1.7	159	100.0	50
Արարատ	10.3	1.2	552	100.0	57	0.7	0.0	290	*	2
Արմավիր	10.4	1.4	586	97.5	61	35.8	2.3	268	98.0	96
Գեղարքունիք	8.5	1.2	478	(100.0)	41	5.8	0.7	235	*	14
Լոռի	15.6	1.2	355	100.0	55	21.7	1.2	184	(97.4)	40
Կոտայք	16.7	1.9	678	100.0	113	13.9	1.6	299	(100.0)	42
Շիրակ	13.9	1.1	510	97.0	71	12.8	0.8	201	*	26
Մյուսիք	7.7	1.1	238	(100.0)	18	2.5	0.8	104	*	3
Վայոց ձոր	13.9	1.1	119	100.0	17	18.7	1.4	56	(91.4)	11
Տավուշ	18.6	1.8	283	96.6	53	10.5	0.6	126	*	13
<b>Կրթություն</b>										
Հիմնական	9.6	0.9	396	(94.2)	38	14.8	1.2	360	97.1	53
Միջնակարգ	10.9	1.2	2,444	97.9	267	17.1	1.3	1,250	93.8	214
Միջին մասնագիտական	15.3	1.7	1,360	98.5	208	14.5	0.9	403	95.1	58
Բարձրագույն	11.9	1.0	1,910	98.5	228	17.8	1.1	736	99.5	131
<b>Քարեկեցության քվինտիլ</b>										
Ամենացածր	10.9	1.2	1,081	96.3	117	17.6	1.4	523	98.6	92
Երկրորդ	13.0	1.4	1,242	100.0	162	14.4	1.0	583	98.3	84
Միջին	11.6	1.1	1,142	98.5	133	15.3	0.9	521	97.4	80
Չորրորդ	12.1	1.3	1,287	98.4	156	19.3	1.5	566	92.1	109
Ամենաբարձր	12.7	1.1	1,365	96.8	173	16.3	1.1	562	94.7	92
<b>Ընդամենը</b>	12.1	1.2	6,116	98.1	741	16.6	1.2	2,755	96.0	457

Նշում: Բժշկական են համարվում բժշկի, բուժքրոջ, դեղագործի, ատամնաբույժի կամ այլ բուժաշխատողի կողմից կատարված ներարկումները: Ընդամենը ներառում է տղամարդկանց 2 դեպք, երբ բացակայում են տվյալներն արտասահմանում աշխատանքի մասին, կանանց 13 և տղամարդկանց 7 դեպք, երբ բացակայում են տվյալներն արտասահմանում ամուսնու/կնոջ աշխատանքի մասին, և կանանց ու տղամարդկանց 5-ական դեպք՝ առանց որևէ կրթության: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

<sup>1</sup> «Աշխատանքն արտասահմանում» վերաբերում է հետազոտությանը նախորդող երեք տարիների ընթացքում երեք ամիս կամ ավելի անընդմեջ արտասահմանում ունեցած աշխատանքին:

<sup>2</sup> Միայն ներկայում ամուսնացած հարցվողները. արտասահմանում ամուսնու/կնոջ աշխատանքի վերաբերյալ տվյալները հիմնված են հարցվողի հաղորդած տեղեկատվության վրա:

### 13.9 ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԵՎ ՎԱՐՔԱԳԻԾ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Այս բաժինը ներկայացնում է 15-24 տարեկան երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ առկա գիտելիքների մակարդակը և դրա հետ կապված սեռական վարքագիծը: Այս տարիքային խումբը գտնվում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծրագրերի ուշադրության կենտրոնում: Սեռական կյանքը սկսելու և ամուսնության միջև ընկած ժամանակահատվածը սեռական փորձարկումների շրջան է, որը կարող է նաև ներառել ռիսկային վարքագիծ: Հետազոտության շրջանակում սեղեկատվություն է հավաքագրվել նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման և կանխարգելման վերաբերյալ երիտասարդների ունեցած բազմակողմանի գիտելիքների վերաբերյալ: Տեղեկատվություն է հավաքագրվել նաև այնպիսի թեմաների մասին, ինչպիսիք են տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ, մինչամուսնական սեռական հարաբերությունները, բարձր ռիսկային սեռական վարքագիծը, պահպանակի օգտագործումը և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների կատարումը:

**13.9.1 ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ գիտելիքները երիտասարդների շրջանում**

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում երիտասարդ հարցվողներին տրվել են այն նույն հարցերը, ինչ և տարիքով ավելի մեծ հարցվողներին, մասնավորապես՝ արդյոք պահպանակի օգտագործումը և միայն մեկ չվարակված սեռական գուգրնկեր ունենալը կարող են նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակվելու հավանականությունը, և արդյոք արտաքինապես առողջ մարդը կարող է լինել ՄԻԱՎ-ով վարակված (տե՛ս Աղյուսակ 13.3): Աղյուսակ 13.11-ը ցույց է տալիս երիտասարդների շրջանում բազմակողմանի գիտելիքների մակարդակը, այսինքն՝ երիտասարդների մասնաբաժինը, ովքեր տրված հարցերին ի պատասխան նշել են, որ հնարավոր է նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակվելու հավանականությունը՝ ունենալով միայն մեկ չվարակված, հավատարիմ գուգրնկեր և օգտագործելով պահպանակ յուրաքանչյուր սեռական հարաբերության ժամանակ, այն երիտասարդների մասնաբաժինը, ովքեր գիտեն, որ արտաքինապես առողջ մարդը կարող է լինել ՄԻԱՎ-ով վարակված, և որ ՄԻԱՎ-ը չի կարող փոխանցվել մոծակի կծելու կամ ՄԻԱՎ-ով վարակված մարդու հետ համբուրվելու միջոցով:

Երիտասարդ կանանց 20 և տղամարդկանց 13 տոկոսն ունեն բազմակողմանի գիտելիքներ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին բազմակողմանի գիտելիքների մակարդակն աճում է հարցվողի տարիքին գուգրնթաց: Երբևէ ամուսնացած և երբևէ չամուսնացած հարցվողների միջև ցուցանիշը գրեթե չի փոփոխվում: Քաղաքաբնակ երիտասարդներն ավելի շատ գիտելիքներ ունեն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ, քան գյուղաբնակները: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ բազմակողմանի գիտելիքների մակարդակը երիտասարդների շրջանում էապես աճում է՝ կրթական մակարդակի աճին գուգրնթաց:

**Աղյուսակ 13.11 ՄԻԱՎ-ի վերաբերյալ բազմակողմանի գիտելիքները երիտասարդների շրջանում**

15-24 տարեկան երիտասարդ կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր ունեն բազմակողմանի գիտելիքներ ՄԻԱՎ-ի մասին, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

	15-24 տարեկան կանայք		15-24 տարեկան տղամարդիկ	
	ՄԻԱՎ-ի մասին բազմակողմանի գիտելիքներ ունեցողների տոկոս <sup>1</sup>	Կանանց թվաքանակ	ՄԻԱՎ-ի մասին բազմակողմանի գիտելիքներ ունեցողների տոկոսը <sup>1</sup>	Տղամարդկանց թվաքանակ
<b>Հիմնական բնութագրիչներ</b>				
<b>Տարիք</b>				
15-19	14.7	725	8.9	345
15-17	11.9	450	7.2	261
18-19	19.3	275	14.1	85
20-24	24.5	928	15.2	467
20-22	23.0	506	13.1	247
23-24	26.4	422	17.5	221
<b>Ամուսնական կարգավիճակ</b>				
Երբևէ չամուսնացած	20.5	1,249	12.5	756
Ունեցել է սեռ. հարաբերութ.	*	2	16.0	267
Երբեք չի ունեցել սեռ. հարաբերութ.	20.5	1,247	10.5	489
Երբևէ ամուսնացած	19.4	405	13.3	56
<b>Քնակավայր</b>				
Քաղաքային	24.9	928	15.6	438
Գյուղական	14.3	725	8.9	374
<b>Կրթություն</b>				
Հիմնական	6.7	163	4.5	139
Միջնակարգ	10.7	651	8.9	354
Միջին				
մասնագիտական	26.1	272	9.1	109
Բարձրագույն	32.2	567	25.8	209
Ընդամենը	20.2	1,653	12.5	813

Նշում: Ընդամենը ներառում է տղամարդկանց 1 դեպք՝ առանց որևէ կրթության: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

<sup>1</sup> Բազմակողմանի գիտելիք ասելով նկատի ունենք՝ իմանալ, որ և՛ պահպանակի օգտագործումը, և՛ միայն մեկ չվարակված սեռական գուգրնկեր ունենալը կարող են նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակվելու հավանականությունը, իմանալ, որ արտաքինապես առողջ մարդը կարող է լինել ՄԻԱՎ-ով վարակված, և հերքել Հայաստանում ամենատարածված երկու թյուրըմբռումները ՄԻԱՎ-ի փոխանցման և կանխարգելման մասին: Բազմակողմանի գիտելիքների բաղադրիչները ներկայացված են Աղյուսակ 13.2-ում և 13.3-ում:

### 13.9.2 Տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ երիտասարդների շրջանում

ՀԺԱՀ 2015-16-ի արդյունքում ստացված տեղեկատվությունը կարող է օգտագործվել երիտասարդների շրջանում սեռական կյանքը սկսելու տարիքը դիտարկելու տեսանկյունից: Աղյուսակ 13.12-ը ցույց է տալիս 15-24 տարեկան երիտասարդ կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր սեռական հարաբերություն են ունեցել նախքան 15 և նախքան 18 տարեկանը:

Ընդհանուր առմամբ, Հայաստանում 15-24 տարեկան գրեթե ոչ մի կին և տղամարդկանց ընդամենը 1 տոկոսն է ունեցել սեռական հարաբերություն նախքան 15 տարեկանը (Աղյուսակ 13.12): Մինչդեռ 18-24 տարեկան կանանց 6 և տղամարդկանց 16 տոկոսն ունեցել են իրենց առաջին սեռական փորձը մինչև 18 տարեկանը:

Ըստ բնակավայրի՝ սեռական կյանքը սկսելու տարիքի միջև տարբերությունները միանշանակ չեն: 18-24 տարեկան գյուղաբնակ կանայք ավելի հավանական է, որ սկսած լինեն սեռական կյանքը մինչև 18 տարեկանը, քան քաղաքային կանայք: Տղամարդկանց շրջանում, սակայն, հակառակ հարաբերակցությունն է բնորոշ՝ քաղաքային տղամարդիկ մի փոքր ավելի հավանական է, որ սկսած լինեն սեռական կյանքը նախքան 18 տարեկանը՝ գյուղաբնակների համեմատությամբ: 18-24 տարեկան կանանց և տղամարդկանց շրջանում նախքան 18 տարեկանը սեռական հարաբերություն ունեցած հարցվողների մասնաբաժինը նվազում է կրթական մակարդակի աճին զուգընթաց: Այս կապն առավել արտահայտված է կանանց համար:

**Աղյուսակ 13.12 Տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ երիտասարդների շրջանում**

15-24 տարեկան երիտասարդ կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր սեռական հարաբերություն են ունեցել նախքան 15 տարեկանը և 18-24 տարեկան երիտասարդ կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր սեռական հարաբերություն են ունեցել նախքան 18 տարեկանը, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

	15-24 տարեկան կանայք		18-24 տարեկան կանայք		15-24 տարեկան տղամարդիկ		18-24 տարեկան տղամարդիկ	
	Նախքան 15 տարեկանը սեռական հարաբերություն ունեցածների տոկոսը	Կանանց թվաքանակ	Նախքան 18 տարեկանը սեռական հարաբերություն ունեցածների տոկոսը	Կանանց թվաքանակ	Նախքան 15 տարեկանը սեռական հարաբերություն ունեցածների տոկոսը	Տղամարդկանց թվաքանակ	Նախքան 18 տարեկանը սեռական հարաբերություն ունեցածների տոկոսը	Տղամարդկանց թվաքանակ
<b>Տարիք</b>								
15-19	0.0	725	կչ	կչ	1.0	345	կչ	կչ
15-17	0.0	450	կչ	կչ	1.1	261	կչ	կչ
18-19	0.0	275	5.7	275	0.8	85	21.8	85
20-24	0.2	928	5.9	928	1.0	467	14.9	467
20-22	0.3	506	5.8	506	1.0	247	16.6	247
23-24	0.0	422	6.1	422	1.0	221	12.9	221
<b>Բնակավայր</b>								
Քաղաքային	0.1	928	3.0	675	1.8	438	17.6	287
Գյուղական	0.1	725	9.6	529	0.0	374	14.1	265
<b>Կրթություն</b>								
Հիմնական	1.0	163	(28.5)	40	0.9	139	24.2	59
Միջնակարգ	0.0	651	10.8	406	1.9	354	14.7	220
Միջին մասնագիտական	0.0	272	5.5	203	0.0	109	18.1	77
Բարձրագույն	0.0	567	0.8	554	0.0	209	14.1	195
Ընդամենը	0.1	1,653	5.9	1,204	1.0	813	15.9	552


Նշում: Ընդամենը ներառում է տղամարդկանց 1 դեպք՝ առանց որևէ կրթության: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

կչ = կիրառելի չէ

Գծապատկեր 13.2-ը ցույց է տալիս, որ 2010-ից ի վեր առաջին սեռական հարաբերության ժամանակ տարիքը շատ քիչ է փոխվել: 18-19 տարեկան կանանց շրջանում նախքան 18 տարեկանը սեռական հարաբերություն ունեցած կանանց մասնաբաժինը 2010-ին գրանցված 8 տոկոսից նվազել է մինչև 6 տոկոս 2015-16-ին: 18-19 տարեկան տղամարդկանց շրջանում նախքան 18 տարեկանը

սեռական հարաբերություն ունեցած տղամարդկանց մասնաբաժինը մնացել է անփոփոխ (22 տոկոս) (ԱՎԾ և այլք, 2012):

**Գծապատկեր 13.2 Առաջին սեռական հարաբերության ժամանակ տարիքի միտումներ**



**13.9.3 Ինքնազսպումը սեռական հարաբերություններից և մինչամուսնական սեռական հարաբերություններ**

Ինչպես արդեն նշվել է, առաջին սեռական հարաբերության և ամուսնության միջև ընկած ժամանակահատվածը սեռական փորձարկումների շրջան է: Մինչամուսնական սեռական հարաբերությունները և առաջին սեռական հարաբերությունից մինչև ամուսնությունն ընկած ժամանակահատվածը դասվում են ՄԻԱՎ-ի տարածմանը նպաստող գործոնների շարքին:

Աղյուսակ 13.13-ը ցույց է տալիս 15-24 տարեկան երբևէ չամուսնացած կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր երբևէ չեն ունեցել սեռական հարաբերություն: Երբևէ չամուսնացած կանանց գրեթե 100 տոկոսը նշել է, որ երբեք չի ունեցել սեռական հարաբերություն, և այս առումով տարբերություններ ըստ տարիքի, բնակավայրի կամ կրթական մակարդակի չեն արձանագրվել:

Ընդհանուր առմամբ, 15-24 տարեկան երբևէ չամուսնացած տղամարդկանց 65 տոկոսը նշել է, որ երբեք չի ունեցել սեռական հարաբերություն: Երբևէ չամուսնացած տղամարդկանց մասնաբաժինը, ովքեր երբեք չեն ունեցել սեռական հարաբերություն, նվազում է տարիքի և կրթական մակարդակի աճին զուգընթաց: Օրինակ՝ 15-17 տարեկան երբևէ չամուսնացած տղամարդկանց 94 տոկոսը երբեք չի ունեցել սեռական հարաբերություն՝ համեմատած 23-24 տարեկան տղամարդկանց 35 տոկոսի հետ: Նմանապես՝ հիմնական կրթություն ունեցող երիտասարդ տղամարդկանց 80 տոկոսը երբեք չի ունեցել սեռական հարաբերություն՝ համեմատած բարձրագույն կրթություն ունեցող տղամարդկանց 42 տոկոսի հետ: Քաղաքային երիտասարդ տղամարդիկ (59 տոկոս) պակաս հավանական է, որ երբեք սեռական հարաբերություն ունեցած չլինեն, քան գյուղաբնակները (71 տոկոս):



**Աղյուսակ 13.13 Մինչամուսնական սեռական հարաբերությունները երիտասարդների շրջանում**

15-24 տարեկան երբևէ չամուսնացած կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր երբևէ չեն ունեցել սեռական հարաբերություն, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	15-24 տարեկան երբևէ չամուսնացած կանայք		15-24 տարեկան երբևէ չամուսնացած տղամարդիկ	
	Տոկոսը, որ երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն	Կանանց թվաքանակ	Տոկոսը, որ երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն	Տղամարդկանց թվաքանակ
<b>Տարիք</b>				
15-19	100.0	690	87.5	345
15-17	100.0	446	94.4	261
18-19	100.0	244	66.4	85
20-24	99.7	558	45.4	411
20-22	100.0	346	53.2	237
23-24	99.1	212	34.7	174
<b>Բնակավայր</b>				
Քաղաքային	99.7	739	59.1	415
Գյուղական	100.0	509	71.4	341
<b>Կրթություն</b>				
Հիմնական	100.0	138	79.7	131
Միջնակարգ	100.0	454	73.0	326
Միջին մասնագիտակ.	100.0	195	61.0	101
Բարձրագույն	99.6	460	42.3	197
Ընդամենը	99.8	1,249	64.6	756

Նշում: Ընդամենը ներառում է տղամարդկանց 1 դեպք՝ առանց որևէ կրթության:

**13.9.4 Մի քանի սեռական զուգընկերներ և պահպանակի օգտագործում երիտասարդների շրջանում**


Շատ հասարակություններում պատանեկության տարիները հանդիսանում են սեռական փորձարկումների շրջան: Մի քանի սեռական զուգընկերներ ունենալը և սեռական հարաբերություններն արտամուսնական զուգընկերների հետ կարող են լինել սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ, օրինակ՝ ՄԻԱՎ ձեռք բերելու պատճառ: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում երիտասարդ կանանց և տղամարդկանց տրվել են այն նույն հարցերը, ինչ և տարիքով ավելի մեծ հարցվողներին՝ կապված հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում ունեցած սեռական զուգընկերների հետ: Գծապատկեր 13.3-ը ներկայացնում է 15-24 տարեկան այն կանանց և տղամարդկանց մասնաբաժինը, ովքեր վերջին 12 ամիսների ընթացքում ունեցել են մեկից ավելի սեռական զուգընկեր, մասնաբաժինը, ովքեր սեռական հարաբերություն են ունեցել արտամուսնական զուգընկերոջ հետ, և վերջիններիս շրջանում նրանց մասնաբաժինը, ովքեր վերջին սեռական հարաբերության ժամանակ օգտագործել են պահպանակ:

15-24 տարեկան ոչ մի կին չի նշել, որ հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում ունեցել է մի քանի սեռական զուգընկեր, ինչպես և տեղի էր ունեցել 2010-ին (ԱՎԾ և այլք, 2012): Երիտասարդ կանանց 1 տոկոսից քիչն է նշել, որ վերջին 12 ամիսների ընթացքում սեռական հարաբերություն է ունեցել ոչ իր ամուսնու/համատեղ բնակվող զուգընկերոջ հետ:

Երիտասարդ տղամարդկանց ընդամենը 3 տոկոսն է նշել, որ հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում ունեցել է մի քանի սեռական զուգընկեր, այսինքն՝ մեծ անկում է արձանագրվել՝ 2010-ին գրանցված 16 տոկոսի համեմատությամբ: Տարբերություններն ըստ հիմնական բնութագրիչների շատ փոքր են (տվյալները ցուցադրված չեն):

Հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում սեռական հարաբերություն ունեցած երիտասարդ տղամարդկանց 79 տոկոսը նշել է, որ սեռական հարաբերություն է ունեցել ոչ իր կնոջ/համատեղ բնակվող զուգընկերոջ հետ: Վերջիններիս 86 տոկոսն էլ նշել է, որ վերջին սեռական հարաբերության ժամանակ օգտագործել է պահպանակ:

**Գծայատկեր 13.3 Մի քանի սեռական զուգընկերներ և բարձր ռիսկային սեռական հարաբերություններ երիտասարդների շրջանում**



ՀԺԱՀ 2015-16

**13.9.5 ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունները երիտասարդների շրջանում (վերջերս կատարված)**

ՄԻԱՎ-ի կարգավիճակի իմացությունը կարող է հանդիսանալ խթան մարդկանց համար՝ առավել անվտանգ սեռական կյանք վարելու տեսանկյունից: Այն անձինք, ովքեր պարզում են, որ չունեն ՄԻԱՎ, հնարավոր է որոշակի քայլեր ձեռնարկեն հետազայում ևս չվարակվելու համար, իսկ նրանք, ովքեր պարզում են, որ վարակված են ՄԻԱՎ-ով, կարող են քայլեր ձեռնարկել՝ վարակը մյուսներին չփոխանցելու համար:

Երիտասարդ կանանց 10 և երիտասարդ տղամարդկանց 1 տոկոսը նշել են, որ երբևէ անցել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն (տե՛ս Աղյուսակ 13.8.1 և 13.8.2): Նման ցածր տոկոսը կարող է կապված լինել այն հանգամանքի հետ, որ Հայաստանում երիտասարդների մեծ մասը սեռապես ակտիվ չէ: Հետևաբար, Աղյուսակ 13.14-ը ներկայացնում է 15-24 տարեկան, սեռապես ակտիվ կանանց և տղամարդկանց՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու վերաբերյալ տվյալները:

**Աղյուսակ 13.14 ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունները երիտասարդների շրջանում (վերջերս կատարված)**

Վերջին 12 ամիսների ընթացքում սեռական հարաբերություն ունեցած 15-24 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր վերջին 12 ամիսների ընթացքում անցել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն և ստացել են վերջին հետազոտության արդյունքները, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

	15-24 տարեկան կանայք, ովքեր ունեցել են սեռական հարաբերություն վերջին 12 ամիսների ընթացքում		15-24 տարեկան տղամարդիկ, ովքեր ունեցել են սեռական հարաբերություն վերջին 12 ամիսների ընթացքում	
	Տոկոսը, որ անցել են հետազոտություն վերջին 12 ամիսների ընթացքում և ստացել են վերջինիս արդյունքները	Կանանց թվաքանակ	Տոկոսը, որ անցել են հետազոտություն վերջին 12 ամիսների ընթացքում և ստացել են վերջինիս արդյունքները	Տղամարդկանց թվաքանակ
<b>Տարիք</b>				
15-19	(9.9)	35	(1.7)	39
15-17	*	3	*	14
18-19	(8.9)	31	*	25
20-24	10.5	363	0.7	232
20-22	9.4	157	0.0	96
23-24	11.4	206	1.2	136
<b>Ամուսնական կարգավիճակ</b>				
Երբևէ չամուսնացած	*	2	0.7	215
Երբևէ ամուսնացած	10.5	396	1.2	56
Ընդամենը	10.5	398	0.8	271

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

Ընդհանուր առմամբ, հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում սեռական հարաբերություն ունեցած երիտասարդ կանանց 11 տոկոսը և երիտասարդ տղամարդկանց 1 տոկոսից էլ քիչը վերջերս անցել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն և ստացել են հետազոտության արդյունքները: Դեպքերի փոքր թվաքանակի պատճառով դժվար է ներկայացնել եզրակացություններ՝ ըստ հիմնական բնութագրիչների ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների տարածվածության վերաբերյալ: Այնուամենայնիվ, այդ տվյալները ներկայացված են Աղյուսակ 13.14-ում:



**Հիմնական արդյունքներ**

- 15-49 տարեկան կանանց 6 տոկոսը, 15 տարեկանից սկսած, առնվազն մեկ անգամ ենթարկվել է ֆիզիկական բռնության, իսկ 3 տոկոսը ենթարկվել է ֆիզիկական բռնության հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում:
- 15-49 տարեկան կանանց 1 տոկոսն իրենց կյանքի ընթացքում առնվազն մեկ անգամ ենթարկվել է սեռական բռնության:
- 15-49 տարեկան երբևէ ամուսնացած կանանց 14 տոկոսը ենթարկվել է ֆիզիկական, սեռական կամ զգացմունքային բռնության իրենց ամուսնու կողմից, իսկ երբևէ ամուսնացած կանանց 8 տոկոսը նշել է, որ նման բռնության է ենթարկվել վերջին 12 ամիսների ընթացքում:
- Երբևէ ամուսնացած կանանց շրջանում, ովքեր ամուսնու կողմից ենթարկվել են բռնության (ֆիզիկական կամ սեռական), կանանց 40 տոկոսը նշել է, որ ունեցել է ֆիզիկական վնասվածքներ:
- Որևէ անձի կողմից ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված կանանց 29 տոկոսը բռնությունը դադարեցնելու նպատակով փնտրել է օգնություն:

**Ս**եռային բռնությունը ցանկացած գործողություն է, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական ցավի կամ տառապանքի, ներառյալ՝ նման գործողությունների սպառնալիքը, հարկադրանքը կամ ազատության կամայական սահմանափակումը, անկախ նրանից, թե այն տեղի է ունենում հրապարակայնորեն, թե մասնավոր կյանքում (United Nations, 1993, United Nations, 1996, WHO, 2016): Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունը, որը հանդիսանում է գենդերային բռնության հիմնական ձևերից մեկը, ունի բացասական առողջական հետևանքներ, մասնավորապես կանանց վերարտադրողական առողջության և նրանց երեխաների ֆիզիկական, զգացմունքային և մտավոր առողջության համար: ՀԺԱՀ 2015-16-ը ներառում էր առանձին բաժին ընտանեկան բռնության վերաբերյալ, որի հարցերը տրվում էին 15-49 տարեկան կանանց՝ Հայաստանում ընտանեկան բռնության տարածվածությունը գնահատելու նպատակով:

**14.1 ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Ընտանեկան բռնության վերաբերյալ ճշգրիտ, հուսալի և էթիկական տվյալների հավաքագրումը որոշակի մարտահրավերներ է առաջադրում, քանի որ տարբեր մշակույթներում և տարբեր անհատների համար բռնության ընկալումը տարբեր է: Ի լրումն վերոնշյալին՝ այնտեղ, որտեղ կա բռնություն, սովորաբար կա նաև այդ բռնությունը թաքցնելու և լռելու սովորություն, իսկ դա կարող է ազդել տվյալների հավաքագրման գործընթացի վրա: Հարցվողների և հարցազրուցավարների անվտանգության ապահովումն ընտանեկան բռնության բաժնի հարցերին պատասխանելիս, ընտանեկան բռնության մասին հայտնած կանանց պաշտպանությունը, իրենց վերապրած բռնության մասին պատմող կանանց կրկնակի անգամ ճնշման ենթակելու վտանգը նվազեցնելը հանդիսանում են առանձնահատուկ էթիկական մտահոգություններ:

### 14.1.1 Բռնության գնահատման ճշգրիտ միջոցների օգտագործում

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում երբևէ ամուսնացած կանանցից հավաքագրվել են տեղեկություններ այն մասին, թե արդյոք նրանք ենթարկվել են բռնության իրենց ներկա և նախկին ամուսնու կամ որևէ այլ անձի կողմից: Իսկ երբևէ չամուսնացած կանայք հարցվել են, թե արդյոք ենթարկվել են բռնության որևէ անձի կողմից: Քանի որ միջազգային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գուզրնկերոջ կողմից կատարված բռնությունը ընտանեկան բռնության ամենատարածված ձևերից մեկն է, հատկապես կանանց նկատմամբ կատարված բռնությունը, գուզրնկերոջ կողմից կատարված բռնության վերաբերյալ տեղեկություններն առավել մանրամասնորեն են գնահատվել, քան այլ անձանց կողմից կատարված բռնությունը: Գնահատումը կատարվել է՝ օգտագործելով «Կոնֆլիկտների մարտավարության սանդղակ»-ի (Strauss, 1990) կրճատված և փոփոխված տարբերակը: Մասնավորապես՝ ներկայում ամուսնացած կանանց համար ներկա ամուսնու/գուզրնկերոջ կողմից կատարված բռնությունը, իսկ նախկինում ամուսնացած կանանց համար վերջին ամուսնու/գուզրնկերոջ կողմից կատարված բռնությունը գնահատվել է՝ ուղղելով երբևէ ամուսնացած կանանց հարցերի հետևյալ շարքը.

Ձեր (վերջին) ամուսինը/գուզրնկերը երբևէ Ձեր նկատմամբ կիրառե՞լ է ներքոնշյալներից որևէ մեկը.

- (ա) Հրե՞լ է Ձեզ, թափահարե՞լ է, որևէ առարկա՞ է նետել Ձեզ վրա:
- (բ) Ապտակե՞լ է Ձեզ:
- (գ) Ուռրե՞լ է Ձեր ձեռքը կամ քաշե՞լ է Ձեր մազերը:
- (դ) Հարվածե՞լ է Ձեզ բռունցքով կամ որևէ այլ առարկայով, որը կարող էր Ձեզ վնասել:
- (ե) Ոտքով հարվածե՞լ է Ձեզ, քաշքշե՞լ է կամ ծեծե՞լ է:
- (զ) Փորձե՞լ է Ձեզ խեղդել կամ վառել:
- (է) Սպառնացե՞լ է կամ հարձակվե՞լ է Ձեզ վրա դանակով, հրացանով կամ որևէ այլ զենքով:
- (ը) Ուժով ստիպե՞լ է Ձեզ սեռական հարաբերություն ունենալ իր հետ՝ Ձեր կամքին հակառակ:
- (թ) Ուժով ստիպե՞լ է Ձեզ որևէ այլ տեսակի սեռական գործողություն կատարել՝ Ձեր կամքին հակառակ:
- (ժ) Սպառնալիքների կամ այլ ճանապարհով ստիպե՞լ է Ձեզ այլ տեսակի սեռական գործողություններ կատարել՝ Ձեր կամքին հակառակ:

Վերոնշյալ կետերից յուրաքանչյուրի համար, եթե հնչել է «այո» պատասխանը, կինը հարցվել է, թե վերջին 12 ամիսների ընթացքում որքան հաճախ է նման բան պատահել (հաճախ, երբեմն, երբեք): (ա)-ից (է) կետերից որևէ մեկի համար նշված «այո» պատասխանը վկայում է ֆիզիկական բռնության մասին, իսկ (ը), (թ) կամ (ժ) կետերից որևէ մեկի համար նշված «այո»-ն վկայում է սեռական բռնության մասին:

Նմանապես՝ երբևէ ամուսնացած կանանց շրջանում զգացմունքային բռնությունը գնահատվել է հետևյալ հարցերի միջոցով.

Ձեր (վերջին) ամուսինը/գուզրնկերը երբևէ.

- (ա) Ասե՞լ է կամ արե՞լ է որևէ բան այլ մարդկանց ներկայությամբ՝ Ձեզ նվաստացնելու համար:
- (բ) Սպառնացե՞լ է, որ կվնասի Ձեզ կամ այն մարդկանց, ում Դուք սիրում եք:
- (գ) Վիրավորե՞լ է Ձեզ կամ ստիպե՞լ է վատ զգալ:

Բռնության տարբեր ձևերը գնահատելու համար առանձին գործողությունների մասին հարցնելու այս մոտեցումն այն առանձնահատկությունն ունի, որ որևէ կերպ չի ազդում «բռնություն»

ընդհանրական տերմինի վերաբերյալ գոյություն ունեցող տարբեր ընկալումների վրա: Գործողությունների նման լայն շրջանակ ներառելը նաև այն առավելությունն ունի, որ հարցվողին բազմաթիվ հնարավորություններ են տրվում բնության ցանկացած արտահայտություն բացահայտելու համար:

Ի լրումն երբևէ ամուսնացած կանանց տրվող այս հարցերին՝ բոլոր կանայք հարցվել են այլ անձանց (ոչ ներկա կամ նախկին ամուսնու/զուգընկերոջ) կողմից ֆիզիկական կամ սեռական բնության կիրառման մասին: Այն հարցվողները, ովքեր, ի պատասխան այս հարցին նշել են «այո», հետո հարցվել են, թե ում կողմից է կատարվել բնությունը, և հետագոտությունը նախորդող 12 ամիսների ընթացքում որքան հաճախ է նման բան տեղի ունեցել: Բնության տարբեր ձևերի մասին հայտնած հարցվողներին խնդրել են ասել, թե ով է եղել բնություն կիրառողը:

Չնայած հարցադրումների նման մոտեցումը համարվում է օպտիմալ՝ բնության դեպքերի մասին չհայտնելու հավանականությունը, մասնավորապես սեռական բնության, չի կարող ամբողջովին վերահսկվել ցանկացած հետագոտության ընթացքում, և այս հետագոտությունը ևս բացառություն չէ:

#### 14.1.2 Էթիկական նկատառումներ

Գիտակցելով բնության վերաբերյալ տվյալներ հավաքագրելու հետ կապված մարտահրավերները՝ ՀԺԱՀ 2015-16-ի հարցազրուցավարներն անցել են հատուկ հրահանգավորում ընտանեկան բնության վերաբերյալ հարցադրումները ներկայացնելու զգայունության մասին, բացի այդ նրանք նաև հրահանգավորվել են, թե ինչպես է պետք ապահովել առանձնությունը հարցվողի հետ և ստեղծել փոխըմբռնման միջավայր: Փոխըմբռնումը, գաղտնիությունը և առանձնությունը հարցվողի մոտ վստահություն ստեղծելու առանցքային պայմաններ են, որոնց առկայության պարագայում նա կկարողանա կիսվել իր հետ պատահած դեպքերով: Բնության վերաբերյալ հարցերը հարցաթերթի վերջում ներառելով՝ հարցազրուցավարին տրվում է ժամանակ մտերմության որոշակի աստիճան ստեղծելու, որը հետագայում պետք է օգնեք հարցվողներին պատմելու իրենց հետ պատահած բնության դեպքերի մասին, եթե նման դեպքեր եղել են: Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ ընտանեկան բնության վերաբերյալ հետագոտությունների համար գոյություն ունեցող էթիկական և անվտանգության խորհուրդների (WHO, 2001)՝ հետագոտության շրջանակում նաև ձեռնարկվել են հետևյալ «պաշտպանական միջոցները».

1. Գաղտնիությունն ապահովելու նպատակով յուրաքանչյուր տնային տնտեսությունից միայն մեկ կնոջ են տրվել բնության վերաբերյալ հարցերը: Մեկ կնոջ պատահական ընտրությունն իրականացվել է ընտրության պարզ ընթացակարգի միջոցով՝ հիմնված Քիշի աղյուսակի վրա, որը ներառված է եղել տնային տնտեսության հարցաթերթում (Kish, 1965):
2. Հարցազրույցի սկզբում ձեռք բերված համաձայնությունից բացի, որպես լրացուցիչ համաձայնություն ստանալու միջոց, հարցվողը տեղյակ է պահվել, որ հարցերը զգայուն բնույթ են կրում, և որ նրա պատասխանների գաղտնիությունն ապահովված է:
3. Բնության վերաբերյալ բաժինը լրացվել է միայն այն դեպքում, երբ հնարավոր է եղել հարցվողի հետ առանձին մնալ: Հարցազրուցավարները հրահանգավորված են եղել բաց թողնել այս բաժինը, շնորհակալություն հայտնել հարցվողին և ավարտել հարցազրույցը, եթե հնարավոր չի եղել հարցվողի հետ առանձին մնալ:

Որպես տարատեսակ նախազգուշական միջոցների և սահմանափակումների արդյունք՝ ընդհանուր առմամբ 15-49 տարեկան 4,592 կին (3,208 երբևէ ամուսնացած կին) պատասխանել են ընտանեկան բնության բաժնի հարցերին: Յուրաքանչյուր տնային տնտեսությունում միայն մեկ կնոջ ընտրությունը համապատասխանեցնելու համար օգտագործվել են հատուկ կառուցված կշիռներ՝

ապահովելու համար այն, որ «Ընտանեկան բռնություն» բաժնի հարցերին պատասխանած կանանց ենթաընտրանքը լինի ազգային մակարդակով ներկայացուցչական: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այս գլխում «ամուսին» տերմինը վերաբերում է հարցվողի հետ բնակվող ցանկացած տղամարդու, որի հետ հարցվողը պաշտոնական կամ ոչ պաշտոնական միության մեջ է:

## 14.2 ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ

Աղյուսակ 14.1-ը ցույց է տալիս այն կանանց տոկոսը, ովքեր 15 տարեկանից սկսած երբևէ ենթարկվել են ֆիզիկական բռնության, և այն կանանց տոկոսը, ովքեր ենթարկվել են ֆիզիկական բռնության հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում՝ ըստ հիմնական բնութագրիչների: Կանանց վեց տոկոսը, 15 տարեկանից սկսած, ենթարկվել է ֆիզիկական բռնության, իսկ 3 տոկոսը ենթարկվել է ֆիզիկական բռնության հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում: Ընդհանուր առմամբ, կանանց 1 տոկոսն է նշել, որ վերջին 12 ամիսների ընթացքում հաճախ է ենթարկվել ֆիզիկական բռնության, իսկ 2 տոկոսն ասել է, որ վերոնշյալ ժամանակահատվածում երբեմն է ենթարկվել ֆիզիկական բռնության:

Կանանց տոկոսը, ովքեր նշել են, որ, 15 տարեկանից սկսած, երբևէ ենթարկվել են ֆիզիկական բռնության, աճում է տարիքին զուգընթաց. 15-19 տարեկան տարիքային խմբում չի արձանագրվել բռնության ոչ մի դեպք, մինչդեռ 40-49 տարեկան կանանց 10 տոկոսը նշել է ֆիզիկական բռնության ենթարկվելու մասին: Նմանատիպ միտում է դիտարկվում նաև՝ ըստ կնոջ ունեցած երեխաների թվաքանակի: Ֆիզիկական բռնության դեպքերը տարբերվում են ըստ մարզերի՝ կազմելով ամենացածրը՝ 0 տոկոս Սյունիքի և 1 տոկոս Տավուշի մարզերում, և ամենաբարձրը՝ 18 տոկոս Արագածոտնի մարզում: Ամուսնալուծված, բաժանված կամ այրի կանանց 35 տոկոսը 15 տարեկանից սկսած ենթարկվել է ֆիզիկական բռնության՝ համեմատած ներկայում ամուսնացած կանանց 6 տոկոսի հետ: 15 տարեկանից սկսած երբևէ ֆիզիկական բռնության ենթարկված կանանց մասնաբաժինը միտում ունի նվազելու՝ կրթության և բարեկեցության աճին զուգընթաց:

15 տարեկանից սկսած՝ երբևէ որևէ ֆիզիկական բռնության ենթարկվածներից գրեթե բոլոր երբևէ ամուսնացած կանայք են: Հետևաբար, զարմանալի չէ, որ բռնություն իրականացողների մեծ մասը հանդիսանում է հարցվողի ներկա ամուսինը (60 տոկոս) կամ նախկին ամուսինը (39 տոկոս): Կանանց 1-ական տոկոսն էլ նշել է, որ իրենց նկատմամբ բռնություն է իրականացրել նախկին ընկերը, սկեսուրը և քույրը/եղբայրը (տվյալները ցուցադրված չեն):



**Աղյուսակ 14.1 Ֆիզիկական բռնության դեպքերը**

15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր 15 տարեկանից սկսած երբևէ ենթարկվել են ֆիզիկական բռնության, և տոկոսը, ովքեր ենթարկվել են ֆիզիկական բռնության հետագոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	15 տարեկանից սկսած երբևէ ֆիզիկական բռնության ենթարկվածների տոկոս <sup>1</sup>	Վերջին 12 ամիսների ընթացքում ֆիզիկական բռնության ենթարկվածների տոկոս			
		Հաճախ	Երբեմն	Հաճախ կամ երբեմն <sup>2</sup>	Կանանց թվաքանակ
<b>Տարիք</b>					
15-19	0.0	0.0	0.0	0.0	534
20-24	1.2	0.1	0.9	1.0	724
25-29	4.1	0.1	1.6	1.7	827
30-39	8.5	0.7	2.8	3.5	1,399
40-49	9.7	1.2	2.7	3.8	1,109
<b>Բնակավայր</b>					
Քաղաքային	5.2	0.5	1.6	2.1	2,741
Գյուղական	6.8	0.6	2.4	3.0	1,851
<b>Մարզ</b>					
Երևան	4.6	0.3	1.7	2.0	1,522
Արագածոտն	17.5	1.2	12.4	13.6	241
Արարատ	13.0	1.7	1.8	3.5	421
Արմավիր	2.2	0.4	0.3	0.7	442
Գեղարքունիք	4.3	0.0	1.1	1.1	365
Լոռի	10.1	1.1	3.7	4.8	224
Կոտայք	6.1	0.0	1.1	1.1	513
Շիրակ	3.4	1.3	1.1	2.4	381
Սյունիք	0.0	0.0	0.0	0.0	181
Վայոց ձոր	8.6	0.0	1.3	1.3	91
Տավուշ	1.2	0.2	0.5	0.7	211
<b>Ամուսնական կարգավիճակ</b>					
Երբևէ չամուսնացած	0.1	0.0	0.1	0.1	1,384
Ամուսնացած/համատեղ բնակվող	5.8	0.4	2.2	2.6	2,923
Ամուսնալուծված/բաժանված/այրի	35.0	4.9	7.9	12.8	285
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>					
0	0.4	0.0	0.0	0.0	1,600
1-2	8.5	0.7	2.9	3.7	2,219
3-4	9.5	0.7	2.8	3.6	737
5+	(14.7)	(8.3)	(5.0)	(13.3)	35
<b>Զբաղվածություն</b>					
Աշխատում է դրամական վարձատրությամբ	7.1	0.8	1.5	2.3	1,606
Աշխատում է ոչ դրամական վարձատրությամբ	5.7	0.4	0.4	0.8	260
Չի աշխատում	5.1	0.4	2.3	2.7	2,726
<b>Կրթություն</b>					
Հիմնական	8.6	1.0	1.1	2.0	300
Միջնակարգ	7.6	0.5	2.6	3.2	1,810
Միջին մասնագիտական	6.6	0.8	2.4	3.2	1,020
Բարձրագույն	2.6	0.3	0.9	1.2	1,458
<b>Բարեկեցության քվինտիլ</b>					
Ամենացածր	9.0	1.1	3.4	4.5	812
Երկրորդ	5.9	0.4	1.6	1.9	930
Միջին	8.0	0.8	2.3	3.2	860
Չորրորդ	3.5	0.2	1.0	1.2	956
Ամենաբարձր	3.7	0.3	1.6	1.9	1,034
Ընդամենը	5.9	0.5	1.9	2.5	4,592

Նշում: Ընդամենը ներառում է կանանց 4 դեպք՝ առանց որևէ կրթության: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

<sup>1</sup>Ներառում է բռնությունը վերջին 12 ամիսների ընթացքում: Այն կանանց համար, ովքեր ամուսնացել են մինչև 15 տարեկանը և նշել են ֆիզիկական բռնության ենթարկվելու մասին, հնարավոր է, որ բռնությունը տեղի ունեցած լինի մինչև 15 տարեկանը:

<sup>2</sup>Ներառում է այն կանանց, ովքեր նշել են վերջին 12 ամիսների ընթացքում ֆիզիկական բռնության ենթարկվելու մասին, սակայն ուն համար բռնության հաճախականությունը հայտնի չէ:

### 14.3 ՄԵՌԱԿԱՆ ԲՈՒՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ

Աղյուսակ 14.2-ը ցույց է տալիս այն կանանց տոկոսը, ովքեր երբևէ ենթարկվել են սեռական բռնության, և այն կանանց տոկոսը, ովքեր ենթարկվել են սեռական բռնության հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում՝ ըստ հիմնական բնութագրիչների:

Արդյունքները ցույց են տալիս, որ 15-49 տարեկան կանանց 1 տոկոսը երբևէ ենթարկվել է սեռական բռնության, իսկ նրանց շրջանում շատ քիչ կանանց դեպքում է բռնությունը տեղի ունեցել վերջին 12 ամիսների ընթացքում: Երբևէ սեռական բռնության ենթարկված կանանց տոկոսն աճում է տարիքին զուգընթաց՝ կազմելով 2 տոկոս 40-49 տարեկան կանանց շրջանում: Ինչպես ֆիզիկական բռնության դեպքում, սեռական բռնության ենթարկվելու մասին ևս ավելի շատ են նշել նախկինում ամուսնացած կանայք, քան ներկայում ամուսնացածները (համապատասխանաբար 6 և 1 տոկոս): Սեռական բռնությունն առավել տարածված է Արագածոտնի (4 տոկոս), Արարատի և Լոռու (2-ական տոկոս) մարզերում:

Ինչպես ֆիզիկական բռնության ենթարկված կանանց դեպքում, այնպես էլ սեռական բռնության ենթարկվածների դեպքում, գրեթե բոլորը երբևէ ամուսնացած կանայք են, ովքեր նշել են, որ բռնություն իրականացնողը ներկա կամ նախկին ամուսինն է կամ ընկերը (տվյալները ցուցադրված չեն):

**Աղյուսակ 14.2 Սեռական բռնության դեպքերը**

Հիմնական բնութագրիչներ	Երբևէ սեռական բռնության ենթարկվածների տոկոս		
	Երբևէ <sup>1</sup>	Վերջին 12 ամիսների ընթացքում	Կանանց թվաքանակ
<b>Տարիք</b>			
15-19	0.0	0.0	534
20-24	0.1	0.1	724
25-29	0.4	0.3	827
30-39	1.2	0.4	1,399
40-49	1.8	0.6	1,109
<b>Բնակավայր</b>			
Քաղաքային	0.8	0.2	2,741
Գյուղական	1.0	0.4	1,851
<b>Մարզ</b>			
Երևան	0.5	0.2	1,522
Արագածոտն	3.7	0.9	241
Արարատ	1.9	1.3	421
Արմավիր	0.4	0.1	442
Գեղարքունիք	0.6	0.3	365
Լոռի	1.8	0.3	224
Կոտայք	1.2	0.1	513
Շիրակ	0.0	0.0	381
Սյունիք	0.0	0.0	181
Վայոց ձոր	1.0	0.0	91
Տավուշ	0.6	0.4	211
<b>Ամուսնական կարգավիճակ</b>			
Երբևէ չամուսնացած	0.1	0.0	1,384
Ամուսնացած/համատեղ բնակվող	0.7	0.3	2,923
Ամուսնալուծված/բաժանված/այրի	6.3	1.8	285
<b>Զբաղվածություն</b>			
Աշխատում է դրամական վարձատրությամբ	1.4	0.7	1,606
Աշխատում է ոչ դրամական վարձատրությամբ	0.4	0.0	260
Չի աշխատում	0.6	0.1	2,726
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>			
0	0.2	0.0	1,600
1-2	1.2	0.4	2,219
3-4	1.3	0.4	737
5+	(1.4)	(1.4)	35
<b>Կրթություն</b>			
Հիմնական	2.1	0.7	300
Միջնակարգ	0.9	0.3	1,810
Միջին մասնագիտական	1.5	0.6	1,020
Բարձրագույն	0.1	0.0	1,458
<b>Բարեկեցության քվինտիլ</b>			
Ամենացածր	1.4	0.5	812
Երկրորդ	1.1	0.6	930
Միջին	1.1	0.2	860
Չորրորդ	0.4	0.1	956
Ամենաբարձր	0.4	0.2	1,034
Ընդամենը	0.9	0.3	4,592

Նշում: Ընդամենը ներառում է կանանց 4 դեպք՝ առանց որևէ կրթության: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: <sup>1</sup> Ներառում է բռնությունը վերջին 12 ամիսների ընթացքում:

#### 14.4 ԲՈՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՅՔ

Աղյուսակ 14.3-ը ներկայացնում է տեղեկատվություն բռնության որևէ տեսակի ենթարկված 15-49 տարեկան կանանց վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, կանանց 6 տոկոսը նշել է, որ ենթարկվել է կա՛մ ֆիզիկական, կա՛մ սեռական բռնության, կա՛մ բռնության այս երկու տեսակներին էլ: Կանանց 5 տոկոսը ենթարկվել է միայն ֆիզիկական բռնության, 1 տոկոսից պակասը՝ միայն սեռական բռնության, իսկ 1 տոկոսը՝ ն՝ ֆիզիկական, ն՝ սեռական բռնության: Տարիքին զուգընթաց՝ ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված կանանց մասնաբաժինը կտրուկ աճում է:

**Աղյուսակ 14.3 Բռնության տարբեր տեսակների ենթարկված կանայք**

15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր ենթարկվել են բռնության տարբեր տեսակների, ըստ ընթացիկ տարիքի, Հայաստան, 2015-16 թթ.

Տարիք	Միայն ֆիզիկական բռնություն	Միայն սեռական բռնություն	Ֆիզիկական և սեռական բռնություն	Ֆիզիկական կամ սեռական բռնություն	Կանանց թվաքանակ
15-19	0.0	0.0	0.0	0.0	534
15-17	0.0	0.0	0.0	0.0	321
18-19	0.1	0.0	0.0	0.1	212
20-24	1.1	0.0	0.1	1.2	724
25-29	3.8	0.1	0.3	4.2	827
30-39	7.5	0.1	1.0	8.6	1,399
40-49	8.0	0.1	1.7	9.8	1,109
Ընդամենը	5.1	0.1	0.8	5.9	4,592

#### 14.5 ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Այն հարցվողները, ովքեր երբևէ եղել են հղի, պատասխանել են, թե արդյոք հղիության ընթացքում երբևէ ենթարկվել են ֆիզիկական բռնության, թե ոչ:

Աղյուսակ 14.4-ը ցույց է տալիս, որ կանանց 1 տոկոսը հղիության ընթացքում ենթարկվել է ֆիզիկական բռնության: Այս տոկոսն աճում է տարիքին զուգընթաց՝ կազմելով 1 տոկոսից էլ պակաս 20-24 տարեկան կանանց շրջանում և 2 տոկոս՝ 40-49 տարեկանների շրջանում: Նախկինում ամուսնացած կանանց 8 տոկոսը նշել է, որ հղիության ընթացքում ենթարկվել է ֆիզիկական բռնության՝ համեմատած ներկայում ամուսնացած կանանց 1 տոկոսի հետ: Հղիության ընթացքում ֆիզիկական բռնության ենթարկվելու ցուցանիշն ամենաբարձրն է Արարատի, Լոռու և Կոտայքի մարզերում (3-ական տոկոս): Հղիության ընթացքում բռնության ենթարկվելու դեպքերը միտում ունեն նվազելու՝ բարեկեցության աճին զուգընթաց, սակայն կրթական մակարդակից կախված էապես չեն փոփոխվում:

**Աղյուսակ 14.4 Բռնությունը հղիության ընթացքում**

15-49 տարեկան երբևէ հղիություն ունեցած կանանց տոկոսը, ովքեր հղիության ընթացքում ենթարկվել են ֆիզիկական բռնության, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Հղիության ընթացքում բռնության ենթարկվածների տոկոս	Երբևէ հղիություն ունեցած կանանց թվաքանակ
<b>Տարիք</b>		
15-19	*	21
20-24	0.4	242
25-29	0.4	568
30-39	1.4	1,218
40-49	1.5	1,019
<b>Բնակավայր</b>		
Քաղաքային	1.2	1,779
Գյուղական	1.2	1,290
<b>Մարզ</b>		
Երևան	0.5	943
Արագածոտն	1.3	144
Արարատ	3.1	300
Արմավիր	0.5	317
Գեղարքունիք	0.0	224
Լոռի	3.0	127
Կոտայք	2.5	382
Շիրակ	1.1	276
Սյունիք	0.0	131
Վայոց ձոր	1.2	66
Տավուշ	0.7	159
<b>Ամուսնական կարգավիճակ</b>		
Երբևէ չամուսնացած	*	1
Ամուսնացած/ համատեղ բնակվող	0.5	2,803
Ամուսնալուծված/ բաժանված/ այրի	8.2	265
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>		
0	2.0	77
1-2	1.1	2,219
3-4	1.3	737
5+	(1.4)	35
<b>Կրթություն</b>		
Հիմնական	1.5	171
Միջնակարգ	1.1	1,309
Միջին մասնագիտական	2.3	759
Բարձրագույն	0.2	826
<b>Բարեկեցության քվինտիլ</b>		
Ամենացածր	1.6	569
Երկրորդ	1.4	641
Միջին	1.6	578
Չորրորդ	1.1	591
Ամենաբարձր	0.3	690
Ընդամենը	1.2	3,069

Նշում: Ընդամենը ներառում է կանանց 4 դեպք՝ առանց որևէ կրթության: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

## 14.6 ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՍՆՈՒ/ԿՈՂԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ

Իրենց կանանց վարքագիծը վերահսկելու ամուսինների փորձերը կարող են հանդիսանալ կարևոր նախազգուշացնող նշաններ նրանց հարաբերություններում բնության առկայության մասին: ՀԺԱՀ 2015-16-ում ներառված էին մի շարք հարցեր ամուսնու կողմից իրականացվող վերահսկողության աստիճանը պարզելու համար: Վերահսկողությունը շատ հաճախ արտահայտվում է ծայրահեղ սեփականատիրության կամ խանդի տեսքով, կամ ընկերներից ու ընտանիքից կնոջը մեկուսացնելու միջոցով: Որոշելու համար ամուսնու կողմից իրականացվող վերահսկողության աստիճանը՝ երբևէ ամուսնացած կանայք հարցվել են, թե արդյոք իրենց ներկա կամ նախկին ամուսինը կամ գուգրնկերը դրսևորել է վերահսկման հետևյալ վարքագծերից յուրաքանչյուրը. (1) նա խանդում է կամ բարկանում, եթե կինը խոսում է այլ տղամարդկանց հետ, (2) նա հաճախ է կնոջը մեղադրում անհավատարիմ լինելու մեջ, (3) նա թույլ չի տալիս կնոջը հանդիպել ընկերուհիների հետ, (4) նա փորձում է սահմանափակել կնոջ շփումն ընտանիքի հետ, (5) նա պնդում է, որ կինն իրեն տեղյակ պահի, թե որտեղ է գտնվում ցանկացած պահի: Քանի որ նման վարքագծերի կոնցենտրացումն ավելի էական է, քան դրանցից միայն մեկի առկայությունը, այն հարցվողների մասնաբաժինը, ում ամուսինը դրսևորում է վերոնշյալ վարքագծերից առնվազն երեք, մասնավորապես կարևորվում է: Աղյուսակ 14.5-ը ցույց է տալիս երբևէ ամուսնացած կանանց տոկոսը, ում ներկա ամուսնու մոտ առկա են վարքագծի վերոնշյալ դրսևորումներից յուրաքանչյուրն ըստ հիմնական բնութագրիչների:

**Աղյուսակ 14.5 Վերահսկողություն ամուսնու/կողակցի կողմից**

15-49 տարեկան երբևէ ամուսնացած կանանց տոկոսը, ում ամուսինը/գուզընկերը երբևէ դրսևորել է վերահսկողական վարքագծի կոնկրետ տեսակ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Կանանց տոկոսը, ում ամուսինը/գուզընկերը							
	Խանդում է կամ բարկանում, եթե կինը խոստում է այլ տղամարդկանց հետ	Հաճախ է կնոջը մեղադրում անհավատարիմ լինելու մեջ	Թույլ չի տալիս կնոջը հանդիպել ընկերուհիների հետ	Փորձում է սահմանափակել կնոջ շփումն ընտանիքի հետ	Պնդում է, որ կինն իրեն տեղյակ պահի, թե որտեղ է գտնվում ցանկացած պահի	Դրսևորում է վարքագծի նշված 3 կամ ավելի տեսակները	Չի դրսևորում վարքագծի նշված ոչ մեկը	Երբևէ ամուսնացած կանանց թվաքանակ
<b>Տարիք</b>								
15-19	(36.9)	(0.0)	(3.1)	(0.0)	(38.2)	(3.1)	(57.5)	27
20-24	36.9	0.5	8.1	3.0	39.3	6.2	49.5	278
25-29	42.5	1.7	8.1	2.8	42.5	8.0	43.6	610
30-39	37.1	3.5	8.3	3.9	39.5	8.3	49.0	1,248
40-49	29.1	2.3	7.3	2.7	34.5	7.3	56.9	1,045
<b>Բնակավայր</b>								
Քաղաքային	36.6	3.0	7.0	3.7	39.1	7.6	48.6	1,872
Գյուղական	34.0	1.8	9.2	2.5	37.5	7.8	53.5	1,337
<b>Մարզ</b>								
Երևան	36.9	3.2	5.2	3.2	41.6	7.0	45.8	995
Արագածոտն	69.9	4.3	18.6	6.5	59.2	18.3	19.8	146
Արարատ	44.1	2.5	17.7	5.4	50.5	14.4	39.3	306
Արմավիր	20.0	0.8	2.6	0.7	14.5	1.5	76.1	336
Գեղարքունիք	43.7	3.7	16.0	3.3	38.4	17.0	47.5	236
Լոռի	51.1	2.2	8.4	4.3	48.3	7.8	39.5	132
Կոտայք	36.5	1.7	3.3	2.0	42.8	3.3	49.4	393
Շիրակ	30.4	2.9	12.9	5.5	49.4	8.8	42.1	288
Սյունիք	9.8	0.6	0.7	0.7	4.1	1.5	89.4	141
Վայոց ձոր	50.3	3.1	6.7	4.4	41.2	7.9	44.9	68
Տավուշ	10.1	1.7	4.4	1.0	17.6	2.4	76.6	168
<b>Ամուսնական կարգավիճակ</b>								
Ամուսնացած/համատեղ բնակվող	33.4	0.8	6.5	1.8	36.9	5.3	52.0	2,923
Ամուսնալուծված/բաժանված/այրի	56.8	20.5	21.9	17.5	53.7	31.8	36.2	285
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>								
0	33.0	1.8	5.1	1.6	34.9	4.4	53.6	217
1-2	36.9	2.8	7.6	3.5	40.1	7.7	48.6	2,219
3-4	32.3	1.9	9.1	2.8	34.5	8.0	55.4	737
5+	(29.8)	(4.4)	(17.6)	(4.4)	(32.8)	(14.5)	(59.8)	35
<b>Զբաղվածություն</b>								
Աշխատում է դրամական վարձատրությամբ	35.7	3.9	7.5	3.9	39.5	8.6	50.9	1,181
Աշխատում է ոչ դրամական վարձատրությամբ	24.0	2.2	8.1	2.2	21.4	6.2	65.9	241
Չի աշխատում	36.9	1.6	8.1	2.9	40.0	7.3	48.4	1,786
<b>Կրթություն</b>								
Հիմնական	36.2	2.2	11.7	5.6	40.3	12.4	51.6	175
Միջնակարգ	37.8	2.4	10.1	3.3	38.4	9.2	49.7	1,361
Միջին մասնագիտական	34.9	3.0	7.7	3.4	38.3	7.0	50.2	787
Բարձրագույն	32.4	2.3	3.9	2.4	38.3	5.0	52.0	881
<b>Բարեկեցության քվինտիլ</b>								
Ամենացածր	31.6	3.3	10.6	4.4	35.4	9.4	56.2	586
Երկրորդ	36.8	1.1	8.9	2.3	41.0	7.4	49.7	664
Միջին	38.8	3.5	9.0	4.0	39.5	9.6	48.3	608
Չորրորդ	36.0	2.1	7.2	2.5	37.8	6.8	47.9	633
Ամենաբարձր	34.2	2.8	4.4	3.0	38.1	5.6	51.5	717
<b>Կինը վախենում է ամուսնուց/գուզընկերոջից</b>								
Գրեթե միշտ	(81.2)	(58.1)	(61.0)	(62.7)	(76.9)	(72.7)	(17.0)	41
Երբեմն	71.0	7.9	26.2	11.1	65.0	28.3	20.5	452
Երբեք	28.9	0.8	4.0	1.0	33.4	3.2	56.2	2,714
Ընդամենը	35.5	2.5	7.9	3.2	38.4	7.7	50.6	3,208

Նշում: Ամուսինը/գուզընկերը ներկայում ամուսնացած կանանց դեպքում ներկա ամուսինը/գուզընկերն է, իսկ ամուսնալուծված, բաժանված կամ այրի կանանց դեպքում՝ վերջին ամուսինը/գուզընկերը: Ընդամենը ներառում է կանանց 4 դեպք առանց որևէ կրթության և կանանց 1 դեպք. երբ բացակայում է տվյալն այն մասին, թե արդյոք կինը վախենում է ամուսնուց/գուզընկերոջից: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

Կանանց մեծամասնության կողմից նշված վերահսկման ամենատարածված վարքագծի տեսակները հետևյալն են. ամուսինը պնդում է, որ կինն իրեն տեղյակ պահի, թե որտեղ է գտնվում ցանկացած պահի (38 տոկոս), ամուսինը խանդում է կամ բարկանում, եթե կինը խոսում է այլ տղամարդկանց հետ (36 տոկոս), և ամուսինը թույլ չի տալիս կնոջը հանդիպել ընկերուհիների հետ (8 տոկոս): Ընդհանուր առմամբ, երբևէ ամուսնացած կանանց 8 տոկոսը նշել է, որ իրենց ամուսինը դրսևորել է վարքագծի նշված տեսակներից երեքը կամ ավելին, իսկ 51 տոկոսն ասել է, որ իրենց ամուսինը չի դրսևորել վարքագծի նշված տեսակներից ոչ մեկը:

Արագածոտնի (18 տոկոս) և Գեղարքունիքի (17 տոկոս) մարզերում բնակվող կանայք և ամուսնալուծված կամ բաժանված կանայք (32 տոկոս) ամենաշատն են նշել, որ իրենց ամուսինը դրսևորել է վարքագծի նշված տեսակներից երեքը կամ ավելին՝ համեմատած մյուս կանանց հետ: Ընդհանուր առմամբ, ավելի կրթված և ավելի բարեկեցիկ կանայք ավելի քիչ են նշել, որ իրենց ամուսինը դրսևորել է վարքագծի նշված տեսակներից երեքը կամ ավելին, քան պակաս կրթված և պակաս բարեկեցիկ կանայք: Այն հանգամանքը, որ ամուսինը դրսևորել է վերահսկման վարքագծի նշված տեսակներից երեքը կամ ավելին, սերտորեն կապված է նրա հետ, որ կինը վախենում է ամուսնուց: Այն կանանց շրջանում, ովքեր նշել են, որ երբեք չեն վախենում իրենց ամուսնուց, միայն 3 տոկոսն է ասել, որ ամուսինը դրսևորել է վարքագծի նշված տեսակներից երեքը կամ ավելին՝ համեմատած այն կանանց 28 տոկոսի հետ, ովքեր երբեմն վախենում են իրենց ամուսնուց:

#### **14.7 ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԲՐՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ**

Ամուսնական բռնության տարբեր տեսակներն իրարամերժ չեն, և կանայք հնարավոր է նշած լինեն, որ ենթարկվել են բռնության մի քանի ձևերի: Աղյուսակ 14.6-ը ցույց է տալիս 15-49 տարեկան երբևէ ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր ամուսնու կողմից ենթարկվել են բռնության տարբեր տեսակների ամուսնության ամբողջ ընթացքում կամ հետագոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ներկայում ամուսնացած կանայք նշել են իրենց ներկա ամուսնու կողմից իրականացված բռնության մասին, իսկ այրի, ամուսնալուծված կամ բաժանված կանայք՝ իրենց վերջին կողակցի կողմից իրականացված բռնության: Աղյուսակի վերջին հատվածը ներկայացնում է տեղեկատվություն հարցվողի ցանկացած ամուսնու կողմից իրականացված բռնության մասին՝ ի հակադրություն միայն ներկա կամ վերջին ամուսնու կողմից իրականացված բռնությանը:

**Աղյուսակ 14.6 Ամուսնական բռնության ձևերը**

15-49 տարեկան երբևէ ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր երբևէ կամ հետագոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում ենթարկվել են բռնության տարբեր ձևերի իրենց ամուսնու/գուզրնկերոջ կողմից, Հայաստան, 2015-16 թթ.

Բռնության տեսակ	Երբևէ	Վերջին 12 ամիսների ընթացքում		
		Հաճախ	Երբեմն	Հաճախ կամ երբեմն
<b>Ամուսնական բռնություն, որն իրականացվել է ներկա կամ վերջին ամուսնու/գուզրնկերոջ կողմից</b>				
<b>Ֆիզիկական բռնություն</b>				
Որևէ ֆիզիկական բռնություն	8.0	0.8	2.7	3.5
Հրել է նրան, թափահարել է, ինչ-որ առարկա է նետել նրա վրա	5.8	0.6	2.0	2.7
Սպտակել է նրան	6.5	0.7	2.0	2.7
Ոլորել է նրա ձեռքը կամ քաշել է մագերը	3.2	0.4	0.8	1.3
Հարվածել է նրա բռունցքով կամ որևէ այլ առարկայով, որը կարող էր վնասել նրան	2.1	0.4	0.4	0.7
Ոտքով հարվածել է նրան, քաշքշել է կամ ծեծել	1.5	0.4	0.2	0.6
Փորձել է նրան խեղդել կամ վառել	0.5	0.2	0.0	0.2
Սպառնացել է կամ հարձակվել է նրա վրա դանակով, հրացանով կամ որևէ այլ զենքով	0.5	0.1	0.1	0.2
<b>Մեռական բռնություն</b>				
Որևէ սեռական բռնություն	1.1	0.2	0.1	0.3
Ուժով ստիպել է նրան սեռական հարաբերություն ունենալ իր հետ նրա կամքին հակառակ	1.1	0.2	0.1	0.3
Ուժով ստիպել է նրան որևէ այլ տեսակի սեռական գործողություն կատարել նրա կամքին հակառակ	0.4	0.1	0.1	0.2
Սպառնալիքների կամ այլ ճանապարհով ստիպել է նրան այլ տեսակի սեռական գործողություններ կատարել նրա կամքին հակառակ	0.4	0.1	0.1	0.2
<b>Զգացմունքային բռնություն</b>				
Որևէ զգացմունքային բռնություն	11.4	1.3	5.1	6.4
Սնել է կամ արել է որևէ բան այլ մարդկանց ներկայությամբ նրան նվաստացնելու համար	5.7	0.8	2.2	3.0
Սպառնացել է, որ կվնասի նրան կամ այն մարդկանց, ում նա սիրում է	1.5	0.3	0.4	0.8
Վիրավորել է նրան կամ ստիպել է վատ զգալ	10.5	1.2	4.6	5.8
Ֆիզիկական և/կամ սեռական բռնության որևէ ձև	8.1	0.8	2.7	3.5
Ֆիզիկական և/կամ սեռական և/կամ զգացմունքային բռնության որևէ ձև	14.0	1.6	6.0	7.6
<b>Ամուսնական բռնություն, որն իրականացվել է ցանկացած ամուսնու/գուզրնկերոջ կողմից</b>				
Ֆիզիկական բռնություն	8.2	կճ	կճ	3.5
Մեռական բռնություն	1.1	կճ	կճ	0.3
Ֆիզիկական և/կամ սեռական բռնություն	8.2	կճ	կճ	3.5
Երբևէ ամուսնացած կանանց թվաքանակ	3,208	3,208	3,208	3,208

կճ = կիրառելի չէ

Երբևէ ամուսնացած կանանց 8 տոկոսը նշել է, որ երբևէ ներկա կամ վերջին ամուսնու կողմից ենթարկվել է ֆիզիկական բռնության, 1 տոկոսը նշել է սեռական բռնության մասին, իսկ 11 տոկոսը՝ զգացմունքային: Ընդհանուր առմամբ, կանանց 8 տոկոսը երբևէ ենթարկվել է ամուսնու կողմից ֆիզիկական և/կամ սեռական բռնության, իսկ 14 տոկոսը՝ բռնության երեք ձևերից առնվազն մեկին:

Կանանց 6 տոկոսը նշել է, որ վերջին 12 ամիսների ընթացքում ամուսնու կողմից ենթարկվել է զգացմունքային բռնության, 4 տոկոսը նշել է ֆիզիկական բռնության, իսկ 1 տոկոսից պակասը՝ սեռական բռնության մասին: Ընդհանուր առմամբ, կանանց 8 տոկոսը վերջին 12 ամիսների ընթացքում ամուսնու կողմից ենթարկվել է ֆիզիկական, սեռական կամ զգացմունքային բռնության:

Որպես ամուսնական բռնության ամենատարածված ձևեր՝ երբևէ ամուսնացած կանայք նշել են հետևյալները՝ վիրավորել կամ ստիպել վատ զգալ (11 տոկոս), ապտակել է (7 տոկոս), հրել, թափահարել, ինչ-որ առարկա է նետել կնոջ վրա (6 տոկոս), այլ մարդկանց ներկայությամբ նվաստացրել է (6 տոկոս): Կանանց 1-ական տոկոսը նշել է դանակով, հրացանով կամ որևէ այլ զենքով սպառնալու կամ հարձակվելու և խեղդելու կամ վառելու փորձերի մասին:

Որոշ կանայք ամուսնացած են եղել մի քանի անգամ կամ ունեցել են մի քանի գուզրնկեր: Երբ նախկին ամուսինները ներառվում են որպես բռնություն իրականացնողներ, երբևէ ամուսնացած



կանանց տոկոսը, ովքեր երբևէ ենթարկվել են ֆիզիկական և/կամ սեռական բռնության ցանկացած ամուսնու կողմից, գրեթե անփոփոխ է մնում՝ 8 տոկոս:

#### **14.8 ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ**

Աղյուսակ 14.7-ը ցույց է տալիս 15-49 տարեկան երբևէ ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր ենթարկվել են զգացմունքային, ֆիզիկական կամ սեռական բռնության իրենց ներկա կամ վերջին ամուսնու կողմից՝ ըստ հիմնական բնութագրիչների: Ընդհանուր առմամբ, երբևէ ամուսնացած կանանց 14 տոկոսն ամուսնու կողմից ենթարկվել է բռնության առնվազն մեկ ձևի:

Ամուսնու կողմից բռնության առնվազն մեկի ձևի ենթարկվելը (ֆիզիկական, սեռական կամ զգացմունքային) աճում է տարիքին զուգընթաց՝ կազմելով 6 տոկոս 20-24 տարեկան կանանց շրջանում և 17 տոկոս 40-49 տարեկանների շրջանում: Բռնության ենթարկվելը կտրուկ աճում է նաև կնոջ ունեցած կենդանի երեխաների թվաքանակին զուգընթաց: Ներկայում ամուսնացած կանանց 11 տոկոսը ենթարկվել է ամուսնական բռնության՝ համեմատած ամուսնալուծված, բաժանված կամ այրի կանանց 43 տոկոսի հետ: Մինչդեռ Սյունիքի մարզում ոչ մի կին չի նշել ամուսնական բռնության ենթարկվելու մասին՝ Արարատի մարզում երեք կնոջից մեկը (32 տոկոս) նշել է, որ ենթարկվել է բռնության ամուսնու կողմից: Բարձրագույն կրթություն ունեցող կանայք և բարեկեցության երկու ամենաբարձր քվինտիլներում գտնվող կանայք ամենաքիչն են ենթարկվել ամուսնու կողմից բռնության առնվազն մեկի ձևի՝ համեմատած կրթական ավելի ցածր մակարդակ ունեցող և պակաս բարեկեցիկ կանանց հետ:

**Աղյուսակ 14.7 Ամուսնական բռնությունն ըստ հիմնական բնութագրիչների**

15-49 տարեկան երբևէ ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր ենթարկվել են զգացմունքային, ֆիզիկական կամ սեռական բռնության իրենց ամուսնու/զուգընկերոջ կողմից, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Զգացմունքային բռնություն	Ֆիզիկական բռնություն	Սեռական բռնություն	Ֆիզիկական և սեռական	Ֆիզիկական, սեռական և զգացմունքային	Ֆիզիկական կամ սեռական	Ֆիզիկական կամ սեռական զգացմունքային	Երբևէ ամուսնացած կանանց թվաքանակ
<b>Տարիք</b>								
15-19	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	27
20-24	5.0	2.7	0.3	0.3	0.3	2.7	5.6	278
25-29	8.4	5.2	0.4	0.4	0.4	5.2	10.0	610
30-39	12.9	9.3	1.1	1.0	1.0	9.3	15.7	1,248
40-49	13.3	9.9	1.7	1.7	1.5	9.9	16.8	1,045
<b>Բնակավայր</b>								
Քաղաքային	11.1	7.2	1.0	0.9	0.8	7.2	13.0	1,872
Գյուղական	11.8	9.2	1.2	1.2	1.2	9.2	15.3	1,337
<b>Սարգ</b>								
Երևան	10.2	6.8	0.7	0.6	0.5	6.9	11.9	995
Արագածոտն	13.6	28.2	5.6	5.6	5.1	28.2	28.6	146
Արարատ	23.3	17.8	2.1	2.1	2.1	17.8	31.5	306
Արմավիր	4.7	2.9	0.3	0.3	0.3	2.9	5.9	336
Գեղարքունիք	13.6	6.7	0.5	0.5	0.5	6.7	15.8	236
Լոռի	17.0	15.3	3.0	3.0	3.0	15.3	19.9	132
Կոտայք	16.4	7.0	1.3	1.3	1.3	7.0	17.6	393
Շիրակ	5.3	4.2	0.0	0.0	0.0	4.2	5.6	288
Սյունիք	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	141
Վայոց ձոր	23.6	10.7	1.3	1.3	1.3	10.7	24.3	68
Տավուշ	3.5	1.3	0.1	0.1	0.1	1.3	3.5	168
<b>Ամուսնական կարգավիճակ</b>								
Ամուսնացած/ համատեղ բնակվող	8.8	5.5	0.6	0.6	0.6	5.5	11.2	2,923
Ամուսնալուծված/ բաժանված/ այրի	37.6	34.3	5.8	5.4	4.9	34.7	42.7	285
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>								
0	3.8	1.5	0.5	0.5	0.5	1.5	3.8	217
1-2	11.4	8.2	1.1	1.0	0.9	8.2	14.1	2,219
3-4	12.9	9.2	1.2	1.2	1.2	9.2	15.9	737
5+	(24.6)	(14.7)	(0.0)	(0.0)	(0.0)	(14.7)	(25.2)	35
<b>Զբաղվածություն</b>								
Աշխատում է դրամական վարձատրությամբ	12.7	9.5	1.6	1.5	1.4	9.5	16.1	1,181
Աշխատում է ոչ դրամական վարձատրությամբ	8.4	6.2	0.4	0.4	0.4	6.2	11.2	241
Չի աշխատում	10.9	7.4	0.8	0.8	0.8	7.4	12.9	1,786
<b>Կրթություն</b>								
Հիմնական	19.0	14.4	2.9	2.9	1.9	14.4	24.4	175
Միջնակարգ	13.4	9.8	1.0	1.0	0.9	9.8	16.5	1,361
Միջին մասնագիտական	10.4	7.8	1.8	1.7	1.7	8.0	13.5	787
Բարձրագույն	7.7	4.3	0.1	0.1	0.1	4.3	8.5	881
<b>Բարեկեցության քվինտիլ</b>								
Ամենացածր	16.0	12.3	1.6	1.6	1.5	12.3	20.9	586
Երկրորդ	10.7	7.8	1.2	1.2	1.2	7.8	13.6	664
Միջին	13.3	10.8	1.4	1.2	1.0	11.0	16.0	608
Չորրորդ	8.5	4.8	0.6	0.6	0.6	4.8	9.9	633
Ամենաբարձր	9.0	5.3	0.6	0.6	0.6	5.3	10.5	717
Ընդամենը	11.4	8.0	1.1	1.0	1.0	8.1	14.0	3,208

Նշում: Ամուսինը/զուգընկերը ներկայում ամուսնացած կանանց դեպքում ներկա ամուսինը/զուգընկերն է, իսկ ամուսնալուծված, բաժանված կամ այրի կանանց դեպքում՝ վերջին ամուսինը/զուգընկերը: Ընդամենը ներառում է կանանց 4 դեպք՝ առանց որևէ կրթության: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

**14.9 ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԱՍՈՒՄՆՈՒ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՀՁՈՐԱՅՈՒՄՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ**

Աղյուսակ 14.8-ը ներկայացնում է տեղեկատվություն 15-49 տարեկան երբևէ ամուսնացած կանանց մասին, ովքեր ենթարկվել են զգացմունքային, ֆիզիկական կամ սեռական բռնության իրենց ներկա կամ վերջին ամուսնու կողմից՝ ըստ ամուսնու բնութագրիչների և կանանց հզորացումն արտահայտող ցուցանիշների:

**Աղյուսակ 14.8 Ամուսնական բնությունն ըստ ամուսնու բնութագրիչների և կանանց հզորացումն արտահայտող բնութագրիչների**

15-49 տարեկան երբևէ ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր ենթարկվել են զգացմունքային, ֆիզիկական կամ սեռական բնության իրենց ամուսնու/զուգընկերոջ կողմից, ըստ ամուսնու բնութագրիչների և կանանց հզորացումն արտահայտող ցուցանիշների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Զգացմունքային բնություն	Ֆիզիկական բնություն	Սեռական բնություն	Ֆիզիկական և սեռական	Ֆիզիկական, սեռական և զգացմունքային	Ֆիզիկական կամ սեռական	Ֆիզիկական կամ զգացմունքային	Երբևէ ամուսնացած կանանց թվաքանակ
<b>Ամուսնու/զուգընկերոջ կրթությունը<sup>1</sup></b>								
Հիմնական	17.2	7.2	0.0	0.0	0.0	7.2	19.3	294
Միջնակարգ	10.0	7.1	1.0	1.0	1.0	7.1	13.0	1,377
Միջին մասնագիտական	7.3	4.9	0.7	0.7	0.7	4.9	9.9	491
Բարձրագույն	4.3	2.2	0.0	0.0	0.0	2.2	5.6	752
<b>Ոգելից խմիչքի օգտագործումն ամուսնու/զուգընկերոջ կողմից</b>								
Չի օգտագործում ոգելից խմիչք	4.9	3.7	0.2	0.2	0.2	3.7	6.8	1,170
Օգտագործում է, սակայն երբեք չի հարբում	6.3	3.1	0.3	0.3	0.3	3.1	6.8	833
Երբեմն հարբում է	17.6	11.2	1.7	1.6	1.4	11.3	21.1	1,080
Հաճախ հարբում է	52.0	54.0	8.2	8.2	8.2	54.0	67.9	124
Տվյալ չկա	37.3	33.9	5.7	5.4	4.8	34.2	42.3	289
<b>Կրթական մակարդակի տարբերությունն ամուսնու և կնոջ միջև<sup>1</sup></b>								
Ամուսինն ունի ավելի բարձր կրթական մակարդակ	4.4	4.1	0.3	0.3	0.3	4.1	7.0	595
Կինն ունի ավելի բարձր կրթական մակարդակ	9.0	4.8	0.7	0.7	0.7	4.8	10.8	950
Երկուսն էլ ունեն կրթական միևնույն մակարդակը	10.6	6.5	0.7	0.7	0.7	6.5	13.2	1,372
Ոչ մեկը չունի կրթություն	*	*	*	*	*	*	*	2
<b>Տարիքային տարբերությունն ամուսնու և կնոջ միջև<sup>1</sup></b>								
Կինն ավելի մեծ է	8.8	9.2	0.4	0.4	0.4	9.2	11.0	127
Նույն տարիքն ունեն	9.0	5.7	2.0	2.0	2.0	5.7	11.3	216
Կինը 1-4 տարով փոքր է	9.6	4.5	0.6	0.6	0.6	4.5	11.6	1,246
Կինը 5-9 տարով փոքր է	7.5	5.1	0.3	0.3	0.3	5.1	9.5	1,053
Կինը 10 կամ ավելի տարով փոքր է	9.9	9.5	0.7	0.7	0.4	9.5	15.3	281
<b>Ամուսնու/զուգընկերոջ կողմից դրսևորած վերահսկման վարքագծերի թվաքանակը<sup>2</sup></b>								
0	3.0	2.9	0.2	0.2	0.2	2.9	4.6	1,625
1-2	14.2	8.3	0.9	0.8	0.7	8.3	17.7	1,338
3-4	46.2	36.5	5.3	5.3	5.0	36.5	51.6	218
5	(88.8)	(76.8)	(27.5)	(27.5)	(27.5)	(76.8)	(88.8)	27
<b>Որոշումների թվաքանակը, որոնց կայացմանը կինը մասնակցում է<sup>3</sup></b>								
0	14.1	17.1	1.5	1.5	1.5	17.1	21.1	57
1-2	14.8	5.1	0.3	0.3	0.3	5.1	16.0	625
3	7.0	5.3	0.7	0.7	0.6	5.3	9.6	2,241
<b>Պատճառների թվաքանակը, որոնց դեպքում կնոջը ձեռնելն արդարացված է<sup>4</sup></b>								
0	10.6	7.0	0.9	0.9	0.8	7.0	12.8	2,850
1-2	20.9	19.7	3.1	3.1	2.8	19.7	29.3	229
3-4	8.3	7.6	1.4	1.4	1.4	7.6	10.2	116
5	*	*	*	*	*	*	*	14
<b>Կնոջ հայրը ձեռնել է նրա մորը</b>								
Այո	26.8	24.6	4.2	4.2	4.2	24.6	32.4	180
Ոչ	8.9	6.1	0.8	0.8	0.7	6.1	11.0	2,589
Չգիտի/տվյալ չկա	19.6	12.9	1.3	1.3	1.1	12.9	23.8	439
<b>Կինը վախենում է ամուսնու/զուգընկերոջից</b>								
Գրեթե միշտ	(88.2)	(93.1)	(29.2)	(29.2)	(29.2)	(93.1)	(98.8)	41
Երբեմն	33.9	28.1	3.9	3.9	3.4	28.1	40.8	452
Երբեք	6.4	3.4	0.2	0.1	0.1	3.4	8.2	2,714
Ընդամենը	11.4	8.0	1.1	1.0	1.0	8.1	14.0	3,208

Նշում: Ամուսինը/զուգընկերը ներկայում ամուսնացած կանանց դեպքում ներկա ամուսինը/զուգընկերն է, իսկ ամուսնալուծված, բաժանված կամ այրի կանանց դեպքում՝ վերջին ամուսինը/զուգընկերը: Ընդամենը ներառում է կանանց 5 դեպք, երբ ամուսինը/զուգընկերը չունի որևէ կրթություն, կանանց 4 դեպք, երբ չկա տվյալ ամուսնու/զուգընկերոջ կրթության մասին, կանանց 1 դեպք, երբ չկա տվյալ տարիքային տարբերության մասին, կանանց 1 դեպք, երբ չկա տվյալ ամուսնու/զուգընկերոջ կողմից ոգելից խմիչքների օգտագործման մասին, կանանց 1 դեպք, երբ չկա տվյալ այն մասին, թե արդյոք կինը վախենում է ամուսնուց: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

<sup>1</sup> Ներառում է միայն ներկայում ամուսնացած կանանց:

<sup>2</sup> Ըստ կնոջ հաղորդած տվյալների: Տե՛ս Աղյուսակ 14.5-ը վարքագծերի տեսակների համար:

<sup>3</sup> Ըստ կնոջ հաղորդած տվյալների: Ներառում է միայն ներկայում ամուսնացած կանանց: Տե՛ս Աղյուսակ 15.9.1-ը որոշումների ցանկի համար:

<sup>4</sup> Ըստ կնոջ հաղորդած տվյալների: Տե՛ս Աղյուսակ 15.10-ը պատճառների ցանկի համար:

Ամուսնական բռնությունն ավելի բարձր է այն կանանց շրջանում, ում ամուսինն ունի միայն հիմնական կրթություն (19 տոկոս), քան այն կանանց, ում ամուսինն ունի բարձրագույն կրթություն (6 տոկոս): Այն գույգերի դեպքում, որտեղ ամուսինն ու կինն ունեն միևնույն կրթական մակարդակը, կանայք ավելի հակված են ամուսնական բռնության ենթարկվելուն (13 տոկոս), քան այն գույգերի դեպքում, որտեղ ամուսնու կրթական մակարդակն ավելի բարձր է (7 տոկոս): Կանայք, ովքեր տարիքով շատ ավելի փոքր են ամուսնուց, օրինակ՝ 10 կամ ավելի տարով, ավելի հակված են ամուսնական բռնության ենթարկվելուն (15 տոկոս), քան այն կանայք, ում տարիքային տարբերությունն ամուսնու հետ մեծ չէ (10-12 տոկոս):

Ամուսնական բռնությունը կտրուկ աճում է ամուսնու կողմից դրսևորվող վերահսկման վարքագծերի թվաքանակի աճին զուգընթաց: Այն կանանց շրջանում, ում ամուսինը դրսևորում է վերահսկման վարքագծերի 3-4 տեսակ, կանանց կեսից ավելին (52 տոկոս) ենթարկվել է բռնության մեկ կամ մի քանի ձևերի: Ի հակադրություն սրան՝ այն կանանց շրջանում, ում ամուսինը չի դրսևորել վերահսկման վարքագծի ոչ մի տեսակ, կանանց միայն 5 տոկոսն է ենթարկվել ամուսնական բռնության որևէ ձևի: Չկա որևէ հստակ կապ բռնության ենթարկվելու և կնոջը ծեծն արդարացնելու համար նշված պատճառների թվաքանակի միջև: Սակայն կանայք, ովքեր չեն մասնակցում տնային տնտեսությունում որոշումների կայացմանը, կրկնակի անգամ ավելի հավանական է, որ կենթարկվեն ամուսնական բռնության, քան այն կանայք, ովքեր մասնակցում են բոլոր երեք որոշումների կայացմանը (համապատասխանաբար 21 և 10 տոկոս): Հայաստանում ընտանեկան բռնության միջսերնդային ազդեցությունը բավական ակնհայտ է. կանայք, ում հայրը ծեծել է մոր, շատ ավելի հավանական է, որ իրենք էլ կենթարկվեն բռնության որևէ տեսակի ամուսնու կողմից՝ համեմատած այն կանանց հետ, ում հայրը չի ծեծել մորը (համապատասխանաբար 32 և 11 տոկոս): Ի վերջո, կանայք, ովքեր երբեմն վախենում են իրենց ամուսնուց, ավելի հակված են ամուսնական բռնության ենթարկվելուն, քան այն կանայք, ովքեր երբեք չեն վախենում ամուսնուց (41 և 8 տոկոս):

## 14.10 ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՑԱՆԿԱՑԱԾ ԱՄՈՒՄՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 14.9-ը ցույց է տալիս երբևէ ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր վերջին 12 ամիսների ընթացքում ենթարկվել են ֆիզիկական կամ սեռական բռնության իրենց ցանկացած ամուսնու կողմից (ներկա, վերջին, նախկին)՝ ըստ հիմնական բնութագրիչների:

### Աղյուսակ 14.9 Ֆիզիկական կամ սեռական բռնության հաճախականությունը

Երբևէ ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր վերջին 12 ամիսների ընթացքում ենթարկվել են ֆիզիկական կամ սեռական բռնության իրենց ցանկացած ամուսնու/զուգընկերոջ կողմից, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Վերջին 12 ամիսների ընթացքում իրենց ցանկացած ամուսնու/զուգընկերոջ կողմից ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված կանանց տոկոս	Երբևէ ամուսնացած կանանց թվաքանակ
<b>Տարիք</b>		
15-19	(0.0)	27
20-24	2.4	278
25-29	2.3	610
30-39	4.0	1,248
40-49	4.1	1,045
<b>Բնակավայր</b>		
Քաղաքային	3.1	1,872
Գյուղական	4.1	1,337
<b>Մարզ</b>		
Երևան	3.1	995
Արագածոտն	21.9	146
Արարատ	4.8	306
Արմավիր	0.9	336
Գեղարքունիք	1.7	236
Լոռի	8.1	132
Կոտայք	1.5	393
Շիրակ	3.1	288
Մյունիք	0.0	141
Վայոց ձոր	1.8	68
Տավուշ	0.9	168
<b>Ամուսնական կարգավիճակ</b>		
Ամուսնացած/համատեղ բնակվող	2.6	2,923
Ամուսնալուծված/ բաժանված/ այրի	13.2	285
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>		
0	0.0	217
1-2	3.7	2,219
3-4	3.6	737
5+	(13.3)	35
<b>Զբաղվածություն</b>		
Աշխատում է դրամական վարձատրությամբ	3.2	1,181
Աշխատում է ոչ դրամական վարձատրությամբ	0.9	241
Չի աշխատում	4.1	1,786
<b>Կրթություն</b>		
Հիմնական	3.5	175
Միջնակարգ	4.2	1,361
Միջին մասնագիտական	4.3	787
Բարձրագույն	1.8	881
<b>Բարեկեցության քվինտիլ</b>		
Ամենացածր	6.2	586
Երկրորդ	2.6	664
Միջին	4.6	608
Չորրորդ	1.8	633
Ամենաբարձր	2.8	717
<b>Կինը վախենում է ամուսնուց/ զուգընկերոջից</b>		
Գրեթե միշտ	(49.1)	41
Երբեմն	12.0	452
Երբեք	1.4	2,714
<b>Ընդամենը</b>	3.5	3,208

Նշում: Ցանկացած ամուսնու/զուգընկեր տերմինը ներառում է ներկա, վերջին և նախկին բոլոր ամուսինների/զուգընկերներին: Ընդամենը ներառում է կանանց 4 դեպք՝ առանց որևէ կրթության, և կանանց 1 դեպք, երբ չկա տվյալ այն մասին, թե արդյոք կինը վախենում է ամուսնուց: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

Ընդհանուր առմամբ, կանանց 4 տոկոսը վերջին 12 ամիսների ընթացքում ենթարկվել է ֆիզիկական կամ սեռական բռնության իրենց ցանկացած ամուսնու կողմից: Վերջին ժամանակահատվածում ցանկացած ամուսնու կողմից ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված կանանց տոկոսը տատանվում է՝ Արագածոտնի մարզում գրանցված 22 տոկոսից մինչև Լոռու մարզում գրանցված 8 և Սյունիքի մարզում գրանցված 0 տոկոսը, և բարեկեցության աճին զուգընթաց այն նվազելու միտում ունի: Այն կանանց շրջանում, ովքեր երբեմն վախենում են իրենց ամուսնուց, կանանց 12 տոկոսը նշել է, որ վերջին 12 ամիսների ընթացքում ենթարկվել է ֆիզիկական կամ սեռական բռնության ամուսնու կողմից՝ համեմատած այն կանանց 1 տոկոսի հետ, ովքեր երբեք չեն վախենում ամուսնուց:

#### 14.11 ԱՄՈՒՄԱԿԱՆ ԲՈՒՈՒԹՅԱՆ ՄԿԵԶԸ

Հավաքագրելու համար տեղեկատվություն այն մասին, թե երբ են սկսվել ամուսնական բռնությունները, ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում ներկայում ամուսնացած կանայք, ովքեր միայն մեկ անգամ են ամուսնացած եղել, հարցվել են, թե ամուսնությունից որքան ժամանակ անց է սկսվել բռնությունը, եթե երբևէ եղել է:

Աղյուսակ 14.10-ը ցույց է տալիս, որ կանանց մեծամասնությունը (95 տոկոս) երբեք չի ենթարկվել ֆիզիկական կամ սեռական բռնության ամուսնու կողմից: Ընդհանուր առմամբ, ներկայում ամուսնացած կանանց 1 տոկոսը բռնության է ենթարկվել ամուսնությունից հետո առաջին երկու տարիների ընթացքում, իսկ 4 տոկոսը՝ ամուսնությունից հետո առաջին հինգ տարիների ընթացքում: Այս տվյալները նշանակում են, որ ամուսնու կողմից ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված կանանց զգալի տոկոսի դեպքում բռնությունը սկսվել է ամուսնանալուց հետո քիչ ժամանակ անց:

**Աղյուսակ 14.10 Ամուսնու կողմից իրականացված բռնությունն ըստ ամուսնության տևողության**

15-49 տարեկան ներկայում ամուսնացած կանանց շրջանում, ովքեր միայն մեկ անգամ են ամուսնացած եղել, նրանց տոկոսը, ովքեր առաջին անգամ ենթարկվել են ֆիզիկական կամ սեռական բռնության իրենց ներկա ամուսնու/զուգընկերոջ կողմից, ըստ ամուսնությունից հետո անցած տարիների և ըստ ամուսնության տևողության, Հայաստան, 2015-16 թթ.

Ամուսնությունից ընկած տարիները	Տոկոսը, որ առաջին անգամ ամուսնու կողմից ենթարկվել է ֆիզիկական կամ սեռական բռնության, ըստ ամուսնության տևողության				Տոկոսը, որ չի ենթարկվել ֆիզիկական կամ սեռական բռնության	Ներկայում ամուսնացած կանանց թվաքանակը, որ միայն մեկ անգամ է ամուսնացած եղել
	Ամուսնությունից առաջ	2 տարի	5 տարի	10 տարի		
<2	0.0	կշ	կշ	կշ	98.9	203
2-4	0.0	0.8	կշ	կշ	99.0	310
5-9	0.0	0.5	3.1	կշ	96.4	582
10+	0.1	1.5	4.4	5.7	92.6	1,735
Ընդամենը	0.0	1.2	3.5	4.4	94.6	2,830

կշ = կիրառելի չէ

#### 14.12 ԱՄՈՒՄԱԿԱՆ ԲՈՒՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում երբևէ ամուսնացած կանայք հարցվել են, թե արդյոք որպես ամուսնու կողմից իրականացված ֆիզիկական կամ սեռական բռնության հետևանք իրենց մոտ եղել են վնասվածքներ: Ամուսնու կողմից երբևէ ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված կանանց 38 տոկոսն ունեցել է կտրվածքներ, կապտուկներ կամ ցավեր, 11 տոկոսը՝ աչքերի վնասվածք, ջլածում, հոդախախտումներ կամ այրվածքներ, իսկ 4 տոկոսը՝ խորը վերքեր, կտրված ոսկորներ, կտրված ատամներ կամ այլ լուրջ վնասվածքներ (Աղյուսակ 14.11): Ընդհանուր առմամբ, ամուսնու կողմից երբևէ ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված կանանց 40 տոկոսի մոտ եղել է այս վնասվածքներից մեկը կամ մի քանիսը: Բոլոր տեսակի վնասվածքների առկայությունն ավելի բարձր է այն կանանց շրջանում, ովքեր բռնության են ենթարկվել վերջին 12 ամիսների ընթացքում:

**Աղյուսակ 14.11 Ամուսնական բռնության հետևանքով կանանց մոտ առաջացած վնասվածքները**

15-49 տարեկան երբևէ ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր ամուսնու կողմից ենթարկվել են բռնության կոնկրետ տեսակների, ըստ այն վնասվածքների տեսակների, որոնք առաջացել են բռնության արդյունքում, ըստ բռնության տեսակի և այն հանգամանքի, թե արդյո՞ք բռնությունն իրականացվել է երբևէ, թե հետագոտության նախորդող 12 ամիսների ընթացքում, Հայաստան, 2015-16 թթ.

Բռնության տեսակ	Կտրվածքներ, կապտուկներ կամ ցավեր	Աչքերի վնասվածք, ջլաձգում, հոդախախտումներ կամ այրվածքներ	Խորը վերքեր, կոտրված ոսկորներ, կոտրված ատամներ կամ այլ լուրջ վնասվածքներ	Այս վնասվածքներից ցանկացածը	Երբևէ ամուսնացած կանանց թվաքանակը, որ երբևէ ենթարկվել է որևէ ֆիզիկական կամ սեռական բռնության
<b>Ենթարկվել է ֆիզիկական բռնության<sup>1</sup></b>					
Երբևէ <sup>2</sup>	38.0	10.9	4.0	40.4	258
Վերջին 12 ամիսների ընթացքում	40.5	16.8	6.6	43.7	112
<b>Ենթարկվել է սեռական բռնության</b>					
Երբևէ <sup>2</sup>	(56.0)	(16.1)	(13.5)	(56.0)	34
Վերջին 12 ամիսների ընթացքում	*	*	*	*	10
<b>Ենթարկվել է ֆիզիկական կամ սեռական բռնության<sup>1</sup></b>					
Երբևէ <sup>2</sup>	37.8	10.9	4.0	40.2	259
Վերջին 12 ամիսների ընթացքում	40.2	16.6	6.5	43.3	113

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

<sup>1</sup> Չի ներառում այն կանանց, ովքեր միայն նշել էին հղիության ընթացքում իրականացված բռնության մասին:

<sup>2</sup> Ներառում է վերջին 12 ամիսները:

**14.13 ԱՄՈՒՄՆՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՆՈՋ ԿՈՂՄԻՑ**

Ընտանեկան բռնության պարագայում թե՛ ամուսինը, թե՛ կինը կարող են լինել բռնությունն հրահրողը: ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում երբևէ ամուսնացած կանայք հարցվել են, թե արդյո՞ք նախաձեռնել են ֆիզիկական բռնությունն իրենց ներկա կամ վերջին ամուսնու նկատմամբ այն ժամանակ, երբ ամուսինն այլևս չէր հարվածում կամ չէր ծեծում նրանց:

Աղյուսակ 14.12-ը ցույց է տալիս 15-49 տարեկան երբևէ ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր նշել են, որ իրենք են նախաձեռնել բռնությունն իրենց ամուսնու նկատմամբ երբևէ կամ հետագոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում՝ ըստ կնոջ հիմնական բնութագրիչների: Աղյուսակ 14.13-ը ցույց է տալիս կանանց տոկոսը, ովքեր նախաձեռնել են բռնությունն՝ ըստ ամուսնու հիմնական բնութագրիչների և կանանց հզորացումն արտահայտող ցուցանիշների:

**Աղյուսակ 14.12 Ամուսնու նկատմամբ իրականացված բռնությունը կնոջ կողմից**

15-49 տարեկան երբևէ ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր երբևէ կամ հետագոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում իրականացրել են ֆիզիկական բռնություն իրենց ներկա կամ վերջին ամուսնու/գուգրնկերոջ նկատմամբ այն ժամանակ, երբ ամուսինը/գուգրնկերն այլևս չէր հարվածում կամ ֆիզիկապես չէր վնասում նրանց, ըստ այն հանգամանքի, թե արդյոք կինն ինքը ենթարկվել է բռնության ամուսնու/գուգրնկերոջ կողմից, թե ոչ, և ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Տոկոսը, որ իրականացրել է ֆիզիկական բռնություն իրենց ամուսնու/գուգրնկերոջ նկատմամբ		Երբևէ ամուսնացած կանանց թվաքանակ
	Երբևէ <sup>1</sup>	Վերջին 12 ամիսների ընթացքում	
<b>Կինը ենթարկվել է ֆիզիկական բռնության ամուսնու կողմից</b>			
Երբևէ <sup>1</sup>	2.8	1.8	258
Վերջին 12 ամիսների ընթացքում	5.0	3.3	112
Երբեք	0.3	0.1	2,950
<b>Տարիք</b>			
15-19	(3.6)	(3.6)	27
20-24	0.0	0.0	278
25-29	0.3	0.3	610
30-39	0.7	0.4	1,248
40-49	0.3	0.1	1,045
<b>Բնակավայր</b>			
Քաղաքային	0.4	0.2	1,872
Գյուղական	0.5	0.3	1,337
<b>Մարզ</b>			
Երևան	0.4	0.0	995
Արագածոտն	2.4	2.4	146
Արարատ	0.4	0.1	306
Արմավիր	1.6	1.0	336
Գեղարքունիք	0.0	0.0	236
Լոռի	0.5	0.5	132
Կոտայք	0.0	0.0	393
Շիրակ	0.3	0.3	288
Սյունիք	0.0	0.0	141
Վայոց ձոր	0.0	0.0	68
Տավուշ	0.0	0.0	168
<b>Ամուսնական կարգավիճակ</b>			
Ամուսնացած/համատեղ բնակվող	0.3	0.2	2,923
Ամուսնալուծված/ բաժանված/ այրի	2.0	1.3	285
<b>Զբաղվածություն</b>			
Աշխատում է դրամական վարձատրությամբ	0.7	0.3	1,181
Աշխատում է ոչ դրամական վարձատրությամբ	0.4	0.4	241
Չի աշխատում	0.3	0.2	1,786
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>			
0	0.0	0.0	217
1-2	0.6	0.3	2,219
3-4	0.3	0.2	737
5+	(0.0)	(0.0)	35
<b>Կրթություն</b>			
Հիմնական	2.2	1.8	175
Միջնակարգ	0.1	0.1	1,361
Միջին մասնագիտական	1.1	0.4	787
Բարձրագույն	0.1	0.1	881
<b>Բարեկեցության քվինտիլ</b>			
Ամենացածր	0.6	0.6	586
Երկրորդ	0.7	0.2	664
Միջին	0.5	0.4	608
Չորրորդ	0.2	0.2	633
Ամենաբարձր	0.4	0.0	717
<b>Ընդամենը</b>	<b>0.5</b>	<b>0.3</b>	<b>3,208</b>

Նշում: Ամուսինը/գուգրնկերը ներկայում ամուսնացած կանանց դեպքում ներկա ամուսինը/գուգրնկերն է, իսկ ամուսնալուծված, բաժանված կամ այրի կանանց դեպքում՝ վերջին ամուսինը/գուգրնկերը: Ընդամենը ներառում է կանանց 4 դեպք՝ առանց որևէ կրթության: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

<sup>1</sup> Ներառում է վերջին 12 ամիսները:



**Աղյուսակ 14.13 Ամուսնու նկատմամբ իրականացված բռնությունը կնոջ կողմից, ըստ ամուսնու հիմնական բնութագրիչների և կնոջ հզորացումն արտահայտող ցուցանիշների**

15-49 տարեկան երբևէ ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր երբևէ կամ հետագոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում իրականացրել են ֆիզիկական բռնություն իրենց ներկա կամ վերջին ամուսնու/զուգընկերոջ նկատմամբ այն ժամանակ, երբ ամուսինը/զուգընկերն այլևս չէր հարվածում կամ չէր ծեծում նրանց, ըստ ամուսնու հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Տոկոսը, որ իրականացրել է ֆիզիկական բռնություն իրենց ամուսնու/զուգընկերոջ նկատմամբ		Երբևէ ամուսնացած կանանց թվաքանակ
	Երբևէ <sup>1</sup>	Վերջին 12 ամիսների ընթացքում	
<b>Ամուսնու/զուգընկերոջ կրթությունը<sup>2</sup></b>			
Հիմնական	0.6	0.3	294
Միջնակարգ	0.4	0.1	1,377
Միջին մասնագիտական	0.3	0.3	491
Բարձրագույն	0.1	0.1	752
<b>Ոգելից խմիչքի օգտագործումն ամուսնու/ զուգընկերոջ կողմից</b>			
Չի օգտագործում ոգելից խմիչք	0.0	0.0	1,170
Օգտագործում է, սակայն երբեք չի հարբում	0.7	0.4	833
Երբեմն հարբում է	0.3	0.1	1,080
Հաճախ հարբում է	4.9	3.1	124
<b>Կրթական մակարդակի տարբերությունն ամուսնու և կնոջ միջև<sup>2</sup></b>			
Ամուսինն ունի ավելի բարձր կրթական մակարդակ	0.1	0.1	595
Կինն ունի ավելի բարձր կրթական մակարդակ	0.6	0.2	950
Երկուսն էլ ունեն կրթական միևնույն մակարդակը	0.2	0.2	1,372
Ոչ մեկը չունի կրթություն	*	*	2
Տվյալ չկա	1.9	1.3	289
<b>Տարիքային տարբերությունն ամուսնու և կնոջ միջև<sup>2</sup></b>			
Կինն ավելի մեծ է	0.0	0.0	127
Նույն տարիքն ունեն	0.8	0.0	216
Կինը 1-4 տարով փոքր է	0.4	0.2	1,246
Կինը 5-9 տարով փոքր է	0.2	0.2	1,053
Կինը 10 կամ ավելի տարով փոքր է	0.3	0.3	281
<b>Ամուսնու/զուգընկերոջ կողմից դրսևորած վերահսկման վարքագծերի թվաքանակը<sup>3</sup></b>			
0	0.4	0.3	1,625
1-2	0.3	0.1	1,338
3-4	1.2	1.0	218
5	(6.3)	(6.3)	27
<b>Որոշումների թվաքանակը, որոնց կայացմանը կինը մասնակցում է<sup>4</sup></b>			
0	0.0	0.0	57
1-2	0.0	0.0	625
3	0.4	0.2	2,241
<b>Պատճառների թվաքանակը, որոնց դեպքում կնոջը ծեծելն արդարացված է<sup>5</sup></b>			
0	0.5	0.2	2,850
1-2	1.0	1.0	229
3-4	0.0	0.0	116
5	*	*	14
<b>Կնոջ հայրը ծեծել է նրա մորը</b>			
Այո	1.7	0.2	180
Ոչ	0.4	0.2	2,589
Չգիտի/տվյալ չկա	0.6	0.6	439
<b>Կինը վախենում է ամուսնուց/ զուգընկերոջից</b>			
Գրեթե միշտ	(10.0)	(10.0)	41
Երբեմն	1.0	0.3	452
Երբեք	0.3	0.1	2,714
<b>Ընդամենը</b>	<b>0.5</b>	<b>0.3</b>	<b>3,208</b>

Նշում: Ամուսինը/զուգընկերը ներկայում ամուսնացած կանանց դեպքում ներկա ամուսինը/զուգընկերն է, իսկ ամուսնալուծված, բաժանված կամ այրի կանանց դեպքում՝ վերջին ամուսինը/զուգընկերը: Ընդամենը ներառում է կանանց 5 դեպք, երբ ամուսինը/զուգընկերը չունի որևէ կրթություն, կանանց 4 դեպք, երբ չկա տվյալ ամուսնու/զուգընկերոջ կրթության մասին, կանանց 1 դեպք, երբ չկա տվյալ տարիքային տարբերության մասին, կանանց 1 դեպք, երբ չկա տվյալ ամուսնու/զուգընկերոջ կողմից ոգելից խմիչքների օգտագործման մասին, կանանց 1 դեպք, երբ չկա տվյալ այն մասին, թե արդյոք կինը վախենում է ամուսնուց: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չլեռնված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չլեռնված դեպքերի վրա:

<sup>1</sup> Ներառում է վերջին 12 ամիսները:

<sup>2</sup> Ներառում է միայն ներկայում ամուսնացած կանանց:

<sup>3</sup> Ըստ կնոջ հաղորդած տվյալների: Տե՛ս Աղյուսակ 14.5-ը վարքագծերի տեսակների համար:

<sup>4</sup> Ըստ կնոջ հաղորդած տվյալների: Ներառում է միայն ներկայում ամուսնացած կանանց: Տե՛ս Աղյուսակ 15.9.1-ը որոշումների ցանկի համար:

<sup>5</sup> Ըստ կնոջ հաղորդած տվյալների: Տե՛ս Աղյուսակ 15.10-ը պատճառների ցանկի համար:

Կանանց 1 տոկոսը նշել է, որ իրենք երբևէ նախաձեռնել են ֆիզիկական բռնություն իրենց ամուսնու դեմ, իսկ 1 տոկոսից պակասն էլ նշել է, որ նման բան տեղի է ունեցել վերջին 12 ամիսների ընթացքում: Կանայք, ովքեր երբևէ (3 տոկոս) կամ վերջին 12 ամիսների ընթացքում (5 տոկոս) ենթարկվել են ֆիզիկական բռնության իրենց ներկա կամ վերջին ամուսնու կողմից, ավելի հակված են նախաձեռնելու բռնություն ամուսնու նկատմամբ, քան այն կանայք, ովքեր երբեք չեն ենթարկվել բռնության ամուսնու կողմից (1 տոկոսից պակաս): Ըստ մարզերի՝ իրենց ամուսնու նկատմամբ բռնություն իրականացրած կանանց ամենամեծ մասնաբաժինը՝ 2-ական տոկոս, գրանցվել է Արագածոտնի և Արմավիրի մարզերում: Նշանակալի է, որ կնոջ կողմից ամուսնու նկատմամբ բռնության նախաձեռնումն ավելի բարձր է այն կանանց շրջանում, ում հայրը ծեծել է մորը (2 տոկոս)՝ համեմատած այն կանանց հետ, ում հայրը չի ծեծել մորը (1 տոկոսից պակաս):

#### **14.14 ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՅՔ, ՈՎՔԵՐ ՓՆՏՐԵԼ ԵՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ**

Աղյուսակ 14.14-ը ցույց է տալիս երբևէ որևէ մեկի կողմից ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված 15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումն ըստ այն հանգամանքի, թե արդյոք բռնությունը դադարեցնելու նպատակով նրանք փնտրել են օգնություն, թե ոչ, իսկ եթե չեն փնտրել, արդյոք որևէ մեկին պատմել են իրենց հետ կատարված բռնության մասին՝ ըստ հիմնական բնութագրիչների:

Ընդհանուր առմամբ, երբևէ որևէ մեկի կողմից ֆիզիկական կամ սեռական բռնության որևէ տեսակի ենթարկված տասը կանանցից երեքը (29 տոկոս) բռնությունը դադարեցնելու նպատակով փնտրել են օգնություն: Կանանց 40 տոկոսը երբեք չի փնտրել օգնություն և երբեք չի պատմել որևէ մեկին բռնության մասին, իսկ 29 տոկոսը երբեք չի փնտրել օգնություն, սակայն ինչ-որ մեկին պատմել է բռնության մասին: Գյուղական բնակավայրերի կանայք (24 տոկոս) ավելի քիչ են փնտրել օգնություն, քան քաղաքային բնակավայրերի կանայք (34 տոկոս): Օգնություն փնտրելու գործելակերպն աճում է՝ կրթական մակարդակին զուգընթաց, սակայն, ըստ բարեկեցության մակարդակի, էականորեն չի տարբերվում: Կանայք, ովքեր աշխատում են դրամական վարձատրությամբ ավելի հավանական է, որ օգնություն փնտրած լինեն, քան այն կանայք, ովքեր չեն աշխատում:

Գյուղական	12.0	94.0	2,459	23.1	2,310
<b>Մարզ</b>					
Երևան	26.3	99.0	2,001	33.2	1,981
Արագածոտն	16.2	99.4	315	35.4	313
Արարատ	21.3	97.2	552	28.0	537
Արմավիր	12.0	89.8	586	22.3	526
Գեղարքունիք	8.8	90.6	478	9.8	433
Լոռի	7.4	97.7	355	65.2	347
Կոտայք	16.2	96.7	678	34.0	656
Շիրակ	14.1	98.1	510	4.9	501
Սյունիք	28.3	98.2	238	45.3	234
Վայոց ձոր	24.4	97.2	119	23.9	116
Տավուշ	23.2	96.5	283	18.3	273
<b>Կրթություն</b>					
Հիմնական	3.1	88.7	396	15.3	352
Միջնակարգ	6.6	95.3	2,444	20.8	2,329
Միջին մասնագիտական	18.5	97.7	1,360	26.6	1,330
Բարձրագույն	39.5	99.7	1,910	44.3	1,904
<b>Բարեկեցության քվինտիլ</b>					
Ամենացածր	7.3	89.6	1,081	22.4	969
Երկրորդ	15.8	97.1	1,242	24.4	1,205
Միջին	14.1	97.5	1,142	26.5	1,113
Չորրորդ	23.3	99.1	1,287	35.8	1,275
Ամենաբարձր	32.5	99.2	1,365	34.9	1,354
Ընդամենը	19.3	96.7	6,116	29.3	5,917

Նշում: Ընդամենը 15-49 տարեկան բոլոր կանանց համար ներառում է կանանց 5 դեպք՝ առանց որևէ կրթության, իսկ ընդամենը բջջային հեռախոս ունեցող կանանց համար ներառում է կանանց 3 դեպք՝ առանց որևէ կրթության:

**Աղյուսակ 15.7.2 Բանկային հաշվի և հեռախոսի սեփականություն և օգտագործում, տղամարդիկ**

15-49 տարեկան տղամարդկանց տոկոսը, ովքեր ունեն և օգտագործում են բանկային հաշիվ բանկում կամ որևէ ֆինանսական կառույցում, տոկոսը, ովքեր ունեն բջջային հեռախոս, և բջջային հեռախոս ունեցող տղամարդկանց շրջանում նրանց տոկոսը, ովքեր օգտագործում են այն ֆինանսական գործարքներ կատարելու համար, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Օգտագործում է բանկային հաշիվը	Ունի բջջային հեռախոս	Տղամարդկանց թվաքանակ	Օգտագործում է բջջային հեռախոսը ֆինանսական գործարքների համար	Բջջային հեռախոս ունեցող տղամարդկանց թվաքանակ
<b>Տարիք</b>					
15-19	3.7	97.1	345	8.2	335
20-24	12.1	99.4	467	15.6	464
25-29	23.3	99.9	464	20.8	464
30-34	26.8	98.3	427	24.2	420
35-39	27.0	98.5	376	23.8	370
40-44	28.9	99.4	346	23.4	344
45-49	23.5	98.3	330	22.9	324
<b>Բնակավայր</b>					
Քաղաքային	22.0	99.0	1,558	23.4	1,543
Գյուղական	19.1	98.4	1,197	15.2	1,178
<b>Մարզ</b>					
Երևան	11.5	99.7	833	24.9	830
Արագածոտն	15.5	98.7	159	12.2	157
Արարատ	12.9	98.3	290	4.6	285
Արմավիր	29.8	95.9	268	3.7	257
Գեղարքունիք	12.0	97.7	235	26.0	230
Լոռի	19.7	97.8	184	17.1	180
Վոտայք	29.8	100.0	299	42.4	299
Շիրակ	28.4	99.5	201	9.9	200
Սյունիք	53.6	98.2	104	29.1	102
Վայոց ձոր	45.4	98.2	56	2.3	55
Տավուշ	33.0	99.7	126	18.8	125
<b>Կրթություն</b>					
Հիմնական	10.5	97.4	360	8.3	351
Միջնակարգ	14.7	98.6	1,250	14.9	1,233
Միջին մասնագիտական	21.9	98.6	403	20.2	398
Բարձրագույն	35.5	99.9	736	33.6	736
<b>Բարեկեցության քվինտիլ</b>					
Ամենացածր	13.3	97.3	523	8.2	509
Երկրորդ	20.7	99.2	583	17.2	578
Միջին	24.4	98.4	521	21.4	513
Չորրորդ	22.3	99.9	566	26.8	566
Ամենաբարձր	22.7	98.9	562	24.9	555
Ընդամենը	20.7	98.8	2,755	19.9	2,721

Նշում: Ընդամենը 15-49 տարեկան բոլոր տղամարդկանց համար ներառում է տղամարդկանց 5 դեպք՝ առանց որևէ կրթության, իսկ ընդամենը բջջային հեռախոս ունեցող տղամարդկանց համար ներառում է տղամարդկանց 4 դեպք՝ առանց որևէ կրթության:

Հայաստանում հինգ կանանցից և տղամարդկանցից մեկն ունի բանկային հաշիվ, որ անձամբ է օգտագործում: Բանկային հաշիվ ունենալու և այն օգտագործելու ցուցանիշը միտում ունի աճելու կանանց և տղամարդկանց տարիքին զուգընթաց: Տղամարդկանց դեպքում բանկային հաշիվ ունենալու ցուցանիշը շատ չի փոփոխվում՝ ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի: Գյուղաբնակ կանայք (12 տոկոս) պակաս հավանական է, որ կունենան իրենց իսկ կողմից օգտագործվող բանկային հաշիվ, քան քաղաքաբնակ կանայք (24 տոկոս): Բանկային հաշիվ ունենալու ցուցանիշն աճում է կանանց և տղամարդկանց կրթական մակարդակին զուգընթաց:

Հայաստանում, ըստ էության, 15-49 տարեկան բոլոր կանայք (97 տոկոս) և տղամարդիկ (99 տոկոս) ունեն բջջային հեռախոս, և նրանց մասնաբաժիններն ըստ հիմնական բնութագրիչների էապես չեն փոփոխվում: Մակայն բջջային հեռախոսի օգտագործումը ֆինանսական գործարքների կատարելու համար շատ սահմանափակ է: Բջջային հեռախոս ունեցող կանանց միայն 29 և տղամարդկանց 20 տոկոսն են օգտագործում հեռախոսը ֆինանսական գործարքներ կատարելու համար: Քաղաքաբնակ կանայք և տղամարդիկ որոշ չափով ավելի հակված են բջջային հեռախոսի միջոցով ֆինանսական գործարքներ կատարելուն: Այս ցուցանիշը միտում ունի աճելու կրթության և

բարեկեցության աճին զուգընթաց: Հասկանալի է, որ բարձրագույն կրթություն ունեցող կանանց 44 և տղամարդկանց 34 տոկոսն օգտագործում են իրենց բջջային հեռախոսը ֆինանսական գործարքներ կատարելու համար: Ըստ մարզերի՝ ցուցանիշը մեծապես փոփոխվում է: Կանանց շրջանում ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Լոռու մարզում (65 տոկոս), իսկ տղամարդկանց շրջանում՝ Կոտայքի մարզում (42 տոկոս):

#### 15.4 ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Տնային տնտեսությունում կանանց ինքնուրույն որոշումներ կայացնելու գործընթացը գնահատելու համար ՀԺԱՀ 2015-16-ի ընթացքում հավաքագրվել է տեղեկատվություն հետևյալ երեք որոշումների կայացման հարցում ներկայում ամուսնացած կանանց մասնակցության վերաբերյալ՝ իրենց առողջության պահպանման, ՏՏ-ում հիմնական գնումներ կատարելու և իրենց ընտանիքին, ընկերներին կամ բարեկամների այցելելու վերաբերյալ: Որոշումների մեջ վերջնական խոսքի իրավունքն արտացոլում է ինքնուրույնության բարձր աստիճան: Կանայք համարվել են որոշումների կայացման մասնակից, եթե որոշումները կայացվել են ինքնուրույն կամ ամուսնու հետ համատեղ: Սեփական կյանքի վրա ազդեցություն ունեցող որոշումներ կայացնելու կարողությունը կանանց հզորացման կարևոր ասպեկտ է, որն էլ իր հերթին ազդում է կանանց առողջապահական և ժողովրդագրական նպատակների իրականացման վրա:

Աղյուսակ 15.8-ը ցույց է տալիս ներկայում ամուսնացած կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ վերոնշյալ հարցերի շուրջ հիմնականում որոշումներ կայացնող անձի: Կանանց 28 տոկոսն իր առողջության պահպանման վերաբերյալ հիմնական որոշում կայացնողն է, 68 տոկոսը որոշում է կայացնում ամուսնու հետ համատեղ, իսկ 4 տոկոսը չի մասնակցում իր առողջության պահպանման վերաբերյալ որոշման կայացմանը: Ներկայում ամուսնացած կանանց 14 տոկոսը հիմնականում ինքնուրույն է որոշում կայացնում տնային տնտեսության համար հիմնական գնումներ կատարելու հարցում, կանանց երկու երրորդը (67 տոկոս) այդ որոշումը կայացնում է ամուսնու հետ համատեղ, իսկ 17 տոկոսը մասնակցություն չի ունենում այս հարցի շուրջ որոշում կայացնելու գործընթացում: Կնոջ ընտանիքին կամ բարեկամներին այցելելու վերաբերյալ որոշումները կայացվում են մեծամասամբ ամուսնու հետ համատեղ (80 տոկոս), իսկ կանանց 13 տոկոսն այս հարցում հիմնական որոշում կայացնողն է:

**Աղյուսակ 15.8 Մասնակցությունը որոշումների կայացմանը**

15-49 տարեկան ներկայում ամուսնացած կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ տարբեր հարցերի շուրջ հիմնականում որոշումներ կայացնող անձի, Հայաստան, 2015-16 թթ.

Որոշում	Հիմնականում կինը	Գինն ու ամուսինը համատեղ	Հիմնականում ամուսինը	Մյլ անձ	Մյլ	Տվյալ չկա	Ընդամենը	Թվաքանակ
<b>ԿԱՆԱՆՑ</b>								
Սեփական առողջության պահպանում	28.0	68.0	2.6	1.3	0.0	0.1	100.0	3,895
ՏՏ-ում հիմնական գնումներ	13.6	66.6	7.4	10.1	2.3	0.1	100.0	3,895
Այցելություն կնոջ ընտանիքին կամ բարեկամներին	12.5	79.8	3.4	3.4	0.7	0.2	100.0	3,895
<b>ՏՂԱՄԱՐԴԻԿ</b>								
Սեփական առողջության պահպանում	15.7	59.3	23.1	0.6	1.2	0.2	100.0	1,506
ՏՏ-ում հիմնական գնումներ	18.4	61.2	6.0	6.3	7.7	0.3	100.0	1,506

Ներկայում ամուսնացած տղամարդիկ հարցվել են, թե ով է հիմնականում որոշում կայացնում իրենց առողջության պահպանման և ՏՏ-ում հիմնական գնումներ կատարելու վերաբերյալ: Աղյուսակ 15.8-ը ցույց է տալիս, որ տղամարդկանց 23 տոկոսն իր առողջության պահպանման վերաբերյալ, իսկ 6 տոկոսը ՏՏ-ում հիմնական գնումներ կատարելու վերաբերյալ հիմնական որոշում կայացնողն է, մինչդեռ հինգ տղամարդկանցից երեքը որոշումները կայացնում

են կնոջ հետ համատեղ (համապատասխանաբար 59 և 61 տոկոս): Տղամարդկանց համապատասխանաբար 16 և 18 տոկոսի դեպքում առողջության պահպանման և SS-ում հիմնական գնումների վերաբերյալ որոշումները կայացվում են կնոջ կամ մեկ այլ անձի կողմից:

Տղամարդկանց և կանանց որոշումների ընդունման ցուցանիշների համեմատությունը ենթադրում է, որ կանայք փոքր-ինչ ավելի շատ են ներգրավված սեփական առողջության պահանման և SS-ում հիմնական գնումների կատարման վերաբերյալ որոշումներ կայացնելուն, քան տղամարդիկ:

Աղյուսակ 15.9.1-ը ցույց է տալիս կնոջ մասնակցությամբ որոշումների կայացման ցուցանիշի փոփոխությունն ըստ հիմնական բնութագրիչների: Ինչպես արդեն նշվել է, ամուսնացած կանանց մեծամասնությունը որոշումները կայացնում է կա՛մ ինքնուրույն, կա՛մ ամուսնու հետ համատեղ: Ընդհանուր առմամբ, տասը կանանցից ինը մասնակցել են իրենց առողջության պահպանման (96 տոկոս) կամ ընտանիքին ու ընկերներին այցելելու (92 տոկոս) վերաբերյալ որոշումների կայացմանը, իսկ 80 տոկոսը՝ SS-ում հիմնական գնումների վերաբերյալ որոշման կայացմանը: Ներկայում ամուսնացած չորսը կանանցից երեքը (77 տոկոս) մասնակցել են բոլոր երեք նշված հարցերի շուրջ որոշումների կայացմանը, իսկ կանանց 2 տոկոսը չի մասնակցել ոչ մի որոշման կայացմանը (Գծապատկեր 15.1):

**Աղյուսակ 15.9.1 Կանանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում, ըստ հիմնական բնութագրիչների**

15-49 տարեկան ներկայում ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր սովորաբար կայացնում են առանձնացված որոշումներն ինքնուրույն կամ ամուսնու հետ համատեղ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.


Հիմնական բնութագրիչներ	Որոշումներ					
	Կնոջ առողջության պահպանում	SS-ում հիմնական գնումներ	Այցելություն կնոջ ընտանիքին կամ բարեկամներին	Բոլոր երեք որոշումները	Երեք որոշումներից ոչ մեկը	Կանանց թվաքանակ
<b>Տարիք</b>						
15-19	(91.9)	(60.2)	(83.8)	(57.2)	1.8	33
20-24	90.7	59.5	84.4	56.0	6.4	365
25-29	95.7	70.9	91.0	68.3	2.0	761
30-34	96.7	78.3	91.1	75.2	1.9	826
35-39	96.9	86.2	94.3	82.5	1.2	709
40-44	95.6	90.1	95.2	86.1	1.4	639
45-49	98.0	91.8	95.8	89.4	1.2	562
<b>Զբաղվածություն (վերջին 12 ամիսների ընթացքում)</b>						
Չի աշխատում	95.5	76.5	90.7	73.4	2.5	2,266
Աշխատում է դրամական վարձատրությամբ	96.1	84.8	94.9	81.3	1.6	1,306
Աշխատում է ոչ դրամական վարձատրությամբ	98.7	88.0	93.9	85.4	0.3	322
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>						
0	94.0	70.4	87.6	66.5	3.8	261
1-2	96.3	79.3	93.0	76.4	1.6	2,690
3-4	95.7	85.8	91.6	82.2	2.8	908
5+	(90.3)	(82.4)	(97.6)	(76.1)	0.0	36
<b>Բնակավայր</b>						
Քաղաքային	96.9	82.9	93.7	80.1	1.7	2,221
Գյուղական	94.7	76.7	90.6	73.0	2.5	1,674
<b>Մարզ</b>						
Երևան	97.4	84.4	95.0	81.6	1.3	1,140
Արագածոտն	97.9	89.9	85.8	79.4	0.5	187
Արարատ	87.0	53.6	81.2	47.3	6.4	360
Արմավիր	99.2	90.8	97.9	89.6	0.5	405
Գեղարքունիք	88.1	62.4	81.4	60.2	8.6	298
Լոռի	99.1	76.1	96.7	74.7	0.0	214
Կոտայք	98.2	80.7	95.4	80.1	1.0	476
Շիրակ	98.5	84.2	94.2	82.0	0.6	349
Սյունիք	92.9	92.1	89.2	80.1	1.5	172
Վայոց ձոր	97.8	90.7	95.4	88.6	0.5	87
Տավուշ	96.1	82.7	94.6	81.3	1.3	208
<b>Կրթություն</b>						
Հիմնական	92.9	77.1	88.3	70.6	3.0	205
Միջնակարգ	94.6	76.7	90.5	73.9	3.1	1,669
Միջին մասնագիտական	96.9	83.5	93.1	79.8	1.3	953
Բարձրագույն	97.8	83.5	95.3	80.8	0.9	1,064
<b>Բարեկեցության քվինտիլ</b>						
Ամենացածր	94.3	74.9	89.8	71.9	3.7	695
Երկրորդ	94.5	79.2	91.0	75.5	2.2	834
Միջին	96.2	80.1	93.0	77.3	1.7	721
Չորրորդ	97.6	84.4	93.2	80.1	1.2	790
Ամենաբարձր	97.1	82.0	94.4	79.8	1.6	855
Ընդամենը	96.0	80.3	92.3	77.1	2.0	3,895

Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Ընդամենը ներառում է կանանց 1 դեպք, երբ չկա տվյալ գրառվածության վերաբերյալ, և կանանց 4 դեպք՝ առանց որևէ կրթության:



**Գծապատկեր 15.1 Որոշումների թվաքանակը, որոնց կայացմանը մասնակցում են ներկայում ամուսնացած կանայք**

Կանանց տոկոս



Գոյություն ունի ամուր կապ ներկայում ամուսնացած կանանց տարիքի և որոշումների կայացման գործընթացում նրանց մասնակցության միջև: Բոլոր երեք որոշումների կայացման գործընթացում մասնակցության տոկոսն աճում է կնոջ տարիքին զուգընթաց՝ կազմելով 56 տոկոս 20-24 տարեկան կանանց շրջանում և 89 տոկոս՝ 45-49 տարեկանների շրջանում: Երեխա չունեցող կանայք (67 տոկոս) ավելի քիչ են հակված բոլոր երեք որոշումների կայացմանը մասնակցելուն, քան երեխա ունեցող կանայք, հատկապես 3-4 երեխա ունեցողները (82 տոկոս): Ներկայում ամուսնացած կանանց մասնաբաժինը, ովքեր մասնակցում են բոլոր երեք որոշումների կայացմանը, խիստ տատանվում է ըստ մարզերի՝ Արարատի մարզում կազմելով 47 տոկոս, իսկ Արմավիրի մարզում՝ 90 տոկոս: Որոշումների կայացման հարցում կանանց մասնակցության ցուցանիշը դրական կերպով է փոխկապակցված կնոջ կրթական և բարեկեցության մակարդակների հետ:

Աղյուսակ 15.9.2-ը ցույց է տալիս, որ ամուսնացած տղամարդկանց մեծամասնությունը (82 տոկոս) սեփական առողջության պահպանման վերաբերյալ որոշումը կայացնում է ինքնուրույն կամ կնոջ հետ համատեղ, իսկ 67 տոկոսն ինքնուրույն կամ կնոջ հետ համատեղ կայացնում է որոշում SS-ում հիմնական գնումներ կատարելու վերաբերյալ: Ներկայում ամուսնացած տղամարդկանց երկու երրորդը մասնակցում է երկու որոշումների կայացմանն էլ, իսկ 16 տոկոսը նշել է, որ չի մասնակցում որոշումներից ոչ մեկի կայացմանը: Նշված երկու որոշումների կայացմանը մասնակցող տղամարդկանց մասնաբաժինն աճում է տարիքին և երեխաների թվաքանակին զուգընթաց, և այն շատ ավելի մեծ է քաղաքաբնակների շրջանում (72 տոկոս), քան գյուղաբնակների (57 տոկոս): Երկու որոշումների կայացմանը մասնակցող ներկայում ամուսնացած տղամարդկանց մասնաբաժինը խիստ տատանվում է ըստ մարզերի՝ կազմելով ամենացածրը՝ 3 տոկոս Կոտայքի մարզում, և ամենաբարձրը՝ 99 տոկոս՝ Արագածոտնի մարզում: Ցուցանիշն ակնհայտ կախվածություն չունի բարեկեցությունից, սակայն այն աճում է տղամարդու կրթական մակարդակին զուգընթաց՝ կազմելով 52 տոկոս՝ հիմնական կրթություն ունեցող տղամարդկանց շրջանում և 74 տոկոս՝ բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում:

**Աղյուսակ 15.9.2 Տղամարդկանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում, ըստ հիմնական բնութագրիչների**

15-49 տարեկան ներկայում ամուսնացած տղամարդկանց տոկոսը, ովքեր սովորաբար կայացնում են առանձնացված որոշումներն ինքնուրույն կամ կնոջ հետ համատեղ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Որոշումներ				Տղամարդկանց թվաքանակ
	Տղամարդու առողջության պահպանում	SS-ում հիմնական գնումներ	Երկու որոշումներն էլ	Երկու որոշումներից ոչ մեկը	
<b>Տարիք</b>					
20-24	74.0	41.3	41.3	26.0	52
25-29	80.6	63.2	60.8	17.0	206
30-34	81.5	63.6	61.9	16.8	322
35-39	82.3	68.5	66.6	15.8	320
40-44	85.4	69.8	68.5	13.2	309
45-49	82.9	74.5	73.3	16.0	297
<b>Զբաղվածություն (վերջին 12 ամիսների ընթացքում)</b>					
Չի աշխատում	93.8	71.5	69.7	4.4	165
Աշխատում է դրամական վարձատրությամբ	81.0	67.0	65.4	17.4	1,293
Աշխատում է ոչ դրամական վարձատրությամբ	80.4	57.1	57.1	19.6	47
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>					
0	80.2	60.1	58.7	18.4	120
1-2	83.3	66.8	65.2	15.1	1,061
3-4	79.4	71.1	69.3	18.8	313
5+	*	*	*	*	13
<b>Բնակավայր</b>					
Քաղաքային	86.7	73.7	71.9	11.5	859
Գյուղական	76.7	58.6	57.4	22.1	648
<b>Մարզ</b>					
Երևան	97.1	85.4	84.0	1.5	446
Արագածոտն	99.5	98.6	98.6	0.5	71
Արարատ	68.0	59.6	58.8	31.1	151
Արմավիր	87.2	56.6	55.8	12.0	159
Գեղարքունիք	93.7	86.3	83.3	3.3	118
Լոռի	100.0	68.9	68.9	0.0	94
Կոտայք	10.7	4.7	2.8	87.4	186
Շիրակ	94.7	70.9	66.4	0.7	119
Սյունիք	98.9	97.0	95.9	0.0	55
Վայոց ձոր	92.3	78.6	75.3	4.4	34
Տավուշ	99.2	57.8	57.0	0.0	76
<b>Կրթություն</b>					
Հիմնական	71.2	55.0	51.9	25.6	174
Միջնակարգ	82.9	65.5	64.2	15.8	717
Միջին մասնագիտական	82.3	67.9	66.6	16.4	240
Բարձրագույն	86.5	75.7	74.2	12.0	372
<b>Բարեկեցության քվինտիլ</b>					
Ամենացածր	79.7	57.9	55.9	18.4	280
Երկրորդ	78.0	62.2	61.9	21.6	306
Միջին	82.8	73.0	70.9	15.1	267
Չորրորդ	82.0	65.5	65.0	17.5	319
Ամենաբարձր	88.7	76.7	73.7	8.3	335
Ընդամենը 15-49	82.4	67.2	65.6	16.0	1,506

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Ընդամենը ներառում է տղամարդկանց 1 դեպք, երբ չկա տվյալ զբաղվածության վերաբերյալ, և տղամարդկանց 3 դեպք՝ առանց որևէ կրթության:

## 15.5 ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԿՆՈՋ ԾԵԾԻ ՆԿԱՏԱՍԱԲ

Կնոջ ծեծը ֆիզիկական բռնության ձև է, որն ազդում է կնոջ արժանապատվության վրա և ոտնահարում է նրա ունեցած մարդու իրավունքները: Ավելին՝ բռնության այս ձևը նվազեցնում է կնոջ ինքնագնահատականը և հասարակության մեջ նրա դերը՝ այդպիսով իսկ սահմանափակելով կնոջ հզորացումը: Նման վարքագծի արդարացումն անդրադառնում է կնոջ ցածր կարգավիճակի վրա, ինչպես նաև ընդունելի է դարձնում այն միտքը, որ տղամարդիկ բարձր են կանանցից:

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում հավաքագրվել է տեղեկատվություն կնոջ ծեծի նկատմամբ վերաբերմունքի մասին: Կանայք և տղամարդիկ հարցվել են, թե արդյոք կարելի է արդարացնել ամուսնուն, եթե նա ծեծում է կնոջը հետևյալ իրավիճակներում. եթե կինն այրում է կերակուրը, եթե հակաճառում է ամուսնուն, եթե դուրս է գալիս տնից առանց ամուսնուն զգուշացնելու, եթե անուշադրության է մատնում երեխաներին, եթե հրաժարվում է սեռական հարաբերություն ունենալ: Կանայք, ովքեր ընդունում են, որ նշված որևէ իրավիճակում ամուսինը կնոջը ծեծելու կամ հարվածելու իրավունք ունի, կարող են համարել, որ ունեն ավելի ցածր կարգավիճակ, քան տղամարդիկ: Նման կարծրատիպային մտեցումը կարող է արգելք հանդիսանալ կնոջ համար սոցիալական և տնտեսական հնարավորություններից օգտվելու առումով: Սա էլ իր հերթին կարող է բացասաբար անդրադառնալ կնոջ կյանքի որակի և ընդհանուր բարեկեցության վրա:

Աղյուսակ 15.10.1-ը և Աղյուսակ 15.10.2-ը համապատասխանաբար ցույց են տալիս կանանց և տղամարդկանց վերաբերմունքը կնոջ ծեծի նկատմամբ վերոնշյալ հինգ իրավիճակներից յուրաքանչյուրում, և կանանց ու տղամարդկանց տոկոսը, ովքեր կարծում են, որ ամուսինն իրավունք ունի ծեծելու կնոջը վերոնշյալ իրավիճակներից առնվազն մեկում:

**Աղյուսակ 15.10.1 Վերաբերումները կնոջ ծեծի նկատմամբ կանայք**

15-49 տարեկան բոլոր կանանց տոկոսը, ովքեր կարծում են, որ ամուսինն իրավունք ունի ծեծելու կամ հարվածելու կնոջը առանձնացված իրավիճակներում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Ամուսնու կողմից կնոջը ծեծելը կամ հարվածելն արդարացված է, եթե կինը				Կանանց տոկոսը, որ համաձայն է նշված իրավիճակներից ամենալավն մեկին		
	Այրում է կերակուրը	Հակաճառում է ամուսնուն	Դուրս է գալիս տնից առանց ամուսնուն զգուշացնելու	Անուշադրության է մատնում երեխաներին	Հրաժարվում է սեռական հարաբերություն ունենալ	Կանանց թվաքանակ	Կանանց թվաքանակ
<b>Տարիք</b>							
15-19	0.4	4.8	5.1	7.2	0.6	8.7	725
20-24	0.2	5.4	4.5	7.0	0.7	8.7	928
25-29	0.4	6.0	4.9	8.2	0.7	9.5	1,099
30-34	0.4	7.0	6.3	9.7	1.0	11.3	1,007
35-39	0.3	6.4	5.7	8.6	0.6	10.1	867
40-44	0.7	6.1	4.6	9.2	1.2	10.8	784
45-49	0.2	7.1	5.8	10.4	0.5	11.7	706
<b>Զբաղվածություն (վերջին 12 ամիսների ընթացքում)</b>							
Չի աշխատում	0.2	5.2	4.2	7.6	0.6	9.1	3,648
Աշխատում է դրամական վարձատրությամբ	0.6	6.1	4.6	7.6	1.1	9.1	2,115
Աշխատում է ոչ դրամական վարձատրությամբ	0.3	16.0	19.8	24.4	0.6	26.2	351
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>							
0	0.2	4.7	4.7	6.7	0.5	8.2	2,120
1-2	0.3	5.5	4.2	8.3	0.5	9.5	2,990
3-4	0.9	10.5	9.1	13.4	2.1	15.8	966
5+	(0.0)	(16.4)	(13.8)	(17.8)	(0.0)	(19.3)	39
<b>Ամուսնական կարգավիճակ</b>							
Երբևէ չամուսնացած	0.3	4.7	5.0	6.8	0.5	8.4	1,830
Ամուսնացած/ համատեղ բնակվող	0.4	7.1	5.7	9.9	0.9	11.4	3,895
Ամուսնալուծված/ բաժանված/ այրի	0.3	3.2	2.5	3.8	0.8	5.3	390
<b>Բնակավայր</b>							
Քաղաքային	0.1	3.4	2.5	5.4	0.5	6.3	3,657
Գյուղական	0.8	10.2	9.3	13.4	1.2	15.7	2,459
<b>Մարզ</b>							
Երևան	0.0	0.7	0.3	1.6	0.3	2.2	2,001
Արագածոտն	0.3	18.6	23.2	32.2	0.7	40.2	315
Արարատ	0.0	3.1	1.1	3.1	0.3	5.7	552
Արմավիր	0.1	1.5	0.2	1.9	0.1	2.2	586
Գեղարքունիք	3.4	33.2	38.3	40.0	5.1	41.2	478
Լոռի	0.0	0.9	1.0	7.6	0.0	7.8	355
Կոտայք	0.3	2.8	1.5	6.9	0.7	7.3	678
Շիրակ	0.0	4.1	0.4	1.6	0.0	4.9	510
Սյունիք	0.0	0.3	0.0	2.8	0.3	2.8	238
Վայոց ձոր	1.5	33.9	12.0	31.1	2.6	39.9	119
Տավուշ	0.0	11.4	7.3	16.9	0.6	17.4	283
<b>Կրթություն</b>							
Հիմնական	0.1	5.3	5.4	9.4	1.5	12.0	396
Միջնակարգ	0.9	9.2	8.7	12.6	1.2	14.4	2,444
Միջին մասնագիտական	0.0	5.1	4.2	7.5	0.4	8.5	1,360
Բարձրագույն	0.0	3.0	1.6	4.2	0.3	5.3	1,910
<b>Բարեկեցության քվինտիլ</b>							
Ամենացածր	0.9	9.4	7.5	11.4	1.5	14.3	1,081
Երկրորդ	0.5	8.2	8.0	12.7	0.9	14.5	1,242
Միջին	0.4	8.4	7.9	10.5	0.7	11.9	1,142
Չորրորդ	0.0	3.4	2.6	6.1	0.2	6.9	1,287
Ամենաբարձր	0.1	2.2	1.2	3.5	0.6	4.2	1,365
Ընդամենը	0.4	6.1	5.2	8.6	0.8	10.1	6,116

Նշում: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Ընդամենը ներառում է կանանց 2 դեպք, երբ չկա տվյալ զբաղվածության վերաբերյալ, և կանանց 5 դեպք՝ առանց որևէ կրթության:

**Աղյուսակ 15.10.2 Վերաբերումները կնոջ ծեծի նկատմամբ տղամարդիկ**

15-49 տարեկան բոլոր տղամարդկանց տոկոսը, ովքեր կարծում են, որ ամուսինն իրավունք ունի ծեծելու կամ հարվածելու կնոջը առանձնացված իրավիճակներում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Ամուսնու կողմից կնոջը ծեծելը կամ հարվածելն արդարացված է, եթե կինը					Տղամարդկանց տոկոսը, որ համաձայն է նշված իրավիճակներից համարվանք թվաքանակ	
	Այրու մ է կերակուրը	Հակաճառում է ամուսնուն	Դուրս է գալիս տնից առանց ամուսնուն զգուշացնելու	Անուշադրության է մատնում երեխաներին	Հրաժարվում է սեռական հարաբերություն ունենալ	իրավիճակներից համարվանք	Տղամարդկանց թվաքանակ
<b>Տարիք</b>							
15-19	0.7	14.0	14.2	19.0	0.7	24.7	345
20-24	0.6	16.9	13.4	18.7	1.2	23.9	467
25-29	0.8	16.9	10.3	16.0	1.3	23.2	464
30-34	0.5	16.7	10.7	17.3	1.6	22.7	427
35-39	0.9	12.2	8.2	15.2	2.8	19.7	376
40-44	0.4	20.9	14.2	20.0	2.2	25.1	346
45-49	0.6	14.9	11.2	14.0	1.9	18.1	330
<b>Զբաղվածություն (վերջին 12 ամիսների ընթացքում)</b>							
Չի աշխատում	0.7	12.2	8.7	16.0	1.5	20.7	790
Աշխատում է դրամական վարձատրությամբ	0.6	17.0	12.3	17.0	1.5	22.2	1,874
Աշխատում է ոչ դրամական վարձատրությամբ	1.0	31.7	26.3	31.5	6.0	47.0	90
<b>Կենդանի երեխաների թվաքանակ</b>							
0	0.9	15.8	12.9	17.2	1.3	22.9	1,321
1-2	0.4	15.8	9.7	17.0	2.1	22.2	1,100
3-4	0.5	18.0	13.5	17.9	1.4	22.2	322
5+	*	*	*	*	*	*	13
<b>Ամուսնական կարգավիճակ</b>							
Երբևէ չամուսնացած	1.0	16.0	12.9	17.2	1.4	23.2	1,190
Ամուսնացած/ համատեղ բնակվող	0.4	15.8	10.3	16.5	1.5	21.3	1,506
Ամուսնալուծված/ բաժանված/ այրի	(0.0)	(27.5)	(22.5)	(33.7)	(9.1)	(42.3)	59
<b>Բնակավայր</b>							
Քաղաքային	0.7	9.5	7.1	12.0	1.2	15.1	1,558
Գյուղական	0.7	24.7	17.7	23.9	2.2	32.3	1,197
<b>Մարզ</b>							
Երևան	0.2	1.3	1.0	3.1	0.9	3.8	833
Արագածոտն	0.0	3.1	3.3	3.7	0.0	4.3	159
Արարատ	0.0	0.8	0.8	0.2	0.0	1.2	290
Արմավիր	1.4	28.5	13.9	12.1	2.1	34.5	268
Գեղարքունիք	0.3	77.3	99.0	97.7	6.4	100.0	235
Լոռի	0.4	2.5	0.4	9.5	0.0	9.9	184
Կոտայք	0.0	14.9	4.7	17.1	0.3	22.7	299
Շիրակ	4.5	33.4	3.5	38.0	6.2	50.9	201
Սյունիք	2.3	2.3	5.5	7.8	3.0	10.4	104
Վայոց ձոր	0.0	22.3	13.8	18.8	0.4	24.2	56
Տավուշ	0.3	29.1	1.2	12.2	0.0	31.3	126
<b>Կրթություն</b>							
Հիմնական	1.0	22.0	13.6	17.8	2.4	30.3	360
Միջնակարգ	0.6	20.2	16.3	22.8	2.2	27.9	1,250
Միջին մասնագիտական	0.6	13.0	6.8	14.1	1.5	18.9	403
Բարձրագույն	0.6	8.1	5.8	9.1	0.5	11.9	736
<b>Բարեկեցության քվինտիլ</b>							
Ամենացածր	0.5	22.6	16.3	19.1	2.3	29.2	523
Երկրորդ	1.2	23.2	15.0	23.1	1.8	30.6	583
Միջին	0.4	19.5	17.5	24.7	2.8	28.8	521
Չորրորդ	1.0	10.2	5.9	11.9	0.9	15.6	566
Ամենաբարձր	0.2	5.5	4.4	7.6	0.4	9.3	562
Ընդամենը 15-49	0.7	16.1	11.7	17.2	1.6	22.6	2,755

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Ընդամենը ներառում է տղամարդկանց 1 դեպք, երբ չկա տվյալ զբաղվածության վերաբերյալ, և տղամարդկանց 5 դեպք առանց որևէ կրթության:

15-49 տարեկան կանանց շրջանում կոնկրետ պատճառների դեպքում ծեծն արդարացի համարող կանանց մասնաբաժինը տատանվում է՝ կազմելով 1 տոկոս այն դեպքում, եթե կինն այրում է կերակուրը, և 9 տոկոս, եթե նա անուշադրության է մատնում երեխաներին: 15-49 տարեկան տղամարդկանց շրջանում կոնկրետ պատճառների դեպքում ծեծն արդարացի համարող տղամարդկանց մասնաբաժինն ավելի մեծ է, քան կանանց մասնաբաժինը: Տղամարդկանց մասնաբաժինը ևս տատանվում է՝ կազմելով 1 տոկոս այն դեպքում, եթե կինն այրում է կերակուրը, և 17 տոկոս, եթե նա անուշադրության է մատնում երեխաներին: Ընդհանուր առմամբ, կանանց 10 և տղամարդկանց 23 տոկոսը կարծում են, որ կնոջը ծեծելն արդարացված է առանձնացված իրավիճակներից առնվազն մեկում:

Որևէ իրավիճակում կնոջ ծեծն արդարացի համարող կանանց մասնաբաժինը շատ աննշան աճում է տարիքին և ունեցած երեխաների թվաքանակի աճին զուգընթաց, և այն հարաբերականորեն ավելի բարձր է այն կանանց շրջանում, ովքեր աշխատում են, սակայն չեն ստանում դրամական վարձատրություն (26 տոկոս): Առնվազն մեկ իրավիճակում կնոջ ծեծն արդարացի համարող կանանց մասնաբաժինը, քաղաքային բնակավայրերի համեմատությամբ (6 տոկոս), ավելի մեծ է գյուղական բնակավայրերում (16 տոկոս): Ավելին, ի տարբերություն ամուսնացած կանանց (11 տոկոս)՝ չամուսնացած (8 տոկոս) կամ նախկինում ամուսնացած (5 տոկոս) կանանց ավելի փոքր մասն է գտնում, որ տղամարդն իրավասու է ծեծելու իր կնոջը նշված իրավիճակներում: Կնոջ ծեծի նկատմամբ վերաբերմունքը տատանվում է ըստ մարզերի: Կնոջը ծեծելն արդարացված է համարում Երևանի, Արմավիրի և Սյունիքի մարզերի կանանց 2-3 տոկոսը, մինչդեռ Գեղարքունիքի, Արագածոտնի և Վայոց ձորի մարզերի կանանց 40-41 տոկոսն է արդարացված համարում կնոջ նկատմամբ կիրառվող ծեծը: Կնոջը ծեծելն արդարացի համարող կանանց մասնաբաժինը հակադարձ համեմատական է կրթությանն ու բարեկեցությանը:

Որևէ կոնկրետ իրավիճակում կնոջ ծեծն արդարացի համարող տղամարդկանց տոկոսն ըստ տարիքի ոչ միանշանակ կերպով է փոփոխվում, և այն տղամարդկանց շրջանում, ովքեր աշխատում են, սակայն չեն ստանում դրամական վարձատրություն, այս ցուցանիշն ավելի բարձր է (47 տոկոս), քան չաշխատող կամ դրամական վարձատրությամբ աշխատող տղամարդկանց շրջանում (21-22 տոկոս): Ինչպես կանանց դեպքում, գյուղաբնակ տղամարդկանց ավելի մեծ մասնաբաժինն է (32 տոկոս) առնվազն մեկ իրավիճակում կնոջ ծեծն արդարացի համարում՝ քաղաքային տղամարդկանց համեմատությամբ (15 տոկոս): Արարատի մարզում բնակվող տղամարդիկ (1 տոկոս) ամենաքիչն են հակված առնվազն մեկ իրավիճակում կնոջ ծեծն արդարացի համարելուն, մինչդեռ Գեղարքունիքի մարզում բոլոր տղամարդիկ այն արդարացի են համարում (100 տոկոս): Տղամարդկանց տոկոսը, ովքեր առնվազն մեկ իրավիճակում կնոջ ծեծն արդարացի են համարում, ամենաբարձրն է կրթության և բարեկեցության ամենացածր մակարդակ ունեցող տղամարդկանց շրջանում:

Ըստ ՀՏԱՀ 2010-ի և ՀՏԱՀ 2015-16-ի արդյունքների՝ կնոջ ծեծի նկատմամբ կանանց և տղամարդկանց ունեցած վերաբերմունքի մեջ գրեթե փոփոխություն չի գրանցվել: Կանանց և տղամարդկանց մասնաբաժինը, ովքեր առնվազն մեկ իրավիճակում կնոջ ծեծն արդարացի են համարում, ՀՏԱՀ 2010-ին կազմել է կանանց 9 և տղամարդկանց 20 տոկոսը, իսկ ՀՏԱՀ 2015-16-ին՝ կանանց 10 և տղամարդկանց 23 տոկոսը:

## 15.6 ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎ ՄԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՍՈՒՄՆՈՒ ՀԵՏ ԽՈՍԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում կանայք և տղամարդիկ հարցվել են, թե արդյոք կլինն իրավասու է մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբերություն, եթե գիտի, որ ամուսինը սեռական հարաբերությունների մեջ է այլ կանանց հետ, կամ կլինն իրավասու է խնդրել ամուսնուն օգտագործել պահպանակ սեռական հարաբերության ժամանակ, եթե գիտի, որ ամուսինն ունի սեռական ճանապարհով փոխանցվող վարակ (ՄՃՓՎ): Հավատալ, որ կլինն ունի իրավունք որևէ պատճառով մերժելու ամուսնուն ունենալ սեռական հարաբերություն կամ խնդրելու ամուսնուն օգտագործել պահպանակ, հանդիսանում են ապահով սեռական հարաբերություններ ունենալու կարևոր գործոններ: Ապահով սեռական հարաբերությունները պաշտպանում են կանանց և նրանց զուգընկերներին բազմաթիվ հիվանդություններից և կանանց հզորացման կարևոր ասպեկտ են:

Աղյուսակ 15.11-ը ցույց է տալիս, որ 15-49 տարեկան կանանց 85 և տղամարդկանց 73 տոկոսը համաձայն են, որ կլինը կարող է մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբերություն, եթե գիտի, որ ամուսինը սեռական հարաբերությունների մեջ է այլ կանանց հետ, իսկ կանանց 87 և տղամարդկանց 93 տոկոսը համաձայն են, որ կլինը կարող է խնդրել ամուսնուն օգտագործել պահպանակ սեռական հարաբերության ժամանակ, եթե գիտի, որ ամուսինն ունի սեռական ճանապարհով փոխանցվող վարակ: Ընդհանուր առմամբ, կանանց շրջանում այս ցուցանիշը միտում ունի աճելու կնոջ տարիքին, կրթական և բարեկեցության մակարդակների աճին զուգընթաց, և այն ավելի բարձր է քաղաքային կանանց շրջանում, քան գյուղաբնակների: Երբևէ չամուսնացած կանանց համեմատությամբ՝ երբևէ ամուսնացած կանայք ավելի դրական վերաբերմունք ունեն այս հարցի շուրջ: Ցուցանիշը նաև տարբերվում է ըստ մարզերի, սակայն գրեթե բոլոր մարզերում կանանց մեծամասնությունը կարծում է, որ կլինն ունի ապահով սեռական հարաբերություններ ունենալու իրավունք: Այն կանանց մասնաբաժինը, ովքեր կարծում են, որ կլինը կարող է մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբերություն, եթե գիտի, որ ամուսինը սեռական հարաբերությունների մեջ է այլ կանանց հետ, ամենացածրն է Տավուշի մարզում՝ 61 տոկոս: Իսկ այն կանանց մասնաբաժինը, ովքեր կարծում են, որ կլինը կարող է խնդրել ամուսնուն օգտագործել պահպանակ սեռական հարաբերության ժամանակ, եթե գիտի, որ ամուսինն ունի սեռական ճանապարհով փոխանցվող վարակ, ամենացածրն է Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում՝ 72-ական տոկոս:

**Աղյուսակ 15.11 Վերաբերմունքի ապահով սեռական հարաբերություններ ունենալու մասին ամուսնու հետ խոսելու վերաբերյալ**

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր կարծում են, որ կինն իրավասու է մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբերություն, եթե գիտի, որ ամուսինը սեռական հարաբերությունների մեջ է այլ կանանց հետ, և տոկոսը, ովքեր կարծում են, որ կինն իրավասու է խնդրել ամուսնուն օգտագործել պահպանակ սեռական հարաբերության ժամանակ, եթե գիտի, որ ամուսինն ունի սեռական ճանապարհով փոխանցվող վարակ (ՍՃՓՎ), ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

	Կանայք			Տղամարդիկ		
	Կինն իրավասու է			Կինն իրավասու է		
	Մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբեր., եթե գիտի, որ ամուսինը սեռական հարաբեր. մեջ է այլ կանանց հետ	Խնդրել ամուսնուն օգտագործել պահպանակ սեռական հարաբեր. ժամանակ, եթե գիտի, որ ամուսինն ունի ՍՃՓՎ	Կանանց թվաքանակ	Մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբեր., եթե գիտի, որ ամուսինը սեռական հարաբեր. մեջ է այլ կանանց հետ	Խնդրել ամուսնուն օգտագործել պահպանակ սեռական հարաբեր. ժամանակ, եթե գիտի, որ ամուսինն ունի ՍՃՓՎ	Տղամարդկանց թվաքանակ
<b>Տարիք</b>						
15-24	73.4	75.7	1,653	64.0	86.0	813
15-19	63.0	64.7	725	57.8	81.5	345
20-24	81.5	84.3	928	68.5	89.4	467
25-29	87.3	89.7	1,099	72.9	95.8	464
30-39	89.6	91.7	1,874	76.3	95.1	802
40-49	88.4	91.6	1,490	78.4	96.3	676
<b>Ամուսնական կարգավիճակ</b>						
Երբևէ չամուսնացած	73.7	75.4	1,830	66.2	87.9	1,190
Ունեցել է սեռական հարաբերություն	*	100.0	12	69.5	93.9	631
Երբեք չի ունեցել սեռական հարաբերություն	73.8	75.2	1,818	62.5	81.2	559
Ամուսնացած/ համատեղ բնակվող	89.1	91.8	3,895	77.5	96.6	1,506
Ամուսնալուծված/ բաժանված/ այրի	89.2	93.3	390	(75.6)	(95.9)	59
<b>Քնակավայր</b>						
Քաղաքային	89.4	91.6	3,657	70.6	92.5	1,558
Գյուղական	77.3	80.1	2,459	75.2	93.2	1,197
<b>Մարզ</b>						
Երևան	95.0	96.6	2,001	65.3	92.9	833
Արագածոտն	81.0	84.2	315	84.5	97.1	159
Արարատ	84.9	84.8	552	80.9	94.4	290
Արմավիր	77.1	79.2	586	94.9	95.8	268
Գեղարքունիք	70.1	71.6	478	96.1	97.9	235
Լոռի	90.1	89.8	355	64.9	73.3	184
Կոտայք	84.5	92.5	678	47.1	98.7	299
Շիրակ	81.7	82.2	510	97.4	97.8	201
Սյունիք	74.4	71.9	238	69.0	69.1	104
Վայոց ձոր	82.8	88.7	119	52.5	92.0	56
Տավուշ	61.2	73.5	283	38.8	94.0	126
<b>Կրթություն</b>						
Հիմնական	59.2	65.0	396	72.0	89.3	360
Միջնակարգ	81.0	83.5	2,444	74.6	93.1	1,250
Միջին մասնագիտական	88.0	89.3	1,360	71.4	91.3	403
Բարձրագույն	92.1	94.7	1,910	70.2	95.0	736
<b>Բարեկեցության քվինտիլ</b>						
Ամենացածր	73.8	75.8	1,081	78.4	92.4	523
Երկրորդ	81.8	84.0	1,242	74.7	93.1	583
Միջին	83.7	87.0	1,142	71.6	93.0	521
Չորրորդ	88.2	90.5	1,287	74.8	93.1	566
Ամենաբարձր	92.8	95.3	1,365	63.7	92.5	562
Ընդամենը	84.5	87.0	6,116	72.6	92.8	2,755

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել: Փակագծերում տրված ցուցանիշները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Ընդամենը ներառում է կանանց 5 դեպք՝ առանց որևէ կրթության:

Ըստ հիմնական բնութագրիչների՝ տղամարդկանց շրջանում վերաբերմունքը վերոնշյալ իրավիճակներում կնոջ իրավասությունների վերաբերյալ ավելի քիչ է փոփոխվում, քան կանանց շրջանում: Գյուղաբնակ տղամարդիկ ավելի դրական վերաբերմունք ունեն այս հարցերի շուրջ, քան քաղաքաբնակ տղամարդիկ, իսկ ըստ բարեկեցության՝ ամենաբարձր քվինտիլում գտնվող տղամարդիկ ամենաքիչն են հակված դրական վերաբերմունք ունենալուն: Տավուշի մարզում



տղամարդկանց միայն 39 տոկոսը, իսկ Կոտայքի մարզում տղամարդկանց 50 տոկոսից պակասն են կարծում, որ կինը կարող է մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբերություն, եթե գիտի, որ ամուսինը սեռական հարաբերությունների մեջ է այլ կանանց հետ: Ի հակադրություն սրան՝ տղամարդկանց տոկոսը, ովքեր կարծում են, որ կինը կարող է խնդրել ամուսնուն օգտագործել պահպանակ սեռական հարաբերության ժամանակ, եթե գիտի, որ ամուսինն ունի սեռական ճանապարհով փոխանցվող վարակ, բարձր է գրեթե բոլոր մարզերում՝ կազմելով ամենացածրը 69 տոկոս Սյունիքի մարզում բնակվող տղամարդկանց շրջանում:

Ի լրումն կանանց և տղամարդկանց ունեցած վերաբերմունքի մասին հարցերին՝ ՀԺԱՀ 2015-16-ի շրջանակում ներկայում ամուսնացած կանայք հարցվել են, թե արդյոք իրենք կարող են քննարկել ապահով սեռական հարաբերություններ ունենալու հարցն իրենց ամուսնու հետ: Մասնավորապես, 15-49 տարեկան ներկայում ամուսնացած կանայք հարցվել են, թե արդյոք կարող են մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբերություն, եթե այդ պահին չեն ցանկանում, և արդյոք կարող են խնդրել ամուսնուն օգտագործել պահպանակ սեռական հարաբերության ժամանակ: Աղյուսակ 15.12-ը ցույց է տալիս 15-49 տարեկան ներկայում ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր դրական պատասխան են տվել այս հարցերից յուրաքանչյուրին, ըստ հիմնական բնութագրիչների: Ընդհանուր առմամբ, կանանց կեսից պակասը՝ 48-ական տոկոսը, դրական պատասխան է տվել այս իրավիճակներից յուրաքանչյուրին:

**Աղյուսակ 15.12 Կարողությունն ապահով սեռական հարաբերություններ ունենալու մասին ամուսնու հետ խոսելու վերաբերյալ**

15-49 տարեկան ներկայում ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր կարող են մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբերություն, եթե այդ պահին չեն ցանկանում, և տոկոսը, ովքեր կարող են խնդրել ամուսնուն օգտագործել պահպանակ սեռական հարաբերության ժամանակ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2015-16 թթ.

Հիմնական բնութագրիչներ	Տոկոսը, որ կարող է մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբերություն, եթե այդ պահին չի ցանկանում	Տոկոսը, որ կարող է խնդրել ամուսնուն օգտագործել պահպանակ	Կանանց թվաքանակ
<b>Տարիք</b>			
15-24	16.7	17.2	1,653
15-19	3.4	3.4	725
20-24	27.2	27.9	928
25-29	50.7	53.0	1,099
30-39	61.7	62.2	1,874
40-49	63.2	59.1	1,490
<b>Բնակավայր</b>			
Քաղաքային	49.6	49.7	3,657
Գյուղական	45.4	44.5	2,459
<b>Մարզ</b>			
Երևան	51.3	50.7	2,001
Արագածոտն	33.0	30.8	315
Արարատ	47.2	49.1	552
Արմավիր	49.5	47.9	586
Գեղարքունիք	31.2	28.2	478
Լոռի	54.7	48.0	355
Կոտայք	43.8	52.2	678
Շիրակ	52.0	54.3	510
Սյունիք	53.8	35.7	238
Վայոց ձոր	49.4	47.9	119
Տավուշ	55.1	60.9	283
<b>Կրթություն</b>			
Հիմնական	31.2	24.0	396
Միջնակարգ	46.9	47.2	2,444
Միջին մասնագիտական	54.9	55.0	1,360
Բարձրագույն	47.8	47.9	1,910
<b>Բարեկեցության քվինտիլ</b>			
Ամենացածր	42.8	39.9	1,081
Երկրորդ	45.3	45.8	1,242
Միջին	47.3	46.2	1,142
Չորրորդ	47.7	49.6	1,287
Ամենաբարձր	55.1	54.8	1,365
Ընդամենը	47.9	47.6	6,116

Նշում: Ընդամենը ներառում է կանանց 5 դեպք՝ առանց որևէ կրթության:

15-24 տարեկան ներկայում ամուսնացած կանանց միայն 17 տոկոսն է դրական պատասխան տվել այս հարցերից յուրաքանչյուրին, սակայն կանանց մասնաբաժինը կտրուկ աճում է տարիքին զուգընթաց: 40-49 տարեկան կանանց 63 տոկոսը նշել է, որ կարող է մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբերություն, եթե այդ պահին չի ցանկանում, իսկ 59 տոկոսն ասել է, որ կարող է խնդրել ամուսնուն օգտագործել պահպանակ: Կանանց շրջանում տարբերություններն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի, շատ փոքր են, միայն թե քաղաքային կանայք մի փոքր ավելի հավանական է, որ հարցերից որևէ մեկին դրական պատասխան տված լինեն: Կանանց կարողությունն ապահով սեռական հարաբերություններ ունենալու մասին ամուսնու հետ խոսելու վերաբերյալ աճում է բարեկեցության աճին զուգընթաց, սակայն ըստ կրթության փոփոխվում է ոչ միանշանակ կերպով՝ երկու հարցերի դեպքում էլ ամենաբարձր ցուցանիշը միջին մասնագիտական կրթություն ունեցող կանանց շրջանում է, իսկ երկու հարցերի դեպքում էլ ամենացածրը՝ հիմնական կրթություն ունեցողների շրջանում: Կանանց տոկոսը, ովքեր նշել են, որ կարող են մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբերություն, եթե այդ պահին չեն ցանկանում, ամենաբարձրն է Տավուշի և Լոռիու մարզերում՝ 55-ական տոկոս, իսկ ամենացածրը Գեղարքունիքի մարզում է՝ 31 տոկոս: Իսկ կանանց տոկոսը, ովքեր կարող են խնդրել ամուսնուն օգտագործել պահպանակ, ամենաբարձրն է Տավուշի մարզում՝ 61 տոկոս, իսկ ամենացածրը Գեղարքունիքի մարզում է՝ 28 տոկոս:

### 15.7 ԿԱՆԱՆՑ ՀՈՐԱՑՈՒՄՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Կնոջ հզորացումն արտահայտող երկու բնութագրիչները՝ տնային տնտեսությունում որոշումների կայացման գործընթացում կնոջ մասնակցությունը և վերաբերմունքը կնոջ ծեծի նկատմամբ, ամփոփվել են երկու ցուցանիշների մեջ: Առաջին ցուցանիշը ցույց է տալիս ՏՏ-ում ինքնուրույն կամ ամուսնու հետ համատեղ կնոջ մասնակցությամբ կայացվող որոշումների քանակը (Տե՛ս Աղյուսակ 15.9.1-ը որոշումների ցանկի համար): Այս ցուցանիշը տատանվում է 0-3 արժեքների միջակայքում և դրականորեն է կապված կնոջ հզորացման հետ: Ցուցանիշն արտահայտում է այն որոշումների կայացման գործընթացում կանանց ներգրավվածության աստիճանը, որոնք վերաբերում են կնոջ կյանքին և շրջապատին: Երկրորդ ցուցանիշը, որը տատանվում է 0-5 արժեքների միջակայքում, այն պատճառների ընդհանուր թվաքանակն է (Տե՛ս Աղյուսակ 15.10.1-ը պատճառների ցանկի համար), որոնց դեպքում կանայք նշել են, որ ամուսինը կարող է ծեծել կնոջը: Այս ցուցանիշի ցածր արժեքը բնորոշ է բարձր ինքնագնահատական և լիազորությունների մեծ շրջանակ ունեցող կանանց:

Աղյուսակ 15.13-ը ցույց է տալիս վերոնշյալ երկու ցուցանիշների փոխկապակցվածությունը ներկայում ամուսնացած կանանց շրջանում: Ընդհանուր առմամբ, ենթադրվում է, որ կանայք, ովքեր մասնակցում են տնային տնտեսությունում որոշումների կայացմանը, հակված են սեռային հավասարության համոզմունքներին: Տվյալները ցույց են տալիս, որ, ինչպես ակնկալվում էր, կանանց մասնակցությամբ տնային տնտեսությունում կայացված որոշումների թվաքանակը դրականորեն է կապված կնոջ ծեծն արդարացնող բոլոր պատճառները չընդունող կանանց մասնաբաժնի հետ: Աղյուսակ 15.13-ը ցույց է տալիս, որ տնային տնտեսությունում ոչ մի որոշման կայացմանը չմասնակցող կանանց 72 տոկոսը համաձայն չեն կնոջ ծեծն արդարացնող ոչ մի պատճառի հետ՝ համեմատած բոլոր երեք որոշումների կայացմանը մասնակցող կանանց 89 տոկոսի հետ:

Աղյուսակ 15.13-ի երկրորդ հատվածը ցույց է տալիս, որ ՏՏ-ում որոշումների կայացման թվաքանակը նվազում է կնոջ ծեծն արդարացված համարելու պատճառների աճին գուցահեռ՝ կազմելով 78 տոկոս այն կանանց շրջանում, ովքեր համաձայն չեն կնոջ ծեծն արդարացնող պատճառներից ոչ մեկի հետ, և 66 տոկոս այն կանանց շրջանում, ովքեր համաձայն են կնոջ ծեծն արդարացնող 3-4 պատճառների հետ: Բոլոր հինգ պատճառներով կնոջ ծեծն արդարացնող կանանց թվաքանակը չափազանց փոքր է եզրակացություններ անելու համար:

**15.8 ՀԱԿԱԲԵՂՄԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆ ԸՍՏ ԿԱՆԱՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ**

Իր ծնելիությունը վերահսկելու և հակաբեղմնավորման մեթոդներ օգտագործելու կարողությունը կապված է կնոջ դերի հզորացման հետ, և այն ընկալման, որ կինը կարող է վերահսկել իր սեռական կյանքն ու ծնելիությունը: Իր կյանքին վերաբերող այլ որոշումների կայացման ժամանակ սահմանափակ լիազորություններ ունեցող կանայք առավել քիչ են հակված մտածելու, որ կարող են որոշումներ կայացնել իրենց ծնելիության վերաբերյալ:

Աղյուսակ 15.14-ը ցույց է տալիս կնոջ հզորացումն արտահայտող երկու ցուցանիշների և 15-49 տարեկան ներկայում ամուսնացած կանանց կողմից հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման միջև առկա կապը: Տվյալները ցույց են տալիս, որ գոյություն ունի դրական կախվածություն կնոջ հզորացումն արտահայտող երկու ցուցանիշներից յուրաքանչյուրի և հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման միջև: Օրինակ՝ տնային տնտեսությունում որոշումների կայացման գործընթացում մասնակցություն չունեցող կանանց 44 տոկոսն է նշել, որ օգտագործում է հակաբեղմնավորման որևէ մեթոդ՝ համեմատած մեկ կամ ավելի որոշումների կայացմանը մասնակցող կանանց 57-58 տոկոսի հետ: Հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների օգտագործման ցուցանիշը ևս բաշխված է նույնանման կերպով. տնային տնտեսությունում որոշումների կայացման գործընթացում մասնակցություն չունեցող կանանց 16 տոկոսն է նշել, որ օգտագործում է հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդ՝ համեմատած առնվազն մեկ որոշման կայացմանը մասնակցող կանանց 28-30 տոկոսի հետ:

Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման և կնոջ ծեծի նկատմամբ ունեցած վերաբերմունքի վրա հիմնված կնոջ հզորացման ցուցանիշի միջև կապն ավելի բարդ է: Հակաբեղմնավորման ավանդական մեթոդների օգտագործումն ավելի բարձր է այն կանանց շրջանում, ովքեր համաձայն են կնոջ ծեծն արդարացնող 3-4 պատճառների հետ, քան այն կանանց շրջանում, ովքեր չեն ընդունում կնոջ ծեծն արդարացնող ոչ մի պատճառ: Եվ հակառակը, հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների օգտագործումն ավելի բարձր է այն կանանց շրջանում (29 տոկոս), ովքեր չեն ընդունում կնոջ ծեծն արդարացնող ոչ մի պատճառ, քան այն կանանց, ովքեր համաձայն են կնոջ ծեծն արդարացնող 3-4 պատճառների հետ (18 տոկոս): Մա

**Աղյուսակ 15.13 Կանանց հզորացումն արտահայտող ցուցանիշներ**

15-49 տարեկան ներկայում ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր մասնակցում են ՏՏ բոլոր որոշումների կայացմանը, և տոկոսը, ովքեր չեն արդարացնում կնոջ ծեծը ոչ մի պատճառով, ըստ կնոջ հզորացումն արտահայտող յուրաքանչյուր ցուցանիշի արժեքի, Հայաստան, 2015-16 թթ.

Հզորացումն արտահայտող ցուցանիշ	Տոկոսը, որ մասնակցում է բոլոր որոշումների կայացմանը	Տոկոսը, որ չի արդարացնում կնոջ ծեծը ոչ մի պատճառով	Կանանց թվաքանակ
<b>Կնոջ մասնակցությամբ կայացվող որոշումների թվաքանակ<sup>1</sup></b>			
0	կշ	71.9	79
1-2	կշ	87.4	814
3	կշ	89.4	3,002
<b>Կնոջ ծեծն արդարացնող պատճառների թվաքանակ<sup>2</sup></b>			
0	77.7	կշ	3,452
1-2	76.4	կշ	278
3-4	66.3	կշ	153
5	*	կշ	12

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

կշ = կիրառելի չէ

<sup>1</sup> Տե՛ս Աղյուսակ 15.9.1-ը որոշումների ցանկի համար:

<sup>2</sup> Տե՛ս Աղյուսակ 15.10.1-ը պատճառների ցանկի համար:

նշանակում է, որ հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների օգտագործումը փոփոխվում է ըստ կանանց հզորացման, սակայն ավանդական մեթոդների օգտագործումը հակադարձ կապի մեջ է կանանց հզորացման հետ:

**Աղյուսակ 15.14 Հակաբեղմնավորման մեթոդների ընթացիկ օգտագործումն ըստ կնոջ հզորացման**

15-49 տարեկան ներկայում ամուսնացած կանանց տոկոսային բաշխումն ըստ հակաբեղմնավորման մեթոդների ընթացիկ օգտագործման և կնոջ կարգավիճակը բնութագրող ցուցանիշների, Հայաստան, 2015-16 թթ.

Հզորացումն արտահայտող ցուցանիշ	Որևէ մեթոդ	Որևէ ժամանակակից մեթոդ <sup>1</sup>	Ժամանակակից մեթոդներ			Որևէ ավանդական մեթոդ	Ներկայում չի օգտագործում	Ընդամենը	Կանանց թվաքանակ
			Կնոջ ստերիլացում	Ժամանակակից կանացի ժամանակավոր մեթոդներ <sup>2</sup>	Տղամարդու պահպանակ				
<b>Կնոջ մասնակցությամբ կայացվող որոշումների թվաքանակ<sup>3</sup></b>									
0	43.7	15.5	1.1	5.6	8.8	28.2	56.3	100.0	79
1-2	58.2	30.1	0.7	14.2	15.2	28.1	41.8	100.0	814
3	57.2	27.7	0.7	12.3	14.7	29.5	42.8	100.0	3,002
<b>Կնոջ ծեծն արդարացնող պատճառների թվաքանակ<sup>4</sup></b>									
0	55.8	28.7	0.7	12.8	15.2	27.1	44.2	100.0	3,452
1-2	65.3	25.9	0.2	12.5	13.2	39.4	34.7	100.0	278
3-4	71.5	18.1	0.4	9.0	8.6	53.4	28.5	100.0	153
5	*	*	*	*	*	*	*	100.0	12
<b>Ընդամենը</b>	<b>57.1</b>	<b>28.0</b>	<b>0.7</b>	<b>12.6</b>	<b>14.7</b>	<b>29.2</b>	<b>42.9</b>	<b>100.0</b>	<b>3,895</b>

Նշում: Եթե օգտագործվում է մեկից ավելի մեթոդ, այս աղյուսակում հաշվարկվում է միայն ամենաարդյունավետ մեթոդը: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

<sup>1</sup> Կնոջ ստերիլացում, տղամարդու ստերիլացում, հարեր, ներարգանդային միջոցներ, ներարկումներ, իմպլանտներ, տղամարդու պահպանակ, շտապ բեղմնականխում, լակտացիոն ամենորեայի մեթոդ (ԼԱՄ) և այլ ժամանակակից մեթոդներ:

<sup>2</sup> Հարեր, ներարգանդային միջոցներ, ներարկումներ, իմպլանտներ, շտապ բեղմնականխում, լակտացիոն ամենորեայի մեթոդ (ԼԱՄ) և այլ ժամանակակից մեթոդներ:

<sup>3</sup> Տե՛ս Աղյուսակ 15.9.1-ը որոշումների ցանկի համար:

<sup>4</sup> Տե՛ս Աղյուսակ 15.10.1-ը պատճառների ցանկի համար:

Աղյուսակ 15.15-ը ցույց է տալիս, թե ինչպես է փոփոխվում ընտանիքի պլանավորման չբավարարված կարիքն ըստ հզորացումն արտահայտող երկու ցուցանիշների: Ինչպես հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման դեպքում, այնպես էլ այստեղ, կապը հզորացումն արտահայտող ցուցանիշների և ընտանիքի պլանավորման չբավարարված կարիքի միջև նուրբ է և պետք է մեկնաբանվի զգուշորեն: Ընտանիքի պլանավորման չբավարարված կարիքն ավելի բարձր է այն կանանց շրջանում, ովքեր չեն մասնակցում տնային տնտեսությունում որոշումներից ոչ մեկի կայացմանը (20 տոկոս)<sup>1</sup>՝ համեմատած մեկ կամ ավելի որոշումների կայացմանը մասնակցող կանանց հետ (12 տոկոս): Ցուցանիշը նաև ավելի բարձր է այն կանանց շրջանում, ովքեր չեն ընդունում կնոջ ծեծն արդարացնող ոչ մի պատճառ՝ համեմատած որևէ պատճառի դեպքում կնոջ ծեծն արդարացված համարող կանանց հետ: Վերջին արդյունքն ավելի համահունչ է այն գաղափարի հետ, որ առավել շատ լիազորություններ ունեցող կանայք իրենց ծնելիությունը վերահսկելու ավելի մեծ ցանկություն ունեն, և եթե այս կանանց համար ընտանիքի պլանավորման մեթոդները հասանելի չլինեն, չբավարարված կարիքի տոկոսն ավելի բարձր կլինի: Վերոնշյալ գաղափարին համապատասխան՝ Աղյուսակ 15.15-ը նաև ցույց է տալիս, որ երեխաների միջին իդեալական թվաքանակն ավելի ցածր է այն կանանց շրջանում, ովքեր մասնակցում են տնային տնտեսությունում առնվազն մեկ որոշման կայացմանը (2.7 երեխա), և նրանց շրջանում, ովքեր չեն ընդունում կնոջ ծեծն արդարացնող ոչ մի պատճառ (2.6 երեխա)<sup>2</sup>՝ համեմատած այն կանանց հետ, ովքեր չեն մասնակցում տնային տնտեսությունում որոշումների կայացմանը (3.0 երեխա), և ովքեր համաձայն են կնոջ ծեծն արդարացնող մեկ կամ ավելի պատճառների հետ (2.8-3.0 երեխա):

**Աղյուսակ 15.15 Երեխաների իդեալական թվաքանակը և ընտանիքի պլանավորման չբավարարված կարիքն ըստ կնոջ հզորացման**

Երեխաների միջին իդեալական թվաքանակը 15-49 տարեկան կանանց շրջանում և 15-49 տարեկան ներկայում ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր ունեն ընտանիքի պլանավորման չբավարարված պահանջ, ըստ կնոջ հզորացման արտահայտող ցուցանիշների, Հայաստան, 2015-16 թթ.

Հզորացման արտահայտող ցուցանիշ	Երեխաների միջին իդեալական թվաքանակ <sup>1</sup>	Կանանց թվաքանակ	Ընտանիքի պլանավորման չբավարարված կարիք ունեցող ներկայում ամուսնացած կանանց տոկոսը <sup>2</sup>			Ներկայում ամուսնացած կանանց թվաքանակ
			Հղիությունը հետաձգելու համար	Չհղիանալու համար	Ընդամենը	
<b>Կնոջ մասնակցությամբ կայացվող որոշումների թվաքանակ<sup>3</sup></b>						
0	3.0	79	14.0	5.6	19.6	79
1-2	2.7	803	8.7	3.6	12.2	814
3	2.7	2,963	5.3	7.1	12.4	3,002
<b>Կնոջ ծենն արդարացնող պատճառների թվաքանակ<sup>4</sup></b>						
0	2.6	5,361	6.5	6.7	13.1	3,452
1-2	2.8	384	3.6	5.5	9.1	278
3-4	3.0	213	2.6	1.3	4.0	153
5	*	17	*	*	*	12
Ընդամենը	2.6	5,974	6.1	6.4	12.5	3,895

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա, և այն չի ներառվել:

<sup>1</sup> Չի ներառում այն հարցվողներին, ովքեր տվել են ոչ թվային պատասխան:

<sup>2</sup> Չբավարարված կարիքի համար ներկայացված ցուցանիշները համապատասխանում են վերանայված սահմանմանը (Bradley et al., 2012)

<sup>3</sup> Վերաբերում է միայն ներկայում ամուսնացած կանանց: Տե՛ս Աղյուսակ 15.9.1-ը որոշումների ցանկի համար:

<sup>4</sup> Տե՛ս Աղյուսակ 15.10.1-ը պատճառների ցանկի համար:

Այն հասարակություններում, ինչպիսին Հայաստանն է, որտեղ մարդիկ հետևողական են իրենց առողջությանը, կնոջ կարգավիճակը չի կարող ազդել անհրաժեշտ առողջապահական ծառայություններ ստանալու հնարավորության վրա: Այլ հասարակություններում, սակայն, կնոջ լիազորությունների մեծ շրջանակը նաև մեծացնում է անհրաժեշտ առողջապահական ծառայություններ ստանալու հավանականությունը, որոնց շնորհիվ կինը կարող է բավարարել իր վերարտադրողական նպատակները, ներառյալ՝ անվտանգ մայրության: Կնոջ հզորացման ավելացումը մեծացնում է հավանականությունը, որ կինը կարող է ընտրել երեխաների թվաքանակ և երեխաներ ունենալու իր համար ցանկալի ժամանակ: Այդուհանդերձ, Հայաստանում գրեթե բոլոր կանայք հետագոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում ծննդաբերած վերջին երեխայի համար ստացել են նախածննդյան կամ ծննդաբերական խնամք որակավորված բուժաշխատողի կողմից, իսկ գրեթե բոլոր ծննդաբերությունները տեղի են ունեցել հիվանդանոցում (Տե՛ս Գլուխ 9): Հետևաբար, զարմանալի չէ, որ վերարտադրողական առողջության պահպանման նպատակով առողջապահական ծառայությունների հասանելիությունը Հայաստանում չի տատանվում՝ ըստ կնոջ հզորացման արտահայտող ցուցանիշների (տվյալները ցուցադրված չեն):



Black, R. E., L. H. Allen, Z. A. Bhutta, L. E. Caulfield, M. de Onis, M. Ezzati, C. Mathers, and J. Rivera, for the Maternal and Child Undernutrition Study Group. 2008. "Maternal and Child Undernutrition: Global and Regional Exposures and Health Consequences." *Lancet* 371:243. doi:10.1016/S0140-6736(07)61690-0.

Bradley, S. E. K., T. N. Croft, J. D. Fishel, and C. F. Westoff. 2012. *Revising Unmet Need for Family Planning*. DHS Analytical Studies No. 25. Calverton, Maryland, USA: ICF International.

Centers for Disease Control and Prevention. 1998. "Recommendations to Prevent and Control Iron Deficiency in the United States." *Morbidity and Mortality Weekly Report* 47(RR-3):1-29.

Cesar, G. V., L. Adair, C. Fall, P. C. Hallal, R. Martorell, L. Richter, H. Singh Sachdev. 2008. "Maternal and Child Undernutrition: Consequences for Adult Health and Human Capital." *Lancet* 317(9609):340-357.

Conde-Agudelo, A., A. Rosas-Bermudez, and A. C. Kafury-Goeta. 2006. "Birth Spacing and Risk of Adverse Perinatal Outcomes, a Meta-analysis." *Journal of the American Medical Association* 295(15):1809-1823. doi:10.1001/jama.295.15.1809.

DeMaeyer E. M., P. Dallman, J. M. Gurney, L. Hallberg, S. K. Sood, and S. G. Srikantia. 1989. *Preventing and Controlling Iron Deficiency Anemia through Primary Health Care: A Guide for Health Administrators and Program Managers*. Geneva: World Health Organization.

Fullerton, D. G., N. Bruce, and S. B. Gordon. (2008). "Indoor Air Pollution from Biomass Fuel Smoke is a Major Health Concern in the Developing World. *Transactions of the Royal Society of Tropical Medicine and Hygiene* 102(9):843-851. doi.org/10.1016/j.trstmh.2008.05.028.

Gorstein, J, F. van der Haar, K. Codling, R. Houston, J. Knowles, A. Timmer. 2016. "Performance of Rapid Test Kits to Assess Household Coverage of Iodized Salt." *Public Health Nutrition* (15):2712-24. doi:10.1017/S1368980016000938. Epub 2016 May 11.

Government of the Republic of Armenia (GoA). 2004. Decision No.1116-N, *On Approval of Terms and Conditions of Abortions*. Yerevan, Armenia: Government of the RA. <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=12781>.

Government of the Republic of Armenia (GoA). 2014a. Appendix, Order No. 442-N, *On Strategic Plan of Prospective Development for 2014-2025*. Yerevan, Armenia: Government of the RA. <http://www.gov.am/files/docs/1322.pdf>.

Government of the Republic of Armenia (GoA). 2014b. Appendix No. 2, Protocol Decision No. 40, *On Concept of Improvement of Child Nutrition and the Implementation of the Activity Plan for 2015-2020*. Yerevan, Armenia: Government of the RA. [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/2104/09/40-1\\_2ardz.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/09/40-1_2ardz.pdf).

Government of the Republic of Armenia (GoA). 2016a. Appendix No. 1, Protocol Decision No. 24, *On National Policy on the Improvement of Reproductive Health and the Implementation of Activity Plan for 2016-2020*. Yerevan, Armenia: Government of the RA. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=86074&m=%27%27&sc=%20>.

Government of the Republic of Armenia (GoA). 2016b. Appendix No. 1, Protocol Decision No. 34, *On National Policy on the Improvement of Child and Adolescent Health and the Implementation of Activity Plan for 2015-2020*. Yerevan, Armenia: Government of the RA. <http://irtek.am/views/act.aspx?aid=86895&sc=%20>.

ICF International. 2015a. *The DHS Program STATcompiler*. Accessed September 12, 2016. <http://www.statcompiler.com>.

ICF International, 2015b. *The DHS Program STATcompiler*. Accessed November 21, 2016. <http://www.statcompiler.com>.

Joint United Nations Programme on HIV/AIDS (UNAIDS). 2016a. Fact sheet. <http://www.unaids.org/en/resources/fact-sheet>.

Joint United Nations Programme on HIV/AIDS (UNAIDS). 2016b. Armenia. <http://www.unaids.org/en/regionscountries/countries/armenia>.

Kish, L. 1965. *Survey Sampling*. New York: John Wiley and Sons Inc.

National Assembly of the Republic of Armenia (NARA). 2002. *The Law on Reproductive Health and Reproductive Rights*. Yerevan, Armenia: National Assembly of the RA. <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1339&lang=arm>.

